



Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу <http://books.google.com>.

A

991,356



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ժ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

ՀԱՏՈՐ Դ.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ժ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

ՀԱՏՈՐ Դ.

Գ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Տ Է Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց

Ը Ն Դ Հ Ա Ն Ր Ա Պ Է Ս

◦ **Գ Ր Ե Ց**

3. Ղ Ե Ի Ո Ն Դ 4. Յ Ո Վ Ն Ա Ն Ե Ա Ն

Մ Ի Ի Թ . Ո Ւ Խ Տ Է Ն

130

Հ Ա Տ Ո Ր Դ .



Ե Ր Ր Ո Ր Դ Ծ Ր Ջ Ա Ն

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

445 P.



Վ Ի Է Ն Ն Ա

Պ Ա Հ Տ Պ Ա Ն Ս . Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Ծ Ն Ի Վ Ա Ն Բ Ը

1860 Ի Ե Թ .

GRAD
EDEN
156
Buch
V 4

GRAD
EREN
187
ՏԻ. 10. 99
Վ. 4.

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ԵՐՐՈՐԳ ՅՐՁԱՆ

ՓՐԵՊԵՐԻԿՈՍ ՄԵՏԻՆ ՄԱՆՈՒԱՆԷՆ ԵՒ ԻՍԴՂԱՌՅԻ ՅԵՂԱՓՈԽՈՒՈՒԹՅՆԷՆ
ՄԻՆՆԵՒ ՄԵՐ ԺՈՄԱՆԵՆՆԵՐԸ

(1786—1858)

ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

1. Ընդհանուր տեսութիւն:	1
2. Օրինաւորութեան սկզբունք եւ սահմանադրական միապետութիւնք:	2
3. Կործանեալ կամ տկարացեալ տէրութիւնները նու րէն կանգնելու համար՝ վիճենայի արքայաժողովոյն գործածած ընդհանուր միջոցը կամ չափը:	4
4. ԳԱՂՂԻԱ. Իր վիճակը:	5
5. Լուսավիճութեան ժը. ու Կարոյն ժ.: Օրլէանեան ջեղ, Հասարակապետութիւն ու կայսրութիւն:	5
6. ԱՆԳՂԻԱ. Իր ձեռք բերած երկիրները:	6
7. Վեհապետք ու պաշտօնարանք: Գեորգ Դ. ու Գու լիէլմոս Դ. թագաւորները, եւ Վիկտորիա թագուհին 7	
8. ԳԵՐՄԱՆԻԱ. Անկախ տէրութիւններու դաշնա կցութիւն մը կ'ըլլայ:	8
9. Գերմանական դաշնակցութեան մուրհակը:	9
10. ԱՒՍՏՐԻԱ. Աս կայսրութեան կազմութիւնը:	10
11. Փրանկիսկոս Ա., Փերդինանդ Ա. ու Փրանկիսկոս Յովսէփ Ա. կայսրները:	11
12. ՊՐՈՒՇ. Նոյն միապետութեան կազմութիւնը:	12
13. Պրուշի վիճակն ու դիրքը: Փրեզերիկոս Գուլիելմոս Գ. ու Փրեզերիկոս Գուլիելմոս Գ.:	12
14. Գերմանիայի չորս պզտիկ թագաւորութիւնները:	13
15. Գերմանիայի փոքր տէրութիւնները:	14
16. ՍՏՈՐԻՆ ՆԱՀԱՆԳԻ. Բոլոր թէ Հոլանտական եւ թէ Բեռլինական գաւառները միակ միապետութիւն մը կ'ըլլան:	15

17. ԲԵՂԳԻՍ. Հսլանտայէն կը բաժնուի ու զատ թա- ղաւորութիւն կ'ըլլայ:	16
18. ՀԵԼՈՒԵՑԻՍ. Աս դաշնակցութեան կազմութիւնն ու սահմանադրութիւնը:	17
19. ԻՑԱԼԻՍ. Լոմպարտեան-վենետիկի թագաւորու- թիւն: Սարդինիա ու Երկու Սիկիլիա:	18
20. Հոսթի տէրութիւն, Դոսկանա, Մոսենա, Բարմա ու Լուզա:	19
21. ՍՊԱՆԻՍ. Փերդինանդ Է. թագաւորն ու Իզապելլա (Եղիսարեթ) թագուհին:	20
22. ԲՈՐԴՈՒԿԱԼ. Երկրին վեճակը: Մարիամ թագու- հին ու Պետրոս Ե. թագաւորը:	20
23. ԴԱՆԻՍ. Փրեդերիկոս Զ., Բրիտանիան Ը. ու Փրե- դերիկոս Է. թագաւորները:	21
24. ՇՈՒԵՑ ՈՒ ՆՈՐՈՒԵԳԻՍ. Երկու երկիրներուն վի- ճակը: Նորուեգիայի սահմանադրութիւնը: Կարոլոս Ճ.Գ. եւ Ոսկար Ա. թագաւորները:	22
25. ՌՈՒՍԻՍ. Աս կայսրութեան մեծնալը: Աղէքսանդր Ա., Նիկոլայոս Ա. ու Աղէքսանդր Բ. կայսրները .	23
26. ՕՍՄԱՆԵԱՆ ՑԷՐՈՒԹԻՒՆ. Սուլթան Մահմուտ Բ. եւ Սուլթան Ապարիւլ-Մեճիտ:	24
27. Բաժանում:	25

ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑ ԺԱՄԲԱՆԿԻ

Վիեննայի արտայտողութիւն Բոլց-Յոլց-Երզրտի-Յիւնը
(1815—1830)

28. Քաղաքական հաւասարակշռութիւն: Հինգ մեծ տե- րութեանց առաւելութիւնն ու ընդհանուր իրողու- թեանց առաջնորդութիւնը ձեռք բերելին:	27
29. Սուրբ դաշնաւորութիւն:	28
30. Ապրիլի դեսպանաժողովն ու անոր արձանագիրը:	29
31. Աս ժամանակի միջոցին քաղաքականութիւնը:	31

Ա. Կողմակցութեանց կռիւները, արձակապետութեան
դէմ ելած յեղափոխութիւններն ու հնգապետութեան
նոյնքը զսպելու ջանքը (1815—1830):

32. Քանի մը արձակապետական վեհապետաց ընթացքը:	32
33. Կողմակցութիւնը:	33
34. Գերմանիայի կողմակցութիւնը ու գժտութիւնը:	34
35. Ֆրանքֆուրտի դաշնակցութեան ժողովոյն որո- շումները:	36
36. Աղմուկներ ու շփոթութիւններ:	37
37. Գարըզպատի ժողովն ու սրողումները: Վիեննայի վերջնական մուրհակը:	38

38. Անգղիայի խորհրդանոցն ու պաշտօնեայք: Ուել-
լինկդըն եւ Գասալի: 39

39. Ժողովրդեան տհաճութիւնն ու շփոթութիւնք:
Գէորգ Դ. Թագաւորն ու իր ամուսինք: 41

40. Իրլանտիայի վիճակը: Օ'Գոնէլ: 42

41. Գասալի պաշտօնէին մեռնիլն ու Քեննիկիկին պաշտօ-
նեայ ըլլալը: 44

42. Լուդովիկոս ԺԼ. Ազատականք եւ Թագաւորականք: 45

43. Յիշեալ Թագաւորին ժամանակը Գաղղիայի ՔՂ
պատահածները: 46

44. Կարոլոս Ժ. եւ իր կառավարութիւնք: 48

45. Իտալիայի եւ Պիւրենեան Թերակղզւոյն վրայ տե-
սութիւն: 50

46. Գաղտնի ընկերութիւնք եւ առանձինն Իտալիայի
Գարպոնարիա ընկերութիւնք: 51

47. Սպանիայի Փերդինանդ Թագաւորն ու իր կառավա-
րութեան կերպը: 52

48. Բանակին ապստամբութիւնը: Գորգէզներու սահ-
մանադրութիւնը կը հաստատուի: 54

49. Բորդուկալի յեղափոխութիւնն ու շփոթութիւնները: 55

50. Նէապոլսոյ յեղափոխութիւնը: 57

51. Սարդինիայի յեղափոխութիւնը: Թագաւորը կը հրա-
ժարի եւ իր եղբայրը դահ կ'անցնի: 57

52. Դրորաւի ու Լայպաիի արքայաժողովները: 59

53. Նէապոլսոյ ու Սարդինիայի Թագաւորութեանց սահ-
մանադրութիւնները կը ջնջուին ու արձակապետու-
թիւնը կը հաստատուի: 60

54. Վերոնայի արքայաժողովը: 61

55. Գաղղիա գրեթէ ակամայ կը ստիպուի Սպանիայի
ՔՂ զինեալ միջամտութիւն ընելու: 63

56. Սպանիայի հակառակ յեղափոխութիւնը: Շփոթու-
թիւնք ու ներքին պատերազմ: 64

57. Սպանիայի յեղափոխութիւնը կը զրպուի ու արձա-
կապետութիւնը կը հաստատուի: 65

58. Բորդուկալի ներքին շփոթութիւնները: Յ. Միքայէլ
ու Մարիամ Թագուհին: 66

**Բ. Յունական յեղափոխութիւնն ու անկախութեան
պատերազմը, նոյնին հետ կապակցութիւն ունեցող զուգ-
ընթաց դէպքերով (1821—1830):**

59. Յունաց վիճակը: Աւազակք: Անկախութեան բաղ-
ձանք: Գարստիսդրիա: 68

60. Էդեսիայի ընկերութիւնը: 70

61. Վալարիա, Մոլտաւիա եւ Սերուիա: 71

62. Եանեայի Ալի փաշան: 72

63. Եգիպտոս ու Մեհեմէա Ալի փաշան:	73
64. Յունաց յեղափոխութեան սկիզբը: Գանուբեան իշխանութեանց մէջ եղածները:	75
65. Յոյնը կոստանդնուպոլոսյ մէջ: Ալալաբիայի ու Մուտալիայի յեղափոխութիւնը կը զուարի:	76
66. Բուն Յունաստանի մէջ Յունաց սենեցած յաղաղութիւնները:	78
67. Եւրոպայի ազգերուն Յունաց ցուցուցած միտութիւնը: Յունասէրք:	79
68. Իպրահիմ փաշային հրամանատարութեամբը՝ Յունաստան Եգիպտացի զօրք ու նաւատորմի խաւրովը: Միսոլոնիկի կնիսը:	80
69. Եւրոպայի գահլիճներուն Յունաց նկատմամբ բռնած ընթացքը:	82
70. Քեննինկին ձեւքով Անգղիայի արտաքին քաղաքականութեան փոխուիլը:	84
71. Անգղիա Յունաց կողմը կը բռնէ: Առ քաղաքականութեան պատճառք:	85
72. Նիկողայոս կայսրը Ռուսիայի գահը կ'ելլէ: Իր ու Աղէքսանդր կայսեր արտաքին քաղաքականութիւնը:	86
73. Պետրոսուրդի գաշինքը: Աքերմանի պայմանագրութիւնը:	88
74. Եէնիշերիներու ջնջումը:	90
75. Գարտիպի կամը Յունաստանի գահերէց կ'ըլլայ:	91
76. Լոնտոնի գաշինքը:	92
77. Նաւարինի ծովամարտը կամ աղէտալի պատահարը:	93
78. Գաշնակցաց ու Դրան քաղաքականութիւնը:	95
79. Ռուսական - Պարսկական եւ Ռուսական - Ցանկական պատերազմներ:	96
80. Ռուսական - Օսմանեան պատերազմին Եւրոպական դէպքերը:	97
81. Ռուսական - Ցանկական պատերազմին Ասիական դէպքերը:	98
82. Պատերազմին տանը մեծ տէրութեանց բռնած ընթացքը:	99
83. Ադրիանուպոլոսյ խաղաղութեան գաշինքը:	101
84. Անգղիա ու Գաղղիա Օսմանեան զօրքերը Յունաստանէն կը հանեն: Երկրին կողմնակցութիւնները:	102
85. Յունաստան բալթրովին անկախ տէրութիւն կ'ըլլայ: Դրուած թագաւորը կը հրաժարի: Գարտիպի մահը:	104
86. Պաւիերայի թագաւորին Ոթոն սրդին Յունաստանի թագաւոր կ'ըլլայ:	106

ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

Յուլիոսի յեղափոխութենէն ժնչիս Եւրոպայան ընդհանուր
յեղափոխութենը

(1830—1846)

87. Եւրոպայի տերութեանց տիրող սկզբունքներուն փոխուիլը: Անփոխամասութեան սկզբունք: 108

Ա. Գաղղիայի Յուլիոսի յեղափոխութիւնը (1830):

88. Յուլիոսի յեղափոխութեան նախաշաւիղները: 109

89. Սենեակներուն բացուիլն ու գոցուիլը: 110

90. Աճէրիի եւ մօտաւոր տերութեանց ծովահանները: Գաղղիայի ու Աճէրիի ձկն եղած վէճը: 112

91. Աճէրիի արշաւանքն ու աշխարհակալութիւնը: Գիւմարականաց ջանքովը՝ կառավարութիւնն իր նպատակին չիհասնիր: 113

92. Հրամանագիրք եւ անոնցմէ պատճառած յեղափոխութիւնը: 115

93. Յուլիոսի 29երորդ օրը: Քաղաքային խորհրդոյ մասնատողով: 117

94. Արքունեաց զիջումները կը մերժուին: 118

95. Լուգոմիկոս Փիլիպպոս Օրլէանի գուքսն ու իր կողմակիցները: Գալիերան: 119

96. Լուգոմիկոս Փիլիպպոս Թագաւորութեան ընդհանուր տեղակալ կ'ըլլայ: Լաֆայէտ: 121

97. Կարոլոս Ժ. իր ու Թագածառանգին անուամբը գահէն կը հրատարի եւ ընտանեօքը Գաղղիայէն կ'ելլէ: 122

98. Լուգոմիկոս Փիլիպպոս Թագաւոր կ'ըլլայ: 124

99. Սահմանադրութեան ձկն ըլլալու փոփոխութիւնները կամ նոր սրբուածները: 126

Բ. Բեղգիական ու Լեհական յեղափոխութիւնները (1830—1833):

100. Մեծ տերութիւնները զԼուգոմիկոս Փիլիպպոս կը ճանչնան: 127

101. Անգղիայի ու Գաղղիայի կամ Արեւմտեան սահմանադրական տերութեանց սրտակից միաբանութիւնը: 128

102. Արեւելեան կամ արձակապետական տերութեանց միաբանութիւնը եւ յեղաշրջական հոգին զուգելու ջանքը: 129

103. Բեղգիայի զինակն ու Թագաւորին հետ ունեցած յարաբերութիւնը: 131

104. Եփեղեցականաց ու ազատականաց միաբանութիւնը: 132

105. Յեղափոխութեան նախընթաց դէպքերը: 134

106. Պրիւսէի յեղափոխութիւնը: 136

107.	Թագաւորն ու թագաժառանգը:	138
108.	Գաւառներուն եւ մայրաքաղաքին մէջ եղած կռիւ- ները: Հոլանտացիք կը յաղթուին:	139
109.	Բեղզիացիք իրենք զիրենք անկախ կը հրատարակեն: Օրանիայի իշխանն ու Բեղզիացոց ազգային համա- ժողովը:	140
110.	Բեղզիա ինքնազուլի սահմանադրական միապետու- թիւն կ'ըլլայ:	141
111.	Լեհաստանի սահմանադրութիւնը եւ նոյնին ան- պատշաճութիւնները:	143
112.	Յեղափոխութենէն յառաջ Լեհաստանի ունեցած վիճակը: Կողմնակցութիւնք:	144
113.	Յեղափոխութեան պատրաստութիւններն ու սկըզ- բնաւորութիւնը:	146
114.	Յեղափոխականք, Դեսպանադիտականք ու Սահմա- նադրականք: Խլորիցքի հրամանապետ:	147
115.	Լեհաց պատգամաւորութիւնը, կայսեր պատաս- խանն ու նոյնին հետեւութիւնը:	149
116.	Պատերազմին գլխաւոր դէպքերը: Օտորոլենգայի ճակատը:	150
117.	Արտաքին տերութեանց վրայ ակնկալութիւն: Ներ- քին երկպառակութիւն:	151
118.	Վարսաւիայի կնիւնը:	153
119.	Լեհերը բաւորովին կը զսպուին ու իրենց ազատու- թիւնները կը կորսընցընեն:	155
120.	Մեծ տերութեանց քաղաքականութիւնը եւ Բեղ- զիայի անկախութիւնն ընդունելին:	157
121.	Լիւբոմպուրկի ու թագաւորի ընտրութեան խըն- դիրները:	158
122.	Սաքսոնիա - Գոպուրկի Լեոքոլտ իշխանը Բեղզիայի թագաւոր կ'ըլլայ: ԺԸ. Յօդուածք:	160
123.	Հոլանտացիք նորէն պատերազմի կը սկսին: Գաղղիա եւ Անգղիա զինեալ միջամտութիւն կ'ընեն: Չինա- դադար:	162
124.	Արեւմտեան տերութեանց ու Ռուսիայի քաղաքա- կանութիւնը: ԻԳ. Յօդուածները:	163
125.	Վերջին կռիւներն ու նախակարգ պայմանները:	165
	Գ. Եւրոպայի ուրիշ տերութեանց ներքին իրողու- թիւններն ու մեծ տերութեանց յարաբերութիւնները: Եգիպտական (Արեւելեան) խնդիր (1830—1848):	
126.	Գերմանիայի զանազան տերութեանց յեղափոխու- թիւնները: Գաշնակցութեան ժողովոյն որոշումները:	166
127.	Իտալիայի խռովութիւններն ու Աւստրիացոց ձեռ- քով զսպուիլը:	168

128. Հուսփ երկիրները նորէն ուր կ'ելլեն ու դարձեալ կը զոպուին: Գաղղիացիք Անգոնայի մէջ: 170

129. 'Նէապոլսոյ' Փերդինանդ Բ. եւ Սարդինիայի' կարու լսու Ալպերդ թագաւորները: 171

130. Հելուեստիայի շփոթութիւնները: 172

131. Գաղղիացիք սահմանադրութեան նկատմամբ, եւ Լուզովիկոս Փիլիպպոսին ընթացքը: 174

132. Քաղաքացիք ու իրենց իշխանութիւնը: 176

133. Թագաւորն իր ժողովրդականութիւնը կը կորսնցընէ: Իր ու պաշտօնէից ընչափութիւնը: 177

134. Կողմնակցութիւնը: Օրինաւորականաց ջանքն ու եաքաշուիլը: Հասարակապետականք, Ընկերվարականք ու Հասարակավարականք: 179

135. Լուզովիկոս Փիլիպպոսին կենացը դէմ դաւանանութիւնը: Փարիզի ամբուլթիւնները: Թագաժառանգին մահը: 181

136. Նարալէոնեանք: Նարալէոնին որդւոյն մահը: Լուզովիկոս Նարալէոն եւ Նարալէոնին սկիւներուն Փարիզ փոխադրուիլը: 182

137. Անգղիայի Գուլիելմոս Դ. թագաւորը: Խորհրդանոցի նորագութիւն ու գերեաց ազատութիւն: 183

138. Օ'Գոնէլ ու Իրլանտայի Յետս կոչումը: 185

139. Վիկտորիա թագուհին: Բիլ ու ցորենեղէնի մաքսին վերցուիլը: Չարդիսաք: 187

140. Ռուսիայի ներքին քաղաքականութիւնը: Համուսլաութիւն: 188

141. Աւստրիայի Մեդզեանիկ պաշտօնեան: Մաճառք, Ջեյնեի ու Գոշութ: 190

142. Միւնիք-Վրէցի Ռուսական-Գերմանական արքայաժողովը: Գալիշի զօրահանդէսը: 192

143. Անգղիայի, Գաղղիայի, Սպանիայի ու Բարբուկալի մէջ Չորից դաշնաւորութիւն: 193

144. Փերդինանդ Է.ին վերջին տարիները Սպանիայի վիճակն ընդհանրապէս: 195

145. Իրական վաւերագրութիւն: Եղիսարեթ թագուհի ու Մարիամ Բրիտանիէ: Կարուտեանք եւ քաղաքական պատերազմ: 196

146. Կարուտեանց յաղթութիւններն ու վերջնական պարտութիւնը: Մինա, Գապերբա, Էսփարդերոյ ու Մարդոյ: 197

147. Անկարգութիւնք ու շփոթութիւնք: Էսփարդերոյ ու Նարվաէլ: Թագուհւոյն շափահաս ըլլալն ու կարգուիլը: 199

148. Յ. Միքայելի թագաւորութեան ժամանակը: Պետարոս Ա. կայսրն ու Մարիամ թագուհին: 200

149. Պիւրենեան թերակղզւոյն վրայ Անգղիայի ու Գաղ-
ղիայի ազդեցութիւնը: 202

150. Լուդովիկոս Փիլիպպոսին Անգղիայէն հեռանալն ու
Հիւսիսային տերութեանց կողմը միտելը: 204

151. Ալճէրիին Գաղղիայի համար ունեցած ծանրակշու-
թիւնը: Անգղիայի նախանձը: 206

152. Գրան ու Եգիպտոսի Մէհէմէտ Ալի փոխարքային
գիրքը: 207

153. Մէհէմէտ Ալիին ապստամբութիւնն ու յաղթու-
թիւնները: 209

154. Ռուսաց միջամտութիւնը: Քիւթահայի խաղաղու-
թեան դաշինքը: 210

155. Հիւնքեար Իսկէլէսիի դաշնագրութիւնը: 212

156. Անգղիայի բռնած ընթացքն ու նոյնին պատճառները: 213

157. Քիւրտիստանի արշաւանքը: Անգղիայի ու Գրան ձեջ՝
Պալթալիմանըյի առեւտրական դաշինքը: 215

158. Մէհէմէտ Ալիին դէմ պատերազմ: Նիսիայի ճակա-
տամարտը: 216

159. Սուլթան Ալա-իւլ-Մեճիտ: Կիւլհանէի խաթթի
շէրիֆը: 217

160. Լոնտրայի Պայմանագրութիւնը: 218

161. Գաղղիա պատերազմի պատրաստութիւն կը տեսնէ
ու ետ կը քաշուի: Մէհէմէտ Ալին չիտոնարհիր: 220

162. Դաշնաւորաց յաջողութիւնները եւ Մէհէմէտ Ա-
լիին խոնարհիլը: 221

ԵՐՐՈՐԴ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

Եւրոպայէ ընդհանուր յեղափոխութիւնն ու Արեւելոս պարբերազ՝
(1848—1858)

163. Ընդհանուր տեռութիւն: Ազգայնութիւնը: 223

164. Երկրի ստացուածոց վիճակ: Գործատեարք ու բա-
նուորք: 225

165. Ընկերվարութիւն ու Հասարակավարութիւն: 226

Ա. Ընդհանուր յեղափոխութեան նախընթաց դէպ-
քերը (1846—1848):

166. Հելլենիստիայի վիճակը: Արմատականք եւ անկրօնք: 228

167. Յիսուսեանք: Ազատ գնդեր: Մասնական դաշնա-
կցութիւն: 230

168. Արմատականաց ու մասնական դաշնակցութեան պա-
տերազմն ու առաջիններուն յաղթող ըլլալը: Երեք
մեծ տերութեանց ու Անգղիայի քաղաքականութիւնը 231

169. Իտալիայի վիճակը: Մածճիւնի: 233

170. Պիտո Թ. եւ իր նորոգութիւնները: 234

- 171. Իտալիայի գրքութիւններն ու Սարդինիա : 235
- 172. Անգլիայի քաղաքականութիւնը : Բալմորալըն ու
Լորտ Մինդոյ : 236
- 173. Աւստրիացիք ու Լոմպարական-Վենետիկ : 238
- 174. Պրուշի մէջ խառն ամուսնութեանց վէճը : Գերմա-
նական-կաթողիկէականք : 239
- 175. Գրագաւի յեղափոխութիւնն ու իր անկախութիւնը
կորոնցընելը : Կալիցիայի շփոթութիւնները : 241
- 176. Պաւերայի Լուդովիկոս Թագաւորն ու Լոլա Մոնդէզ : 242

Բ. Գաղղիայի յեղափոխութիւնը (1848, Փետրուար-
Յունիս) :

- 177. Լուդովիկոս Փիլիպպոս, իր կառավարութիւնը ու
մեծամեծները : 244
- 178. Պատգամաւորաց սենեկին նորոգութեան խնջւթները 245
- 179. Փետրուարի յեղափոխութիւնը : 246
- 180. Լուդովիկոս Փիլիպպոս գահէն կը հրժարի : Օրլէա-
նի գրքուհին պատգամաւորաց սենեկին մէջ : 248
- 181. Հասարակապետութիւն : Առժամանակեայ կառա-
վարութիւն : Լամարդին : 249
- 182. Լուդովիկոս Փիլիպպոսին փախչիլն ու նոր կառավա-
րութեան հաստատութիւն գտնելը : 251
- 183. Գործաւարք : Հասարակաւարական սկզբունքներուն
գործադրուիլը : 252
- 184. Ազգային ժողով ու գործադիր մասնաժողով : Մայի-
սի 15ին ընկերվարական ազմուկը : 253
- 185. Յունիսի յեղափոխութիւնն ու ընկերվարականաց
զսպուիլը : Գաւենեագ : 255

Գ. Բուն Աւստրիական եւ Հունգարական յեղափոխու-
թիւնք (1848—1849) :

- 186. Աւստրիայի վիճակն ու յեղափոխութեան պատրաս-
տութիւն : 257
- 187. Վիեննայի յեղափոխութիւնն ու անիշխանութեան
մէջ կոնալը : Օտարականք եւ Հրեայք : Գոշութին
ու Մաժժինիին գործակալները : 258
- 188. Մաճառաց պահանջումներուն կատարուիլը : 259
- 189. Աւստրիայի սահմանադրութիւնը : Մայիսի 15ին ու
26ին ազմուկները : Կայսրը մայրաքաղաքէն կ'ելլէ :
Ապահովութեան մասնաժողով : 261
- 190. Կայսեր հօրեղբայրը՝ Յովհաննէս արքիդուքսը : Սահ-
մանագիր ժողով : 262
- 191. Կայսրը մայրաքաղաքը կը դառնայ : Ապահովութեան
մասնաժողովոյն լուծուիլը : 264
- 192. Սլաւ ազգերը Մաճառներուն դէմ կ'ելլեն : Ելաչիչ :
Ներքին պատերազմ : 265

193. Լամպերի կոմսին սպանուիլը: Մաճառք կայսեր հրամանները կը մերժեն: 267

194. Հոկտեմբերի 6ին յեղափոխութիւնը: Լադուր պաշտօնէին սպանուիլը: Կայսրը Օլմիւց կը փախչի: 268

195. Վիէննայի առնուիլը: Յեղափոխութիւնը կը զսպուի: 269

196. Նոր պաշտօնարան: Փերդինանդ կայսեր հրաժարիլն ու Փրանկիսկոս Յովսեփին դահ էլլելը: Սահմանադրութիւն: 271

197. Մաճառք եւ Վինտիչկրէց: 272

198. Դրանսիլուանիայի պատերազմը: Ռուսք օգնութեան կու գան ու ետ կը քշուին: 273

199. Աւստրիական բանակին անյաջողութիւնները: Վելտեն հրամանատար կ'ըլլայ: Մաճառք իրենք զիրենք ազատ կը հրատարակեն: 275

200. Ռուսք Աւստրիայի օգնութեան կու գան: Երկու տերութեանց եւ Մաճառներուն բանակները: 276

201. Պատերազմին գլխաւոր դէպքերը: 278

202. Կէօրկէյ հրամանապետ կը գրուի ու Ռուսաց անձնատուր կ'ըլլայ: 280

203. Հունգարիայի յեղափոխութեան կատարածն ու հետեւութիւնները: 281

Դ. Իտալիայի յեղափոխութիւնները եւ Աւստրիական-Սարդինիական պատերազմներ (1848—1849):

204. Միլանի ու Վենետիկի յեղափոխութիւնները: Աւստրիացիք ետ կը քաշուին: 283

205. Սարդինիայի կարողոս Ալպերդ թագաւորին ընթացքը: Մածծինեանք: 284

206. Հռոմի տերութեան, Դոսկանայի, Մոսենայի ու Բարմայի մէջ Մածծինեանց ըրածները: 286

207. Նէապոլոսյ յեղափոխութիւնը: 287

208. Բալմբրոզնին քաղաքականութիւնը: Լամպարտիա Աւստրիայէն բաժնելու ջանքին չյաջողիլը: 289

209. Աւստրիացիք Վենետիկի գաւառին կը տիրեն: Սարգինիացիք Կլիդոյի ճակատը կը վաստակին ու Բեսքիէրա կը մտնեն: 290

210. Գուստոցցայի յաղթութիւնը: Սարդինիացիք ետ կը քաշուին: Չինագադար: 291

211. Երկրորդ Սարդինիական - Աւստրիական պատերազմ: Մորդարայի ու Նովարայի ճակատները: Կարողոս Ալպերդ կը հրաժարի: Վիկտոր Էմմանուէլ, զինագադար, խաղաղութեան դաշինք: 293

212. Սիկիլիայի զոսպուիլը: 295

213. Հռոմի յեղափոխութիւնը: Ռոսսիի սպանուիլն ու քահանայապետին փախչիլը: Ընդհանուր իտալական

սահմանադիր ժողովը Հռոմ եւ Դոսկանա Հասարակապետութիւն կ'ըլլան: 296

214. Աւստրիացոց ու Գաղղիացոց միջամտութեամբը Հասարակապետականք կը մերժուին: 298

215. Վենետիկի կնիւղը: 299

Ե. Գերմանիայի յեղափոխութիւնները եւ Գերմանական-Դանիական պատերազմը (1848—1851):

216. Գերմանական տերութեանց ազատական կերպարանափոխութիւնը: Պաւերայի թագաւորը կը հրաժարի 301

217. Գերմանական դաշնակցութեան նախախորհրդանոցն ու անոր արոշումները: 302

218. Գերմանական Հասարակապետութիւն ու Լեհաստանի տերութիւնը կանգնելու փորձ: 304

219. Շլեզուիկ-Հոլլզայնի խնդիր եւ Դանիական-Գերմանական պատերազմին սկիզբը: 305

220. Սկանտինաւեան տերութիւնք: Պրուշի ընթացքին մեկնութիւնը: 307

221. Գերմանիայի ազգային ժողովը: Յովհաննէս արքեպուսքը պետութեան տեղակալ կ'ըլլայ ու դաշնակցութեան ժողովը կը լուծուի: 308

222. Մալմեի գինադադարը: Յեղափոխութիւններ: 310

223. Մեծգերմանականք եւ Փոքրգերմանականք: Պրուշի թագաւորը կայսր կ'ընտրուի: 312

224. Ֆրանգֆուրդի խորհրդանոցին լուծուիլը: Երկը թագաւորաց դաշնակցութիւն: 314

225. Աւստրիայի եւ Պրուշի երկպառակութիւնը: Էրֆուրդի խորհրդանոցը: Դաշնակցութեան հին ժողովքը: 315

226. Հեսսէնի կայսրընտրութեան յեղափոխութիւնը: Նիկողայոս կայսեր քաղաքականութիւնը: Օլմիւցի բանակցութիւնը: 317

227. Տրեղտայի գեօպանաժողովը: Շլեզուիկ-Հոլլզայնի իրողութիւնները: Պերլինի խաղաղութեան դաշինքն ու Լոնտոնի արձանագրութիւնները: 319

228. Հին դաշնակցութիւնն առանց փոփոխութեան նորէն կը հաստատուի: 321

Զ. Նաբոլէոն Գ.ին կառավարութեան ժամանակը նախընթաց դէպքերով (1849—1853):

229. Գաւենեագ զորապետին վարչութիւնը: 323

230. Լուգովիկոս Նաբոլէոն՝ գահերէց ընտրուելէն յառաջ: 324

231. Լուգովիկոս Նաբոլէոն գահերէց կ'ընտրուի: 326

232. Նորգահերիցուն ընթացքն ու քաղաքականութիւնը 328

233. Դեկտեմբերի ջին դէպքերը: 329

234. Լուգովիկոս Նաբոլէոն՝ տասնամեայ գահերէց: 331

235.	Նարուէոն կայսր :	333
236.	Նոր կայսեր ընթացքը : Պուրպանեանք եւ Օրլէանեանք : Բեղգիա տիրող ցեղը :	334
237.	Եւրոպական տէրութիւնք Վարուէոն Գ. իբրեւ կայսր կը ճանչնան :	336
238.	Անգղիա ու Բալմենսդըն : Փախտականք :	337
239.	Սպանիայի ու Բորդուկալի իրողութիւնները : Մարիամ Թագուհին կը մեռնի ու տեղը կ'անցնի որդին Պետրոս Ե. :	338
240.	Սարդինիայի քաղաքականութիւնը : Ընդհանրապէս Իտալիայի վիճակը :	340
241.	Աւստրիայի մէջ ռազմանագրութեան վերցուիլը : Կրօնական գաշինք :	342
Է. Արեւելեան պատերազմը նախընթաց դէպքերով ու հետեւութիւններով (1850—1858) :		
242.	Փախտականաց խնդիրը : Ռուսք Դանուբեան իշխանութիւններէն կ'ելլեն :	343
243.	Գարատաղ : Դանիէլ Բեգրովիչ իշխանը, եւ աշխարհական ու հոգեւոր իշխանութեանց բաժնուիլը :	345
244.	Դուռը Գարատաղիները զսպելու կ'ելլէ :	347
245.	Աւստրիա միջամտութիւն կ'ընէ : Լայնինկէն կոմսին դեսպանութիւնը :	349
246.	Երուսաղէմի Ս. տեղերուն խնդիրը :	350
247.	Ս. Տեղեաց վէճերուն ներքին շարժառիթը, եւ Գաղղիայի քաղաքականութեան նպատակը :	352
248.	Ռուսաց կայսեր Անգղիայի դեսպանին ըրած մտերմական առաջարկութիւնը :	353
249.	Մենչիգոֆի դեսպանութիւնը :	354
250.	Անգղիայի ու Գաղղիայի նաւատորմիղները Չանազալէսի մտ : Ռուսի զօրքերը Դանուբեան իշխանութիւնները կը մտնեն :	356
251.	Դեսպանագիտութեան ջանքը : Աւստրիայի ու Պրուշի քաղաքականութիւնը :	358
252.	Վիեննայի դեսպանաժողովն ու յայտագիրը :	359
253.	Ռուսիայի, Աւստրիայի ու Պրուշի վեհապետաց տնտութիւնը : Խաղաղութիւնը պահելու ջանք :	361
254.	Դուռը պատերազմ կը հրատարակէ : Քշնամութեանց սկսիլը :	362
255.	Գաղղիայի ու Անգղիայի նաւատորմիղները Չանազալէսի կը մտնեն : Սինոպի ծովամարտը :	363
256.	Արեւմտեան տէրութեանց ու Ռուսիայի պատերազմի յայտարարութիւնները :	364
257.	Արեւմտեան տէրութեանց ու Դրան գաշնաւարութիւնը :	366

258. Վիեննայի (Ապրիլի 9ին) արձանագիրը: Գաղղիայի ու Անգղիայի դաշնակցութիւնը: 368

259. Ռուսք Դանուբը կ'անցնին: Յունաց խլտիլն ու անոնց դէմ ի գործ դրուած միջոցները: 369

260. Աւստրիայի ու Պրուշի(Ապրիլի 20ին) դաշնակցութիւնը 371

261. Արեւմտեան տէրութեանց բանակները: Սիլիստրիայի պաշարումը: 373

262. Աւստրիական - Օսմանեան դաշնագրութիւն: Ռուսք Դանուբեան իշխանութիւններէն կ'ելլեն, եւ Աւստրիացիք կը մտնեն: 374

263. Ռուսաց Դանուբեան իշխանութիւններէն ելլելուն հետեւութիւնը: 376

264. Խորըմի արշաւանքը: 377

265. Ալմայի, Պալաքըլաւայի ու Ինքերմանի ճակատները: Սեւաստրոլի պաշարումը: 379

266. Ռուսիայէն պահանջուած երաշխաւորութեան շորս պայմանները կամ Չորս կէտերը: 381

267. Ռուսիա վերջապէս շորս կէտերը կ'ընդունի: 383

268. Դեկտեմբերի 2ին դաշնաւորութիւնը արեւմտեան տէրութեանց ու Աւստրիայի մէջ: Պրուշ նոյն դաշնաց մէջ մտնել չ'ուզեր: 385

269. Վիեննայի դեսպանատնի գլուխը: 387

270. Աւստրիայի քաղաքականութիւնը: Յրուէն տը Լիւիս պաշտօնէն կ'ելլէ: 389

271. Նիկոզայոս կայսրը կը մեռնի եւ իրեն կը յաջորդէ Աղէքսանդր Բ. որդին: 391

272. Սարդինիա դաշնակցաց հետ միանալով, Ռուսիայի դէմ պատերազմի կ'ելլէ: 393

273. Գաղղիայի եւ Անգղիայի վեհապետաց իրարու այցելութիւն ընելը: 394

274. Եւրոպորիայի կռիւր: Ռուսաց եւ գաշնակցաց խորըմի մէջ ունեցած զօրութիւնը: 396

275. Սեւաստրոլի ռմբակոծութիւնը: Դաշնակցաց նաւական արշաւանքը: Բեյլիսիէ՝ Գանրոպերին տեղ հրամանատար կ'ըլլայ: 397

276. Երկու յարձակմանը: Չեռնայայի ճակատը: 399

277. Սեւաստրոլի առնուիլը: 401

278. Սեւաստրոլի կոնսուլն հետեւութիւնները: 402

279. Արիական կողմանց պատերազմական դէպքերը: Կարսի առնուիլը: 404

280. Դաշնաւորաց նաւատորմի ղեկներուն՝ Արեւելեան ծովուն մէջ եւ հիւսիսային կողմերն ըրածները: 406

281. Շուետական ու Անգղիական-Գաղղիական դաշնաւորութիւն: 408

282. Նոյեմբերի 14ին յիշատակագիրը: 410

283. Ռուսիա Աւստրիայի վերջնագիրը կ'ընդունի: Փետրուարի 1ին արձանագիրը: Սուլդանին խաթիթի հիւմայիւնը: 411

284. Փարիզի դեսպանաժողովն ու խաղաղութիւնը: . . . 413

285. Փարիզի խաղաղութեան գաշինքն ու յաւելուածները: 414

286. Դեսպանաժողովոյն մէջ Պրուշին դիրքը: 416

287. Յունաստանի եւ Իտալիայի խնդիրները: Գեսպանաժողովոյն մէջ Սարդինիայի ընթացքը: Նէօշադէլ: . 418

288. Արեւելեան պատերազմին ձեռքովը Գաղղիայի ունեցած շահը: 420

289. Աւստրիայի, Անգղիայի ու Գաղղիայի մէջ Ապրիլի 15ին դաշինքը: 422

290. Սահմաններու կարգաւորութեան խնդիրը: Փարիզի նոր դեսպանաժողովն ու (1857ին) Յունուարի 6ին արձանագիրը: 424

291. Թէ Բնչ աւթով Անգղիա՝ Աւստրիայի հետ, իսկ Գաղղիա՝ Ռուսիայի հետ միացան: 426

292. Մոլտաւիայի ու Վալաքիայի միաւորութեան վէճը: 427

293. Փարիզի (1858ին) դեսպանաժողովը, եւ Դանուբեան իշխանութեանց վերջնական կարգադրութիւնը: . 429

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Գաղթականութանց վրայ համարօր Գեղիստիւն
(1789—1858)

294. Ընդհանուր տեսութիւն: 432

295. Ս. Յամենկոյի (Հայրդիի) շփոթութիւններն ու անկախ ըլլալը: 433

296. Սպանիական Ամբրիկայի երկիրները: 434

297. Սպանիական գաղթականութիւններէն ձեւացող անկախ հասարակագետութիւնը: 436

298. Պրագիլիա Բորդուկալէն կը բաժնուի ու անկախ կայսրութիւն կ'ըլլայ: 437

299. Անգղիայի Ամբրիկեան գաղթականութիւնները: . 438

300. Հիւսիսային Ամբրիկայի Միաբանեալ նահանգները, եւ Անգղիայի ու Գաղղիայի նկատմամբ ունեցած դիրքերնին: 440

301. Ամբրիկեան-Անգղիական պատերազմ՝ ու Միաբանեալ նահանգաց վրայ ունեցած ազդեցութիւնը: . . . 441

302. Սեւ գերեաց վաճառականութեան ջնջուիլը: 442

303. Արեւելեան Հնդկաստանի մէջ Անգղիացոց իշխանութիւնը: 444

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Ի Բ Ո Պ Ա Կ Ա Ն Տ Է Բ Ո Ւ Թ Ե Ա Ն Տ

Ը Ն Դ Հ Ա Ն Բ Ա Պ Է Ս

Ե Բ Բ Ո Ր Գ Ե Բ Ջ Ա Ն

Փ Բ Ե Գ Ե Բ Ի Կ Ա Ս Մ Ե Թ Ի Ն Մ Ա Հ Ո Ի Ա Ն Է Ն Ե Ի Գ Ա Ղ Ա Բ Ա Տ Ի
Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Թ Ե Ա Ն Է Ն Մ Ի Ն Ջ Յ Ի Մ Ե Բ Ժ Ա Մ Ա Ն Կ Ա Ն Ե Բ Ը

(1786—1858)



Ե Բ Կ Բ Ո Ր Գ Մ Ա Ս

1. Ընդհանուր տեսութիւն: Ե՛րբ Պ Ա Տ Մ Ի Ք աղաքական հասարակչութեան քայքայեալ կամ կործանեալ շինուածքը նորէն կանգնելը, քաղաքագիտութեան մինչեւ նոյն ատեն ձեռք զարկած գործքերուն ամենէն մեծն ու դժուարն էր. եւ եթէ յաջողութեամբ գլուխ ելլէր, ամենէն նշանաւորը պիտ'որ ըլլար: Թող ուրիշ ամէն դժուարութիւնները, գրեթէ տէրութիւն չկար, որուն երկրի կամ տեղական յարաբերութիւնները շփոթած չըլլային: Ստոյգ է, ինչպէս ուրիշ հեղ ըսինք (Հատ. Գ. 255), վեհապետներն եւ իրենց պաշտօնեաները՝ գլխաւոր նիւթերուն նկատմամբ իրարու հետ միաբան էին. ստոյգ է՝ այնչափ տարիներէ վեր ըրած դժբախտ փորձառութիւննին զամէնքը կը յորդորէր չափաւորութեամբ վարուելու, եւ աս անձնական շահերը մէկգի ձգելով՝ ընդհանուր օգտին միտ դնելու. ի վերայ այսր ամենայնի մեծամեծ դժուարութիւնք ալ չէին կրնար պակսիլ: Վասն զի պէտք էր

Պ Ա Տ Մ. Ք Ա Ղ Ա Ք. Գ. 1

բազմաթիւ եւ իրարու հակառակ շահերը մէկտեղ միաբանել. եւ մարդկային բնութեան հանգամանացը նայելով, գրեթէ անկարելի է որ մարդս՝ ինչպիսի պարագայից մէջ ալ որ գտնուի՝ դիւրաւ յանձն առնու բոլորովին ընդհանուր օգտին զոհել իր առանձնական շահերը: Ասկից զատ՝ կանգնուելու շինուածքը թէ հինին նման ըլլալու էր եւ թէ՛ կարելի եղածին չափ՝ նոր ժամանակներուն հանգամանաց ու պահանջմանց յարմար: Ահհայետք իրենց իշխանութիւնը հաստատուն հիմանց վրայ հիմնած ատեննին, ժողովրդոց օգուտն ու յօժարութիւններն ալ աչուքներնուն առջեւէն հեռացընելու չէին: Բայց որչափ գժուար էր երկուքն իրարու հետ միաբանել: Սակայն ինչպէս որ է նէ՛ նոյն կանգնուելու շինուածքը չէր կրնար նմանիլ ան երեւակայուածին, զորն որ շատերն իրենց մտքին մէջ կը հիմնարկէին՝ իւրաքանչիւր դք իր կարծեաց ու յօժարութեանց համեմատ: Աս այսպէս ըլլալով, պէտք է որ ամէն մարդ եղածին մէջ պակասութիւններ ու անկատարութիւններ գտնէ: Եւ թէպէտ չիկրնար բոուիլ որ եղածը՝ թերակատարութենէ զերծ է. բայց աս կրնայ զոգուիլ որ եղած լինցած գործքի մը պատշաճութեան վրայ անկողմնակալ դատաստան ընելու համար, անոր միտ դնելու չէ որ ըստ ինքեան ի վերացեալն ինչ կրնար ըլլալ, հապա անոր մտադիր ըլլալու է թէ՛ ժամանակին պարագայից ու յարաբերութեանց մէջ՝ ինչ կարելի էր: Եւ եթէ նոյն իսկ աս հայեցուածով ալ եղածին մէջ անկատարութիւնք ու պակասութիւնք գտնուին, ասոր վրայ մտացի մարդը չիկրնար զարմանալ, երբ որ միտ կը դնէ թէ նոյնը գլուխ հանողները մարդիկ էին, ուստի եւ ակարութիւններով զգտծեալ, սխալելու ենթակայ ու կրից տէր:

2. Օրինաւորութեան սկզբունք եւ սահմանագրական միապետութիւնք: Աշխարհայի տէրութեանց գումարութեան վերականգնումը՝ ընդհանրապէս Օրինաւորութեան սկզբունքին վրայ հիմնուեցաւ: Նոյն

հիմք դրուելով, պէտք էր որ մերժուած օրինաւոր վեհապետական տները նորէն իրենց կորսնցուցած գահերն ելլէին: Բայց խնդիրը՝ զանոնք միայն գահ հանելու վրայ չէր, այլ նաեւ զանոնք հաստատուն բռնելով, ընդհանուր խաղաղութիւնը տեւական ընելու վրայ: Աս նկատմամբ Ա իէննայի արքայաժողովոյն մէջ չէ թէ միայն իւրաքանչիւր տէրութեանց երկրի սահմանները, հապա իրենց կառավարութեան կերպն ալ խօսակցութեան նիւթ եղաւ: Եւ թէպէտ առ վերջին նիւթն՝ իւրաքանչիւր առանձին տէրութիւններուն որոշման թող արուեցաւ, ի վերայ այսր ամենայնի մեծ յօժարութիւն ցուցուեցաւ սահմանադրական կերպին: Նոյն յօժարութիւնը երկու պատճառէ յառաջ կու գար. մէյ մ'որ Ա հապետք կը տեսնէին թէ ամէն կողմ՝ ժողովրդոց մեծ մասը սահմանադրութեան կը բաղձայ, եւ երկրորդ՝ որ իրենցմէ շատերը կ'ուղէին իբրեւ թէ անով վարձաարել իրենց ժողովուրդները, կորսնցուցած թագերնին ձեռք բերելու օգնելուն համար՝ զիրենք ալ կառավարութեան կամ օրէնսդրութեան մասնակից ընելով: Այսպէսով Եւրոպայի շատ տէրութիւններուն կառավարութեան կերպը հետզհետէ սահմանադրական եղաւ, թէեւ առաւելապէս չափաւորեալ սահմանադրական: Հելուետիայէն զատ՝ բոլոր մեծ հասարակապետութիւններն ալ վերցուելով, Եւրոպայի տէրութեանց գումարութիւնը՝ յառաջուքնէ աւելի միապետական կերպարանք առաւ: Գարձեալ ընտրական իշխանութիւններն ալ ջնջուած ըլլալով, օրինաւորութեան հետ՝ մեծագոյն հաստատութիւն ալ մուտք գտաւ: Աս փոփոխութիւններով, այս ինքն օրինաւորութեան սկզբունքին ու սահմանադրական միապետութեանց հաստատուելովը, եւ ընտրական իշխանութեանց վերցուելովը, Ա հապետաց անձը նուիրական ու անբռնաբարելի եղաւ, որով կողմնակցութեանց կռիւները՝ որոնք ազատական ու սահմանադրական կառավարութեան կերպին նշան կը սեպուին, ալ անկէ

1*

ետեւ մինչեւ Վեհապետները չեն հասնիր, հապա մինչեւ պատասխանատու պաշտօնեաները:

Յ. Կործանեալ կամ տկարացեալ տէրութիւնները նորէն կանգնելու համար՝ Վիէննայի արքայաժողովոյն գործածած ընդհանուր միջոցը կամ չափը: Այլ Վիէննայի արքայաժողովը, որպէս զի կարգաւորեալ կերպով գլուխ հանէր իր գլխաւոր նպատակը, որ էր՝ Եւրոպայի տէրութեանց գումարութիւնը նորէն կանգնել, հարկ էր որ իւրաքանչիւր տէրութիւններն իրենց յառաջուան վիճակագրական հանգամանաց մէջ հաստատէր: Բայց բազմաթիւ պատճառներ խիստ կը գոծուարցընէին՝ եթէ ոչ անկարելի կ'ընէին՝ ասոր ճիշդ գործադրութիւնը: Ուստի տէրութեանց վիճակագրական հանգամանքը շիակելու եւ կարգաւորելու համար, իբրեւ միակ չափ առնուեցան իրենց յառաջուան բնակչաց եւ քառակուսի մղոններուն թիւն ու եկամուտքին գումարը: Աս բանս՝ ստոյգ է՝ բոլորովին անկարգ կամ անիրաւ չէր, բայց կրնայ ըսուիլ թէ միայն ասոնց միտ գնելը՝ տեղ տեղ անկարգութեան առիթ տուաւ: Գարծեալ կարելի չէր ընդհանրապէս ամէն տէրութեանց երկիրները կարգաւորելու համար՝ մի եւ նոյն աարւոյ մը վիճակն իբրեւ կանոն առնուլ: Նոյն նկատմամբ ալ սոհնարքը գտնուեցաւ, որ բոլորովին տակնուվրայ եղող եւ շիակուելու կարօտ ըլլող երեք մեծ տէրութեանց համար առանձին տարիներ սահմանուեցան: Գաղղիայի համար իբրեւ կանոն առնուեցաւ 1793էն յառաջ ունեցած վիճակը: Աւստրիայի համար՝ 1805ին վիճակը, քանի մը փոփոխութիւններով. Պրուշի համար՝ 1806ին միայն վիճակագրական չափն առնուեցաւ: Իսկ ուրիշ տէրութեանց նկատմամբ՝ փոփոխութիւններով ու երկիրներ առնելով աալով՝ ամէն բան կարգի գրուեցաւ: — Տեսնենք հիմայ Վիէննայի արքայաժողովոյն որոշումներովը Եւրոպայի տէրութեանց առած կերպարանքը, միանգամայն՝ ըստ սովորութեան՝ անոնց ներքին պատմութեան ծրագիրը մինչեւ վերջը յառաջ վարելով:

4. **ՔՐԻՍՏՈՍ**. Իր վիճակը: Առ միապետութեան՝ իր առաջին աստիճանին մէջ նորէն հաստատուիլը Եւրոպայի կարգաւորութեան ու խաղաղութեան հարկաւոր պայմաններէն մէկն էր: Գաշնակիցք իրենց յազթութիւններուն ընթացքին մէջ բացայայտ ու բարձրաձայն հրատարակած էին որ Գաղղիա մեծ ու զօրաւոր տէրութիւն ըլլալու է (Հատ. Գ. 243): Ստուգիւ ալ՝ նոյն իսկ իր սահմաններուն՝ յառաջուան վիճակը դառնալէն ետեւ, Գաղղիա՝ իր դրիւքը, ընդարձակութեամբը, բնակչաց թուովը եւ աւանց սղուփն ու կրթութեամբը՝ Եւրոպայի ամենէն զօրաւոր տէրութիւնը կը մնար: Իր սահմանները դաշինքներով արգէն որոշուած էին. իսկ իր սահմանադրութիւնը կարգի դնելն իրեն թող արուած էր: Ատիկայ թէպէտ գժուար գործք էր, բայց թողաւորը բաւական յաջողութեամբ գլուխ տարած էր, չափաւորեալ ազատական սահմանադրութիւն մը տալով, որն որ գրեթէ Անգղիայի սահմանադրութեան վրայ ձեւուած էր (Հատ. Գ. 251): Ա՛լ Գաղղիական ազգին կը մնար գործքով ցուցնել թէ ըրած փորձառութեամբը՝ ազատութեան վտանգաւոր պարգեւը կրնայ անփաստ պահել ու իր երջանկութեան համար գործածել: Եթէ աս բանս կարող ըլլար գլուխ հանել, իրեն համար երջանիկ ապագայ մը կը սպասէր: Ա՛լ Եւրոպայի մէջ թըշնամի չունէր, բաւական որ ինք չուզէր նոր թշնամիներ յարուցանել: Իր պաղարբեր երկրին մշակութիւնն՝ իր շահին առաջին ազդիւրն էր. ասկից զտո՛ւ մեծ էր ճարտարութեան գործուածքներէն ունեցած շահը: Իր չափաւոր գազթականութիւնները՝ ալ նախանձ չէին գրգռեր. բայց տիեզերական վաճառականութեան մասնակից ըլլալը կ'ապահովցնէին:

5. **Լուդովիկոս Ժ. ու Կարոլոս Ժ.**: Օրլէաննայն ցեղ, հասարակագետութիւն ու կայսրութիւն: Այս ամենայն՝ անտարակուսելի ճշմարտութիւնք էին. սակայն եւ այնպէս Գաղղիայի պատմութեան միտ գնողը եւ իր ժողովըրդոց բնաւորութիւնն ու հոգին աղէկ ճանչցողը՝ կրնար գուշակել թէ գժուարաւ պիտի կարող ըլլայ երկայն ասեն խաղաղութեան մէջ մնալ եւ իր վերոյիշեալ առաւելութեանց պտուղը հանգարտութեամբ վայելել: Իրօք ալ շուտ մը ժողովրդեան ու արքունեաց մէջ գրգռութիւն մտնելով եւ երկու կողմնն բռնած ընթացքովը հետզհետէ սաստկանալով, մեծամեծ վրդովմունքներ պատահեցան: Լուդովիկոս Ժ. ին ժամանակը պատահածները՝ առանց երեւելի հետեւութեան անցան. իսկ իր մահուընէ ետքը (1824, Սեպտ. 16) իր եղբորն ու յաջորդին՝ Կարոլոս Ժ. ին կա-

ուսման ժամանակ ան կողմնակի հասան, որ վերջապես մեծ յեղափոխութեամբ՝ ինք գահէն իյնալէն զատ, բայր իր սերունդը՝ ուստի եւ Պալարպոնեանց ցեղին գլխաւոր ճիւղը՝ Թագաւորելէն դադրեցաւ, եւ անոր տեղն անցաւ՝ նոյն ցեղին կողմնակի ճիւղէն՝ Օրլէանի տունը (1830, Յուլ.)։ Բայց աս տունն ալ իշխանութեան մէջ երկայն ատեն հաստատուն չմնաց. իր առաջին Թագաւորը՝ Լուգովիկոս Փիլիպպոս տասն'ութը տարւան չափ գրեթէ շարունակեալ շփոթութիւններով Թագաւորելէն ետեւ, իր սերունդով գահէն մերժուեցաւ (1848, Փետր.)։ Ռամկապետականք՝ նախընթաց (Յուլիսի) յեղափոխութեան ատենն ալ դիտածնին՝ նոյն ժամանակ յաջողքներով, հասարակապետութիւն հաստատեցին։ Սակայն ասիկայ խիստ քիչ տեւողութիւն ունեցաւ։ Նարայէան կայսեր եղբորորդին՝ Լուգովիկոս Նարայէան՝ նոյն հասարակապետութեան գահէրէց ըլլալէն ետեւ (1848, Դեկտ. 10), իր հօրեղբօրն օրինակին համեմատ՝ շուտ մը կայսերական աստիճան բարձրացաւ (1852, Դեկտ. 2), եւ մինչեւ հիմակ իշխանութեան մէջ հաստատուն կը մնայ։

6. Անգլիոյ. Իր ձեռք բերած երկիրները։ Յունիական կղզիք։ Աս մեծ տէրութիւնը՝ Եւրոպա տակնու վրայ ընող մորիկներուն ատենը՝ իր վիճակագրական ու աշխարհագրական գրից մէջ ամենեւին փոփոխութիւն կրած չըլլալով, ուրիշ տէրութեանց պէս նորագուելու կարօտութիւն չունէր։ Բայր նոյն շփոթութեանց մէջ միշտ Նարայէանին գիմացը առանց խոնարհելու կենալով, եւ անոր իյնալուն գլխաւոր գործակիցներէն մէկն ըլլալով, թէեւ իր պարտքին գումարը սարսափելի կերպով մեծցած էր, բայց աս բանս հոգը չէր, որովհետեւ իր բաղձացածին համեմատ՝ ցամաք երկրին իրողութիւններուն վրայ մեծ ազդեցութիւն ստացած էր, որ ազդեցութիւնն որ երբեմն աւելի եւ երբեմն նուազ կերպով՝ ան ատենէն ետքը մինչեւ հիմայ միշտ հաստատուն կը պահէ։ Իր աս առաւելութեան մեծապէս կ'օգնէ իր ծովային զօրութիւնը, որն որ բայր աշխարհքիս տէրութեանց ծովային զօրութիւններուն մէջ առաջինն է։ — Վիէննայի արքայաժողովոյն ձեռքովը՝ Եւրոպայի տախտակին նոր կերպարանք առած առեւնը, Անգլիա հազու մէկ երկու անանկ տեղեր ձեռք անցուց կամ արգէն ձեռք անցուցածներէն՝ պահեց, որոնք ըստ ինքեան փոքր բաներ են, բայց իրեն համար խիստ մեծ ծանրակշռութիւն ունին, եթէ միտ գրուի իր գլխաւոր նպատակին, այս ինքն՝ ամէն ծովորու վրայ տիրելու։ Յիշեալ տեղերն են Մալդա կղզին ու

Հերիւանա: Առաջնոյն տիրելով եւ իր պաշտպանութեան տակ աւանելով Յոնիական կղզիները, գրեթէ բոլորովին իր ձեռքը կ'ըլլայ Միջերկրական ծովը. իսկ մէկ երկու հազար՝ ըստ մեծի մասին ձկնորս՝ բնակիչ ունեցող կէս ամայի Հել-կորանա աւազուկ կղզին ձեռք բերելով, կը տիրէ Գերմա-նիայի վաճառականութեան գլխաւոր երակներն ըլլող Էլլա ու Վեզէր գետերուն: Նոյն Յոնիական կղզիները, որոնք տասնուհինգ տարի յառաջ գրեթէ ինքնապուխ հասարա-կապեաութիւն մ'եղած էին (Հատ. Գ. 138), Անգղիայի, Ռուսիայի, Աւստրիայի ու Պրուշի մէջ գրուած դաշինքով մը (1815, Նոյ. 5) Բրիտանիայի՝ միայն պաշտպանութեան տակ գրուեցաւ: Բայց ինչպէս ինք իրմէ յայտնի է, կամայ կամայ Բրիտանիա նոյն տէրութիւնն իբրեւ իր սեպհական ստացուածքը սկսաւ նկատել, եւ կառավարութիւնը՝ հոն տեղաց նկատմամբ խորհրդանոցին ալ պատասխանատու չըլ-լալով, ուղածին պէս կը վարուի:

7. Վեհապետք ու պաշտօնարանք: Գէորդ Գ. ու Գուլիէլմոս Գ. թագաւորները, եւ Վիկտորիա թա-գուհին: Անգղիայի սահմանադրութեան հոգւոյն նայելով, կրնայ ըսուել որ իր Վեհապետները թէ ներքին եւ թէ ար-տաքին քաղաքականութեան նկատմամբ, եթէ բոլորովին առանց ազդեցութեան չեն նէ, քանէ շատ մեծ ազդեցու-թիւն ալ չեն կրնար ընել: Անոր համար նոյն երկրին մէջ Վեհապետի մեռնիլը կամ փոխուիլը՝ այնպէս ծանրակշիռ գէտք չի սեպուեր, ինչպէս ուրիշ տէրութեանց մէջ: Հոն աւելի մտադրութիւն կ'ըլլայ պաշտօնէից կամ պաշտօնա-րանի փոփոխութեան, վասն զի անով շատ անգամ ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը բոլորովին տակնուվրայ կ'ըլլայ ու կը չափաւորուի, կամ յառաջուանին հակառակը կը փոխուի: Անով չէ թէ միայն տէրութեան ներքին վի-ճակին՝ հապա նոյն իսկ բովանդակ Եւրոպայի հանգամանաց վրայ մեծ ազդեցութիւն կ'ունենայ Անգղիայի պաշտօնարա-նին փոխուիլը, մանաւանդ երբոր փոփոխութիւնը՝ չէ թէ անձանց վրայ միայն կ'ըլլայ, հապա մէկ կողմնակցութիւնն իյնալով, մէկալ կողմնակցութիւնը կը բարձրանայ: Առա-ջիկայ պատմութեան մէջ շատ հեղ առիթ պիտ'որ ունե-նանք ըսածներնուս փորձը տեսնելու, թէ նկատմամբ պաշ-տօնարանաց եւ թէ նկատմամբ վեհապետաց: Աս վերջին-ներէն՝ Գէորդ Գ.ին մտաւոր հիւանդութեան տատներ ինա-մապեաութիւն ընող թագաժառանգը (Հատ. Գ. 11) խել մը ասքի նոյն ատոիճանը վարելէն ետեւ, անոր մեռած ժա-մանակը (1820, Յունու. 29) տեղն անցաւ՝ Գէորդ Գ.

անուամբ: Թէ ինք եւ թէ իրեն յաջորդող (1830, Յունիս 26) երրորդ եղբայրը Գուլիէլմոս Գ. կենդանի զաւակ չունենալով, առ վերջինը մեռած ժամանակ (1837, Յունիս 20) իրեն յաջորդեց իրենց կրտսեր եղբայրներէն՝ Բենդէ Եգուարդ դքսին Վիկտորիա ազնիւք, որն որ Սպարսնիա Գոպուրկ կաթայի դքսական տնէն՝ Ալպերդ իշխանին հետ կարգուեցաւ, եւ մինչեւ հիմայ կը թագաւորէ:

Տ. ԳԵՐՄԱՆԻԱ. Անկախ տէրութիւններու դաշնակցութիւն մը կ'ըլլայ: Գրեթէ ասոր տարի էր որ Գերմանական կայսրութեան ջնջուելովը (Հատ. Գ. 165), Գերմանիա առանձին տէրութիւն ըլլալէն դադրած էր: Իր սահմաններն ամէն կողմերէն նուազած ու ամփոփուած էին. Ռեյնոսի ձախակողմը, Հալլցայն, Էլբիքեան գաւառներն անկէց բաժնուած էին: Իսկ չբաժնուած տեղերը գրեթէ ամէն կողմ ստացուածքի վիճակը փոխուած ու առանց ապահովութեան էր: Պրուշի միապետութիւնը կէս մը կործանած, Աւստրիայի ժառանգական երկիրներուն մէկ մեծ մասն՝ յափշտակուած, Սպարսնիայի թագաւորութիւնն՝ սուրիշ քանի մը պղտիկ տէրութիւններու հետ՝ առժամանակեայ վարչութեան տակ դրուած (Հատ. Գ. 238), Վեադֆալիայի նորահաստատ թագաւորութիւնը կործանուած: Արդ այսպիսի շփոթութեան մէջ կարգաւորութիւն խթելը՝ ինչչափ գծուարութիւն չէր պատճառեր: Առանձին երկիրներուն կամ տէրութիւններուն վիճակն որոշելէն յառաջ, հարկ էր ընդհանրին վրայ որոշում ընել: Ամէն մարդ կը տեսնէր թէ առանձին երկիրները հաստատուն մնալու համար, քաղաքական կապով մէկտեղ միանալու եւ ամբողջ մը կազմելու էին: Բովանգակ Գերմանիայի հրապարակական կարծիքն առ բանս կը պահանջէր. որովհետեւ կարծես թէ կայսրութեան կործանելէն ու ազգային միութեան բոլորովին քակուելէն ետեւ՝ ամենուն սրտին մէջ նոյնին սէրն ամէն ժամանակէն աւելի գրգռուած էր: Բայց կարելի չէր առանձին տէրութիւնները ջնջելով՝ միակ տէրութեան մը դարձնել. հապա անոնց ինքնակացութիւնը պահելով՝ կերպով մը զանոնք իրարու հետ կապելու էր: Առ կարծիքը որն որ Փարիզի առաջին խաղաղութեան դաշնաց շինուելու ատենը երեւան ելած եւ նոյն դաշնաց մէջ բացայայտ դրուած էր (Հատ. Գ. 250, 2), Վիէնայի արքայաժողովոյն մէջ երկայն բանակցութեանց նիւթ եղաւ: Եւ թէպէտ անանկ գծուարութիւններ ու երկպառակութիւններ ծագեցան, որ յաջողութենէն ընդհանրապէս յուսահատելու վրայ էին. բայց վերջապէս ամէն բան կարգաւորելով, Գերմանական

դաշնակցութիւնը կազմեցաւ, որով անւական կապ մը՝ Գերմանիայի վեհապետական իշխաններն ու ազատ քաղաքները մէկտեղ միաբանած պիտի պահէր :

9. Գերմանական դաշնակցութեան մուրհակը : Իրարու հետ դաշնակցող տերութիւնք ու ազատ քաղաքները մուրհակ մը շինեցին (1815, Յունիս 8), որն որ դաշնակցութեան նպատակը, իւրաքանչիւր անդամին վրայ դրած պարտաւորութիւնները, եւ իրենց միաբանութեան ուրիշ պայմանները կը բովանդակէր : Նոյն մուրհակին ամենէն ծանրակշիռ յօդուածներն ասոնք են : Գերմանական դաշնակցութեան՝ նպատակն է՝ Գերմանիայի ներքին եւ արտաքին ապահովութիւնը եւ իր մէջն եղող առանձնական տերութիւններուն անկախութիւնը պահպանել : Գաշնակցութեան անդամները՝ նոյն անդամութեան նկատմամբ հաւասար իրաւունք ունին . ամէնքն ալ հաւասարապէս իրենք զիրենք կը պարտաւորեն դաշնակցութեան մուրհակն անքակ պահելու : Գաշնակցութեան ընդհանուր իրողութիւնները պիտի հոգացուին Ֆրանքֆուրդ քաղաքը գումարուելու դաշնակցական ժողովոյն մէջ, որուն գահերիցութեան աստիճանը պիտի ունենայ Աւստրիա . բայց իւրաքանչիւր անդամ ալ իրաւունք ունի առաջարկութիւններ ընելու, զորոնք գահերէցը պէտք է որ խորհրդի հանէ : Ժողովոյն որոշումները հասարակօրէն քուէից պարզ առաւելութեամբ կ'ըլլան . բայց զանազան նիւթեր կան՝ որոնց համար քուէից երեք մասին երկուքն ու երեքմե նաեւ աւելին հարկաւոր է : Անդամք իրենք զիրենք կը պարտաւորեն թէ՛ բոլոր Գերմանիա եւ թէ՛ դաշնակցութեան իւրաքանչիւր առանձին տերութիւններն ամէն արտաքին յարաբանանց դէմ պաշտպանել : Գաշնակցութեան պատերազմներուն մէջ առանձին անդամք բանակցութիւն, զինադադար ու խաղաղութիւն չեն կրնար ընել : Թէեւ իւրաքանչիւր տերութիւնք իրաւունք ունին ամէն կերպ դաշնաւորութիւն ընելու, բայց ամէնքն ալ իրենք զիրենք կը պարտաւորեն՝ դաշնակցութեան ընդհանրապէս եւ կամ անոր անդամներէն մէկուն դէմ եզոզ կապակցութեան մէջ չմտնելու : Գարձեալ իրենք զիրենք կը պարտաւորեն ամենեւին ինչ կերպով որ ըլլայ նէ, իրարու դէմ պատերազմ չընել, հապա խնդիրքնին դաշնակցութեան ժողովոյն առջեւը հանել եւ անոր որոշման հպատակել : Ասանցմէ զատ՝ այլեւայլ նիւթերու վրայ թէ՛ ընդհանուր եւ թէ՛ մասնաւոր որոշումներ կան նոյն մուրհակին մէջ, որոնց զլիաւորներէն մէկն է ան՝ թէ Գաշնակցութեան մէջ եզոզ

1 Confédération germanique.

ամէն տէրութիւն կարգաժողովական սահմանադրութիւն պիտ'որ ունենայ (Յօդ. ԺԳ.): Նոյն մուրհակին ստորագրեցին, որով եւ դաշնակցութեան մէջ մտան 38 տէրութիւնք եւ ազատ քաղաքներ, որոնցմէ Աւստրիա ու Պրուշ միայն իրենց ան երկիրներուն համար, որոնք յառաջուան Գերմանական պետութեան՝ մէջն էին՝ Սիլեզիա ալ մէկտեղ առնելով:

10. ԱԻՍՏՐԻԱ. Աս կայսրութեան կազմութիւնը: Ամենեւին տարակուսի տակ չէր իյնար որ աս պետութիւնը՝ Նաբոլէոնին ձեռքով իրմէ առնուած երկիրները ետ պիտի ընդունէր: Նոյն երկիրներուն գլխաւորներն էին, Բեղգիա, Իտալիայի թագաւորութիւնն ու Լիւրիկեան գաւառները կազմող տեղերը, եւ Պաւիերայի կամ ուրիշ Գերմանական տէրութեանց ու Ռուսիայի անցած երկիրները: Իրօք ալ աս ամէն գաւառները՝ քանի մը փոքր տեղերէ դուրս՝ ետ առաւ Աւստրիա: Բայց Բեղգիա՝ իր հեռաւորութեան համար իրեն այնչափ օգտակար չէր. ինչու որ պաշտպանելը խիստ դժուար կ'ըլլար, եւ շատ անգամ մէկ տարւան պատերազմի ատեն՝ ակել ծախք կը պահանջէր, քան թէ տառը տարւան մէջ շահ կը բերէր. սրուն համար ալ Յովսէփ Բ. կայսրն ուզած էր նոյն երկիրը Պաւիերայի հետ փոխել (Հատ. Բ. 213): Արդ Փրանկիսկոս կայսրը Վիէննայի արքայաժողովոյն մէջ Բեղգիայէն հրատարեցաւ, եւ որովհետեւ անոր տեղ Գերմանիայի մէջ հասուցում առնուլը խիստ մեծ դժուարութեանց տակ կ'իյնար, աչքն Իտալիա դարձուց եւ հրն ընդարձակ ու բազմամարդ գաւառներ ձեռք բերաւ: Ուստի եւ Աւստրիա՝ իր նոյն ասան ունեցած գաւառներէն զատ՝ Վիէննայի արքայաժողովոյն որոշմամբ հետեւեալ երկիրներն ընդունեցաւ: 1. Իտալիայի մէջ Գիչինոյ ու Բոյ գետերուն եւ Ադրիական ծովուն մէջ տեղն եղող երկիրները, Վելլիւնի ու Քիուեհնայի հետ, միանգամայն Մանդուայի ան մասը՝ որն որ Բոյին անդիի կողմն էր. եւ այս ամենայն Լոմպարտեան - Վենետական թագաւորութիւն կոչուեցաւ: 2. Վիէննայի խաղաղութեան դաշինքով Գաղղիայի անցած Լիւրիկեան գաւառները (Հատ. Գ. 202, 2), որոնք Լիւրիկեան թագաւորութիւն ըսուեցան: 3. Յառաջագոյն Վենետիկի հասարակապետութեան վերաբերող Գաղմատիա գաւառը՝ Ռակուզայի հասարակապետութեան ու անոր կղզիներուն հետ՝ մինչեւ Գաղղարոյի ծովածոցը: 4. Պաւիերայի հետ գրուած դաշանց (1814, Յունիս 3 ու 1816, Ապր. 14) համեմատ՝ նոյն տէրութեան ուրիշ հասուցում ընելով, Գիրոլ ու

Ֆորարդերի՝ բայ ի պզտիկ կարէ մը, Սալցպուրի՝ մինչեւ Սալցա գետը, եւ Վիէննայի խաղաղութեան գաշինքով իր- մէ Պաւլերայի անցած ուրիշ տեղերը (Հաս. Գ. 202, 1): Տ. Ռուսիայէն՝ Արեւելեան Կալիցիայի մէջ Թաղուցած Դաւ- նորալի շրջանակը (Հաս. Գ. 202, 3):

11. Փրանկիսկոս Ա., Փերդինանդ Ա. ու Փրան- կիսկոս Յովսէփ Ա. կայսրները: Այսպէսով Աւստրիայի միապետութեան երկիրները՝ աշխարհագրորէն շրջանակուած ու փակուած 12,000 քառակուսի մղոնի ամբողջ մը կազ- մեցին, 28 միլիոն բնակիչով, որոնցմէ աասը միլիոնը Գեր- մանական գաշնակցութեան կը վերաբերէր, իսկ մնացած- ները՝ Հունգարացի, Իտալացի, Լիւրիկեցի ու Լեհ էին: Աւստի նոյն միապետութիւնը դարձեալ իր աւալին կեր- պարանցն առաւ, այս ինքն՝ զանազան ազգերու եւ տէրու- թիւններու ժողով մ'եղաւ՝ միակ Վեհապետի աակ, բայց ոչ միակերպ կառավարութեան ձեւով: Նոյն ատեն՝ ինչպէս յայտնի է՝ առ կայսրութեան գահին վրայ էր Փրանկիսկոս Ա., որն որ պատերազմներու նեղութիւններն ու վշտերը կրեւէն եւ մեծ զահերով Եւրոպայի խաղաղութիւնն ու իր տէրութեան ամբողջութիւնը հաստատելէն ետեւ, ամէն կերպով սկսաւ ջանք բնել երկուքն ալ հաստատուն պա- հելու: Առ ջանքով՝ իր երկայնժամանակեայ կառավարու- թեան ատենը՝ իր երկիրներուն հանգարաութիւնը անվրդով պահպանելէն զատ, մեծապէս օգնեց ուրիշ տէրութեանց մէջ ելած շփոթութիւնները հանգարեցընելու: Մեռած ժամանակը (1835, Մարտ 2), իրեն յաջորդեց իր երէց որ- գին՝ Փերդինանդ Ա.: Բայց ասով Աւստրիայի ոչ ներքին վիճակն ու ոչ արտաքին քաղաքականութիւնը փոփոխու- թիւն կրեց. սրովհետեւ նոր կայսրը տկար ու հիւանդոտ ըլլալով, հրապարակական իրողութեանց բովանդակ առաջ- նորգութիւնը Մեդդեաւնիկ իշխանին ձեռքը ձգեց, որն որ նաեւ յառաջագոյն իբրեւ պետութեան դիւանադպիր՝ իր հօրն ալ աջ բազուկն եղած էր: Իրերը աստուիրեք տարի այսպէս մնացին. բայց նոյն ատեն Աւստրիա ալ, ուրիշ կող- մանց պէ՛ս մանաւանդ թէ անոնցմէ աւելի՝ ժամանակին յե- զափոխական միրկէն բռնուելով, քիչ մը ատեն քայքայուե- լու եւ գրեթէ կործանուելու վտանգի մէջ իյնալէն ետեւ, դարձեալ յառաջուան վիճակը մտաւ: Ասոր շատ նպաստեց՝ Փերդինանդ կայսեր հրաժարելովն ու իր Փրանկիսկոս կա- բուլա եղբորը յաջորգութեան իրաւունքէն ետ կենալովը առ վերջնոյն երէց որդւոյն Փրանկիսկոս Յովսէփ Ա.ին գահ ելելը (1848, Դեկտ. 2):

12. ՊԻՍԻՅ. Եղծ մտաբանութեան կարգմուխը: Բարբ ակրութիւնք անշտան էին որ աս մտաբանութեան՝ եր յաւարտան գրեց մէջ մանկը՝ իմաս չարեանք է. աս նիւթը մեծ գտաւարութիւններա սակ կ'իյնար, զասն զի նոյն ակրութեան երկիրներն Աւարտեցններէն աւելի կարբ կարբ եղած ու բաժնուած էին: Ամենէն աւելի մեծ գտաւարութիւն կը պատճառէր Յուսին՝ Վարաւայի գրաութեան զոյց պահանջում ընկը: Եւրոպոս՝ Ահհասանի բաժանման անէնքը սակաւին կը գրար: Պարզ գիտնարով որ եթէ աս նիւթին մէջ Յուսինի պահանջմանց զիւնով, անոր անգը նոյն ակրութիւնն ալ՝ եր պահանջումները կը պաշտպանէ, յանձն առաւ որ Ռուս Ահհասանի մէջ ուղանն աւանու, իսկ ինք անոր գիտնար բաժանարկ Սաքանիս կ'ուզէր աւանու, անոր թագաւորին՝ Վեպիտայի մէջ հասաւցում սարով: Աւարիս, Անգլիս եւ մանաւանդ Գաղղիս՝ Սաքանիայի թագաւորին կողմէ կը բանէին: Ասոք զոյց մէջերնին մեծ երկարաւակութիւններ եղան, որոնցմէ մինչեւ պատերազմ սկսաւ զտեցուիլ: Բայց վերջապէս մտաբանելու հնարք մը գտան. Սաքանիս՝ որն որ պատերազմներուն աւանը այնչափ նեղութիւն կրած էր, բաժնուելով՝ մէկ մասը Պրուշի արուեցաւ, որուն անցաւ նաեւ Վարաւայի գըը-սութեան մէկ մասը: Ասով գիտաւոր ինգիլը բաժնուելով, Յաջածը գիւրաւ կարգի գրուեցաւ: — Գիւրիգի խաղաղութեան դաշինքով՝ Պրուշ իր երկիրներուն ու բնակիչներուն գրեթէ կէսը կորսնցուցած էր (Հաս. Գ. 175): Արդ Վիէնայի արքայաժողովոյն որոշմամբ՝ կորսնցուցածին մէկ մասն նա առաւ, իսկ թող սուածին անգ՝ ուրիշ երկիրներ ընդունեցաւ: Թող սուածներն էին՝ Հարաւային Պրուսիայի ու նոր Արեւելեան Պրուսիայի մեծ մասը՝ որն որ Ռուսիայի անցաւ, գարձեալ Անսրախ ու Պայրայթ՝ որոնք Պաւիերայի ձեւքը մնացին, վերջապէս ուրիշ քանի մը տեղեր ալ՝ որոնք Հաննովերի անցան: Աս թող սուած գաւառներուն գիւմացն ընդունեցաւ Հարաւային Պրուսիայի մէկ մասը (Բազէնի գրաութիւնը), Սաքանիայի թագաւորութեան գրեթէ կէսը, Շուեսական Բամբրանիս գաւառը, Գլեւ ու Պէրի եւ Արենպէրի՝ Վեպիտայի ուրիշ կասրներով. ասոնցմէ զաս՝ Ռեհնոսի ձախակազման մեծ մասը՝ մինչեւ Սասար գետը, որով Գերմանիս նոյն կողմը ամուր նախապարիսպ ունեցաւ:

13. Պրուշի վիճակն ու դիրքը: Փրեդերիկոս Գուլիելմոս Գ. ու Փրեդերիկոս Գուլիելմոս Գ.: Աս կերպով Պրուշ շուրջ 13 միլիան բնակիչով, եւ երկու մասի բաժնուած՝ 5090 քառակուսի միլիոն երկիրներով, նորէն

Եւրոպայի մեծ տէրութեանց կարգը մտաւ, որոնց իւրաքանչիւրին ամփոփ սահմանն ու բնակչաց թիւը անոր կըրկինէն աւելի էր: Պրուշ առ իր առաւելութիւնը պահելու համար կը ջանայ իր նիւթական պղտիկութեան տեղը լեցընել իր ուղւոյն, այս ինքն իր ժողովուրդը թէ՛ մատուրական կրթութեան մէջ եւ թէ՛ զաճառականութեան ու արուեստից մէջ յառաջացընելով: Եւ իրոք ալ առ ամէն նիւթերուն մէջ ամենէն ծաղկեալ տէրութեանց թիւը կը սեպուի: Ասկէց զատ՝ Պրուշ ինք իրմէ տկար բլլալով, ամէն քաղաքական գլխաւոր խնդիրներու մէջ միշտ ուրիշ մէկ մեծ տէրութեան հետ կը միանայ, անոր զրայ կը յենու եւ անով կը զօրանայ: Բայց ինքն ալ իր գէթ բարոյական զօրութեամբն անիկայ կը զօրացընէ. եւ ասով ամէնքը կը ջանան զինքն իրենց կողմն ունենալ, սրով ինք մեծ ծանրակշռութիւն կը ստանայ: Իսկզբան տասը տարիէ աւելի Աւստրիայի ու Ռուսիայի հետ կատարելապէս միաբան կ'ընթանար, եւ երբ որ Աղէքսանդր կայսեր մեռնելէն ետեւ, անոր Նիկոլայոս եղբայրը գահ անցաւ ու պլլեւայլ գլխաւոր խնդիրներու մէջ Աւստրիայի քաղաքականութեան հակառակ ընթացք սկսաւ բռնել, Պրուշի Փրեզերիկոս Գուլիելմոս Գ. թագաւորը (Հաս. Գ. 16), թէ՛ սահմանակցութեան եւ թէ՛ ինամուտեան ('Նիկոլայոս կայսրը՝ նոյն թագաւորին փեսան էր) պատճառաւ, գուցէ ալ քիչ մը Աւստրիայի հետ ունեցած հին ստիսութեան հետեւութեամբը, բարձրովն Ռուսիայի քաղաքականութեան կողմը կը բռնէր. եւ չէ թէ միայն ինք, հաղա իր սրդին ու յաջորդը (1840, Յունիս 7) Փրեզերիկոս Գուլիելմոս Գ. ալ նոյն ընթացքը հաստատուն պահեց: Բայց Աւստրիայի հետ ալ չթընամացաւ Պրուշ, սրով Գերմանական գլխաւոր խնդիրներու մէջ իրարու համաձայն վարուելով, նոյն երկրին խաղաղութիւնը պահեցին: Իսկա երկայն ժամանակ գէմ կեցան յիշեալ երկու թագաւորները իրենց երկրին մէջ սահմանագրական կառավարութեան կերպ խօթելու. մինչեւ նոյն պատճառաւ Եւրոպայի ընդհանուր յեղափոխութեան մրկին բռնուելով, Փրեզերիկոս Գուլիելմոս Գ. ստիպեցաւ ժողովրդեան բաղձանքին զնջանել:

14. Գերմանիայի չորս պզտիկ թագաւորութիւնները: Ինչպէս յայանի է, Նաբոլէոնին ժամանակը Պաւիերա, Վիւրդեմպերկ ու Սպրոսնիա՝ թագաւորութեան ստիճան բարձրացած էին (Հաս. Գ. 161. 3 եւ 171). ասոնցմէ զատ Վիէննայի արքայաժողովը Հաննովերի տէրութիւնն ալ իբրեւ թագաւորութիւն ճանչցաւ: — Պաւիե-

բայի մէջ նոյն առաինման ընդունող Մաքսիմիլիան Յովակիմ Ա. իր երկիրները հետազհետէ մեծցուց, եւ Աւստրիայի հետ դրած Ռիաի գաղինքին համեմատ (Հաս. Գ. 235), անոր երկիրներէն մէկ քանին եւս տուած ասան՝ նոյներուն հաւասար փոխարինութիւն ընդունեցաւ: Ինք գերմանական իշխաններուն առաջիններէն մէկն եղաւ, որ իր ժողովրդեան սահմանադրութիւն տուաւ (1818, Մայ. 26): Իրեն յաջորդեց իր որդին Լուդովիկոս Ա. (1825, Հոկտեմբ. 13), որն որ ուսմանց ու գեղեցիկ արուեստից ծաղկելուն մեծ փոյթ տարաւ, եւ շինել տուած մեծամեծ ու երեւելի շինուածներովը՝ իր Միւնիք մայրաքաղաքն աշխարհքիս ամենէն գեղեցիկ քաղաքներէն մէկն ըրաւ: Բայց իր կառավարութեան վերջին ժամանակները բռնած անպատշաճ ընթացքովը՝ ստիպեցաւ դահէն հրատարիլ, որով իր անդն անցաւ իր որդին Մաքսիմիլիան (1848, Մարտ 20): — Փրեզերիկոս Ա. Վիւրզեմպերկի առաջին Թագաւորը՝ սա ժամանակի միջոցին սկիզբները մեռնելով (1816, Հոկտ. 30), իրեն յաջորդեց իր որդին Գուլիելմոս Ա., որն որ կարգաժողովական սահմանադրութիւն մը տուաւ: — Սաքսոնիայի Թագաւորութիւնը, թէպէտ Վիէննայի արքայաժողովոյն ձեռքովն իր երկիրներուն կէտը կորսնցուց, բայց Փրեզերիկոս Աւգոստոս Ա. Թագաւորն՝ իր կարգադրութիւններովն ու իմաստուն կառավարութեամբը՝ սա իր տէրութեան ըրած նիւթական կորուստին տեղը լեցուց, այնպէս որ ամէն նկատմամբ Գերմանիայի մանաւանդ թէ բոլոր Եւրոպայի ամենէն ծաղկեալ տէրութիւններէն մէկն է: Նոյն Թագաւորը քիչ փոփոխութեամբ պահեց յառաջուան կարգաժողովական սահմանադրութիւնը: Ինք անզաւակ մեռնելով (1827, Մայ. 5), իրեն յաջորդեց իր Անտոն եղբայրը, որուն անդն անցաւ իր եղբորորդին Փրեզերիկոս Աւգոստոս Բ. (1836, Յունիս 6), իսկ ասոր յաջորդ եղաւ իր եղբայրը Յովհաննէս (1854, Օգոստ. 9): — Հաննովերի Թագն ունէր Անգղիայի Թագաւորը. բայց երբ որ Գուլիելմոս Գ. մեռնելով, անոր Եգուարդ եղբորը Վիկտորիա աղջիկը Բրիտանիայի գահն ելաւ (7), Հաննովերի մէջ իրական յաջորդութիւն չկրնալով մնալք ունենալ, մեռնող Թագաւորին աւելի կրտսեր եղբայրը՝ Գրմարրլէնտի Էռնեստ գուբոր՝ նոյն տէրութեան գահն ելաւ, որով եւ երկու Թագերն իրարմէ բաժնուեցան: Էռնեստ Թագաւորն իրեն յաջորդ ունեցաւ իր Գէորգ որդին (1851, Նոյեմբ. 18):

15. Գերմանիայի փոքր տէրութիւնները: Վիէննայի արքայաժողովոյն մէջ Գերմանիայի Յասցած պզտիկ

տէրութեանց երկիրներուն նկատմամբ եղած որոշումները զանց կ'ընենք յիշատակել, որովհետեւ աւելի տեղական՝ քան թէ ընդհանուր ծանրակշռութիւն ունին: Միայն պէտք է որ՝ Աւստրիայի կայսրութենէն եւ Պրուշի ու վերը յիշուած չորս թագաւորութիւններէն զատ՝ մնացած տէրութիւններուն անուններն ու աստիճանները յիշենք: Արդ ասոնք են 1. Հետտէնի կայսրնարութիւնը, 2. Պատրնի, 3. Հետտէն-Տարնդաւի, 4. Լուքսենպուրկի, 5. Մաքլեմպուրկ-Շուերինի, 6. Սաքսոնիա-Վայմարի, 7. Մաքլեմպուրկ-Սգրեւլցի, 8. Օլտենպուրկի մեծ դքսութիւնները, 9. Զուլչայնի, 10. Պրաւնշուայկի, 11. Նասսաւի, 12. Սաքսոնիա-Վոթայի, 13. Սաքսոնիա-Գոպուրկի, 14. Սաքսոնիա-Մայնինկէնի, 15. Սաքսոնիա-Հիլպուրկհաւզէնի, 16. Անհալդ-Տեսաւի, 17. Անհալդ Պեռնպուրկի, 18. Անհալդ-Քեօդէնի դքսութիւնները, 19. Շուարցպուրկ-Սոնտերոհաւզէնի, 20. Շուարցպուրկ-Ռուտտլիաւի, 21. Հոհենցոլլեռն-Հաբինկէնի, 22. Հոհենցոլլեռն-Սիկմարինկէնի, 23. Լիխտենշտայնի, 24. Վալտէրի, 25. Հին (երիցագոյն) Ռայսի, 26. Նոր (կրտսերագոյն) Ռայսի, 27. Լիբլէ-Շաուվպուրկի, 28. Լիբլէ-Տեգմուրի իշխանութիւնները, 29. Լիւպէք, 30. Ֆրանքֆուրդ, 31. Պրեմէն, 32. Համպուրկ ազառ քաղաքները: Այս ամենայն 32 տէրութիւնք, որոնք յառաջագոյն յիշուած վեց մեծագոյն տէրութիւններուն հետ՝ Գերմանիայի դաշնակցութիւնը կը կազմեն, եւ որոնց վաղ ետքէն՝ իբրեւ 39երորդ տէրութիւն՝ աւելցաւ Հետտէն-Հոմպուրկի երկրակոմսութիւնը (1837), բոլորովին ինքնիշխան ու վեհապետական տէրութիւնք էին. իսկ Գերմանիայի հին կայսրութեան մնացած անդամները՝ յիշեալ տէրութեանց սակ մտան:

16. ՍՏՈՐԻՆ ՆԱՀԱՆԳՔ. Բոլոր թէ՛ Հոլանտական եւ թէ՛ Բեղգիական գաւառները միակ միապետութիւն մը կ'ըլլան: Ստորին նահանգաց իրողութիւններուն կարգի դրուելը՝ Եւրոպական տէրութեանց գումարութեան վերանորոգման գլխաւոր գործողութիւններէն մէկն էր: Պատմութիւնն արդէն ցուցուցած էր որ ինչպէս առ երկրին թէ՛ Բեղգիական եւ թէ՛ Հոլանտական (Բատաւիական) գաւառներուն բախտին հետ անձկութեամբ կապուած է բոլոր Եւրոպայի բախտը, եւ թէ ինչպէս Բեղգիա ձեռք անցընելով՝ Գաղղիացիք ճամբայ բացին իրենց տիեզերական իշխանութեան: Քաղաքագէտք տեսան թէ մեծապէս հարկաւոր է հանտեղը զօրաւոր տէրութիւն մը կանգնել, որն որ՝ գոնէ Պրուշի օգնութեամբը՝ կարենայ Գաղղիայի կազմանէ ըլլա-

լու աճէն կերպ յարձակմանց դէմ ինք զինքը պաշտպանել : Ասոր համար որոշեցին որ բոլոր Ստորին Նահանգները, այս ինքն՝ Հոլանտա ու Բեղգիա, միակ միապետութիւն մը ձեւա-
ցնեն՝ Ստորին Նահանգաց թագաւորութիւն անուամբ : Այսպէսով վեհապետական իշխանը, յառաջուան ժառան-
գական կուսակալը, թագաւորի տիրոջոտ առաւ, եւ ատեն
մը Հապոպուրկեան տան ձեռքն եղող բոլոր գաւառները՝
Օրանեան տան իշխանութեան տակ նորէն միացան : Վիէն-
նայի արքայաժողովը՝ Ստորին նահանգները զօրաւոր միա-
պետութիւն մ'ընելու բաղանջով՝ որոշեց որ սահմաններն
ալ ամրանան : Աս բանն ի գործ դրուեցաւ Անգլիայի ծախ-
քովը, որն որ Հոլանտայէն առած քանի մը գաղթականու-
թեանց փոխարէն՝ Ստորին նահանգաց սահմանները բերդե-
բու շարք մը շինել տուաւ : Հոլանտայի եւ արուած գաղ-
թականութիւնը՝ միայն թագաւորէն կախում ունէին, ուր
որ բուն տէրութեան համար ինք սահմանագրութիւն մը
տուաւ : — Գերմանական գաշնակցութեան վերաբերող
Լիւքսեմպուրկի մեծ դքսութիւնն ալ Ստորին Նահանգաց
թագաւորին տրուեցաւ, որն որ՝ իբրեւ ան երկրին մեծ
գուքը՝ նոյն գաշնակցութեան անդամ եղաւ :

17. ԲԵՂԳԻԱ. Հոլանտայէն կը բաժնուի ու զատ
թագաւորութիւն կ'ըլլայ : Այսպէս՝ ծագումաբ, լեզուա-
ու կրօնիւ իրարմէ տարբեր երկու ազգեր մէկտեղ միացած՝
մէկ տէրութիւն եղած էին : Օրանեան տան կառավարու-
թեան կը մնար իր խոհեմ վարմունքովը՝ ներքին միութեան
պահասութեան տեղը լեցնել ու անկից ծագել կրցող չա-
րիքները խոփանել : Բայց նոյն կառավարութիւնն աւ իր
կոչումը չկրցաւ աղէկ կատարել . այսպէսով միաւորութեան
վրայ հազիւ տասնուհինգ տարի անցնելէն ետեւ, Բեղգիա-
ցիք սուք ելելով՝ Հոլանտայէն բաժնուեցան, իրենց երկիրը
զատ անկախ թագաւորութիւն ըրին (1830), որուն թա-
գաւոր եղաւ Սաքսոնիա-Գոպուրկի ցեղէն Լէոպոլտ Ա. :
Աս թագաւորն իր չափաւորեալ վարմունքովը՝ իր հպտա-
կաց սիրելի ըլլալով եւ արտաքին տէրութեանց համարումը
վաստրկելով, Բեղգիա անոր սահմանագրական կառավարու-
թեան տակ կը ծաղկի ու կը բարգաւաճէ : Իսկ Հոլանտայի
մէջ Գուլիելմոս Ա. որն որ իր անխոհեմ վարմունքովն աւ
բաժանման գլխաւոր առիթն եղած էր, ասոր արտաւ
թագաւորելէն ետեւ՝ իր կամօքը գահէն հրաժարելով (1840,
Հոկտ. 7), իրեն յաջորդ ունեցաւ իր համանուն որդին
Գուլիելմոս Բ. : Ասոր ալ մնած ատենը (1849, Մարտ
17), անդն անցաւ իր որդին Գուլիելմոս Գ. :

16. ՀԵՆՐԻԿԻՆՆԻ. Աս դաշնակցութեան կազմու-
թիւնն ու սահմանադրութիւնը: Վիեննայի արքայաժո-
ղովն առ երկրին իրողութիւնները կարգադրեց, եւ ետքէն
գաշնակցութիւնն անոր սրոշումներն ընդունեցաւ: Նոյն ս-
րոշմանց համեմատ՝ Հելլուետիա դարձեալ իրարու հետ գա-
շնակցեալ անկախ ու ինքնիշխան հասարակապետական տէ-
րութիւններէ կը կազմուէր: Բայց յառաջուան տասնութիւնը
նահանգներուն վրայ՝ երկը նահանգ ալ կ'աւելնային, որոնք
էին՝ քանի մը տարի յառաջ նոյն գաշնակցութեանէն բաժ-
նուած Վալլիս ու Նեօշադէլ նահանգները, եւ Ճինեւրա՝
որուն սահմաններուն վրայ Գաղղիայէն ու Սաւոյայէն քիչ
մը տեղ ալ արուեցաւ: Ասանկով Հելլուետիայի գաշնակ-
ցութիւնը հետեւեալ քսանուերկու նահանգներէն կը կազ-
մուէր. 1. Յելւրիս, 2. Պեռն, 3. Լուցեռն, 4. Ուրի, 5.
Շուից, 6. Ունգերվալտէն, 7. Կլարոս, 8. Յուկ, 9. Ֆրայ-
պուրկ, 10. Սալթուռն, 11. Պադէլ, 12. Շաֆհաւզէն,
13. Աբրենցէլ, 14. Ս. Կառլոս, 15. Կրաուպինստէն, 16.
Աարկաւ, 17. Թուրքու, 18. Գետտին, 19. Վասա, 20.
Վալլիս, 21. Նեօշադէլ, 22. Ճինեւրա: Վիեննայի ար-
քայաժողովը հաստատեց որ Հելլուետիա միշտ չէզոք երկիր
ըլլայ, որն որ խիստ շահաւոր էր Գաղղիային, որուն տկար
կողմն ասով կը գոցուէր: Երկրին՝ սահմանադրութեան մէջ
հարկաւոր եղած փոփոխութիւնն ընելը՝ բուն տեղացւոց
թող արուեցաւ, միայն աս սրոշմամբ որ Միխարզութեան
մուհրակը ջնջուի (Հաս. Գ. 149): Առ սահմանադրութիւնը
քիչ մը ետքը շնուեցաւ եւ զանազան նահանգներն ընդու-
նեցան ու ստորագրեցին (1815, Օգոստ. 7): Նոյնին նայե-
լով, ամէն նահանգներն ինքնակաց ու անկախ են եւ ալ
հզատակ երկիր չկայ. բայց քաղաքացիք ալ՝ քաղաքական
իրաւանց վայելման նկատմամբ՝ իրարու հաւասար են: Իււ-
րաքանչիւր նահանգներն իրարու երկիրներուն ու սահմա-
նադրութեան փոփոխակի երաշխաւոր կ'ըլլան: Գաշնակցու-
թեան ընդհանուր իրողութիւնները խորհրդանոցի մը մէջ
կը հագացուին, որն որ երկու տարի մէյ մը կը գումարուի՝
Յելւրիս, Պեռն ու Լուցեռն գլխաւոր տեղերէն մէկը: Աս
խորհրդանոցը քսանուերկու նահանգաց գեաղաններէն կը
կազմուի, որոնք իրենց հետ բերած հրահանգներնուն հա-
մեմատ կը խօսին: Խորհրդանոցին գումարուած տեղւոյն քա-
ղաքացւոց գլուխը՝ նոյնին գահերէցը կ'ըլլայ, իսկ գոցուե-
լէն ետքը՝ վերջին անգամ ժողովուած տեղը՝ գաշնակցութեան
ընդհանուր իրողութիւնները կը հագայ: — Հելլուետիա իր
ընական ու քաղաքական գրիւքը կրնար խաղաղ մնալ ու

ծաղկիլ. բայց չափազանց ազատութեան ու անկրօնութեան հոգին եւ մանաւանդ ամէն կողմերէն օտար յեղափոխականներուն հան ժողովուիլը, շուտ մը սաստիկ գրգռութիւններ պատճառեցին, որոնցմէ մեծամեծ կռիւներ ու ներքին պատերազմ յառաջ եկան, եւ վերջապէս երկրին սահմանագրութիւնը փոխուելով, առանձին նահանգները գրեթէ ինքնակազութիւններ կորսնցուցին :

19. ԻՑՍԼԻՍ. Լոմպարտեան - Վենետիկի թագաւորութիւն : Սարդինիա ու Երկու Սիկիլիա : Ինչպէս սերիշ անգամ յիշատակեցինք, Նաբոլէոնին իյնալէն ետեւ՝ Իտալացւոց շատերը, գլխաւորաբար Իտալիայի թագաւորութեան բնակիչները, կ'ուզէին անկախ թագաւորութիւն մը կազմել (Հաս. Գ. 253). բայց իրենց աս բազմաքր չկատարուելէն զատ, երկիրնին յառաջուքնէ աւելի օտար իշխանութեան ու ազգեցութեան տակ մնաւ : Սակայն յիշեալ բազմաքր չմտրելով, մանաւանդ թէ հեռզհեռէ սաստկանալով, զանազան անգամներ մասնական յեղափոխութիւններու առիթ ըլլալէն ետեւ, վերջապէս մեծ ու ընդհանուր յեղափոխութիւն մը պատճառեց (1848), եւ թէպէտ իոկզբան կ'երեւար թէ աս վերջինն առաջիններէն աւելի յաջողութիւն պիտ'որ սենենայ, ի վերայ այոր ամենայնի նոյն անգամ ալ անյաջող ելք ունեցաւ, եւ Իտալեա յառաջուան վիճակին մէջ մնաց : — Լոմպարտեան-Վենետիկեան թագաւորութեան՝ Վեստրիայի կայսերական թագին ստացուած ըլլալը վերը տեսանք (10) : — Սարդինիայի թագաւորութիւնն իր յառաջուան վիճակին մէջ նորագուելէն զատ, իր երկրի ստացուածներն ալ մեծցան, չէ թէ այնչափ իրաւանց պատճառաւ՝ որչափ պատշաճութեան կամ յարմարութեան համար : Վիէննայի արքայաժողովը նոյն թագաւորութեան հետ միացուց Ղենուայի հասարակապետութեան երկիրները : Նոյն աւթին մէջ թագաւորական տան Գարինեան ճիւղին յաջորդութեան իրաւունքը հաստատուեցաւ. որուն համեմատ, Վիկտոր Էմմանուէլ թագաւորին (Հաս. Գ. 19) հրատարելէն (1821, Մարտ 13) եւ իր եղբորն ու յաջորդին կարլոս Փելլեքտին մեռնելէն (1831, Ապրիլ 27) ետեւ, նոյն Գարինեան ճիւղէն՝ կարլոս Ալպերդ գահ ելաւ : Աս վերջնոյն՝ Իտալացւոց վերոյիշեալ ընդհանուր շարժման գլուխ անցնելը՝ լմնցաւ իր գահէն հրատարելովը (1849, Մարտ 23) եւ իր Վիկտոր Էմմանուէլ Բ. որդւոյն իրեն յաջորդելովը : — Նէապոլսոյ թագաւորութեան մէջ հին թագաւորական ցեղին նորէն հաստատուիլը՝ մեծ գծուարութիւններու տակ կ'ը-

նար, եթէ Միւրա իր բռնած ընթացքովը նոյնը չգիւրքն-
ցընէր (Հաս. Գ. 258) : Ասոր էյնպէն ետեւ, Փերգինանգ
Գ. (Ա.) Սիկիլիայէն Նէապոլիս դարձաւ (1815. Մայ.),
որով Երկու Սիկիլիայի Թագաւորութիւնն ըստ Հին սահ-
մանաց նորէն կանգնեցաւ : Նոյն Թագաւորին մեռած ասենք
(1825, Յուլիւ. 3), տեղն անցաւ իր Փրանկիսկոս Ա. որ-
գին, ասոր ալ յաջորդեց (1830, Նոյ. 8) իր որդին Փեր-
գինանգ Բ. : Երկքին ասենն ալ աս Թագաւորութիւնը՝
թէ ներքին կարգադրութեանց եւ թէ արտաքին յարաբե-
րութեանց նկատմամբ՝ խիստ գրգռեալ վիճակի մէջ կը
գանուի :

20. Հռոմի տէրութիւն, Գոսկանա, Մոտենա,
Բարմա ու Լուզգա : Հռոմի տէրութիւնը՝ յեզափոխու-
թենէն յառաջ սենեցած ընդարձակութեամբը նորագուե-
ցաւ, մանաւանդ թէ Պորանիս ու Ֆերրարա վրան աւել-
ցան, միայն Աւստրիա իրաւունք ստացաւ Ֆերրարայի ամ-
բոցը պահակապան զօրք պահելու . իսկ Աւինեոն Գաղղիայի
ձեաց : — Սահմանները մեծցած Գոսկանայի մեծ գրտու-
թեան ու յառաջուան սահմաններով նորէն կանգնուած
Մոտենայի գրտութեան գահերուն վրայ՝ Աւստրիական
ասն երկրորդական ճիւղին իշխանները նստեցընելէն զաս,
Վիեննայի արքայաժողովը հաստատեց՝ գաշնակից վեհապետ-
ներուն Նարտէսիկն հետ գրած գաշինքին ան որոշումը,
որով Բարմայի ու Բիաչենցայի գրտութիւնն անոր Մա-
րիամ Լուիզա ամուսնոյն կը արուէր (Հաս. Գ. 248, 4) :
Բայց աս որոշման դէմ կը բողոքէր Սպանիա, որն սր նոյն
պատճառաւ Վիեննայի արքայաժողովոյն մուրհակին շտա-
բագրեց : Յիշեալ տէրութիւնը նոյն Բարմայի ու Բիաչեն-
ցայի երկիրները կը պահանջէր Եարուրիայի Մարիամ Լուի-
զա Թագուհւոյն կարուստ սրգւոյն համար, որուն հատու-
ցում չէր եղած՝ Բարմայի տեղ ընդունած Եարուրիայի
Թագաւորութիւնը կարսնցընելու ասեն (Հաս. Գ. 156
եւ 184) : Աս պահանջման իրաւոցի ըլլալը տեսնուեցաւ,
եւ ետքէն Աւստրիայի ու Սպանիայի մէջ գրուած առան-
ձին իրաւախոհութեան գաշինքով խնդիրն այսպէս կարգի
գրուեցաւ (1817, Յունիս 10) : 1. Մարիամ Լուիզա ար-
քիգրտուհին (կայսրուհին) իր կենդանութեան ժամանակը
Բարմայի ու Բիաչենցայի գրտութիւնը կը պահէ : 2. Իր
մեռած ասենը՝ նոյներուն իշխանութիւնը Եարուրիայի Թա-
գուհւոյն ու անոր կարուստ սրգւոյն կ'անցնի, որուն եթէ
արական յաջորդութիւնը սպառի, Բարմա՝ Աւստրիայի կ'անց-
նի, իսկ Բիաչենցա՝ Սարդինիայի : 3. Նոյն Թագուհին ան

միջոցին Լուգզայի դքսութիւնը կ'առնու, եւ երբոր ինք կամ իր յեղը Բարսեղի դքսութիւնն ընդունի եւ կամ սեռունդը սպառի, նոյն Լուգզայի երկիրը Գասկանայի պիտ'որ անցնի: — Մարիամ Լուիզա արքեպիսկոպոստին մեռնելով (1847, Գեկա. 8), աս դաշանց սրոշուքները գործադրեցան:

21. ՍՊՈՆՍԻՍ. Փերդինանդ Է. Թագաւորն ու Իզապելլա (Եղիստրեթ) Թագուհին: Սպանիական միապետութեան վերանորոգութիւնն ալ՝ Նաբոլէոնին իյնարուն մէկ հեռեւեակքն էր. բայց նոյն տեղն ուրիշ տէրութիւններէն տարրեր կերպարանք մ'առաւ: Տէրութեան սահմանները Եւրոպայի մէջ փոփոխութիւն չէին կրած. իսկ ժողովրդեան սգին՝ իր անկախութեան համար պատերազմած ատեն՝ բայրոսովն փոխուած եւ մէկ մասին վրայ առաջապետական հոգի տիրած էր: Նոյն պատերազմներուն եւ Թագաւորին գերութեան ժամանակը, ազգային (Գորգէզներու) ժողովը սահմանադրութիւն մը շինած էր, որն սր ժողովրդեան վեհապետութեան վրայ հիմնուած ըլլալով, թագաւորն իբրեւ թէ խորհրդանոցին գերին կ'ընէր: Փերդինանդ Է. Թագաւորն ետ գարձած ատեն՝ նոյն սահմանադրութիւնը մերժեց (Հաս. Գ. 253) եւ խիստ արձակագետական կառավարութեան կերպ մը հաստատեց: Ասով նոյն ատենէն ծածուկ գրգռութեան նշաններ սկսան երեւալ, որոնք քանի մը տարի ետքը մեծ յեղափոխութիւն պատճառեցին (1821), որն որ մերժուած սահմանադրութեան հաստատուելովը լմբնցաւ եւ հեռեւեակները քանի մը տարի տեւեցին: Օտար միջամտութեամբ նոյն շփոթութիւնը հանդարտելէն քանի մը տարի ետքը, երբոր Փերդինանդ Է. մեռաւ (1853, Սեպտ. 29), սաստիկ մեծամեծ շփոթութիւնք փրթան, որոնք իր ազնիւան Իզապելլա Բ.ին անչափահասութեան ժամանակը նոյն երկիրը տակնուվրայ ընելէն ու արեամբ Թաթիսելէն ետքը, անոր չափահաս ըլլալէն ու անձամբ կառավարելու սկսելէն վերջն ալ (1843, Նոյ. 8)՝ երկայն ատեն տեւեցին:

22. ԲՈՐԳՈՒԿՍԼ. Երկրին վիճակը: Մարիամ Թագուհին ու Պետրոս Ե. Թագաւորը: Ինչպէս որ պատերազմներուն ժամանակը աս միապետութեան բախար՝ Սպանիայի բախտին նման էր, նոյնպէս վերանորոգութենէն վերջն ալ անոր նման վիճակի մէջ գանուեցաւ, թէեւ գրգռութիւնը սկզբնաբար ուրիշ պատճառէ յառաջ կու գար, Նաբոլէոնին Բորդուկալ արշաւած ատենը՝ արքունիքը Պրատիկա գացած եւ հոն հաստատուած էր (Հաս. Գ. 184), որով գաղթականութեան երկիրը՝ գլխաւոր երկիր եւ ար-

քունեաց ու կառավարութեան նիստ եղաւ, իսկ մայր երկիրը՝ իբրև յաւելուածոց գաւառ գարձաւ: Ասանկով բազանգակ ազգին մէջ ածգոհութեան հոգի մը գրգռեցաւ, որն որ՝ երկարատեւ պատերազմներով ժողովրդեան մէջ արթնցած զինուորական հոգւոյն նայելով՝ խիստ վտանգաւոր էր, եւ փոքր առիթ մը բաւական կ'ըլլար մեծամեծ շփութութիւններ հանելու: Ինչպէս իրօք ալ Սպանիայի յեղափոխութիւնը հսն ալ նմանօրինակ յեղափոխութեան մը փրթելուն առիթ եղաւ: — Նոյն ատեն Պրագիլիա զանուազ թագաւորն էր Յովհաննէս Զ., որն որ իր թագածառանգութեան ատեն՝ իր մօրը Մարիամ Փրանկիսկա թագուհւոյն սեւամազութեան պատճառաւ՝ ինամապետութիւն բրած (Հաս. Գ. 21), եւ նոյն թագուհւոյն մեռնելովք՝ թագաւոր եղած էր (1816, Մարտ 20): Երբ որ աս վերջին թագաւորն ալ մեռաւ (1826, Մարտ 10), իր երէց որդին Պետրոս՝ որն որ Պրագիլիայի կայսր էր, Բորզուկալի գահն իր անչափահաս Մարիամ ազգիան տուաւ, որուն պատճառաւ թէեւ խել մը շփութիւնը ելան, մանաւանդ Յովհաննէս թագաւորին երկրորդ Միլայէլ որդւոյն ձեռքովը. ի վերայ այսր ամենայնի Մարիամ թագուհին իր գահին վրայ հաստատուն մնաց, եւ իր մեռած ժամանակն իրեն յաջորդ ունեցաւ իր Պետրոս Ե. որդին (1853, Նոյ. 15):

23. ԳՐԻՆՍԻ. Փրեզերիկոս Զ., Բրիտանիան Ը. ու Փրեզերիկոս Է. թագաւորները: Եւրոպայի հիւսիսային կողմին ալ, ինչպէս որ յառաջագոյն պատմութեան երէն ատենուի, ժամանակին սատանութիւններէն զերծ մնացած չէին, որով նոյն կողմանց ամէն աւերութիւններն ալ փոփոխութիւններ կրեցին: Գանիա ստիպուեցաւ Նորուեգիայէն հրատարիլ, որուն փոխարէն՝ նախ Շուեաական Բամբրանիա գաւառն առաւ (Հաս. Գ. 241). եւ քիչ մը ետքը նոյն գաւառը Պրուշի թող աւաղով, անկից Լաւենպուրկի դքսութիւնն առաւ մինչեւ Էլզա (1815, Յունիս 4): Թէ որ աս երկիրն ընդարձակութեան կողմանէ կորսնցուցածին հետ համեմատուի, սուսգիւ խիստ սկար հասուցում մին է. բայց գրից ու ներքին արժեքին կողմանէ որ նայուի, այնչափ մեծ ասարեքութիւն չիգանուիր: Ինչպէս որ է նէ, հասարակօրէն քաղաքացիացի համարումն ան է որ Նորուեգիային Գանիացուց մեռքէն ելլելը՝ իրենց համար կարուստ չէ. Նորուեգիա զանազան նկատմամբ Գանիայի կարօտութիւն ունէր, իսկ Գանիա Նորուեգիայի հարկաւորութիւն չուներ՝ բայց եթէ ծովական զօրութեան կողմանէ. սակայն յառաջումն ընդարձակութեամբ ծովական զօրու-

Թիւն ունենալ՝ Դանիա դժուարաւ կրնայ ուզել: — Աս ժամանակի միջոցներուն մէջ ալ Դանիա Հալլդայնի պատճառաւ մեծ նեղութիւն կրեց, ու մէկ երկու անգամ Գերմանիայի հետ պատերազմի բռնուեցաւ: մինչեւ հիմակ ալ նոյն խնդիրը աակաւին կարգի դրուած չէ: — Դարուս սկիզբները Գրիստիան Է. քառասունուերկու տարի թագաւորելէն ետեւ, մեռնելով (1808, Մարտ 13), իր անդն անցած էր իր Փրեզերիկոս Չ. որդին: Աս վերջինն իրեն յաջորդ ունեցաւ զԳրիստիան Ը. իր հօրեղբորորդին (1839, Գրեկտ. 3), որն որ յառաջագոյն 'Նորուեգիացոց' Շուեաի հետ միանալ չուզած ատենը՝ անանց յեղափոխութեան գլուխն անցած եւ 'Նորուեգիայի թագաւոր ընտրուած էր (Հատ. Գ. 254): Իրեն ալ յաջորդեց իր Փրեզերիկոս Է. որդին (1848, Յունու. 20):

24. ՅՈՒՆՑ ԱԻ ՆՈՐՈՒԵԳԻՅԻՆ. Երկու երկիրներուն վիճակը: Նորուեգիայի սահմանագրութիւնը: Կարոլոս Ժ. Գ. եւ Ոսկար Ա. թագաւորները: Նորուեգիային Շուեաի հետ միանալով՝ Սկանտինաւեան թերակղզին մէկ վեհապետի տակ մտած էր: Երկու տէրութիւնք ալ ազատական սահմանադրութիւններ ունենալով, աս նկատմամբ բաղձալու բան չուներ: Նոյն սահմանադրութիւններն իրարմէ անով կը տարբերին որ Շուեաի մէջ զօրաւոր ժառանգական ազնուականք կան՝ որոնք պետութեան առաջին կարգը կը կացուցանեն, իսկ Նորուեգիայի մէջ գրեթէ աղնսականաց կարգ չկայ, եւ չիկրնար ալ գրուել: Տերոզ ցեղին փոխուելովը՝ Շուեաի սահմանադրութիւնն ամենեւին փոփոխութիւն չկրեց: Իսկ Նորուեգիայի նոր սահմանագրութեան գլխաւոր մասերն ասոնք են: Նորուեգիա՝ ժառանգական սահմանադրական միապետութիւն մըն է. իբրեւ ինքնագլուխ, անկախ ու անբաժին պետութիւն՝ Շուեաի հետ մէկ թագաւորի տակ միացած: Թագաւորը բովանդակ զործադրական իշխանութիւնն ունի, օրէնքները կը հաստատէ, բայց միապետական սկզբունքին հակառակ կապերով. կրնայ տէրութեան խորհրդականներն անուանել, քանի մը ձեւեր պահելով՝ պատերազմ՝ հրատարակել, դաշնաւորութիւններ ընել, վաճառականութեան ու խաղաղութեան դաշինք ղենել: Խորհրդանոցը կամ կարգաժողովը՝ ընտրուած անդամներէ կը կազմուի, եւ ինք զինքն ընտրութեամբ երկու մասի կը բաժնէ. առաջին մասը բոլոր անդամներուն չորսին մէկէն կը ձեւանայ, երկրորդը՝ երեք քառորդէն: Կարգաժողովն օրէնսդրական իշխանութիւնն ունի, թագաւորը նոյնին երկրորդ մասին հետ օրէնք կ'առաւարտէ:

ջարկէ, որմէ առաջարկութիւնն առաջին մասին կ'անցնի: Անգամները երեք տարւան համար կ'ընտրուին. խորհրդանոցն ալ երեք տարի մէյ մը մայրաքաղաքը կը գումարուի, եւ թագաւորը նոյնին նիտներն անձամբ կը բանայ, բայց իշխանութիւն ունի ժամանակէն դուրս ալ բանալու: - Երբ որ յառաջուան կարոլոս ԺԳ. թագաւորը (Հաս. Գ. 182) մեռաւ (1818, Փետր. 5) յառաջուընէ որոշածին պէս (Հաս. Գ. 217) Պեռնատոգ թագաժառանգը՝ կարոլոս ԺԴ. անուամբ դահ էլաւ, եւ ինչպէս յառաջ նոյն պէս ետքն ալ իր խոհեմ՝ ընթացքովը պարագի հանեց մերժուած թագաւորին ցեղէն Վազա իշխանին՝ իր դահը նորէն ձեռք բերելու համար բրած փորձերը. եւ իր մեռած ատենը (1844, Յունու. 27) իրեն յաջորդ ունեցաւ իր Ոսկար Ա. որդին:

25. ԻՌԻՍԻՆ. Աս կայսրութեան մեծնալը: Աղեքսանդր Ա., Նիկողայոս Ա. ու Աղեքսանդր Բ. կայսրընորը: Անցեալ մրրիկներուն մէջէն՝ ամենեւին տէրութիւն մը այնչափ մեծցած եւ այնչափ զորացած դուրս չէլաւ, որչափ Ռուսիա: Իր արեւմտեան սահմանները Նիսիէն դեռէն մինչեւ Օտտերի քովերն ընդարձակեցան: Հիւսիսային կողմերը՝ բովանդակ Ֆինլանդիա, իսկ հարաւային կողմերը՝ Պետարաբիա ու Մոլտաւիայի մէկ մասն առած էր: Ստոյգ է Վիէնայի արքայաժողովոյն որոշմամբ Դառնուրով շրջանն՝ Աւստրիայի, իսկ Տանցիկի սահմանները, Թոռն ու Բողէն՝ Պրուշի ետ առաւ. ի վերայ այս ամենայնի Վարոսիայի դքսութենէն՝ 2200 քառակուսի մղոն տեղ՝ երեք միլիոն բնակչով, Լեհաստանի թագաւորութիւն անուամբ՝ Ռուսի կայսերական թագին հետ միացաւ: Ռուսիա արդէն յառաջ ալ թէ՛ երկրի ընդարձակութեամբ եւ թէ՛ բնակչաց բազմութեամբ ուրիշ ամէն Եւրոպական տէրութիւններէն շատ վեր էր. եւ առ երկու նկատմամբ ալ՝ ինչպէս ըսինք՝ Վիէնայի արքայաժողովոյն ձեռքը վերագիրներ ընդունեցաւ: Բայց առ կողմանէ բրած շահը՝ կրնայ փոքր բան սեպուի՝ վերջին տարիներուն պատերազմներուն մէջ ձեռքբերած բարոյական զօրութեան նկատմամբ: Ռուսաց արքային հոգին արթնցած էր, եւ կռուոյն մէջէն յաղթութեամբ ու պարծանօք դուրս ելլելով՝ կատարեալ հաստատուած: Այսպէսով Ռուսիա, որն որ աշխարհքիս երկու մասին մէջ իր իշխանութիւնը հաստատած է, այնպիսի աստիճանի հասաւ, որմէ աւելի մեծնալը՝ բախտաւորութիւն չէ: — Նոյն ատեն դահին վրայ եղող Աղեքսանդր Ա. կայսրը առաւել լայն ջանաց իր տէրութեան ներքին պայծառութիւնն

աւելցրնել եւ ընդհանուր խաղաղութիւնը պահպանել : Իսկ իրեն յաջորդող Նիկոպոլոս եղբայրը (1825, Գեկա. 1), որն որ իր նախորդէն աւելի զօրաւոր ու գործունեայ էր, առանց աս նպատակները աչքէ հանելու, աւելի մեծ ջանք տարաւ Ռուսիայի արտաքին ազդեցութիւնն աւելցրնելու, որով եւ վերջին ժամանակները Արեւմտեան տէրութեանց հետ անանկ պատերազմի բռնուեցաւ, որուն վերջը ինք չառաւ : Իրեն յաջորդող՝ երէց որդին Աղէքսանդր Բ. (1855, Մարտ 2), չէ թէ միայն կրցաւ նոյն անյաջող պատերազմը՝ կարծուածէն նուազ քննադատ լմնեցրնել, հապա իր խորագէտ քաղաքականութեամբն անանկ ընթացք մը բռնեց, որ ուրիշ մեծ տէրութիւնք ամէն կերպով ետեւէ կ'ըլլան իր բարեկամութիւնը ձեռք բերելու : — Լեհաստան՝ որն որ Ալեքսանայի արքայաժողովոյն որոշմամբն ու մեծ տէրութեանց երաշխաւորութեամբը Ռուսիայի թագին տակ՝ իբրեւ զառ տէրութիւն մ'եղած էր, ետքէն ապտամբելով (1830), բոլոր ազատութիւնները կորսնցուց եւ Ռուսիայի պարզ գաւառ եղաւ : Նոյնպէս Գրազաւ քաղաքը, որ նոյն ատեն Ռուսիայի եւ Աւստրիայի ու Պրուշի պաշտպանութեան տակ՝ ինքնազուրի ազատ քաղաք եղած էր, ետքէն Աւստրիայի իշխանութեան տակ մտաւ (1846) :

26. ՕՍՄԸՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԻՒՆ. Սուլզան Մահմուտ Բ. եւ Սուլզան Ապտիւլ-Մեծիտ : Սուլզան Մահմուտին երկարատեւ կառավարութեան ատենը (1808—1839) Օսմանեան պետութեան համար խիստ նշանաւոր է՝ թէ՛ յաջողութեանց եւ թէ՛ դժբախտութեանց նկատմամբ : Յաջողութիւնը գլխաւորաբար նեղքին փոփոխութեանց կողմանէ է : Իրօք ալ նոյն Սուլզանին ժամանակը խել մը անկարգութիւնք վերցուելով՝ այլեւայլ կարգաւորութիւններ հաստատուեցան, որոնցմով Օսմանեան տէրութիւնը՝ Եւրոպական տէրութեանց կարգը մտաւ : Պետութեան յառաջադիմութեան արգելք եղող անկարգութիւններուն մէկը, մանաւանդ թէ անանց գլխաւոր աղբիւրն էին Եէնի-չէրինները, զորոնք Սուլզան Մահմուտ վերջապէս կրցաւ ջնջել (1826), որով եւ կարելի եղաւ կանոնաւոր զօրաց գնդեր հաստատել : Միանգամայն սևամանց, արուեստից եւ գիտութեանց, երկրագործութեան ու ժամառականութեան նկատմամբ զանազան հիմնարկութիւններ ու կարգադրութիւններ բրաւ : Բայց աս նիւթերուն մէջ Սուլզանին կամքն իր բաղձացածին չափ շուտով ու աղէկ չկատարուեցաւ, զան զի թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին մեծամեծ դժուարութիւններ կային յաղթելու, որոնցմէ յառաջ եկան վերը

յիշուած գծաւորութիւնը: Ներքին գծաւորութիւնները կը ծագէին մէյ մը ռամիկ ժողովրդեան կրօնամեջութենէն, որն որ ամէն մէկ նորագութիւն՝ իրրել կրօնի հակառակ բան նկատելով կամ նկատել ձեւացընելով, կրցածին շափ անոնց դէմ կը դառնար եւ կամ մեծ գծաւորութեամբ յանձն կ'առնուր, եւ աս նիւթերն իրրել պատրուակ ձեւաւրքին կ'առնուին շփութութիւն հանելու Եւնիւէրիներու կողմնակիցները, որոնք միշտ կը բաղձային նոյն գնդերը նորէն կանգնել: Ասկից զատ՝ Սուլդան Մահմուտին բոլոր կառավարութեան ժամանակը իրրել թէ իրարու յաջորդող դաւառական ապստամբութեանց շարք մ'եղաւ: Սերուիացիք, Եանիայի Ալի Փաշան, Յոյնք, Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի Փաշան իրենց ապստամբութիւններով՝ տէրութեան բոլոր մտադրութիւնն ու զօրութիւնը կը գրաւէին. առանձինն Յոյնք առիթ տուին Ռուսիայի հետ ալ պատերազմի բռնուելու, որով Գոււր թէ նոյն տէրութեան եւ թէ ուրիշ մեծ տէրութեանց հետ այնպիսի կապակցութեանց մէջ մտաւ, որոնցմով անոնց իր վրայ ունեցած ազդեցութիւնը խիտտ մեծցաւ: Մէհէմմէտ Ալի Փաշային դէմ եղած երկրորդ պատերազմը չբլնցած՝ Սուլդան Մահմուտ մեռնելով (1839, Յուլ. 1), տեղն անցաւ իր Ապտիւլ - Մէծիտ որդին, որն որ Եւրոպական տէրութեանց օգնութեամբը նոյն ապստամբութիւնը նուաճելէն ետեւ, երկայն ժամանակ թէ ներքին եւ թէ արտաքին խաղաղութիւն վայելելով, հօրը նորագութիւնները կրցաւ յառաջ աննիլ, եւ իր հպատակաց բարօրութեան համար խել մը օգտակար կարգադրութիւններ ընել: Ասոնց սկիզբն ու հիմն է կիւլիսանէի Հատաի շէրիֆը (1839, Նոյ. 3), որով եւ որմէ ետքը տուած զանազան հրովարտակներով, առանց կրօնի զանազանութեան՝ իր ամէն հպատակներուն օրինաց տալելը հաւատար ըլլալը հառատեց: Եւ թէպէտ վերջին ժամանակները Ռուսաց հետ պատերազմի բռնուեցաւ. բայց անոր մէջն ալ չէ թէ միայն իր զօրաց կարգաւորութեան ու քաջութեան ցոյցքը տուաւ, հապա դաշնակցաց օգնութեամբը՝ առանց կորուստ ընելու՝ գլուխ հանեց, բոլոր մեծ տէրութիւններէն իր պետութեան ամբողջութեան ու անկախութեան երաշխաւորութիւն ընդունելով:

27. Բաժանում: Երեք Միջոց ժամանակի կը բաժնուի Գրուաճքիս աս Չորրորդ Հատորը, որն որ կը բաժանդակէ Գ. Շրջանին Երկրորդ մասը, այս ինքն՝ Եւ-

բուսական տէրութեանց գումարութեան կործանեալ շինուածքին նորէն հաստատուելուն պատմութիւնը :

Ա. Ալիէնայի արքայաժողովէն մինչեւ Գաղղիայի Յուլիսի յեղափոխութիւնը (1815—1830) :

Բ. Յուլիսի յեղափոխութենէն մինչեւ Եւրոպայի ընդհանուր յեղափոխութիւնը (1830—1848) :

Գ. Եւրոպայի ընդհանուր յեղափոխութենէն մինչեւ Արեւելեան պատերազմին վերջը, նոյնին հետեւութիւններովը (1848—1858) :

Այս շրջանին սկիզբները յիշատակածնուս պէս (Հատ. Գ. 10) գաղթականութեանց բովանդակ պատմութիւնը Հատորիս վերջը կը գնենք : Եւ որովհետեւ մեր պատմութեան Եւրոպական նկարագրին նայելով, նոյն նիւթին վրայ մեզի այնչափ միայն խօսիլ կը պատշաճի, որչափ որ գաղթականութիւնք՝ Եւրոպայի տէրութեանց հետ կապակցութիւն ունին կամ անոնց վրայ ազդեցութիւն կ'ընեն, իսկ գաղթականութեանց խիստ մեծագոյն մասին՝ իրենց մայր երկիրներուն հետ ունեցած կապակցութիւնը գրեթէ դարուս սկիզբէն դադրած է, անոր համար նոյն գաղթականութեանց՝ միայն իրենց մայր երկիրներէն բաժնուելուն եւ ինքնագլուխ ըլլալուն պատմութիւնը յառաջ կը բերենք : Իսկ իրենց ներքին շփոթութիւններուն, փոփոխութիւններուն, յեղափոխութիւններուն եւ յառաջադիմութեան մանրամասն պատմութիւնը՝ մեր նպատակէն դուրս ըլլալով, անոնց վրայ կամ ամենեւին չենք խօսիր եւ կամ մէկ երկու խօզքով հարեւանցի կը յիշատակենք :

ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

ՎԻԷՆՆԱՅԻ ԱՐԲԱՑԱԺՈՂՈՒԷՆ ՄԻՆՉԵՒ ԾՈՒԼԻՍԻ
ՅԵՂԱՓՈԹՈՒԹԻՒՆԸ

(1815—1830)

28. Քաղաքական հաւասարակշռութիւն: Հինգ մեծ տէրութեանց առաւելութիւնն ու ընդհանուր իրողութեանց առաջնորդութիւնը ձեռք բերելնին: Վ իէննայի արքայաժողովոյն ձեռքովը՝ Եւրոպայի տէրութեանց գումարութեան կործանեալ շինուածքը նորէն կանգնուած էր: Աս գործքը գլուխ հանողներուն դիտումն էր նաեւ՝ նոյնին հիմունքներէն մէկն եղող՝ տէրութեանց քաղաքական հաւասարակշռութիւնը (Նախաշ. 4) նորէն հաստատել: Իրօք ալ զանազան տէրութեանց զօրութեան ու ընդարձակութեան մէջ յառաջագոյն զբաժնուած համեմատութիւնը՝ Վ իէննայի արքայաժողովէն ետքն ալ գրեթէ նոյն չափով կը տեսնուի: — Բայց աս քաղաքական հաւասարակշռութեան մէջ գործքով ու գեսպանականորէն հաստատուեցաւ հինգ մեծ տէրութեանց առաւելութիւնը, որն որ ստոյգ է՝ յառաջագոյն ալ կար, բայց ոչ նոյնպէս յայտնի կերպով եւ ոչ այնչափ ընդարձակութեամբ: Աս բանս բնականորէն յառաջ եկաւ Եւրոպայի տէրութեանց գումարութեան կործանեալ շինուածքին կանգնուելու կերպէն. որովհետեւ պէտք էր որ ընդհանուր իրողութեանց առաջնորդութիւնը՝ ան տէրութեանց ու վեհապետաց ձեռքն անցնէր ու մնար, որոնց ջանիւքը տկարագոյնք իրենց կորսրնցուցած իշխանութիւնն ու գահերը նորէն ստացած էին: Իրաց պարագաներէն բնականապէս յառաջ եկող աս առաւելութիւնը՝ գեսպանականորէն ալ հիմնուեցաւ նախ Շոմոնի դաշինքով, որով չորս գլխաւոր տէրութիւնք՝ Աւստրիա, Ռուսիա, Անգղիա ու Պրուշ, քսան տարւան համար մէջերնին Չորից դաշնաւորութիւնը գրին (Հատ. Գ. 245). աւելի զօրացաւ Վ իէն-

նայի արքայաժողովոյն բանակցութեանց եղանակաւ եւ Վիեննայի մէջ Շոմնի դաշանց նորոգուելովը (Հատ. Գ. 257). վերջապէս կատարեալ հաստատուեցաւ Ատիւնի դեսպանաժողովոյն մէջ Գաղղիային ալ յիշեալ չորս տէրութեանց հետ միանալովը (30): Հինգ տէրութեանց աս առաւելութիւնը կամ աս Հնգապետութիւնը¹ եթէ միայն ընդհանուր իրողութեանց առաջնորդութեան մէջ մնար եւ պատշաճ սահմաններէն դուրս չելլէր, ըստ ինքեան օգտակար բան էր. կրնայ բուռի որ իբր թէ Եւրոպական ծերակոյտ մը կը ձեւացընէր, որուն ձեռքովը կրնային կարգի դրուիլ նոյն իսկ զանկայ կազմող տէրութեանց մէջ ծագած երկպառակութիւնները, իսկ ուրիշ տէրութեանց նկատմամբ՝ իբրեւ միջնորդ եւ իրաւընտիր՝ կրնար հասարակաց խաղաղութեան մեծ ծառայութիւն ընել: Բայց պէտք է խոստովանիլ որ շատ վնասակար կրնար ըլլալ նոյն առաւելութիւնը, թէ որ պատշաճ սահմաններէն դուրս ելլէր:

29. Սուրբ դաշնաւորութիւն: Ա՛յ եհապետք եւ գլխաւորաբար Նաբոլէոնին դէմ դաշնակցող՝ Աւստրիայի, Ռուսիայի ու Պրուշի վեհապետները՝ ուզեցին դեսպանականօրէն ըլլալ կրցածէն աւելի բարձր հաստատութիւն մը տալ իրենց կապակցութեան, եւ ասոր համար կրօնին դիմեցին: Յեղափոխութեան եւ իր գործած չարիքներուն գլխաւոր սկզբնապատճառներէն մէկն եղած էր անկրօնութիւնը. բայց հետզհետէ կրօնական զգածմունքն ամենուն սիրտը նորէն ախրած էր, այնպէս որ վեհապետք ու ժողովուրդք իրենք զիրենք ու իրենց շահերը կրօնի պաշտպանութեան տակ ձգել կ'ուզէին: Աս մտօք վերոյիշեալ երեք դաշնակից վեհապետք տակաւին Փարիզէն չելած, իրենց մէջ Մուրդ դաշնաւորութիւնը² ըսուած դաշինքը դրին (1815, Սեպտ. 26), որուն մուրհակին սկիզբն ասանկ կը զրուցէին. Երեք վեհապետք,

1 Pentarchie.

2 Sainte alliance.

որոնք վերջին տարիներուն մեծ գէպքերէն ներքին համազում սասցած են որ իրենց բոլոր գործքերը մեր Փրկչին սուրբ կրօնին սորվեցուցած բարձր ճշմարտութեանց վրայ հիմնեն, կ'ուզեն իրենց իւրաքանչիւր տէրութեանց վարչութեան՝ ինչպէս նաեւ իրենց քաղաքական փոփոխ յարարերութեանց մէջ, միակ կանոն առնուլ արգարութեան, քրիստոնէական սիրոյ ու խաղաղութեան օրէնքները: Անոր համար, կ'ըսէին, Ս. Գրոց խօսքերուն համեմատ՝ որոնք ամէն մարդիկներուն կը հրամայեն իրար եղբօր պէս սիրել, կ'ուզենք իրարու հետ եղբայրական ճշմարիտ ու անքակ սիրոյ կապերով կապուած մնալ, իրարու միշտ օգնական եւ նպաստամտոյց ըլլալ, մեր հոգատակաց վրայ՝ իբրեւ հոյր տիրել, եւ կրօնը, խաղաղութիւնն ու արգարութիւնը հաստատուն պահել: Ինք զինքնիս իբրեւ մէկ քրիստոնէական ազգի անդամներ կը նկատենք, որ Նախախնամութենէն՝ միեւնոյն ընտանեաց պլեւայլ ճիւղերը կառավարելու պաշտօնն ընդունած ենք: Ա երջապէս, կ'ըսէին, մեր աս սուրբ գաշնաւորութեան մէջ սիրով կ'ընդունինք ան ամէն վեհապետները, որոնք նոյնին մէջ յայտնուած սկզբունքները կը ճանչնան: Անմիջապէս ալ քահանայապետէն ու Գռնէն զատ՝ բոլոր ուրիշ Եւրոպական տէրութիւնները հրաւիրեցին նոյն գաշնագրութեան մէջ մանելու, եւ ամէնքն ալ բաց ի Անգղիայէն՝ իրզք մտան: Իսկ աս վերջին տէրութիւնը չուզեց մանել, որպէս զի անանկ պարտաւորութիւն մը յանձն չառնու՝ որ ատենով կարենայ իր շահուն արգելք ըլլալ. անոր համար խնամապետը (7) յայտնեց որ թէպէտ ինք ան գաշնաւորութեան սկզբունքներուն համաձայն է, բայց տէրութեան սահմանագրութեան նպետով, առանց պատասխանատու պաշտօնէի մը ստորագրութեան՝ չիկրնար գաշինք դնել:

30. Ասխընի դեսպանաժողովն ու անոր արձանագիրը: Ա վեհապետաց գործքին կատարեալ զլուխ ելլելուն համար՝ կը պակսէր տակաւին Գաղղիայի հետ

բողոքովին հաշտուիլը, որն որ դաշնակցաց պահակապան բանակը (Հատ. Գ. 261, 3) ետ չքաշուած՝ չէր կրնար գլուխ տարուիլ: Գաշնակից տէրութիւնք՝ Լուդովիկոս ԺԸ-ին բաղձանաց համեմատ՝ յանձն առին առ բանս ընել. նախ նոյն պահակապան զօրաց հինգին մէկը ետ կանչեցին (1817, Ապր.). իսկ բոլորն ալ հանելու որոշումն եղաւ երկրորդ տարին Ասիւնի դեսպանաժողովոյն մէջ, ուր Աւստրիայի եւ Ռուսիայի կայսրներն ու Պրուշի թագաւորը անձամբ եկան, իսկ Անգղիա ու Գաղղիա դեսպան խաւրեցին (1818, Հոկտ.): Ասոր մէջ որոշուեցաւ որ նոյն պահակապան զօրքն ետ քաշուի. որուն հետեւութիւնն եղաւ Գաղղիային ալ՝ վարիչ գլխաւոր տէրութեանց կարգն անցնիլն ու անոնց հետ գաշնակցիլը (Հոկտ. 9): Ահաւասիկ նոյն դեսպանաժողովոյն Արձանագիրը, որմէ կը տեսնուին ան սկզբունքները՝ որոնց համեմատ մեծ տէրութիւնք կ'ուզէին Եւրոպայի ընդհանուր իրողութեանց առաջնորդել: Արձանագիր. 1. Աւստրիայի, Գաղղիայի, Մեծին Բրիտանիայի, Պրուշի ու Ռուսիայի արքունիքները հաստատութեամբ որոշած են ամենեւին չհեռանալ նոյն միաւորութեան հիմունքէն, որն որ մինչեւ հիմակ իրենց ընդհանուր գործադրութեանց մէջ կը տիրէր եւ վեհապետներուն մէջ հիմնուած քրիստոնէական եղբայրսիրութեան կապովն աւելի եւս անձուկ եղաւ: 2. Աս միաւորութիւնն ամենեւին ուրիշ նպատակ չիկրնար ունենալ՝ բայց եթէ խաղաղութեան պահպանութիւնը, որն որ դաշինքներով հաստատուած պարտաւորութիւններուն կատարման եւ անոնցմէ ծագող իրաւանց յարգուելուն վրայ հիմնուած է: 3. Գաղղիա, որն որ օրինաւոր եւ սահմանադրական արքունի իշխանութեան հաստատուելով՝ ուրիշ տէրութեանց կարգը մտած է, ինք զինքը կը պարտաւորէ գործակից ըլլալ ան դրութեան հաստատուելուն ու պահպանուելուն՝ որն որ Եւրոպային խաղաղութիւն շնորհեց եւ նոյնը տեսական կրնայ ընել: 4. Աս որոշմանց ստորագրող տէրութիւնք՝ նոյններուն մէջ յայտ-

նուած նպատակներուն համար առանձին բանակցութիւն ընել ուզած ատեննին, թէ որ խօսելու խնդիրնին իրենց սեպհական տէրութիւններուն կը վերաբերի, պէտք է որ ամէն անգամ բանակցութեան տեղն ու ժամանակը յառաջուրնէ դեպքանական ճամբով որոշեն. իսկ եթէ ուրիշ տէրութեան վերաբերեալ խնդրոյ վրայ է, պէտք է որ նոյն տէրութեան կողմանէ մասնաւորապէս հրաւիրուին եւ նոյն տէրութիւնն ալ իրաւունք ունենայ բանակցութեանց մասնակից ըլլալու: Ծ. Աս որոշումները առանձին յայտարարութեամբ բոլոր Եւրոպական արքունեաց պիտի ծանուցուի (Նոյ. 15):

31. Աս ժամանակի միջոցին քաղաքականութիւնը: Այսպէսով Եւրոպայի մէջ տեսակ մը նոր քաղաքականութիւն սկսաւ, Օրիկուստրոյթեան, Սուրբ դաշնուստրոյթեան եւ Հնգապետութեան (հինգ մեծ տէրութեանց առաւելութեան) սկզբունքներուն վրայ հիմնեալ: Աս սկզբունքներուն հետեւութիւնը եւ նոյնները հաստատողներուն դիտումն էր բոլոր յեղափոխական գաղափարները ջնջել՝ ժողովրդեան վեհապետութեան սկզբունքին եւ ռամկապետական սահմանադրութիւն հաստատելու ջանքին գէժ միաբան կռուելով. ներկայ վիճակը պահպանել կամ հին վիճակը նորոգել. միապետական սկզբունքն ու կառավարութեանց իշխանութիւնը զօրացընել՝ վեհապետներուն ու անոնց հպատակներուն մէջ եղած յառաջուան նահապետական յարաբերութիւնները հաստատելով: Ասկից ծագեցան վեհապետաց ու իրենց պաշտօնէից՝ Դրորաւ, Լայպպիս ու Վերոնա ըրած ժողովները (52 ու 54), որոնց նպատակն էր այլեւայլ տէրութեանց մէջ վրդովեալ խաղաղութիւնը հաստատել եւ վտանգի մէջ գտնուող օրինաւորական իշխանութիւնը պատասպարել: Նոյն սկզբունքներուն հետեւութիւնն եղաւ գարձեալ օտար տէրութեանց ներքին իրողութիւններուն միջամտութիւն, ան ալ՝ չէ թէ միջնորդական կամ բարոյական, այլ՝ զինեալ միջամտութիւն: Աս քաղաքականութիւնն ընդ-

Հանուր խաղաղութեան պահպանութեան համար որչափ որ ալ օգտակար սեպուի, ի վերայ այսր ամենայնի չէր կրնար երկայն ժամանակ տեւել. թէ անոր համար վասն զի ըստ նկատմանց ինչ անբնական էր եւ մեծամեծ զոհերով կտպուած, եւ թէ անոր համար՝ վասն զի դժուար էր որ հինգ տէրութեանց շահերն ու կարծիքները միշտ իրարու միաբան ըլլային: Իրգը ալ տասը տարի չանցած՝ սկսաւ խախտիլ, եւ բոլորովին քայքայեցաւ՝ երբ որ դարձեալ օրինաւոր իշխանութիւնը կործանեցաւ ան երկրին մէջ, որն որ առիթ եղած էր վերոյիշեալ սկզբունքներուն եւ անոնցմէ յառաջ եկած քաղաքականութեան հաստատուելուն, եւ այլ անկէ ետեւ ըստ մտօին հակառակ սկզբունքներ հաստատուեցան:

Ա.

Կողմնակցութեանց կոիւնները, արձակապետութեան դեմ ելած յեղափոխութիւններն ու հնգապետութեան նոյնները զսպելոս շահերը (1815—1830):

32. Քանի մը արձակապետական վեհապետաց ընթացքը: Ինչպէս յառաջագոյն յիշեցինք (2), Եւրոպայի տէրութեանց շատերուն կառավարութեան կերպը սահմանադրականն էր, որն որ ժամանակին հոգւոյն ամենէն յարմարը կ'երեւար: Աւհապետք աս բանիս ընդհանրապէս համոզուած ըլլալին զանազան առիթներու մէջ ցուցուցած էին. առանձինն Գերմանական դաշնակցութեան մուրհակին մէջ որոշուած էր որ Գերմանիայի ամէն տէրութիւնք կարգաժողովական սահմանադրութիւն ունենան (9): Սակայն որովհետեւ ուրիշ տեղ զըուցածնուս պէս (Հատ. Գ. 1), ամէն ազգի ու ամէն տեղոյ չիկրնար միեւնոյն կառավարութեան կերպը պատշաճիլ, շատ տեղ սահմանադրական ազատութիւնը չիկրնար ժողովրդեան կրթութեան աս-

տիճանին ու բնաւորութեան հետ համաձայնիլ, անոր համար տեղ տեղ վեհապետք արձակապետութիւնը պահեցին: Ասոր դէմ ամենեւին բան չիկրնար զրցուիլ, թէեւ ստոյգ համարուի անոնց կարծիքը՝ որոնք կը համարին թէ նոյն վեհապետներուն ոահմանադրութիւն չտալուն պատճառը՝ աւելի իրենց իշխանութիւնը չկորսընցընելն էր, քան թէ ժողովրդեան անյարմարութիւնը: Սակայն կարելի չէ նաեւ չմեղադրել զանոնք՝ որոնք իրենց կորսընցուցած թագը գրեթէ գրեթէ իրենց ժողովրդեան ձեռքէն ընդունելով, առանց միտ գնելու որ անոնք քանի մը տարիէ վեր չափազանց ազատութեան վարժած են, նորէն հաստատուած արձակապետութիւնը՝ քիչ մը ազատական ու սահմանադրական կարգադրութիւններով մեղմելու տեղ, նոյնը չափազանց կերպով եւ արտաքոյ կարգի խստութեամբ յառաջ տանիլ ուզեցին: Ասոր հետեւութիւնն եղաւ իրենց ժողովրդաց մէկ մասին, որն որ հաւանական է թէ չափաւորեալ ազատութեամբ գոհ կ'ըլլար, ապստամբութիւններ հանելով՝ չափազանց ազատութիւն ձեռք բերելու եւ թագաւորական իշխանութիւնը գրեթէ ոչոնչացընելու փորձեր ընելը, որմէ մեծամեծ շփոթութիւնք ու չարիք պատճառեցան:

33. Կողմնակցութիւնը: Սահմանադրական կառավարութեան կերպը՝ ռամկապետական հասարակապետութեան ու արձակապետութեան մէջտեղը միջին բան մ'ըլլալով, որուն մէջ թէ վեհապետին իշխանութիւնը կը պահուի եւ թէ ժողովուրդն իր երեսփոխաններուն ձեռքովն իր իրաւունքները կրնայ պահպանել, կը կարծուէր որ ամենէն նուազ ժողով կու տայ տեղաւորութեան ու շփոթութեան: Բայց մարդկային իրողութեանց մէջ կատարեալ ու պակասութիւն չունեցող կամ չափազանցութեամբ գէշի գործածուիլ չկրցող բան ամենեւին չիգտնուիր: Զինուց դղրդիւնն ու պատերազմի աղմուկը դադարելուն պէս, շատ տեղ ժողովուրդք սկսան իրենց քննախնդիր աշուրները կառա-

վարութեանց ներքին գործողութիւններուն գարձընել, եւ ամէն մարդ իրեն աղէկ երեւցածն ու իր սկզբանց կամ շահուն համաձայն եղածը հաստատելու կամ յառաջ տանելու ջանք ընել: Ասով ամէն տեղ երկու իրարու հակառակ զօրաւոր կողմնակցութիւնք ձեւացան: Մէկը՝ Ազնուապետական կամ Պահպանողական (երբեմն նաեւ ծառայական) կողմնակցութիւն կոչուեցաւ. որուն գիտումն ան էր որ ժողովուրդը՝ կարելի եղածին չափ նուազ իրաւունք, եւ կառավարութեան գործքերուն մէջ՝ քիչ կամ ոչինչ մասնակցութիւն ունենայ: Իսկ մէկալ ասոր հակառակ կողմնակցութիւնը՝ Ռամկապետական կամ Ազատական եւ՝ խիստ չափազանց եղած ատեն՝ Արմատական ըսուեցաւ. ասոր ալ նպատակն ան էր որ ժողովուրդը որչափ կարելի է նէ՝ աւելի իրաւունք ստանայ եւ կառավարութեան գործքերը գրեթէ բոլորովին իր ձեռքն ըլլան: Նոյն երկու գլխաւոր կողմնակցութիւնք բազմաթիւ պզտիկ բաժիններու բաժնուեցան, իրենց կարծեաց կամ գիտմանց մէջ չափաւորեալ ու չափազանց ըլլալնուն համեմատ: Աս կերպով կողմնակցութեանց կռիւնները՝ քաղաքական կենաց իբրեւ թէ հոգին եղան:

34. Գերմանիայի կողմնակցութիւնք ու զժողովութիւնք: Կողմնակցութեանց կռիւններէն եւ սահմանադրական ազատութեան բաղձանքէն ծագող շփոթութիւնք՝ ամէն տեղէն յառաջ Գերմանիա սկսան: Ասիկայ բնական բան էր. վասն զի ուր որ ուրիշ տէրութիւնք՝ կամ ըստ մասին եւ կամ ըստ բոլորովին՝ իրենց հին հանգամանաց մէջ հաստատուած էին, ան երկրին մէջ բոլորովին նոր վիճակ մը ծագած էր, որուն վրայ շատերը տժգոհ էին, եւ իւրաքանչիւր կողմնակցութիւն իր բաղձանաց ու ըմբռնմանց համեմատ՝ փոխել կ'ուզէր: Խիստ մեծ մաս մը կը բաղձար որ Գերմանիայի հին կայսրութիւնը նորէն հաստատուի, ժամանակին հոգւոյն համեմատ նորոգութիւններով եւ ժողովուրդն իր աւուրք ստանալով օրէնսդրութեան մասնակից ըլլա-

լու : Աս կարծիքն ունեցողները մեծ տհաճութեամբ կը տեսնէին որ աս իրենց յուսացած ու բաղձացած վիճակին տեղ, որով Գերմանիա ներքին հաստատութենէն զատ՝ արտաքին մեծ ազդեցութիւն ու օտար տէրութեանց առջեւը համարում կրնար ստանալ, հազիւ զանազան վեհապետական տէրութեանց դաշնակցութիւն մը դրուած էր, որով ներքուստ՝ ակար, իսկ արտաքուստ առանց համարման ու ազդեցութեան կը մնար : Ուրիշ շատեր՝ որոնք Անգղիայի նման սահմանադրութիւն ունենալ կ'ուզէին, մեծապէս տոգոհ էին դաշնակցութեան մուրհակին մէջ եղած որոշման վրայ, որով ընդհանրապէս կը հաստատուէր որ իւրաքանչիւր տէրութիւն կարգաժողովական սահմանադրութիւն ունենայ, առանց ժամանակն ու կերպը սահմանելու եւ առանց յայտնելու որ ինչպիսի սկզբանց վրայ պիտի հիմնուի : Ասոնց տհաճութիւնն անով աւելի կը սաստկանար որ յայտնի կը տեսնէին թէ Գերմանիայի երկու գլխաւոր տէրութիւնք՝ իրենց ըմբռնածին համեմատ սահմանադրութեան հակառակ են, իսկ տեղ տեղ նոյնպիսի սահմանադրութիւններ դրուելէն՝ բաղձանքնին կը մեծնար՝ ընդհանրապէս բոլոր Գերմանիա ալ նոյնը հաստատելու : Ասոնք ռամկապետական սկզբանց վրայ հիմնեալ, իրաց նոյն ժամանակուան վիճակին վրայ տոգոհ էին, որովհետեւ իրենց կարծեաց նայելով՝ ժողովուրդը տէրութեան գործքերուն մէջ բաւական մասնակցութիւն չունէր . ասոր հակառակ ազնուականք չէին կրնար առանց տրանջելու տեսնել թէ իրենց իրաւունքները կորսուած են, եւ թէ շատերը կը ջանան իրենց եւ քաղաքացւոց մէջ եղած կարգի զանազանութիւնը նուազեցընել, մանաւանդ թէ բոլորովին ջնջել : Ամենէն աւելի տոգոհ էին յառաջուան կայսերութեան ատեն աւագաժողովոյն անգամ եզոզ՝ անկախ կամ կայսեր անընդմիջական իշխանութեան տակ գտնուող իշխանք, որոնք նոր կարգաւորութեան նայելով՝ իրենց անկախութիւնը կորսընցուցած, եւ յառաջագոյն իրենց

Հաւասարը սեպուող իշխանի մը տակ մտած էին ու հասարակ ազնուականներէն տարբերութիւն չունէին: Ասանկով Նաբոլէոնին իյնալովը՝ Եւրոպայի վրայ ընդհանուր հանգարտութիւն տիրած ատեն, Գերմանիայի մէջ սաստիկ գրգռութիւն կար, եւ Գերմանական վեհապետք մեծ դժուարութիւն կը կրէին իրենց ժողովուրդները հպատակութեան սահմանին մէջ պահելու:

35. Ֆրանքֆուրդի դաշնակցութեան ժողովոյն որոշումները: Իրաց աս հանգամանքին մէջ շատերը մեծ յոյս կ'ունենային դաշնակցութեան մուրհակին որոշման համեմատ՝ Ֆրանքֆուրդ քաղաքը գումարուելու դաշնակցութեան ժողովոյն վրայ, որն որ զանազան խափանարար արգելքներու եւ պատրաստութիւններու պատճառաւ, որոշեալ ժամանակէն (1815, Սեպտ. 1) հազիւ տասնուչորս ամիս ետքը կրցաւ բացուիլ (1816, Նոյ. 5): Սակայն նոյն ժողովոյն վրայ աս նկատմամբ եղած ակնկալութիւններն ալ չկատարուեցան. ինչու որ ըրած որոշումները՝ գրգռութիւն պատճառող նիւթերէն տարբեր նիւթերու վրայ էին: Օտար տէրութեանց հետ ունենալու յարաբերութեանց վրայ որոշեց որ Գերմանական դաշնակցութիւնը յառաջուան Գերմանիայի կայսրութեան տեղն անցած ըլլալով, իբրեւ առաջին աստիճանի ազատ եւ անկախ տէրութիւն պիտ'որ ըլլայ. ուստի եւ դեսպան պիտի խաւրէ եւ ընդունի: Բայց ինչ օգուտ ունէր աս որոշումը, երբ որ ներքին անձուկ միութիւնն ու զօրութիւնը պակասելով, արտաքին տէրութիւնք վրան համարում չէին ունենար: Դարձեալ զինուորական զօրութեան նկատմամբ որոշուեցաւ որ դաշնակցութիւնը 300,000ի բանակ մ'ունենայ, տասը գունդ կամ զօրաբաժին բաժնուած. ասոնցմէ երեքը Աւստրիա պիտի տար (շուրջ 95,000 հոգևով), երեքը՝ Պրուշ (79,000 հոգևով), մէկը՝ Պաւիերա (35,000 հոգևով), իսկ ուրիշ տէրութիւնք պիտի տային մնացեալ երկու գնդերն ու երկու պահեստի գնդեր: Ժողովոյն մէջ ամէն նիւթերէն աւելի գրը-

գուլթեան առիթ առաւ գաշնակցութեան մուրհակին ժ. Գ. յօդուածը, որով կ'որոշուէր որ «Գաշնակցութեան բոլոր տէրութիւնք կարգաժողովական սահմանադրութիւններ ունենան», բայց կրնայ ըսուիլ թէ նոյն նկատմամբ սահմանուածը՝ բոլորովին առանց հետեւութեան մնաց:

36. Աղմուկներ ու շփոթութիւններ: Այս կերպով գաշնակցութեան ժողովոյն վըայ եղած ակնկալութիւնները պարապի երթալով, գրգռութիւնք աւելի սաստկացան: Արդէն ինչպէս ուրիշ տեղեր, նոյնպէս Գերմանիա ալ երկու մեծ կողմնակցութիւնք ձեւացած էին, այս ինքն՝ Ազնուապետական կողմնակցութիւն, որն որ պահպանողական կամ յետաշրջական գաղափարները յառաջ տանիլ կ'ուզէր, եւ Ազատական կողմնակցութիւն, որն որ ռամկապետական սկզբունքները կառավարութեանց կերպին մէջ խոթել կը ջանար: Վերջին կողմնակցութեան հասակաւոր ու փորձառու մարդիկը՝ աշուրնին Անգղիա ու Գաղղիա գարձուցած՝ Գերմանիա ալ հետզհետէ աս նոր սահմանադրական ձեւերը հաստատելու փոյթ կը տանէին. իսկ երիտասարդք՝ իրենց վառվռուն երեւակայութեամբը՝ միջին գարու Գերմանական սովորութիւններուն զարնուած, նոյները՝ նոր տաճնուան ձեւերուն ու անուններուն տակ՝ նորէն դուրս հանել կ'ուզէին: Այսպիսի երեւակայական գաղափարները, զորոնք՝ առանց որոշ նպատակ ունենալու եւ արգելքները ճանչնալու՝ գործադրել կ'ուզէին, անտարակոյս մեծ շփոթութիւն չպատճառած՝ ըստ ինքեան օգը կը ցնդէին, թէ որ արտաքոյ կարգի պարագայով մը ծանրակշռութիւն չստանային: Նոյն ատենները պատահելով Լուտերականութեան կամ Նորագութեան սկսելուն երրորդ հարիւրամեակը, Գերմանիայի բողոքականք ուզեցին մեծ հանդիսութեամբ տօնել: Համալսարանաց ուսանողներէն 600 հոգի նոյն նպատակաւ եւ միսնգամայն Լիփսիայի ճակատամարտին (Հատ. Գ. 236) յիշատակը կատարելու

Համար՝ Այգենախի քով Վարդպուրի բերդը ժողովեցան (1817, Հոկտ. 18), ուր Լուտեր՝ Վորմսի աւագաժողովէն ետքը (Հատ. Ա. 38) երկայն ատեն պահուրտած էր: Հոն խել մը ճառեր խօսուեցան իշխանաց ու ազնուապետականաց դէմ, զորոնց ժողովըդոց բռնաւոր կը կանչէին. եւ Լուտերի օրինակին համեմատ՝ ազատականութեան հակառակ կարծիքներ պաշտպանող գրքերը հրապարակաւ այրեցան: Ասոր վրայ կառավարութիւնք արթընցան, համալսարանաց ուսանողներուն եւ անոնց կազմած ընկերութեան դէմ զսպողական միջոցներ բանեցուցին, բայց պարապ տեղ. անոնց գրգռութիւնը միշտ աւելի կը սաստկանար: Մինչեւ իրենց մէջէն Սանտ անունով մէկը դաշունով զարկաւ մեռցուց Օգոստինոս Գոցեպու Գերմանացի բանաստեղծը (1819, Մարտ 23), որն որ Ռուսի տէրութեան խորհրդական էր, եւ արձակապետական գաղափարները պաշտպանելէն զատ, լրագրի մը մէջ միշտ նոյն երիտասարդաց դէմ նախատական ու հեղնական կերպով կը խօսէր:

37. Գարլզպատի ժողովն ու որոշումները: Վիէննայի վերջնական մուրհակը: Փրանկիսկոս կայսրն աս դէպքին վրայ բոլոր Գերմանական տէրութիւնները հրաւիրեց, որ Գարլզպատ ժողովք մը գումարելով, շփոթութեանց վերջ տալու հնարքը մտածեն: Աս հրաւիրին համեմատ՝ դաշնակցութեան բոլոր անդամներուն դեսպանները յիշեալ քաղաքը գումարուելով (1819, Օգոստ.) եւ Գերմանիայի ներքին հանգամանաց վրայ խորհելով, զանազան սրոշումներ ըրին, որոնք քիչ մը ետքը Ֆրանքֆուրդ հրատարակուեցան (Մեպտ. 20): Նոյն որոշումներով՝ տպագրութեան, համալսարանաց եւ յեղափոխական շարժմանց վրայ հսկելու, աս նկատմամբ եղած անկարգութիւններն ու յանցանքները քննելու եւ պատժելու համար այլեւայլ կարգադրութիւնք կ'ըլլային ու զանազան ժողովներ կամ ատեաններ կը հաստատուէին: Միանգամայն դաշնակ-

ցութեան մուրհակին ժԴ. յօդուածոյն համեմատ՝ գրուելու կարգաժողովական սահմանագրութեանց վրայ կը հաստատուէր, որ նոյնը շուտով գործադրուի, բայց անանկ որ սահմանագրութիւնք միապետական սկզբունքին եւ գաշնակցութեան շահուն համաձայն ըլլան: — Ասկից զատ՝ գաշնակցութեան մուրհակին մէջ՝ Գերմանիայի թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին յարաբերութեանց նկատմամբ՝ տարակուսի տակ մնացած նիւթերն որոշելու համար, նոյն տարին Ա իէննա պաշտօնէից ժողով մը գումարեցաւ (Նոյ. 25), որուն՝ վերջնական մուրհակ անուանուած որոշումները երկրորդ տարին ստորագրեցան (1820, Մայ. 15), եւ քիչ մը ետքը Ֆրանգֆուրգի մէջ իբրեւ ընդհանուր օրէնք ընդունուեցան ու հրատարակուեցան (Յունիս 8): — Նոյն միջոցին եւ քիչ մը ետքը Գերմանիայի շատ տէրութեանց մէջ՝ կարգաժողովական սահմանագրութիւնները գրուեցան, որով չափաւորեալ մարդիկ գոհ եղան: Բայց՝ ինչպէս յայտնի է՝ ազատականք չէին կրնար նոյները բաւական սեպել. ուստի եւ շատ ջանացին ամէն կերպ միջոցներով իրենց բաղձանքը գլուխ տանիլ, սակայն եւ այնպէս ամենայն ինչ պարապ գնաց: Գերմանիայի տէրութեանց գործածած միջոցներով եւ սաստիկ հսկողութեամբ, նոյն երկիրը հանդարտ մնաց՝ երբոր ուրիշ քանի մը տէրութիւնք ներքին շփոթութիւններով կը վրդովէին, եւ տեղ տեղ յեղափոխութիւններ կ'ելլէին ու արիւն իսկ կը թափուէր:

38. Անգղիայի խորհրդանոցն ու պաշտօնեայք: Ուելլինկընն եւ Գասլրի: Նոյն ատենները Անգղիայի մէջ բոլոր իշխանութիւնն ազնուապետականաց ձեռքն էր: Ինչպէս յայտնի է, աս երկրին օպհմանագրութեան հոգւոյն համեմատ՝ թագաւորն իր պաշտօնեաներուն կարծեաց գէ՛մ բան չիկրնար ընել. իսկ պաշտօնեայք պէտք է որ խորհրդանոցին անդամներուն մեծագոյն մասին կարծեաց հետ միաբան ըլլան: Արդ ան միջոցին խորհրդանոցին խիստ մեծագոյն մասը, մանաւանդ թէ

գրեթէ բոլոր անդամները ազնուապետականք էին: Աւերին սենեկին մէջ միայն լորտերը, այս ինքն՝ բարձր ազնուականք եւ բողոքական եպիսկոպոսք կային: Նոյնպէս ստորին սենեկին մէջ, ուր միայն անկախ քաղաքացեաց երեսփոխանները նստելու էին, դարձեալ մեծաւ մասամբ ազնուապետականք կային. ինչու որ նոյն ատենները պատգամաւորք՝ չէ թէ բազմամարդ ու գործատուններով լեցուն քաղաքներէ կ'ընարուէին, հապահ հին եւ ըստ մասին պզտիկ աւաններէ, որոնք հարուստ լորտերու ստացուածք էին, եւ ատենք ամէն կերպով կը ջանային որ իրենց կրտսեր զակերները պատգամաւոր ընտրուին: Ասանկով խորհրդանոցին մէջ հազիւ խիստ սակաւաթիւ քաղաքացի երեսփոխանք կը գտնուէին, անոնք ալ ամենեւին ազգեցութիւն չէին կրնար ունենալ: Բայց աս ազնուապետականութեան մէջ ալ Անգղիայի հին Գորի ու Հուիկ կողմնակցութիւնները կը տեսէին, որոնցմէ առաջինը՝ զժողովուրդը բոլորովին կ'արհամարհէր, իսկ վերջինը՝ նոյնին հետ խնայելով վարուիլ եւ իր օգտին գործածել կ'ուզէր: Աս վերջին կողմնակցութիւնը Գաղղիայի յեղափոխութեան միտում ցուցնելով, Անգղիացեաց աչքէն ինկած էր. եւ անոնց Գաղղիայի գէմ ունեցած ազգային ատելութեան օգնութեամբը՝ Գորիք կառավարութեան գլուխն անցած ու Նաբոլէոնեան պատերազմներուն ատենը հաստատուն մնացած էին: Նոյն պատերազմներուն ժամանակը ժողովուրդը ամէն կերպ նեղութիւններուն համբերած էր, իսկ խաղաղութիւնը հաստատուելէն ետեւ՝ Գորիներուն ճնշման դէմ սկսաւ ձայնը բարձրացնել: Պաշտօնէից ժողովոյն առաջնորդութիւնը Ուելլինկոզնի գքսին ու լորտ Գասլըիին ձեռքն էր, որոնք կ'ուզէին ամէն կերպով հաստատուն պահել նոյն ժամանակները գրուած գաշնագրութիւնները, եւ թշնամի էին ազատական շարժմանց, վախնալով որ անոնցմէ յեղափոխութեան շարիքները չծագին: Եւ թէպէտ իրենց բոլոր հրապարակական գործքերը խորհրդանոցին ու լրա-

գիրներուն մէջ խօսակցութեան նիւթ ըլլալով, շատ հեղ կը ստիպուէին իրենց սկզբունքներէն հեռանալ եւ ազգին մեծագոյն մասին կարծեաց հետեւիլ, բայց անանկ թուլութեամբ՝ որ յայտնի կ'երեւար թէ սրտանց չէ:

39. Ժողովրդեան տնտեսութիւնն ու շփոթութիւնը: Գէորգ Գ. թագաւորն ու իր ամուսինը: Խորհրդանոցն ու պաշտօնեայք ազնուապետականաց կողմնակցութենէն ըլլալով, ներքին քաղաքականութեան եւ մանաւանդ տուրքերու նկատմամբ՝ արուած օրէնքները սովորաբար ազնուականաց շահուն համաձայն կ'ըլլային եւ ժողովրդեան վնասակար: Այսպէս էր օրինակի համար ցորենեղէնի օրինագիրը¹ (1815), որով գրուէն ցորեն բերելը խիստ կը դժուարնար, որպէս զի Լորտերը՝ որոնց ձեռքն էին գրեթէ բոլոր երկիրները, իրենց ցորենեղէնն ուզածնուն պէս սուղ ծախեն: Այսպէսով ժողովրդեան եւ գործաւորաց մէջ՝ հացի սղութեան ու աւուրչէքի նուազութեան պատճառաւ՝ շատ անգ աղմուկներ կ'ելլէին. ցորենի շտեմարաններու վրայ յարձակում ու յափշտակութիւն կ'ըլլար, գործատուներ կը կործանուէին: Իսկ գործատանց մեծ քաղաքներու մէջ ժողովուրդն աւելի օրինաց համեմատ կը վարուէր եւ ուզածը՝ ժողովքներով դլուխ հանելու ետեւէ կ'իջնար: Ասանկ ժողովք մ'ալ Լոնտոնի մօտ եղաւ (1816, Գեկտ. 2). ուր գրգռութիւնը սաստկանալով, մեծ բազմութիւն մը երեքգունեան դրօշներով ներքին քաղաքը մտաւ, զինավաճառի խանութ մը աւարեց. բայց կառավարութիւնը զինուորաց ձեռքով զիրենք զուպեց, խորհրդանոցին հաւանութեամբը՝ Հեյքէն Գորթլի օրինագրոյն (Հատ. Բ. 15) գործագրութիւնն ի կախ պահեց (1817, Փետր.), եւ շատ մարդ բանտարկել տուաւ: Այսպէսով հանդարտութիւնը շուտ հաստատուելով, ի կախ պահուած օրինագիրը նորէն գործադրուիլ սկսաւ. բայց տեղագրութիւնը միշտ կը տեւէր, որովհետեւ պատճառներն ալ վերցուած չէին: Երկու

1 Corabill.

42 Ե. ՄԻՋՈՑ ԺԱՄԵՆԱԿԻ (1815—1830), Ե.

տարի ետքը խորհրդանոցին մէջ առաջին անգամ առաջարկութիւն եղաւ պատգամաւորներու ընտրութեան օրինաց նորոգութիւն ընելու, այնպէս որ քաղաքացիք ալ պատշաճ թուով երեսփոխան ունենան: Բայց ինչպէս որ ինք իրմէ կ'իմացուի, առաջարկութիւնը մերժուեցաւ. որով ժողովրդեան գրգռութիւնը սաստկանալով, դարձեալ ժողովքներ սկսան ըլլալ, որոնցմէ մէկը (60,000 հոգւոյ չափ՝ Մենչեսդրի քով) կառավարութիւնը զինուորաց ձեռքով ցրուել ուզած ատեն, կռիւ բացուելով, 4—500 հոգի մեռան կամ վիրաւորեցան (1819, Օգոստ. 16): Հետեւեալ տարին Գէորգ Գ. ծեր թագաւորը մեռնելով (1820, Յունու. 29) իր տեղն անցաւ խել մը տարիներէ վեր խնամակեալութիւն ընող (Հատ. Գ. 11) Գէորգ Գ., որն որ քիչ մը ետքը ժողովրդեան առիթ տուաւ իր ահաճութիւնը յայտնելու: Իր կարողինա ամուսինը՝ որն որ իր (Գէորգ Գ.ին) անպատշաճ վարմունքին համար, իրմէ բաժնուած՝ Իտալիա կը բնակէր, ուզեց անմիջապէս ետ գառնալ, որպէս զի թագուհի պրակուի. իսկ թագաւորը հրաման տուաւ որ իրեն դէմ դատաստան ըլլայ: Արդ ժողովուրդը չէ թէ միայն զիշխանուհին իբրեւ յաղթանակաւ մայրաքաղաք խոթեց, հապա Լորտերու խորհրդոյն մէջ անոր վրայ դատաստան եղած առանձին իր ընթացքովը զիրենք ստիպեց գոնէ վճիռն ի կախ պահելու, որուն վրայ ունեցած ուրախութիւնը ցուցնելու համար՝ քաղաքը լուսաւորելէն զատ, պաշտօնեաներն ալ ստիպեց իրենց պալատները լուսաւորելու: Եւ երբ որ երկրորդ տարին իշխանուհին մեռաւ, թագաւորին արգելքին դէմ՝ անոր փառաւոր յուղարկաւորութիւն ընել տուաւ: Նոյն առթիւն մէջ ալ արիւն թափեցաւ:

40. Իրլանտիայի վիճակը: Օ'Գոննէլ: Ա՞ էր Անգղիայի վիճակը: Ասկից շատ գէշ էր Իրլանտիայի հանգամանքը: Նոյն խեղճ կղզին տակաւին ան վիճակին մէջն էր, որուն մէջ որ դարուս սկիզբը կը գտնուէր (Հատ. Բ. 142). մանաւանդ թէ աղքատութիւնն ու

խեղճութիւնը օրէ օր կը սաստկանային: Յիշեալ (1821) տարւոյն վերջերը երկրի վարձակալները չկրնալով բռնած ագարակներնուն վարձքը վճարել, երկրատեարք սաստիկ ձմերուան սկիզբները զերենք իրենց ընտանիքովը դուրս հանեցին: Ասով ամէն տեղ խռովութիւնք ելան. աղքատները մէկտեղ միանալով՝ ընկերութիւններ կազմեցին, զէնք առին, եւ գիշերանց իրենց երկրատէրներուն եւ տէրութեան պաշտօնատէրներուն տները յարձակելով, չարաչար վրէժ կ'առնուին, մինչեւ տեղ տեղ իրենց վրայ խաւրուած զինուորներուն դէմ ալ կռուեցան: Երթալով մեծ դաւակցութիւն մը կազմուեցաւ, որուն անդամները տներ կ'այրէին, կ'աւարէին, կը սպաննէին եւ միշտ աւելի վտանգաւոր կ'ըլլային: Ան ատեն կառավարութիւնը սաստիկ միջոցներ սկսաւ բանեցրնել. եւ յառաջագոյն նեղութիւն ու վնաս կրող պաշտօնատեարք ու երկրատեարք նոյն ատեն սկսան կրկին անագորունութեամբ վրէժ առնուլ: Ասոր վրայ սաստիկ սով մ'ալ եկաւ, որմէ այնչափ մարդ մեռաւ, որ խորհրդանոցը վերջապէս խեղճ Իրլանտացւոց վրայ գլխաւով, որոշեց որ իրենց 200,000 սգերլին օգնութիւն ըլլայ: Բայց ասիկայ՝ միայն անցողական օգնութիւն մըն էր. չարեաց հիմնական դարման տանելու վրայ ոչ ոք կը մտածէր: — Նոյն միջոցներուն սկսաւ մեծ գործունէութիւն ունենալ Դանիէլ Օ'Գոնէլ փաստաբանը, որն որ իրեն սկիզբ դրած էր՝ չէ թէ մինչեւ նոյն ատեն ի գործ դրուած միջոցներով՝ գաւակցութիւններով ու աւարելով եւ այրելով, հապա օրինաւոր միջոցներով Իրլանտայի իրաւունքները ձեռք բերել: Ուստի Իրլանտացիները համոզեց որ խաղաղ ու հանդարտ կենան, ամենեւին օրինաց դէմ դիմագարծութիւն չընեն, հապա ամէնքը միաբան՝ օրէնքները յարգեն, եւ ասանկով այն բարոյական զօրութիւնը ստանան, որն որ իրենց հարկաւոր է վիճակնին տեւական կերպով աղէկըրնելու համար:

41. Գասլրի պաշտօնէին մեռնիլն ու քեննին-
կին պաշտօնեայ ըլլալը: Անգղիայի աս վիճակին փո-
փոխութեան սկիզբ եղաւ Գասլրի պաշտօնէին մա-
հուամբը, որն որ մտաց հիւանդութեան մէջ ինկաւ.
եւ խցին մէջ վիզը զմելինով կտրելով՝ կեանքը կնքեց
(1822, Օգոստ.): Իր տեղն անցաւ Գէորգ Քեննինկ,
որն որ յառաջ ալ հեղ մը արտաքին գործոց պաշա-
տօնեայ եղած էր: Իսկզբան անանկ երեւցաւ որ նոր պաշ-
տօնեան ալ թէ արտաքին եւ թէ ներքին քաղաքա-
կանութեան նկատմամբ իր նախորդին բռնած ընթաց-
քին պիտի հետեւի. հազիւ քիչ մը ետքը՝ երբ որ իր
պաշտօնին մէջ ինք զինքն աղէկ հոտտաառուած տեսաւ,
ոկսաւ իր ազատական գաղափարները կամաց կամաց
երեւցընել: Երկրորդ տարւոյն (1823) սկիզբը խորհրդ-
գանոցը բացուելու ատեն, գահախօսութեան մէջ
խնայութիւններ ու նորագութիւններ կը խոստացուէին:
Շուտ մը գործքով ալ ցուցուեցաւ որ աս խոստումները
պիտի կատարուին: Յորենեղէնի օրինագիրը՝ բոլորովին
չկրցաւ վերցուիլ նէ, գոնէ քիչ մը մեղմուեցաւ: Իր-
լանտայի պաշտօնատէրներուն մէջէն 200էն աւելի
խիստ ու անիրաւ մարդիկ հեռացուեցան: Եւ չէ թէ
միայն հոնտեղի խեղճ ժողովուրդեան դէմ տեղացի հա-
րուտաներուն ի գործ դրած անագորունութիւնները
դադրեցան. հապա նաեւ խորհրդանոցին մէջ առա-
ջարկուեցաւ որ մէջտեղաց վերցուի փորձոյ օրինագիրը
(Հատ. Բ. 14), որով ուղղափառք խորհրդանոց մտնե-
լու իրաւունքնին կորստնուցած էին (1823, Ապր. 30):
Առաջարկութիւնը թէ նոյն անգամ եւ թէ հետեւեալ
տարիները՝ պատգամաւորաց սենեկին մէջ հաւանու-
թիւն գտաւ. բայց ատենակալաց սենեակէն մերժուե-
ցաւ. որով Քեննինկ չկրցաւ իր բաղձանաց կատարումը
տեսնել: Սակայն իր մահունէ (1827, Օգոստ. 27)
գրեթէ տարի մը ետքը՝ Արթուր Ռոպերտ Բիլ, զորն որ ինք
իրեւ իրեն յաջորդ ըլլալու յարմար անձ ցուցուցած էր,
Ուելլինկընի դքսին գահերիցութեամբը կազմուած

պաշտօնարանը մտնելով նոյն դքսին գործակցութեամբը քեննինկին բողձանքը գլուխ հաննց : Երկուքն ալ մեծ ճարտարութեամբ ցուցուցին որ եթէ աս միջոցն ի գործ չդրուի, պէտք է որ ներքին պատերազմ բացուի . այնպէս որ նոյն առաջարկութեան հետեւութիւնն եղող՝ ուղղափառաց ազատութիւնը¹, տտենակալաց սենեկին մէջ՝ ամենուն կարծեաց հակառակ՝ 105 քուէի առաւելութեամբ ընդունուեցաւ : Քանի ժ՛օր ետքը նաեւ թագաւորն իր հաւանութիւնը տալով (1829, Ապրիլ 23), ուղղափառք ալ ուրիշ Բրիտանացւոց հետ հաւասար իրաւունք ստացան, խորհրդանոց ու ատերութեան պաշտօններու մտնելու :

42. Լուդովիկոս ԺԸ., Ազատականք եւ Թագաւորականք : Գաղղիայի Լուդովիկոս ԺԸ. թագաւորը, որն որ նոր սահմանադրութիւն մը տուած էր (Հատ. Գ. 251), ըստ ինքեան սահմանադրական կառավարութեան սէր ունենալով, հաստատութեամբ կ'ուզէր նոյնը կանգուն պահել : Մէկ կողմանէ ետեւէ կ'ըլլար երկիրը հանդարտեցընել ու կարգաւորել, կրօնքը հաստատել, բարքերը շիտկել, օրէնքներն ու արդարութիւնը յարգել ապա . մէկալ կողմանէ ալ ջանք կ'ընէր պատշաճ զեջողութիւններով՝ անցեալը ներկային հետ հաշտեցընել : Բայց Գաղղիա անանկ վիճակի մէջ կը գտնուէր, որ միայն սահմանադրութեան սէր ունեցող ու խոհեմ թագաւոր մը բաւական չէր կրնար ըլլալ ըստ պատշաճի կառավարելու . հապա զօրաւոր ու հարստատուն բնութիւն ունեցող վեհապետ պէտք էր, ուր որ Լուդովիկոս ԺԸ. այնպիսի բնութեան տէր էր՝ որ խիստ գծաւարաւ կրնար դէմ գնել իր չորս կողմն եղողներուն ազդեցութեան : Իսկ իր քօմն ըլլաղներուն մէջ՝ թէեւ ամէն նկատմամբ երեւելի մարդիկ կային, բայց շատեր ալ կը գտնուէին՝ որոնց միակ արդիւնքն էր թագաւորական ըլլալին : Գաղղիացիք թէպէտ վերգովմունքներէ ձանձրացած էին եւ իրենց մեծ մասը

1 Emancipation des Catholiques.

խաղաղութեան կը բաղձար. սակայն եւ այնպէս հին յեղափոխական գաղափարները բողբոջին փոխուած եւ հոգիները կատարեալ հանդարտած չէին: Ասանկով կողմնակցութեանց կռիւները շուտ մը սկսան ու սաստկացան: Գէշն ան էր, որ կարծես թէ չափաւորեալ մարդիկ մէջտեղաց վերցուած, եւ երկու կողմնակցութեանց ալ միայն չափազանցները մնացած էին: Յառաջուան Ռամկապետականք, Յակոբեանք ու Հասարակագետականք եւ ըստ մասին Նաբալէոնեանք, որոնք ընդհանուր անուամբ՝ Ազատականք կը կոչուէին, մէկտեղ միացած՝ հին հասարակապետութիւնը նորոգելու կը ջանային: Ասոնց գիմացը կը կենային Թագաւորականք, որոնք թագաւորին հետ՝ չափաւորեալ սահմանադրական միապետութիւնը իրենց հակառակորդաց գէժ պաշտպանելու տեղ, իրենց միակ նպատակ դրած էին նորէն արձակապետութիւն հաստատել: Արդ աս վերջինները, որոնց գլուխն անցած էին թագաւորին եղբայրը՝ Արդուայի կոմսը եւ ասոր հարոր՝ Անկուլէմի գրքուհին, զուգովեկուս ԺԸ. իր կամացը գէժ շատ հեղ կը ստիպէին իրենց գաղափարներուն համեմատ վարուելու:

43. Յիշեալ թագաւորին ժամանակը Գաղղիայի մէջ պատահածները: Ղուգովեկուս ԺԸ.ին խոհեմութեան գործքերէն մէկն էր Ռիշլիէյի դուքսն իբառաջին պաշտօնեան անուանելը: Աս խելացի մարդը գաղթելոց երեւելիներէն մէկն էր, որն որ երկայն ատեն Ռուսի ծառայութեան մէջ կենալով, Օտեսայի կուսակալ եղած եւ իր մարդասիրութեամբը, իմաստուն տեսչութեամբն ու գործունէութեամբը մեծ համբաւ ստացած էր: Իր սկզբունքն էր՝ սահմանադրութեան հոգւոյն համեմատ՝ ատենակալաց ու պառագամաւորաց սենեակներուն հետ միաբան ընթանալով, երկրին մէջ խաղաղութիւնն ու կարգաւորութիւնը շուտով հաստատել, որպէս զի դաշնակիցք Գաղղիա թողուցած զօրքերնին դուրս հանեն: Ստոյգ է խել մը մարդիկ բանտարկութեամբ ու պսոթով, ոմանք ալ մահուամբ պատժուե-

ցան եւ քանի մը զսպողական օրէնքներ գրուեցան, բայց երկրին հանդարտութիւնը պահելու համար հարկաւոր կը սեպուէին. եւ եթէ ան ատենները ուրիշ քանի մը երկիրներու վեհապետաց բռնած ընթացքին միտ գրուի, ասոնք բոլորովին կը մոռցուին: Իսկ ան միջոցին հարաւային դաւառաց մէջ տեղ տեղ, թագաւորականաց՝ հասարակապետականներուն եւ բողոքականներուն դէմ գործած չարիքները չեն կրնար ամենեւին կառավարութեան յանցանք սեպուիլ: Ինչպէս որ է նէ, Լուգովիկոս ԺԸ. մէկ քանի տարի նոյն չափաւորեալ դքսին խորհրդով վարուելէն ետեւ, երբ որ անիկայ հրաժարեցաւ (1818, Դեկտ. 27), անոր տեղը գրաւ զՏեգազ, որն որ իր նախորդէն աւելի ազատական ընթացք մը բռնեց: Ասոր վրայ խիստ այլայլեցան չափազանց թագաւորականք, որոնք արդէն Ռիշլիէօյէն գոհ չէին, եւ ետեւէ կ'իլնային զինքը թագաւորին աչքէն հանելու. եւ թէպէտ իսկզբան անիկայ դէմ կը գնէր, բայց ետեւէ ետեւ պատահող երկու դէպքեր զինքը ստիպեցին չէ թէ միայն պաշտօնեան հեռացընելու, հապա նաեւ կառավարութեան ընթացքը փոխելու: Աս դէպքերէն մէկն էր՝ յառաջուան դաշնաժողովոյն անդամներէն ու Լուգովիկոս ԺԶ.ին մահուան քուէ տուողներէն՝ Կրեկուար անունով մէկուն պատգամաւոր ընտրուիլը, որուն ընտրութեան կ'ըրեն ոմանք՝ թագաւորականք ձեռքերնէն եկածին չափ օգնեցին, որպէս զի յայտնի կերպով թագաւորին ցուցընեն թէ իր բռնած ազատական ընթացքը զինքն ուր կը տանի: Եւ թէպէտ պատգամաւորաց սենեակը նոյն ընտրութիւնը մերժելով, թագաւորականք աս կողմանէ ըսելու խօսք չունեցան. ի վերայ այսր ամենայնի թագաւորին միտքը բաւական պղտորեցաւ: Աւելի սաստիկ եղաւ երկրորդ դէպքին հետեւութիւնը: Լուվէլ անունով մէկը գանակով զարկաւ մեռցուց Արդուայի կոմսին երկրորդ որդին՝ Պերրիի դուքորը (1820, Փետր. 13), որն որ Պուրպոնեանց ցեղին միակ յոյսն էր, վասն զի թէ թագաւորն ու

Թէ Արդուայի կոմսին երէց որդին՝ Անկուլէմի դուքսն անզաւակ էին: Ա՛լ ասոր վրայ Թագաւորը, ինչպէս ըսինք, ստիպուեցաւ անզի տալ Թագաւորականնե-
րուն ստիպմանցը եւ պաշտօնէն հանել զՏեգազ, զորն որ անսկը յիշեալ դքսին սպանութեան սկզբնապատ-
ճառ կը գնէին: Իր տեղն անցաւ նորէն Ռիշլիէօ, որն որ որչափ ալ մէկքանի զսպողական օրէնքներ հանեց նէ, ի վերայ այսր ամենայնի չափազանց Թագաւորա-
կանները գոհ ընել չկրնալով, բռնադատեցաւ վերջաւ-
պէս եւ քաշուիլ, որով իրեն յաջորդեց նոյն չափա-
զանցներուն մէջէն Ալիէլ կոմսը (1822, Դեկտ.):

44. Կարոլոս Ժ. եւ իր կառավարութիւնը: Ի՞նչպէս աւ կերպով կառավարութիւնը՝ Լուգովիկոս ԺԸ-ին անձնական յօժարութեան դէմ՝ յետաշրջական ընթացք մը կը բռնէր, եւ բուն կառավարողն աւելի իր եղբայրը՝ Արդուայի կոմսն էր, քան Թէ ինք, սա-
կայն եւ այնպէս նոյն հանգամանաց մէջ իր անզաւակ մեռնիլն (1824, Սեպտ. 16) ու նոյն Արդուայի կոմ-
սին՝ Կարոլոս Ժ. անուամբ՝ իրեն յաջորդելը, Գաղղիայի ու բոլոր Եւրոպայի հանդարտութեան համար վնասա-
կար պատահար մը սեպուեցաւ: Ինչպէս քիչ մը յա-
ռաջ յիշեցինք, նոր Թագաւորը չափազանց Թագաւո-
րականներուն գլուխն էր (42). արդ Թէպէտ եւ գահ ելած ատեն՝ մէկ երկու որոշումներ ըրաւ, որոնցմով ազատական կողմնակցութեան հաճելի եղաւ, ինչպէս էր քիչ մը յառաջ դրուած գրաքննութիւնը (1824, Օգոստ. 16) վերցրնելն ու Օրլէանի տան՝ իր առաջին ստացուածներն ու տիտղոսները շնորհելը. բայց շուտ մ'իր սեպհական յօժարութեան համաձայն գործքերու ձեռք զարնելով, բոլոր ազատականներն իրեն հետ Թշնամացուց: Յիշեալ գործքերուն մէջ նշանաւորներն են խորհրդանոցին մէջ ընել տուած որոշումը, որ յե-
ղափոխութեան ժամանակ Գաղղիայէն դաղթող ազ-
նուականներուն յափշտակուած ինչքերուն տեղ՝ տե-
րութիւնն իրենց տարւէ տարի երեսուն միլիոն Ֆրանգ

տայ (1825, Ապր. 27) : Աս վերջին որոշման վրայ չէ թէ միայն ազատականները խիստ բարկացան, որոնք անանկ ձեւացրնելով թէ անով ժողովրդեան ստակն ազնուականաց պիտի արուի, ստորին ժողովուրդն ալ գրգռեցին, հապա նաեւ թագաւորականք, որոնք առ իրենց տրուածը խիստ քիչ բան կը սեպէին՝ ատենօք իրենց կորսընցուցածին համեմատութեամբ : Աւելի նեղացան Նաբոլէոնեանք եւ բանակին մէկ մասը՝ վարդու ժ.ին տուած ուրիշ մէկ վճռոյն վրայ, որով Նաբոլէոնի ժամանակէն մնացած 150ի չափ զորապետներն ու բարձր պաշտօնականներն իրենց պաշտօններէն հանեց : Ասոնց բնական հետեւութիւնն եղաւ ազատականներուն՝ տպագրութեան ազատութիւնը չարաչար գործածելով, կառավարութեան դէմ՝ յարձակում ընելը . որուն համար թագաւորն ուզեց նոյն տպագրութեան ազատութիւնը չափաւորել, բայց չկրցաւ գլուխ տանիլ : Նոյն առթիւն մէջ Փարիզ քաղաքին երկու գիշեր ետեւէ ետեւ լուսաւորուիլը (1826, Ապր. 17 ու 18) բաւ բաւականին կը ցուցնէր ժողովրդեան մէջ տիրող հոգին, որն որ աւելի եւս տեսնուեցաւ երբ որ երկրորդ տարին՝ զօրահանդեսի մ'ատեն՝ ազգային պահակապանք աղաղակներով զաշտօնէից կնայը պահանջեցին (1827, Ապր. 28) : Թագաւորը նախ նոյն ազգային պահակապաններն ու քիչ մը ետքը խորհրդանոցը լուծեց : Բայց որովհետեւ նոր դումարուած (Նոյ.) խորհրդանոցին մեծ մասն ալ պաշտօնէից հակառակ էր, անոր համար ստիպեցաւ զՎիլէլ եւ անոր ընկերները պաշտօնէն հանել (1828, Յունու. 3), եւ անոնց տեղ Մարդինեագի գահերիցութեամբ նոր պաշտօնարան մը դնել, որն որ չափաւորեալ ազատականներէ կազմուած էր : Նոր պաշտօնեայք ազատականաց այլեւայլ զիջումներ ընելով, զիրենք քիչ մը գոհ ըրին : Բայց՝ ինչպէս յայտնի է՝ ազնուապետականք չէին կրնար իրենց վրայ մեծ յօժարութիւն ունենալ, որոնք վերջապէս այնչափ ըրին, որ վարդու ժ. պաշտօնարանը փոխեց

(1829, Օգոստ. 8), որուն ետեւէն եկաւ Յուլիոսի
յեղափոխութիւնը:

45. Իտալիայի եւ Պիւրնենան թերակղզւոյն
վրայ տեսութիւն: Այլ երջին տարիներուն շփոթու-
թիւններուն ու պատերազմներուն ժամանակը, աս եր-
կիրներուն մէջ հրապարակական բարօրութեան աղբիւր-
ներուն գրեթէ բոլորովին գոցուելովը, թէ տէրութեանց
եղեմնուտքը խիստ սղորմելի վիճակի մէջ կը գտնուէր
եւ թէ ժողովուրդն ըստ մեծի մասին սաստիկ աղքա-
տութեան մէջ ինկած էր: Հին վեհապետներն իրենց
գահերն ելլելէն ետեւ ալ, աս դժբախտ հանգամանքն
աղէկնալու տեղ՝ գրեթէ աւելի գէշցաւ. վասն զի կա-
ռավարութիւններն իրենց բոլոր ջանիցը նպատակ դնե-
լով՝ Գազդիացւոց նոյն երկիրներուն մէջ ըրած փոփո-
խութիւնները ջնջել եւ տարածած ազատական գա-
ղափարները մոռցնել, կրնայ ըսուիլ թէ ուրիշ բանի
միտ դնելու ատեն չէին գտներ: Աս բաներուն հետեւու-
թիւնը կ'ըլլար ժողովրդոց տագոհութիւնը, եւ անոնց
գոնէ մէկ մասին՝ Նաբոլէոնեան ժամանակին բաղձալը,
որուն ետեւէն կու գար իրենց հալածուիլը, եւ ասով
տագոհութեան սաստկանալը: Աս երեւոյթներն ամէն
տեղէն աւելի կը տեսնուէին Նէապոլիս, Սպանիա ու
Սարդինիա: Նոյն երկիրներն ու Բորդուկալ մեծամեծ
բանակներ ալ կը պահէին. բայց պաշտօնականներն ու
զինուորները կարօտութեան մէջ կը ձգէին. Պիւրնենան
թերակղզւոյն ու Նէապոլոյ մէջ՝ զինուորներուն ճամբու
վրայ մուրալը՝ սովորական բան էր: Իտալիա ճամբոր-
դութիւն ընողը՝ Աւստրիայի սահմաններէն անդին անց-
նիլը՝ անմիջապէս կ'իմանար ճամբաներուն գէշութենէն,
մուրացողներու բազմութենէն ու գողերու եւ աւազակ-
ներու լըբէն: Իսկ Սպանիայի ու Բորդուկալի մէջ աւա-
զակներու պատճառաւ՝ տեղ տեղ ճամբորդութիւն
ընելը՝ բոլորովին անկարելի կ'ըլլար: Աս երկիրներուն
վիճակին նայելով, ամէն մարդ ինք իրմէ կը տեսնէ թէ
ժողովուրդը բնականապէս պիտի բաղձար որ կառավա-

բուժեան կերպին մէջ փոփոխութիւն ըլլայ: Եւ որովհետեւ Սպանիացիք իրենց (Գորղէզներու ըսուած) ազատական սահմանադրութեան տակ (48) կրցեր էին յաջողութեամբ Գաղղիացիներն իրենց երկրէն մերժել, եւ նոյն սահմանադրութիւնը՝ ժողովրդեան վեհապետութեան գաղափարին վրայ հիմնուած էր, անոր համար վերոյիշեալ երկիրներուն մէջ մեծ եռանդեամբ սկսան ետեւէ իյնալ նոյն սահմանադրութիւնը հաստատելու:

46. Գաղտնի ընկերութիւնք եւ առանձինն Իտալիայի Գարպոնարիա ընկերութիւնը: Յայտնի է որ յիշեալ երկիրներուն գտնուած վիճակը խիստ մեծ գործունէութեան դաշտ կը բանար գաղտնի ընկերութեանց: Պիւրնետեան թերակղզւոյն վրայ ալ կային այսպիսի ընկերութիւնք, որոնք տժգոհներուն օրրատօրէ բազմանալովը՝ միշտ աւելի կ'ընդարձակէին. բայց իրենց մէջ ներքին կապակցութիւն ու կենդրոնական վերին վարչութիւն չկար: Ասոր հակառակ Իտալիա մեծ ընկերութիւն կամ դաւակցութիւն մը կար, որն որ Գալպոնարիա անուամբ խիստ երեւելի եղաւ եւ մինչեւ հիմակ ալ բոլորովին ջնջուած չէ: Արդ թէ այնպէս համարուի որ նոյն ընկերութիւնը հին ընկերութեան մը նորոգութիւնը կամ շարունակութիւնն ըլլայ, թէ այնպէս կարծուի որ Գաղղիայի հասարակապետութեան ու կայսերութեան դէմ եղած պատերազմներուն ժամանակը սկսած ըլլայ, առ ստոյգ է՝ որ Նաբոլէոնին իյնալէն ետքը մեծ ծանրակշռութիւն ստացաւ: Իսկզբան (1815ին) խիստ քիչուոր եւ հազէւ մէկքանի կողմ տարածուած էր. բայց քանի մը տարւան մէջ այնչափ տարածեցաւ ու ընդարձակեցաւ, որ բոլոր թերակղզին ծայրէ ծայր բռնեց: Կ'ըսուի որ չորս տարի ետքը (1819ին) 60,000էն աւելի անդամ ունէր՝ ամէն կարգի ու աստիճանի մարդիկներէ: Գեղացի ու քաղաքացի, զինուորական ու եկեղեցական, հասարակապետական ու սահմանադրական, հարուստ ու աղքատ,

իշխան ու մուրացիկ, ամէնքն իրենց ներկայացուցիչն ունէին նոյն ընկերութեան մէջ, որուն գլխաւոր նպատակն էր Իտալիայի անկախութիւնն ու միաւորութիւնը: Ոստիկանութիւնն ատեն ատեն ընկերութեան մասնական ժողովները գտաւ. բայց ընդհանրին շարժիչ թելը գտնելու համար ըրած բոլոր ջանքերը պարապի ելան. որովհետեւ այնպիսի կարգադրութիւններ դրուած էին եւ անանկ միջոցներ կը գործածուէին, որով ամէն կարելի հնարքներու դէմ ամբացած էր ընկերութիւնը: Ստորին աստիճանի դաւակիցք պղտիկ պզտիկ ժողովքներու կը գումարուէին, որոնք վաճառանոց¹ կը կոչուէին: Ասոնց իւրաքանչիւրին անդամներն ուրիշ նոյն տեսակ ժողովներուն վրայ ամենեւին տեղեկութիւն չունէին, եւ միայն գլխաւորներուն բարձր խորհուրդը՝ որն որ առաջիններուն անձանօթ էր, բոլոր ընկերութեան վրայ տեղեկութիւն ունէր: Այսպէսով Իտալիայի մէջ անանկ ստորերկրեայ կրակ մը կը վառէր, որն որ չէ թէ միայն նոյն երկրին՝ հապա նաեւ ուրիշ երկիրներու վրայ մեծ ազդեցութիւն կ'ընէր:

47. Սպանիայի Փերդինանդ թագաւորն ու իր կառավարութեան կերպը: Իրաց աս վիճակին մէջ, տեղ մը յեղափոխութիւն փրթիլը՝ ուրիշ տեղերն ալ պէտք էր որ նմանողներ ունենար: Իրօք ալ այնպէս եղաւ. յեղափոխութիւնը Սպանիա սկսելով, շուտ մը բոլոր անոր նման վիճակի մէջ գտնուող տեղերն ալ նմանօրինակ յեղափոխութիւնք ելան: — Ինչպէս ուրիշ տեղ ըսինք, Սպանիայի Փերդինանդ Է. թագաւորը իր գահն ելած ատեն՝ Գորդէզներու սահմանադրութիւնը վերցրնելով, արձակապետական կառավարութեան կերպը հաստատած էր (Հառ. Գ. 253): Սպանիացիք մանաւանդ թէ բովանդակ Եւրոպա կը յուսար որ թագաւորը խոհեմութեամբ ու չափաւորութեամբ վարուելով, կողմնակցութիւնները կը հաշտեցընէ ու իրեն հետ կը կապէ. մէկ կողմանէ թագաւորական ի-

¹ Vendita.

բաւուրները հաստատած ու տէրութիւնը կորգաւորած ատեն՝ մէկալ կողմանէ ժողովրդեան պատշաճ բողոքները կը կատարէ, որով չափաւորականք գոհ ըլլալով՝ չափազանց ուսմկապետականներէն կը բաժնուին, եւ աս վերջինները կը տկարանան ու դիւրաւ կը զուգուին: Բայց թագաւորը բոլորովին անխոհեմ ընթացք մը բռնեց: Իր յառաջուան տկար ու դիւրափոփոխ բնաւորութիւնը՝ յամառ, անձնահաստ ու խիստ կերպի մը փոխուած էր: Չորս կողմը պաշարող արքունականաց գրգռելովը, որոնք ըստ մեծի մասին ցած ժողովրդէն առնուած անկարգ ու անպիտան մարդիկ էին, շուտ մը զարհուրելի հալածանք սկսաւ չէ թէ միայն անոնց դէմ՝ որոնք Գաղղիացւոց կողմը բռնած, կամ Յովսէփ թագաւորին տակ պաշտօն մը վարած եւ կամ կերպով մը ծառայութիւն ըրած էին, հուպա Գորգէզին գլխաւորներուն եւ անոնց հետեւողներուն դէմ: Աս ալ բաւական չէ, նոյն իսկ զանոնք կը հալածէր՝ որոնք զինեալ գնդերուն գլուխն անցած՝ իրեն ու հայրենեաց համար արիւննին թափած էին, եւ իրենց գիւցազնական ջանքին յաջողութեամբ պսակուելէն ետեւ իբրեւ վարձք կ'ուզէին տէրութեան գործքերուն մասնակցութիւն ունենալ եւ քիչ մը քաղաքական ազտութիւն վայելել: Ուստի եւ Պիւրենեան պատերազմներուն գիւցազանց շատերը գահճի ձեռքով սպանուեցան, ուրիշ աւելի շատերը օտար երկիր պատուեցան եւ կամ իրենք իրենցմէ թող տուին հեռաւոր տեղեր գացին: Իսկ երկրին մէջ մնացողները՝ թէպէտ արտաքուստ լռեցին ու հանդարտ կը կենային, բայց շուտ մը վերոյիշեալ ընկերութիւնները հաստատեցին, որոնց նպատակն էր արձակապետութիւնը ջնջել ու սահմանադրական կառավարութիւն հաստատել: Աս գաղտնի ընկերութեանց գրգամամբն ասդին անդին գաւառներուն մէջ ելած շիթութիւններն ու ապրտամբութիւնները՝ կառավարութեան խստութիւնն աւելի կը սաստկացնէին: Նոյն շիթութեանց մէջ

առնչութեան, ելեւմտից ու նոյն իսկ արդարութեան վիճակը խիստ գէշ էր. վաճառականութիւնն ու աբուեռտները գրեթէ ոչընչացան, մանաւանդ որ Հարաւային Ամերիկայի գաղթականութիւնը ալ ապստամբութեան մէջ կը գտնուէին:

48. Բանակին ապստամբութիւնը: Գորղէզներու սահմանադրութիւնը կը հաստատուի: Նոյն միջոցին կառավարութիւնը Գատիքսի մէջ զօրք կը ժողվէր, զորն որ Հարաւային Ամերիկայի գաղթականութեանց ապստամբութիւնը զսպելու կ'ուզէր խաւրել. բայց ստակի պակասութեան համար՝ ոչ թաշակնին կրնար վճարել եւ ոչ ճամբայ հանել, եւ ոչ իսկ նաւ կար՝ զերեւիք խաւրելու: Քիչ մը ետքը Ռուսիայէն գնուած նաւեր հասան. բայց այնպէս անպիտան էին, որ զօրաց զնոցերը՝ որոնք ըստ մեծի մասին բանակին աժգոհ զինուորներէն կազմուած էին, սկսան կտակածի երթալ թէ կառավարութեան զերեւիք խաւրելուն վախճանն է՝ ծոփուն մէջ խղզել: Արդ երբ որ Մատրիտէն հրաման եկաւ ճամբայ ելլելու, յիշեալ զնոցերն արդէն շատոնց պատրաստուած ըլլալով, ապստամբութիւն մը հանեցին (1820, Յուլիւ. 1), որն որ քիչ ատենուան մէջ Սպանիայի ամէն կողմերը տարածեցաւ: Չանազան գաւառներու եւ քաղաքներու մէջ Գորղէզներու սահմանադրութիւնը հրատարակուեցաւ ու արձակուպետութեան գէժ պատերազմ բացուեցաւ: Թագաւորը՝ ապստամբութիւնը զէնքով զսպելու եւ 1812ին սահմանադրութեան պահանջումն անորոշ խոստումներով լռեցընելու պարսպ տեղ ջանալէն ետեւ, անոնելով որ օգուտ չ'ըներ, հարկագրեցաւ եղած պահանջումներուն զեջանիլ, Գորղէզներու գումարուելուն հաւանիլ, եւ երդում մ'ընել պահելու ան սահմանադրութիւնը՝ որով ինք արձակուպետական թագաւորէ՝ պարզապէս ժողովրդեան երեսփոխաններուն հրամանացը գործադիր կ'ըլլար (Մարտ 7—8): Ասանկով ուր որ կարգաւորեալ սահմանադրական միապետութիւն չէր ուզեր, հազիւ

միապետութեան կեղծիք մը կրցաւ պահել: Իրգք տլ յանձն առած սահմանադրութեան նայելով, 1. Գորգէղներն իրենց կազմուելուն ու գումարման նկատմամբ՝ թագաւորէն անկախ էին: 2. Միայն մէկ սենեկէ կը կայանային: 3. Օրէնք առաջարկելն ու տալը՝ միայն իրենց կ'իյնար: 4. Թագաւորը հազիւ կրնար հրաման խնդրել որ օրէնք մ'առաջարկուի, եւ Գորգէղներուն մէջ որոշուած օրէնքին հաստատութիւնը քիչ մ'ատեն ուշացընել: 5. Ամէն տարի իրենք պիտի որոշէին թէ ծովու եւ թէ ցամաքի զօրաց թիւը: 6. Օտար տէրութեանց հետ եղած դաշնաւորութիւններն ու գրուած առեւարական դաշինքները պէտք էր որ իրենք հաստատէին: 7. Տէրութեան խորհրդոյն անդամներն իրենք պիտի առաջարկէին թագաւորին: 8. Թէ առոնց եւ թէ պաշտօնէից թոշակն իրենք պիտի ոահմանէին: 9. Բոլոր եկեղեցական ու գատաւորական աստիճանները՝ միայն տէրութեան խորհրդոյն առաջարկած անձինքներուն կրնար տալ թագաւորը: 10. Թագաւորը չէր կրնար ամուսնանալ եւ ոչ տէրութենէն դուրս ելլել՝ առանց Գորգէղներուն հրամանին, ապա թէ ոչ՝ գահէն կը զրկուէր:

49. Բորդուկալի յեղափոխութիւնն ու շփոթութիւնները: Սպանիայի յեղափոխութիւնը, վերը յիշածնուս պէս, շուտ մը հետեւողներ ունեցաւ եթէ ըստ սկզբնաւորութեան, այս ինքն բանակներուն հազանգելու տեղ՝ հրամայելու ձեռք զարնելովը, եւ եթէ ըստ հետեւութեան, որ էր՝ միապետութեան երեւութիւն տակ՝ ժողովրդեան վեհապետութիւն կամ առկապետական հասարակապետութիւն հաստատուելովը: Ինչպէս ուրիշ անգամ ըսինք, Բորդուկալի մէջ մեծ տհաճութիւն ու գրգռութիւն կար գլխաւորաբար արքունեաց հեռանալուն վրայ, որով մայր երկիրն իրրեւ թէ գաղթականութեան երկիր դարձած էր (22): Նոյն տհաճութիւնն աւելի կը սաստկանար աս հեռաւորութեան ատեն՝ Անգղիացւոց բանեցուցած մեծ աղ-

գեցութեան պատճառաւ: Արդ նոյն երկրին ռամկապետականները, որոնք արդէն յառաջագոյն ալ մէկ երկու հեղ Անգղիացւոց գէմ մասնական դաւակցութիւններ կազմած, եւ ձեռք իյնալով՝ սաստիկ պատժուած էին, Սպանիայի մէջ իրենց կարծեկիցներուն ստացած յաղթութենէն քաջալերուելով եւ ժողովրդեան գրգռութիւնն իրենց օգտին գործածելով, յեղափոխութիւն հանեցին, որն որ նախ Օբորդոյ փրթաւզօրաց մէջ (1820, Օգոստ. 24), որոնց հետ քիչ մը ետքը միացան Լիսապոնի զօրքերն ալ: Ասկից քանի մը ամիս յառաջ ձգած Պրազիլիա գացած էր Լորտ Պերեոֆորտ (Ապր.), որն որ հեռաւոր թագաւորին անուամբն ու Անգղիայի շահուն համեմատ երկիրը կը կառավարէր, որպէս զի թագաւորին հետ անձամբ խօսելով եւ երկրին գրգռութեան վեճակն առջեւը դնելով, հրահանգներ ընդունի: Ինք չէր կարծեր որ իր ետ դառնալէն յառաջ ատեն ունենան յեղափոխականիք ձեռնարկութիւն մ'ընելու. բայց անոնք իր հեռուորութիւնը յարմար առիթ սեպեցին ուղածնին աւելի դիւրութեամբ գլուխ հանելու, որով եւ լիազօր իշխանութիւններով ետ դարձած ատեն եւ ոչ իսկ կրցաւ Բորդուկալ ոտք կոխել: Առժամանակեայ կառավարութիւն մը գրին, եւ նոյն իսկ թագաւորին հաւանութեամբը Գորդէզները գումարեցին (1821, Յունու. 26): Նոյն շփոթութիւններէն եւ Պրազիլիա ալ իրեն գէմ ելլող յեղափոխութենէն օտիպեցաւ Յովհաննէս Զ. թագաւորը (22) իր Պետրոս որդին ու թագաժառանգը՝ իբրեւ փոխանորդ Պրազիլիա թող տալով, Բորդուկալ գառնալ, եւ Գորդէզներու շինած սահմանադրութիւնն երդմամբ ընդունիլ: Բայց նոյն սահմանադրութեամբ թագաւորական իշխանութեան հազիւ ստուերը մնաց, որովհետեւ՝ ըստ էական մասանց՝ սպանիական սահմանադրութեան համաձայն էր, մանաւանդ թէ քանի մը նիւթերու մէջ թագաւորին փշխանութիւնն անկից աւելի կը սեղմէր:

50. Նէապոլտոյ յեղափոխութիւնը: Սպանիայի տուած օրինակին իտալիա ալ հետեւողներ եղան: Հոն՝ գլխաւորաբար Նէապոլտոյ մէջ՝ տալէն տեղէն մանաւանդ թէ Բորգուկալէն ալ յառաջ շփոթութիւնք սկսան: Փերդինանդ Գ. (Ա.) Երկու Սիկիլիայի գահին վրայ բացարձակ իշխանութեամբ հաստատուած էր. բայց ներքին հանդարտութիւնը պահպանելը՝ խիստ դժուար կ'ըլլար, ինչու որ ժողովուրդը փոփոխութեանց ու շփոթութեանց վարժած էր: Անհանդարտութիւնը մասնաւոր կերպով սնունդ կը գտնէր Գարպոնարիայի ընկերութենէն, որուն ձեռքովը գրգռուած հոգին ան առն տէրութեան աւելի վտանգաւոր եղաւ՝ երբ որ բանակին մէջն ալ մուտք գտաւ: Նախ Նէապոլտոյ մօտ Նոլայի մէջ զինուորական դաւակցութիւն մը կազմեցաւ (1820, Յուլ. 2), որն որ շուտ մը չորս կողմը տարածեցաւ ու մեծ յեղափոխութեան գարձաւ: Ոտք ելլողներուն նպատակն էր թագաւորը ստիպել սպանիական սահմանադրութիւնն ընդունելու, թէեւ իրենց մեծ մասը չէր գիտեր չէ թէ միայն նոյն սահմանադրութեան, հապա ընդհանրապէս սահմանադրութեան ինչ ըլլալը: Թագաւորը նեղի գալով, իր Փրանկիսկոս թագաժառանգը խնամապետ կամ փոխանորդ անուանեց, որն որ շուտ մը՝ հօրն ու եղբորը հետ՝ խնդրուած սահմանադրութիւնը յանձն առաւ ու պահելու երդում ըրաւ (Յուլ. 7): Ասոր վրայ դաւակցաց Բերէ ու Գարասոգոզա գլխաւորները՝ ապստամբեալ զօրքերուն եւ անոնց հետ միացած Գարպոնարիներուն գլուխն անցնելով, յաղթանակաւ Նէապոլիո մտան, եւ քիչ մը ետքն ալ խորհրդանոցը գումարեցաւ (Հոկտ. 1): Իսկ Սիկիլիացիք նոյն տոնն ոտք ելլելով (Յուլ. 1), իրենք զիրենք անկախ հրատարակեցին. եւ հազիւ արիւնահեղ կռիւներէ ետեւ գլուխ ծռեցին:

51. Սարդինիայի յեղափոխութիւնը: Թագաւորը կը հրաժարի եւ իր եղբայրը գահ կ'անցնի: Նաեւ Սարդինիայի (Բիեմոնդէի) մէջ նոյնպիսի գէպքեր պա-

տահեցան: Նոյն տէրութեան մէջ վիկտոր Էմմանուէլ
 Թագաւորն ամէն կերպով կը ջանար հին կարգադրու-
 թիւնները նորէն հաստատելով, Գաղղիական իշխա-
 նութեան ատենէն մնացած յիշատակները ջնջել: Ասով
 ազատականաց մէջ տհաճութիւն ու զրգուութիւն
 պատճառած եւ գաղտնի ընկերութիւններ կազմուած
 ըլլալով, Պիւրենեան Թերակղզւոյն ու Նէպոլոնոյ տուած
 օրինակներուն համաձայն՝ յեղափոխութիւն մը փրթաւ,
 բայց շատ ուշ եւ Նէպոլոնոյ յեղափոխութեան զըս-
 պուելու վրայ եղած ատեն: Աղէքսանդրիայի ու Գու-
 բինի պահակապան զօրքերն ոտք ելան (1821, Մարտ
 10—12): Ասոնց հետ միաբան էին՝ խել մ'ուրիշ մար-
 գիկներէ եւ ուսանողներէ զատ, մէկ քանի երեւելի ան-
 ձինք ալ, իրենց գլուխն ունենալով զկարողոս Ալպերդ
 Գարինեան իշխանը, որն որ՝ Թագաւորին ու անոր կա-
 բողոս Փելիքս եղբօրն արու զաւակ չունենալովը՝ Թա-
 գաւորութեան ժառանգն էր, եւ զորն որ յեղափոխա-
 կանք իրենց կողմը շահած էին՝ յուսացընելով որ բոլոր
 Իտալիայի Թագաւոր կ'ըլլայ: Յեղափոխութիւնն ան-
 միջապէս անանկ տարածեցաւ, որ վիկտոր Էմմանուէլ
 Թագաւորն ի նպատտ իր եղբօրը Թագէն հրաժարեցաւ
 (Մարտ 13), եւ նոյն իշխանին ան ատեն Մոտենա
 գանուելուն պատճառաւ, մինչեւ անոր դալը՝ զկարողոս
 Ալպերդ խնամապետ անուանեց: Աս վերջինը հաւանե-
 ցաւ որ մայրաքաղաքն ու անոր ամրոցը ձեռուրնին ու-
 նեցող ապստամբներուն պահանջածին պէս՝ սպանիակա-
 նին վրայ ձեւուած սահմանադրութիւն մը շինուի: Բայց
 նոր Թագաւորը Մոտենայէն աս բանս անվաւեր հրատա-
 բակեց (Մարտ 16), որուն վրայ խնամապետը Թող տուաւ
 Նովարա գնաց (Մարտ 21), վասն զի յայտնի կը տես-
 նէր թէ ժողովրդեան մեծ մասը յեղափոխութեան դէմ
 է, եւ մէկալ կողմանէ մեծ տէրութիւնք սկսած էին զի-
 նեալ միջամտութիւն ընել, որմէ իրաւամբ կը վախնար
 թէ ինքն ալ ապստամբաց մէջ սեպուելով, իր յաջոր-
 դութեան իրաւունքը վտանգի մէջ չմտնէ:

52. Գրողաւի ու Լայպպախի արքայաժողովները: Պիւրենեան թերակղզւոյն ու Իտալիայի մէջ պատահած առ շփոթութիւնները՝ պէտք էր որ մեծ անձկութիւն պատճառէին Սուրբ դաշնաւորութեան (29) գլխաւորներուն. վասն զի չէ թէ միայն նոյն դաշնաւորութեամբ պաշտպանել յանձն առած շահերն՝ բոտ նկատմանց ինչ վտանգած էին, հասպանաւ վտանգ կար՝ որ իրենցմէ ոմանց սեպհական երկիրներուն մէջ ալ նմանօրինակ յեղափոխութիւններ ելլէին: Իրօք ալ Իտալիայի հիւսիսային կողմերը նոյնպիսի նշաններ կը տեսնուէին, որով Աւստրիա մտածմանց մէջ ինկաւ: Անանկ ալ կ'երեւար թէ նաեւ Գերմանիայի երիտասարդաց վրայ յեղափոխական հոգին՝ որն որ տակաւին կատարեալ չէր մտած, գարձեալ կը սաստկանայ. որով Պրուշ ալ հոգերու մէջ մտաւ: Արգ իրաց առ վիճակին մէջ շուղեցին անգործ կենալ ու ընդհանուր շփոթութիւններու եւ յեղափոխութիւններու. անտարբեր հանդիսատեսս ըլլալ. Մեզդեռնիկ իշխանին խորհրդովն որոշեցին որ զէնքով անոնց առջեւն առնուն: Աս նպատակին հասնելու համար նախ Գրողաւ (1820, Հոկտ. 18 — Դեկտ. 6) արքայաժողով կամ դեսպանաժողով մը գումարեցաւ, ուր Աւստրիայի եւ Ռուսի կայսրներն ու Պրուշի թագաւորն անձամբ գացած, իսկ Գաղղիա եւ Անգղիա դեսպան խաւրած էին: Անձամբ ներկայ եզոզ վեհապետք կ'ուզէին զինուք միջամտութիւն ընելով՝ յեղափոխութիւնները զսպել. բայց Անգղիա ու Գաղղիա ասոր դէմ էին: Երկուքն ալ չէին ուզեր որ Աւստրիա՝ որուն ձեռքովն աս բանս գէթ Իտալիայի մէջ ի գործ պիտի դրուէր, նոյն երկրին մէջ իր աղ-գեցութիւնն աւելցընէ. ասկից զատ՝ Գաղղիա կը բաղ-ձար՝ թէ Պիւրենեան եւ թէ Իտալիական թերակղզիներուն մէջ իր սահմանադրութեան նման սահմանադրութիւններ հաստատել տալով, զանոնք իբր թէ իր պաշտպանութեան տակ առնուլ: Աս նպատակաւ նոյն տէրութիւնը Սպանիայի եւ Նէապոլոյց հետ բանակ-

ցութիւններ սկսաւ: Ինչ զինեալ միջամտութեան դէմ բողոք բրաւ. իսկ Անդղիա տեղեկագրով մը կը ջանար ցուցնել թէ աս բանս իրաւանց դէմ է: Բայց մէկալ երեք մեծ տերութիւնք աս գիմադրութիւնը բանի տեղ չդնելով, իրենց ժողովքը գոցեցին շրջաբերական թրջութով մը (Գեկտ. 6), որուն մէջ կը յայտնէին որ կ'ուզեն, խաղաղական միջոցներով ըլլայ, զինու զօրութեամբ ըլլայ, մասնաւորաբար Նէապոլտոյ մէջ թագաւորական իշխանութիւնը հաստատել: Աս բանս գլուխ հանելու համար շուտ մը Լայպպի քաղաքը նոր արքայաժողով մը գումարեցին, ուր միայն երկու կայսերք անձամբ եկան, իսկ երեք մեծ թագաւորութիւնք գեսպան խաւրեցին (1821, Յունու.): Նէապոլտոյ Փերդինանդ թագաւորն ալ անձամբ հոն եկաւ, նաեւ ուրիշ Իտալական տերութիւնք գեսպան խաւրեցին: Նոյն ժողովոյն մէջն ալ հինգ մեծ տերութեանց կարծիքն ու դիրքը՝ Գրոբաւ ունեցածներնուն նման էին: Ուստի Գաղղիա, որուն՝ Նէապոլտոյ սահմանադրութիւնը չափաւորել տալու եւ Իտալական տերութիւններն Աւստրիայի դէմ գրգռելու ջանքը պարապի ելած էր, եւ Անդղիա ստիպեցան թող տալ որ մէկալ երեք մեծ տերութիւնք, որոնց հետ միաբանած էր Նէապոլտոյ թագաւորն ալ, ուզածնին յառաջ տանելու որոշումն ընեն:

53. Նէապոլտոյ ու Սարդինիայի թագաւորութեանց սահմանադրութիւնները կը ջնջուին ու արձակապետութիւնը կը հաստատուի: Յիշեալ որոշումն ըլլալուն պէս, նախ Փերդինանդ թագաւորն (1821, Յունու. 28) ու ետքը դաշնակից Աեհապետք (Փետր. 9) Նէապոլսեցւոց յայտարարութիւններ հանեցին, որոնց մէջ նոյն որոշումն իրենց կը ծանուցանէին եւ կը յորդորէին որ յօժարութեամբ գլուխ ծռելով, իրենք զիրենք պատերազմի վնասներուն տակ չձգեն: Անմիջապէս ալ Աւստրիական բանակ մը Նէապոլտոյ երկիրները մտաւ, եւ գրեթէ առանց արիւն թափելու՝ հին կարգադրութիւնները նորէն հաստատեց: Ստոյգ է

Բերէ ու Գարապոզա բաւական զօրաւոր բանակով Աւստրիացւոց դիմացն ելան, բայց առաջնոյն զօրքերը թեթեւ կռուով մը պարտեցան (Մարտ 7)։ Իսկ մնացածներն իրենց հրամանատարները ստիպեցին անձնատուր ըլլալու։ Ասանկով Աւստրիացիք գերաւ Նէապոլիս (Մարտ 24) ու Գաբուա բռնեցին, զթագաւորն իր բացարձակ իշխանութեան մէջ հաստատեցին եւ քանի մը տարի նոյն երկիրը մնացին (մինչեւ 1826, Ապր.)։ Բայց աս հեղ ալ յաղթական կողմն իր յաղթութիւնն արտաքոյ կարգի խտուրտեամբ ու անագորունութեամբ արատաւորեց։ — Նէապոլիս իրողութեանց աս կատարածը՝ Սարդինիայի վիճակն ալ որոշեց։ Յառաջագոյն տեսնուք թէ խնամապետին վրայինչ ազդեցութիւն բրած էր գաշնաւորաց ընթացքը, որուն մէկ հետեւութիւնն էր անշուշտ նաեւ նոր թագաւորին բռնած ճամբան (51)։ Եւ թէպէտ Սարդինիայի ռամկապետականաց բանակը՝ Սանդա Ռոզային հրամանատարութեան տակ՝ Նովարայի քով բաւական քաջութեամբ դէմ դրաւ Աւստրիացւոց (Ապր. 8), որոնք թագաւորին հաւատարիմ մնացող տեղացի զօրաց հետ միացած էին. բայց վերջապէս յաղթուեցաւ։ Աւստրիացիք եւ հաւատարիմ զօրքերը մէկ երկու օրուան մէջ Գուրին ու Աղէքսանդրիա բռնեցին եւ արձակապետութիւնը հաստատեցին։

54. Վերոնայի արքայաժողովը։ Ասոնցմէ տարբեր կատարած շունեցաւ Սպանիայի յեղափոխութիւնն ալ, որուն պատճառաւ գումարուեցաւ Վերոնայի արքայաժողովը։ Վեհապետք արդէն Լայպախի արքայաժողովոյն մէջ որոշած էին որ հոն ալ թագաւորական իշխանութիւնը նորէն զէնքով հաստատուի։ Բայց գործադրութեան անմիջապէս ձեռք չզարնուեցաւ, հապա իտալիայի շփութութիւններուն հանդարտելէն ետեւ։ Աս նիւթին մէջ ան մեծ դժուարութիւնը կար, որ երեք վեհապետաց որոշման կատարումը՝ Գաղղիայի ձեռքով պէտք էր ըլլաւ. իսկ Լուդովիկոս ԺԸ. չէ թէ

միայն զինեալ միջամտութեան գէժ էր, ինչպէս տեսանք (52), հապա Սպանիայի նկատմամբ նոյնին գործակից ըլլալու համար՝ առջեւը մեծ դժուարութիւններ կ'ելլէին: Նախ իր երկրին ազատականները նոյնպիսի արշաւանաց բոլորովին հակառակ էին: Երկրորդ՝ կը վախցուէր որ Սպանիացիք օտարականաց գէժ դարձեալ անանկ գիմադարձութիւն չընեն, ինչպէս Նաբոլէոնի բանակներուն գէժ ըրած էին. եւ աս էր գլխաւոր պատճառը կամ պատճառանքը՝ զորն որ գիմադրականք կառավարութեան առջեւը կը գնէին, Սպանիական արշաւանքէն ետ կեցընելու համար: Լայպախի արքայաժողովը գոցուելուն եւ Վերոնայինին բացուելուն մէջ անցած ժամանակը վերոյիշեալ երեք վեհապետք գործածած էին Լուզովիկոսին միտքն աս նկատմամբ փոխելու: Վերջին ժամանակները Գաղղիայի մէջ եղած փոփոխութիւններուն նայելով, անանկ կը կարծէին որ աս բանս գիւրաւ կրնան գլուխ հանել: Որովհետեւ նոյն ատենները չափազանց թագաւորականք կառավարութեան սանձերը ձեռուքնին անցուցած կամ անցընելու վրայ էին. եւ թէ անոնք թէ թագաւորը պէտք էին աս բանիս հաւանիլ, առաջիններն՝ իրենց սկզբունքները յառաջ տանելու, եւ վերջինը՝ զինուորական քաջագործութիւններով՝ Պուրպոնեանց իշխանութիւնը ժողովրդեան սիրելի ընելու համար: Բայց Լուզովիկոս ԺԼ.ին հակառակութիւնը՝ տակաւին առաջին սաստկութեամբ կը տեսէր, երբ որ յառաջագոյն որոշուածին համեմատ՝ Վերոնա քաղաքը նոր արքայաժողովը գումարեցաւ (1822, Հոկտ.): Ասոր մէջ ներկայ էին Աւստրիայի ու Ռուսիայի կայսրները, Պրուշի, Սարդինիայի ու Նէապոլսոյ թագաւորները, Գոսկանայի մեծ գուքսը, Մոտենայի դուքսը, Բարմայի ու Լուզգայի դքսուհիները, եւ հինգ մեծ տէրութեանց ղեսպանները: Երեք մեծ տէրութիւնք անմիջապէս սկսան փոյթ տանիլ Սպանիայի խնդրոյն վրայ զԳաղղիա իրենց կողմը շահելու, որն որ ըստ մասին կրցան յաջողընել. վասն զի նոյն տէրութեան

Մանմորանսի դեռուպանը՝ որն որ չափազանց թագաւորականներէն ըլլալով՝ իր թագաւորէն աւելի յօժար էր նոյն տէրութեանց հետ միաբանելու, իր հրահանգներէն անգին անցնելով, աս բանիս հաւանեցաւ: Ասանկով առաջինները՝ առանց բանի տեղ դնելու Անգղիայի Ուելլինկզըն դեռուպանին հակառակութիւնը, Մատրիտի խորհրդանոցին պաշտօնագիր մը խաւրեցին, պահանջելով որ սահմանադրութիւնը փոխէ եւ թագաւորին՝ մեծագոյն իշխանութիւն տայ, սպառնալով որ եթէ ասոր չիզիջանիր, սահմանադրութիւնը բալորովին կը ջնջեն (Դեկ. 14):

55. Գաղղիա գրեթէ ակամայ կը ստիպուի Սպանիայի մէջ զինեալ միջամտութիւն ընելու: Աքքայաժողովը լմննալուն պէս՝ Մանմորանսի ու Ուելլինկզըն ամապարեցին Փարիզ դացին. առաջինը կ'ուզէր զթագաւորը համոզել որ հիւսիսային տէրութեանց քաղաքականութեան համաձայնի, իսկ երկրորդը՝ նոյնին հակառակ քաղաքականութեան մէջ հաստատուն բռնել: Լուդովիկոս ԺԸ. չէ թէ միայն պաղութեամբ ընդունեցաւ իր դեսպանը, հապա արտաքին գործոց պաշտօնէն ալ հանեց (Դեկտ. 26), եւ Ուելլինկզընի դքսին խորհրդոյն համեմատ՝ սկսաւ Անգղիայի հետ միաբան փոյթատանիլ Սպանիացիները չափաւորութեան բերելու: Նոյն երկու տէրութիւնք Մատրիտի կառավարութեան խորհուրդ կու տային որ իրենց սահմանադրութեան մէջէն՝ թագաւորական իշխանութեան հակառակ եղող մասերը փոխեն: Բայց իրենց բոլոր ջանքը պարապի գնաց. վասն զի առաջարկութիւննին՝ հիւսիսային տէրութեանց պաշտօնագրոյն հետ գրեթէ միեւնոյն ժամանակ Մատրիտ հասնելով, Սպանիացւոց սէգ բնաւորութիւնը երկուքէն ալ հաւասարուէս վշտացաւ, եւ երկուքին ալ մեծաբանական ու մերժողական պատասխաններ առաւ: Լուդովիկոս աս պատասխանէն ստիպուեցաւ ընթացքը փոխելու, մանաւանդ որ իր չորս կողմը պաշարող ազնուապետականք, որոնց հետ միաբան էր Մանմորանսիին հետ Աերոնա գացող եւ ետքը արտա-

ՅԷ Ա. ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ (1815—1830), Ա.

քին գործոց պաշտօնեայ եզող Շաղպարիան, չէին գազրեր զինքը միջամտութեան յորդորելէն: Ուստի միջամտութիւնն որոշուեցաւ, եւ քիչ մը ետքը 100,000^ր զաղղիական բանակ մը Անկուէմի դքսին հրամանատարութեամբը Սպանիա մտաւ (1823, Ապրիլ 5), որուն հետ գնաց Կարոլոս Ալպերդ ալ՝ Սարդինիայի յեղափոխութեան սկիզբը ապստամբներուն հետ միանալուն բիծը վրայէն մաքրելու համար:

ՅԸ. Սպանիայի՝ հակառակ յեղափոխութիւնը: Շփոթութիւնը ու ներքին պատերազմ: Գաղղիական բանակին գործքը խիստ դիւրին էր, որովհետեւ երկրին մէջ արդէն շատերը թագաւորին կողմը ոտք ելած ու զէնք առած էին: — Գորդէզներու սահմանադրութեան պէս (48) միակողմանի կարգադրութեան եւ անկից յառաջ եկած անբնական վիճակին՝ հետեւանքը՝ չէր կրնար կարգաւորեալ ըլլալ, եւ հանդարտութիւնը երկայն ժամանակ հաստատուն մնալ: Թագաւորը, սրն որ՝ ինչպէս ըստ ինքեան կրնայ գուշակուիլ՝ բոլորովին հակառակ էր աս բռնութեամբ հաւանութիւն տուած սահմանադրութեան, իբրեւ գերի կը բռնուէր եւ գրեթէ Լուդովիկոս ԺԶ.ին վիճակին մէջ կը գտնուէր: Խորհրդանոցը՝ վանքերու, արտօնացեալ կարգերու, հին ժամանակներէ մնացած կարգադրութիւններու եւ ազգային սովորութիւններու դէմ՝ զանազան որոշումներ ու փոփոխութիւններ ընելով, եկեղեցականները, արքունեաց մարդիկը, ազնուականներն ու հնասէրները ստատիկ զրգուեց: Չարմանք ալ չէ, որովհետեւ Սպանիայի նոյն ատենուան խորհրդանոցը՝ Գաղղիայի 1789ին ազգային ժողովն իրեն օրինակ առած էր, եւ անոր նման կը խօսէր ու կը գործէր: Խորհրդանոցին վրայ յեցած՝ շատ մը քաղաքական ժողովակներ կազմեցան, որոնք ըստ մեծի մասին հասարակապետական նպատակներ ունէին եւ զանոնք գլուխ հանելու ետեւէ կ'իյնային: Աս պայպէս ըլլալով, ասոնցմէ վնաս կրողները կամ

վախճալու առիթ ունեցողները՝ ուզեցին մէկտեղ միա-
նալ ու անոնց գէմ դնել, որով աէրութեան այլեւայլ
կողմերը զօրաւոր կողմնակցութիւն մը ձեւացաւ՝ յող-
թութիւննին չարաչար դորժածող ազատականաց գէմ:
Արձակապետութեան կողմնակիցները նախ մասնաւոր
խնամապետութիւն գրին եւ զատ բանակ մը հաստա-
տեցին՝ թագաւորը սահմանադրականաց ձեռքէն աղա-
տելու համար: Ժողովուրդը՝ որն որ ըստ մեծի մասին
սահմանադրականներուն հակառակ էր, եկեղեցական-
ներէն ու ազնուականներէն յորդորուելով, զէնք առաւ,
եւ այսպէս ներքին պատերազմ մը սկսաւ, որով խեղճ
Սպանիա՝ հազիւ քանի մը տարի հանգչեւէն ետեւ՝ դար-
ձեալ իր զաւկքներուն արեամբը կը ներկուէր: Կողմնակ-
ցութեանց կատաղութեամբն ու սխակալութեամբը՝
կարծես թէ բոլոր մարդկային զգածումները Սպանիաց-
ւոց սրտէն ջնջուած էին. օրէնքն ու իրաւունքը զօրու-
թիւննին կորսընցուցած էին, եւ անիշխանութիւնն իր
բովանդակ չարիքներովը կը տիրէր:

ԾՅ. Սպանիայի յեղափոխութիւնը կը զսպուի
ու արձակապետութիւնը կը հաստատուի: Ա՛ս դժ-
բախտ վիճակին մէջ կը գտնուէր Սպանիա, երբոր Գաղ-
ղիացւոց բանակը սահմաններն անցաւ: Ուստի թէպէտ
Գորդէզները ժողովուրդը զէնքի կանչեցին, բայց իրենց
ձայնին շատ հետեւողներ չգտան, եւ Նաբոլէոնին գէմ
եղածին պէս ազգային պատերազմ յարուցանելու ա-
կընկալութիւննին պարտալի գնաց: Ասոր համար հազիւ
մասնական գիմադարձութիւն կրցան ընել, եւ Գաղ-
ղիացիք յաղթանակաւ Մատրիտ մտան (1823, Մայ.
24) ու թագաւորին անուամբը խնամապետութիւն
գրին. որովհետեւ խորհրդանոցին անգամները Գաղ-
ղիացւոց յառաջանալը տեսնելով, զինքն առած՝ Սեւի-
լեա փախած էին: Երբ որ Գաղղիացիք աս վերջին քա-
ղաքին վրայ քայել սկսան, յեղափոխականը Գաաիքս
գացին, ուր անոնցմէ պաշարեցան (Օգոստ. 15): Ասով
իրենց մէջ վհատութիւն ինկաւ, որով քիչ մը ետքը

պաշարողներուն հետ՝ իրենք ցրաւելու եւ զթագաւորն ազատ թող տալու պայմանաւ դաշինք դրին (Հոկտ. 1) : Փերդինանդ Է. ազատութիւնը գտնելուն պէս՝ վճիռ մը հանեց, որով սահմանագրական կառավարութեան բոլոր բրած գործողութիւններն անվաւեր կը հրատարակուէին ու արձակապետութիւնը նորէն կը հաստատուէր : Գաղղիացիք սահմանադրականաց ձեռքն եղող բերգերուն հետզհետէ ախրեցին (Հոկտ. 3 — Նոյեմբ. 12), եւ թագաւորը հանդիսութեամբ Մատրիտ մտաւ : Անկուլէմի դուքսն ալ ետ դարձաւ՝ Սպանիայի մէջ 45,000 գաղղիացի զօրք ձգելով, որոնց վերջինները հազիւ հինգ տարի ետքը ան երկրէն դուրս ելան (1828) : Յեղափոխութեան գլուխները՝ իրենց գործակիցներուն ու կարծեկիցներուն հետ՝ մեծ խստութեամբ հալածուեցան ու պատժուեցան, կրցողներն ալ ձգեցին օտար տեղեր փախան, եւ երկիրն արձակապետականաց ձեռքը մնաց, որոնք իրենք զիրենք Աւաբելական կողմնակցութիւն կը կոչէին : Ասանկով Սպանիա արտաքուստ խաղաղցաւ, բայց ի ծածուկ զրգռեալ վիճակի մէջ մնաց, որն որ հետեւութիւն մըն էր մէկ ծայրէն մէկաւ հակառակ ծայրն անցնելուն :

58. Բորգուկալի ներքին շփոթութիւնները : Տ. Միքայէլ ու Մարիամ թագուհին : Բորգուկալի թագուհին (Սպանիայի Փերդինանդ Է. թագաւորին քայրը), որն որ եղբօրմէն աւելի ազատականաց հակառակ ըլլալով, նոր դրուած սահմանագրութեան վրայ (49) երգում ընել չուզելուն համար՝ մայրաքաղաքէն արսորուած էր, ազնուականաց, եկեղեցականաց ու գեղացւոց գլուխն անցած՝ նոյն սահմանագրութիւնը ջնջել կ'ուզէր : Աւստի Գաղղիացւոց Սպանիա մտնելէն հօգի առնելով, իր երկրորդ Տ. Միքայէլ (Միկուէլ) որդւոյն հետ միաբան, զինուորաց մէջէն ալ խել մը մարզիկ իր կողմը վաստրկելէն ետեւ, մէկէն հակառակ յեղափոխութիւն մը հանեց, որով սպանիական ըռուած սահմանագրութիւնը ջնջեցաւ (1823, Մայ. 27—

Յունիս 2): Ասոր վրայ Յովհաննէս Զ. Թագաւորը՝
 զՏ. Միքայէլ զօրաց վերին հրամանատար անուանեց,
 եւ սկսաւ ջնջուած սահմանադրութեան կողմնակիցները
 հալածել: Ետքը երբ որ ինք ժողովուրդը հաճեցնել
 ուզելով, երկու կողման իրաւունքները՝ հաստատող
 հիմնական օրէնք մը գծելու ետեւէ կ'ըլլար, գարձեալ
 Թագուհին ու Տ. Միքայէլ գէմ գրին, եւ վերջինը
 փորձեց նոր յեղափոխութիւն հանելու (1824, Ապր.
 30 — Մայ. 7), որուն վախճանը՝ ոմանց բաժնին նայե-
 լով՝ էր հայրը գահէն վար առնուլ եւ ինք ինամուպետ
 կամ նոյն իսկ Թագաւոր ըլլալ: Իրօք ալ Թէպէտ եւ
 անանկ հրատարակած էր որ նպատակն է իր հայրն ա-
 զատել, բայց իշխանութիւնը ձեռք անցընելէն ետեւ,
 զանիկա իբրեւ բանտարկեալ կը պահէր, եւ միայն ա-
 զատութիւն Թող կու տար իր շինած հրովարտակնե-
 րուն ստորագրելու: Սակայն իր աչք դրած իշխանու-
 թեան տեղ՝ հրամանատարութենէն վար առնուելէն
 զատ, Բորգուկալէն գուրս ելլելու հրաման ընդունեցաւ:
 Ասոր վրայ երկու տարի շանցած՝ Յովհաննէս Զ. մեռաւ
 (1826, Մարտ 10), քիչ մը յառաջ իր Իդապելլա
 աղջիկը խնամուպետ գնելէն ետեւ: Իր երեք որդին Պե-
 տրոս, որն որ Պրազիլիայի կայսր ըլլալով, երկու տէ-
 րութեանց ալ նոր դրուած օրէնքներուն համեմատ՝ շէր
 կրնար միանգամայն Բորգուկալի Թագաւոր ըլլալ, աս
 վերջին Թագաւորութեան գահը հանեց իր անչափա-
 հաս Մարիամ Տա Արրիա աղջիկը, եւ ազատական
 սկզբունքներու վրայ հիմնուած սահմանադրութիւն մը
 տուաւ: Եւ որպէս զի իր Տ. Միքայէլ եղբայրն աս ս-
 բոշմանց գէմ չըստնայ, կ'առաջարկէր որ իր աղջկան
 հետ կարգուի: Թէպէտ իսկզբան այրի Թագուհին ու-
 զեց աս որոշումները ջնջելով՝ իր նոյն Տ. Միքայէլ որ-
 գին գահ հանել, որուն համար Թէ երկրին մէջի ար-
 ձակապետականներէն ու Թէ Սպանիայէն օգնութիւն
 գտաւ. բայց Անգղիացիք բանակ մը խաւրելով, յաղ-
 Թութիւնը Մարիամ Թագուհւոյն ու սահմանադրաւ

68 Ա. ՄԻՋՅՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ. (1815—1830), Բ.

կանաց կողմն եղաւ: Նոյն միջոցին Ս. Միքայէլ՝ սահմանադրութիւնը պահելու երդում ըրած եւ թագուհւոյն հետ կարգուելու հաւանութիւն տուած ըլլալով, Պետրոս կայսրն երկու կողմնակցութիւնները հաշտեցընելու համար, զինքը խնամապետ ըրաւ (1827, Յուլ.), աս թէութիւնը զնելով որ իր տուած սահմանադրութեան համեմատ կառավարէ: Ս. Միքայէլ պարտքէն ետ դարձաւ ու նոյն սահմանադրութիւնը պահելու նորէն երդում ըրաւ (1828, Փետր.): Բայց քիչ մը ետքը խորհրդանոցը լուծեց (Մարտ 14), եւ սահմանադրութեան հակառակ եղող կողմնակցութեան ու իր մօրը օգնութեամբ՝ ինք զինքը Բորդուկալի թագաւոր անուանել տուաւ (Յունիս 23), որ աստիճանն որ քանի մ'որ վերջը ընդունեցաւ (Յունիս 30):

Բ.

Յունական յեղափոխութիւնն ու անկախութեան պատերազմը, Աոյնիս հետ կապակցութիւն ունեցող զուգընթաց դէպքերով (1821—1830):

59. Յունաց վիճակը: Աւազակք: Անկախութեան բաղձանք: Գարոտիսզրիա: Ազատութեան ու ինքնակացութեան բաղձանքը կործես թէ մրկի պէս՝ հարաւային ազգաց շրջանը կ'ընէր: Պիւրենեան թերակզգին ու Խաւլիա՝ նոյն նպատակներով մղուած պատերազմներուն տեսարանն եզած ատեն, Յունաստան ալ նոյնպիսի բայց աւելի արիւնահեղ կռիւներով տակնուվրայ ըլլալու կը սկսէր: — Չորս դարէ վեր Յոյնք Տաճկաց իշխանութեան տակ մտած էին, եւ թէպէտ մեծ նեղութիւններ կրած էին եւ ըստ մասին տակաւին կը կրէին, ի վերայ այսր ամենայնի կրօնքնին ու ազգայնութիւննին պահելէն զատ, վաճառականութեամբ բաւական մեծ բարօրութեան հասած էին, եւ վերջին ասեմները մէջերնին քաղաքակրթութիւն եւ ուսում

մտնելու սկսած էր: Յունաստանի մէջ տեղ տեղ աւանակ ցեղեր ալ կային, որոնք անմատոյց լեռներ ապաւինած, կրնայ ըսուիլ որ երբեք Դրան հպատակութեան տակ մտած չէին: Ասանկ վայրենական ազատութեամբ ապրող մարդիկներու մէջ քաղաքակրթութիւն չէր կրնար փնտռուիլ. բայց մշտնջենաւոր կռիւներով ու աւազակական արշաւանքներով այնպիսի քաջութիւն ստացած էին, որ եթէ կրթուելու ըլլային, կրնային քաջ բանակ մը կազմել: Ասոնք Աւազակք¹ կը կոչուէին, ինչպէս իրօք ալ էին, եւ իրենց բնակութեան տեղերը՝ անբռնաբարելի ապաստանարաններ եղած էին, ուր իրենց ազգայինները՝ ամէն կերպ չարիքներ գործելով եւ երբեմն հարստահարութենէ փախչելով՝ կու գային կ'ապաւինէին, եւ այսպէս Աւազակաց թիւն օրրոտօրէ կ'աճէր: Արդ առ դարուս սկիզբէն քանի որ Յունաց մէջ ուսումն ու քաղաքակրթութիւնը կ'աճէր, ազգային հոգին ալ արթննալով, շատերը կը մտածէին կերպով մը նոյն քաջ մարդիկներուն աւազակական արշաւանքները՝ կարգաւորեալ պատերազմի դարձընելով, Յունաստան ինքնագլուխ ընելու գործածել: Խեղ մը յոյն երիտասարդներ՝ որոնք Նաբոլէոնի ժամանակը ուսում սորվելու համար Փարիզ կ'երթային, ակնկալութիւն կ'ունենային որ ան կայսրն իրենց հայրենեաց անկախութիւնը գլուխ կը հանէ: Իսկ յիշեալ կայսեր իյնալէն ետեւ՝ Ալէքսնայի արքայաժողովոյն տօները՝ նոյն մայրաքաղաքը խել մը Յոյնք կամ Յունասերք գտնուած էին, որոնց մէջ ամենէն նշանաւորն էր Գաբոտիսդրիա կոմօր: Աս մարդը՝ որն որ ծննդեամբ Գորֆուցի էր, Ռուսի զինուորական ծառայութեան մէջ գործած քաջութիւններովը՝ մինչեւ գնդապետի աստիճան բարձրացած էր, եւ իբրեւ ղեկավանագէտ՝ համարու՞մ ունենալով, Աղէքսանդր կայսրը զինքը զանազան անգամ ղեկավանական գործքերու գործածելէն զատ՝ արքայաժողովը հետը տարած էր: Հոն թէ ինք

1 Κλέωτης.

եւ թէ ուրիշները՝ գլխաւորաբար Յանիական կղզեաց հասարակապետութեան հիմնուիրն օրինակ առնելով, ետեւէ եղան բուն Յունաստանի համար ալ նոյնպիսի ազատութիւն ձեռք բերելու, բայց չկրցան յաջողցնել:

60. Էգիպտոսի ընկերութիւնը: Գարսոսիա գրիա եւ ուրիշները դեսպանաւճողոյցն ձեռքովը Յունաստան անկախ ընելու ակնկալութիւնը կորսնցնելով, ուզեցին ուրիշ կերպ միջոցով նոյնը գլուխ հանելու պատրաստութիւն տեսնել: Արդէն դարուս սկիզբը շատ մը օւսումնական Յոյնք՝ ընկերոսութիւն Մոսուայասիքաց՝ անունով ընկերութիւն մը հիմնած էին, որն որ հասարակօրէն պարզապէս ընկերութիւն (Էքսքիս) կը կոչուի: Ասոր սկզբնական նպատակն էր՝ Յունաց ազգին մտաւորական ու բարոյական վիճակը լաւացնել. բայց կամաց կամաց ան առաջին նպատակը փոխուելով, բորբոս վին քաղաքական կերպարանք առած էր: Արդ Գարսոսիա գրիա՝ Վիէննա եղած ատեն՝ նոյն ընկերութիւնը նորօրեց, կարգաւորեց եւ անանկ վիճակի մէջ դրաւ, որ Յունաստանի անկախութեան գործիք բլայ: Ընկերութիւնն աս նոր վիճակին մէջ՝ Իտալիայի Գարպոնարիա ընկերութեան (46) նման բան մ'եղաւ: Ընկերակիցք հինգ ատոման կը բաժնուէին, որոնց ամենէն ստորին (հինգերորդ) դասին մէջ եղողները՝ միայն այսչափ գիտէին թէ ընդհանրապէս Յունաստանի վիճակը լաւացնելու պիտի աշխատին: Ասոնցմէ վերինները (չորրորդ դասինները) տեղեակ էին որ աս դիտուած վիճակին հասնելու համար՝ յեղափոխութիւն մը պիտի պատրաստուի: Երրորդ դասիններուն ծանօթ էր որ աս յեղափոխութեան ատենը մօտ է, եւ թէ գլխաւորներ կան, որոնք նոյնին տեղն ու ատենը պիտի որոշեն: Աս գլխաւորները՝ որոնք երկրորդ աստիճանը կը կազմէին, 116 հոգի էին եւ իրենց իշխանութիւնը համաթիւ շրջաններու վրայ տարածուելով, իւրաքանչիւրն իր շրջանին վրայ ճիշդ տեղեկու-

1 Έταιρία φιλομούσων.

Թիւն պիտի ասար՝ վերին կամ առաջին աստիճանը կազմող կեդրոնական մասնաժողովոյն, որն որ տասնուվեց հոգիէ կազմուած էր եւ լիակատար իշխանութիւն ունէր ձեռնարկութեան նկատմամբ: Ընկերութիւնը չէ թէ միայն հիմնական Յունաստանի եւ Տաճկական յունարնակ գաւառներուն վրայ, հապա գրեթէ աշխարհքիս ամէն կողմը տարածուեցաւ, եւ ընկերներուն աալու պարտաւարութեամբ գումարով ու ամէն դիպաց խաւրութեամբ կամուար տուրքերով շուտ մը խիստ շատ ստակ ձեռք բերաւ: Այսպէս յաջողութիւն գտնելով՝ Յոյնք մտքերնին դրին որ իրենց խորհրդոյն գործադրութեան շատով ձեռք զարնեն: Իրաց նոյն ատենուան հանգամանքին նայելով, մէկ կողմանէ օգնութիւն կը յուսային Ռուսիայէն, որն որ իրենց ան աստիճանի նպատաւար էր, մինչեւ թող տուած էր որ Էդերիային կեդրոնական մասնաժողովը Մոսկաւ քաղաքը հաստատուի, եւ անոր գահերէց ընարուի Աղէքսանդր Իփսիլանդի՝ Ալալաքիայի յոյն Օսիտարին որդին, որն որ Աղէքսանդր կայսեր օգնական զօրապետներէն մէկն էր. մէկալ կողմանէ ալ ակնկալութիւն ունէին որ Գուռն իրենց դէմ մեծ զօրութիւն չիկրնար բանեցընել, վասն զի արդէն տէրութեան ուրիշ կողմերը բաւական զբաղելու նիւթ ունէր:

61. Ալալաքիա, Մոլտաւիա եւ Սերուիա: Հոս հարկ է որ մտադրութիւննիս Օսմանեան տէրութեան քանի մը գաւառներուն դարձընէք, որանց վիճակէն՝ ինչպէս ըսինք՝ Յոյնք ակնկալութիւն կ'ունենային իրենց ձեռնարկութեան յաջողելուն: — Ալալաքիա ու Մոլտաւիա հետզհետէ այնպիսի վիճակի մէջ մտած էին, որ Գրան՝ նոյն երկիրներուն վրայ ունեցած իշխանութիւնը խիստ նուազած էր եւ իբրեւ թէ միայն անուամբ ան անդերուն տէր էր: Քիչիւք Գայնարճըյի գաշինքով (Հատ. Բ. 235, 2) Ռուսիա իրաւունք ստացած էր նոյն իշխանութեանց իրողութիւնները պաշտպանելու համար՝ Գրան առաջարկութիւններ ընելու, եւ աս

նպատակաւ հոն ընդհանուր հիւպատոս մը կը պահէր, որն որ իբր թէ Ռուսի կուսակալ մըն էր: Պուզրէշի գաշնագրութեամբ (Հաս. Գ. 215) Ռուսի իրաւունքները հաստատուած մանաւանդ թէ աւելի մեծցած էին, եւ նոյն չափով Գրան իշխանութիւնը պզտիկցած էր: Սերուիա ստոյգ տս վիճակին մէջ չէր, բայց հոն ալ Գրան իշխանութիւնը մեծապէս նուազած էր: Հոն տեղաց բնակիչները դարուս սկիզբը ոտք ելած էին, եւ իրենց Չեռնի (Սեւ) Գէորգ դիւցազնին առաջնորդութեամբ, Ռուսներէն ալ օգնութիւն գտնելով, կրցեր էին ձեռնարկութիւննին գոնէ այնչափ յաջողքնել, որ Գուռը յանձն առած էր նոյն երկիրն իբրեւ զատ իշխանութիւն ճանչնալ, եւ նոյն Գէորգ Չեռնի իշխան եղած էր: Վերոյիշեալ Պուզրէշի խաղաղութեան գաշինքով՝ Սերուիա գարձեալ Գրան իշխանութեան տակ դրուած էր: Սերուիացիք նոյնը յանձն չառնելով, Տաճիկներն եկան զերեւը զէնքով զսպեցին. բայց Միլոշ Օպրենովիչ մէկ երկու անգամ նորէն ժողովուրդը ոտք հանելով, Դռնէն խել մ'ազատութիւններ ընդունեցաւ (1816), այնպէս որ երկրին ներքին իրողութեանց առաջնորդութիւնը Սերուիացւոց ձեռքը մնաց, եւ Գուռը միայն մէկքանի ամուր տեղերը զօրք կեցընելու իրաւունք պահեց: Միլոշ երկրին կառավարութեան գլուխն անցաւ, եւ քիչ մը ժամանակ նոյն պաշտօնը իբրեւ ծերակուտի գահերէց վարելէն ետեւ, իբրեւ իշխան ճանչցուեցաւ (1817):

62. Եաննայի Ալի փաշան: Ուրիշ մերձաւոր գաւառներուն մէջ՝ ստոյգ է՝ Գրան իշխանութիւնը քայքայուած չէր, բայց եւ այնպէս անոնք ալ հոն դարտ չէին: Գլխաւորաբար Ալպանիայի մէջ Եաննայի Ալի փաշան շատոնց անանկ ընթացք մը կը բռնէր, որն որ վերջին ժամանակները Գրան բոլոր մտադրութիւնը գրաւած էր, որովհետեւ իրերը հոն ալ Սերուիայի մէջ ունեցածնաւն պէս՝ վերջ կրնային ունենալ: Ալի փաշան, որն որ խել մը ժամանակէ վեր Գէրէլէն աիրոզ

Աւազակաց մէկ ցեղէն ծնած էր, ըստ մասին Գրան ըրած ծառայութիւններովը եւ ըստ մասին իր նենգութիւններովն ու չարագործութիւններովը՝ քիչ քիչ յառաջանալով, մինչեւ Եանեայի դաւառին փաշայութիւնը յափշտակած էր, որ իշխանութեան մէջ Գուռը զինքը հաստատեց (1788)։ Անկէ ետեւ կամ զինուց զօրութեամբ եւ կամ նենգութեամբ բոլոր Ալլանիա ձեռք անցուց. եւ վերջապէս բովանդակ Ռուսէլիի փոխարքայ անուանեցաւ (1804)։ Իր իշխանութիւնն այսչափ մեծցրնելէն ետեւ, սկսաւ ջանալ անկախ ըլլալու. իր աշխարհակալութիւնն ընդարձակեց, անթիւ անհամար գանձ ժողովեց, եւ իր զաւկըները մեծամեծ իշխանութիւններու հասցուց։ Գուռը թէպէտ եւ քանի մը տարիէ վեր ասոր ստացած մեծ զօրութենէն անհանգիստ կ'ըլլար, բայց հազիւ նոր ատենները (1819) սկսած էր ետեւէ իյնալու որ զինքը զուպէ, մինչեւ զինքը մահուան դատապարտած էր։ Սակայն իոկզբան Ալի փաշան յաջողութեամբ դէմ կը դնէր իրեն դէմ խաւրուած զօրքերուն, եւ Էդերիայի հետ ալ հաղորդակցութեան մէջ մտած էր, այնպէս որ Գուռը խիստ նեղի եկաւ, վախնալով որ չըլլայ թէ իր զօրաց մէջ եղող քրիստոնեայք, որոնց սիրտն Ալի Փաշային բռնութիւններէն այրած ըլլալով՝ զինքը զուպելու գործակից կ'ըլլային, անոր հետ միանալով՝ շփոթութիւններն աւելի մեծցրնեն։

63. Եգիպտոս ու Մէհէմմէտ Ալի Փաշան։ Աս երկիրն ու իր Մէհէմմէտ Ալի փոխարքան այնչափ աւելի արժանի է մեր մտադրութեան, որչափ որ աս եւ առաւել եւս յաջորդ ժամանակի միջոցին մէջ, չէ թէ միայն Օսմանեան տէրութեան, հապա ընդհանուր քաղաքականութեան պատմութեան գլխաւոր նիւթերէն մէկն է։ Մէհէմմէտ Ալի Փաշան, որն որ Մակեդոնիայի մէջ աննշան մարդիկներէ յառաջ եկած էր, Եգիպտոսի կուսակալ ըլլալուն պէս (1806) անանկ դրից մէջ մտաւ, որով յայտնի կ'երեւար թէ ինքնագլխու-

Թեան ետեւէ կ'ըլլայ: Անանկ ընթացք մը բռնեց, որն որ արեւմտեան քաղաքակրթութեան ու արեւելեան բռնաւորութեան խառնուրդ մըն էր. բայց եւ այնպէս չէ թէ միայն անոնց համարումը ստացաւ, որոնք Արեւելքին՝ Եւրոպական քաղաքակրթութեան ճամբան մտնելուն կը բողձային, հապա նաեւ նոյն իսկ սաստիկ Մահմետականաց, վասն զի իրօք ալ թէ նորոգիչ եղաւ՝ ըստ Եւրոպական ըմբռնմանց, եւ թէ կրօնի դիւցազն՝ ըստ ճաշակի Տաճկաց: Մամուլ գնեցրու պէյերը (Հատ. Գ. 117) ջնջելով՝ բոլոր Եգիպտոս իր իշխանութեան տակ առնելէն ետեւ, պատերազմի ելաւ Ահմադ Սալիմեան ղէմ, որոնք Արաբիայի մէջ սաստիկ զօրանալով, Գրան իշխանութեան վնաս հասցնելէն զատ, ան կողմերը գացող Տաճիկ ուխտաւորները կը կողոպտէին ու կը չարչարէին, մանաւանդ Մէտինէ ու Մէքքէ քաղաքները ձեռք անցնելէն ետեւ: Գուռը պարսպ տեղ ասոնց ղէմ Պաղտատի ու Ասորիքի փաշաները խաւրելէն ետքը, զիրենք զսպելու պաշտօնը Մէհմետ Ալիին յանձնեց, որն որ վերջապէս իր որդւոյն Իպրահիմ փաշային ձեռքըր զանոնք զսպեց (1818, Սեպտ.): Նոյն պատերազմներով Մէհմետ Ալի իր վեհապետին ու կրօնակցաց առջեւը մեծ փառք ու համարում ոտանալով, սկսաւ ետեւէ իյնալ իր զօրքերը Եւրոպական կրթութեամբ կարգաւորելու. զորն որ գլուխ տարաւ Նաբոլէոնի կողմնակից կամ դաւակցութեանց մասնակից ըլլալուն համար՝ Եւրոպայէն հեռանալու ստիպուած Գաղղիացի ու Իտալացի պաշտօնականներու ձեռքով: Այսպէսով մէկքանի տարւան մէջ 25—30,000 կրթեալ ցամաքային զօրք եւ 60էն աւելի մեծ ու պզտիկ պատերազմական նաւ ունեցաւ: Բայց իր մտադրութիւնը միայն զինուորական զօրութեան շնորհեց, հապա ուսմանց, արուեստներու, վաճառականութեան ու երկրագործութեան, զորոնք խիստ ծաղկեցուց, նոր ճամբաներ ու ջրմուղներ շինեց կամ նորոգեց: Թէպէտ աս ամէն գործքերուն մէջ

աստիկ անիրաւութիւններ ու անազորունութիւններ ալ անպակաս էին, սակայն եւ այնպէս ամէն մարդ աւելի արտաքին կարգաւորութեան ու զօրութեան նայելով, ինչպէս զրուցեցինք՝ զինքն իբրեւ մեծ նորոգիչ կը նկատէր:

Յ4. Յունաց յեղափոխութեան սկիզբը: Դանուբեան իշխանութեանց մէջ եղածները: Ինչպէս վերը յիշատակեցինք, Յոյնք այս ամենայն իրենց նպաստաւոր պարագաներէն հոգի առնելով, որոշած էին որ շուտով իրենց գործողութեան ձեռք զարնեն: Էդերիայի կեդրոնական մասնաժողովը նշան տալուն պէս, բուն Յունաստան, Մոլտաւիա, Վալաքիա, Սերուիա, ինչպէս նաեւ ուրիշ դաւառներուն ու մայրաքաղաքին մէջ գտնուող Յոյնք, ոտք պիտ'որ ելլէին: Նոյն նշանը տուաւ Ալէքսանդր Իփսիլանդի (60), որն որ յեղափոխութեան տեսարանին աւելի մօտ գտնուելու համար՝ կեդրոնական մասնաժողովը Մոսկաւէն Պեսարաբիա փոխադրած ըլլալով, նոյն տեղը ժողոված խել մը Ալպանիացիներով՝ Մոլտաւիա յարձակեցաւ: Որովհետեւ հոնտեղաց Միքայէլ Սուզոյ Օսփոտարն ալ Էդերիայի անգամներէն էր, եւ Իփսիլանդիին պզտիկ գունդը՝ իբրեւ Ռուսաց բանակին յառաջապահ կը նկատուէր, անոր համար տեղացի ժողովուրդը զինքն ուրախութեամբ ընդունեցաւ եւ յաղթանակաւ Եաշ խոթեց (1821, Մարտ 6): Երկու օր վերջը Իփսիլանդի իբրեւ Յունաց ազատիչ ու իրենց տէրութեան նորոգիչ՝ բոլոր ազգին ուղղուած յայտարարութիւն մը հանեց, որ ոտք ելլեն եւ Օսմանեանց լուծը վզերնէն թօթափեն, որուն համար Ռուսիայի պաշտպանութիւնն ու օգնութիւնը կը խոստանար: Քիչ ատենուան մէջ իր գունդը մեծցընելով՝ Վալաքիա դիմեց, ուր նոյն ատեն յեղափոխութիւն ելած էր, բայց ուրիշ նպատակաւ: Հոնտեղաց Օսփոտարը մեռած ըլլալով, Թէոդոր Վլատովրէսդոյ՝ Վալաք ազնուականը (Պոյարը), գեղացիները ոտք հանած էր, իբրեւ թէ նոր դրուելու Օսփոտարէն

վախցուած զրկանքներն արգելելու համար, բայց իրօք օսփոտարութեան աստիճանը ձեռք բերելու մտօք, եւ շուտ մը կողմնակիցները շատցընելով, Պուքրէշ մտած էր (Մարտ 27)։ Այսպէսով թէպէտ եւ Իփսիլանդի ու Ալատովիրեսգոյ իրարմէ տարբեր նպատակ ունէին, սակայն իւրաքանչիւր իր վախճանին համեմելու համար՝ մէկտեղ միացան, մանաւանդ որ երկուքն ալ Ռուսիայի յանձնարարութեամբք գործել ձեւացընելով, հարկ էր որ նաեւ արտաքուստ միարան երեւային։ Իսել մը թափառականք եւ աւարառութեան բաղձացող մարդիկ եկան ասոնց դրօշին տակ մասն, որով եւ յեղափոխութիւնն ըստ արտաքին երեւութին շատ զօրաւոր կ'երեւար. բայց ներքին զօրութիւնը նոյնին համեմատ չէր։ Ատոր գլխաւոր պատճառն էր, Ալալքներուն՝ Յոյն եկեղեցականաց ինչպէս նաեւ իրենց մէջ ապրող երեւելի Յոյներուն գէմ ունեցած ատելութիւնը, որով անմիջապէս սկսան զանոնք հալածել ու մերժել, եւ աս ատելութիւնը նոյն իսկ բանակն ալ մտաւ։ Ստուգիւ ալ Յունաց հպարտութիւնը, երկպառակութիւններն ու նախանձները շատ յարմար չէին առաջիններուն սիրտերը շահելու։ Նոյն իսկ Իփսիլանդին՝ որն որ ասոանկ մեծ գործքի ձեռք զարկած էր, այնպէս գէշ ընթացք բռնեց, որ ի հարկէ անյաջող ելք ունենալու էր։ Իր քաջ պաշտօնականներուն տեղ՝ զինքը շողքորթել գիտցողները յառաջ կը տանէր, բարձրամտական վարմունքովն ամենուն սիրտն իրմէ կը հեռացընէր, եւ ատենը Ալալքիայի մէջ անգործութեամբ կ'անցընէր, որով զօրաց ու ժողովրդեան եռանդը կը նուազէր ու երկու ազգայնութեանց երկպառակութիւնները կը ոսասկանային։

65. Յոյնք կոստանդնուպոլսոյ մէջ։ Ալալքիայի ու Մոլտաւիայի յեղափոխութիւնը կը զսպուի։ Իփսիլանդիին անգործ կենալուն պատճառն ան էր, որ ասդին անդին խաւրած գործականներուն ձեռքովն ամէն կողմ յեղափոխութեան օկսելուն կը սպասէր, որ-

մէ՛ ըստ մասին նիւթական եւ ըստ մասին բարոյական օգնութիւն ընդունել կը յուսար: Բայց իր ակնկալութիւնը պարապի ելաւ, իր գործակալներէն ոմանք ձեռք ինկան, սլաւեան գաւառները եւ մանաւանդ Սերուիա՝ որուն վրայ մեծ յոյս տներ, ամենեւին շարժում չըրին, բուն Յունաստանի մէջ ելած յեղափոխութիւնն իրեն օգուտ չունեցաւ, իսկ Կոստանդնուպոլիս պատահածներն իրեն աւելի վնաս ըրին քան թէ օգուտ: Նոյն մայրաքաղաքին մէջ մեծ գաւակցութիւն մը կը պատրաստուէր. խել մը Յոյն նաւազներ խօսք մէկ ըրած էին որ Սուլթանը՝ մզկիթ գացած ատեն՝ սպաննեն, մեծ նաւարանն օդը հանեն, թնդանօթ ու զէնք ձեռք անցընեն, եւ Յոյները զինելով՝ Տաճիկները կտորեն: Բայց բանն ատենին յայտնուելով ու գլխաւորը բռնուելով, նպատակին չհասաւ: Նոյն միջոցին Ալաքիա եւ Մորա պատահածներուն գոյժը հասնելով, Դուռը վտանգին մեծութիւնը տեսաւ, եւ միտքը դրաւ որ աս ամէն բանին մէջ Ռուսիայի ձեռքը կայ, որն որ ընդհանուր յեղափոխութեամբ երկիրը տակնուվրայ եղած ատեն՝ կ'ուզէ իր բանակները Տաճկաստան քալեցընել: Ասոր համար բոլոր Մահմետականք զէնքի կանչուեցան, որոնք անմիջապէս սկսան մայրաքաղաքին մէջ ու շրջակայ տեղերը Յոյները շարդել: Միեւնոյն օրերը Իփսիլանդիին՝ իր գործակալներուն ձեռքովը քանի մ'երեւելի Յոյներու խաւրած նամակները բռնուելով, անոնք ամէնն ալ կասկածի տակ ինկան, եւ այսպէս խել մը մարդիկ սպանուեցան, որոնք՝ գոնէ ըստ մասին՝ անմեղ էին: Յունաց Պատրիարքը՝ թէեւ Դրան հրամանին համեմատ՝ յեղափոխութեան մասնակից եղողները նզոված էր, զատկին օրը իր եպիսկոպոսներովը պատարագ մատուցած ատեն՝ բռնուելով կախուեցաւ (1821, Ապրիլ 22): Կոտորածը մայրաքաղաքէն գուրսուրիչ յունաքնակ տեղերն ալ տարածեցաւ. այնպէս որ երէք ամսուան մէջ 30,000ի չափ մարդ սպանուեցաւ: Իսկ զինուց զօրութիւնը նախ Դանուբեան իշխանու-

Թեանց դէմ գարձուցին Օսմանեանք, ուր ապստամբութիւնը խորունկ արմատ չունենալով, դիւրաւ զսպեցաւ: Իփսիլանդի՝ ինչպէս ըսինք՝ ամենեւին տեղէ մը յուսացած օգնութիւնը չկրնալով գտնել, Ռուսաց կողմանէ ալ՝ ակնկալած պաշտպանութեան ու ձեռնառութեան տեղ՝ տհաճութիւն ու յանդիմանութիւն ընդունելով (69), խիստ նեղի եկաւ: Մանաւանդ որ իր ու Ալաաոմիրեսգոյի մէջ երկպառակութիւն ելլելով, վերջինն իրեն դէմ դաւաճանութիւն նիւթեց. Տաճկաց հետ բանակցելով, խոստացաւ որ եթէ զինքը Ալալաքիայի իշխան ճանչնան, ինք զԻփսիլանդի իրենց ձեռքը կը մատնէ: Եւ թէպէտ Իփսիլանդի բանն իմանալով, աճապարեց զանիկայ մեռցրնել տուաւ, բայց անանկով ալ ինք խիստ տկարացաւ: Այսպէսով իբր առաջնորդութեան տակ եղող Սրբազան գունդ բուռած Յոյն զօրքերը՝ Ալալաքիայի մէջ Տաճկաց առաւել զօրութեան առջեւը պարտեցան. եւ Տրակաշանի քով տրուած ճակատին մէջ՝ քաջութեամբ պատերազմելէն ետեւ, բոլորովին քայքայեցան ու ցրուեցան (Յունիս 19): Իփսիլանդի Աւստրիայի երկիրները փախաւ, իրենները խաբելով որ նոյն տէրութեան հետ յառաջագոյն խօսուածին համեմատ՝ անկից գալու օգնական զօրքին նկատմամբ բանակցելու կ'երթայ: Բայց հոն բռնուելով՝ վեց տարի Հունգարիայի Մունգաչ բերդը բանտարկուած մնաց: Այսպէսով Օսմանեան զօրքերը բոլոր Ալալաքիա ու Մոլտաւիա բռնեցին:

66. Բուն Յունաստանի մէջ Յունաց ունեցած յաջողութիւնները: Հոյնք այսպէս ուրիշ կողմերը կորտրուած ու զսպուած ատեն, բուն իրենց երկրին մէջ մեծ յաջողութեամբ ձեռնարկութիւննին յառաջ կը տանէին: Հոն յեղափոխութիւնը սկսաւ Բադրասի քով Գալապրիգա քաղաքին ոտք ելլելովը (1821, Ապրիլ 2): Տաճիկները նոյն տեղերը խիստ սակաւաթիւ ըլլալով, եւ ոչ իոկ տեղացի Յոյներուն կրցան դէմ դնել. իոկ բոլորովին յաղթուեցան՝ երբ որ Աւազակներն իրենց

բռններէն իջնելով, առաջիններուն օգնութեան եկան: Երէք յաջող կռիւներով, որոնցմէ առաջին երկուքը՝ Դրբբալիցցոյի մօտ Վալդեցցոյի քով (Ապր. 24, Մայ. 27) իսկ վերջինը Տօլիանոյի քով (Մայ. 30) տրուեցաւ, յունական յեղափոխութիւնը յաղթող եղաւ: Տաճիկները՝ միայն բերգերը կրցան պահել. անոնցմէ ալ Մանեմզազեա, Նաւարին ու Դրբբալիցցո յեղափոխականաց ձեռքն անցան: Իսկ կղզիները գրեթէ բոլորովին իրենց ձեռքը մնալով, Յոյնք չէ թէ միայն ծովերու վրայ ազատութեամբ երթեւեկութիւն կը նշին, հապա նաեւ Օսմանեան նաւերուն մեծ ֆլոտս կը հասցընէին: — Առ յաջողութիւններուն վրայ վստահելով, Յոյնք՝ Դեմեարիոս Իփիլիանդիին (Ազէբանդրին եղբորն) առաջարկութեամբը՝ ազգային համաժողով մը գումարեցին եւ հան հրատարակեցին որ Յունաստան տնկախ ու ինքնիշխան է (1822, Յունու.): Միանգամայն առժամանակեայ սահմանադրութիւն մը շինեցին, որուն նայելով, կառավարութիւնը՝ մէկ օրէնսդիր եւ մէկ գործադիր ժողովքէ պիտի կազմուէր: Առաջինը՝ ծերակոյտը՝ գաւառներու պատգամաւորներէ պիտի բաղկանար. իսկ գործադիր իշխանութեան գլուխը պիտի կենար հինգ հոգիէ կազմուած խորհուրդ մը, զորն որ ծերակոյտը պիտ'որ ընտրէր եւ որն որ ամէն տարի փոխուելու գահերէց պիտ'որ ունենար: Առաջին անգամ՝ գահերէց ընտրուեցաւ Ազէքո. Մարոյզորտագոյ:

67. Եւրոպայի ողգերուն Յունաց ցուցուցած միտութիւնը: Յունասէրք: Բայց ասով, ինչպէս յայտնի է, ամենայն ինչ լմընցած չէր կրնար ըլլալ. իրօք ալ ասկաւին խել մը տարի Յունաց պատերազմը յառաջ գնաց, որուն մէջէն իրենց յաղթող ելլելը՝ չէ թէ իրենց զօրութեամբն եղաւ, հապա նախ Եւրոպական ազգերուն եւ ետքը քանի մը տէրութեանց իրենց օգնելովը: Իսկզբանէ գրեթէ ամէն տեղ Եւրոպայի ժողովուրդները Յունաց կողմը կը բռնէին: Իրենք այնպէս

ըմբռնած էին որ աս յունական պատերազմն ուրիշ բան չէ, բայց եթէ քրիստոնէութեան կռիւ՝ մահմետականութեան դէմ, քաղաքակրթութեան կռիւ՝ բարբարոսութեան դէմ: Աս Եւրոպական սխալ ըմբռնումը՝ Յունաց մեծապէս օգտակար եղաւ. չէ թէ միայն ասդին անդին Յունասիրաց ընկերութիւնը հաստատուեցան, որոնք իրենց ստակ, զէնք, ուզմամբ մինչեւ նաւեր կը հոգային, հապա նաեւ խել մը մարդիկ իրենց հայրենիքը թող տալով, կ'երթային անոնց համար արիւննին կը թափէին եւ կեանքերնին կը զօհէին: Աս վերջիններուն մէջ թէեւ շատ բախտախնդիրներ ալ կը գտնուէին, որոնք ուր որ ըլլայ նէ՛ գործունէութեան դաշտ մը կը փնտուէին, կամ իրենց հայրենեաց գտնուած վիճակին վրայ տժգոհ ըլլալով՝ հոնկից հեռանալ ուրիշ տեղ մ'երթալ կ'ուզէին. բայց երեւելի մարդիկ ալ պակաս չէին: Ասոնց կարգէն է Անգղիացի Լորտ Պայրըն նշանաւոր բանաստեղծը, որն որ իր ինչքն ու բազուկը Յունաց նուիրեց: Սակայն աս Յունասէրը հառարակօրէն իրենց սպասած ընդունելութիւնը չգտան: Իրենց մէջ բաւական ճարտար զորապետներ կային. բայց Յոյնք իրենց նախանձովը չէ թէ միայն անոնց խօսքերուն միտ չէին դներ, չէ թէ միայն անոնցմէ քանի մը հոգի սպաննեցին, հապա երբ որ անոնք ամէնքը մէկտեղ ժողվելով՝ առանձին գունդ մը կազմեցին, զիրենք Օսմանեանց մատնեցին, որով Բեդայի քով յուսահատական ու դիւցազնական կռուի մը մէջ ըստ մեծի մասին ջնջուեցան (1822, Յուլ. 16):

68. Իպրահիմ Փաշային հրամանատարութեամբը՝ Յունաստան Եգիպտացի զօրք ու նաւատորմիկ խաւրովիլը: Միսոլունկիի իյնալը: Յունաց յեղափոխութիւնը սկսելէն չորս տարի վերջը, երկիրը Կրան նկատմամբ գրեթէ ան գրից մէջ կը գտնուէր, որուն մէջ մտած էր յեղափոխութեան առաջին տարին: Յունաց մեծապէս օգնած էր Եանեսայի Ալի Փա-

շան, որն որ իրենց սահմաններուն վրայ Գրան զօրաց
 գէժ կը պատերազմէր, բայց երբ որ անիկայ խաւրջիտ
 Փաշային ձեռքն իյնալով՝ սպանուեցաւ (1822, Փետր.
 5), իբրեւ թէ Յունաստանի նախապարիսպն ինկաւ,
 որով սահմանի գաւառներուն մէջ պատերազմող զըն-
 դերը կ'երթային կու գային: Իսկ բուն Յունաստանի
 միջին կողմերը եւ ծովեզրներու վրայ Յոյնք գրեթէ բու-
 լարովին ազատ էին եւ հոն տեղերը Օսմանեանց ձեռքը՝
 միայն քանի մը բերդեր կային: Ծովու վրայ առաջին-
 ները միշտ աւելի կը զօրանային. թէպէտ ծովային մեծ
 պատերազմներ չտրուեցան, հապա Յունաց քաջու-
 թիւնը յանդուճն յարձակումներով Օսմանեան նաւերն
 տրեւու վրայ կը կայանար. սակայն եւ այսպէս Տաճկա-
 կան մեծամեծ նաւերուն յունական փոքր նաւերէն այ-
 րուիլը՝ Տաճիկներուն աչքն այնպէս վախցուց, որ ծովն
 անոնց գրեթէ բոլորովին ազատ թող տուին: Իրերն
 առ վիճակին մէջ գտնուած ատեն, Սուլթան Մահմուտ
 վերջին փորձ մ'ալ ընել ուզեց՝ իր ապստամբ հպատակ-
 ները զսպելու. Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի Փաշային՝
 կրետէ ու կիպրոս կզգիները, եւ անոր իպրահիմ որդ-
 ւոյն՝ Մորայի կուսակալութիւնը խոտտանալով, իրեն
 յանձնեց Յունաստանի յեղափոխութիւնը նուաճելու
 պաշտօնը: Մէհէմմէտ Ալի անմիջապէս իր իպրահիմ
 որդւոյն հրամանատարութեամբ՝ Յունաստան կրթեալ
 բանակ եւ զօրաւոր նաւատորմիդ մը խաւրեց: Աս զօր-
 քերէն 12,000 հոգի՝ բազմութիւ թնդանօթներով,
 ճարտար զօրապետներու առաջնորդութեամբը Մոտոն
 ցամաք ելան (1825, Փետր. 28 — Մարտ 16): Ինչ-
 պէս կրնային Յունաց պզտիկ ու երկպառակեալ գնդերը
 գէժ զնել՝ յաղթութեան վարժած ու կրթեալ Եգիպ-
 տական բանակին: Ստոյգ է՝ ամէն ճիգերնին ի գործ
 դրին, իրենց գլխաւորներէն սմանք նախանձնին ու երկ-
 պառակութիւննին մէկգի ձգելով՝ միաբանեցան, որով
 եւ տեղ տեղ քիչ մը գիմադարձութիւն կրցան ընել.
 Բայց չկրցան երկայն ժամանակ գիմանալ: Իպրահիմ

Փաշան Նաւարինի տիրեց (Մայ.), Դրիբուլիցցա առաւ. եւ գլխաւոր բանակատեղին հոն հաստատելով, ամէն կողմերը գնդեր կը խաւրէր, որոնք գեղերը կը կործանէին, հունձքերը կ'այրէին, ծառերը կը ջարդէին, եւ լեռները քաշուողները անօթութեամբ անձնատուր ըլլալու կը ստիպէին: Նոյն ժամանակներն եղած գործքերուն մէջ ամենէն նշանաւորն է Միտոլունկիի առնուիլը: Արդէն երկու անգամ նոյն ամուր բերդը Տաճիկներէն պաշարուած ու ազատած էր. Եգիպտացիք գալէն ետքը Օսմանեանք Ռէշիտ Փաշային հրամանատարութեամբ՝ Եպիրոսէն գալով՝ երրորդ անգամ պաշարեցին (Յուլ.): Ան հեղ ալ պաշարումը պարապի ելլելու վրայ էր, մէյ մ'ալ Իպրահիմ իր կանոնաւոր զօրքերովն երեւցաւ (1826, Յունու.). եւ քիչ մը ատեն ինք ալ իր նախորդներուն սխալման մէջ մնալէն, այս ինքն՝ բերդը միայն ցամաքի կողմանէ պաշարելով՝ ծովու կողմը բաց ձգելէն ետեւ, որով պաշարեալք ամէն կերպ օգնութիւն կ'ընդունէին, իր մտադրութիւնն ան կողման ալ դարձուց: Ասանկով քիչ ատենուան մէջ ներսիններն ան աստիճանի նեղի եկան, որ ուզեցին դուրս յարձակելով՝ թշնամեաց բանակը պատռել լեռները փախչիլ: Բայց աս խորհուրդը կատարած ատեննին (Ապր. 22), կամ դուրսը դաշտի վրայ, եւ կամ ետ մղուելով՝ քաղաքին մէջ, մեծաւ մասամբ ջարդուեցան, եւ հազիւ 1800 էրիկ մարդ ու 200 կանայք կրցան փախըտեամբ ազատիլ:

69. Եւրոպայի դահլիճներուն Յունաց նկատմամբ բռնած ընթացքը: Միտոլունկիին իյնալովը՝ Յունաց յեղափոխութիւնը ճնշուած կարծուեցաւ. որովհետեւ ալ անկէ ետեւ՝ անոնց ձեռքը ամուր տեղ չմնալով, քաջալերութիւննին կորսնցուցին, եւ իրենց գլխաւորները դարձեալ յառաջուրնէ աւելի երկպառակութեան մէջ ինկան: Բայց իրենք այսպիսի վիճակի մէջ գտնուած ատեննին, գեսպանագիտութեան հանդամանքը՝ որն որ իսկզբան խել մը ժամանակ իրենց հա-

կառավարչական ետեւ՝ կամաց կամաց իրենց յաջող կերպարանք մ'առնելու սկսած էր, նոյն ատեն բոլորովին իրենց նպաստաւոր եղաւ: Աս փոփոխութեան վրայ շեօսած, մինչեւ նոյն ատեն Եւրոպայի դասչիճներուն՝ Յունաց նկատմամբ բռնած ընթացքը տեսնելու ենք: Յունաց յեղափոխութեան լուրը՝ նախ Լայպպիտ արքայաժողովոյն մէջ (52) առին վեհապետք ու իրենց պաշտօնեաները: Աս պարագան Մեդիեոնիկ իշխանին առիթ տուաւ նոյն դէպքը՝ Սպանիայի, Բարդուկալի ու Իտալիայի ժամանակակից դէպքերուն հաւասար սեպելու եւ դաշնաւոր վեհապետներն ու առանձինն Ռուսիայի կայսրը՝ Յունաց պաշտպանութիւն ու օգնութիւն ընելէն ետ կեցրնելու: Ասոր համար ալ էր որ յեղափոխութեան գլուխները՝ որոնք Աղէքսանդր կայսեր վրայ մեծ ակնկալութիւն ունէին, իրմէ տհաճութիւն ու յանդիմանութիւն ընդունեցան (65): Յոյնք նոյն Լայպպիտ դեսպանաժողովը պատգամաւորներ խաւրած էին՝ վեհապետաց ձեռնտուութիւնը խնդրելու համար. բայց իրենց եւ ոչ իսկ ունկնդրութիւն շնորհուեցաւ: Հազիւ այնչափ սրողուեցաւ որ Գուռը համազուի Ռուսիայի հետ դրած Պուքրէշի խաղաղութեան դաշանց (Հատ. Գ. 215) պայմանները բոլոր ընդարձակութեամբ կատարելու: Մեդիեոնիկ իշխանին աս ընթացքին մէկ պատճառն ալ ան էր, որ կ'ուզէր Դրան ու Ռուսիայի մէջ պատերազմ բացուիլ խափանել: Յունական յեղափոխութեան սկսած ատենը՝ ամէն մարդ անանկ կը կարծէր թէ նոյն երկու տէրութեանց մէջ պատերազմ պիտի բացուի: Իրօք ալ ան միջոցներուն՝ Կոստանդնուպոլսոյ Յունաց եւ նոյն իսկ Ռուսաց հետ Դրան բռնած ընթացքին համար, Ռուսի դեսպանը մայրաքաղաքէն ելած էր. Ռուսք քիչ մը ժամանակէ վեր Բրուսթի քովերն ունեցած բանակին շատ մեծցուցած էին: Եւրքէն Դրան չափաւորեալ ու խոհեմական վարմունքովը եւ ուրիշ մեծ տէրութեանց ջանքովը, գէթ քիչ մը ժամանակ պատերազմը խափանուեցաւ: Այսպէսով Աղէ-

քանոր կայսրը Դրան դէմ պատերազմ չբանալով, Յունաց յայտնապէս օգնութիւն չէր կրնար ընել: Միայն վերջին ատենները մէկալ չորս մեծ տէրութիւններուն առաջարկեց որ Յունաստան երեք չորս Օսփստարներու տակ գրուի, եւ Դրան հետ այնպիսի յարաբերութեան մէջ մտնէ՝ ինչպէս էին Վալաքիա ու Մոլտաւիա: Բայց նոյն տէրութիւնք աս առաջարկութեան չհաւանեցան, մէյ մը օրինաւորութեան սկզբունքը հաստատուն պահելու համար, մէյ մ'ալ վախնալով որ Ռուսիային Արեւելքի վրայ արդէն ունեցած ազդեցութիւնը ասով չափազանց չմեծնայ: Աս կերպով յառաջ գացին բաները, մինչեւ որ՝ ինչպէս ըսինք՝ դահլիճներու մէկ մասին քաղաքականութիւնը փոխուեցաւ, որուն գլխաւոր պատճառներն եղան, 'Նիկողայոս կայսեր' Ռուսիայի գահն անցնիլը, որով եւ քեննիկն՝ որն որ Անգղիայի արտաքին գործոց պաշտօնեայ ըլլալուն պէս նոյն տէրութեան քաղաքականութիւնը փոխած էր, անկէ ետեւ բոլորովին Յունաց կողմը բռնեց:

70. քեննիկին ձեռքով Անգղիայի արտաքին քաղաքականութեան փոխուիլը: Քեննիկին՝ Անգղիայի պաշտօնարանը մտնելուն՝ նոյն տէրութեան ներքին քաղաքականութեան համար ունեցած ազդեցութիւնը տեսանք (41): Բայց կրնայ ըսուիլ որ աւելի մեծ եղաւ արտաքին քաղաքականութեան նկատմամբ ունեցած ազդեցութիւնը: Նոյն ժամանակէն աս նիւթին մէջ անանկ մեծ փոփոխութիւն մտաւ, որ կրնայ զրցուիլ թէ բոլոր Եւրոպայի ընդհանուր իրողութեանց կերպարանքը փոխեց: Մինչեւ ան ատենները Անգղիայի կառավարութիւնը՝ նոյն ընդհանուր իրողութեանց նկատմամբ մէկալ չորս մեծ տէրութեանց համեմատ էր, որովհետեւ հասարակօրէն անոնց պէս կ'ուզէր ամէն ազատական շարժումներն արգելուլ ու զապել, որպէս զէ չըլլայ որ քիչ մը յառաջ մարած յեղափոխական կրակը նորէն բորբոքի: Եւ թէպէտ ազգին խիստ մեծազոյն մասն ասոր հակառակ կարծիք ունենալով, պաշ-

աօնեայք չէին կրնար մէկալ տէրութեանց հետ միաբան ըլլալնին շատ հեղ գործքով ալ ցուցնել, բայց գոնէ անոնց գործածը չէին արգելուք եւ կամ անոնց դէմ ձեռնարկութիւն չէին ըներ. հապա պարզապէս չէզոք կենալով եւ կամ բողոք ընելով գոհ կ'ըլլային. ինչպէս գլխաւորաբար Իտալական ու Սպանիական արշաւանաց ժամանակ ըրած էին (52, 54): Իսկ Քեննինկ պաշտօնի մտնելուն պէս՝ ցուցուց թէ աս քաղաքականութիւնը պիտի փոխուի: Առաջին գահախօսութեան մէջ դնել տուաւ որ Անգղիա կը պարծի Սպանիայի դէմ ի գործ դրուած խիստ միջոցներուն մասնակից չըլլալուն համար: Անկէ ետեւ Բորդուկալի մէջ սահմանադրականաց կողմը բռնեց. Սպանիայէն բաժնուող Ամերիկեան գաղթականութեանց անկախութիւնը ճանչցաւ, եւ ընդհանրապէս խիստ ազատական կերպ մը սկսաւ բանեցընել: Միտքը դրած էր որ Սուրբ դաշնաւորութեան (29) Եւրոպայի վրայ բանեցուցած առաւել զօրութիւնը նուազեցընէ, եւ եթէ կարելի է՝ բոլորովին ջնջէ: Ասոր անմիջապէս ձեռք զարկաւ, եւ մինչեւ իր մահը նոյն խորհուրդը գլուխ հանելու ջանք տարաւ:

71. Անգղիա Յունաց կողմը կը բռնէ: Աս քաղաքականութեան պատճառը: Անգղիայի արտաքին քաղաքականութեան այսպէս փոխուիլը՝ մեծ ազդեցութիւն ըրաւ Յունաց իրողութիւններուն վրայ: Ստոյգ է՝ նոյն յեղափոխութեան սկիզբէն, Անգղիացիք ուրիշ ամէն ազգերէն աւելի ուէր կը ցուցնէին Յունաց. բայց աս միտութիւնը հազիւ մասնական օգնութիւններով եւ լրագիրներու հատուածներով կը յայտնուէր: Իսկ Քեննինկին պաշտօնեայ ըլլալէն ետեւ, սկիզբ եղաւ նոյն իսկ պաշտօնական կերպով՝ Յունաց կողմը բռնուիլ: Անմիջապէս Արեւելք հրաման խաւրուեցաւ որ Յունաց կողմանէ դրուած պաշարման յայտարարութիւնները՝ Տաճկաց կողմանէ դրուածներուն պէս յարգուին: Յոյնք կրցան Անգղիայի դրամատէրներէն 800,000 սգերլին փոխ ստակ առնուլ (1824): Իսկզբան անոանկ կար-

Ծուեցաւ որ քեննինկին այսպէս Յունաց կողմը բռնելը՝ անոնց ունեցած անձնական յօժարութեան հետեւութիւնն է. բայց շուտով իմացուեցաւ թէ աս բանս քաղաքական ներքին շարժառիթ ունի: Առաջին եւ գրեթաւ որ պատճառն ան էր՝ որ Սուրբ դաշնաւորութիւնը, զորն որ՝ ինչպէս ըսինք՝ ինք կ'ուզէր տկարացընել, նոյնին դէմ էր: Ասկից զատ՝ հետեւեալ պատճառն ալ կար: Որչափ որ ալ Ռուսիա Յունաց յեղափոխութեան ձեռք չէր բռներ, ի վերայ այսր ամենայնի ամէն մարդ կը տեսնէր որ իր գաղափարաց համաձայն է, եւ եթէ յաջողութեամբ գլուխ ելլելու ըլլայ, Յունաց հետ ունեցած կրօնի միութեամբը՝ Արեւելքի վրայ արդէն բանեցուցած ազդեցութիւնը խիստ կ'աւելնայ: Անոր համար չէ թէ միայն Անգղիայի, հապա նաեւ ուրիշ եւրոպական տէրութեանց շահը կը պահանջէր որ աս բանս գլուխ չելլէ: Ուստի քեննինկին պաշտօնեայ ըլլալէն յառաջ, չորս մեծ տէրութիւնք ջանացած էին բաներն անանկ կարգադրել, որ Դուռն ինք իրմէ կարենայ յունական յեղափոխութիւնը զուլել, որուն համար Աղէքսանդր կայսրը համոզած էին որ Տաճկաց դէմ թշնամական ընթացք չբռնէ եւ Յունաց չօգնէ: Բայց քեննինկին պաշտօնի անցնելէն ետեւ՝ իրերն ուրիշ կերպ դարձան: Ինք մէկ կողմանէ Յունաց անկախութեան գլուխ ելլելուն բաղձարով եւ մէկաւ կողմանէ ալ ստոյգ գիտնալով որ Ռուսիա՝ երբ որ է նէ՝ նոյն բանը յառաջ պիտի տանի, որով եւ կանգնուելու նոր տէրութիւնը՝ իբրեւ թէ Ռուսի աւատապետութեան տակ պիտի մտնէ, սկսաւ ետեւէ ըլլալ որ Անգղիա ալ նոյն տէրութեան կանգնուելուն գլխաւոր գործակիցներէն մէկն ըլլայ, որպէս զի անոր վրայ ազդեցութիւն ունենայ, զոր ազդեցութիւնն որ Յոնիական կղզիներէն՝ կրնար դիւրաւ բանեցընել:

72. Նիկողայոս կայսրը Ռուսիայի գահը կ'ելլէ: Իր ու Աղէքսանդր կայսեր արտաքին քաղաքականութիւնը: Իրերն աս վիճակին մէջ էին՝ երբ որ Նի-

կողայոս կայսրն իր Աղէքսանդր եղբորը յաջորդեց, որն որ Անգղիայի քաղաքականութեան փոխուելէն աւելի ազգեցութիւն ունեցաւ Յունաց իրողութիւններուն վրայ: Ինչպէս մինչեւ հիմայ տեսաք, Աղէքսանդր կայսրը ուրիշ մեծ տէրութեանց կարծիքին հետեւելով, Յունաց չէր օգնած: Բայց աս ընթացքը բռնեց չէ թէ՛ ոմանց բսածին պէս՝ կամ՝ տկարութենէ եւ կամ՝ Ռուսիայի մէջ ալ յեղափոխութիւն ելլելէն վախնալով, հապա պարզապէս քաղաքականութեան համար: Ինք անանկ կը կարծէր թէ ինչ կերպով որ ըլլայ, Յունաց յեղափոխութիւնը վերջապէս պիտի յաջողի՝ նաեւ առանց իր գործակցութեան, որ գործակցութիւնն որ միշտ կրնար մատուցանել: Ուր որ եթէ անմիջապէս Գրան դէմ պատերազմ բանար, յուսահատական դիմադարձութիւն գտնելէն զատ, ուրիշ մեծ տէրութեանց նախանձը կը գրգռէր, եւ գուցէ ոմանց հետ ալ պատերազմի կը բռնուէր: Ինչպէս որ է նէ, ան միջոցներուն կայսրը տէրութեան հարաւային կողմերը ճամբորդութիւն ըրած ատեն, Ազախու ծովուն քովերը Դականրոզ քաղաքը կարճ հիւանդութեամբ իր կեանքը կնքելով (1825, Դեկտ. 1), կարծես թէ մինչեւ նոյն ատեն բանեցուցած քաղաքականութիւնն ալ իրեն հետ գերեզման մտաւ: Աղէքսանդր մանչ զաւակ չունենալով, եւ երկրորդ կոստանդին եղբայրը յառաջագոյն գահէն հրաժարած ըլլալով ու նոյն ժամանակ աս իր հրաժարումը կրկնելով, իրեն յաջորդեց իր երրորդ Նիկողայոս եղբայրը, զինուորական գաւակցութիւն մը զսպելով, որուն նպատակն էր՝ Ռուսիայի թագը կոստանդինին անցընելով, արձակապետութեան տեղ՝ սահմանադրական կառավարութիւն դնել: — Նոր կայսրը ճանչցողներն անմիջապէս գուշակեցին որ հաստատութեամբ ու որոշ կերպով Յունաց կողմը պիտի բռնէ, ինչպէս իրօք ալ եղաւ: Ուստի եթէ քեներնկ Եւրոպայի ազատականաց գաղափարներուն զօրաւոր պաշտպան եղած էր նէ, Նիկողայոս կայսրն ալ ուրիշ

կերպով իրենց օգնեց՝ բոլորովին քայքայելով Հինգ մեծ տերութեանց մէջ մինչեւ նոյն ատեն տիրող միաբանութիւնը, որն որ քեննինկին ձեռքովը սասանելու սկսած էր: Նաբոլէոնին իյնալէն վեր Աւստրիային՝ իր Մեզգեռնիկ պաշտօնէին ձեռքովը՝ մէկալ մեծ տերութեանց վրայ բրած ազգեցութիւնը նուազելու սկսած էր, երբ որ անոր հետեւող Գապրիին տեղ՝ քեննինկ անցած էր. իսկ երբ որ Աղէքսանդրին տեղ՝ Նիկողայոս գահ ելաւ, կրնայ ըսուիլ թէ նոյն ազգեցութիւնը՝ գէթ քանի մը նկատմամբ՝ կատարելապէս ջնջուեցաւ: Աղէքսանդր կայսրը երբեմն, գոնէ գրասնց, Ռուսիայի առանձնական շահը՝ Եւրոպայի ընդհանուր շահուն զոհած էր. իսկ Նիկողայոս կայսրը նոյն ատենէն սկսեալ՝ յայտնապէս կը ցուցնէր որ միշտ եւ ամէն նիւթի մէջ Ռուսիայի առանձնական շահն ամէն բանէն վեր կը բռնէ: Աս առաջին անգամն էր՝ որ Ռուսիա բոլոր Եւրոպայի դիմացը կ'ելէր, ինչպէս որ քիչ մը յառաջ Նաբոլէոնի ժամանակ Գաղղիա ելած էր:

73. Պետրոբուրգի դաշինքը: Աքերմանի պայմանագրութիւնը: Ա՛յ երբ յիշածնուս պէս, ոչ ոք կը տարակուսէր թէ Նիկողայոս կայսրը ուզէ ելլող Յունաց ամէն կերպով ձեռք չբռնէ: Քեննինկ աս բանս ամենէն աղէկ ճանչնալով, Ուելլինկորնի դուքսը Պետրոբուրգ խաւրել տուաւ՝ իբրեւ թէ արքունեաց կողմանէ ըստ սովորութեան՝ նոր կայսրը շնորհաւորելու համար. բայց իրօք Յունական իրողութեանց նկատմամբ միաբան սրտում ընելու մտօք: Անգղիա կ'առաջարկէր որ Յունական տերութիւն մը կանգնուի, որն որ միայն անուամբ՝ Գրան վերին իշխանութեան տակ ըլլայ: Նիկողայոս կայսրը չէր կրնար ասկից աւելի բանի բազձալ, որովհետեւ Անգղիա կերպով մը հաւանութիւն կու տար Օսմանեան տերութեան կտոր կտոր ըլլալուն եւ Յունական տերութիւն մը կ'ուզէր կանգնել, որուն մէջ ի հարկէ Ռուսիա աւելի ազգեցութիւն կ'ունենար՝ քան թէ ուրիշ որ եւ իցէ տերութիւն: Ուստի

եղած առաջարկութեան յօժարութեամբ հաւանելով, անմիջապէս գաղտնի դաշնադրութեան մը ստորագրեց (1826, Ապր. 4), որով կ'որոշուէր որ Յունաց տէրութիւն մը կանգնուի, որն որ Գրան տարեկան տուրք վճարելու պարտականութիւն ունենայ: Աս նպատակին հասնելու համար՝ Գրան ըստ պատշաճի առաջարկութիւն պիտ'որ ընէին. եւ եթէ անիկայ իր հաւանութիւնը զլանար նէ, երկուքը միաբան պիտի ստիպէին: Միանգամայն՝ կը հաստատուէր որ աս որոշումն ուրիշ մեծ տէրութեանց ալ ծանուցուի եւ անոնք ալ հրաւիրուին իրենց հետ միաբանելու: Պետրոսուրգի աս գաղտնի դաշինքը գրուելուն պէս, Նիկողայոս կայսրը Գուռնէն պահանջեց որ Վալաքիայի ու Մոլտաւիայի մէջ ամենայն ինչ յառաջուան վիճակը դարձնէ, Սերուիացաց բաղձանքները կատարէ, եւ լիազօր իշխանութեամբ դեսպաններ խաւրէ Ռուսիա, որպէս զի մէջերնին տակաւին անորոշ մնացող խնդիրները կարգի գրուին: Սուղանը՝ որն սը Ռուսիայի ու Անգղիայի մէջ գրուած դաշինքն իմացած էր, դիւրաւ զեջաւ աս պահանջմանց՝ Մեղգեղանիկին խորհրդեան համեմատ, որն որ կ'ուզէր որ Ռուսիային պատճառ չտրուի Գրան դէմ պատերազմ բանայլու. իր զօրքերը Գանուբի իշխանութիւններէն հանեց, եւ Աքերման լիազօր գործակալներ խաւրեց: Ասոնց ձեռքով քիչ մը ետքը Գրան ու Ռուսիայի մէջ՝ իբրեւ Պուրէշի խաղաղութեան դաշանց բողանգակութիւն՝ Աքերմանի պայմանագրութիւնը շինուեցաւ. (Հոկտ. 6), որով կը հաստատուէր որ 1. Ռուսք կատարեալ ազատութեամբ կարենան Սեւ ծովուն մէջ նաւարկել: 2. Վալաքիա ու Մոլտաւիա ատեան (պիլան) մը հիմնուի, եւ երկուքին իշխաններն ալ նաեւ եօթը տարի իրենց աստիճանին մէջ մնալէն ետեւ, նորէն կարենան ընտրուիլ. 3. Սերուիայի կրօնական ու քաղաքական արտօնութիւնները նորէն հաստատուին. եւ Օսմանեանք ամրոցները միայն կարենան զօրգը բռնել:

74. ԵՆԻՉԷՐԻՆԵՐՈՒ ՉՆՉՈՒՄ: Շատերը կը կարծեն թէ Սուլթանին այսպէս դիւրաւ զիջանելուն պատճառն ան էր՝ որ կ'ուզէր ժամանակ վատարկիլ, վասն զի քիչ մը յառաջ Ենիչէրիները Չնջած բլլալով, բանակները խիստ տկարացած էին: — Ենիչէրիներն իրենց առանձնաշնորհութիւնները շարաշար գործածելով, շատ հեղ մեծամեծ անկարգութիւններ գործելէն զատ, չէին ուզեր կեցած գլխաւոր քաղաքներնէն ու բերդերնէն ելլել՝ պատերազմի երթալ: Անոր համար Սուլթանը կը ստիպուէր բանակներուն մէջ մեծաւ մասամբ Ալպանիացի զինուորներ գործածել, որոնց վրայ հասարակօրէն գոհ չէր. իսկ վերջին ատենները Եգիպտացիներն օգնութեան կանչած էր, որոնց քաջակիրթ գնդերն իրեն աղէկ ծառայութիւն կ'ընէին: Ասով՝ պետութեան մէջ նոյնպիսի կանոնաւոր գնդեր կազմելու շատոնց ունեցած բաղձանքը խիստ աւելցաւ. բայց աս բանս գլուխ հանել կարենալու համար, նախ Ենիչէրիները կարգի խոթելու էր: Ամենայն ինչ պատրաստելէն ետեւ՝ հրովարտակ մը հանեց, որով կը հրամայէր որ Ենիչէրիներու գնդերը կարգաւորուին: Եւ թէպէտ տակաւին անոնց մեծամեծ առանձնաշնորհութիւններ կը ձգէր. ոսկայն անոնք ամենեւին փոփոխութիւն յանձն առնուլ չուզելով, ոտք ելան ու սաստիկ անկարգութիւններ գործելու ձեռք զարկին (1826, Յունիս 14): Սուլթանն ան ատեն իրենց դէմ քալեցուց ուրիշ հաւատարիմ զօրքերը. եւ չէ թէ միայն խիստ շատ մարդ ջարդել տուաւ, հապա անոնց բոլոր գնդերն ալ Չնջեց: — Արդ աս կերպով ներքին թշնամիները մէջտեղաց վերցուած էին. բայց բանակն ալ խիստ տկարացած էր, եւ նոր կարգաւորեալ գնդերով նորէն զօրացընելը՝ ժամանակի կը կարօտէր: Անոր համար էր որ՝ ինչպէս ըսինք՝ Սուլթանը Ռուսիայի պահանջմանց այնպէս դիւրաւ զիջաւ: Ոմանք ասոր ուրիշ պատճառ մ'ալ կու տան, որն որ մինչեւ հիմայ տակաւին կատարելապէս ստուգուած չէ: Ամէն մարդու

աչքը պէտք էր զարնել որ Աքերմանի պայմանագրութեան մէջ Յունական խնդրոյն վրայ ամենեւին յիշատակութիւն չկայ: Արդ ոմանք կը հաստատեն թէ նոյն տեղն եղած բանակցութեանց մէջ Ռուսիա զԴուռն ապահովեց որ եթէ վիճի տակ եւ յիշեալ դաշանց նիւթ եղող մէկալ խնդիրներուն մէջ զիջանելու ըլլայ, ինքն ալ Յունաց իրողութիւններուն մէջ չիխառնուիր. եւ աս ալ, կ'ըսեն, խիստ զօրաւոր միջոց մ'եղաւ, որով Դուռը համազուեցաւ անանկ գիւրութեամբ զիջանելու Ռուսիայի բոլոր պահանջմանց:

75. Գաբոտիսդրիա կոմսը Յունաստանի գահերէց կ'ըլլայ: Տեսնենք հիմայ նոյն միջոցին Յունաստան եղածները: Իպրահիմ Փաշային ձեռքովը Յունաց յեղափոխութիւնը զոպուելու վրայ եղած ատեն, իրենց մէջ երկպառակութիւններն ամէն ժամանակներէն աւելի ոսատկացած էին: Երբ որ մէկ կողմանէ Ռէշիտ Փաշան Աթէնք առնելով, անոր Ակրոպոլիս ամրոցը նեղի կը խոթէր, իսկ Իպրահիմ Փաշան Պեղոպոնետոս գաւառն աւեր անապատ կը դարձնէր, Յոյնք երկու իրարու հակառակ ազգային ժողովք գումարած էին, մէկը Եգիսա ու մէկայլը Գասդրի, որոնք մէկմէկու հետ սաստիկ թրշնամութեամբ կը վարուէին. հազիւ խել մը ժամանակ ետքը երկուքը մէկտեղ միաբանելով, Տրեզնա նոր ազգային ժողովք մը գումարեցին, որն որ զԳաբոտիսդրիա կոմսը եօթը տարւան համար Յունաստանի գահերէց անուանեց (1827, Ապր. 14): Ասոր մեծապէս օգնեցին ծովային զօրութեան ու ցամաքային զօրաց հրամանատարութիւն ընող Գորբան ու Չրբչ Անգղիացիները, որպէս զի գաղրեցընեն վերոյիշեալ փնասակար հակառակութիւններն ու կռիւնները, որոնց մէկ հետեւութիւնն եղաւ քիչ մը ետքը Ակրոպոլիսին ալ իյնալը (Յունիս): Բայց ասով Ռուսիա նոր տէրութեան մէջ խիստ մեծ ազգեցութիւն կը ստանար, որովհետեւ ինչպէս յայտնի է՝ Գաբոտիսդրիա յառաջագոյն Ռուսի ծառայութեան մէջ էր (59), եւ յեղափոխութեան

սկիզբները Աղէքսանդր կայսրմէ մերժուելէն ետքը, վերջէն ժամանակները դարձեալ Նիկողայոս կայսրմէ շնորհք գտած ու անոր սիրելին եղած էր: Իրօք ալ նոր գահերեցն անմիջապէս՝ Փարիզէն ու Լոնտոնէն անցնելով՝ Պետրոբուրգ գնաց, երեք արբունիքէն ալ եզածին հաւանութիւն ու ապագային համար օգնութիւն խնդրելու եւ ամենէն ալ յուսացուցիչ խոստումներ ու առանձինն Ռուսիայէն մանրամասն հրահանգներ ընդունած՝ Յունաստան դարձաւ: Բայց ասով ամէն բան լմընցած չէր. երկիրը հանգարտեցրնելու եւ կարգաւորելու համար՝ տակաւին խիստ մեծ դժուարութիւններ կային: Թող իրենց մէջ եղած երկպառակութիւնն ու նախանձը՝ որն որ հազիւ առերեսս վերցած էր եւ ներքուստ տակաւին առաջին սասակութեամբ կը շարունակէր, թող ան գրեթէ անյաղթելի դժուարութիւնը՝ որ կար, կեանքերնին աւազակութեամբ ու ծովահանութեամբ անցրնելու վարժած սրիկաններէն՝ կանոնաւոր ցամաքային ու ծովային զօրքեր եւ կարգաւորեալ քաղաքացիներ կազմելու, երկրին մեծ մասը գեռ Եգիպտացի ու Օսմանեան զօրքերով բռնուած էր:

ՊԶ. Լոնտոնի դաշինքը: Յունաց իրողութիւններն աս վիճակի մէջ եղած ատեն, Ռուսիա գլխաւորաբար, եւ իրեն հետ Անգղիա ու Գաղղիա, անոնց համար մեծ գործունէութիւն կը բանեցրնէին: Աս նկատմամբ նոյն երեք տերութեանց Գրան հետ ըրած բանակցութիւններն ան վերջն ունեցաւ, որ Սուլթանը վերջնագրով մը իրենց յայտնեց որ կամ սկսած բանակցութիւննին մէկդի ձգեն եւ կամ ուրիշ ընթացք բռնեն (1827, Յունիս 7): Ան ատեն միջնորդող տերութիւնք լեզուինն ու ընթացքնին փոխեցին: Ռուսաց Լոնտոն կեցող դեսպանը Անգղիայի կառավարութիւնը կամ զՔեննինկ կը ստիպէր որ իրենց սկզբնական գաղափարէն անդին անցնելով, Յունաց ազատութեան գործունեայ կերպով օգնեն. որուն՝ նոյն պաշտօնեան իր կամայք գէմ՝ բռնադատեցաւ հաւանիլ: Առջեւն ուրիշ ճամբայ

չկար, բայց եթէ կամ Ռուսաց հետ միաբան գործել եւ կամ թողուլ որ անոնք սւղածնին իրենք իրենցմէ յառաջ տանին: Քեննինկ խիստ նեղի մէջ կը դրտնուէր. չէր կրնար ուզել որ զօրաւոր ու ծաղկեալ Յունական տէրութիւն մը կանգնուի, վախնալով որ նոյն տէրութեան ծովային վաճառականութիւնը՝ Անգղիայի առեւտրոյն վնաս հասցընելու չափ յառաջ չերթայ: Աս նկատմամբ Անգղիայի շահը կը պահանջէր որ ինք ամէն կերպով գէմ դառնայ Յունաց անկախութեան: Մէկալ կողմանէ ալ չէր ուզեր՝ իբրեւ ազատական եւ ազատականաց գլուխ՝ ստացած պարծանքը կորսնցընել. միանգամայն կը յուսար որ Ռուսաց հետ միաբան ընթանալով, եթէ պատերազմ բացուելու ըլլայ՝ նոյն տէրութեան սուղածին պէս վարուին աւելի դիւրաւ կրնայ խափանել, քան թէ մէկգի քաշուելով: Ուստի Անգղիային՝ Յունաց անկախութեան կողմը բռնելը, բռնադատութեամբ եղած բան մըն էր, իբր թէ երկու շարեաց մէջէն փոքրագոյնն ընտրելու պէս: Միեւնոյնը կրնայ ըսուիլ Գաղղիայի նկատմամբ ալ, որովհետեւ նաեւ նոյն տէրութիւնը ստիպեցաւ աս զիջումն ընել դիմադրական կողմնակցութեան, որն որ բարձրաձայն կը պահանջէր որ Յունաց օգնուի: Այսպէսով յիշեալ երկու տէրութիւնք եւ Ռուսիա Լոնտոնի դաշինքը դրին (1827, Յուլ. 6), որուն մէջ կ'որոշէին որ յառաջագոյն մէջերնին միաբանած նպատակին գործադրութեան համար՝ երէքը մէկ եղած՝ գործունեաց միջոցներու ձեռք զարնեն, ի հարկին նաեւ զէնք գործածեն, եւ անկէ ետեւ Յունաց իրողութիւններուն վրայ Լոնտոն խորհին: Իբրեւ ամէն բանի սկիզբ՝ որոշեցին որ Յունաց հետ անմիջապէս առեւտրական կապակցութեան մէջ մտնեն, եւ երկու կողմն ալ ստիպեն զինազատգար ընելու՝ նաեւ նոյն իսկ Դրան ու Յունաց կազմին գէմ:

ՊՊ. Նաւարինի ծովամարտը կամ աղէտալի պատահարը: Երբ որ դաշնակցեալ տէրութեանց դեսպանները՝ Լոնտոնի դաշինքը Դրան ներկայացաւին, եւ

պահանջեցին որ անոր համեմատ՝ զինագաղար ընէ, Գուռն աս առաջարկութիւնը մերժեց, ըսելով թէ Սուլդանն իր ապստամբ հպատակները զսպելով՝ ան սկզբունքներուն համաձայն կը վարուի, զորոնք Եւրոպական տէրութիւնք ի գործ կը դնեն՝ իրենց երկիրներուն մէջ կարգաւորութիւնը հաստատուն պահելու համար: Աս իրաւացի պատասխանին դէմ՝ դեսպանները դարձեալ իրենց պահանջումը կրկնեցին՝ վրան սպանալիք ալ աւելցրնելով. բայց նաեւ աս անգամ Գուռը հաստատուն կեցաւ, իր հրամանատարներուն ալ ստիպողական հրամաններ խաւրեց՝ մեծ փութով իրենց գործողութիւնները յառաջ տանելով, յեղափոխութիւնը շուտով զսպելու: Իպրահիմ փաշան վերջին ժամանակները Եգիպտոսէն նոր զօրքեր ու նաւեր ընդունած էր, այնպէս որ Օսմանեան-Եգիպտական նաւատորմիդ՝ մեծ ու պզտիկ 92 նաւ ունէր: Բայց գաշնակցեալ տէրութիւնք ալ մօտ տեղեր մեծկակ նաւատորմիդ մը խաւրած էին, որն որ թէեւ առաջնոյն չափ բազմաթիւ չէր, բայց աւելի մեծ նաւեր ու թնդանօթներ ունէր: Երբ որ աս վերջին նաւատորմին հրամանատարները՝ Լոնտոնի դաշինքը Իպրահիմ փաշային իմացուցին, անիկայ իսկզբան խուսափական պատասխաններ տալէն ետքը, վերջապէս յանձն առաւ պատերազմական գործողութիւններն այնչափ ատեն դադարեցնել՝ մինչեւ որ Աոստանգնուպոլէն ու Գահիրէէն նոր հրահանգներ ընդունի: Յոյնք ալ իրենց կողմանէ զինագաղարը յանձն առած էին. բայց Աորթոսի ծովածոցը Սգալայի քով ինը Օսմանեան նաւերու վրայ յարձակում ընելով, նոյնքը ջնջեցին: Իպրահիմ փաշան Յունաց աս անհաւատարմութեամբ՝ իր տուած խօսքէն ազատելով, թող առած արշաւանքները սկստաւ, եւ խել մը գեղեր այրելով՝ Յոյներէն վրէժ առաւ: Դաշնակից հրամանատարք ասով իրենց փնտռած պատճառանքը գտնելով, յառաջ քալեցին ու նաւարինի մօտեցան, ուր կը կենար Օսմանեան նաւատոր-

միջը : Երբ որ Անգղիայի հրամանատարին նաև՝ որն որ ամենուն առջեւէն կ'երթար, խիստ մօտ եկաւ, Եգիպտական նաւէ մը թնդանօթ մը արձակեցաւ, որմէ յառաջ եկաւ Նաւարինի ծովամարտը կամ աղէտալի պատահարը (1827, Հոկտ. 20), որով գրեթէ բոլոր Օսմանեան նաւատորմիղը ջնջուեցաւ :

78. Դաշնակցաց ու Գրան քաղաքականութիւնը : Երբեք դաշնակից տէրութեանց աս արտաքոյ կարգի վարմունքէն, որոնք առանց Գրան դէմ պատերազմ հրատարակելու՝ ասանկ թշնամական գործք գործած էին, իրաւամբ կը վախցուէր որ անմիջապէս մեծկակ պատերազմ չբացուի : Իրգք ալ երբոր Սուլթան Մահմուտ նոյն անպատշաճ գործողութեան գոյժն առաւ, խիստ նեղանալով, յայտնեց որ մինչեւ ան ատեն նոյն երեք տէրութեանց հետ դրած բոլոր դաշինքները ջնջուած կը համարի, որովհետեւ իրենք զանոնք ուղբի տակ առին (Նոյ. 7) : Աւստրիայի դեսպանը մեծ դժուարութեամբ հազիւ կրցաւ զինքը համոզել որ յիշեալ տէրութեանց դեսպաններուն ճամբայ շտայ : Բայց անոնք քիչ մը ետքը իրենք իրենցմէ Կոստանդնուպոլէն ելան (Դեկտ. 8—10), վասն զի ինչ որ բրինձ չկրցան զինքը հաւանեցընել, որ Լոնտոնի գաշանց համեմատ՝ Յունաց տէրութեան մը կանգնուիլը յանձն առնու : Աս եղած բաները Ռուսիայի քաղաքականութեան համաձայն էին, որն որ գլխաւորաբար կը գիտէր Օսմանեան տէրութիւնը տկարացընել. իսկ մէկալ տէրութիւնք կրնայ ըսուիլ թէ իրենց շահուն ու կամացը դէմ կը ստիպուէին անոր գործակից ըլլալ : Լոնտոնի գաշինքը դրուելէն քիչ մը ետքը քեննինկ մեռած էր (1827, Օգոստ. 8), եւ անոր տեղը պաշտօնէից գահերէց եղող Ուելլինկդընի գուբսը, ինչպէս նաեւ Գալլիա, չէին ուզեր Գրան դէմ պատերազմի ելլել. ուստի եւ Նաւարինի աղէտալի պատահարին վրայ ցաւ ցցուցած էին : Եւ ոչ իսկ Սուլթանը կրնար ուզել Եւրոպական երեք մեծ տէրութեանց հետ պատերազմի բռնուիլ, այնպիսի

ատեն մը՝ որ ամէն կարելի զիջումներն ընելով՝ ջանա-
ցած էր միայն Ռուսիայի հետ պատերազմի չբռնուիլ
(73) . մանաւանդ որ նաւատորմին մեծ մասը կորսըն-
ցուցած ըլլալով, աւելի տկարացած էր: Բայց եւ ոչ
կրնար սպասուիլ որ այնպէս մէկէն հաւանի իբրեւ ինք-
նագլուխ տէրութիւն ճանչնալ ապստամբ գաւառ մը՝
զորն որ զսպելու վրայ էր . հազիւ այնչափին կը զիջանէր
որ կատարեալ թողութիւն տայ:

79. Ռուսական-Պարսկական եւ Ռուսական-
Տաթարական պատերազմներ: Այսպէսով թէպէտ ընդ-
հանուր պատերազմ չբացուեցաւ . բայց խիստ դժուար
էր որ ամենայն ինչ խաղաղութեամբ լմրննար: Օսմա-
նեան տէրութեան նոյն ժամանակուան վիճակը, եւ իր՝
Անգղիայի ու Գաղղիայի հետ ունեցած յարաբերու-
թիւնը, որով անոնք՝ եթէ իրեն դէմ պատերազմի չել-
լէին նէ ալ գոնէ չէին կրնար իրեն հետ միանալ կամ
իրեն օգնել, Նիկողայոս կայսեր մեծ գրգիռ էր անոր
դէմ պատերազմ բանալու, մանաւանդ որ քիչ մը յա-
ռաջ յաղթանակաւ լմրնցուցած էր Պարսից դէմ բրած
պատերազմը: Նոյն Պարսկական պատերազմն անկից
ծագած էր, որ Պարսից Ապպաս Միրզա շահը՝ կայսեր
գահակալութեան ժամանակ Պետրոբուրգ ելած զինուո-
րական փոքր շփոթութիւնը (72) մեծ յեղափոխու-
թեան տեղ դնելով, նոյնը յարմար առիթ սեպած էր
իր նախորդներուն կորսընցուցած տեղերն ետ առնելու:
Բայց հին կորուստները ձեռք բերելու տեղ՝ անոնց վրայ
նոր կորուստներ աւելցուցած էր, Հայաստանի Երիւան
ու Նախջիւան գաւառները Ռուսի թող տալու ստի-
պուելով (1827, Հոկտ.) : — Իրերն աս վիճակի մէջ
եղած ատեն, երկու կողմանէ իրարու դէմ գործածուած
թշնամական ու նախատական լեզուն՝ գրգռութիւնն
աւելի ռաստկացընելով, վերջապէս Գրան ու Ռուսիայի
մէջ պատերազմ բացուեցաւ: Գուռը Ռուսիայի դէմ
կը տրանջէր որ Յունաց իրողութիւններուն մէջ՝ բարե-
կամ տէրութեան մը չվայելելու կերպով կը վարուի, եւ

Նաւարինի պատահարին սկզբնապատճառն ինքն է: Իսկ Ռուսք իրեն դէմ կ'ըսէին որ Ա.քերմանի պայմանագրութիւնը (73) կատարելու կը դանդաղի, միանգամայն կը արանջէին Ռուսիայի դէմ հանուած հրովարտակին վրայ (1827, Դեկտ. 20), որուն մէջ Սուլզանը՝ նոյն տէրութեան մինչեւ ան ատեն բռնած թրշնամական ընթացքը յառաջ բերելով եւ վախ ցուցրնելով որ կ'ուզէ Օսմանեան տէրութիւնը կործանել ու մահաձեռնապահանութիւնը ջնջել, բոլոր Ցաճիկները զէնքի կը կանչէր: Ինչպէս որ է նէ, նախ Ռուսիա Գրան դէմ պատերազմ հրատարակեց (1828, Ապր. 26):

80. Ռուսական-Օսմանեան պատերազմին եւրոպական դէպքերը: Ռուսք պատերազմ հրատարակելէն մէկ քանի օր վերջը, Վիդկենշտայնի հրամանատարութեան տակ 130,000ի բանակ մը քալեցուցին, որուն մէջ էր անձամբ կայսրն ալ. Բրութ (Մայ. 7) ու Գրանուբ (Յունիս 7) գետերն անցան, Մոլտաւիա ու Վալաքիա բռնեցին, եւ Պրայիւա, քանի մ'ուրիշ բերդեր ու վերջապէս Վարնա (Հոկտ. 11) առին, զորն որ թէ ցամաքէն եւ թէ ծովէն կը զնդակոծէին: Բայց Շուվյա չկրնալով առնուլ՝ Պալզան լեռները կարող չեղան անցնիլ. մանաւանդ թէ նոյն Շուվյա քաղաքը քաջութեամբ պաշտպանող Հիւսէին փաշան գիշերանց յարձակում ընելով (Օգոստ. 26), Ռիւսիկէր զօրապետին գնդին մեծ ջարդ տուաւ, եւ ետ քաշուելու՝ իրենց մեծ բանակին հետ միանալու ստիպեց: Նոյնպէս պարապի գնաց Սիլիստրիա առնելու համար բռած ջանքերնին, զորն որ չորս ամիս պաշարելէն եւ Վիտինի փաշայէն գիշերական յարձակման մէջ յաղթուելէն ետեւ (Հոկտ. 28), պաշարումը վերցուցին (Նոյ. 2): Ռուսաց աս արշաւանքը՝ սրն որ գժրախտ կրնայ կոչուիլ, լինցաւ Գանուբէն անգին անցնելովնին: Բանակը խիստ մեծ նեղութիւններ կրած եւ ծանր կորուստներ բրած էր: Ռուս զօրապետներն աս անյաջողութեան պատճառ կը բռնեն կայսեր ներկայութիւնը, որով պատերազմա-

կան գործողութեանց միութիւնն ու շուտութիւնը կը խափանուէր: — Աւելի յաջող գնաց երկրորդ տարւոյն արշաւանքը: Չմեռը Տիպիչ զօրապետը կայսեր յիշատակագիր մը տուած էր, որուն մէջ նախընթաց արշաւանքին անյաջողութեան պատճառները կը յայտնէր, միանգամայն ցուցնելով թէ Բնչ կերպով նոյներուն առջեւը կրնայ առնուիլ: Ուստի կայսրը Ախգկենչգայնին տեղ զինքը վերին հրամանատար անուանեց: Ասիկայ միտքը դրաւ որ առանց ուրիշ բերդերուն քով զբաղելու, միայն Սիլիստրիա առնելով եւ նոյն կողմերը քիչ մը զօրք ձգելով, Պալզան լեռներն անցնի՝ դէպ ի կոստանդնուպոլիս քալէ: Եւ թէպէտ իր 130,000ի բանակը Հիրշովայի քով Գանուբի վրայէն անցած ժամանակ՝ Ռոթ զօրապետին գունդը Ռէշիտ Փաշային հրամանատարութեան տակ ըլլող Օսմանեան բանակէն յարձակում կրելով, մեծ կորուստ ըրաւ (1829, Մայ. 15), բայց Տիպիչ առանց արգելքի յառաջ գնաց ու Սիլիստրիայի պաշարումը սկսաւ (Մայ. 17): Նոյն տեղերը Գուլբէշայի մօտ յիշեալ Փաշային դէմ մեծ յաղթութիւն ըրաւ (Յունիս 11), Սիլիստրիա առաւ (Յունիս 30), քիչ դիմադարձութիւն գտնելով՝ Պալզան լեռներէն անցաւ, որուն համար ալ Սապալզանդիբ բտուեցաւ, եւ եկաւ Ադրիանուպոլիս մտաւ (Օգոստ. 30):

81. Ռուսական-Տաճկական պատերազմին Ասիական դէպքերը: Աս կողման առաջին (1828ին) արշաւանքը՝ Եւրոպայինէն շատ ետքը սկսաւ. որովհետեւ նոյնին հրամանատարութիւնն ունեցող Բապրեւիչ, գործքի ձեռք զարնելու համար՝ պէտք էր սպասել որ Սեւ ծովուն մէջ նաւատորմիղը կարենայ դիւրութեամբ նաւարկել, եւ ցամաքի ձիւները մաքրուելով, զօրացնթացքին արգելքը վերցուի: Հոն պատերազմական գործողութիւններուն սկիզբ եղաւ՝ Ռուսի նաւատորմիցն Անարայի (1828, Յունիս) եւ Բողիի (Յուլ.) բերդերն առնելովը: Նոյն միջոցներուն Բապրեւիչ ալ իր արշաւանքը սկսաւ, եւ շուտ մը կարս հասաւ, զորն որ

չորս հինգ օրուան մէջ յարձակմամբ առաւ (Յուլ. 1—5): Աւելի դժուարութիւն կրեց Ախլթխա առնելը. բայց քիչ մը ժամանակ պաշարելէն ետեւ՝ անոր ալ յարձակմամբ տիրեց: Հետզհետէ նուազ ծանրակշիռ տեղեր ալ առնելով, բոլոր նոյն կողմերը ձեռք անցուց, այնպէս որ Նոյեմբերի սկիզբները՝ պատերազմական գործողութիւնները դադարեցուցած ատեն՝ կայսեր տուած տեղեկագրին մէջ, կը զըուցէր թէ չորս ամսուան արշաւանքով կտրոի, Ախլթխայի ու Պայազիտի կուսակալութիւնները ձեռք անցուցած է: Չմեռը Տաճիկները մեծ պատրաստութիւն տեսած էին, եւ երկրորդ տարին (1829) արշաւանքն իրենք սկսան՝ Ախլթխայի վրայ յարձակելով, զորն որ առին ալ. բայց Ռուսք նորէն տիրեցին: Երբ որ ան տեղեկութիւնները դադարեցան, Բասքելիչ ուզեց կարնոյ (Էրզրումի) վրայ քաշել: Նոյն քաղաքը տանող դիւրագոյն ճամբուն վրայ իրեն սպասող Տաճկական բանակն առեւտելոյթ շարժումներով ու յարձակումներով խաբելով, ուրիշ ճամբով կրնակն առաւ, եւ անոր երկու բաժիններուն վրայ յանկարծակի յարձակում ընելով, ետեւէ ետեւ յաղթեց (Յուլ. 1—2): Ասով Օսմանեանք անանկ սարսափի ու շփոթութեան մէջ ինկան, որ Ռուսք առանց պատերազմելու՝ կարնոյ տիրեցին (Յուլ. 7): Անկէ ետեւ նոյն կողմերը նշանաւոր դէպք չպատահեցաւ. միայն Բասքելիչ՝ աշնան անձրեւներով ճամբան անանցանելի ըլլալուն պատճառաւ՝ ետ դարձած ատեն, Բայբուրդ առաւ (Հոկտ. 9), որն որ իր վերջին յաղթութիւնն եղաւ, որովհետեւ անկէ անմիջապէս ետքը Ադրիանուպոլոյ խաղաղութեան դաշնաց լուրն ընդունեցաւ:

ՏՁ. Պատերազմին ատենը մեծ տէրութեանց բռնած ընթացքը: Ռուսաց առաջին Եւրոպական արշաւանքին անյաջողութիւնը՝ Մեդիտերանի իշխանին ակնկալութիւն տուաւ որ ձմեռը, երբ որ պատերազմն ըստ ինքեան՝ թէ ան կողմերը եւ թէ Ասիա՝ դադարածի պէս էր, կրնայ Տաճկաստանին նպաստաւոր պայման-

ներով խաղաղութիւն բնել ապա: Բայց իր բոլոր ջանքք պարագ ելաւ, ինչու որ մինակ մնաց: Պրուշ արգէն բախրովին Ռուսի կողմն էր. նոյնպէս Կիկողայոս կայսրը կրցաւ Գաղղիա ալ իր կողմը շահիլ: Իսկ Անգղիայի կառավարութիւնն ըստ մասին իր ներքին իրողութիւններուն զբազան իր, ըստ մասին ալ անանկ կը համարէր թէ Անգղիայի շահուն համար բաւական է որ կանգնուելու Յունական տէրութիւնը Արեւմտեան տէրութեանց պաշտպանութեան տակ, եւ իբր թէ իրենց ձեռքը պատանգի պէս ըլլայ: Աս պարագայից մէջ սկսաւ երկրորդ տարւոյն արշաւանքը, որն որ ամէն կողմն Ռուսաց յաջող երթալով, Գոււր մեծ անձկութեան մէջ ձգեց: Եւ թէպէտ Տիպիչ Ադրիանուպոլիս հազիւ 30,000 զօրք ունէր, վասն զի պատերազմներու մէջ ինկածներէն ու սողին անդին թող արուածներէն զատ, խիստ շատ մարդ ալ կերակրոյ պահատութեամբ եւ հիւանդութիւններով մեռած էին, եւ անկարելի էր որ այնչափ քիչ մարդով կոստանդնուպոլսոյ վրայ քարելու յանդգնէր. ի վերայ այսր ամենայնի նոյն մայրաքաղաքին մէջ իր զօրութիւնը շատ աւելի մեծ կարծելով, սաստիկ վախի մէջ ինկան: Ասոր մեծապէս օգնեցին օտար տէրութեանց դեսպաններն ալ, որոնք խօսք մէկ բրածի պէս՝ Սուլթանին անձկութիւնը կը մեծցընէին: Ասոնց մէջ ամենէն աւելի գործունէութիւն բանեցընողն եղաւ Պրուշի դեսպանը: Կիկողայոս կայսրն աղէկ դիտնալով թէ Տիպիչ բաւական զօրութիւն չունի կաստանդնուպոլիս առնելու, եւ թէ կարողութիւն ալ ունենայ՝ ուրիշ տէրութիւնք թող չեն սար, Պրուշի Փրեզերիկոս Գուլիելմոս Գ. թագաւորին աղաչեց որ Սուլթանը տեղի տալու հաւանեցընէ: Թագաւորն աս բանս յանձն առաւ, ան կերպով որ նոյն նպատակաւ կաստանդնուպոլիս խաւրած Միւլիինկ դեսպանն իր հրահանգները՝ չէ թէ Պերլինէն, հապա Պետրոբուրգէն կ'ընդունէր: Մէկալ կողմանէ ալ Տիպիչ Սեւ ծովուն եզրները եւ կաստանդնուպոլսոյ ճամբուն վրայ եզող

քանի մը տեղերը զօրք բանել տուաւ, որով Գուռն անանկ կարծեց թէ Յեւ ծովէն դալու Ռուս նաւատորմին հետ կապակցութեան մէջ մտնել կ'ուզէ՝ մայրաքաղաքն առնելու համար: Աս բաներէն ստիպեալ՝ Սուլթանը զինադադար խնդրեց, որուն Տիպիչ սիրով հաւանեցաւ, եւ քիչ մը ետքը Ազրիանուպոլսոյ մէջ խաղաղութեան բանակցութիւնք սկսան (Սեպտ. 1):

83. Ազրիանուպոլսոյ խաղաղութեան դաշինքը: Աշխույժ բանակցութիւնք ուրիշ աէրութեանց կողմանէ ամենեւին միջամտութիւն չկրկով, բոլորովին Ռուսիոյ կամաց ու շահուն համեմատ ելք ունեցան: Քանի մը օրուան մէջ դրուած Ազրիանուպոլսոյ խաղաղութեան դաշինքը (1829, Սեպտ. 14) հետեւեալ պայմաններն ունէր. 1. Եւրոպոյի մէջ Բրուսթ գետը երկու աէրութեանց սահմանը կը մնայ. բոլոր առնուած տեղերը ետ կը տրուին, միայն Սիլիսարիա հիմնայատակ քանդուած. Դանաբի քանի մը կղզիներն ալ Ռուսի ձեռքը կը մնան: 2. Ասիոյի մէջ սահմաններն անանկ կարգի կը դրուին որ Սեւ ծովուն բոլոր արեւելեան եզերքը, Գուպանի բերաններէն մինչեւ Ս. Դիկոպոյտի նաւահանգիստը, Անարայի ու Բոզիի ամրոցներովը՝ Ռուսաց ձեռքը կը մնան: 3. Մալտաիոյի ու Վալարբիոյի իրաւունքներն ու առանձնաշնորհութիւնները կը հաստատուին. միանգամայն իշխանները բոլոր իրենց կենացը մէջ իշխանութիւննին պիտի պահեն, եւ նոյն երկիրները Տաճիկ պիտի չընակին: 4. Յեւ ծովուն վաճառականութիւնը բոլորովին ազատ է, եւ Ռուսաց՝ ինչպէս նաեւ Գրան հետ խաղաղութեան մէջ եզրագ ազգաց՝ առեւտրական նաւերը բոլոր նեղուցներէն կրնան անցնիլ: 5. Պատերազմի ծախքին համար Գուռը առար միլիոն տուգազ պիտի վճարէ: 6. Լոնտոնի մէջ Յունաց նկատմամբ դրուած դաշինքը (76), ինչպէս նաեւ նոյն (1829) տարին Մարտի 22ին հոն եղած արձանագրական միաբանութեան որոշումները (85) Գուռը կը ճանչնայ եւ անոնց կը համաձայնի: — Աս Ազրիանուպոլսոյ խաղա-

ղութեան գաշինքով Ռուսք մեծ առաւելութիւններ ձեռք բերին: Ստոյգ է՝ ըրած աշխարհակալութիւննին, ընդարձակութեան կողմանէ նայելով՝ խիստ քիչ բաներ էին, բայց զինուորական կամ մարտայորդարական նկատմամբ՝ խիստ ծանրակշիռ: Գանուբի բերնին կղզիներով՝ Ռուսիա բոլոր նոյն գետին կը ափէր. Սեւ ծովուն արեւելեան եզրներն եղող պզտիկ ամրոցներով՝ Չէրքէզներուն ծովու հետ ունեցած հաղորդակցութիւնը կը կտրէր. Ախլցիա ստանալով՝ Ցաճկական Հայաստանի ճամբան առջեւը բաց կ'ունենար: Գանուբի իշխանութիւնները գրեթէ Գրան իշխանութենէն ելած էին, եւ իր անոնց վրայ կորսոնցուցած ազդեցութիւնը՝ Ռուսիայի անցած էր, որն որ Պուքրէշ ու Եաշ պահած գործակալներով՝ հոն ուղածին պէս կրնար իշխել: Այնչափ մեծ էին Ռուսին աս ստացած առաւելութիւնները, որ ուրիշ մեծ տէրութիւնները հանդարտեցնելու համար՝ իրենց նկատմամբ ալ առեւտրական ազատութիւններ ընդունեցաւ. իսկ Գանուբի կղզիները չամբաջնելու պայման դրաւ:

ՏԷ. Անգղիա ու Գաղղիա Օսմանեան զօրքերը Յունաստանէն կը հանեն: Երկրին կողմնակցութիւնները: Գուռը Ռուսիայի հետ պատերազմի մէջ եղած ատեն՝ Անգղիա ու Գաղղիա իր նեղութեան վիճակը գործածեցին իր զօրքերը Յունաստանէն հանել տալու: Իպրահիմ Փաշան Նաւարինի պատահարէն ետքը խոստացած էր որ ետ քաշուի. բայց երկայն ժամանակ կը դանդաղէր խոստումը կատարելու: Աս բանս գլուխ հանել տալու համար՝ Անգղիա Եգիպտոս նաւատորմի մը խաւրեց, որով Մէհմէտ Ալի Փաշան նեղի գալով, գաշինքով յանձն առաւ զԻպրահիմ Փաշան Մորայէն ետ կանչելու: Իսկ Գաղղիա նոյն նպատակաւ 14,000 բանակ մը խաւրեց Մորա (1828, Օգոստ.): Առանկով Իպրահիմ առանց դժուարութեան՝ իր Եգիպտացի զօրքերովը նաւ մտաւ Յունաստանէն մեկնեցաւ (Հոկտ.): Բայց Գորոնի, Մոտոնի ու Նաւարինի բերդերուն մէջ

եզոզ Օսմանեան պահակապանք հազիւ ան ատեն յանձն առին թողուլ ելլել՝ երբ որ Գաղղիացիներէն ստիպուեցան: Նոյն Գաղղիացի զօրքերն ասկից ուրիշ նպատակ մ'ալ ունէին. կառավարութեան թիկունք ըլլալով՝ երկրին աւտզակները զուգելու եւ ամենայն ինչ կարգաւորելու պիտի օգնէին: Իրզք ալ երկրին հանդարտութեան ու կարգաւորութեան համար ասանկ զօրաւոր միջոց հարկաւոր էր: Գաբոտիսդրիա կամը բոլորովին Ռուսի կողմն ըլլալով եւ ամենայն ինչ նոյն արքունիքէն ընդունած հրահանգներուն համեմատ կարգադրելու զգելով, չէր կրնար գոհ ընել մէկալ կողմնակցութիւնները, որոնք արդէն առանց ուրիշ պատճառի ալ, միայն նախանձէն՝ իրեն դէմ ելած կ'ըլլային: Կողմնակցութիւն՝ որ կ'ըսուի, պէտք չէ Եւրոպական տէրութեանց մէջ եղածին պէս՝ Ազաւական ու Պահպանողական կամ Սահմանադրական ու Արձակապետական կողմնակցութիւն իմանալ: Յունաստան ասանկ բան չէր կրնար ենթադրուիլ: Հոն երեք կողմնակցութիւնք կային. մէյ մը յառաջուան սրիկայից կողմնակցութիւնը, որոնք ամենեւին կարգաւորութիւն չէին ուզեր. երկրորդ Ռուսի կողմնակցութիւն, որուն գլխաւորն էր Գաբոտիսդրիա եւ որուն կը վերաբերէր նաեւ Գոլղոզորոնիս. երրորդն էր Անգղիական կողմնակցութիւնը, որուն գլուխ կը սեպուէր Մաւրոզորտադոս. իսկ Գաղղիական կողմնակցութիւն չկար, որովհետեւ ան ատեն նոյն իսկ Գաղղիացիք Ռուսաց հետ կապուած էին, անանկ կարծելով որ իրենց Յունաստանի մէջ ունեցած զօրքովն արդէն ըստ ինքեան բաւական ազդեցութիւն կ'ունենան: Գաբոտիսդրիա գահերէց ընտրուելուն պէս, Անգղիական կողմնակցութեան գլուխ եզոզ Մաւրոզորտադոս տէրութեան ծառայութենէն ելած՝ զօրաւոր դիմադրական կողմնակցութիւն մը ձեւացուցած էր, որն սր անմիջապէս Զմիռնակիսն սոռոսակցի անունով լրագիր մը սկսաւ հրատարակել: Գաբոտիսդրիա իսկզբան՝ ժողովրդեան մեծ մասին ուզածին դէմ՝ ազգային ժողով

չգումարեց, բայց մասին գործադրական իշխանութեան գործունէութիւնը՝ նոյնին աւելորդ մանաւանդ թէ վնասակար միջամտութիւններովը չսկարացնելու, բայց մասին ալ Ռուսիայի անհամայ չլլարու համար: Բայց դիմագրականք պնշտփ բրին, որ գահերէջը վերջապէս ստիպուեցաւ նոյն ազգային ժողովը գումարել (1829, Յուլ. 23) Արգոսի ամիիթէատարնին մէջ: Սակայն ան ժողովոյն բացուած օրն ամենուն աչքը զարկաւ անոր Ռուսական համագգեստով երեւնալը, որով աւելի իբրեւ Ռուսիայի կուտակալ՝ քան թէ անկախ տէրութեան մը գահերէց կրնար սեպուիլ: Միանգամայն բարձրագոյն իշխանութեան մը տակ ըլլալն ալ գործքով ցուցուց՝ ինք իրմէ ծերակոյտ մը հաստատաւելով, որն որ իբր թէ իր ու ազգային ժողովոյն մէջտեղը միջին իշխանութեան մը պէս կ'ըլլար:

ՅԵ. Յունաստան բոլորովին անկախ տէրութիւն կ'ըլլայ: Գրուած թագաւորը կը հրաժարի: Գարտիսդրիայի մահը: Վանք հիմայ գեսպանագիտական բանակցութիւններուն, որոնցմով կատարեալ հիմնուեցաւ Յունական տէրութիւնը: Ռուսական - Ցածկական պատերազմին ժամանակը, Անգղիա, Գաղղիա ու Ռուսիա Արձանագրութեան մը ստորագրեցին, որով նոյն Յունական տէրութիւնն առժամմ իրենց պաշտպանութեան տակ կ'առնուին (1828, Նոյ. 28), եւ անոր համար ալ Պաշապան տէրութիւնը կոչուեցան: Ինչպէս վերը տեսանք, Դուռը Ադրիանուպոլսոյ խաղաղութեան գաղանց մէջ հաւանած էր՝ Լոնտոնի գաղնիքով Յունաց նկատմամբ եղած որոշման, ինչպէս նաեւ Մարտի 22ին Արձանագրական միաբանութեան մէջ գտնուած որոշումներուն զեջանելու (83, 6): Եւ թէպէտ աս վերջին որոշումներով Պաշապան տէրութիւնը Դրան Յունաստանի վրայ ունեցած վերին իշխանութիւնը ճանչցած էին. բայց ետքէն մէջերնին միաբանեցան որ բոլորովին անկախ ու ինքնագլուխ ընեն՝ ժառանգական իշխանի մը տակ (1830, Փետր. 3): Ասով

կ'ուզէին փոխարինութիւն ընել Յունաց՝ իրենց սահմաններուն անձկութեան համար, զորոնք նոյն տէրութիւնները չէին ուզեր ընդարձակել, վասն զի իրենց սեպհական շահուն համար կը բաղձային որ Յունաստան պզտիկ ու տկար տէրութիւն մ'ըլլայ, միշտ իրենց տէրութեան ու պաշտպանութեան կարօտ: Իսկ Գուռը՝ քիչ մը ժամանակ առ վերջին որոշման իր հաւանութիւնը զլանալէն ետեւ՝ վերջապէս զիջաւ (Ապր. 24): Ա՛լ Սուլթանը չէր կրնար Յունաց անկախութիւնը խափանել, ուստի եւ հարկ էր որ առէն պահանջմանց հաւանէր, որովհետեւ ատանկով քանի մը կողմը եւ Յունաստանի հիւսիսային կողմերն իր ձեռքը կը մնային: Յունաստան անկախ միապետութիւն ընելու որոշող գեսպանաժողովը միանգամայն որոշեց որ նոյնին վեհապետ դրուի Սաքսոնիա-Գոտտերկի Լէոբոլտ իշխանը, որն սր Անգղիայի Գէորգ Գ. Թագաւորին Շարլոզ աղջկան († 1817) հետ կարգուած ըլլալով, Անգղիայի արքունական տան անդամներէն կրնար սեպուիլ: Բայց առ իշխանը՝ որ իրեն մատուցուած Թագը Թէութեամբ ընդունած էր (Փետր. 11), տեսնելով որ Յունաց տէրութիւնը խիստ պզտիկ ըլլալուն համար՝ միշտ տկար պիտի մնայ եւ երբեք պիտի չկարենայ անկախութեամբ վարուիլ, բոլորովին հրաժարեցաւ (Մարտ 21): Առ հրաժարման շատ օգնեց Գաբոսիսգրիա կոմսին իրեն դրած մէկ նամակը, որուն մէջ Յունաստանի վիճակն այնպէս ախուր գոյներով կը նկարէր, սահմաններու անձկութիւնն այնպէս անվերջ կռիւններու եւ տկարութեան պատճառ կը ցուցընէր, որ իշխանը՝ եթէ տակաւին տարակոյս մ'ունէր նէ, ան ալ փարատեցաւ: Խորամանկ գահերիցուն բուն միտքն ան էր որ զիշխանը գահէն հրաժարեցընելով, ինք իշխանութեան մէջ գէթ քիչ մը ժամանակ ալ մնայ: Իրօք ալ իր ենթագրութիւնը կատարուեցաւ. բայց ինքն ալ իր իշխանասիրութեան զոհ եղաւ. որովհետեւ մէկ կողմանէ բոլորովին Ռուսի կողմը բռնելուն, եւ մէկալ կողմանէ ժողովուրդը

աուրքերով ճնշելուն պատճառաւ, իրեն գէմ եղող հակառակութիւնը խիստ սաստկացաւ, տեղ տեղ յեղափոխութիւններ ելան, եւ վերջապէս իր խստութիւններուն զոհ եղողներէն երկու հոգի եկեղեցւոյ մէջ զինքը սպաննեցին (1831, Հոկտ. 9): Իր տեղն անցնող Աւգոստոս Գաբոտիսաբիա եղբորը ատենն ալ նոյն շփոթութիւնը շարունակեցին, մանաւանդ թէ սաստկացան, մինչեւ որ Լոնտոն Յունաստանի բախտն որոշուելով, ամէն բան կարգի մտաւ:

86. Պաւիերայի թագաւորին Ոթոն որդին Յունաստանի թագաւոր կ'ըլլայ: Լոնտոնի գեսպանաժողովը երկայն ու ճղճղկած բանակցութիւններ կ'ընէր Յունական խնդրոյն վրայ, զորն որ հազիւ ան ատեն կրցաւ կարգի գնել՝ երբ որ նորենոր երեւան ելլող խռնդիները լմնցան: Լէոբոլտ իշխանին ընտրութեան վրայ երկու տարի անցնելէն ետեւ՝ կարելի եղաւ իր տեղը Յունական գահն ելլելու մէկը գտնել, որ էր՝ Պաւիերայի Լուդովիկոս թագաւորին կրտսեր որդիներէն Ոթոն իշխանը: Յիշեալ թագաւորը՝ որն որ բանաստեղծական աշխուժով Յունաց մեծ յօժարութիւն ունէր, եւ անոնց յեղափոխութեան սկիզբէն՝ սաստիկ գործունեայ յունասէրներէն մէկն եղած էր, աս բանս սիրով յանձն առաւ իր անչափահաս որդւոյն անուամբը: Ուստի եւ Լոնտոնի արձանագրով (1832, Փետր. 13) ու Պաւիերայի հետ եղած միաբանութեան դաշինքով (Մայ. 7) նոյն Ոթոն իշխանը Յունաց թագաւոր անուանեցաւ: Պաշտպան տէրութիւնը յանձն առին 60 միլիոն Ֆրանգի երաշխաւորութիւն տալ նոր կառավարութեան. իսկ Պաւիերա յանձն առաւ նոյն կառավարութեան կազմուելուն եւ թագաւորին պաշտպանութեան համար 3500 հոգևով գունդ մը դրուելուն հարկաւոր եղած ծախքը քաշել: Յունաց զանազան կողմնակցութիւնները, յառաջուրնէ Պաւիերացի բանասիրի մը ձեռքով վաստակուած ըլլալով, կամ իւրաքանչիւր կողմնակցութիւն՝ նոր կառավարութեան մէջ աւելի ազդե-

ցութիւն ունենալու համար՝ ինք զինքը նորընտիր թա-
 գաւորին կողմը ցուցնել ուզելով, ազգային ժողովոյն
 մէջ Լուգովիկոս ու Ոթոն թագաւորներուն մեծարա-
 նաց ու ընդունելութեան թուղթ մը գրեցին (Օգոստ.
 8)։ Ասկից զատ՝ մասնաւոր պատգամաւորութիւն մը
 գնաց Ոթոն թագաւորը հրաւիրելու, որն որ հետեւեալ
 տարւոյն սկիզբները Յունաստան եկաւ եւ մեծ ուրա-
 խութեամբ ընդունուեցաւ (1833, Փետր. 5)։ Բայց
 մէկ կողմանէ Յունաց անկարգութիւններն ու օտարա-
 տեցութիւնը, եւ մէկալ կողմանէ Պաւերացւոց՝ գեր-
 մանական սովորութեան համեմատ՝ ճիշդ ու կարգաւո-
 բեալ օրէնքներ դնել ուզելն ու մեծ պաշտօնները իրենց
 ազգայնոց տալը, թէ՛ թագաւորին անչափահասու-
 թեան ատեն եւ թէ՛ անձամբ կառավարելու սկսելէն
 ետեւ (1835, Յունիս 1), մեծ շփոթութիւններու ա-
 սիթ տուին։

ԵՐԿՐԱՐԿ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

ՅՈՒՆԻՍԻ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ

(1830—1848)

ՏՊ. Եւրոպայի տէրութեանց տիրող սկզբունքներուն փոխուիլը: Անսիջամտութեան սկզբունք: Տասնուհինգ տարի էր որ Եւրոպայի մէջ՝ Օրինաւորութեան, Սուրբ գաշնաւորութեան ու Հնգապետութեան (հինգ մեծ տէրութեանց աւաւելուութեան) սկզբունքներուն վրայ հիմնուած քաղաքականութիւն մը ի գործ կը գրուէր, որմէ ինք իրմէ յառաջ կու գար Միջամտութեան սկզբունքը: Նոյն սկզբանց համեմատ, Աւստրիա՝ Իտալիայի մէջ (ՏՅ), իսկ Գաղղիա Սպանիայի մէջ (ՏՏ; ՏՏ) օրինաւորութեան պաշտպանութեան համար զինեալ միջամտութիւն բրած էին: Բայց մէյ մը՝ որ քեննինկ աւ սկզբունքները ջնջելն իրեն նպատակ դրաւ (70), եւ նոյն նպատակը իբրեւ ժառանգութիւն անցաւ Անգղիայի ազատական պաշտօնարաններուն, ալ անկէ ետեւ խիստ դժուար էր անոնց հաստատուն մնալը: Քեննինկին նպատակին խիստ յարմար եկան ժամանակին պարագաները, վասն զի անոնցմով իրեն գործակից գտաւ ան տէրութիւնը՝ որն որ ուրիշ պարագայից մէջ ամէն տէրութիւններէն աւելի իրեն դէմ ելած կ'ըլլար, այս ինքն՝ զՌուսիա, որուն Նիկողայոս կայսրը Յունական խնդրոյն նկատմամբ, Անգղիայի հետ՝ հակառակ ընթացք բռնեց վերոյիշեալ սկզբունքներուն, ինչպէս արդէն իր տեղը տեսանք: Ասանկով նոյն սկզբունքները սկսան սասանիլ: Եւ թէպէտ շատերը՝ նոյն տէրութիւններուն ու Գաղղիային՝ Յունական խնդրոյն մէջ բռնած ընթացքը՝ օրինաւորութեան սկզբունքին բռնաբարութիւն չէին համարեր, ինչու որ Օսմանեան տէրութիւնը Սուրբ գաշնաւորութեան մէջ չըլլալով, իբրեւ թէ նոյն սկզբանց տակ ինկած չէր սեպտեմբ, սա-

կոյն մէյ մը որ նոյն սկզբունքը՝ ինչ կերպով որ է նէ՛ եղծուելու սկսու, ժամանակին հոգւոյն նայելով, այլ չէր կրնար հաստատուն մնալ: Իբրք այլ շուտ մը վրայէ վրայ անանկ պարագաներ եկան, որոնցմէ մեծ տերութիւնք՝ ըստ մասին իրենց կամացը դէմ՝ ստիպեցան չէ թէ միայն նոյն սկզբունքները մէկդի ձգելու, հապա ի գործնականն անոնց հակառակ կերպով վարուելու, եւ սկզբամբ իբրեւ ապստամբութիւն դատապարտածնին՝ գործքով ընդունելու: Ան ժամանակէն ետեւ՝ քանի մը մասնական դէպքեր գուրս հանելով՝ արժողութիւն ունենալ սկսաւ Անիի յանձնարարութեան սկզբունքը, որով թող կը տրուի որ իւրաքանչիւր տերութիւն կամ մասնաւոր իւրաքանչիւր ժողովուրդ, իր ներքին իրողութիւններն ուզածին պէս փոխէ ու կարգադրէ: Ինչպէս որ յառաջագոյն նշանակեցինք (31), Միջամտութեան սկզբունքին բարոյովն փոխուելուն առիթն եղաւ՝ նոյն սկզբունքին հաստատուելուն գլխաւոր պատճառն եղող տերութիւնը, այսինքն Գաղղիա, որուն օրինաւոր թաղաւորական ցեղը գահէն իյնալով, տեղը՝ նոյն ցեղին կողմնական գիծը ժողովրդեան ձեռքով դահ հանուեցաւ:

Ա.

Գաղղիայի Յոռլիսի յեղափոխութիւնը (1830):

88. Յուլիսի յեղափոխութեան նախաշաւիղները: Պարոլոս Ժ. Մարդինեագի պաշտօնարանին (44) տեղը՝ սաստիկ պահանջողականներէ կազմուած պաշտօնարան մը գրաւ (1829, Օգոստ. 8), զորն որ ազատական կողմնակցութիւնն անմիջապէս իր յարձակմանց նիւթ ընելով, Անկարելի պաշտօնարան անուանեց, ցուցնելու համար թէ կարելի չէ որ իշխանութեան մէջ մնայ: Շուտ մը Պրորդանեի մէջ ընկերութիւն մը հաստատուեցաւ. հարկերը զանալու վախճանուաւ, որն որ բոլոր Գաղղիա տարածեցաւ: Նոյն միջոցին Լաֆայէդ (Հատ. Գ. 31 . . .) Գաղղիայի մէջ ճամբորդութիւն

մ'ըբաւ, որն որ դիմադրականաց ջանիւքը՝ յաղթանակի ընթացքի մը նմանեցաւ, եւ իրեն համար եղած ասօնական հանգէսներուն մէջ՝ աս յեղափոխութեան գիւցազնին խօսած ճառերը՝ կրակի վրայ լեցուած եղ եղաւ: Նոյն Լաֆայէդ գաղտնի մասնաժողովոյ մը գլուխ կը կենար, որն որ Փարիզէն բոլոր դիմադրականաց կ'առաջնորդէր: Հարկերը զանալու ընկերութենէն զատ, ուրիշ խիստ տարածեալ գաղտնի ընկերութիւն մ'ալ կազմեցաւ, որուն նպատակն էր իբրեւ թէ ժողովրդեան իրաւունքները կառավարութեան դէմ պաշտպանել, եւ Յակոբեանց ժողովակներուն հետ շատ նմանութիւն ունէր: Պաշտօնեայք աս շարժումներուն ու լրագրաց յարձակումներուն դէմ կրնայ ըսուիլ թէ անգործ կը կենային, որուն պատճառն ան էր՝ որ իրենց մէջ երկպառակութիւն կար: Լապուրատոնէ՝ ներքին գործոց պաշտօնեան՝ կ'ուզէր սաստկութեամբ գործել, եւ ազատականները զսպելով՝ թագաւորին իշխանութիւնն աւելցընել, որուն հետ միարան էր՝ կ'ըսուի՝ թագաւորն ալ, որն որ միշտ կը կրկնէր թէ Ամենեւին զիջում չըլլայ: Իսկ Բոլիւեազ՝ արտաքին գործոց պաշտօնեան՝ աս բանիս դէմ էր: Ա երջինն իր ատիճանը Անգղիայի ազդեցութեամբ ձեռք բերած ըլլալով, եւ գիտնալով որ Ռուսիայի Բոցցոյ տի Պորկոյ դեսպանը՝ որն որ զՄարդինեազ կ'ուզէր, իրեն դէմ հնարքներ բանեցընելէն չիզագորիր, հաստատուն մնալու համար՝ Անգղիայի հետ աւելի անձկութեամբ կապուելու ետեւէ կ'ըլլար. իսկ Ուելլինկդըն իրեն խրատ կու տար որ չափաւորութեամբ վարուի: Երկպառակութիւնն ուրիշ կերպով չկրնալով դազրիլ, Լապուրատոնէ պաշտօնէն ելաւ, եւ Բալիւեազ պաշտօնէից գահերէց անուանեցաւ (Նոյ. 17):

89. Սենեակներուն բացուիլն ու գոցուիլը: Պաշտօնէից գահերէցը քանի մը լրագիրներու մէջ հրատարակել առաւ որ Գաղղիայի գահն ազատել կ'ուզէ թէեւ սենեակներուն մեծ մասն իր կողմը չըլլայ: Աս յայտարարութեան համեմատ սկսաւ ալ վարուիլ, միան-

գամայն ջանալով հասարակաց համարումն իր կողմը վաստակիլ. բայց պարապ տեղ : Թագաւորը սենեակներուն նիստն անձամբ բացած ատեն (1830, Մարտ 2) գահախօսութեան մէջ թէպէտ անանկ ցուցուց որ անոնց վրայ վստահութիւն ունի, բայց միանգամայն յայտնեց որ եթէ դիմադրականք իր իրաւունքները չեն յարգեր, ինքն ալ պէտք է որ անոնց իրաւունքները շափաւորէ : Պատգամաւորաց ասոր տուած պատասխանէն յայտնապէս կը տեսնուէր թէ իրենց մեծ մասը պաշտօնէից հակառակ է. իսկ ատենակալաց պատասխանը կերպով մը կը յայտնէր թէ կառավարութեան դէմ կռիւ մ'որ ելլէ, իրենք ալ պատգամաւորներուն հետ պիտի միաբանին : Բայց աս դիմադրութիւնը չէ թէ այնչափ ազատականաց շատուորութենէն ու թագաւորականաց քիչուորութենէն յառաջ կու գար, հասարակութեան անկից՝ որ խել մը թագաւորականք եւ առանձինն ինկող պաշտօնեայք եւ անոնց կողմնակիցները Բոլինեագին հակառակ ըլլալով, կ'ուզէին զինքը վար առնուլ : Թագաւորն ասանկ զօրաւոր դիմադրութեան՝ տեղի տալու էր, եւ իբրեւ սահմանադրական վեհապետ՝ պէտք էր մեկդի ձգել ան պաշտօնեաները, որոնց կողմն անկարելի էր սենեակներուն մեծ մասը վաստակել : Աս նիւթին մէջ իրեն օրինակ առնելու էր Անգղիայի թագաւորները, որոնք զօրաւոր վեհապետք կը սեպուին՝ թէ եւ իրենց պաշտօնարանները միշտ խորհրդանոցէն կախում ունենան : Բայց ինք ասոր հակառակ ճամբայ բռնեց : Պատգամաւորաց պատասխան տուաւ թէ իրաւունք ունէի կարծելու որ սենեակները ինծի գործակից կ'ըլլան ան ամէն բան գլուխ հանելու՝ զորն որ ժողովրդեանս բարւոյն համար միտքս դրած եմ : Տրամութեամբ կը լսեմ ձեզմէ որ աս գործակցութիւնը կը պակսի : Բայց որոշմանս մէջ հաստատ եմ. ժողովրդեանս բարիքը թող չիտար որ անկից հեռանամ : Իբրեւ սահմանադրական վեհապետ՝ կրնար պատգամաւորաց սենեակը լուծել, եւ նորէն ընտրու-

Թիւն ընել աալով՝ պատգամաւորներէն ժողովրդեան բողոքել, սակայն առ սաստիկ միջոցին չուզեց մէկէն դիմել, հապա նոյն ատեն սենեակներուն նիստերը մինչեւ Սեպտեմբերի սկիզբը գոցեց (Մարտ 19) . իսկ պատգամաւորաց սենեակը լուծելն աւ նոր ընարութիւն ընել աալը՝ աւելի ուշ ատենուան ձգեց, յուսալով որ նոյն միջոցին կառավարութիւնը կարենայ նշանաւոր գործքով մը ժողովրդեան համարումը սաահալ:

90. Ալճերիի եւ մտաւոր տէրութեանց ծովահէնները: Գաղղիայի ու Ալճերիի մէջ եղած վէճը: Ժողովրդեան համարումը ստանալու համար Կարոլոս Ժ.ին յոյս առաջ միջոցն էր՝ Ալճերի բլլալու պատերազմական արշաւանքը՝ որմէ թագաւորական դրօշին յաղթանակներու ակնկալութիւն կար: — Ավրիկէի հիւսիսային ծովեզրներու տէրութիւնները՝ հին ժամանակներն ըրածներնուն պէս ծովահէնութեան կը զբաղէին: Իրենց նաւահանգիստներէն բազմաթիւ նաւեր ելլելով, Եւրոպական տէրութեանց նաւերը կը կողոպտէին եւ անոնց ծովեզրները յարձակում կ'ընէին: Մարտագոյի, Ալճերիի, Գոււնուզի ու Տրիպոլիսի մէջ քրիստոնեայ գերիները շղթաներու եւ շարաշար ծառայութեան տակ կը հեծէին: Պզտիկ տէրութեանց դրօշներուն հասած նախատինքը մէկդի ձգենք, նոյն իսկ մեծ տէրութիւնք երբեմն նոյնպիսի թշնամանք կը կրէին, որոնց համար երբեք չէին կրնար կատարեալ հատուցում ընդունիլ: Հիւսիսային Ամերիկայի, Բրիտանիայի, Հորանապի, Աւստրիայի պատերազմական նաւեր նոյն ծովեզրները ժամանակ ժամանակ յարձակում ընելով, հազիւ կարող կ'ըլլային անոնց աւազակական արշաւանքները քիչ մը ատեն խափանել, բայց ոչ երբեք բոլորովին վերջացնել: Նոյն իսկ Գաղղեա՝ որուն ծովեզրները ան երկիրներուն շատ մօտ ըլլալով, ուրիշ ամէն տէրութիւններէն աւելի վտանգի մէջ կը գտնուէր, ուստի եւ ամենէն աւելի պատճառ ունէր փոյթ ստանելու որ յիշեալ շարիքները դադրեցնէ, ուրիշ տէրութեանց պէս ա-

նոնցմէ վնաս կը կրէր: Անոնք չէ թէ միայն իր Գանա ունեցած բուստի որոտարանները կ'աւրէին ու կ'աւարէին, հապա նաեւ իր վաճառականութեան նաւերը կը կողոպտէին: Աս պատճառներով Ալճէրիի ու Գաղղիայի մէջ շատոնցունէ վեր երկպառակութիւններ կային, որոնք վերջին ժամանակները սաստկացած էին: Ասոնց գլխաւոր առիթներէն մէկը հետեւեալն էր: Գաղղիայի կառավարութիւնը՝ Ալճէրիի ծովահէններուն յափշտակած գաղղիական սասցուածներուն տեղ, որոնց հատուցում չէր կրցեր ընդունիլ, երկու Ալճէրիցի վաճառականներէն առնուած ցորենեղէնին դիմացը հատուցուելու եօթը միլիոն ֆրանգէն՝ երկուք ու կէս միլիոն վար առաւ, վնաս կրող Գաղղիացիներուն հատուցում բրաւ: Ալճէրիցի վաճառականք իրենց եղած աս նուազ հատուցման համար իրենց Բոքեշէին (Յէյն) դիմեցին, որն որ փոխանակ ծովահէնները ստիպելու որ նոյն գումարը վաճառականաց հատուցանեն, Գաղղիացւոց բանեցուցած միջոցին դէմ սաստիկ նեղանալով, հրապարակական հանդիսի մը մէջ Գաղղիայի հիւպատոսը շարաչար նախատեսց ու թշնամանեց: Ասոր վրայ նոյն հիւպատոսը Ալճէրիէն ելաւ (1829, Յունիս 16). Ալճէրիցիք ալ Գաղղիացւոց հոնտեղի ստաղուածներն աւարեցին ու կործանեցին: Աս եղածներուն հատուցում պահանջելու համար Գաղղիա դեսպան մը խաւրեց. իսկ Բոքեշէը հատուցում չտարէն զատ՝ դեսպանին նաւուն վրայ կրակ ընել տուաւ:

Չ1. Ալճէրիի արշաւանքն ու աշխարհակալութիւնը: Գիմնագրականաց ջանքովը՝ կառավարութիւնն իր նպատակին չիհասնիր: Առով Գաղղիա իրաւունք ունեցաւ Ալճէրիի դէմ պատերազմ բանալու. իսկ կարողութեամբ կ'ուզէր, ինչպէս ըսինք, նոյն առիթը գործածել յաղթական արշաւանքով մը ժողովրդեան աչքը մտնելու, որովհետեւ Գաղղիացւոց համարումը՝ ամէն բանէն աւելի պատերազմական փառքով ձեռք կը բերուի: Ուստի իր նպատակը չէ թէ այնչափ պզտիկ

ծովահէն տէրութիւն մը պատժել էր, որչափ քաղաքական մեծ ցոյցք բնել: Բայց մէկալ կողմանէ Անգղիացիք սկսան հոգի մէջ իյնալ, որ չըլլայ թէ Գաղղիացիք Ալճէրի աշխարհակալել ու պահել ուզեն. անոր համար նախ առաջարկեցին որ միջնորդութիւն բնեն, եւ երկայն ատեն արշաւանքին գէժ գնելէն ետեւ՝ վերջապէս ան պայմանաւ զիջան թող տալու, որ Գաղղիացիք Ալճէրիի երկիրներն իրենց չտեղհականեն: — Առաւմալարութիւնն արշաւանքին ժամանակն անանկ յարմարացուց, որ յուսացուած յաղթութեան լուրը Գաղղիա տարածուած ատեն՝ նոր բնարութիւնք ըլլան: Ուտաի եւ. սենեակներուն լուծուելուն հրամանին ելած օրը (1830, Մայիս 16), 30,000 զօքք Գալսոնէն նաւ պիտի մանէին: Սակայն իրերն յուսացուածին պէս չյաջողեցան: Նաւատորմիղը երկայն ժամանակ մերթիկներէ արգելուելով, ստիպեցաւ Բալմայի նաւահանգիստը մնալ, ետքէն ալ երկու նաւ Ալճէրիի ծովեզերքը զարնուելով, ծովահէններու ձեռք ինկան: Աերջապէս նաւատորմիղը Ալճէրի հասաւ. զօքքերը ցամաք ելան, թշնամեաց հետ զարնուեցան ու յաղթեցին (Յունիս 19): Քանի մը օր ետքը Ալճէրիի ամրոցին ալ տիրեցին (Յուլ. 4), որուն վրայ քաղաքն անձնատուր եղաւ, աս պայմանաւ որ Բոգեշին ազատութեամբ երկրէն գուրս ելլէ՝ իր անձնական ստացուածներն ու Տաճիկ վարձկանազօրը հետը տանելով: Իսկ Գաղղիացիք խօսք կուտային որ երկրին բնակչաց կրօնին բռնութիւն չընեն եւ առանձնակիանաց ոտացուածքին ձեռք չգալցընեն: — Առաւմալարութիւնն ամէն կերպով ջանք ըրաւ աս յաղթութիւնը բոլոր Գաղղիայի մէջ իբրեւ նշանաւոր գէպք հռչակել. բայց յուսացած օգուտը չգտաւ: Արգէն իսկզբան Գաղղիացիք խիստ նեղացած էին, իմանալով որ արշաւանքը սկսելու համար՝ իբր թէ Անգղիայէն հրաման առնուած է: Գարձեալ արշաւանքին երկրնալովը՝ կառավարութեան հաշիւը պարտապ ելաւ. վասն զի նոր բնարութիւնք՝ յաղթութեան լրերուն հասած ժամաւ.

նակն բլլալու տեղ՝ ճիշդ ան տտենն եղան, երբ որ առաջին գծբախտութեանց գոյժը Գաղղիա կը տարածուէր: Այսպէսով գաղտնի ընկերութեանց ջանքն ու գծբախտութեանց գոյժը մէկտեղ գալով, չէ թէ միայն պատգամաւորաց սենեկին յառաջուան գիմնադրական անգամները, հապա նաեւ խել մ'ուրիշ նոր ազատական պատգամաւորք ընտրուեցան: Ընտրութիւնք արգէն եղած լմընցած էին, երբ որ յաղթութեանց ու Ալճէրիի աշխարհակալութեան լուրք հասաւ:

ՉԶ. Հրամանագիրը եւ անոնցմէ պատճառած յեղափոխութիւնը: Այսպէսով կարողա ժ. սաստիկ գէշ վիճակի մէջ ինկաւ, որմէ ազատելու համար պարտապ տեղ հնարք կը փնտռէր: Խրատ տուողներ եղան որ Փարիզ եւ ուրիշ մեծ քաղաքները բազմաթիւ զօրք ժողովելով, սահմանագրութիւնք վերցուի. բայց ինք աւելի ազէկ սեպեց սահմանագրական ճամբէն դուրս չելլել: Եւ որովհետեւ սահմանագրութեան ժ. Գ. յոգուածովը կ'որոշուէր որ արտաքոյ կարգի գէպքերու մէջ՝ թագաւորն արտաքոյ կարգի միջոցներու ձեռք կրնայ զարնել, անանկ կարծեց որ սահմանագրութեան հակառակ չընելով, կրնայ չարեաց առջեւն առնուլ: Ուստի պաշտօնական լրագրոյն մէջ վեց հրամանագիրներ¹ հրատարակուեցան (1830, Յուլ. 26), որոնցմով՝ Ա. Մամլոյ կամ տպագրութեան ազատութիւնն ի կախ կը պահուէր եւ գրաքննութիւն կը հաստատուէր, Բ. Պատգամաւորաց ընտրութեան օրէնքը կը սեղմուէր, Գ. Տակաւին չգումարուած պատգամաւորաց սենեակը կը լուծուէր, Դ. կ'որոշուէր որ նոր ընտրութիւնք բլլան եւ սենեակներուն նիստերը Սեպտեմբերի 28ին բացուին, Ե. ու Ջ. Տէրութեանն նոր խորհրդականք կ'անուանուէին, ամէնքն ալ չափազանց թագաւորականներէն: — Ստոյգ է ամէն մարդ կը տեսներ որ նոյն հրամանագիրներուն սկիզբը պաշտօնէից հրատարակած տեղեկութեան մէջ՝ անսանձ տպագրութեան

1 Ordonnance.

պատճառած չարիքներուն վրայ զըցուածը ճշմարիտ էր. նոյնպէս ամէն անկողմնակալք գիտէին որ թագաւորը՝ չէ թէ գիմարականաց բռածին պէս՝ բռնակալութեան բաղձանքով աս արտաքոյ կարգի միջոցներուն ձեռք կը զարնէր, հապա իր իշխանութիւնը հաստատուն պահելու մասք. բայց ազատականք սոյն ամենայն ուրիշ աչքով տեսնել ուզեցին, եւ նոյնէն առիթ առին մեծ յեղափոխութիւն հանելու: — Հրամանագիրները հրատարակուելուն պէս, Փարիզի մէջ սոստիկ գրգռութիւն սկսաւ: Ազատական մեծ ապարաններու եւ ուրիշ շատ գործարաններու տէրեր անմիջապէս իրենց գործաւորներն արձակեցին, որով հազարաւոր մարդիկ առանց գործքի մնալով, իրենց գործատեարց գիտածին պէս՝ շուտ մը շփոթութիւններ հանեցին, նոյն գիշեր Բուլնեազի պալատին ազդակները կոտարելէն սկսելով: Երկրորդ օրը (Յուլ. 27) Փարիզի ազատական լուսագիրներու խմբագիրները բողոք մը հրատարակեցին, որուն մէջ կը զրուցէին թէ սահմանագրութիւնը թոյլ չէտար հրամանագիրներ հանելու, ուստի անոնցմով իրաւանց դէմ գործուած բլլալով, ամենայն Գաղղիացի պարտաւորուած է անոնց դէմ դնել: Նոյն բողոքը հրատարակուելէն ետեւ՝ կառավարութիւնը ձեռք զարկաւ ազատական ապարանները կնքելու. բայց գրեթէ ամէն կողմ գիմարակալութիւն գտաւ, տեղ տեղ ալ աղմուկներ ելան ու ժողովուրդը սոստիկաններու հետ զարնուեցաւ: Երթալով աղմուկն ու գրգռութիւնը տասակացաւ: Խել մը գիմարական պատգամաւորք ալ բողոք մը հրատարակեցին, որ թագաւորն իշխանութիւն չունի տակաւին նիստերը չբացուած սենեակ մը լուծելու: Շատ ազգային պահակապաններ՝ ուսանողներու եւ բանուորներու հետ՝ պահանջներու վրայ յարձակեցան, սրբեցին, զէնք ու ռազմամթեր ձեռք բերին, շատ տեղ քարակոյտներ կանգնեցին: Չինուորներուն հետ իրենք զէնքով կռուած ատեն, տներէն ալ անոնց դէմ քարերով, կղմինարներով, փայտի կոճղներով, եռացեալ

նիւթերով կը պատերազմէին: Քաղաքային խորհրդարանը յեղափոխականաց ձեռքն իյնալով, վրան երեք-գուշեան գրօջը կանգնեցին, որն որ շուտ մը մայրաքաղաքին գրեթէ ամէն կողմերն երեւան ելաւ:

ԾՅ. Յուլիսի 29երորդ օրը: Քաղաքային խորհրդոյ մասնաժողով: Աս կերպով անցան յեղափոխութեան առաջին երեք օրերը (Յուլ. 26, 27, 28): Յեղափոխականաց այսպէս յաջողութիւն գաննելուն պատճառն ան էր, որ Փարիզի մէջ քիչ զօրք կար, անոնց ալ մէկ մասը ժողովրդեան կողմն անցաւ, մէկ մաս մ'ալ ժողովրդեան դէմ կռուիլ շուղելով՝ չէզոք կեցաւ: Ի վերայ այսր ամենայնի հաւատարիմ մնացող քիչերը՝ գլխաւորաբար Հելուեաացի գնդերը՝ տեղ տեղ ժողովուրդը ցրուեցին, մէկ երկու անգամ ալ քաղաքային խորհրդարանը յեղափոխականաց ձեռքէն առին: Կարելի էր որ յեղափոխութիւնը բոլորովին զուարէր, եթէ զօրաց Մարմնն հրամանատարը՝ հաստատութեամբ ու քաջութեամբ վարուէր. բայց անիկայ իսկզբանէ երկդիմի ընթացք մը կը բռնէր, ոչ զօրքերը շատցընելու փոյթ կը տանէր եւ ոչ աստիճանէն կը հրաժարէր, հապա գրեթէ անփոյթ կը կենար: Նոյն միջոցին պատգամաւորներէն ոմանք, որոնց մէջ էին Գաղիմիր Բերիէ, Լաֆայէզ, Լաֆիգ, Սեպաստիանի ու Վիզոյ, իրմէ իրն գրելով որ զինադադար ըլլայ, ինք անոնց անուամբ թագաւորին գրեց որ տեղի ասոյ, որովհետեւ վասնզն երթալով կը մեծնայ: Եւ երբ որ թագաւորը շուղեց հաւանիլ, ինք իրմէ կրակ ընելը գաղբեցընելու հրաման տուաւ զինուորաց, որոնք Գիւիլլի, Լուվր ու Բալէ Ռուայալ ժողովուած՝ վրանին յարձակող բազմութեան դէմ կը կռուէին: Անգիէն ժողովուրդը՝ ուր որ աւելի զօրութիւն ունէր, կռիւք յառաջ կը տանէր, որով կամ յարձակմամբ եւ կամ զինուորաց իր կողմն անցնելովը՝ շատ տեղեր ձեռք անցուց, անանկ որ Սէն գետին բոլոր ձախակողմը յեղափոխականաց ձեռքն ինկաւ: Քիչ մը ետքը հրամանատարը լսելով որ 20-000ի

չափ զինեալ մարդիկ Սէն Գլուի վրայ կը քայլեն, ուր պաշտօնեայք Թագաւորին եւ արքունեաց քով ժողովուած էին, Գիւիլիբի ու Լուվրի պալատները պաշտպանող զօրքերը հետն առած՝ հոն դիմեց: Ասանկով նոյն երկու պալատներն ալ ժողովրդեան ձեռքն ինկան: Դա եւ Բալէ Ռուայալ ու արքեպիսկոպոսին պալատն առնուեցաւ, եւ աս վերջնոյն մէջ սաստիկ աւեր ու աւարառութիւն եղաւ: Արնայ ըսուիլ որ Փարիզի մէջ յեղափոխութիւնը կատարեալ յաղթութիւն ստացած էր: — Փողոցներու մէջ այսպէս կռիւ ու արիւնհեղութիւն եղած ատեն, յեղափոխականաց գլխաւորներն անգործ չէին կենար: Լաֆայէզ իրեն հետ եղող պատգամաւորներուն համոզելովը՝ ազգային պահակապանաց հրամանատարութիւնն առնելով, իր գլխաւոր բանակատեղը՝ քաղաքային խորհրդարանին մէջ հաստատեց: Հետեւեալ օրը (Յուլ. 30) նոյն տեղը՝ Քաղաքային խորհրդոյ մասնաժողով անունով առժամանակեայ կառավարութիւն մը հաստատուեցաւ, որուն գլխաւոր անդամներն էին Գազիմիր Բերիէ, Լաֆիդ, Ժերար, Լաֆայէզ. եւ ընդհանրապէս ընդունելութիւն գտաւ: Զօրքերն ալ՝ Սէն Գլու գացողներէն զամ յեղափոխականաց կողմն անցան: Աս կերպով յեղափոխականք՝ առանց խօսքով բացայայտ զրուցելու՝ գործքով անանկ կը վարուէին իբրեւ թէ Թագաւորական իշխանութիւնը ջնջուած ըլլար:

ՁԷ. Արքունեաց զիջումները կը մերժուին: Տեսնենք հիմայ նոյն միջոցին արքունեաց մէջ եղածները: Թագաւորն իսկզբան՝ ի գործ գրուած զինուորական միջոցները բաւական սեպելով, անհոգ կը կենար եւ ամենուին զիջում ընել չէր ուզեր: Անգիւն մայրաքաղաքէն հեռոջետէ գոյժ գուժի վրայ կը հասնէր. այնպէս որ իր քովը գտնուող ազնուականներէն ու մեծամեծներէն շատերը վախի մէջ ինալով եւ զինքը կորսուած սեպելով, կ'ուզէին գոնէ ցեղը գահին վրայ պահել: Ասոնք կը բաղձային Պորտոյի Հենրիկոս

դքսին (վարդուս Ժ.ին երկրորդ որդւոյն՝ Պերիի դքսին՝ որդւոյն) անուամբը խնամապետութիւն դնել, ոմանք ալ խրատ կու տային որ թագաւորը գաւառներու մէջ հաւատարիմ մնացող բանակ մ'երթայ, եւ հոն իրեն կողմն եղաղներէն խորհրդանոց մը գումարելով, յեղափոխականաց հետ բանակցի: Ա երջապէս ըստ մեծի մասին յայնմ կը միաբանէին, որ զանազան զինուորներով յեղափոխութեան մըրիկը հանդարտեցընելու ջանացուի: Թագաւորը՝ որն որ վերջապէս վտանգին մեծութիւնը տեսնելով, միակերպ պաշտօնէից հետ խորհուրդ կ'ընէր, աս մտօք հաւանեցաւ որ Բողինեագ պաշտօնէն ելլէ եւ անոր տեղը Մորգմարի դուքսը դրաւ (Յուլ. 29), որն որ Պետրոբուրգ Գաղղիական դեսպան եղած ու Նիկողայոս կայսեր խիտտ սիրելի ըլլալով, անանկ կը կարծուի թէ վարդուս Ժ. կ'ուզէր ասով Ռուսիա իր կողմը վաստակիլ: Նոր պաշտօնեան շուտ մը հարկաւոր զինուորներ բովանդակող զբուածներով՝ Փարիզ երկու տեսնակալ խաւրեց. եւ ասոնց թէ քաղաքային խորհրդոյ մասնաժողովոյն մէջ ու թէ պատգամաւորաց քով ըրած փորձերուն պարագի երթալէն ետեւ, ինք անձամբ վերջին փորձ մ'ընել ուզեց: Բայց որչափ որ աւելի մայրաքաղաքը կը մօտենար, այնչափ աւելի կը սաստկանային Պուրպանեանց իյնալը պահանջող աղաղակները, եւ երբ որ ատենակալի մը ձեռքով քաղաքային խորհրդարանին հետ խօսիլ ուզեց, ոչ ոք յանձն առաւ զինքն իբրեւ պաշտօնեայ ճանչնալ:

95. Լուղովիկոս Փիլիպպոս՝ Օրլէանի դուքսն ու իր կողմնակիցները: Գալերան: Ասոնք ըլլալու ատեն՝ մէյ մ'ալ պատերուն վրայ յորդորագիր մը կը պահուեցաւ, որ Լուղովիկոս Փիլիպպոս Օրլէանի դուքսը թագաւոր հրատարակուի: — Լուղովիկոս Փիլիպպոս՝ որուն հայրը Գաղղիայի մեծ յեղափոխութեան ոկիզբը յեղափոխականաց հետ միացած էր, Տիւմուրէի բանակին մէջ գտնուելով, նոյն զօրապետին հետ թշնամեաց կողմն անցած էր, ինչպէս յառաջագոյն տեսանք

(Հատ. Գ. 26, 57, 77): Քանի մը տարի Եւրոպա ու Ամերիկա պարանելէն, ապրելու համար ուսուցչութիւն բնելէն ու շատ տարիներ Լոնտոն կենալէն ետեւ, Փարիզ դարձած էր: Արապքուսա անանկ կ'երեւցնէր որ Գաղղիայի մէջ եղած շարժումներն իր հոգը չէ. բայց միտ գնողը՝ շատ առիթներու մէջ կրնար տեսնել թէ թագաւորական դահին աչք անկած է, որուն նշան էր վերջին ատենները բռնած ընթացքն ալ: Իր պալատն ազատականներուն եւ անձնական տագնաթիւն ունեցողներուն ժողովարանն եղած էր: Գալերան, Սեպտագիանի, Պենտամէն, Գանսգան, Գաղիմիր Բերիէ, Լաֆիգ եւ երկու սենեակներուն ուրիշ գիմագրականներէն երեւելիները, բոլոր նշանաւոր լրագրագետները հոն կ'ընդունուէին, կը գովուէին, կը շոյուէին: Այսպէսով Լուգովիկոս Փիլիպպոս շատ կողմնակիցներ ստացած էր, որոնք արապքոյ կարգի գործունէութեամբ անոր կողմը կը գործէին, մանաւանդ Լաֆիգ՝ որուն հետ գրամական գործողութիւններ կ'ընէր, եւ Թիէր՝ որուն գրիչը գնած էր: Բայց իր ամենէն մեծ բարեկամն էր Գալերան: Աս անուանի քաղաքագետը ոչ Նաբոլէոնին եւ ոչ Պուրպոնեանց երէց ճիւղին հետ որտանց կապուած էր, հապա ան ատեն անոնց կը ծառայէր՝ երբ որ իշխանութեան լիութեան հառած կը տեսնէր (Հատ. Գ. 42, 247): Ուստի եւ երբ որ տիրող ցեղը կամ անձը վտանգի մէջ կը մտնէր եւ իշխանութենէն իյնալու վրայ կ'ըլլար, Գալերան անմիջապէս կ'աճապարէր ան ցեղին կամ անձին կողմն անցնելու կամ անոր իշխանութիւնը հաստատել ջանալու, որն որ հնոյն աեղը պիտ'որ անցնէր: Արդ նոյն ատեն ճանչնալով որ Պուրպոնեանց երէց ճիւղը գժուաբաւ կրնայ դահին վրայ մնալ, եւ գիանալով որ Եւրոպայի տերութիւնը թող չեն տար որ հասարակատեւութիւն հաստատուի, իսկ Նաբոլէոնի ցեղէն մէկու մը գահ ելլելը՝ չէր կրնար մտածուիլ, ամենէն աւելի պատշաճ կամ գիւրին կը սեպէր Պուրպոնեանց կրտսեր

Օրբէանեան ճիւղին՝ երէց ճիւղին տեղն անցնելը: Լուգովիկոս Փիլիպպոս ալ բանի մը ձեռք չգորակած՝ Գալեբանին խորհուրդ հարցուց, եւ երբ որ անիկայ հաւանութիւն տուաւ, անկէ ետեւ իրօք ձեռքը Գաղղիայի թագին երկրնցուց:

ՊԾ. Լուգովիկոս Փիլիպպոս թագաւորութեան ընդհանուր տեղակալ կ'ըլլայ: Լաֆայէդ: Աս առթիւն մէջ Թիէր եղաւ՝ որ իր ճարտարխօսութեամբը՝ նոյն դքսին Գաղղիայի գահուն ճամբան բացաւ: Լաֆիդին առնել ժողովուրդ խել մը պատգամաւորները համոզեց որ եթէ հասարակապետութիւն հաստատուի, հետեւութիւնը պէտք է որ ըլլայ Եւրոպական պատերազմ ու Պուրպոնեանց նորէն գահ ելլելը: Իսկ եթէ զԼուգովիկոս Փիլիպպոս գահ հանեն, անիկայ իրենց ամէն կերպ զիջումներ կ'ընէ. թէ Գաղղիա զինքը կ'ընդունի եւ թէ օտար տէրութիւնք մեծ ընդդիմութիւն չեն ընել, որովհետեւ թագաւորական ցեղէ է եւ իր հասակովն ու բնաւորութեամբը բաւական երաշխաւորութիւն կու տայ ընդհանուր խաղաղութեան հաստատուն պահուելուն: Աս պատճառներով զիրենք համոզելով, վերը յիշուած յորդորագիրը շինեց, որուն մէջ նոյն պատճառներն ըստ մասին յառաջ կը բերուէին: Ետքը ինք եւ իրեն հետ եղող պատգամաւորք Պուրպոնեան ըսուած պալատը՝ Լաֆիդին գահերիցութեամբը՝ մեծագոյն ժողով մը գումարեցին՝ իբրեւ կերպական սենեակ. եւ հոն գրուածքի մը ստորագրեցին, որով Օրբէանի դուքսը կը հրաւիրէին առ ժամս տէրութեան վերին առաջնորդութիւնը յանձն առնուլ՝ թագաւորութեան ընդհանուր տեղակալ՝ անուամբ: Լուգովիկոս Փիլիպպոս ձեռի համար հրաւիրին քիչ մը գէժ գառնալէն ետեւ, նոյն իրիկունը (Յուլ. 30) Նեոյլեիէն ոտքով Փարիզ եկաւ եւ անմիջապէս սկսաւ աշխատիլ Եւրոպայի տէրութիւններն իր կողմը վաստակելու եւ թագաւորը կերպով մը հրաժարել տալու: Գալերանին հետ խորհրդակցելէն

1 Lieutenant.

ետեւ, Մորգամարի դուքսն իրեն կանչեց, եւ անոր ձեռքով թագաւորին տոմսակ մը խաւրեց, որուն մէջ իր հաւատարմութիւնը կ'ապահովցընէր: Երկրորդ օրը (Յուլ. 31) պատգամաւորք իր քովը ժողովեցան եւ նորէն աղաչեցին որ իրեն մատուցուած իշխանութիւնն ընդունի: Լուգովիկոս Փիլիպպոս իրրեւ թէ իրենց թախանձանաց զիջանելով, յայտարարութիւն մը հրատարակեց, որուն մէջ կը զրուցէր թէ պատգամաւորաց իրեն առաջարկած ընդհանուր տեղակալի աստիճանը կ'ընդունի եւ ինք զինքը Փարիզի գիւցազնական բնակչաց նուիրելով, զիրենք անիշխանութենէն պահել կ'ուզէ: Թէ ինք աս յայտարարութեան մէջ եւ թէ պատգամաւորք ուրիշ մէկ յայտարարութեան մէջ՝ զանազան խոստումներ կ'ընէին, որոնցմով ժողովրդեան մէկ մասն իրենց կողմը վաստակեցան: — Բանը կը մնար քաղաքային խորհրդարանը վաստակիլ, ուր հազիւ նոյն առտու՝ եղածն իմացած եւ անոր գէժ բողոք մը շինած էին: Բայց ան բողոքը տանող Օտիլոն Պարոյ ընդհանուր քարտուղարը՝ ձամբան դքսին պատահեցաւ, որն որ Լաֆիդին եւ ուրիշ պատգամաւորաց հետ գէպ ի քաղաքային խորհրդարանը կ'երթար՝ կեցցէ Օրլէանի դուքսը, կեցցէ Լաֆիդ կանչող բազմութեամբ մը: Հոն հասած ատեննին՝ Լուգովիկոս Փիլիպպոս զԼաֆայէզ բարեւեց ըսելով, Ազգային պահակապան մը տեսէք, տեսէք իմ, որն որ իր յառաջուան զօրապետին այցելութեան կու գայ: Լաֆայէզ այսպիսի պատուադիր խօսքերու չկրցաւ գէժ դնել, ուստի եւ իբր թէ միաբանեցան որ ժողովրդական գահ մը կանգնուի՝ հասարակապետական կարգադրութիւններով: Ասոր վրայ իրար գրկեցին եւ Լաֆայէզ զդուքսը ժողովուած բազմութեան ներկայացուց պատշգամին վրայէն որուն վրայ երկբզունեան դրօշը կը ծփար:

97. Կարոլոս Ժ. իր ու թագաժառանգին անուամբը գահէն կը հրաժարի եւ ընտանեզքը Գաղղիայէն կ'ելլէ: Մայրաքաղաքին մէջ ասոնք եղած ա-

տեն՝ Սէն Գլուի պալատը մեծ անձկութիւն ու շփոթութիւն կը տիրէր: Կարողո՞ ժ. Օրլէանի դքսին իրեն գրած տոմսակին կեղծաւորական խոստումներուն հաւատք ընծայելով, առանձին հրովարտակաւ զինքը թագաւորութեան ընդհանուր տեղակալի աստիճանին մէջ հաստատեց (Յուլ. 31), միանգամայն իրեն նամակ մը գրեց, յորդորելով որ իր իրաւունքները պաշտպանէ: Այսպէսով նոյն իսկ իր կողմնակիցները ստիպեց դքսին կողմն անցնելու, որով եւ ինք աւելի տկարացաւ: Աս վիճակին մէջ թագաւորն իր ընտանեացը հետ նախ Գրիանոն ու ետքը Ռանպուլլեէ քաշուեցաւ (Օգոստ. 1), եւ հոն Լուդովիկոս Փիլիպպոսէն՝ դրած թղթոյն պատասխանին կը սպասէր: Աերջուպէս նոյն պատասխանն եկաւ, որուն բովանդակածը թէպէտ յայտնի չէ, բայց կ'երեւայ որ գուքսը մէկ կողմանէ տակաւին հաւատարմութիւն կեղծաւորելով, մէկալ կողմանէ թագաւորին յայտնած ըլլայ որ ժողովրդեան սէրն ու համարումը կորսնցուցած ըլլալով, պէտք է որ հրատարի: Իրօք ալ Կարողո՞ ժ. թուղթ մը հասնեց (Օգոստ. 2), որուն մէջ թէ իր եւ թէ թագաժառանգին՝ Անկուլէսի դքսին անուամբը գահէն կը հրատարէր, եւ թագն իր Հենրիկոս թոռան կը թողուր. ընդհանուր տեղակալին ալ կը յանձնէր որ նոյն իշխանը թագաւոր հրատարակէ, եւ անոր անուամբը խնամապետութիւն ընէ: — Անդիէն Լուդովիկոս Փիլիպպոս եւ իր կողմնակիցներն ամէն կերպով կը ջանային անոր բովանդակցեղն ալ գահէն մերժելու: Աս նպատակաւ մէկ կողմանէ Փարիզի բնակիչները սուտ լրերով վախի մէջ ձգեցին՝ որ թագաւորը զօրքով վրանին յարձակում ընելու կը պատրաստուի. մէկալ կողմանէ պաշտօնական կերպով դքսին ու սենեակներուն հրամանաւր երկու անգամ երեք ոստիկանք խաւրուեցան որ թագաւորին հետ մինչեւ սահման երթան: Երկրորդ անգամուն ասոնց ետեւէն զինեալ անհնարին բազմութիւն մը կ'երթար: Ոստիկանք բազմութենէն յառաջ Ռանպուլլեէ հասնե-

լով, Կարոլոս Ժ-ին ծանուցին որ ընդհանուր տեղակայք զերենք խաւրած է ինտցրենելու համար թէ Փարիզի Ժողովուրդն իր վրայ կու գայ, ուստի եւ հաճի հեռանալ: Ան ատեն թագաւորը հասկըցաւ Լուդովիկոս Փիլիպպոսին անհաւատարմութիւնը: Բայց ինչ օգուտ, բանը բանէն անցած էր: Ուստի պարտաւ տեղ արիւնհեղու-թեան պատճառ չապաւ համար, որոշեց բոլոր ընտանեզքը Գազդիայէն ելլել Անգղիա երթալ (Օգոստ. 4): Ճամբան Գազդիայցիք չէ թէ միայն իրեն թշնամանք մը չհատցուցին, հապա ամէն տեղ արքայապալայել մեծարանքով ընդունեցան, մինչեւ զինքը չվշտացընելու համար՝ շատ տեղաց երեքգունեան գրօշները վերցուցին: Թագաւորն իր ընտանեզքը Շերպուրէն նաւ մտաւ (Օգոստ. 14) ու Բորթոմոնթ ցամաք ելաւ (Օգոստ. 17): Բայց Անգղիայցիք Գազդիայցիներուն հակառակ ճամբայ բռնեցին. Կարոլոս Ժ. նաւէն ելած տանն՝ բոլոր ծովեզերքը կեցող բազմութիւնը երեքգունեան ծովերով զարդարուած էր, շատ տեղ ալ երեքգունեան գրօշներ բացած. կառավարութենէն ալ իրեն ազգարարութիւն եղաւ որ Անգղիայի մէջ իբրեւ ամենապարզ առանձնական մարդ պիտի բնակի:

ՅԾ. Լուդովիկոս Փիլիպպոս թագաւոր կ'ըլլայ: Կարոլոս Ժ. տակաւին Գազդիայի սահմաններէն չելած, Լուդովիկոս Փիլիպպոս իր բազմանքին հառած էր: Գաւառներէն եկած լըբը կը հաստատէին թէ ըստ մեծի մասին եղածներուն վրայ գոհ են կամ թէ գոնէ դէմ դնելու միտք չունին: Արտաքին տէրութիւններէն՝ Անգղիա Գալերանին ձեռքով աս նկատմամբ եղած առաջարկութիւնները հաճութեամբ ընդունած էր: Լուդովիկոս Փիլիպպոս կը յուսար որ Անգղիայի օրինակաւը կամ միջնորդութեամբ մէկալ մեծ տէրութիւններն ալ կը վաստակի, մանաւանդ որ զիրենք կ'ապահովընէր որ իր զգածմանքները բոլորովին խողազական են, եւ չէ թէ միայն չ'ուզեր հասարակապետութեան ու Նատոյէնեան ժամանակին պահանջումները նորոգել, հա-

պա բոլոր իր ջանքն ի գործ կը դնէ Գաղղիայի մէջ յեզափոխութեան ու պատերազմի կողմնակիցները զուգելու : Առանկով թէ բնակչաց մեծ մասին եւ թէ արտաքին տէրութեանց հաւանութեան վրայ գրեթէ ապահով ըլլալով, ուզեց շուտ մը գահ ելլել, գիտնալով որ եղած կատարուած գործքը : Եւ գարձընելն աւելի դժուար է՝ քան թէ ըլլալէք խափանել : Ուստի շուտ մը սննեակները բացաւ (Օգոստ. 3) ճառով մը, որուն մէջ բոլոր վերջին դէպքերն իբրեւ սահմանադրութեան դէմ գործուած գործքերու հետեւութիւն կը ցուցնէր, վրան աւելցրնելով որ ինչ օրինաւոր իշխանութիւնը հաստատելու եւ սահմանադրութիւնն ապահովընելու համար՝ իրեն մատուցուած իշխանութիւնն ընդունեցաւ : Փարիզոց ընթացքը կը գովէր : Կը խոստանար որ Գաղղիա հանգարտ ու երջանիկ կ'ըլլայ, եւ բոլոր Եւրոպայի հետ խաղաղութեան մէջ կը մնայ : Աերջապէս Կարոլոս Ժ.ին ու անոր թագաժառանգին հրաժարիլը կը ծանուցանէր : Պատգամաւորաց սննեակը յայտարարութիւն մը շինեց, որուն մէջ կային սահմանադրութեան մուրհակին մէջ ըլլալու փոփոխութեանց որոշումները : Ետքը նոյն սենեկին մէջ Լաֆիդին գահերիցութեամբը 219 քուէով (33 քուէի դէմ, 39 հոգի ալ քուէ չտարով) Լուդովիկոս Փիլիպպոս՝ եղած որոշումները պահելու պայմանաւ՝ թագաւոր ընտրուեցաւ. որուն վրայ Լաֆիդ ուրիշ ի նպաստ քուէ ձգողներուն հետ դքսին պալատն երթալով, սենեկին որոշումը կարգաց : Լուդովիկոս Փիլիպպոս անանկ ձեւացուց որ աս որոշումն իրեն խիստ անհաճոյ է, զան զի առանձնական կեանքը գահէն վեր կը սեպէ, որուն երէք բաղձացած չէր. միայն թէ հայրենասիրութեան համար իրմէ պահանջուած զոհը յանձն կ'առնու եւ իրեն մատուցուած թագը կ'ընդունի : Աս ըոնէն ետքը՝ զԼաֆիդ ողջագուրելով, անոր ու Լաֆայէդին մէջտեղը կեցած՝ պալատին պատշգամն ելաւ, որուն առջեւը կե-

1 Falt accompli.

ցող բազմութիւնը զինքը՝ Կեցցէ՛ արքայ աղազակաւ ըն-
գունեցաւ (Օգոստ. 7)։ Այս ամենայն եղած էր առանց
ատենակալաց սենեկին կարծիքը հարցընելու. բաց ա-
մէն բան լմննալէն ետեւ՝ ան ալ 89 քուէով (15
քուէի դէմ) զնոր թագաւորը ճանչցաւ. որմէ ետքը
երկու սենեկին անդամները մէկտեղ ժողվուելով, նոյն
սրահին մէջ գահակալութեան հանդէսը կատարուե-
ցաւ, եւ Լուգովիկոս Փիլիպպոս սահմանադրութեան
մուրհակն ու նոր շինուած յայտարարութեան որոշում-
ները պահելու երդում ըրաւ (Օգոստ. 9)։

99. Սահմանադրութեան մէջ ըլլալու փոփո-
խութիւնները կամ՝ նոր որոշումները։ 3. Յեղափոխու-
թեան առաջնորդները՝ միայն թագաւորական ցեղին
փոխուելովը գոհ չէին ըլլար, հապա կ'ուզէին նաեւ
սահմանադրութեան մէջ փոփոխութիւններ ընել. ուս-
տի եւ պատգամաւորաց սենեկին մէջ շինուած յայտա-
րարութիւնը հետեւեալ որոշումները կը բովանդակէր։
1. Գահը դատարկացած է, Պուրպոնեանց երիցազոյն
ձիւզը նոյնէն օրինաւորապէս հրաժարեցաւ, Կարոլոս
Ժ-ին ու իր թագաժառանգին հրաժարելովը եւ գործ-
քով ալ Գաղղիայէն հեռանալովը։ (Պորտոյի դքսին
վրայ յիշատակութիւն չէր ըլլար։) 2. Ա'լ ուղղափառ-
կրօնը՝ տէրութեան նախապատիւ կրօնքը չէ, հապա ա-
մէն պաշտամունք հաւասար պատիւ ունին։ 3. Մամլոյ
ազատութիւնը բոլորովին անկոպար է, գրաքննութիւն
երբեք չիկրնար դրուիլ։ 4. Նոր թագաւորը չիկրնար
ամենեւին օրէնք մը ի կախ պահել կամ չգործադրուած
թողուլ։ 5. Երբեք չիկրնար հասարակ ատեաններ թող
տալով առանձնական մասնաժողովներ դնել։ 6. Ամե-
նեւին չիկրնար օտար վարձկանազօր (չեւուետացի զօրք)
առնուլ։ 7. Ամէն քսանուհինգամեայ Գաղղիացի ընտրող
է, եւ ամէն երեսնամեայ՝ կրնայ ընտրուիլ։ Պատգամաւորք
հինգ տարւան համար կ'ընտրուին։ 8. Կարօլոս Ժ-ին ա-
ռանած ատենակալները կը ջնջուին. ատենակալաց սե-
նեկին նիստերը հրապարակական են։ 9. Թէ՛ սենեակներն

Եւ թէ թագաւորը կրնան օրէնք առաջարկել: 10. Թագաւորին տիտղոսն է՝ թագաւոր Գաղղիացոց, եւ ոչ թագաւոր Գաղղիայի: 11. Ճերմակ գրօջը վերցուած է, անոր տեղը կանցնի երեքգունեան գրօջը:

Բ.

Յեղագիական ու լեհական յեղափոխութիւնները (1830—1833):

100. Մեծ տէրութիւնները զլուզովիկոս Փիլիպպոս կը ծանչնան: Ինչպէս վերը նշանակեցինք, Լուզովիկոս Փիլիպպոս գահ ելլելուն պէս, օտար տէրութեանց նկատմամբ այնպէս խորագէտ ընթացք մը բռնեց, ինք զինքն այնչափ շարժաւորեալ ու զիջանող ցուցուց, օրինաւորութեան պաշտպան ըլլալու եւ յեղափոխութիւնները զսպելու անանկ հաստատուն խոստումներ տուաւ, որ մեծ տէրութիւնք՝ օրինաւորութեան եւ իրաւանց խնդիրները մէկգի ձգելով՝ զինքը Գաղղիայի թագաւոր ճանչցան: Միայն Նիկողայոս կոյսրն իսկզբան քիչ մը հակառակութիւն ցուցուց, եւ հրամայեց որ Ռուսիայի նաւահանգիստները երեքգունեան գրօջին գոցուին. բայց քիչ մը ետքը նոյն հրամանը ետ առաւ, երբ որ տեսաւ թէ նոր գահն ու հանդարտութիւնը հաստատուեցան: Եւ թէպէտ նոր թագաւորին գրած թղթին մէջ յանդիմանական կերպ մը բանեցուց, ցուցնելով թէ ըրած յափշտակութիւնը ծածկելու համար յառաջ բերած պատճառներէն չէ խարուիր. սակայն Լուզովիկոս Փիլիպպոս նոյն յանդիմանութիւնը լռութեամբ յանձն առաւ, գոհ ըլլալով որ Նիկողայոս կոյսրը զինքը կը ճանչնայ: Տէրութեանց նոյն թագաւորն այնպէս գիւրաւ ընդունելուն շատ օգնեցին ժամանակին դէպքերն ալ: Անգղիա՝ քեննինկին քաղաքականութեան համեմատ՝ զինքն ընդունելէն զատ, ամէն կերպով իր կողմը կը բռնէր, վասն զի անիկոյ այնպէս կը ձեւացընէր որ ամէն նիւթերու մէջ նոյն տէրութեան սւգածին պէս պիտի վարուի: Աւստրիա եւ

Պրուշ՝ Գերմանիայի ու Իտալիայի գրգռութեան վեճակին նայելով, վախցան իրենց ընդունելութիւնը զանաալու, որպէս զի չըլլայ թէ նոյն երկիրներուն յեղափոխականաց ձեռք բռնէ Գաղղիա, ինչպէս որ բնաւ Սպանիայի նկատմամբ, նոյն տէրութեան՝ քիչ մը ժամանակ զինքն ընդունել չուզելուն համար, որմէ ստիպեալ՝ ան ալ ածապարեց իր հաւանութիւնը տալու: Իսկ Ռուսիային իր ընդդիմութիւնը մէկդի ձգելուն եւ ամենայն ինչ յանձն առնելուն գլխաւոր պատճառն ան եղաւ, որ ինքն ալ Լեհաստանի մէջ կարենայ ուղածը յառաջ տանիլ: Ինչպէս որ է նէ, յառաջ նշանակածնուս պէս (87) ասով ջնջուեցան այն սկզբունքները՝ որոնք ատանուհինգ տարիէ ի վեր Եւրոպայի մէջ կը տիրէին, այս ինքն՝ Օրինաւորութեան եւ նոյնին հետեւութիւնն եղող Միջամտութեան սկզբունքները, եւ անոնց տեղ սկսան արժէք ունենալ անմիջամտութեան եւ պատշաճաւորութեան սկզբունքները:

101. Անգղիայի ու Գաղղիայի կամ Արեւմտեան սահմանադրական տէրութեանց սրտակից միաբանութիւնը: () րէանեան ցեզին Գաղղիայի գահն ելլելով՝ Եւրոպայի տէրութիւնք երկու գլխաւոր մաս բաժնուեցան. սահմանադրական Արեւմտեան տէրութիւնք՝ Անգղիայի ու Գաղղիայի ազգեցութեան տակ, եւ արձակապետական արեւելեան կամ Հիւսիսային տէրութիւնք՝ Աւստրիայի, Ռուսիայի ու Պրուշի գլխաւորութեամբ: Միջին փոքր տէրութեանց եւ առանձինն Գերմանիայի ու Իտալիայի մէջ, ժողովուրդք ըստ մեծի մասին սահմանադրական կարգադրութեանց կողմն էին, եւ անոր համար աչուքնին Անգղիայի ու Գաղղիայի կը դարձնէին. իսկ կառավարութիւնք արձակապետութեան կողմն էին. ուստի եւ աւելի Աւստրիայի ու Ռուսիայի վրայ կը յենուին: Գաղղիայի մէջ՝ Լուդովիկոս Փիլիպպոսին, եւ Անգղիայի մէջ՝ Ուիկերուն կառավարութեանց միակերպ դիտումը, Եւրոպայի վրայ ուրիշ տէրութիւններէն աւելի ազգեցութիւն ունենալու բաղ-

ձանձրնին, եւ Լոնտոն կեցող գաղղիական դեսպան Դա-
 շերանին՝ դեսպանագիտական ճարտարութիւնը, շատ
 օգնեցին հաստատուն պահելու նոյն երկու տէրութեանց
 կապակցութիւնն ու բարեկամութիւնը, որն որ մաս-
 նաւոր անուամբ մը՝ Սրտակից միաբանութիւն : կոչուե-
 ցաւ : Եւ թէպէտ նոյն միաբանութիւնը՝ միայն արտա-
 ջին առերեւոյթ բան էր. եւ երկու տէրութիւնք հին
 ժամանակէ վեր միշտ իրարու ոտոխ ըլլալով, եւ իւրա-
 քանչիւրը՝ շատ անգամ նաեւ մէկալին փնասովը՝ իր
 սեպհական օգուան ու շահը փնտռելով, մէջերնին ե-
 ղած բարեկամական յարաբերութիւնը՝ ատեն ատեն
 այլեւայլ դէպքերով աւրուելու վտանգի մէջ ինկաւ .
 ի վերայ այսոք ամենայնի երկուքին ալ օգուտը, եւ եր-
 կու կողման պաշտօնեաներէն ոմանց՝ մէկալ տէրու-
 թեանց ունեցած սերը, ինչպէս Արգոյին անգղիասիրու-
 թիւնը եւ Պրակէմին գաղղիասիրութիւնը, թող չէին
 տար որ նոյն երկպառակութիւնը երկայն ժամանակ
 տեւէ : Աս մէջերնին եղած կապն ու բարեկամութիւնը
 աւելի ամրացաւ երկու տէրութեանց վեհապետներուն
 իրարու փոփոխ այցելութիւն ընելովը : Սակայն վերջա-
 պէս իրենց միաբանութիւնն անանկ աւրուեցաւ, որ
 Լուզովիկոս Փիլիպպոսին գահին կործանման ալ օգնեց :

102. Արեւելեան կամ արձակապետական տէ-
 րութեանց միաբանութիւնը եւ յեղաշրջական հոգին
 զսպելու ջանքը : Ինչպէս որ երկու գլխաւոր սահմանա-
 դրական տէրութիւնք իրենց շահուն համար մէկտեղ
 կապուած մնացին, այսպէս ալ երեք գլխաւոր արձա-
 կապետական տէրութիւնք, այս ինքն՝ Աւստրիա, Ռու-
 սիա ու Պրուշ, գրեթէ ամէն բանի մէջ միաբան ըն-
 թացք մը կը բռնէին, իշխանաց վեհապետական ի-
 բաւունքը՝ ժողովրդեան վեհապետութեան սկզբունքին
 գէմ՝ պաշտպանելու, միշտ աւելի տարածուող ռամկա-
 պետական ու յեղափոխական հոգին զսպելու, եւ գլխ-
 խաւորաբար գաղթեալ կամ փախստեայ Լեհերուն ա-

1 Entente cordiale.

աաջնորդութեամբը կամ գործակցութեամբը նիւթուած գաւակցութիւններն ու յեղափոխութեան փորձերը ճնշելու մտօք: Իրօք ալ Եւրոպայի շատ տեղերն անանկ վիճակի մէջ կը գտնուէին, որ կառավարութեանց կողմէն մեծ հոգաբարձութիւն հարկաւոր էր, ընդհանուր շփութութիւններ ելլելն արգելելու համար: Արդէն յառաջուրնէ ամէն տեղ տօգոհներ կային, որոնք գործքի ձեռք զարնելու համար առթի կը սպասէին, եւ որոնց խիստ նպաստաւոր էին Գաղղիայի նոյն ատենուան հանգամանքը, ուր յեղափոխութիւնը վրայ ելած եւ իր յաղթական գահը հաստատած ըլլալով, ամէն իր դրօշին հետեւողներուն քաջալերութիւնն ու ակնկալութիւնը կը մեծցընէր: Անսիջապէս Փարիզի մէջ գաղտնի ընկերութիւն մը հաստատուեցաւ, որուն նպատակն էր՝ Գաղղիայի նոր գահին հիմն ըլլող սկզբունքը չորս կողմը տարածել, եւ շուտ մը ամէն տեղ նոյն կարծիքին ետեւէն գացողներուն հետ կապակցութեան մէջ մտաւ: Աս ընկերութիւնը՝ որուն հոգին էր Լաֆայէզ, կը կարծէր թէ Յուլիսի յեղափոխութեամբ Գաղղիա կը պարտաւորի եւ բաւական զօրութիւն ունի՝ իր չորս կողմի ազգերուն ազատական ջանքերուն ղէնքով օգնելու. միանգամայն կը բազմար 1814ին ու 1815ին գաշինքները քակելով, Բեղզիա, Ռեննսի ձախակողմն ու Իտալիայի մէկ մասը Գաղղիայի հետ միացընել, որով եւ նոյն տերութիւնն ան բարձրութեան հանել՝ ուր կը կենար Նաբոլէոն կայսեր ատենը: Իր աս նպատակին դիւրաւ հասնելու համար, ամէն տերութեանց տօգոհներուն յոյսն իր գործակալներուն ձեռքովը կ'արթնցընէր, որպէս զի արտաքին յեղափոխութեանց շղթայով՝ նոյն իսկ Գաղղիայի մէջ յեղափոխական տարրը սնունդ գտնէ, եւ այսպէս Լուզովիկոս Փիլիպպոսին խաղաղական ու չափաւորեալ քաղաքականութիւնն անգործ ըլլայ: Յեղափոխականաց աս ջանքը թէպէտ եւ բոլորովին պարապ չգնաց, սակայն եւ այնպէս ասդին անդին ելլող յեղափոխութիւնք ու շփո-

Թու.թիւնք՝ վերոյիշեալ տէրութեանց միաբան ջանքով՝ ոչ մեծցան եւ ոչ ընդհանրացան, հապա գրեթէ ամէն կողմ ալ զուպուեցան:

103. Բեղգիայի վիճակն ու թագաւորին հետ ունեցած յարաբերութիւնը: Ամէն անգորէն յառաջ՝ յեղափոխական տենդէն բռնուեցաւ Բեղգիա, ուր կառավարութեան դէմ ատելութիւնը խորունկ արմատացած ու երկայն ատենէ վեր աճած էր, եւ դիմագրականք մեծամեծ գործքերու ձեռք զարնելու յարմար՝ զօրաւոր կողմնակցութիւն մը կը կազմէին: Ինչպէս իր տեղը տեսանք, Վիէննայի արքայաժողովը՝ Գաղղիայի սահմանները զօրաւոր տէրութիւններով պատելով՝ ապագայ ժամանակներն անոր աշխարհակալութեան բազմանքներուն առջեւն առնելու մտօք, ուրիշ սահմանակից տէրութիւնները զօրացընելէն ու մեծցընելէն զտտ, Աւստրիական Ստորին նահանգները կամ՝ Բեղգիա՝ Հռլանտայի հետ միացուցած, եւ երկուքը մէկտեղ՝ իբրեւ միակ թագաւորութիւն՝ Օրանեան ցեղին տուած էր (16): Նոյն ցեղին առաջին թագաւորը Գուլիելմոս Ա. ամենեւին իրաւունք չունէր ոչ թագաւորական աստիճանին եւ ոչ մանաւանդ Բեղգիայի, ուստի եւ մեծ տէրութիւններէն իբրեւ պարզեւ ընդունեցաւ, որուն նպատակն էր անոնց եւ կամ Եւրոպայի ընդհանուր շահը: Ինք իրմէ կ'իմացուէր որ աս պարզեւն իրեն ան թէութեամբ արուած էր՝ որ իմաստուն ու հայրական կառավարութեամբ՝ Բեղգիացուց սէրը վաստրկելով, անոնց սրտէն Գաղղիայի հետ միանալու յօժարութիւնները ջնջէ: Իսկ Գուլիելմոս Ա. աս նպատակին հասնելու համար՝ ուզեց Բեղգիացիները հոլանտացընել, որով ամէն բանի մէջ Հոլանտացիները յառաջ քաշելով ու Բեղգիացիները ետ ձգելով, եւ իբր թէ Բեղգիա՝ զէնքով աշխարհակալուած գաւառի տեղ գնելով, նոյն երկրին մէջ իրեն բազմաթիւ ու անհաշտ թշնամիներ յարոյց: Չիկրնար ուրացուիլ որ խիտտ դժուար էր թագաւորին գործքը, ինչու որ շուրջ երէքհարիւր տարիէ

վեր Բեղզիացւոց ու Հսրանտացւոց մէջ կրօնական սկզբաբանց արապոյ կարգի հակառակութիւն կար. գրեթէ անկարելի էր աս հակառակ տարրներն իրարու հետ հաշտ ու միաբան պահել: Բայց Գուլիելմոս գոնէ իր ընթացքովը՝ երկու ազգաց մէջ եղած երկպառակութիւնը պէտք չէր աւելի մեծցընել, եւ հին ատելութիւնը նորէն նորէն բորբոքելէն զգուշանալու էր: Ասան զի անկարելի էր որ Բեղզիա՝ որն որ Հոլանտայէն մեծ էր, առանց ձայն հանելու տեսնէ որ ինք յետադատուելով՝ ամէն բանի մէջ Հոլանտա յառաջ կը քաշուի. անկարելի էր որ համբերէ յայտնապէս իմանալով թէ թագաւորին եւ իր կառավարութեան միտքն ան է՝ որ բեղզիական տարրը միշտ աւելի ճնշուելով՝ Հոլանտականին մէջ կորսուի:

104. Եկեղեցականաց ու ազատականաց միաբանութիւնը: Բեղզիացւոց տեղագրութիւնն որչափ ալ շուտով սկսաւ նէ, ի վերայ այսր ամենայնի երկրին հանդարտութիւնը քանի մը տարի գոնէ երեւելապէս չաւրուեցաւ, որովհետեւ թէ խորհրդանոցին մէջ եւ թէ դուրսը դիմադրականք տկար էին: Թէպէտ եւ Բեղզիա չորս միլիոն բնակիչ ունէր, իսկ Հոլանտա՝ երկուք ու կէս. սակայն երկու գաւառներէն հաւատարմութեամբ պատգամաւորք կ'ընտրուէին. ուստի Հոլանտացիք միշտ կառավարութեան կողմն ըլլալով, եւ պաշտօնեայք Բեղզիացիներէն քանի մը հոգի իրենց կողմը վաստակելով, դիմադրականք չէին կրնար զօրանալ: Մանաւանդ որ բուն Բեղզիացիք ալ մէջերնին միաբան չէին, որովհետեւ ազատականք՝ եկեղեցականաց առանձնական պահանջումներուն դէմ կը դնէին, իսկ եկեղեցականք՝ ազատականներուն: Բայց վերջապէս երկու կողմանք մէկտեղ միացան՝ կառավարութեան դէմ դնելու համար. եւ այսպէս երկու իրարու հակառակ տարրներէ կազմուած՝ զօրաւոր դիմադրական կողմնակցութիւն մը ձեւացաւ: Ա՛լ անկէ ետեւ երկուքը միաբան միեւնոյն պահանջումները կ'ընէին, թէպէտ իւրա-

քանչիւքին դիտած նպատակը մեկալին դիտածէն տար-
բեր էր : Եկեղեցական կողմնակցութիւնը՝ ազատակա-
նաց պահանջած մամլոյ ազատութիւնը կը պաշտպա-
ներ, որպէս զի ինքն ալ կարենայ իր սկզբունքները ա-
զատութեամբ հրատարակել : Իսկ ազատականք կը
նպատակէին եկեղեցական կողմնակցութեան՝ ուսումնա-
րանները տէրութեան հակողութենէն ազատելու ջան-
քին, որպէս զի իրենք ալ կարենան աշխարհական հա-
մալարաններու եւ վարժարաններու համար ուսման ա-
զատութիւն ձեռք բերել : Սկզբամբ իրարու հակառակ
եղող երկու կողմնակցութեանց աս անբնական միա-
բանութիւնը՝ երկուքին համար ալ գործնական շահ ու-
նեցաւ : Գիմադրականաց կեդրոնը կամ գլխաւոր միու-
թեան կէտը կը կացուցանէին Գաղղիայի հին կողմնա-
կիցները . որոնց ազդեցութիւնն անով աւելի մեծցաւ,
որ Գաղղիայի եկեղեցականք մեծ առաւելութիւն ստա-
ցած ըլլալով, ուր որ Բեղզիայիները կառավարութե-
նէն շատ նեղութիւն կը կրէին, աս վերջինները սկսան
Գաղղիայի իշխանութեան բաղձալ : Իրզք ալ մեծ էր
կառավարութենէն իրենց եղած բռնութիւնը, մա-
նաւանդ ուսումնարանաց նկատմամբ : Թագաւորը Պրիւս-
տելի, Վէնդի (Վանի), Լիւզգիխի (Լիէժի) ու Լալա-
նիայի համալսարանները նորէն հաստատեց . բայց որով-
հետեւ եկեղեցականաց ձեռքը տալ չէր ուզեր եւ ոչ
ալ կրնար բաղձացածին պէս հոլանտացընել, անոր հա-
մար գերմանական ուսուցիչներ գրաւ, որոնց խորունկ
գիտութեամբն իբր թէ Բեղզիացիները խաբել կ'ու-
զէր : Սակայն իր նպատակին չկրցաւ հասնիլ, մէյ մ'որ
աս բանս միայն Բեղզիա ըբաւ՝ եւ ոչ թէ Հոլանտա
ալ . գարձեալ եկեղեցական կողմնակցութիւնը բոլորո-
վին եւ իրաւամբ գրգռեց համալսարանները գրուելու
գերմանացի ուսուցիչներն ընտրելու գործքը Հայտել-
պերկի Պօզոս անուն եկեղեցական խորհրդականին յանձ-
նելով, որն որ բողոքական ըլլալէն զատ՝ յայտնութիւ-
նը կ'ուրանար, եւ նոյն միջոցին Քրիստոսի վարքը կը

Տրտարակէր, որուն մէջ Կենարարին հրաշքները իբրև խորէական ու շինծու գործքեր կը նկատէր: Գիմամ գրականը ասոր վըստ ձայներնին ան աստիճանի բարձրացոցին, որ թագաւորը ստիպեցաւ Հ. Կ. Կ. հետ կրօնական գաշինք գնել (1827), որուն նայելով, պզտիկ կղերանոցները՝ տէրութեան հոկոզութենէն գուրո կ'ելլէին ու եկեղեցականաց կը յանձնուէին:

105. Յեղափոխութեան նախընթաց դէպքերը: Խաղաւորին ամէն մէկ պզտիկ զիջողութիւնը գիմամգրականաց քաջալերութիւնը կ'ուերջընէր, վասն զի կամ տկարութենէ եւ կամ խարդախութենէ յառաջ եկած կը սեպէին: Գիմամգրականը երթալով աւելի կը զօրանային. իրենց ամենամեծ զօրութիւնը՝ եկեղեցականաց ու ազատականաց մէջ եղած միաբանութենէն կը ծագէր. իսկ ազատականը՝ իրենց կարծեկիցներուն Գաղղիայի մէջ զօրանալով՝ կը զօրանային: Պիւստէլ՝ պզտիկ Փարիզ կը կոչուէր. Գաղղիայէն մերժուած հասարակապետականներուն ու Նաբոլէոնեաններուն շատերը հոն կը ժողովուէին: Գաղղիա տպագրուիլ չկրցած բաները՝ հոն կը տպուէին. բովանդակ Եւրոպայի աբժգոհներուն կրակեազը հոն էր: Այսպիսի գրգռութեան մէջ գանուող քաղաքին վըստ կառավարութիւնն ըստ պատշաճի հոկոզութիւն ալ չէր ըներ. թագաւորը խիստ քիչ աստն հոն կը կենար՝ ժամանակին մեծագոյն մասը Հասկ կ'անցընէր. նաեւ զինուորական զօրութիւնը քիչ էր: Գիմամգրականը իրենց ստացած զօրութեան վըստ վստահելով, ընդհանուր կարգաժողովոյն մէջ աղմկալից կերպով խնդրեցին որ տէրութեան պաշտօնները Բեղդիացոց ու Հոլանտացոց հաւասարապէս արուի, նոյնպէս պատգամաւորաց ընտրութեան օրէնքը տէրութեան երկու մասին մէջ հաւասար ըլլայ. ինչու որ քառասուն մեծ պաշտօնատեարց եւ երեսունուերկու դեսպանաց ու հիւպատոսաց մէջ՝ հազիւ երկ'երկու Բեղդիացիք կը գանուէին, եւ ուր որ Հոլանտայի մէջ 41,000 հոգւոյ՝ մէկ պատգամաւոր կ'իյնար, Բեղդիայի

մէջ՝ հազիւ 70,000 հոգւոյ մէկ պատգամաւոր կու գար : Ասկից զատ, գիմագրականք՝ կրօնական դաշանց ճշգիւ կառարուիլը, մամուլի ազատութիւն, պաշտօնէից պատասխանատուութիւն եւ ուրիշ ասոնց նման ազատութիւններ կը պահանջէին : Թագաւորն այս ամենայն տեսնելով, ոկսաւ քիչ մը վախ զգալ ու անդի տալ : Բայց նոյն (1829) տարին Բեղգիա բրած ճամբորդութեամբ ամենայն ինչ տակնուվրայ եղաւ : Բեղգիացիք ցուցնելու համար որ գիմագրութիւննին իր անձին չէ, հապա իր կառավարութեան, զինքն արտաքոյ կարգի պատուով եւ ուրախութեան նշաններով ընդունեցան : Թագաւորն ասով խաբուեցաւ, կարծելով թէ գիմագրութիւնը սակաւաթիւ անձինքներու գործքն է, եւ ժողովրդեան մեծ մասն իր կողմն է : Աս իր սխալ կարծիքը Լիւդգիխի մէջ հրապարակաւ ալ յայտնեց, ըսելով թէ հիմայ կը տեսնեմ որ բոլոր եղած աղմուկը քանի մը հոգւոյ գործք է եղեր, որոնք իրենց առանձնական շահերը իբրեւ հասարակաց բաղձանք կ'ուզեն ցուցնել : Ասկից ամօթալի բան է, անպատիւ վարմանք է : Նոյն խօսքերը ստասիկ գէշ ազդեցութիւն ըրին : Ինչպէս որ երբեմն Հոլանտացիք՝ Սպանիացւոց դէմ ելած ժամանակնին՝ Մուրացիկ նախատական անունը իրենց պարծանաց անուն բրած էին (Հատ. Ա. 91), նոյնպէս հիմակ ալ Բեղգիացիք անպատիւ անունն ըրին : Շատ կողմեր գրամապատկերներ տպուեցան՝ Հասարքի՛ միւկե՛ր ցանդարու՛միւն բառերով, եւ ամէնքը սկսան վրանին կրել : Ասկից զատ՝ կարգաժողովը նորէն գումարուած ատեն (Հոկտ.), Թագաւորն իր սխալ ըմբռնման համեմատ՝ Բեղգիացւոց դէմ մեծ խստութեամբ վարուելու սկսաւ, գիմագրականաց սւ իրենց լրագրաց բանեցուցած լեզուէն դառնանալով, նոյն ժողովոյն սաստիկ ու սպառնալից գեոպանագիր մը տուաւ, պաշտօնեայք ալ բոլոր ան պաշտօնատէրները վար առին՝ որոնք կառավարութեան դէմ քուէ տուած էին : Աս կերպով գրգռութիւնը միշտ աւելի սաստկացաւ,

անդ անդ մասնական շփոթութիւնք ալ պատահեցան : Բայց կառապարութեան հաստատուն կենալով՝ վերջապէս դիմադրականք յոգնեցան . անանկ որ բնականուր կարգաժողովոյն գոցուելու ատենը (1830, Յունիս 2) Բեղգիացիք բարոյապէս յաղթուած կ'երեւային :

106. Պրիւստէի յեղափոխութիւնը : Ա՛յ վեճակին մէջ էր Բեղգիա՝ երբ որ Գաղղիայի մէջ Յուլիոս յեղափոխութիւնը փրթելով, դիմադրականաց ակնկալութիւնները կենդանացուց : Տը Բողդէր, որն որ ազատականաց ու եկեղեցականաց մէկանդ միանալուն գլխաւոր գործիքն եղած, եւ վերջին ատենները պատահող շփոթութիւններուն պատճառաւ պըստրուած էր, նամակով մը թագաւորին խրատ կու տար որ Բեղգիացոց պահանջումները կատարելով, յեղափոխութեան մը սկսելուն առջեւն առնու : Թագաւորը՝ ինչպէս կրնար ենթադրուիլ՝ պատասխան չտուաւ, եւ ամենեւին վախ կամ տկարութիւն ցուցընել չուզեց : Քանի մը շաբաթ հանգարութեամբ անցաւ, թէեւ Գաղղիացիք գըտնուեցան, որ Փարիզէն Պրիւստէյ գացին՝ յեղափոխութիւն հանելու համար : Նոյն օրերը թագաւորին ծնընդեան տարեդարձը եւ միանգամայն իր Մարիամ ազջրկան հարսանեաց հանդէսը պիտի կատարուէր (1830, Օգոստ. 25), որն որ Պրիւստէյիք ուզեցին յեղափոխութիւն հանելու գործածել, եւ մինչեւ պատերուն վրայ կպցուած յայտարարութեամբ ալ յառաջուրնէ ծանուցին : Եւ թէպէտ կառավարութիւնը ուրիշ հանդէսները խտիանեց, բայց թող տուաւ որ թէւատրոնի մէջ Բողդիլիէ համբը ներկայացուի, որուն նիւթը՝ յաջողուած յեղափոխութիւն մ'ըլլալով, յեղափոխական կիրքերը գրգռելու միակ միջոցն էր : Իրօք ալ խաժամուժը նոյն գիշերը պաշտօնական լրագրոյն տպարանը դիմեց, մամուլները խորտակեց ու գինւոյ շտեմարանն աւարեց : Ասով գրգռութիւնն աւելի սաստկանալով, սոսիկանութեան վերակացուին տունն ու արդարու-

Թեան պաշտօնէին պալատը յարձակեցաւ, աւրեց, կոզապտեց, խորասակեց, կործանեց: Երկրորդ առտու խել մը քաղաքացիք խնդրեցին որ ազգային պահակապանք դրուին, որպէս զի ժողովրդեան ու զինուորաց իրարու հետ զարնուիլն արգելուի եւ կարգաւորութիւնը հաստատուի. բայց նոյնը չգործադրուած՝ ժողովուրդն ու զօրքը մէյ մը սաստիկ զարնուեցան, որուն վրայ զինուորներուն հրամանն եղաւ զօրանոցները քաշուելու: Հետեւեալ գիշերն ալ խել մը բանուորներ մեծ գործարաններու վրայ յարձակեցան, մեքենաները կոտրեցին ու աւրեցին: Հագիւ յեղափոխութեան երրորդ օրը (Օգոստ. 27) ազգային պահակապանք մայրաքաղաքը հանդարտեցուցին՝ շատ հեղ ժողովրդեան վրայ կրակ ընելէն ետեւ: Բայց իրենց գլուխն անցնող Պարոն Հօսկվորազ Թէպէտ մէջ կողմանէ անիշխանութիւնը կը զուպէր, սակայն մէկալ կողմանէ ալ կառավարութեան դիմացը հաստատուն դիրք մը կը բռնէր: Նոյն միջոցին Թուղթ մը տպուեցաւ, որուն մէջ Բեղգիացոց բաղձանքները կամ պահանջումները կը յայտնուէին: Յեղափոխութեան երկրորդ օրը (Օգոստ. 26) քաղաքային խորհրդարանին վրայ Պրատանդի հին երեքգունեան (կարմիր - նարնջագոյն - սեւ) դրօշը կանգնուած էր՝ իբրեւ անկախութեան նշան. բայց Բեղգիային՝ Հոլանտայէն բաժնուելուն վրայ խօզք չկար, եւ շատերը կը բողոքային ու կը յուսային որ իրենց արդար պահանջմանց կատարմամբն ամէն բան կարգի կը դրուի: Սակայն երկու կողմանէ ալ կիրքերը գրգռուած ըլլալով, ասոնց ակնկալութիւնը պարապ ելաւ: Առուասէր ժողովուրդը, որ Հոլանտացիները մահուչափ կ'ատէր, եւ ազգային պահակապաններուն իրեն դէմ կուռելուն վրայ ազգայ կը կրճատէր, չէր կրնար այնչափով գոհ ըլլալ. մանաւանդ որ գաւառներուն ժողովուրդներն ալ մեծ քաղաքներուն մէջ շփոթութիւններ հանելէն ետեւ՝ մեծ բազմութեամբ Պրիւստէլ կը գիմէին, որպէս զի հոնտեղը յեղափոխութեան յարթօղ ըլլալուն օգնեն:

107. Թագաւորն ու թագաժառանգը: Ասոնք եղած ասեն՝ Պրիւստէլի քաղաքացիներէն քառասուն հոգի մէջներնին ժողովք կազմելով, թագաւորին պատգամաւորութիւն խաւրեցին, աղաչելու համար որ ժամանակին պարագայից զիջանի եւ այնչափ ատենէ վեր խնդրուած բաները Բեղգիացւոց շնորհէ: Թագաւորը պատասխանին մէջ ըսաւ թէ իրենց պահանջումները սահմանադրութեան դէմ են. ինք նոյնին վրայ կը յենու եւ սպառնալիքներէ չիվախնար: Բայց խնդիրքնին մէկէն բոլորովին մերժած չերեւալու համար՝ որոշումն ընդհանուր կարգաժողովոյն թողուց: Նոյն միջոցին իր թագաժառանգը՝ Օրանիայի Գուլիելմոս իշխանը Պրիւստէլ խաւրեց, որ Բեղգիացւոց հետ բանակցի: Աս իշխանը նոյն մայրաքաղաքը չմտած՝ Բեղգիացւոց մեծերէն մէկ քանի հոգի իրեն կանչելով, խոստացաւ որ իր հօրը միջնորդ կ'ըլլայ եւ ձեռքէն եկածը կ'ընէ անոնց բաղձանքները կաւարել տալու համար: Պրիւստէլ մտնելէն ետեւ ալ հաւանութիւն ցուցուց Բեղգիացւոց խընդիրքին, որոնք կ'առաջարկէին որ Բեղգիա՝ օրէնսդրութեան ու վարչութեան կողմանէ՝ Հոլանտայէն բաժնուի, անանկ որ երկու երկիրները զատ խորհրդանոց եւ զտա պաշտօնարան ունենան, եւ միայն մէկ թագաւորի տակ ըլլան (Սեպտ. 3). բայց որովհետեւ միայն իր հաւանութեամբը ամենայն ինչ չէր լմըննար, անոր համար Հաակ գնաց՝ որպէս զի հայրը հաւանեցընէ: Իր Փրեզերիկոս եղբայրն ալ, որն որ զօրքով եկած՝ մայրաքաղաքէն դուրս կեցած էր, Անդուերբիա քաշուեցաւ: Ասանկով Պրիւստէլ քիչ մը ժամանակ հանդարտեցաւ: Իսկ թագաւորն աս անգամ ալ առանց միաքր կատարեալ յայտնելու, խնդիրը դարձեալ ընդհանուր կարգաժողովոյն ձգեց, որն որ մէկ քանի օր ետքը Հաակի մէջ բացուեցաւ (Սեպտ. 15): Հոլանտայի ժողովուրդն ընդհանրապէս կը բաղձար որ Բեղգիա վերոյիշեալ կերպով՝ Հոլանտայէն բաժնուի, մինչեւ Ամստերդամցիք աղաչանաց թղթով նոյնը խնդրեցին: Բայց

Հսրանտական պատգամաւորը, որոնք թագաւորին անհաճոյ չըլլալու համար՝ իրմէ յառաջ չէին ուզեր նոյն որոշումն ընել, յայտնեցին որ ընդհանուր կարգաժողովոյն մէջ չեն ուզեր Բեղզիայի աստատմութեան վրայ խօսիլ, քանի որ Բեղզիացի պատգամաւորք ներկայ են:

108. Գաւառներուն եւ մայրաքաղաքին մէջ եղած կռիւները: Հոլանտացիք կը յաղթուին: Արիւմայրաքաղաքներուն մէջ ասոնք եղած ատեն, Բեղզիային ամէն կողմերը ժողովուրդը զէնք առնելով եւ շատ մը Գաղղիացիք գալով իրենց հետ միանալով, բովանդակ երկիրը սաստիկ զրգուլթեան մէջ ինկաւ, եւ շուտ մը շինթութիւնք ալ սկսան: Ալեգզիխի խաժամուժը ոտք ելլելով, թագաւորական զօրաց հետ զարնուելէն ու զանոնք մերժելէն ետեւ (Սեպտ. 15, 16), իեւ մը մարդիկ Պրիւտուէլ գացին: Հոն ալ տեղացի խաժամուժին հետ միացած՝ ազգային պահակապանները զինաթափ ըրին, բոլոր զէնքերու մթերքներն ու հրապարակական շէնքերը ձեռք անցուցին (Սեպտ. 20): Հետեւեալ օրը Փրեդերիկոս իշխանը՝ ըստ մասին անիշխանութենէ վախցող չափաւորեալ Պրիւսսէլքիներէն յորդորուած՝ յայտարարութիւն մը հրատարակեց, որուն մէջ կը զրուցէր թէ իր զօրքերը ներս պիտի խաթէ, եւ թեթեւ դիմադարձութիւնն իսկ սաստիկ պատժելու կը սպառնար: Բայց յայտնի է որ ժողովրդեան կիբքերը սպառնալիքներով աւելի կը սաստկանան՝ քան թէ կը հանդարտին: Չանգակները զարնուեցան, նոր քարակոյտներ շինուեցան, մինչեւ զինաթափ եղող ազգային պահակապանք սկսան քաղաքին պաշտպանութեան համար աշխատիլ: Իշխանն ալ իր սպառնալիքն ի գործ դնելով, զօրքով Պրիւտուէլ վրայ յարձակեցաւ. բայց կարծածէն աւելի դիմադարձութիւն գտնելով, երեք օրուան կռուով՝ հաղիւ քաղաքին մէկ քանի կողմերուն կրցաւ տիրել (Սեպտ. 23—25): Հետեւեալ օրը (Սեպտ. 26) երկու կողմանց մէջ սաստիկ արիւնահեղ կռիւ մ'եղաւ,

շատ աներ պրեզան եւ նոյն իսկ թագաւորական պալատար վաանդի մէջ ինկաւ: Աերջապէս իշխանը մէկ կողմանէ՝ սպասած նոր գնդերը չընդունելով, մէկալ կողմանէ ալ իմանալով որ գաւառներէն զինեալ բազմութիւնք վրան կու գան, նոյն գիշերը զօրքերովը քաղքէն դուրս ելաւ: Ստուգիւ ալ գաւառներուն մէջ ժողովուրդը ոտք ելլելով, Հոլանտացի զօրքերը շատ քաղաքներէն կը մերժէր, Պրիւսսէի վրայ քալողները ետ քաշուելու կը ստիպէր, եւ անհնարին բազմութեամբ հոն իր հայրենակցաց պաշտպանութեան կը դիմէր: Ասանկով Հոլանտացւոց ձեռքը՝ հազիւ Անդուերթիա (Անվէր), Մասգրիխտ, Մեխէլն (Մալին), Տենտերմոնտ, Աանլու եւ Կենդի ամրոցը մնացած էր: Ամէն գի ալ Բեղգիացի զօրքերը Հոլանտացիներէն բաժնուած ու իրենց հայրենակցաց կողմն անցած էին:

109. Բեղգիացիք իրենք զիրենք անկախ կը հրատարակեն: Օրանիայի իշխանն ու Բեղգիացւոց ազգային համաժողովը: Ընդհանուր կարգաժողովն յեղափոխութեան պաշտի յառաջանալը տեսնելով, որոշեց որ Բեղգիա օրէնսդրութեան ու վարչութեան նկատմամբ Հոլանտայէն բաժնուի (Սեպտ. 29): Բայց ի՞նչ օգուտ, բանը բանէն անցած էր. Բեղգիացիք իրենց յաղթութեանց վրայ վստահացած՝ ալ չէին ուզեր հաշտութեան խօսք լսել: Արդէն Հոլանտական զօրաց Պրիւսսէլէն ելած օրը՝ Տը Բագգէր հոն մտած ու առժամանակեայ կառավարութեան մը գլուխն անցած էր, որն որ քանի մ'օր ետքը Բեղգիայի անկախութիւնը հրատարակեց (Հոկտ. 5), սահմանադրութիւնը շինելու համար մասնաժողով մը գրաւ, եւ որոշեց որ Պրիւսսէի մէջ ազգային համաժողով մը գումարուի: Աս համաժողովոյն համար անմիջապէս ընտրութիւնք սկսան ըլլալ եւ ըստ մեծի մասին չափաւորեալ անձինք ընտրեցան: Ասով կ'ուզէին Բեղգիացիք թէ ներքին հանդարտութիւնը պահպանել ու անիշխանութեան չարիքները խափանել, եւ թէ միանգամայն իրենց պահ-

պանողական դիտմանց վրայ օտար տէրութիւններուն ապահովութիւն տալով, անոնց ընդունելի ընել Բեղգիայի անկախութիւնը: Իսկ Օրանիայի իշխանը՝ որն որ վերջին օրերը Անդուերբիա գալով, իբրեւ Բեղգիայի առանձին վարչութեան գլուխ կամ խնամապետ՝ միջնորդութեան փորձ մը փորձած եւ առժամանակեայ կառավարութենէն մերժուած էր, աս չափաւորեալ անձանց ընտրութիւնը անսնելով, ակնկալութիւն ունեցաւ որ գուցէ անոնց ձեռքովն իր դիտածը գլուխ կրնայ տանիլ: Անոր համար յայտարարութիւն մը հանեց (Հոկտ. 16), որուն մէջ Բեղգիա իբրեւ անկախ տէրութիւն կ'ընդունէր, ինք զինքը շարժման գլուխը կը դնէր, եւ իբր թէ անանկ կը ձեւացնէր որ նաեւ իր հօրը կամացը դէմ՝ Բեղգիական յեղափոխութիւնը կ'ուզէ յառաջ տանիլ: Բայց աս յայտարարութիւնն իրեն ամենեւին օգուտ չընելէն զատ՝ շատ ալ վնաս առաւ: Որովհետեւ Բեղգիացիք մտածեցին որ եթէ իրօք իր հօրը կամացը դէմ կը գործէ, անհնազանդ ու ապստամբ որդի մըն է, որուն հետեւելով՝ իրենց դատն անարգ կ'ընեն. իսկ եթէ անոր գաղտնի խորհրդովն է, միտքն ուրիշ բան չիկրնար ըլլալ՝ բայց եթէ զիրենք առ ժամն հանդարտեցընել, որպէս զի ետքէն դիւրաւ զսպէ: Անոր համար առժամանակեայ կառավարութիւնն իրեն պատասխան տուաւ, որ անկէ ետեւ Բեղգիայի իրողութեանց մէջ չխառնուի (Հոկտ. 18). որմէ քանի մ'օր ետքը իշխանը Անդուերբիայէն տրամութեամբ ելաւ, եւ քիչ մը վերջը Անգղիա գնաց: — Նոյն միջոցին գաւառներուն մէջ կռիւն ու շփոթութիւնը կը շարունակուէր թէ Հոլանտացւոց հետ եւ թէ չափաւորականաց ու խաժամուժին մէջ. Հոլանտացիք իրենց ձեռքն եզոյ տեղերը հնազանդեալ կը կորսնցընէին:

110. Բեղգիա ինքնագլուխ սահմանադրական միապետութիւն կ'ըլլայ: Բեղգիացիք աս կերպով իրենց գրեթէ բոլոր երկիրը Հոլանտացիներէն մաքրելէն ետեւ, Պրիւստելի մէջ ազգային համաժողովը գումար-

րեցին (Նոյ. 10): Նոյնը բացառն եղաւ Տը Բողգէր՝ իրբեւ առժամանակեաց կառավարութեան գահերէց, որմէ անմիջապէս ետքը համաժողովը զինքը մեկդի ձգելով, իրեն գահերէց ընտրեց Սիւրբէ աը Շպքիէ անունով հարուստ երկրատէրը, որն որ խիստ չափաւորեալ կարծեաց տէր մէկն էր: Բեղգիային Հոլանտայէն բաժնուած ըլլալն իբրեւ հիմ գրուած ըլլալով, համաժողովոյն ամենէն յառաջ մտածելիքն ան էր՝ որ իրենց հայրենիքն ինչ կերպարանք պիտ'որ առնու, կամ ինչ տեսակ կառավարութիւն պիտ'որ ունենայ: Աս նիւթոյն նկատմամբ՝ երեք գլխաւոր կարծիք կար. ոմանք կ'ուզէին որ Բեղգիա Գաղղիայի հետ միանայ եւ անոր ամբողջադուցիչ մասն ըլլայ, ոմանք կը բաղձային որ անկախ հասարակապետութիւն մը ձեւացընէ, վերջապէս ոմանք կ'ուզէին որ ինքնագլուխ սահմանադրական միապետութիւն մը գառնայ: Արդէն յայտնի էր որ վերջին կարծիքը յաղթող պիտ'որ ըլլայ, չէ թէ միայն անոր համար որ համաժողովոյն անգամաց խիստ մեծագոյն մասն այնպէս կ'ուզէր, հասցա միանգամայն անոր համար որ ասիկայ ամենէն աւելի գիւրաւ գլուխ տարուելու կերպն էր: Աս պատճառաւ հասարակապետութեան կողմնակիցները գրեթէ չկրցան իրենց կարծիքը պաշտպանել, որովհետեւ ամէնքը յայտնի կը տեսնէին որ Եւրոպական տէրութիւնք աս բանիս երբեք չեն հաւանիր, եւ Բեղգիական հասարակապետութիւն կանգնել ուղելը՝ իրենց անկախութիւնն իրենց ձեռքովը կորսընցընել է: Իսկ Գաղղիական կողմնակցութիւնը միայն անոր համար իր կարծիքը պաշտպանեց, որպէս զի Ղուգովիկոս Փիլիպպոս Բեղգիայի անկախութեան կողմը վաստըկուի. վասն զի աղէկ գիտէր որ թէեւ համաժողովը Բեղգիային Գաղղիայի հետ միանալը վճռէ, խահմութիւնը թող չիտար որ նոյն վեհապետն աս բանիս հաւանի: Ուստի համաժողովը միտքան Բեղգիայի անկախութիւնը վճռելէն ետեւ (Նոյ. 18), որոշեց որ նոյն անկախ տէրութիւնը՝ միապետութիւն ըլլայ (Նոյ. 23),

Տեսեալ օրն ալ վճիռ տուաւ որ Նասաւ - Օրանեան ցեղը՝ նոյն միապետութեան գահը շիկրնար ելլել: Բանը կը մնար գահ ելլելու իշխանին ընարութեան վրայ. բայց աս նիւթին վրայ շխտած, պէտք է որ մտադրութիւննիս գարձընենք մեծ տէրութեանց՝ Բեղգիայի նկատմամբ բռնած ընթացքին վրայ, եւ նոյնին պատճառներն ու հետեւութիւնները տեսնենք, որն որ ի հարկէ կ'ենթադրէ լեհական յեղափոխութեան ալ պատմութիւնը:

111. Լեհաստանի սահմանադրութիւնը եւ նոյնին անպատշաճութիւնները: Լեհաստանի թագաւորութիւնը՝ վիէննայի արքայաժողովոյն քանի մը դորձքերուն պէս՝ անընական բան մըն էր, որն որ ժամանակին պարագաներուն ստիպմանէն, եւ իրարու հակառակ եզոզ շահերն ըստ կարելոյն միաբանելով՝ նորահաստատ խաղաղութիւնը գոնէ առ ժամն շարելու բաղձանքէն յառաջ եկած էր: Նոյն միապետութիւնը՝ դժուարաւ կրնար լեհաստան կոչուիլ, վասն զի յառաջուան լեհական պետութեան հազիւ մէկ պզտիկ մասը կը բովանդակէր. եւ ոչ ալ թագաւորութիւն կրնար ըսուիլ, որովհետեւ իրզք Ռուսական կուսակալութիւն մըն էր: Ուստի եւ նոյն երկրին՝ լեհաստանի թագաւորութեան անուն տալով եւ անկախութեան երեւոյթ մը ձգելով, լեհաց սրտին մէջ անպտուղ բաղձանք մը զրգռեցին՝ լեհաստանի բովանդակ հին պետութիւնը նորէն կանգնելու եւ յառաջուան կատարեալ անկախութիւնը գարձեալ ձեռք բերելու: Աւելի եւս անյարմար էր Աղէքրանդը կայսեր՝ նոյն երկրին տուած սահմանադրութիւնը, որն որ Գաղղիական սահմանադրութեան վրայ ձեւուած էր, ոչ ազգին կը յարմարէր եւ ոչ ալ արձակապետական կայսեր մը: Լեհաստանի ընակիչները՝ հպարտ ու անմիաբան ազնուականներէ եւ խոր նուաստութեան մէջ ինկած ու ազնուականաց գերի եզոզ գեղացիներէ կը կազմուէին: Աս երկու կարգերուն մէջտեղը կարգաւորեալ քաղաքացւոց կարգ չէր

գտնուեր, հապտ ըստ մեծի մասին Հրեաներէ ձեւացած խառնուրդ մը, որն որ ազնուականներուն՝ բարձր տոկոսեզք ստակ փոխ կու տար, իսկ գեղացւոց՝ օղի խմցրնելու համար մինչեւ վերջին դանկը կը յափշտակէր: Արդ անանկ ազգի մը ինչպէս կրնար յարմարիլ անանկ սահմանադրութիւն մը, որն որ գլխաւորաբար քաղաքացւոց կարգին վրայ հիմնուած պէտք է ըլլալ: Բայց թէեւ նոյն ժողովուրդը սահմանադրութեան յարմար ըլլար, Ռուսի կայսրը դժուարաւ կրնար թողուլ որ իր բացարձակ իշխանութիւնը նոյնով կապուի. չէր կրնար իրեն հպատակող մէկ գաւառին սահմանադրութեան կապուիլ, որովհետեւ ասով մէկալ գաւառներուն բնակչաց ալ բաղձանքը կը գրգռուէր:

112. Յեղափոխութենէն յառաջ Լեհաստանի ունեցած վիճակը: Առաջին անգամ ինչպէս ըլլալով, Լեհաց սահմանադրութիւնը չէր կրնար հաստատուն պահուիլ: Իրզք ալ նոյնին որոշմանց դէմ՝ Լեհաստանի մէջ Ռուս զօրքեր կը կենային, զինուորական մասնաժողովներ դատաստան կ'ընէին ու կը պատժէին, խորհրդանոցին նիստերը հրապարակաւ չէին ըլլար, ելեւմտից գրոյն վրայ խորհրդանոցն ամենեւին տեղեկութիւն չէր ունենար, բազմաթիւ Ռուսք պաշտօններու կ'անցընէին. իսկ մամլոյ ազատութեան եւ ոչ իսկ երեւոյթը կար: Լեհք աս ամէն բաները մեծ տհաճութեամբ կը տեսնէին, եւ աս տժգոհութեան սաստկանալուն աւելի առիթ կ'ըլլար իրենց կուսակալ Արստանդին մեծ իշխանին անձնակախ բնաւորութիւնը, որն որ ազնուատոհմ՝ Լեհերն ու մեծ պաշտօնակալներն իսկ մարմնոյ պատժոյ տակ կը ձգէր: Իր օրինակին հետեւելով՝ բարձրագոյն պաշտօնակալք խոնարհագոյնները կը ծեծէին, իսկ հասարակ զինուորներուն հետ աւելի խրատութեամբ վարուելէն զատ, շատ անգամ ուտելիքի եւ զգեստի կարօտութեան մէջ կը ձգէին: Այսպէսով բոլոր զինուորականք խիստ տժգոհ էին: Իսկ քաղաքական կարգի մարդիկ շատ կը նեղուէին Ռուսի ոստիկա-

նութենէն ու լրտեսներէն: Լեհք բնութեամբ ապարիւն, զուարթ ու շատախօս եւ երկայն ժամանակէ վեր անիշխանութեան վարժած ըլլալով, դժուարաւ կրնային իրենց խօսակցութեան վրայ հսկել. բայց ամէն մէկ անգոյշ խօզքին հետեւութիւնը կամ բանտարկութիւն էր եւ կամ Սիպերիա քշուիլ: Լեհաստանի տժգոհութեան ուրիշ մէկ պատճառն ալ էր սահմաններուն գոցուիլը: Արդէն Աղէքսանդր կայսրը մեծ պատերազմներէն ետեւ նոյնը հրամայած էր՝ Ռուսիայի ճարտարութիւնը ծաղկեցընելու համար. իսկ Նիկողայոս կայսեր ժամանակը աս կարգադրութիւնը շատ աւելի աստակացաւ: Եւ աս բանը՝ ամէն տեղերէն աւելի նեղութիւն կը պատճառէր Լեհաստանի պէս սահմանական երկրի մը: Ուստի Լեհք ընդհանրապէս իրենց զրոնուած վիճակէն տժգոհ ըլլալով, կ'ուզէին որ նոյնը փոխուի. բայց աս փոփոխութեան միջոցներուն վրայ մէջերնին միաբան չէին, հապա երեք գլխաւոր կողմնակցութիւն կը բաժնուէին: Առաջինը՝ Դեսպանագիտականաց կողմնակցութիւնն էր, որն որ իր ակնկալութիւնը քաղաքական դիպուածներու վրայ դնելով, կը կարծէր որ անոնց պատահելուն սպասելու է, որպէս զի օտար տէրութիւններէն օգնութիւն գտնուի: Աս կողմնակցութեան գլուխն էր Ադամ Չարդորիպի իշխանը, որն որ յոյսը մինչեւ Լեհական թագը կը ամենէր: Երկրորդն էր Սահմանագրականաց կողմնակցութիւնը, որն որ կը համարէր թէ պէտք է ժողովուրդը սահմանադրական կենաց վարժեցընելով եւ հետզհետէ նորոգութիւններ խօթելով, Լեհական ազգայնութիւնը զօրացընել: Աս կողմնակցութեան առաջնորդներն էին Արադիուալ Օսդրովիչի կոմսը, Նիեմոյեւսքի եղբարք եւ ուրիշ պատգամաւորք: Երրորդ կողմնակցութիւնն էր Յեղափոխականաց, որոնք ոչ օտար տէրութեանց վրայ ակնկալութիւն եւ ոչ ժողովրդեան կամաց կամաց կրթութուելուն յոյս ունէին, հապա ամենայն ինչ յեղափոխութեամբ գլուխ ամսիլ կ'ուզէին: Ասոնց գլխաւոր-

ներուն մէջ խել մը պաշտօնակալք ալ կային, որոնք մեծապէս ջանք կ'ընէին բանակին իրենց կողմը վասարկելու:

113. Յեղափոխութեան պատրաստութիւններն ու սկզբնաւորութիւնը: Յեղափոխական կողմակցութիւնը խել մը ժամանակէ վեր իր գործունէութիւնը սկսած էր, եւ իր նպատակին հասնելու համար՝ ամենեւին մէկ շարագործութենէ ետ չէր քաշուեր: Իրզք ալ իր առաջին գործողութիւնը՝ սարսափելի եզեռագործութիւն մը պիտ'որ ըլլար, զորն որ բարեբախտութեամբ չկրցաւ գլուխ տանիլ: Խել մը երիտասարդք դաւակցութիւն մը կազմեցին, որ Նիկողայոս կայորը՝ հանդիսութեամբ Լեհաց թագաւոր պսակուելու համար՝ Վարսաւիա եկած ատեն՝ զինքը մեռցընեն. բայց ժամանակն որ հառու, չկրցան սիրտ ընել (1829, Մայ.): Քաջալերութիւննին աւելի մեծցաւ Յուլիոսի յեղափոխութենէն ետքը, ժամանակէ կը յուսային որ Գաղղիայէն ու գուցէ Անգղիայէն ալ օգնութիւն կը գտնեն: Յուլիոսի յեղափոխութենէն անմիջապէս ետքը Նիկողայոս կայսրը պատերազմի մեծ պատրաստութիւններ տեսած էր. իր բանակներուն Լեհական ու Լիթուանեան զօրաբաժինները՝ սահմանած էր յառաջապահ ըլլալու ան բանակին, զորն որ յեղափոխութեան գէժ պատերազմի պիտի հանէր, եթէ Գաղղիայէն դուրս տարածուէր եւ Լուգովիոս փիլիպպոս նոյնը չճնշէր: Գաղղիա եւ Անգղիա աս բաներն իմանալով, բնական էր որ ուզէին Նիկողայոս կայսեր պատերազմի բաղձանքը՝ նոյն իսկ իր երկրին սահմաններուն մէջ փակել: Իրենք թէեւ Լեհաստան անկախ ընելու դիտում չունենային, ի վերայ այսր ամենայնի բանակցութեանց մէջ մեծ առաւելութիւն կը ստանային՝ եթէ Ռուսիա իր երկրին մէջ զբաղում ունենար, որով եւ իր ձայնն ազդեցութիւնը կը կորսընցընէր, վստահ չի նոյնին նեցուկ ըլլալու՝ պատրաստ սուխններ չէին գտնուեր: Արգ աս ամէն պատճառներուն համար դաւակիցք ժամանակին պարագա-

ները յարմար սեպեցին իրենց գործքին ձեռք զարնելու : Ամէն պատրաստութիւնները տեսնելէն ետեւ, քսան եւրիասասարդք իրիկունը մթննայլու ասեն՝ վարսաւիայի մէջ մեծ իշխանին պալատը յարձակեցան (1830, Նոյ. 29), որպէս զի զինքը բռնեն կամ մեռցնեն. բայց իշխանն ասենին իմացած ու պահուրտած ըլլալով, աս ձեռնարկութիւննին շտաղկեցաւ : Նոյնպէս անյաջող ելք ունեցան ձիաւոր ու հետեւակ Ռուս զօրաց զօրանոցները յարձակողներուն փորձերը : Աոր հակառակ զինանոցին վրայ եղած յարձակումը յաջողեցաւ, եւ յափշտակուած զէնքերով զինեցաւ ժողովուրդը՝ զարն որ յեղափոխականք ստատիկ գրգռած էին հաւատացրնելով որ Ռուսը Լեհաց վրայ կը յարձակին ու կը մեռցնեն, որով եւ Լեհք սկսան Ռուսաց հետ զարնուիլ : Ռուս զօրապետներէն սմանք՝ թէաարոնի մէջ, սմանք ալ իրենց բնակարաններէն ելած ասեննին սպանուեցան. եւ այսպէս ռուս զնգերն առանց առաջնորդի մնալով, հաւատարիմ ձեւացող Լեհ զօրապետներէն մատնուելով, իրենց Լեհ ընկերներէն թող տրուելով, վստահութիւննին ու քաջալերութիւննին կարսնցուցին, այնպէս որ մէկ կողմէն մէկալ կողմ կը հալածուէին : Այս ամենայն գիշերը կ'ըլլար : Երկրորդ առաւ Կստանդին մեծ իշխանը հրաման տուաւ որ զօրքերը ետ քաշուին, եւ ինք անանցմով սահմանները քաշուեցաւ : Մինչեւ նոյն ասեն տակաւին Ռուսաց հետ մնացող Լեհ զնգերն ալ՝ անկէ ետեւ անանցմէ բաժնուեցան, որով եւ բոլոր Լեհ զօրքն ու բովանդակ ազատանին յեղափոխութեան կողմն անցան :

114. Ենդափոխականք, Գետպանագիտականք ու Սահմանադրականք : Խլորիցքի հրամանապետ : Այս ամենայն Ենդափոխականաց գործքն էր, որոնք յեղափոխութեան կռիւն առանձին կռուած էին. բայց նոյնին ներքին առաջնորդութիւնը չէին կրնար իրենք իրենցմէ յառաջ տանիլ, հապա կարօտ էին Գետպանագիտականաց ու Սահմանադրականաց, որոնց մէջ էին

գրեթէ բոլոր մեծ պաշտօնատէրներն ու նշանաւոր մար-
գիկ: Ուստի եւ քիչ մը ետքը կազմուած առժամանա-
կեայ կառավարութեան (Դեկ. 4) բոլոր անդամները
(Չարգորիսքի, Օողրովքի, Բագ, Գոխանովքի, Տեմ-
պովքի, Նիեմցեւիչ) դեպքանագիտական ու սահմանա-
դրական կողմնակցութիւններէն էին, եւ յեղափոխա-
կաններէն՝ միայն Լըլեւէլ կար: Ասոնք կ'ուզէին յե-
ղափոխութիւնը դադրեցընել, վասն զի թէ որ յառաջ
տանելով՝ կայսեր նորենոր թշնամանքներ հասցընէին,
անկարելի կ'ըլլար իրենց նպատակին հասնել, որ էր՝
սահմանագրութիւնն ամբողջ նորէն հաստատել: Յե-
ղափոխական կողմնակցութիւնն առ քաղաքականու-
թիւնը կը մերժէր, համարելով որ ան ատեն Լեհք
յաղթող կ'ըլլան՝ երբ որ առանց ամենեւին նկատմունք
ընելու՝ Ռուսները կը ջնջեն, եւ Լիթաւիա, Աւստրի-
նիա, Բատորիա՝ հին Լեհական գաւառներուն վրայ յար-
ձակում ընելով, անոնց բնակիչները ոտք կը հանեն ու
իրենց հետ կը միացընեն: Բայց մէկալ երկու կողմնա-
կցութիւնք իրենց կարծեաց մէջ հաստատուն մնացին:
Խլրբիցքի ծեր զօրապետը, որն որ ռամկապետական
շարժմանց թշնամի էր, առաջին օրերը զօրաց հրամա-
նատար եղած էր: Ասիկայ անկարելի կը ռեպեր որ Լեհք
Ռուսաց հետ յաջողութեամբ պատերազմ կարենան
ընել. եւ կը կարծէր թէ բանակցութիւնները՝ որոնցմէ
միայն կը յուսար որ բան մը կրնայ յառաջ գալ, ան
ատեն կրնան յաջողիլ, երբ որ կը զսպուի ռամկապե-
տական կողմնակցութիւնը՝ որն որ շուտ մը գլուխ վեր-
ցուցած էր, եւ քաղաքական աղմկալից ժողովակնե-
րով իրերն աւելի կը շփոթէր: Ուստի Դեպքանա-
գիտականաց ու Սահմանագրականաց գլխաւորներուն
հետ միաբանելով, հրամանապետական իշխանութիւնն
յանձն առաւ, որպէս զի կարող ըլլայ անկարգութիւն-
ները վերջացընել: Առժամանակեայ կառավարութեան
անդամներն ալ բաց ի Լըլեւէլէն՝ իր պաշտօնետաներն
անուանեց:

115. Լեհաց պատգամաւորութիւնը, կայսեր պատասխանն ու նոյնին հետեւութիւնը: Լայպէտ շափաւորեալ կողմնակցութիւնը վրայ ելլելով, Խլրբիցքի Պետրոբուրգ երկու հոգի խաւրեց, որ կայսեր հետ բանակցելով՝ Լեհաստանի իրողութիւնները կարգի դնեն: Նիկողայոս կայսրը պատասխան տուաւ որ ապստամբներու հետ չիքանակցիր. եթէ Լեհք միայն հրացան մք պարպեն իր գնդերուն վրայ, որոնց հրաման տուած է Լեհաստանի վրայ քալելու, ան ատեն իրենց երկիրը տակնուվրայ կը դարձնէ: Իսկ թողութիւն տալու համար՝ հետեւեալ պայմանները դրաւ. բռնուած Ռուսներն ազատ թողաւ, Ռուս պաշտօնատէրներն իրենց տեղերը հասաատել, յեղափոխութեամբ կազմուած բոլոր պաշտօնները վերցնել, զինաանէն յափշտակուած զէնքերն ետ դարձնել, Լեհական գնդերը Բլոգի քով ժողովել որպէս զի հոն իր հրամաններն ընդունին: Գեսպանները Վարսաւիա դարձան (1831, Յունու. 15) առանց խօսք մը խօսելու Լեհաց պահանջումներուն ու Ռուսաց բանեցուցած խտաութիւններուն վրայ՝ որոնք յեղափոխութեան առիթ տուած էին: Ճամբան՝ Լեհաստանի վրայ քայող բազմութիւ գնդեր տեսած էին: Խլրբիցքի առաջարկեց որ կայսեր պայմաններն ընդունին, այս ինքն՝ հպատակին. բայց նոյն իսկ իր կողմնակիցներն աս առաջարկութիւնը մերժեցին. ժողովուրդն ալ իրեն գէժ սաստիկ դաւնացաւ: Ըսոր վրայ ինք ստիպեցաւ հրամանապետական իշխանութիւնը թողուլ. եւ թէպէտ զօրաց հրամանատարութիւնն իրեն ձգել կ'ուզէին, սակայն ինք յանձն չառաւ: Գեսպանագիրական ու սահմանադրական կողմնակցութիւններէն կազմուած նոր առժամանակեայ կառավարութիւն մը դրուեցաւ, որուն մէջ մտաւ նաեւ Լբիւհէլ. իսկ զօրաց հրամանատար եղաւ Խլրբիցքիին բարեկամը՝ Ռաճիվիլ իշխանը: Նոր կառավարութիւնը ժողովրդեան երաշխաւորութիւն մը տալու համար որ ալ Ռուսաց հետ չիքանակցիր, հաւանեցաւ զահր դա-

առիպացած հրատարակելու: Աս բանը խորհրդանոցին մէջ առաջարկեցաւ (Յունու. 29) եւ երկու սենեակներէն ալ ընդունուեցաւ. Եւրոպայի արքունիքներուն եւ ազգերուն ուղղուած յայտարարութեան մը մէջ ալ ասոր պատճառները յառաջ կը բերուէին:

116. Պատերազմին գլխաւոր գէպքերը: Օսորոյննգայի ճակատը: Ալարսուխայի մէջ ասոնք եղած առեն, Ռուսաց Տիպիչ զօրապետը 150,000ի բանակով սահմանները հասած էր: Ասոր դիմացը Լեհք 80,000 հոգի ունէին, որոնցմէ հազիւ 45—50,000 հոգի կրնային բաց գաշտի վրայ դորձածուիլ, անոնք ալ ըստ մեծի մասին երիտասարդ ու անվարժ զօրքեր էին: Նոյն պզտիկ բանակը մայրաքաղաքին մօտ աղէկ դիրք մը բռնած՝ Ռուսաց յարձակման կը սպասէր: Խլարիցքի՝ որն որ իբրեւ Ռաճիվիլին խորհրդականը՝ իրօք հրամանատարութիւն կ'ընէր, կ'ուզէր հոն քաջութեամբ ճակատ մը վաստակելով, Լեհերուն պատերազմական համբաւը հաստատել, եւ անկէ ետեւ մէյ մ'ալ խրատ տալ հպատակելու: Տիպիչ Լեհաց վրայ յարձակում ըրաւ (1831, Փետր. 25), եւ անոնց դիրքին մուտքը մէյ մ'առնելէն ու կորսընցընելէն ետեւ, նորէն առաւ ու պահեց: Լեհք պատերազմի դաշտը թող տուին ու կարգաւորեալ կերպով ետ քաշուեցան: Բրակա արուարձանին նեղ փողոցներուն մէջ շփոթութիւն փրթելով, Տիպիչ անշուշտ մեծ հետեւութիւն ունեցող յաղթութիւն մը կրնար ձեռք բերել, թէ որ Ալարսուխայի կամրջագլխոյն վրայ գիշերական յարձակում ընել համարձակէր, բայց ինք ետ քաշուելով, իբր թէ ճակատն անորոշ մնացած սեպուեցաւ: Ասոր ետեւէն եկած զինուց հանդարարութիւնը Լեհք իրենց օգտին դորձածեցին, Ռաճիվիլին տեղն անցնող Սգրժինեցքի հրամանատարը՝ նոր զօրագլուխներ գրաւ ու զօրքերը շատցուց: Քիչ մը ետքը թշնամութիւնները նորէն սկսան: Տիպիչ Ապքոէլին քովէն գէպ ի վեր կը քալէր՝ անցնելու յարմար տեղ մը գտնելու համար, բայց

աս շարժումն ըրած տանն՝ իր բանակին բաժիններն իրարմէ պնչափ բաժնեց, որ Լեհք կրցան տեղ տեղ անոնց վրայ իյնալ ու յաղթել: Լեհաց աս մասնական յաղթութիւններուն դիմացը՝ Ռուսք ալ մեծ առաւելութիւն ստացան Տվեանիցքիին դէմ: Աս զօրապետը 4000 հոգւով կը խաւրուէր, որպէս զի Ապհինիա ու Բոտոլիա գաւառները ոտք հանէ, որոնց բնակիչներն արդէն պատրաստ էին, եւ ասանկ օգնութեան կը սպասէին՝ գործքի ձեռք զարնելու համար: Բայց Ռուսաց Ռիւաիկէր զօրապետէն յարձակում կրելով, ստիպեցաւ Աւսարիայի երկիրն անցնիլ (Ապր. 18 — Մայ. 2), ուր զինաթափ եղաւ: Քիչ մը ետքը Ռուսք Օսթրոլինգոյի քով Լեհաց զլեւաւոր բանակին վրայ յարձակեցան (Մայիս 28), ուր ամբողջ օր մը կռիւ ըլլալէն ու պատերազմի գաշտը 16,000 դիակներով լեցուելէն ետքը, Լեհք ետ քաշուեցան: Սքրժինեցքի ուղեց անկէ վերջը օգնութիւն խաւրել՝ յառաջագոյն Լիթաւիա գացող զօրաց, որով նոյն գաւառին մէջ 12,000 Լեհ զինուորք եղան, որոնց նպասակն էր՝ յեղափոխութիւնը մինչեւ հին Ռուսիայի սահմանը տարածել. բայց աս արշաւանքն ալ անյաջող ելք ունեցաւ: Զօրաց մեծ մասը ստիպեցաւ Պրուշի երկիրն անցնիլ (Յուլ. 15), ուր՝ Աւսարիա եղածին պէս՝ զինաթափ եղան. միայն 4000 հոգի՝ Տեմպիսպրիի հրամանատարութեամբ՝ արտաքոյ կարգի քաջութեամբ Արսաւիա գարձան (Օգոստ. 3):

117. Արտաքին տէրութեանց վրայ ակնկալութիւն: Ներքին երկպառակութիւն: Լիթաւիայի արշաւանքին ժամանակը երկու զլեւաւոր բանակները գրեթէ բոլորովին անգործութեան մէջ մնացին: Տիպիչ չէր կրնար ձեռնարկութիւն մ'ընել, որովհետեւ իր զօրքին գրեթէ կէոր կորսընցուցած էր, ասկից զստ՝ կերակրեղինաց պահատութենէն, հիւանդութիւններէ եւ առանձինն մտղձայուղէ խիստ մեծ նեղութիւն կը կրէր: Ա երջապէս ինքն ալ նոյն հիւանդութեան զոհ

եղաւ ան միջոցին՝ երբ որ կայսրն իր մինչեւ նոյն ատենն ձեռք բերած թեթեւ յաջողութիւններուն վրայ ատգաճ ըլլալով, որոշած էր զինքն աստիճանէն վար առնուլ : Քիչ մը ետքը կաստանգին մեծ իշխանն ալ միեւնոյն հիւանդութեամբ մեռաւ : Իսկ Լեհք թէպէտ ոչ կերակրեղինաց եւ ոչ ազգամթերի կողմանէ նեղութիւն կը կրէին եւ բանակինն օրբաօրէ կ'աճէր, բայց այնպէտով ալ պատերազմը զօրաւոր կերպով յառաջ առնելէն կ'արգելուէին, չափաւորեալ կողմնակցութեան արտաքին տէրութեանց վրայ ունեցած ակնկալութեան պատճառաւ : Նոյն կողմնակցութիւնն անորոշ խոստումներու հաւատարմով եւ խաբէական յոյսերու վրա աահանալով, այնչափ կը վախճար որոշիչ պարտութեանէ՝ որով իր առջեւը դեռականագիտական բանակցութեանց ճամբան կրնար գոցուիլ, որչափ որոշիչ յաղթութեանէ՝ որով աւակապետական կամ յեղափոխական կողմնակցութիւնը մեծ զօրութիւն ձեռք կը բերէր : Չափաւորականաց գլխաւոր յոյսը Գաղղիայի օգնութեան վրայ էր. կը յուսային որ Լուգովիկոս Փիլիպպոս՝ կամ Անգղիայի հետ միաբան եւ կամ նաեւ առանձին՝ միջամտութիւն կ'ընէ : Շատերը կը հաստատեն որ Գաղղիացւոց թագաւորը խոստացած ըլլայ Լեհերն անկախ ընելու, բաւական որ իրենց յեղափոխութիւնը տակաւին երկու ամիս գիմանայ : Ա՛րտուի նաեւ որ նոյն միջոցին շատ ջանացած ըլլայ զԱւստրիա, զԱնգղիա, զՇուէտ եւ զԲուռն իր քաղաքականութեան կողմը վաստակելու. բայց երեք առաջին տէրութեանց կողմանէ իր առաջարկութեան ընդունելութիւն չգրանելով, արդէն պատերազմի պատրաստուած Տաճիկներն ետ կեցուցած ու Լեհերն իրենց բախտին թողառած ըլլայ : Ի՛նչպէս որ է նէ, առ ստոյգ է որ Լեհք յոյսերնին արտաքին տէրութեանց եւ գլխաւորաբար Գաղղիայի ու Անգղիայի օգնութեան վրայ գնելով, ատեն վաստակելու կը ջանային, որով եւ չէին ուզեր Ռուսաց հետ զարնուիլ : Բայց զինուց հանգչելու ժա-

մանակը՝ կողմնակցութեանց կռիւը խիստ սաստկացաւ. երկպառակութիւնն ամէն կողմ մուտք գտաւ, խորհրդանոցին մէջ, պաշտօնակալներուն մէջ, զօրապետներուն մէջ: Շատ զօրապետք վերին հրամանատարը վար ձգելու կը ջանային. իրեն գէմ եղած կասկածն ու ատգոհութիւնն անո՞ղ աւելի սաստկացաւ, որ ինքն ալ միաբանեցաւ. հրապարակական իրողութեանց բովանդակ առաջնորդութիւնը Չարդորիզքի իշխանին յանձնել ուզողներուն հետ: Աս նիւթին վրայ խորհրդանոցին մէջ ալ առաջարկութիւն եղաւ, բայց պարտապակ. հակառակ կողմնակցութիւնը յայտնապէս կը զրուցէր թէ ազնուապետականք հրամանապետութիւն կ'ուզէն հաստատել, որպէս զի Ղեհաստան Ռուսաց մասնն:

118. Վարսալիայի իյնալը: Եւրո որ Լեհք կողմնակցութեանց կռիւներով ու երկպառակութիւններով ժամանակին կը կորսնցնէին, Բապրեւիչ Ռուսաց նոր հրամանատարը՝ նոր զօրքերով բանակը հասած էր (1831, Յունիս 25): Ատիկայ սզեց իր նախորդին ընտրած. Վայքսէլի աջակողմեան եզրը թող տալով՝ ձախակողմեան եզրէն մայրաքաղաքին վրայ յարձակիլ, որովհետեւ առաջին կողմը երկայն կռիւներով ամայացած ու ապականած էր, եւ միանգամայն հոնկից Ռուսք քաղաքին սաստիկ ամրացած կողման կը հանգիպէին: Եւ թէպէտ ասով Ռուսիայի հետ ունեցած հազորդակցութիւնը կը կտրուէր. սակայն աս բանն հոգը չէր բւար, վասն զի Պրուշէն՝ ուտելիք, ազգամթեր, կամբըջի նիւթեր եւ նոյն իսկ զինուորական ճարտարապետներ կրնար ունենալ: Բապրեւիչ աս իր ծրագիրը գլուխ հանեց, եւ Պրուշի օգնութեամբ գետին վրայէն անցնելէն ետեւ՝ սկսաւ Վարսալիայի վրայ քալել: Նոյն ատեն Լեհաց բանակին անգործ կենալը՝ աւժկապետականաց առթիւ տուաւ Սգրթինեցքի զօրապետն իր հրամանատարութենէն հանելու եւ նոյն պաշտօնը քանի մ'որ յառաջ ետ դարձած Տեմպինզքիին (116) տալու:

(Օգոստ. 10): Բայց ան ալ իր նախորդին հետ անձկութեամբ կապուելով, շուտ մը համարումը կորսնցուց, որով եւ այնպիսի վտանգաւոր ատեն Ղեհք առանց հրամանատարի մնացին: Քաղաքական ժողովակներն իրենց բոլոր զօրութիւնը բանեցընելով՝ խաժամուժը ուղք հանեցին, եւ գիշերանց բանտերուն վրայ յարձակելով՝ սասաիկ անազորութիւններով երեսունուերկու հոգի մեռցուցին, որոնց մէջ զօրապետներ, պաշտօնակալներ եւ ռուս տիկին մը կար (Օգոստ. 15): Աոր վրայ կառավարութիւնը հրաժարեցաւ, որով եւ բովանդակ իշխանութիւնը ձեռք տնցուց Գրուզովիէցքի զօրապետը՝ ինք զինքը Վարսաւիայի կառավար անուննել աալով. զօրաց հրամանատարութիւնն ալ քիչ մը ետքը եօթանասունուհինգ տարւան Մալխոյզբիին տուաւ: Վարսաւիա աս շփոթութեանց մէջ եղած ատեն՝ Բաղբեւիչ երթալով կը ձօտենար: Քաղաքին մէջ ուտելեաց պահասութիւնն ալ միշտ աւելի կը զգացուէր: Նոյն նեղութեան դարման տանելու համար՝ 20,000 հոգւով Ռամոսիից զօրապետը խաւրուեցաւ (Օգոստ. 20). բայց անիկայ ուզածը ձեռք բերելէն ետեւ ալ՝ ետ չգարձաւ, թէեւ զինքը կրկին կրկին կը կանչէին: Ասանկով քաղաքին մէջ միայն 35,000 զօր կը գտնուէր: Ռուսաց հրամանատարը պատրաստութիւնները տեսնելէն եւ Վարսաւիացիներն անձնատուր ըլլալու պարսպ տեղ յորգորելէն ետեւ, գնդակածութիւնն ու յարձակումը սկսաւ (Սեպտ. 5): Թէպէտ Ղեհք քաջութեամբ ու յուսահատութեամբ իրենք զիրենք կը պաշտպանէին, ի վերայ այոր ամենայնի Ռուսաց միշտ աւելի յառաջանալը չէին կրնար արգելուլ: Գրուզովիէցքի մէկ երկու անգամ բանակը պատգամաւոր խաւրելէն ու քանի մը ժամ զինազադար ընդունելէն (Սեպտ. 7), եւ խորհրդանոցին ոտիւմամբը՝ դարձեալ կռուի սկսելէն ետեւ, վերջապէս ստիպեցաւ իշխանութիւնը թողուլ: Ասով կառավարութեան գլուխն անցաւ Մալխոյզբի ծերունին, որն որ

խորհրդանոցին մեծ մասին հառաժուլութեամբը քաղաքը Բաղքեւելչին յանձնեց (Սեպտ. 8) ան պայմանաւ՝ որ զօրքն ու իշխանութիւն ունեցողները կարենան ազա-
տութեամբ գուրս ելլել:

119. Լեհերը բոլորովին իր զսպուին ու իրենց ազատութիւնները կը կորսընցընեն: Մէկ կողմանէ Բաղքեւելչին վարսաւիա մտած եւ հոն ամենայն ինչ յեղափոխութենէն յառաջ եղած վիճակը դարձուցած ատեն, հոնտեղէն ելող Լեհական խորհրդանոցը Զա-
գրոչիմ՝ Ժողովուելով (Սեպտ. 11), Ռամոնիսոյին հրա-
ման խաւրեց որ աճապարէ իր զօրքովը գայ բանակին հետ միանայ: Բայց նոյն զօրապետը չհնազանդեցաւ, հապա կ'ուզէր անկախ դիրք մը բռնել. իսկ Զարդորիս-
քի՝ որն որ նոյն զօրապետին քովը կը գտնուէր, թող
տուտ գէպ ի Գրադաւ գնաց, որպէս զի սահմաննե-
րուն մօտ ըլլալով, կարենայ ի հարկին փախչիլ՝ Գազ-
դիա երթալ: Նոյն միջոցին՝ Մալախովսքիէն ետքը Լեհ
զօրաց հրամանատար եղող Ռիպինսքի, Բաղքեւելչին
հետ բանակցութիւն կ'ընէր, յուսալով որ Լեհաց հա-
մար՝ յեղափոխութենէն յառաջ ունեցած ազատու-
թիւններնին նորէն կրնայ ձեռք բերել: Ռուսք իսկզբան
զինքը նոյն ակնկալութեան մէջ կը պահէին, որպէս զի
նախ Ռամոնիսոյին հետ գլուխ ելլեն, որուն ետեւէն
ինկած էր Ռիւտիկէր: Արդ երբ որ նոյն Լեհ զօրապետը՝
որն որ Աւստրիայի սահմանը կը մօտենար, քանի մը
հեղ Ռիւտիկէրին հետ զարնուելէն ետեւ՝ իր զօրաց
11,000 մնացորդին հետ նոյն կայսրութեան երկիրներն
անցաւ (Սեպտ. 17), ալ Բաղքեւելչ Ռիպինսքիին հետ
մինչեւ նոյն ատեն բանեցուցած լեզուն փոխեց, ու պա-
հանջեց որ առանց պայմանի հպատակի, եւ զօրքովը՝
Բլոգի մէջ կայսեր իրենց վրայ ընելու որոշման սպասէ:
Արդէն բանակցութիւններն եղած ատեն, թէ խոր-
հրդանոցի անդամներէն եւ թէ զինուորներէն շատերն
աս ելքը գուշակելով, ձգած փախած էին, անանկ որ
Ռիպինսքի ոչ գիմագարձութեան անկարելի ըլլալը

տեսնելով, զօրքին մնացորդովը Պրուշի սահմանն անցաւ (Հոկտ. 5)։ Ուրիշ պզտիկ գունդ մ'ալ Աւստրիա մտաւ։ Աս ամէն գնդերն երկու կողմերն ալ զինաթափ ըլլալէն ետեւ, իրենց հետ եղող նշանաւոր մարգիկ՝ նոյն երկու կառավարութեանց օգնելովը՝ կրցան փախչիլ եւ ըստ մեծի մասին Գաղղիա գացին։ Իսկ հասարակ զինուորներէն սմանք ան կողմերը մնացին, ոմանք ալ ետ դառնալու ստիպուեցան։ — Աս կատարածն ունեցաւ Լեհաստանի յեղափոխութիւնը, որն որ ըստ մասին իրենց ներքին երկպառակութեան եւ ըստ մարին Ռուսի եւ արտաքին տէրութեանց քաղաքականութեան բնական հետեւութիւնն էր։ Բառքեւիչ, որն որ Աւրոստրիայի իշխան անուանուած ու Լեհաստանի կուսակալ եղած էր, Լեհաց ձեռքը մնացած մէկ երկու տեղերն ալ առնելէն ետեւ՝ Ռուսի իշխանութիւնը կատարեալ հաստատեց։ Թէպէտ Լեհաց ընդհանրապէս թողութիւն շնորհուեցաւ, բայց այնչափ չափաւորութիւններով՝ որ կրնայ ըսուիլ թէ ոչ դժ ապահով էր։ Սակայն Լեհք ալ կոյսեր այնչափ ատելութիւն ցուցուցած եւ այնչափ նախատինք հասցուցած էին, Ռուսիայի այնչափ մեծամեծ զօհեր պատճառած եւ անոր իշխանութեան այնչափ վնաս ըրած էին, միանգամայն իրենց մէջ տակաւին այնչափ գրգռութիւն կը տիրէր, որ գրեթէ անկարելի կ'ըլլար ուրիշ ընթացք բռնելը։ Եւ որովհետեւ Լեհք իրենց ոտք ելլելովը՝ Ռուսիայի հետ ունեցած գաշինքնին աւրած ու իրենց սահմանագրական ազատութիւնները չարաչար գործածած էին, եւ գարձեալ ինչպէս հիմայ պիտի տեսնենք՝ նիկողայոս կայորը, Գաղղիայի ու Բեղգիայի մէջ եղած փոփոխութիւններուն զիջանելուն դիմացը, Լեհաստանի նկատմամբ ընելիքներուն մեծ տէրութեանց հաւանութիւնն առած էր, անոր համար չէ թէ միայն Լեհաստանի սահմանագրութիւնը ջնջեց, հապա նաեւ առանձին զօրք, սեպհական տեսչութիւն ու ելեւմտից մասնական կարգաւորութիւն

ունենալու իրաւունքնին վերցուց, որով եւ Ռուսիայի սրբիշ գաւառներուն հաւասար եղաւ :

120. Մեծ տէրութեանց քաղաքականութիւնը եւ Բեղզիայի անկախութիւնն ընդունելնին: Վառնայի հիմայ Բեղզիայի: Նոյն երկրին յեղափոխութեան արտաքին տէրութեանց համար ունեցած ծանրակշռութիւնը, մէկդի թող տալով Ալէէնայի արքայաժողովոյն որոշումներուն ու օրինաւորութեան սկզբունքին հակառակ ըլլալը, գլխաւորաբար անոր վրայ կը կայանար, որ Յուլիսի յեղափոխութեան նմանութիւնն էր: Եւ որովհետեւ նոյն վերջին յեղափոխութեան դիւցազունքը մեծապէս կը բաղձային ու ետեւէ եւ կ'ըլային որ Բեղզիա Գաղղիայի հետ միանայ, անոր համար մեծ տէրութիւնք սրբիշ ամէն նկատում կամ հայեցում իբր թէ մտնալով, անոր միայն միտ գրին կամ անով գոհ եղան որ նոյն միաւորութիւնը խափանեն: Աս նկատմամբ գեսպանագիտութիւնը մեծ գործունէութիւն բանեցուց: Նոյն պարագայից մէջ Ղուգովիկոս Փիլիպպոսին առջեւը երկու ճամբայ կար. կրնար Բեղզիայի ազատականներուն օգնել, նոյն երկիրն անմիջապէս Գաղղիայի հետ միացնել, եւ միանգամայն իր զէնքերը գործածել յեղափոխութիւնը յառաջ տանելու, որն որ Եւրոպայի շատ կողմերը գլուխ վերցուցած էր. եւ կամ կրնար մեծ տէրութիւններուն հետ միաբանելով եւ Գաղղիայի մէջ յեղափոխական տարրը զրուպելով, անկից դուրս բուսնող յեղափոխութիւններն ալ նոր ծլած ատեն՝ խլելու օգնել: Ղուգովիկոս Փիլիպպոս գոնէ ըստ մասին աս վերջին ճամբան ընարեց, եւ ասով մեծ տէրութեանց բրած ծառայութիւնն եղաւ գլխաւորաբար, որ սրբիշ պարագաներու հետ միանալով, զանոնք հաւանեցուց զինքն իբրեւ Գաղղիացուց թագաւոր ճանչնալու: Ղուգովիկոս Փիլիպպոս խօք տուաւ որ Բեղզիան Վաղղիայի հետ չիմիացնեն, միանգամայն չիթողուր որ հոն հասարակապետութիւն հիմնուի: Բայց ինքն ալ մեծ տէրութեանց իմացուց որ

Բեղդիայի անկախութեան հակառակ ելլելու շե՛ն, ապա թէ ոչ՝ Գաղղիացւոց ընդհանուր բաղձանքը չկրնարով զտպել, իր կամացը գէ՛մ՝ կը ստիպուի զէնք առնուլ: Աս վերջին խորհրդածութեան հիմնական ու խահեմական ըլլալը՝ շէր կրնար սարակուօի տակ ձգուիլ: Մեծ տէրութեանց Բեղդիայի անկախութիւնը գիւրաւ ճանչնալուն առ զլսաւոր շարժաութէն զատ, իւրաքանչիւր տէրութիւն առանձին պատճառներ ալ ունէր: Անգղիա իր շահուն համաձայն կը գտնէր Ստորին նահանգաց երկուքի բաժնուիլն ու աս բաժանմամբ տկարանալը. ինչու որ Հոլանտա՝ ծովային զօրութեան կողմանէ իրեն հետ կրնար զուգընթանալ, իսկ Բեղդիա՝ ճարտարութեան նկատմամբ, եւ երկուքին մէկտեղ միացած մնալը՝ իրեն համար կրկին վտանգաւորութիւն ունէր: Ասկէց զատ Անգղիա՝ Լուզովիկոս Փիլիպպոսին կողմէ բռնելով, Գաղղիայի վրայ առէն ժամանակ ունեցածէն աւելի ազգեցութիւն կը ստանար: Պրուշ կը վտանար որ յեղափոխութիւնն իր Ռենական դաւառներուն մէջ շտարածուի: Աւստրիա իր իտալական ու Լեհական դաւառներուն նկատմամբ վախ ունէր: Ռուսիա թէպէտ խոզրան ուզած էր Հոլանտայի իրաւանց պաշտպանութեան համար զէնք առնուլ, բայց ուրիշ նկատմունքներէն զատ՝ Լեհական յեղափոխութիւնը զինքն աս գիտաւորութենէն ետ կեցուց: Ասանկալ բոլոր մեծ տէրութիւնք յայտնեցին որ պատրաստ են Բեղդիայի անկախութիւնը ճանչնալ, բաւական որ ոչ Գաղղիայի անցնի եւ ոչ հասարակապետութիւն ըլլայ: Ուստի եւ երկու կողմանք միաբանեցան Բեղդիայի մէջ զինեալ միջամտութիւն չընելու, ոչ Հիւսիսային տէրութիւնք՝ Գուլիելմոս թագաւորին օրինաւոր իշխանութիւնը հաստատելու համար, ոչ ալ Արեւմտեան տէրութիւնք՝ Բեղդիացւոց օգնելու համար, կամ գոնէ Լուզովիկոս Փիլիպպոս՝ նոյն երկիրը Գաղղիայի հետ միացընելու մտք:

121. Լիւքսեմպուրկի ու թագաւորի ընտրութեան խնդիրները: Բեղդիայի վիճակն որոշող գես-

պանական խօսակցութիւնները Լոնտոն կ'ըլլային: Աս մայրաքաղաքը հինգ մեծ տէրութիւնք գեապանաժողով կազմելով, Բեղգիայի իրողութեանց վրայ բանակցեցան եւ յաջողութեամբ դլուխ տարին: Ամէն բանէն յառաջ նոյն գեապանաժողովն իր առաջին արձանագրովը (1830, Նոյ. 4) Բեղգիացիներն ու Հոլանտացիները զինադադար ընելու ստիպեց, եւ անմիջապէս Բեղգիայի ազգային համաժողովոյն հետ հազորդակցութեան մէջ մտնելով, զինքը չափաւորութեամբ ու խոհեմութեամբ վարուելու յորդորեց: Եւ երբ սր տեսաւ թէ անիկայ պատշաճ ընթացք կը բռնէ, առանձին արձանագրով մը պաշտօնական կերպով Բեղգիայի անկախութիւնը ճանչցաւ (Գեկտ. 20): Անկէ ետեւ ընելիքնին էր՝ երկու տէրութեանց սահմաններն որոշել ու Բեղգիայի՝ յարմար թագաւոր գտնել: Առաջին նկատմամբ գժուարութիւնը՝ մասնաւոր կերպով Լիւքսեմպուրիի մեծ դքսութեան վրայ էր, որն որ անով աւելի կը մեծնար՝ որ Գերմանական գաշնակցութեան կը վերաբերէր: Նոյն դքսութեան երկիրները Բեղգիացւոց ձեռքն էին, բայց ի Լիւքսեմպուրի մայրաքաղաքէն, ուր՝ իրբեւ գաշնակցութեան ամրոց՝ Պրուշ պահակապան զօրք ունէր: Բեղգիացիք կ'ուզէին նոյն ծանրակշիռ գաւառը պահել: Իսկ Լոնտոնի գեապանաժողովը՝ Հոլանտայի համար 1790ին ունեցած սահմանն որոշեց՝ Լիւքսեմպուրի ալ իրեն տալով, եւ Բեղգիացւոց պարտաւորութիւն գնելով որ Հոլանտայի տէրութեան պարտքին մէկ մասը յանձն առնուն (1831, Յունու. 20 ու 27): Գուլիելմոս թագաւորը յայտնեց որ ասով գոհ կ'ըլլայ, իսկ Պրիւսսելի համաժողովն ասոր դէմ բողոքեց (Փետր. 1), ամենեւին չէր ուզեր Լիւքսեմպուրի թողուլ: Ասոր համար ալ Հոլանտացիք տակաւին իրենց ձեռքն եղող Անգուերբիայէն չէին ելլեր: — Աս խնդրէն նուազ գժուար չէր թագաւորի ընտրութեան խնդիրը: Բեղգիացիք աչուրնին զլեւաւորաբար երեք հոգւոյ վրայ գրած էին. որոնք էին Աւստրիայի կայսեր եղբայրը՝ Կարոլոս արքի-

դուքսը, Լայխդենպերկի դուքսը (Իտալիայի Եւզինէսս փոխարքային որդին) ու Լուդովիկոս Փիլիպպոսին երկրորդ որդին՝ Նրմսլերի դուքսը: Առաջնոյն նոյն պատիւը չընդունելէք իմանալով, իսկ Լայխդենպերկի իշխանին ընտրութեան՝ թէ Լուդովիկոս Փիլիպպոսին եւ թէ մեծ տէրութեանց անհաճոյ ըլլալէք տեսնելով, համաժողովը Նրմսլերի դուքսը թագաւոր ընտրեց (Փետր. 3): Բայց առ ընտրութեան չէ թէ միայն չորս մեծ տէրութիւնք չէին հաւանիր, հապա եւ ոչ Լուդովիկոս Փիլիպպոս, թէ եւ ինքն եղած էր նոյն իշխանին ընտրուելուն գլխաւոր շարժառիթը՝ բայց միայն Լայխդենպերկի իշխանին ընտրութիւնը խափանելու համար: Իրգք ալ երբ որ Բեղգիացւոց պատգամաւորութիւն մը Փարիզ գալով՝ իր որդւոյն թագաւոր ընտրուիլ ծանոյց, Լուդովիկոս Փիլիպպոս խնդիրքնին մերժեց, բայց զերենք ապահովուց որ իրենց անկախութիւնն ամէն թշնամեաց գէժ կը պաշտպանէ (Փետր. 17): Համաժողովը տեսնելով որ խնդրոյն որոշումը տակաւին պիտի ուշանայ, զՍիւրլէ տը Շպէիէ (110) Բեղգիայի խնամապետ անուանեց (Փետր. 24):

122. Սաքսոնիա-Գոպուրկի Լէոբոլտ իշխանը Բեղգիայի թագաւոր կ'ըլլայ: ԺԸ. Յօդուածք: Նոյն միջոցին Լանանէն Բեղգիացիները կը ստիպէին որ իրենց թագաւոր ընտրեն Սաքսոնիա-Գոպուրկի ցեղէն Լէոբոլտ իշխանը, որն որ Յունաստանի թագը մերժած էր (85): Բայց անոնք չէին ուզեր, մէյ մ'որ նոյն իշխանը բողբոջական էր, մէյ մ'ալ վասն զի անանկ կը համարէին որ իբրեւ Անգղիայի կուսակալ պիտ'որ ըլլայ: Աս նիւթին վրայ երկպառակութիւն ծագելով, Օրանիայի իշխանը շատ ջանաց ձեռքը բան մ'անցընել եւ տեսնելով որ Լոնտոնի մէջ Լէոբոլտ իշխանին գէժ բանեցուցած միջոցներն օգուտ չեն ըներ, Հոլանտա դարձաւ (1831, Մարտ 21) եւ իր կողմնակիցներուն ձեռքովը շատ աշխատեցաւ ինք զինքը թագաւոր ընտրել տալու, բայց ամէն բան պարտապ զնաց: Աւերջա-

պէս Լոնտոնէն Բեղգիայի համաժողովոյն իմացուցին որ եթէ գեապանաժողովոյն հաճելի չեղող մէկը թագաւոր գնելու ըլլայ, ալ անկէ ետեւ յոյս չունենայ որ մեծ տէրութիւնք իր շահը յառաջ տանին: Համաժողովը՝ որն որ Լէոբոլա իշխանին վրայ համարում ստանալու զկսած էր, աս սպառնալիքով բռնադատեցաւ զանկողայ թագաւոր ընարել (Յունիս 4): Ասոր ետեւէն եկաւ Լոնտոնի արձանագիր մը (Յունիս 27), որն որ ԺԸ. Յօդուածներու մէջ Բեղգիացւոց խիտ նպաստաւոր պայմաններ կը բովանդակէր. այս ինքն՝ Բեղգիացիները Հոլանտացւոց պարտքին մէկ մասը յանձն առնելէն ազատ կ'ըներ, Մառզրիխ գաղաքն իրենց կու տար, կը պահանջէր որ Հոլանտացիք Անգուերբիայէն ելլեն, իսկ Լիւքսեմպուրկի նկատմամբ կ'որոշէր որ նոյն ատեն գանուած վիճակին մէջ մնայ: Եւ թէպէտ Գուլիելմոս թագաւորն ու Հոլանտայի ընդհանուր կարգաժողովն աս որոշմանց գէմ սաստիկ կերպով բողոք բրին, եւ նոյն բողոքը Լոնտոն հասած ատեն՝ Ռուսի, Աւստրիայի ու Պրուշի գեապանները յայտնեցին որ աս պարագայից մէջ իրենք առժամն ղԼէոբոլա ճանչնալը կ'ուշացնեն. ի վերայ այսր ամենայնի Բեղգիայի համաժողովը յիշեալ ԺԸ. Յօդուածներն ընդունելէն ետեւ, նոյն թագաւորը Բեղգիա եկաւ, Օսգէնտէն մինչեւ Պրիւստէլ՝ ամէն կողմ մեծ ընդունելութիւն գտաւ եւ արտաքոյ կարգի հանդիսիւ նոյն մայրաքաղաքը մտաւ (Յուլ. 21): Խնամապետն ազգային համաժողովոյն անգամներովը զինքն ընդունեցաւ, եւ թագաւորը նոր շինուած սահմանագրութիւնը պահելու երդում ըրաւ: Լէոբոլա քանի մ'օր մայրաքաղաքը նստելէն ետեւ՝ սկսաւ տէրութեան երկիրներն անձամբ պտրտիլ՝ իր հպատակաց սիրտը շահելու համար. ամէն տեղ ալ զինքը մեծ սիրով ու յարգութեամբ կ'ընդունէին, եւ անանկ կ'երեւար որ բովանդակ երկիրը հարսնիք կը կատարէ:

123. Հոլանտացիք նորէն պատերազմի կը սկսին: Գաղղիա եւ Անգղիա զինեալ միջամտութիւն կ'ընեն: Զինադադար: Ռայց ասանկ ամէն տեղ ջըն-ծութեան հանդէսներ կատարուած ատեն, կայծակի հարուածի պէս Բեղգիացիները օարսափեցուց զարհուրելի դոյժը՝ թէ բազմաթիւ Հոլանտական բանակ մը սահմաններն անցած է: Գուլիելմոս թագաւորը, որն որ՝ ինչպէս ըսինք՝ ԺԼ. Յօդուածներուն դէմ բողոքած էր, շուտ մը ծածուկ պատրաստութիւն տեսնելով, զինադադարը լընցած հրատարակեց, եւ իր զօրքերը՝ հինգ զնդի բաժնած՝ Օրանիայի իշխանին հրամանատարութեամբը Բեղգիա քալեցուց (1831, Օգոստ. 1): Բեղգիացուոց սարսափն անոր համար էր, որ իրենց զօրքերը խիստ ողորմելի վիճակի մէջ կը գտնուէին: Ստոյգ է՝ Պրիւստէլ եւ ուրիշ տեղեր ժողովուրդը քարակոյտներու ետեւէն ու տներու մէջէն Հոլանտացուոց սահաւածութիւն գնդերը յաղթած էր. ստոյգ է՝ այլեւայլ բերդերու մէջ գտնուող Հոլանտացի պահակապան զօրքը՝ Բեղգիացի զինուորներուն իրենցմէ բաժնուելովը՝ զինաթափ եղած էր. բայց ցրուած եւ հրահանգը կորսընցուցած Բեղգիական զօրքերն ու անվարժ ժողովուրդը չէին կրնար բաց դաշտի վրայ դէմ գնել կրթեալ ու բազմաթիւ բանակի մը: Իրօք ալ զինուորներէ, ազգային պահակապաններէ ու գործազարներէ կազմուած Բեղգիական գնդերը զանազան անգամ Հոլանտացիներէն յաղթուեցան, եւ ոչ թագաւորին ներկայութիւնը բաւական եղաւ Գիրլըմոնի քով զերենք ամօթալի փախտանէ ետ կեցընելու (Օգոստ. 11): Աս կերպով Հոլանտացիք շուտով յառաջ կը քալէին ու Բեղգիայի քաղաքները հետզհետէ ձեռք կ'անցընէին. բայց երբ որ Օրանիայի իշխանն իր յաղթական ընթացքը յառաջ տանելով, Պրիւստէլի վրայ քալել կ'ուզէր, մէյ մ'ալ լուր առաւ որ 50,000ի Գաղղիական բանակ մը Բեղգիա մտած է՝ զէնքը մերժելու համար: Նոյն բանակը, որն որ քիչ մը ժամանակէ վեր սահմանը ժող-

վուած էր, ժերար սպարապետին հրամանատարութեան տակ՝ թագաւորին երկու երիցազոյն որդիքն ալ մեկտեղ՝ յառաջ կը քալէր: Բեղզիացիք Աթ, Մոնս, Շարլըուա, Նամիւր բերդերն անանց առջեւը բացին: Ասկից զատ՝ Գաարինկզընի հրամանատարութեամբ անգղիական նաւատորմիդ մը դէպ ի Շելտէ յառաջացաւ: Երկու տէրութեանց կողմանէ ալ մէյ մէկ հազի բանակցելու համար Հոլանտական բանակը դացին: Օրանիայի իշխանը չուզեց կամ՝ չհամարձակեցաւ անկէ ետեւ կռիւր յառաջ տանիլ. ուստի եւ շուա մը զինագաղար բնելով (Օգոստ. 31), զօրքերը ետ քաշեց. Գաղղիացիք ու Անգղիացիք ալ հեռանալով, ամենայն ինչ յառաջուան վիճակը դարձաւ:

124. Արեւմտեան տէրութեանց ու Բուլիայի քաղաքականութիւնը: ԻԳ. Յօդուածները: Մեկնէնք հիմայ Արեւմտեան տէրութեանց բռնած առ ընթացքը: Խիստ դժուար էր Լուգովիկոս Փիլիպպոսին հանգարտութեամբ տեսնել, որ Բեղզիացւոց իրսզութիւններուն վրայ իր սաացած ազգեցողութիւնը՝ Հոլանտացւոց յազմութիւններովը կորսուի, եւ միանգամայն զերենք իրենց թշնամեաց ձեռքը թող տալով՝ այնչափ շուտով դէմ ընել զերենք պաշտպանելու խստաման (121): Եւ որովհետեւ շուտով գործել պէտք էր, անոր համար Լոնտոնի գեսպանաժողովոյն հաւանութեան չսպասեց, հապա ինք իրմէ իր զօրքերուն հրաման խաւրեց յառաջ քալելու: Իսկ իր Գաղերան գեսպանը՝ թագաւորին առ ընթացքը գուշակելով կամ յառաջուրնէ հրահանգուած ըլլալով, Հոլանտացւոց յարձակումը լուրուն պէս՝ Անգղիայի պաշտօնարանը համոզեց պաշտօնագիր մը հանելու, որով Գաղղիացիք համարձակութիւն կը ստանային Բեղզիայի մէջ Հոլանտացւոց դէմ գործելու: Բայց նոյն պաշտօնագիրը Փարիզ հասած ատեն՝ արդէն Գաղղիացւոց զօրքը Բեղզիա մտած էր: — Սակայն եւ այնպէս Հոլանտացիք Լոնտոնի գեսպանաժողովոյն կողմանէ՝ յառաջուրնէ աւելի

նպաստաւոր պայմաններ ընդունեցան: Ասոր ալ պատճառն ան է, որ միայն աս կերպով կրնային գոհ ընել երեք հիւսիսային տէրութիւնները, որոնք՝ ինչպէս տեսանք՝ Լէորտա իշխանին թագաւոր ըլլալը տակաւին չէին ընդունած (122), եւ իրաւունք ունէին Արեւմտեան տէրութեանց զինեալ միջամտութեան գէմ ձայներնին բարձրացընելու: Արդէն ալ Աւստրիա եւ Պրուշ Գերմանական գաշնակցութեան ժողովոյն ձեռքովք Լիբոնմպուրկի բերգին հրամանատարին հրաման խաւրած էին որ նոյն դքսութեան մէջ Բեղգիայի մեծերը չճանչնայ: Բայց գլխաւորաբար աս որոշումն ընել տուողն եղաւ Ռուսիա: Նիկողայոս կայսրը նոյն ատեն Լեհաստանի յեղափոխութիւնը զսպելու վրայ էր (118, 119): Պրուշ բոլորովին Ռուսիայի կողմն էր, եւ հարկ որ ըլլար՝ Ռուսի եւ Պրուշի դնգեր կրնային Հոլանտացոց օգնութեան գալ: Արգ. Եւրոպական մեծ պատերազմ մը խափանելու համար, Արեւմտեան տէրութիւնք ազէկ սեպեցին այն նպաստաւոր պայմանները դնել, զորոնք Ռուսիա կը խնդրէր Հոլանտայի համար: Մէկալ կողմանէ ալ Ռուսիայի կայսրը չուզեց աւելի յառաջ երթալ եւ մէկգի ձգեց Հոլանտայի թագաւորին՝ Բեղգիայի վրայ ունեցած իրաւունքը պաշտպանելու գիտաւորութիւնը, ան պայմանաւ՝ որ Արեւմտեան տէրութիւնք ալ թողուն որ ինք Լեհաստանի մէջ ուզածն ընէ, այդ ինքն՝ ան Եւրոպական գաշնակցները ջնջէ, որոնցմով Լեհաց թագաւորութեան անկախութիւնն ու սահմանադրութիւնը երաշխաւորուած էին: Աս պատճառներով Լոնտոնի գեոպանաժողովը ծանօթ ժ.Ս. Յօդուածները (122) ուրիշ ԻԳ. Յօդուածներու փոխեց (Հոկտ. 15), որոնք Հոլանտացոց նպաստաւոր էին, որովհետեւ Բեղգիացիներէն Լիբոնմպուրկի ու Լիմպուրկի մէկ մասը պիտ'որ ընդունէին, եւ տէրութեան պարտքին համար՝ տարին 8,400,000 Ֆիւրին մուտք պիտ'որ աւնուին: Բեղգիացիք աս փոփոխման վրայ ահաճեցան. բայց գէմ գնելու զօրութիւն չունե-

նախով՝ գլուխ ծռեցին: Ուստի յիշեալ Յօգուածները ստորագրեցան, եւ Արեւմտեան տէրութիւնք անմիջապէս նոյնին պահպանութիւնք երաշխաւորեցին, Աւստրիա ու Պրուշքիչ մը ետքը իրենց հաւանութիւնը տուին. ետքն ալ Ռուսիա վաւերագրեց (1832, Մայ. 4) եւ Հոլանտացիներն իրենց բախտին թողուց, թէեւ յառաջագոյն չէր ուզած Բեղգիայի անկախութիւնը ճանչնալ՝ մինչեւ որ Հոլանտայի թագաւորը հաւանութիւն չտայ:

125. Վերջին կռիւներն ու նախակարգ պայմանները: Թէպէտ Ի. Յօգուածները Հոլանտայի նպատաւոր էին եւ Արեւմտեան տէրութիւնք ետքէն ոպառնալէք ալ զԳուլիելմոս զաննք ընդունելու ստիպել ուզած էին. բայց նոյն թագաւորը՝ հիւսիսային տէրութեանց եւ առանձինն Ռուսիայի պաշտպանութեան վրայ վստահելով, եւ յուսալով որ դարձեալ բովանդակ Բեղգիա ձեռք կը բերէ, չուզեց զիջանիլ ու Նոյեմբերի 15ին արձանագրոյն (124) դէմ բողոքեց (1831, Դեկտ. 13): Աս ալ բաւական չէ, հիւսիսային տէրութեանց ու Ռուսիայի իսկ զիջանելէն ետեւ՝ ինք առկառին հաստատուն կը կենար: Բայց որովհետեւ մեծ տէրութիւնք միաբան էին, անոր համար Հոլանտայի հետ դիւրաւ գլուխ ելան: Երբ որ Գաղղիա ու Անգղիա մէջբնին միաբանելէն ետեւ (1832, Հոկտ 22), իրեն նորէն ոպառնալէք բրին որ բռնութեան միջոցներ կը բանեցընեն, եւ Գուլիելմոս ասոր ալ տեղի չտուաւ, իրենք ալ իրօք նոյն միջոցներուն ձեռք զարկին: Անգղիական նաւատորմիդ մը Հոլանտական ծովեզրները պաշարելու սկսաւ (Նոյ. 6). Գաղղիական բանակ մ'ալ նորէն Բեղգիա մտաւ (Նոյ. 14) եւ Անգուերրիա պաշարեց (Նոյ. 30): Քանի մ'որ ետքը զընգակոծութիւնը սկսաւ (Դեկտ. 4) ու քսան օր շարունակեցաւ, մինչեւ որ ալ բերդը չկրնալով գիմանալ, անձնատուր եղաւ (Դեկտ. 23): Արտաքոյ կարգի պատերազմ մըն էր ստիկայ. Հոլանտացիք բոլորովին անգործ կենալով՝ միայն Անգուերրիա կը պաշտպանէին.

Իսկ Գազզիացիք Հոլանտացուց դէմ ուրիշ թշնամական գործք չգործելով՝ միայն նոյն բերդը կը զարնէին, եւ առնելէն ետեւ՝ թողուցին գնացին: Աերջապէս Գուլիելմոս՝ վաճառականութեան հասած մնասէն եւ վաճառականաց տրանջէն ստիպուելով, տեղի տուաւ ու Գազզիական - Անգղիական պահանջումներն ընդունեցաւ: Ասանկով նոյն երկու տէրութեանց ու Հոլանտայի մէջ նախակարգ պայմաններու դաշինք գրուեցաւ (1833, Մայ. 21), որով ծովեզերաց պաշարումը վերցաւ, բոլոր թշնամութիւններուն վերջ տրուեցաւ, Շեւտէ գետը՝ զորն որ Բեղգիացիք գոց կը պահէին, բացուեցաւ. իսկ երկու կողմանց ստացուածքին կամ սահմաններուն վրայ որոշուեցաւ որ նոյն ժամանակուան վիճակին մէջ մնան, մինչեւ որ որոշ խաղաղութեան գաշինք գրուած ատեն՝ նոյն նիւթն ալ ուրիշ երկրորդական խնդիրներու հետ կատարեալ կարգի դրուի:

Գ.

Երոսպայի ուրիշ տերութեանց ներքին իրողութիւններն ու յետ տերութեանց յարաբերութիւնները: Եգիպտական (Արեւելեան) խնդիր (1830—1848):

126. Գերմանիայի զանազան տէրութեանց յեղափոխութիւնները: Գաշնակցութեան ժողովոյն որոշումները: Բեզգիական ու Լեհական յեղափոխութիւնները՝ Յուլիսի յեղափոխութենէն ծագած գրեխառ որ յեղափոխութիւններն էին, բայց առանձին չմնացին, հապա ուրիշ շատ տեղեր ալ նոյնին հետեւութիւններն երեւցան, ու Եւրոպայի գրեթէ ամէն տէրութիւնները քիչ շատ անոր ազդեցութիւնը կրեցին: — Գերմանիայի մէջ յառաջուան գրգռութիւններն ու շարժումները՝ հազիւ արտաբուստ զսպուած էին եւ ոչ ներքսուտ ջնջուած: Աս գրգռութեանց պատճառն էր ընդհանրապէս ազատական սահմանագրութեանց բաղձանքը, որն որ քանի մը տեղ վեհա-

պետաց անպատշաճ ընթացքովն ու կառավարութեանց անկարգութեամբը՝ աւելի կը մեծնար: Արդ Յուլիոսի յեղափոխութեամբ հոգիներուն գրգռութիւնը խիստ սաստկանալով, շատ տեղ եւ առանձինն Սպարսնիայի թագաւորութեան, Պրանշուպիի դքսութեան, Հեսսենի կայսրընարութեան մէջ յեղափոխութիւնք ելան. որոնք միեւնոյն օրերը (1830, Սեպտ. 6—15) պատահելով, ընդհանուր յատակագծէ մը յառաջ եկած կարծուեցան, եւ դաշնակցութեան ժողովոյն մտադրութիւնը գրաւեցին: Ուստի եւ քիչ մը ետքը նոյն ժողովը որոշեց որ դաշնակցութեան մէջ դանուող տէրութիւնք՝ ինքրուած տանն՝ իրարու զինուց օգնութիւն մատուցանեն յեղափոխութիւնները զսպելու համար, միանգամայն զօրքերնին պատրաստ բանն եւ լրագրաց վրայ մտադրութիւննին աւելցրնեն (1830, Նոյ. 30): Իսկ ետքը երբ որ Սպարսնիա (1831, Ապր. 17 ու 18) ու Ալաիերա (1832, Մայ.) առաջիններէն տատակ շփոթութիւնք ու յեղափոխութիւնք պատահեցան, յիշեալ ժողովքն ալ աւելի ազգու միջոցներ ուզեց բանեցընել: Երկու անգամէն զանազան օրոշմանք բրաւ (1832, Յունիս 28, Յուլ. 5), որոնցմով այլեւայլ տէրութեանց կառավարութիւններուն ու կարգաժողովներուն յարաբերութիւնները կարգի կը դրուէին, եւ վերջիններուն իշխանութիւնք կը շափառուէր. դաշնակցութեան մասնաժողով մ'ալ կը հիմնուէր՝ նոյն նիւթերուն վրայ հսկելու համար: Գաբձեալ լրագիրներու, քաղաքական ժողովներու, արտաքոյ կարգի տօնահանգէոներու, այլեւայլ նշաններ կրելու կամ դրօշներ բանալու, քաղաքական յանցաւորներն իրարու ձեռք առլու նկատմամբ զանազան հրամաններ կը տրուէին: Եւ թէպէտ ազատականք աս որոշմանց գէմ ձայներնին բարձրացուցին ու բողոքման թղթեր շինեցին, բայց դաշնակցութեան ժողովը հաստատուն կենալով եւ կառավարութիւնք նոյն օրոշմանց համեմատ վարուելով, խռովարարներուն ամէն

Ղանլըր պարագի գնաց: Ինչպէս ան միջոցներուն Ֆրանկ-
ֆուրդի մէջ ուսանողաց՝ խել մ'օտարականներու եւ
գլխաւորաբար Լեհերու հետ միանալով՝ հանած աղ-
մուկը (1833, Ապր. 3) շուտ մը զսպուեցաւ: Ասոր
վրայ վեհապետաց ժողով մ'ըլլալէն (142) ետեւ,
վիեննա Գերմանական պաշտօնէից խորհուրդներ գա-
մարեցան (1834, Յունու. — Յունիս), որոնց մէջ գաշ-
տակցութեան ժողովոյն որոշումներուն նման՝ բայց աւելի
խիստ որոշումներ եղան:

127. Իտալիայի խռովութիւններն ու Աւս-
տրիացոց ձեռքով զսպուիլը: Յուլիսի յեղափոխու-
թիւնը՝ Գերմանիայէն աւելի Իտալիայի վրայ ազդեցու-
թիւն ըրաւ: Նոյն երկրին մէջ 1821ին շփոթութիւն-
ներէն վերջը հանգարտութիւնը երեւեղապէս աւրուած
չէր. բայց աս հանգարտութիւնն առերեւոյթ բան էր,
ի ծածուկ ոգիները միշտ գրգռեալ վիճակի մէջ էին,
եւ յեղափոխական խմբումը Գարպոնարիայի ընկերու-
թեան ձեռքովը միշտ աւելի կը սաստկանար: Յիշեալ
գաղտնի ընկերութեան բուն վառարանն ալ Հռոմոյի
տէրութիւնն էր, վրան զի Իտալիայի ուրիշ կողմերը
սաստիկ խստութեամբ հալածուելով, անդամները կու-
գային աս երկիրը կը ժողվուէին: Ստոյգ է հոն ալ եր-
բեմն երբեմն ձեռք կ'իյնային, ինչպէս մէկ անգամէ 500
հոգիէ աւելի Ռաւեննա բանուեցան (1825, Օգոստ.
31). բայց այսպէտով ալ բոլորովն չէին զսպուեր: Աս
այսպէս ըլլալով, բնական էր որ նոյն ժամանակներն
Իտալիա պատահած շփոթութիւններուն միջակէտը
Հռոմի տէրութիւնն ըլլար: Իրօք ալ Յուլիսի յեղա-
փոխութենէն քանի մ'ամիս ետքը նոյն շփոթութիւն-
ները Հռոմի գաւառներուն մէջ սկսան: Պիոս Է. քա-
հանայապետին յաջորդած էր Լէոն ԺԲ. (1823), ա-
սոր ալ՝ Պիոս Ը. (1829): Հետեւեալ ատրին նոյն
ծերունի հայրապետն ալ մեռնելով (1830, Նոյ. 30),
յեղափոխականը անմիջապէս սկսան խլրտել. բայց յայ-
տնապէս գործքի ձեռք զարնելին՝ Գրիգոր ԺԶ.ին ըն-

տրուելին (1831, Փետր. 2) ետքը եղաւ: Ընտրու-
 թիւնն ըլլալուն պէս՝ մրրիկը Պալոնեա փրթաւ (Փետր.
 4). զինուորներն ըստ մասին յեղափոխականաց հետ
 միացան, ըստ մասին ալ անգործ կեցան, որով անոնք
 կուսակալի տեղակալին պալատը պաշարելով, զինքը
 տեղի տալու ստիպեցին: Անմիջապէս ութը հոգւով
 մասնաժողով մը գրուեցաւ, որն որ յայտարարութեամբ
 մը բոլոր զէնք կրել կրցողները կը յորդորէր գաւառա-
 կան պահակապանաց զնգեր կազմելու, երեքգունեան
 ծոպք գնել տուաւ. եւ ինք զինքն աւժամանակեաց
 կառավարութիւն անուանեց: Յեղափոխութիւնը շուտ
 մը Հռոմի տէրութեան մեծ մասին վրայ տարածուե-
 ցաւ, այնպէս որ մէկ երկու օր վերջը յեղափոխականք
 իրենք զիրենք բաւական զօրաւոր սեպեցին քահանայա-
 պետին աշխարհական իշխանութիւնը ջնջուած հրա-
 տարակելու (Փետր. 8): Նոյն միջոցին Մոտենա ալ
 նմանօրինակ գործողութիւններ պատահեցան, որոնց-
 մով տեղւոյն Փրանկիսկոս Գ. դուքսը ստիպեցաւ ձգել
 Մանդուա փախչել, ուսկից՝ նոր գրուած կառավարու-
 թեան դէմ բողոքեց: Ասկից զատ՝ նաեւ Բարմա շփու-
 թութիւնք ելան (Փետր. 12), եւ Մարիամ Լուիզա
 դքսուհին բռնադատեցաւ փախչել Բիաչենցա երթալ:
 Բոլոր յեղափոխականք ասոր վրայ Պալոնեա համաժո-
 ղով մը գումարեցին (Փետր. 26), եւ իրենք զիրենք
 անկախ հրատարակելէն զատ, որոշեցին որ իրենց (Հռո-
 մի տէրութեան, Մոտենայի, Բարմայի) երկիրները միա-
 ցած՝ մէկ տէրութիւն եղած են: Աս ամէն բան
 կ'ընէին կարծելով որ անմիջամտութեան սկզբունքին
 համեմատ՝ Գաղղիա ու Բեղգիա եղածին պէս՝ հոն ալ
 օտար տէրութիւնք թող կու տան որ իրերն իրենց
 բնական ընթացքովը յառաջ երթան: Բայց Աւստրիայի
 Փրանկիսկոս կայսրը նոյն սկզբունքին միտ չգնելով եւ
 նեղ մտած վեհապետներուն խնդրուածքին լսելով,
 շուտ մը բաւական զօրք քալեցուց, որն որ սահման-
 ներն անցաւ (Մարտ 5), Ֆերրարա բռնեց, Մոտենայի

դուքսն իր մայրաքաղաքը խոթեց, Բարմա մտաւ, եւ վերջապէս Պոլսնեա առնելով (Մարտ 21), յեղափոխութեան բոյնը ցրուեց: Ասանկով քիչ ատենուան մէջ բոլոր քահանայապետական ու մերձաւոր երկիրներն աւանկ հանդարտեցան, որ օտար զօրքերը կրցան ետ քաշուիլ (Յուլ. 15):

128. Հռոմի երկիրները նորէն ուր կ'ելլեն ու դարձեալ կը զսպուին: Գաղղիացիք Անգոնայի մէջ: Բայց առ հանդարտութիւնը երկայն չտեսեց: Աւստրիացոց Հռոմի երկիրներէն ետ քաշուելէն քանի մ'ամիս վերջը, Պոլսնեայի մէջ դաշնակցական միութիւն մը կազմուեցաւ (1831, Գեկա.), որն որ երկրորդ տարւոյն սկիզբը (1832, Յունու.) յայտնի յեղափոխութեան դարձաւ, եւ դարձեալ բովանդակ Իտալիա տակնուվրայ ըլլալու վտանգի մէջ ինկաւ: Սակայն առ հեղ ալ յեղափոխականաց ակնկալութիւնը պարտապ ելաւ. Աւստրիացիք նորէն քահանայապետական երկիրները մտան (Յունու. 24) եւ Պոլսնեա բռնելով, հանդարտութիւնը պահպանելու համար հոն մնացին: Բայց քիչ մնաց նոյն անգամ մեծ եւ ընդհանուր շփոթութիւնք կը պատահէին: Արդէն առաջին անգամ Աւստրիացոց Իտալիայի մէջ միջամտութիւն ընելը՝ Գաղղիացի ազատականք մեծ տհաճութեամբ տեսած էին, եւ Լուդովիկոս Փիլիպպոս՝ ըստ մտտին իրենց զրգուութիւնն իջեցընելու եւ ըստ մտտին Աւստրիային նոյն միջամտութեամբ Իտալիայի վրայ ստացած ազդեցութիւնը նուազեցընելու համար՝ ջանացած էր որ անոր զօրքերը շուտով դուրս ելլեն. ուստի եւ Աւստրիական զօրաց ետ դառնալուն պատճառներէն մէկն ալ առ եղած էր: Արդ երբ որ յեղափոխութեան նորոգուելովը՝ Աւստրիացիք նորէն Հռոմի երկիրները մտան, Փարիզի մէջ դիմադրականք արտաքոյ կարգի զրգուելով, Գաղղիացոց թագաւորն ուզեց՝ ցոյց մ'ընելու մտօք՝ իր կողմանէ ալ միջամտութեան ձեռք զարնել: Ուստի Գաղղիական նուախումք

մը Անգոնայի առջեւն երեւնալով (Փետր. 23), խել
 մը զօրք ցամաք հասնեց, որոնք քահանայապետական
 կառավարութեան կամացը դէմ ներս մտան քաղաքը
 բռնեցին: Աս բանս իբր թէ յեղափոխականաց խրը-
 կուած օգնութեան պէս առնուելով, անոնց ակնկալու-
 թիւնները նորոգեցան, որով եւ ասդին անդին ապրա-
 տամբական շարժումներ եղան: Գրիգոր ԺԶ. աս ան-
 պատշաճ գործողութեան դէմ բողոքեց (Մարտ 3 ու
 10). բայց պարսպ տեղ: Եւ թէպէտ Գաղղիացիք
 զօրքերնին շատցուցին եւ աւելի ամրացան. սակայն ետ-
 քէն եկող բուն հրամանատարն իր նախորդին կամ տե-
 ղակալին յառաջագոյն բռնած անկարգ ընթացքը պար-
 ուսեց, անոր վար տուած քահանայապետական պաշ-
 տօնատէրներն իրենց աստիճանին մէջ հաստատեց, եւ
 շորս կողմը ժողոված յեղափոխականները մերժեց: Ասով
 եւ Լուդովիկոս Փիլիպպոսին ետքէն մեղմագոյն լեզու-
 մը բանեցրնելովը, որով քահանայապետին աղաչեց որ
 Գաղղիայի գրգռեալ վիճակին պատճառաւ՝ թոյլ տայ
 որ իր զօրքերը քիչ մը ժամանակ ալ Անգոնա մնան,
 նոյն քահանայապետը հաւանեցաւ (Ապր. 15), սակայն
 պայման դրաւ որ Գաղղիացիք Անգոնայի պարիսպներուն
 մէջ միայն մնան եւ զօրաց ծախքն իրենք քաշեն: Քիչ
 մը ետքը նոյն տեղը քահանայապետական զօրքեր ալ
 մտան (Մայ. 2) եւ Գաղղիացուոց հետ միաբան պահ-
 պանութիւն կ'ընէին. այնպէս որ ամէն մարդ համոզուե-
 ցաւ որ Լուդովիկոս Փիլիպպոս ալ՝ Աւստրիայի կայսեր
 պէս՝ միայն քահանայապետին իշխանութիւնը յեղա-
 փոխականաց դէմ պաշտպանել կ'ուզէ:

129. Նէապոլսոյ՝ Փերդինանդ Բ. եւ Սարդի-
 նիայի՝ Կարոլոս Ալպերդ թագաւորները: Օլարմանալի
 կերպով Նէապոլիս ու Սարդինիա նոյն ատեն յեղափո-
 խական մրրիկներէն բախուցին ազատ մնացին: Բայց ան
 միջոցներուն երկու տէրութեանց վնասպետներն ալ
 մեռնելով, իրենց գահերը երիտասարդ իշխաններու
 թող տուին: Երկու Սիկիլիայի Փրանկիսկոս Ա. թա-

գաւորին յաջորգեց (1830, նոյ. 8) իր որդին Փերդի-
նանդ Բ., որն որ խել մը նորոգութիւններ ըրաւ եւ
քաղաքական յանցանաց համար բանառ գոնուողներէն
շատերուն թողութիւն ստաւ: Իսկ Սարգիսիայի Կա-
րոլոս Փելէքս թագաւորին մեռնելովը (1831, Ապր.
27), արքունական տան գլխաւոր ցեղին արական օւ-
րունդը սպառելով, իրեն յաջորգեց կողմնական Գարի-
նեան գծէն՝ Կարոլոս Ալպերգ իշխանը (51), որն որ նոյն
ատեն Սարգիսիա կողդոյն փոխարքան էր: Աս թագաւո-
րը, որն որ յառաջագոյն յեղափոխականաց հետ միա-
բանած ու ետքը անոնցմէ բաժնուած էր, հաւասարա-
պէս կը վախնար Աւստրիայէն՝ որ չըլլայ թէ իր յառա-
ջուան ընթացքին համար իրեն հետ պազութեամբ վա-
րուի կամ իր գահակալութեան գէմ ելլէ, եւ ազա-
տականներէն՝ որ իրենց դատը մատնելուն համար իրմէ
վրէժ տռնուլ չուզեն: Բայց երկուքն ալ չպատահեցաւ.
Աւստրիայի կողմնէ պազութիւն կամ ընդգիծութիւն
չցուցուեցաւ. իսկ ազատականիք առժամն հանդարտ
մնացին, յուսալով որ զինքը դարձեալ իրենց կողմը կը
վաստրկին, որուն համար Յովսէփ Մածժինի՝ որն որ ան
ատեն տակաւին անժանութ երիտասարդ մըն էր, առան-
ձին նամակաւ զինքը յորդորեց որ Իտալիայի երկիրներն
օտար լծէն ազատէ եւ իր թագին տակ միակ աէրու-
թիւն մը կազմէ: Թագաւորը նոյն ժամանակ աս յոր-
դորին ականջ չկախեց, մանաւանդ թէ երկու տարի
ետքը՝ Երիտասարդ Իտալիա անուամբ երեւան ելլող
գաւակցութեան անդամները շարաշար խստութեամբ
պատժեց, նոյնպէս ուրիշ առիթներու մէջ ալ յեղա-
փոխականներուն հետ սաստիկութեամբ կը վարուէր եւ
անոնց շարժումները կը զսպէր:

130. Հելուետիայի շփոթութիւնները: Նոյն
միջոցներուն աս երկիրն ալ ներքին շփոթութիւննե-
րով տահնուվրայ կ'ըլլար: Հոն թէպէտ շատերը իսկըզ-
բանէ 1814ին ու 1815ին գրուած կարգադրութիւն-
ներուն վրայ տժգոհ էին. սակայն այնպէսով ալ խել

մը տարի մեծ շփոթութիւն չէր ելած, եւ հազիւ վերջին աստիճանները լրագիրները սկսած էին ձայներնին բարձրացընել: Իսկ Յուլիսի յեղափոխութենէն ետքը նաեւ հոն աղմուկներ փրթան, որոնց մէջ Գաղղիացի ազդեցութիւն ալ կար. որովհետեւ Գաղղիացի յեղափոխականը յայտնապէս կը զրուցէին թէ Պէտք է որ Հելլենափա Գաղղիացի ձեռքով եւ Գաղղիացի շահուն համեմատ՝ կերպարանափոխ ըլլայ: Երթալով գրգռութիւնն ու ահաճութիւնը սաստկացաւ. սագին անդին ազատութեան ծառեր կանգնեցան. գեղացիք տեղ տեղ սաք ելան եւ ուզածնին ձեռք բերին, որոնց գլխաւորն էր՝ նոր սահմանադրութիւն շինելու համար՝ պատգամաւոր ընտրելու ժողովներ կազմել: Աս բանս զանազան շփոթութիւններով ու կռիւներով գլուխ հանելէն ետեւ, Լիցեան, Ցիւրիխ, Պեռն, Սալթուռն, Ս. կալլ, Աարկաւ ու Թուրկաւ նահանգները Եօթանց գաշիկքը դրին՝ նոր սահմանադրութիւնը հաստատուն պահելու նպատակաւ (1832, Մարտ 17): Անկէ ետքը սկսան ջտնիլ՝ Հելլենոսական կեդրոնական կառավարութիւն մը հաստատելու, ինչպէս որ անցեալ դարուն վերջերն ու ներկայ դարուն սկիզբները մէկ երկու հեղ եղած էր (Հատ. Գ. 115, 149): Նոյն վախճանաւ դրուած մասնաժողովն առ կերպով սահմանադրութիւն մը շինեց ու առանձին նահանգներուն խաւրեց որ հաստատեն. բայց ան սահմանադրութիւնը յեղափոխականաց բազմացածին չափ ազատական չլլալով, մերժուեցաւ, որով իրենք ալ իրենց գլխաւոր նպատակին չկրցան հասնիլ: Սակայն նոյն ժամանակներէն սկսեալ, Հելլենափա՝ բոլոր յեղափոխականաց գլուխներուն ժողովատեղին եղաւ, որոնց մէջ ամենէն աւելի գործունէութիւն ունեցաւ Մածծինի: Ասիկայ Մարտիկացի մէջ Երիտասարդ Իտալիայի ընկերութիւնը հաստատեցէն զատ (1832), զանազան կողմերէն Հելլենափա ժողովուոջ փախստականներէն՝ Երիտասարդ Եւրոպայի ընկերութիւնը կազմեց (1834, Ապր.), որուն

իւրաքանչիւր բաժինները՝ իրենց ազգայնութեան համեմատ՝ Երիտասարդ Գերմանիա, Երիտասարդ Լեհաստան, Երիտասարդ Հելլենաստիա եւ այլն կոչուեցան։ Ասոնք զանազան կողմեր եւ առանձինն իտալիա ու Գերմանիա յեղափոխութիւն հանելու փորձեր ըրին, որոնք չէ թէ միայն պարտապ եղան, հապա առ հեռեւեալութիւնն ալ ունեցան՝ որ Գերմանիայի աւերութիւնները գաշնակցական ժողովոյն արտունջներ ընելով եւ ետքէն սահմանները վաղել սպառնալով, վերջապէս Հելլենաստացիք սափազեցան յանձն առնուլ գրգռիչ յեղափոխականներն իրենց երկրէն հեռացընելու (Յուլ.)։ Ի վերայ այոր ամենայնի անկէ ետեւ ալ գարձեալ խել մը Գերմանացի գործաւորք տեղ տեղ քաղաքական ժողովներ գումարելով, Հելլենաստիայի ու Գերմանական աւերութեանց մէջ պաշտօնագիրներու շարքի մը պատճառաւին։ Իսկզբան Հելլենաստացիք երկայն ժամանակ դէմ գրին նոյն տէրութեանց պահանջմունքը կատարելու։ Բայց վերջապէս տեղի տուին, որուն շատ օգնեց Գաղղիայի կառավարութեան ալ առ նկատմամբ մեկալ աւերութեանց հետ միանալը (150)։ Ասիկայ իմանալու համար Գաղղիայի ու Անգղիայի վեճակն ու իրենց իրարու հետ ինչպէս նաեւ ուրիշ տէրութեանց հետ ունեցած յարաբերութիւնը նկատելու ենք։

131. Գաղղիացիք սահմանադրութեան նկատմամբ, եւ Լուզովիկոս Փիլիպպոսին ընթացքը։ Անանկ կը կարծուէր որ աղաաական սկզբունքներուն Գաղղիայի մէջ յաղթող ըլլալովը եւ ան սկզբանց վրայ Լուզովիկոս Փիլիպպոսին գահին բարձրանալովը, նոյն տէրութեան մէջ սահմանագրական կերպը խորունկ արծաստ պիտի ձգէ, որով Գաղղիա՝ երեսփոխանական կառավարութեան նկատմամբ՝ Անգղիայի բարձրութեան պիտի վերանայ, եւ Գաղղիական սենեակներն իրենց երկրին վրայ այնչափ ազդեցութիւն պիտ'որ ընեն, ինչչափ որ Անգղիայի խորհրդանոցն առ վերջին երկրին վրայ կ'ընէր։ Բայց առ ակնկալութիւնը պարտապ ելաւ, չէ թէ

միայն անոր համար՝ որ Լուգովիկոս Փիլիպպոս սահմանադրական կերպին յօժարութիւն ունեցող մարդ չէր, հասցաւ անոր համար ալ որ Գաղղիացիք՝ Անգղիացւոց պէս՝ հանգարաւ բնաւորութիւն շունենալով, չէին կրնար անոնց պէս կարգաւորեալ եղանակաւ ու պատշաճ չափին մէջ սահմանադրական կերպը յարաջ տանիլ: Գաղղիացւոց թագաւորը չէր կրնար իր առաջնորդող ձեռքը կառավարութեան գործքերէն եւ քաշել, ապա թէ ոչ՝ ամեն բան տակնուվրայ կ'ըլլար. ուր որ Անգղիայի թագաւորը չի կրնար երբէք ձեռքը նոյներուն երկնցքնել՝ խորհրդանոցին որոշ ու միակերպ ընթացքը փոխելու համար: Աս բանս շատերը շուտ մ'իմացան, բայց մեծագոյն մասը Լուգովիկոս Փիլիպպոսին բրած ազատական փոփոխութիւններէն ու անձնական վարմունքէն խաբուեցաւ: Իրօք ալ իսկզբան նոր թագաւորին գլխաւոր ջանքն եղաւ Գաղղիացւոց սէրը վաստակիլ: Աս նպատակին հասնելու համար՝ անանկ ձեւացուց որ բուն թագաւորոզն ինք պիտի չըլլայ, հապաժողովուրդը, եւ սա պատճառաւ՝ Պուրպոնեանց պէս՝ Գաղղիայի թագաւոր չըսուեցաւ, այլ՝ Գաղղիացւոց թագաւոր, իր թէ ցուցընելու համար որ ինք Գաղղիական ազգին երեսփոխանն է եւ անոր անուամբը պիտի կառավարէ: Մասնաւորապէս փոյթ տարաւ Փարիզոց աչքը մտնելու, ուստի եւ այն ամենայն ի գործ գրաւ, որն որ գիտէր թէ անոնց եւ գլխաւորաբար ազատականաց հաճելի է: Նախընթաց թագաւորին պահակապան գնդերը լուծեց, Հելուեաիացիները տեղերնին խաւրեց, մինչեւ ստաիկանութեան համար քաղաքային պահակապաններ գրաւ: Նաբօլէոնեան բանակին հանուած կամ անթոշակ մնացած ու ազքաատցած բազմաթիւ պաշտօնակալները նորէն ծտաւայութեան մէջ խոթեց: Քաղաքական պաշտօնատեարց մէջ ալ շատ փոփոխութիւններ բրաւ, եւ Պուրպոնեանց գրածներուն տեղ՝ ազատամիտ մարդիկ անցուց: Քաղաքական յանցանաց համար դատապարտուողներն ազատեց

ու քաղաքական տքտորեալներն ետ կանչեց . անանկ որ միայն Նաբոլէոնեան ընտանիքը յառաջուան պէս Գաղղիայի ստահանէն տքտորուած մնաց : Իր առանձնեական վարմունքին մէջ ալ ուզեց ցուցնել թէ իր գահը՝ ժողովրդական գահ է, հասարակապետական կարգադրութիւններով : Արքունիքը քաղաքական կերպարանք ընգունեցաւ . կարծես թէ աստիճանի ու վեճակի տարբերութիւնը վերցուած էր, ամէն մարդ ուղածին պէս կրնար մտնել երէւ : Թագաւորը խիտտ յաճախ պատուհան կ'ելլէր՝ պալատին չորս կողմը ժողովուած բազմութիւնը բարեւելու համար . ճամբան շատ անգամ սպրով կը պարտէր քաղաքացւոյ զգեստով, ամենուն սիրով բարեւ կու տար ու բարեկամաբար կը խօսէր, ամենուն ձեռքը կը թօթուէր :

132. Քաղաքացիք ու իրենց իշխանութիւնը : Ազգովիկոս Փիլիպպոս շատ իրաւունք ունէր ջանալու որ Փարիզոց եւ առանձինն քաղաքացւոց ոէրը վատարկի . որովհետեւ նոյն ատեն քաղաքացիք ընկերութեան ուրիշ ամէն կարգերէն աւելի ղօրաւոր էին : Գաղղիայի մեծ յեղափոխութեամբ՝ կարգերու միջինգարեան զանազանութիւնը կատարեալ վերցուած էր . ազնուականաց ու կղերականաց ձեռքէն բոլոր իրենց արտօնութիւններն առնուած էին, եւ բովանդակ իշխանութիւնը՝ միջին կամ քաղաքացւոց կարգին անցած էր : Պաւրպոնեանք չէին կրնար աս բանս հաճութեամբ տեսնել, սուտի եւ բնականապէս պէտք էին ջանալ յեղափոխութենէն յառաջ եղող վեճակը ետ դարձնելու, որն որ արդէն ըստ մասին Նաբոլէոնին ձեռքովն ալ գլուխ ելած էր : Նոյն հանգամանաց մէջ պատահեցաւ Յուլիսի յեղափոխութիւնը : Ազատական գիմադրականաց գլխաւորները, որոնք ըստ մեծի մասին քաղաքացւոց կարգէն էին, օտար երկիրներէն ետ դարձող Նաբոլէոնեանց հետ միացած, նորահաստատ գահին չորս կողմը պատեցին . Ասով քաղաքացիք բովանդակ իշխանութիւնը ձեռք անցուցին, եւ սկսան՝

ինչպէս արձակապետութեան՝ նոյնպէս հասարակապետութեան հաստատուիլն արգելելու ջանք ընել: Յուլիսի յեղափոխութեան ունեցած աս կատարածին վրայ Պուրպոնեանց կողմնակիցներուն (Օրինաւորականաց) չափ նեղացան սոստիկ հասարակապետականք, որով եւ երկուքն ալ միապէս Յուլիսի գահին դէմ մեծ թրշնամութեամբ կը վարուէին: Պուրպոնեանք աղքունիքէն ու հրապարակական պաշտամունքներէն հեռանալով, եւ օրինաւորական լրագրոց մէջ կառավարութեան ամէն գործքերը վար զարնելով, իսկ հասարակապետականք՝ երբեմն գաղանի դաւակցութիւններով, երբեմն յեղափոխութեամբ ու ետքէն նաեւ տպանութեան փորձերով, զԱւագովիկոս Փիլիպպոս կործանելու կը ջանային: Սակայն եւ այնպէս քանի որ նոյն թագաւորը քաղաքացւոց սէրը կը վայելէր, աս ամէն հակառակութիւնները գիւրաւ կրցաւ յազթել: Արտաքին տէրութեանց նկատմամբ իր բռնած խաղաղական ընթացքն ալ Գազդիացւոց շատերուն եւ մասնաւորաբար քաղաքացւոց խիստ հաճելի եղաւ. վասն զի թէեւ պատերազմական համբաւը կը սիրէին, ի վերայ այսր ամենայնի կ'իմանային որ աւելի խաղաղութեան ատեն՝ քան թէ պատերազմներու մրրկաց մէջ՝ կրնան պահել ձեռք բերած իշխանութիւննին եւ հարստութիւննին վայելել:

133. Թագաւորն իր ժողովրդականութիւնը կը կորսընցընէ: Իր ու պաշտօնէից ընչասիրութիւնը իւրաց ժողովրդեան յիշեալ թագաւորին վրայ ունեցած աս միտումը շուտով սկսաւ նաւագիլ. որովհետեւ մէկ կողմանէ՝ իր իշխանութիւնը մեծցընելու, մէկալ կողմանէ ալ՝ քաղաքացւոց շափազանց իշխանութիւնն ու զօրութիւնը չափաւորելու համար, կամաց կամաց աննկ ընթացք մը բռնեց՝ որ Պուրպոնեանց դէմ եղած տրտունջները՝ իրեն դէմ ալ սկսան ըլլալ: Պատգամաւորաց ընտրութեան ժամանակը զանազան միջոցներ բանեցընելով, անձնցմէ շատերը պաշտօններով կամ խոստումներով ու պարգեւներով կառավարութեան

կողմը վառարկելով, գրեթէ իր ամէն ուզածին հաւանութիւն կ'առնուր: Իսկ ատենակալաց սենեակը, որուն անգամներն ինք կ'անուանէր, եւ ոչ իսկ կրնար իբրեւ օրէնսդիր ժողովք նկատուիլ, հապա իբրեւ պարզ անկենդան գործիք մ'եղած էր, զորն որ կառավարութիւնը կը գործածէր տէրութեան գէմ յանցանք գործողները դատելու համար: Լուգովիկոս Փիլիպպոսին աս անկախութեամբ գործելու բաղձանքը տեսնելով Յուլիոսի յեղափոխութեան գլուխները կամ իր գահ ելլելուն գլխաւոր պատճառներն ըլլողները, ինչպէս էին Լաֆայէզ ու Լաֆիգ, շուտով իրենց պաշտօններէն հեռացան (1830, Գեկտ. 27. 1831, Մարտ 12). որով թագաւորին չորս կողմն անտնկ մարդիկ մնացին, որոնք անոր կամացը կը հնազանդէին, անոր խորհուրդները կը կատարէին եւ անոր տան շահք յառաջ տանելու կը ծառայէին: Ինք թէեւ արդէն խիստ մեծ հարստութիւն ունէր, իր բարձր դիրքը կը գործածէր նոյնը միշտ աւելի շատցընելու: Թէ իրեն եւ թէ իր զաւիրներուն՝ մեծամեծ թոշակներ կապել տուաւ տէրութենէն. եւ թէպէտ խոտացած էր որ կառավարութեան ծախքը շատ պիտի թեթեւնայ, ի վերայ այսր ամենայնի նոյն ծախքն այնչափ աճեցաւ, որ բոլոր յառաջուան կառավարութեանց ծախքերն անցուց: Հարստութիւնը շատցընելու համար ամենեւին միջոց է մը չէր քաշուեր. հրապարակական կարծեաց նայելով, տէրութեան մէջ ալ՝ գրոթի երկիրներն ալ գրամական շահագիտութիւններ կ'ընէր: Կառավարութեան գլուխը կեցողներն ալ աս նկատմամբ խիստ անպատշաճ ընթացք կը բռնէին. պաշտօնները ծախել, կաշառ առնուլ, ստակով շնորհումներ ընել, ընկերութեանց արբուած արտօնութիւններուն գիմացը՝ անոնց բաժնորգութիւններուն մասնակից ըլլալ, եւ ուրիշ անկարգութիւնք՝ սովորական եղան. գրամանենգութիւնն ու խաղերու մէջ խարդախութիւնք՝ Գաղղիայի քանի մը երեւելի ընտանեաց անունը նախատանաց նիւթ ըրին:

134. Կողմնակցութիւնը: Օրինաւորականաց ջանքն ու ետ քաշուիլը: Հասարակապետականը, ընկերվարականը ու Հասարակավարականը: Սուրբ-կոս Փիլիպպոս կը կարծէր թէ ան ատեն աւելի ապահովութեամբ կրնայ իր իշխանութիւնն ու գահը հաստատել, երբ որ մեծ կողմնակցութեանց մէկուն հետ չիմիանար, հապա անոնց մէջտեղը միջին ճամբայ մը կը բռնէ. յուսալով որ ասով ամէն կողմնակցութեանց չափաւորեալ մարդիկն իրեն հետ կը միանան: Աս թաթացքը բռնեցին իր ժամանակը պաշտօնեայ բլլազներէն շատերը՝ Գազիմիր Բերիէէն († 1832, Մարտ) սկսեալ¹: Իսկ իրենց գէմ եզող կողմնակցութիւնը էին Օրինաւորականը, Հասարակապետականը ու Նարոյէտնեանը: Ամենէն յառաջ Օրինաւորականը սկսան շարժիլ. բայց ժողովրդեան մէկ մասին՝ Պուրպոնեանց գէմ ունեցած առեւտրութիւնը աակաւին իր ոտստկութեան մէջ բլլալով, չկրցան բան մը յաջողցրնել: Պերրիի գրոին (43) մահուան օրը՝ Փարիզի Ս. Ժերմէն եկեղեցին Պուրպոնեանց ճերմակ գրօշը բացուիլը (1831, Փետր. 13), սաստիկ գրգռութիւն պատճառեց, որուն հետեւութիւնն ան եղաւ որ խաժամուժը արքեպիսկոպոսին պալատն աւարեց, ապականեց ու մէջի աղէամաղըքը Աէն դեաը նետեց: Անկէ ետեւ Օրինաւորականը աչուրնին Վանտէ գարձուցին, ուր որ անձամբ եկաւ Պերրիի գրոուհին. բայց հոն ալ յեղափոխութիւնը մեծ յառաջագիմութիւն չբար, եւ գրոուհին բռնուելէն ետեւ (1832, Նոյ. 7), հոգիները կամաց կամաց պաղեցան: Օրինաւորականը՝ որոնց գլուխը կը կենար Շագոպրիան ծեր բանաստեղծը (55), ալ անկէ ետեւ յոյսերնին կարեցին Պուրպոնեանց վերջին արուզաւակը՝ Պորապի դուքսը (94) գահ հանելէն, զորն որ իրենց մէջ Հենրիկոս Ե. կը կսչէին: Աւստի եւ Փարիզի Ս. Ժերմէն թաղը քաշուեցան, յուսալով որ շփոթու-

¹ Ասոնց գրութիւնը *Justo milieu* բոււեցաւ, իրենք ալ *Doctrinaires* կոչուեցան:

Թիւն մը փրթի նէ, իրենց յաջողութեան աստղը նորէն կը ծագի: — Աւելի վասնգաւոր եղան Հասարակապետականաց յանդուգն ձեռնարկութիւնները: Ասոնք կառավարութեան բռնած ընթացքին վրայ նեղանալով, Լիոնի մէջ զէնք առին (1831, Նոյ.), եւ մետաքսի գործատանց սոճոհ բանուորներուն հետ միանալով, շաբաթ մը նոյն քաղաքն իրենց իշխանութեան տակ պահեցին, մինչեւ որ զէնքի զօրութեամբ դսպեցան: Իրենց այսպէս գիւրաւ նուաճիլը՝ նոյնպիսի ձեռնարկութենէ ետ չկրցաւ կեցընել Փարիզ եղող իրենց կարծեկիցները, որոնք Լամարգ զօրապետին յուզարկաւորութեան առթովը՝ յեղափոխութիւն մը հանեցին (1832, Յունիս 5), որն որ գործակիցներուն գլուխը սաստիկ պատիժներ բերելէն ուրիշ հետեւանք չունեցաւ: Նոյն ելքն ունեցաւ նաեւ Լիոնի մէջ իրենց հանած երկրորդ յեղափոխութիւնը, որն որ հինգ վեց օր տեւեց (1834, Ապր. 9—14): Ա՛լ անկէ ետեւ Հասարակապետականք չէին համարձակեր հրապարակաւ շփոթութիւն հանելու. գրասանց գլուխին կը ծռէին, բայց գաղտնի ընկերութիւններով ու լրագիրներու հատուածներով կարծիքնին տարածելու կը ջանային: Շուտ մ'ալ զանազան մասերու բաժնուեցան: Ուր որ զուտ Հասարակապետականք՝ միայն թագաւորական գահը կործանելով՝ հասարակապետութիւն հաստատել կ'ուզէին, ուրիշները՝ որոնք ընկերվարականք ու Հասարակավարականք¹ ըսուեցան, սեպհական ինչք ունենալը՝ գողութիւն կը համարէին, բոլոր ստացուածոց տէրերուն դէմ պատերազմ կը հրատարակէին, բանուորներուն վարձքը շաացընել եւ տէրութեան ձեռքով կարգաւորել կ'ուզէին. մէկ խօսքով՝ իրենց նպատակ ունէին, տէրութեան վիճակը փոխելէն զատ, բոլոր մարդկային ընկերութեան հանգամանքը տակնուվրայ ընել: Եւ թէպէտ հարուստներն ու մեծերը ասոնց կարծիքները ցնորական երազներու տեղ գնելով՝ կ'ար-

1 Socialistes, Communistes.

համարհեին, բայց ընկերութեան ազգաառ նեղեալ դատերը՝ իբրև բարձր իմաստութիւն եւ իրենց ազատութեան խորհիւր՝ սիրով կ'ընդգրկէին, որով եւ ուամկաւորք գիւրաւ կրցան զանոնք ամէն կողմ տարածել:

185. Լուղովիկոս Փիլիպպոսին կենացը դէմ գաւաճանութիւնը: Փարիզի ամբուսթիւնները: Թագաժառանգին մահը: Այնչեպէս կարծեաց զլեւաւոր պաշտպաններն ու կողմնակիցները մտքերնին զնելով որ Գաղղիայի կառավարութեան շինուածքը՝ միայն Լուղովիկոս Փիլիպպոսին անձնական ճարտարութեամբը հաստատուն կը կենայ, զանազան անգամներ անոր կենացը դէմ գաւաճանութիւն նախեցին, որպէս զի անոր մահամբը պատճառած աղմկին մէջ՝ հասարակապետութիւն հաստատեն եւ իրենց ընկերական նորոգութիւններուն ձեռք զարնեն: Աս մտքը նոյն թագաւորին դէմ ութը հեղ սպանութեան փորձեր ըրին, որոնց մէջ ամենէն զարհուրելին էր Ֆիէզի անուն Գորսիգացւոյն՝ գժոխային ըսուած մէքենայով ըրածը (1835, Յուլ. 28), որով թագաւորին քովի մարդիկներէն 21 հոգի մեռան, եւ որուն համար Ֆիէզի իր երկու գործակիցներովը սպանուեցաւ: Սակայն ասոնց մահն ուրիշները նոյնպիսի եղեւնագործութենէ ետ չկեցուց, եւ թագաւորին կեանքը մինչեւ վերջը անոնց գաւազործութեանց նպատակն եղաւ: Ի վերայ այս ամենայնի անիկայ ինք զինքն ու իր ցեղը գահին վրայ հաստատուն կը սեպէր. մանաւանդ երբ որ Թիերին օգնութեամբն արտաքայ կարգի ծախքով կրցաւ գլուխ հանել շատոնց ունեցած բողձանքը՝ Փարիզ քաղաքը չորս կողմանէ ամբուսթիւններով պատելու: Ասոր գրասնց պատճառ կը բերէր՝ մայրաքաղաքն արտաքին թշնամիներու դէմ ամրացնել. բայց իրական նպատակն ան էր, որ հասարակապետական շարժումները գիւրաւ կարենայ զըսպել. ինչու որ Գաղղիայի մէջ տիրող սաստիկ կեղբոնականութեան նայելով, որով բոլոր քաղաքական կեանքը Փարիզ ամփոփուած է, նոյն մայրաքաղաքին

վրայ իշխողը՝ ապահով կրնայ ըլլալ տերութեան ամէն կողմերն ալ իր ձեռքին տակ ունենալաւ: Բայց թաղաւորին վատահուժիւնը խիստ նուազեցաւ, երբ որ թագաժառանգը՝ Օրլէանի գուբը, որն որ ամենուն սիրելի էր, կառքէն իյնալով՝ մեռաւ (1842, Յուլ. 13): Եւ որովհետեւ նոյն իշխանին ժառանգը՝ որն որ ըստ կարգի Լուդովիկոս Փիլիպպոսին պէտք էր յաջորդել, տակաւին պզտիկ տղայ էր, անոր համար թագաւորը սենեակներուն մէջ որոշել տուաւ, որ եթէ անիկայ չափահաս չեղած՝ ինք մեռնելու ըլլայ, իր երկրորդ որդին՝ Նրմուրի գուբը ինամապետութիւն ընէ:

136. Նաբոլէոնեանք: Նաբոլէոնին որդւոյն մահը: Լուդովիկոս Նաբոլէոն եւ Նաբոլէոնին ոսկրներուն Փարիզ փոխադրուիլը: Լուդովիկոս Փիլիպպոսին գէմ եզոզ կողմնակցութիւններէն մէկն ալ՝ ինչպէս վերը յիշեցինք՝ Նաբոլէոնեանցն էր, որոնց դիտումն էր Գաղղիայի գահը հանել Մեծ Նաբոլէոնին որդին, որն որ ծնանելու ատենէն՝ Հռոմի թագաւոր կոչուած էր (Հատ. Գ. 208) եւ նոյն ատեն Ալեքսանդրի արքունիքը կը գանուէր: Իրենց ակնկալութիւնը՝ որն որ Գաղղիացոց մէկ մասին եւ մանաւանդ զինուորականաց շատերուն սրտին մէջ նոյն կայսեր ու անոր որդւոյն վրայ եղած յօժարութեան, եւ երիտասարդ իշխանին անձնական միտութեան ու զինուորական հոգւոյն վրայ հիմնուած էր, ասով աւելի կը մեծնար որ կը յուսային թէ Աւստրիայի կայսրը՝ որն որ զանազան նկատմանց համար լռութեամբ ընդունած էր Պուրպոնեանց ցեղին մերժուիլն ու Օրլէանի ցեղին գահ ելլելը, գէմ չի գառնար իր սեպհական թոռան գահ անցնելուն, եւ թէպէտ նոյն երիտասարդ իշխանին մեռնելովը (1832, Յուլ. 22), աս կողմանէ ակնկալութիւննին նուազեցաւ, բայց ուրիշ իշխան մ'երեւան ելաւ, այս ինքն՝ Հոլանտայի հրաժարող թագաւորին (Հատ. Գ. 210) որդին, Լուդովիկոս Նաբոլէոն: Անիկայ Լուդովիկոս Փիլիպպոսին գէմ ժողովրդեան մէջ եղած ատելութե-

նէն քաջալերուելով. սկսաւ ջանք ընել անոր գահը կործանելու, եւ Նաբոլէոնին գահը նորէն կանգնելով, ինք վրան ելլելու: Առաջին անգամ իր հօրեղբորը կողմնակիցներէն քանի մը հոգւոյ օգնութեամբ՝ ուզեց Սգրապուրի մէջ զինուորները ոտք հանել, որոնք իր կողմը վստարկուած էին. բայց կառավարութիւնը բանն իմացած եւ հանտեղաց զնգերը փոխած ըլլալով, չէ թէ միայն փորձը պարագ ելաւ, հապա նաեւ ինք ձեռք ինկաւ (1836, Հոկտ. 30): Լուգովիկոս Փիլիպպոս ան ատեն ինք զինք անանկ ապահովութեան մէջ եւ Նաբոլէոնեաններն անանկ տկար կը համարէր, որ իշխանն Ամբրիկա խաւրիքը բաւտիան սեպեց: Անկից քանի մը տարի ետքը ուզեց Մեծ Նաբոլէոնին սոկրները փորձը բերել, եւ Անգղիոյի կառավարութեան հետ խօսելէն ետեւ, իր երրորդ որդին՝ Ժակէնվիլի իշխանը խաւրեց՝ նոյն գործքը կատարելու: Լուգովիկոս Նաբոլէոն, որն որ շուտ մը Ամբրիկայէն ետ դարձած, եւ քիչ մը ժամանակ Հելլենտիա կենալէն ետեւ՝ Լոնտոն գացած էր, աս առիթը գործածել ուզեց երկրորդ փորձ մ'ընելու. ուստի եւ յիսուն հոգւով Պուլյոյն եկաւ (1840, Օգոստ. 6), բայց քաղաքին մէջ ընդունելութիւն չգտաւ, եւ նաւակով մը փախչելու ատեն՝ ձեռք իյնալով, Համբրը բանտարկեցաւ: Իսկ Նաբոլէոն կայսեր սոկրութիւնը՝ թեպէտ մեծ հանգիստութեամբ անկարող զինուորաց եկեղեցին թաղուեցան (Գեկտ. 15), բայց Նաբոլէոնեանց ուզածին պէս ժողովրդեան կողմանէ ցոյց մը չտեսնուեցաւ:

137. Անգղիայի Գուլիելմոս Գ. Թագաւորը: Խորհրդանոցի նորոգութիւն ու գերեաց արատութիւն: Անգղիա՝ ինչպէս ուրիշ անգամներ ալ եղած էր՝ աս հեղ ալ իր դրիւքը Յուլիոսի յեղափոխութենէն եւ ցամաք երկրին շփութութիւններէն՝ մեծ արգեցութիւն չկրեց: Իր կղզիացեալ գիւրէն զատ՝ ասոր շատ օգնեց մէյ մը ան պարագան, որ քիչ մը յառաջ ուղղափառաց ազատութիւն տրուած ըլլալով (41), տրանջման

առիթմներէն մէկը վերցուած էր, մէյ մ'ալ որ նոյն միջոցներուն Գեորգ Գ. (39) մեռած ըլլալով իր տեղն անցած էր Գուլիելմոս Գ. եղբայրը (1830, Յունիս 26), որն սր ժողովրդեան շատ սիրելի էր: Ի վերայ այոր ամենայնի գրացի երկրին մէջ եղած փոփոխութիւնը՝ բուրովին առանց ազդեցութեան ալ չէր կրնար մնալ, որով անհրաժեշտ հարկաւոր եղաւ խորհրդանոցի նորագութիւնը կամ պատգաւորաց ընտրութեան օրէնքին փոփոխութիւնը: Արդէն երկայն ժամանակէ վեր ժողովուրդը մեծ անվտանգութեամբ կը նկատէր նոյն պատգամաւորաց սենեակը. բայց նոյն ատեն աս անվտանգութիւնն ան աստիճանի աստուկացաւ, որ կամ պէտք էր հրապարակական կարծիքը գոհ ընել, եւ կամ յեղափոխութեան փրթելն աչքն առնուլ: Գուլիելմոս Գ. գահ ելած ատեն՝ սովորութեան համաձայն՝ խորհրդանոցը լուծելով, նոր ընտրութիւններ ընել տուած էր, որոնք առաւելագոյն ազատականաց կողմն ըլլալով, Ուելլինկոնի դքսին գահերիցութեան տակ եղող Գորի պաշտօնարանը ստիպեցաւ հրաժարիլ, ու տեղը Արէյի գահերիցութեամբ Ուիկ պաշտօնարան մ'անցաւ, որուն ամենէն երեւելի անդամներն էին Պրակէմ, Բալմերսդըն, Բրասսէլ, Արեհամ (նոյն): Ասոնք խորհրդանոցին մէջ պատգամաւորաց ընտրութեան նորագութեան նկատմամբ օրինագիր մ'առաջարկեցին (1831, Մարտ 1), որով իրաւացի տրտունջներու առիթները կը վերցուէին, վասն զի սակաւամարդ ու գրեթէ ամայի եղող եւ բոլորովին երկրատէրներու կամքէն կախում ունեցող տեղերէն պատգամաւոր ընտրելու իրաւունքն առնուելով, վաճառականութեամբ եւ գործատուններով երեւելի եղող բազմամարդ քաղաքներուն կը տարուէր: Յիշեալ օրինագրոյն պատճառաւ՝ պատգամաւորաց սենեակը լուծուելով, հետեւեալ սենեակը նոյնն ընդունեցաւ. բայց ասիկայ օգուտ մը չունեցաւ, որով հետեւ ատենակալաց սենեակը մերժեց: Ասոր վրայ ժողովուրդը օսաստիկ գրգռուելով, չէ թէ միայն տեղ

տեղ աղմուկներ հանեց, զատենակալներն՝ իբրև իրեն
 թշնամի եւ իր օգաին հակառակ՝ կրցածին շափ նա-
 խատեց ու վնաս հասցուց, հապա միտքը գրաւ որ եթէ
 անկէ ետքն ալ ատենակալք միեւնոյն ընթացքը բռ-
 նելու ըլլան, իրենց սենեակը բոլորովին ջնջել տայ:
 Նոյն նպատակներով աէրութեան ամէն կողմերն ըն-
 կերսւթիւններ գրուեցան, որոնք շատ ատարածուեցան
 ու զորացան: Այսպէսով թէպէտ ատենակալք մէյ
 մ'ալ փորձեցին օրինագիրը՝ նորէն առաջարկուած ժա-
 մանակ՝ մերժելու, որով Արեւի պաշտօնարանը հրա-
 ժարեցաւ. բայց գրգռութիւնք ան աստիճանի ուսա-
 կացան, որ նոյն պաշտօնարանը նորէն հաստատուեցաւ
 եւ ատենակալք օրինագիրն ընդունեցան (1832, Յու-
 նիս 4), զորն որ թագաւորն ալ հաստատելով (Յու-
 նիս 7), ահրութեան օրէնք եղաւ: — Նոր օրինաց հա-
 մեմատ ժողովուած խորհրդանոցին առաջին գլխաւոր
 գործքն եղաւ Անգղիական գաղթականութիւններէն
 գերութեան վիճակը ջնջել ու գերիներն ազատել, որն
 որ առանց մեծ գժուարութեան գլուխ տարուեցաւ
 (1833, Օգոստ.):

138. Օ'Գոնէլ ու Իրլանտայի Յետս կոչումը:
 Խորհրդանոցի նորոգութենէն ու գերեաց ազատու-
 թենէն զատ՝ ուրիշ խնդիր մ'ալ կար, որն որ առա-
 ջիններէն աւելի գժուարութիւն պատճառեց կառա-
 վարութեան: Ինչպէս յառաջագոյն յիշատակեցինք
 (40), Իրլանտոցի խեղճ աղքատ ժողովուրդը կրած
 սաստիկ նեղութիւններէն՝ համբերութիւնը կորսնցը-
 նելով, մեծամեծ անկարգութիւններ գործելու սկսած
 էր, եւ հազիւ կառավարութեան բանեցուցած խիստ
 միջոցներն ու Օ'Գոնէլին ջանքը կրցեր էին հանգարաու-
 թիւնն ըստ մասին նորէն հաստատել: Շատերը կը յու-
 սոցին որ ուղղափառաց ազատութեամբն ու խորհրդա-
 նոցին նորոգութեամբը՝ չարեաց պատճառները, եթէ
 բոլորովին չեն ջնջուիր նէ, գոնէ մեծաւ մասամբ կը
 վերանան. բայց կրնայ ըսուիլ թէ առ միջոցներ՝ յիշեալ

նիւթին նկատմամբ՝ առանց ազգեցութեան մնացին : Անոր համար Օ'Գոնէլ, որն որ պատգամաւոր եղած էր, սենեկին մէջ իր հայրենեաց շահը յառաջ տանելու փոյթ ընելէն զատ, բուն իոկ իր երկրին մէջ ալ ամէն կարելի միջոցներով կը ջանար նոյն նպատակին հասնիլ : Ընկերութիւններ կը հաստատէր, կամաւոր աուգքեր կը ժողովէր, ժողովներու մէջ ճառեր կը խօսէր, լրագրական հատուածներով իր հայրենակցաց իրաւունքներն ու կրած նեղութիւնները կը հրատարակէր : Իր գիտած նպատակն էր, բողջբական եկեղեցականաց՝ ուղղափառ Իրլանտացիներէն առած տասանորդները ջնջել : Եթէ ասով միայն գոհ ըլլար, կարելի է որ գէթ բոս մնաին ան շարեաց դարման տանէր, բայց ինք աւելի մեծազոյն բանի ձեռք զարկաւ, որ էր՝ Իրլանտայի ու Անգլիայի խորհրդանոցը միացնող օրինագիրը ետ առնուլ ու Տրալլընի մէջ Իրլանտական զատ խորհրդանոց հաստատել տալ, եւ աս է Իրլանտայի Յետակաշում՝¹ ըսուածը : Յայտնի էր որ Անգլիացիք աս բանս յօժարութեամբ յանձն չէին առնուր, եւ բաւական զօրութիւն ունէին խափանելու, ինչպէս իրօք ալ ըրին : Օ'Գոնէլ պէտք էր որ աս բանս տեսնէր. ուստի սովորական կարծիքն ան է, որ անոր համար աս անկարելի գործողութեան ձեռք զարկաւ, որպէս զի գիւրաւ կարենայ զլուխ տանիլ մէկալ գիտածները : Ինչպէս որ է նէ, իր ջանիցը հետեւութիւնն աս միայն եղաւ, որ կառավարութիւնը քանի մը տարի աշխատելէն եւ գրեթէ ամէն տարի խորհրդանոցին մէջ առաջարկելէն ետեւ, վերջապէս կրցաւ Իրլանտացւոց տասանորդը՝ երկրի գարձընել (1838) : Ասկից զատ՝ քիչ մը յառաջ ջնջուած էր (1836) Օրանեան ըսուած ընկերութիւնը, որն որ յիսուն տարի յառաջ հաստատուած էր բողջբականութիւնն ուղղափառաց գէժ պաշտպանելու նպատակաւ, եւ որուն անդամները՝ մանաւանդ վերջին ժամանակները՝ խեղճ Իրլանտացւոց գէժ ստո-

1 Repeal.

տիկ անագորունութիւններ կը գործէին: — Իսկ Օ'Գոնէլ՝ մէկ երկու անգամ՝ գատաստանի առջեւ ելլելէն ետեւ, կրած նեղութիւններէն առողջութիւնը կորսընցընելով, Իտալիա ըրած ճամբորդութեան ատեն՝ իր բազմաշեռա կեանքը կնքեց (1847):

139. Ախտորիա թագուհին: Գիլ ու ցորեննդէնի մարտին վերցուիլը: Չարգիսար: 'Նոյն միջոցներուն Գուլիելմոս Գ. անգլուակ մեռած ըլլալով (1837, Յունիս 20), իր Ախտորիա եղբոր ազջիկը տեղն անցաւ: Ինչպէս ուրիշ անգամներ ըսած ենք, աս երկրին հանգամանաց նայելով, վեհապետի փոփոխութիւնը՝ հրապարակական իրողութեանց վրայ ազդեցութիւն չ'ունենար, բաւական որ պաշտօնարանն ալ չփոխուի: Աս վերջին փոփոխութիւնը՝ թէպէտ իսկզբան չպատահեցաւ, ուստի եւ գահակալութեան ատենը կոռովարութեան սանձերը ձեռուրնին ունեցող Ուիկները չորս տարի մ'ալ պաշտօնի մէջ մնացին. բայց իրենց գէմ զանազան նկատմամբ տիրող տեղգութեան պատճառաւ՝ նոյն ատեն գումարուող նոր խորհրդանոցին մեծ մասն իրենց գէմ ելլելով, ետ քաշուելու ստիպեցան (1841): Իրենց տեղն անցան Գորինները՝ Արք Ռուպերդ Բելլին գահերիցութեամբը. ուրիշ գլխաւոր պաշտօնեպէք էին Ծերունին Ուելլինկըն, Սդենլի, Էպրտին, Պրզընկէմ ու Կրեհամ: — Նոյն ատենները Անգլիայի աղքատ ժողովրդեան նեղութիւնները խիստ ստուակացած էին, որուն գլխաւոր պատճառներէն մէկն էր քանի մը տարիէ վեր պատահող գեանախնձորի հիւանդութիւնը: Ասանկով օրրատօրէ կը մեծնար ընկերական գիմադրութիւնը, որն որ իրեն մասնաւոր նպատակ դրած էր ցորեննդէնի օրինադրոյն (39) բալորովին վերցուիլը, որպէս զի հացին գինն աժաննայ: Բիլ շուտ մը սկսաւ փոյթ տանիլ յիշեալ օրինագիրը ջնջելու, որ նկատմամբ իրեն մեծապէս օգնեցին երկու ընկերութիւնք: Առաջինը՝ որն որ Մանչեստեր քաղաքը հիմնուած էր (1838), իրեն միակ վախճանն ունէր ցորե-

նեղէնի մաքսին վերցուիլը, եւ իր գլխաւոր գործու-
նէութիւնը բանեցընելու սկսաւ՝ Բիլին պաշտօնեայ ե-
ղած տարին, երբ որ Գոպաէն ընկերութեան գլուխն
անցաւ : Առիկայ սովորաբար օրինաց համեմատ միջոց-
ներով կը ջանար իր նպատակին հասնիլ, որոնք էին՝ իր
անգամներէն կամաւոր աւելքեր ժողովել եւ ասդին ան-
գին ժողովներ գումարել . վերջին ժամանակները Լոն-
տոն գումարուած աս կերպ ժողովքի մը մէջ 6000էն
աւելի մարդ կը գանաւեր (1845, Գեկտ. 17) : Իսկ
երկրորդ ընկերութիւնը՝ որուն անգամները Չարդիստք
կը կոչուէին, եւ առաջին ընկերութեան հիմնուած տա-
րին՝ Պիրմինկէմ՝ քաղաքէն խորհրդանոցին պահանջա-
գիր՝ մը խաւրած էին, ցորենեղէնի մաքսին վերցուելէն
զատ՝ ուրիշ զանազան խիռտ առմկապեւածական պահան-
ջումներ կ'ընէին : Ասոնց միջոցներն իսկ՝ առաջիններէն
տարբեր էին, եւ քանի մը՝ հեղ մեծամեծ շփոթու-
թիւններ հանեցին ու աղմկալից ցոյցքեր ըրին : Բիլին
հակառակորդներն ասոնցմով մտածմանց մէջ ինկան,
որով եւ պաշտօնէին գործքը շատ դիւրինցաւ : Ուստի
թէպէտ եւ իրենց դիմագրութեան չկրնալով յաղթել,
ինք եւ իր ընկերները հրաժարեցան, եւ Ռեիկներուն
Ռասսէլ գլխաւորը նոր պաշտօնարան մը կազմելու փորձ
ըրաւ . բայց չկրնալով յաջողցընել, Բիլի պաշտօնարա-
նը նորէն հաստատուեցաւ, եւ երկրորդ տարին պատ-
գամաւորաց սենեկին (1846, Մայ. 16) ու ւտենա-
կալաց խորհրդոյն (Յունիս 25) մէջ իր առաջարկու-
թեան հաւանութիւն առաւ :

140. Ռուսիայի ներքին քաղաքականութիւնը :
Համալուրութիւն : Արնայ ըսուիլ թէ Յուլիտի յեղա-
փոխութիւնը աս պետութեան միտառ մը չհասցընելէն
զատ, իրեն համար մեծ օգուտ ալ ունեցաւ, որովհե-
տեւ սկզբնաբար նոյնէն առթած Լեհական յեղափո-
խութիւնը պատճառ եղաւ որ Լեհաստան՝ իբրեւ ա-
ռանձին տէրութիւն նկատուելէն դադրելով՝ Ռուսիայի

1 Pétition.

գառառ մը գարձառ: Արդէն անկից յառաջ ալ Նիկոզայոս կայսրն իրեն սկիզբ դրած եւ ձեռք ալ զարկած էր՝ իր տէրութեան մէջ ամենայն ինչ ռուսացընելու. բայց աչքի զարնող օրինակը տեսնուեցաւ՝ Լեհաստանի յեղափոխութիւնը զսպուելէն ետեւ՝ ան երկրին մէջ գործադրուած միջոցներէն: Իսկ աս միջոցները՝ չէ թէ միայն արգիւնութեան ու լեզուի նկատմամբ էին, հասպտ նաեւ կրօնի կողմանէ ալ: Նոյն քաղաքականութիւնը յայտնապէս հրատարակուած էր (1830) Ռուսաստան տպուած Եւրոպայիսն Հնգապետութիւն անուն գրքին մէջ, որուն հեղինակը գրեթէ բացայայտ զրուցելէն ետեւ որ քիչ մը ետքը Ռուսական տիեզերական իշխանութիւն մը պիտի հաստատուի՝ չէ թէ միայն զէնքի զօրութեամբ, հասպտ նաեւ կրօնի ձեռքով, կը հետեւցընէ թէ հարկ է որ Ռուսիայի սահմանին մէջ Ռուսական լեզուէն զատ՝ լեզու չըլլայ, Ռուսաց կրօնէն ուրիշ՝ կրօն չգտնուի: — Ռուսի աս քաղաքականութիւնն անով աւելի ծանրակշիռ հետեւութիւն կրնար ունենալ, որ իր սահմաններէն գուրս՝ իրեն համացեղ ու մեծաւ մասամբ համակրօն՝ բազմութիւ Սլաք կային, որոնք արդէն սկսած էին փոյթ ասնիլ որ իրենց մէջ եղող լեզուի ու ցեղի պզտիկ տարբերութիւններու միտ չընելով, իբրեւ Սլաւ՝ իրարու հետ միանան: Իրենց բանասերներն ու քաղաքագէտները զանազան գրուածներու մէջ կը զրուցէին որ Սլաւներն Եւրոպայի ամենէն բազմութիւ ցեղն են, որոնք՝ բաւական որ ուզեն, կրնան բոլոր աշխարհքիս տիրել: Արդ աս գաղափարն ունեցողները, որոնք Համասլաւականք, եւ իրենց խորհուրդը՝ Համասլաւութիւն՝ կը կոչուի, նոյնը գլուխ հանելու համար՝ աշուրնին Ռուսիայի գարձուցած էին. իսկ նոյն տէրութիւնը՝ թէպէտ յայտնապէս իրենց ձեռք չբռնէր, անանկ կը վարուէր որ իրենք կը քաջալարուէին ձեռնարկութիւննին աւելի փութով յառաջ տանելու: Իր երկիրներուն մէջ Սլաւեան լեզուներու գառարաններ

1 Pan-slavisme.

կը հաստատէր, ամէն տեղերէն երեւելի Սլաւ մասե-
նագիրները կը կանչէր, Սլաւ գրագեաններն ու գիտուն-
ները պարգեւներով ու պատուոյ նշաններով կը զեզու-
մէկ խօսքով, ինչ կերպով որ բլայ՝ Սլաւագեանութեան
եղած ամէն մէկ ծառայութիւնը, իրեն եղած ծառայու-
թեան պէս կը նկատէր ու կը վարձատրէր: Ստոյգ է,
այս ամենայն կրնար իբրեւ՝ առանց քաղաքական նպա-
տակի՝ միայն Ռուսականին համացեղ եզող լեզուները
պոյծ առայրնելու բաղձանքէն յառաջ եկած բանի պէս
մեկնուիլ. բայց եւ այնպէս չեն պակսիր նաեւ անանկ
գրուածներ, որոնք կը ցուցնեն թէ Ռուսիա բոլորովին
համալուութեան գաղափարներով տողորուած էր:
Վերոյիշեալ Եւրոպական հնգապետութեան գիրքը կը
հաստատէ թէ Ռուսական գահինը կ'ուզէ 76 միլիոն
Սլաւները՝ Ռուսի գլխաւորութեան տակ՝ ազգային գաղ-
նակցութեամբ միացնել:

141. Աւստրիայի Մեղդեանիկ պաշտօնեան:
Մաճառք, Ջեչեննի ու Գոշուիթ: Ինչպէս որ Յունա-
կան յեղափոխութեան եւ Ռուսական-Օսմանեան պա-
տերազմին ժամանակը՝ Մեղդեանիկ իշխանն եղած էր,
որ խնդիրը բուն ընդհանուր քաղաքականութեան կող-
մանէ նկատելով, Եւրոպայի հաւասարակշռութեան
համար ունենալու վտանգաւոր հետեւութիւնը ճանչ-
ցած ու առջեւն առնելու ջանացած էր. այնպէս նաեւ
աս հեղու ամենէն յառաջ ինք ճանչցաւ Ռուսի քա-
ղաքականութենէն եւ Համալուութենէն ծագելու
վտանգը, եւ առանց աղմկի փոյթ կը տանէր նոյնը խ-
փանելու: Աւստրիայի պաշտօնեան մեծապէս իրաւունք
ունէր վախի մէջ իյնալու, որովհետեւ նոյն տէրութեան
բնակիչներուն մէկ մեծ մասը՝ Սլաւ ցեղէ է: Իր նպա-
տակին հասնելու համար բանեցուցած միջոցն եղաւ,
Աւստրիական Սլաւներուն մեծ՝ բազմութեամբ գտնուած
տեղւոյն՝ Հունգարիային՝ բուն Մաճառ բնակչաց ձեռք
բռնել, որով չէ թէ միայն Համալուսեանց ջանքին
գէժ հաստատուն պատուար կը բարձրանար, հապա-

նաեւ ընդհանուր աէրութեան նիւթական յառաջագիմութեան նպաստ կ'ըլլար: — Մաճառները՝ որոնք չորս կողմերնին Գերմանացիներէ, Սլաւ ցեղերէ ու Ղալաքներէ պաշարուած՝ Հունգարիայի միջին գաւառները կը բնակին, թէպէտ ան տեղաց բոլոր բնակիչներուն երեք մասին մէկէն քիչ աւելի են, բայց հոնտեղացի Սլաւներէն կէս միլիոնի չափ բազմութիւն են: Ստոյգ է՝ Լեհական յեղափոխութեան ատենը Մաճառք գրգռուած եւ բաղձանք ունեցած էին անոնց օգնութեան երթալու. բայց աս գրգռութիւնը ծխոյ պէս անցաւ, երբ որ իրենց մէջէն Ստեփան Չեչենեի կոմսը մտադրութիւննին իրենց ներքին յառաջագիմութեան դարձուց, եւ անտեսական գրուածներով սկսաւ փոյթ տանիլ երկրին բարօրութիւնն աւելցընելու: Քաղաքական նիւթերու մէջ նոյն կոմսին բանեցուցած չափաւորութիւնը մեծապէս օգնեց իր ձեռնարկութեան յաջողելուն. ասիկայ գրեթէ միշտ կառավարութեան հետ միաբան կ'ընթանար, գիտնալով որ Հունգարիայի ճշմարիտ շահն՝ Աւստրիայի շահէն անբաժին է: Աս պատճառներով արդէն ըստ ինքեան պէտք էր որ Մեգդեանիկ իրեն նպաստէր. բայց նոյնին վրայ աւելցաւ՝ ինչպէս ըսինք՝ Ռուսի իշխանութեան ւճեղուն ու Համալաւութեան հոգը, որուն համար խոհեմութիւնը կը ցուցընէր թէ Մաճառները զօրացընելով, գիմագարձութեան միջոց մը պատրաստելու է: Սակայն Չեչենեի համամիտ եղող Մաճառաց ու Աւստրիական կառավարութեան աս միաբանութիւնը որչափ զօրաւոր ալ էր նէ, չէր կրնար մէյ մը գրգռուած շարժումն ուզած սահմանին մէջ պահել: Ըլլալու կարգաւորութեանց գլխաւորներէն մէկն էր՝ ազնուականաց արտօնութիւններուն քիչ մը նուազելը, զանազան տուրքերով՝ իրենց ալ երկրին ծախուց նպաստելը: Իսկ իրենք աս բանիս ամենեւին չէին հաւաներ, եւ անձնասիրութեամբ՝ բոլոր օգտակար կարգադրութիւններուն գէժ կը դառնային: Արդ աս ազնուականաց անձնասիրական

վարմունքը ժողովրդեան մէջ մեծ գրգռութիւն պատճառելով, առաջիններուն հակառակորդաց մէջէն շափազանց ազատական կամ արմատական¹ կողմնակցութիւն մը կազմեցաւ, որն որ կ'ուզէր ամէն բան կործանել, եւ ազատութեան ու հաւանաբութեան սկրզբանց վրայ նոր տէրութիւն մը կանգնել: Քիչ մը ետքը նոյն կողմնակցութեան գլուխն անցաւ Աւագովիկոս Գոշութ փաստաբանը, որուն ջանքովն արմատականութիւնը շուտ մը այնչափ յառաջ գնաց, որ վերջապէս կառավարութիւնը զինքը բանտարկել տուաւ:

142. Միւնիք - Կրէցի Ռուսական - Գերմանական արքայաժողովը: Գալիշի զօրահանգէսը: Խժէպէտ այսպէս Համապլաութեան պատճառաւ, Աւատրիա՝ Ռուսիայի վրայ կը կասկածէր, ի վերայ այսր ամենայնի նոյն երկու տէրութիւնք եւ Պրուշ միշտ միաբան կը գործէին՝ իրենց հասարակաց նպատակին հասնելու համար, որ էր՝ յեղափոխական հոգին զսպել: Գերմանիայի մէջ երեւցող նոյն հոգւոյն վրայ (126) անտեղաց վեհապետներուն ունեցած այլապլութիւնն ու տհաճութիւնը յարմար առիթ եղան Ռուսիայի նիկողայոս կայսեր՝ անոնց հետ առանձնական արքայաժողով մ'ընելու, որպէս զի Աւատրիայի ու Պրուշի եւ ուրիշ Գերմանական տէրութեանց հետ ունեցած իր մտերիմ դաշնաւորութիւնն առաւել եւս հաստատելով, կարող ըլլայ բաւական զօրութիւն ստանալ Անգղիական - Գաղղիական միաւորութեան դէմ զնելու: Ասան զի թէեւ նոյն երկու վերջին տէրութիւնք ոչ իտալիայի եւ ոչ լեհաստանի մէջ յայտնապէս ժողովրդեան կողմը միջամտութիւն ըրած էին, բայց բոլորովին առանց միտում ցուցնելու ալ չէին կեցեր, եւ նոյնտեղաց ժողովուրդներն ակնկալութիւննին անոնց վրայ դրած էին: Յիշեալ արքայաժողովը Միւնիք - Կրէց քաղաքը գումարուեցաւ (1833, Օգոստ. Սեպտ.), եւ անձամբ ներկայ էին Ռուսիայի ու Աւս-

1 Radical.

արիայի կայսրներն ու Պրուշի թագաժառանգը. իսկ Պրուշի թագաւորը՝ թէպէտ եւ անձամբ ժողովքի չեկաւ, բայց Դէօբլիցի մէջ Մեզդեռնիկին հետ տեսնուեցաւ: Աքքայածողոյցն դիւաւոր նիւթը՝ բաց ի Գերմանական իրողութիւններէն, եղաւ Լեհաստանի խնդիրը, որուն նկատմամբ Գերմանիայի երկու մեծ տէրութիւնք յանձն առին որ նիկողայոս կայսրը ուզածն ընէ: Աւստրիայի ու Պրուշի հետ ունեցած միաբանութիւնն աւելի ամրացրնելու եւ կամ հրապարակաւ ալ ցուցրնելու համար, նոյն կայսրը քիչ մը ետքը յիշեալ երկու տէրութեանց վեհապետները հրաւիրեց, որ իր Գալիչ ընելու զօրահանգեսին գան՝ հետերնին զօրք աւ բերելով, որպէս զի երեք տէրութեանց բանակները հոն իրարու հետ եղբայրակցին: Բայց առ վերջին նպատակը չկրցաւ գլուխ ելել, որովհետեւ Աւստրիայի կողմէն՝ Յովհաննէս ազքիզքսէն զատ մարդ չերեւցաւ. իսկ Պրուշի թագաւորին հետ եկող 6000 զօրաց պաշտօնակալները՝ թէեւ առիթ ունեցան Ռուսաց հարստութեան ու շալյութեան ցոյցերը տեսնելու, սակայն անոնց վրայ մեծ հակամիտութիւն չվաստրկեցան (1835, Սեպտ.): Նոյնպէս Ռուսիայի ու Պրուշի վեհապետաց նոյնտեղը՝ իրարու հետ (Սեպտ. 12) եւ Դէօբլիցի մէջ՝ Աւստրիայի կայսեր հետ (Սեպտ. 26) տեսնուելէն, իրարու հետ նոր դաշնակցութիւն մը յառաջ չեկաւ:

143. Անգղիայի, Գաղղիայի, Սպանիայի ու Բորդուկալի մէջ Չորից դաշնաւորութիւն: Աս կերպով՝ ինչպէս ըսինք՝ Հիւսիսային տէրութիւնք վերջին տարիներն իրարու հետ միշտ աւելի անձկութեամբ կապուելու առիթ կ'առնէին Արեւմտեան կամ Սահմանագրական տէրութեանց միաբանութենէն զգացած վախերնին. բայց Արեւմտեանց միաբանութիւնն ալ գրեթաւ որաբար յառաջ կու գար առաջիններուն անձուկ կապակցութեան վրայ իրենց ունեցած կասկածէն: Այսպէս Գալիչի ու Դէօբլիցի մէջ Հիւսիսային վեհապետաց մէկտեղ տեսնուելուն առիթ տուած էր քիչ

մը յառաջ Անգղիայի ու Գաղղիայի եւ Պիւրենեան թե-
րակղզւոյն երկու տէրութեանց մէջ գրուած դաշնաւո-
րութիւնը. իսկ նոյն դաշնաւորութիւնը հետեւանք
մ'եղած էր Միւնիք-Արեցի արքայաժողովոյն: Իրզք ալ
երբ որ յիշեալ վեհապետք նոյն արքայաժողովով իրա-
րու հետ յառաջունէ աւելի անձկութեամբ կապուե-
ցան եւ առանձնական գիրք մը բռնեցին, ան ատեն
Լուդովիկոս Փիլիպպոս եւ Անգղիայի Ուիկ պաշտօնա-
րանը, որուն մէջ Բալմերսդըն՝ իբրեւ արտաքին գործոց
պաշտօնեայ՝ կը սկսէր մեծ ազդեցութիւն ունենալ,
ուզեցին իրենց երկու տէրութեանց յառաջուան միա-
բանութիւնը նորէն ամրացընել: Ասոր առիթ առին
Պիւրենեան թերակղզւոյն եւ առանձինն Սպանիայի վե-
ճակը, որն որ ներքին պատերազմով տակնուվրայ կ'ըլ-
լար ու Եւրոպայի նոյն ժամանակուան գլխաւորագոյն
խնդիրն էր: Այսպէսով՝ վերը յիշածնուս պէս՝ Անգ-
ղիայի, Գաղղիայի, Սպանիայի ու Բորդուկալի մէջ 20-
րից դաշնաւորութիւնը դրուեցաւ (1834, Ապր. 22),
իրարու իրաւունքները փոփոխակի պաշտպանելու նպա-
տակաւ: Նոյն դաշնաւորութեան վրայ Հիւսիսային տե-
րութեանց այլայլիլը՝ խիստ իրաւացի էր, որովհետեւ
կրնայ ըսուիլ թէ Օրինաւորութեան սկզբունքին գէժ
դրուած առտջին գաշինքն էր: Վասն զի նոյնով Արեւ-
մրտեան տէրութիւնք Պիւրենեան թերակղզւոյն մէջ
երկու այնպիսի վեհապետներու պաշտպանութիւն կ'ը-
նէին, որոնց գահակալութիւնը՝ թէեւ սկզբնաբար յե-
ղափոխութենէ ծագած չըլլար, հակառակ էր բուն
օրինաւորութեան եւ թագաւորական ընտանեաց հին
օրէնքներուն, եւ որոնց իրաւունքը՝ իւրաքանչիւրին հօ-
րը կամայական որոշման վրայ հիմնուած էր: Ստոյգ է՝
Հիւսիսային տէրութիւնք թէ Գաղղիայի եւ թէ Բեզ-
գիայի յեղափոխութեանց արդիւնքն ընդունելով, ան-
միջամտութեան սկզբունքը գէթ գործքով ճանչցած
էին, բայց Օրինաւորութեան սկզբունքը հաստատուն
պահել կ'ուզէին, եւ աս էր իրենց միաբանութեան ու

Չանքին նպատակը, թող ուրիշ կողմերը՝ նաեւ Պիւրենեան թերակղզւոյն մէջ, ուր Օրինաւոր վեհապետներուն պաշտպանութիւն կ'ընէին. եւ այսպէսով վերջիչեալ Չորից դաշնաւորութիւնը՝ մէկ նկատմամբ իբրեւ ուղղակի իրենց դէմ դրուած գաշինք կը նկատէին:

144. Փերդինանդ Է.ին վերջին տարիները Սպանիայի վիժակն ընդհանրապէս: Ըստ հարկ է որ մտադրութիւնն իսկ Պիւրենեան թերակղզւոյն վրայ դարձրնենք: Սպանիայի մէջ ռամկապետական հասարակապետութենէն՝ մինչեւ սաստիկ արձակապետութիւն՝ կառավարութեան ամէն կերպերը կողմնակիցներ ու պաշտպաններ ունէին: Ժողովրդեան ստորին դասերը, գլխաւորաբար գեղերու եւ լեռներու բնակիչները, արձակապետական միապետութեան կողմն էին, եւ Սպանիայի հին կարգադրութիւններն ազատականաց նորասիրութեան ու փոփոխութեան Չանքերուն գէմ կը պաշտպանէին: Իսկ քաղաքներու բնակիչներն ու զօրաց պաշտօնակալներուն մեծ մասը՝ Գաղղիայէն հոն անցնող կարծիքներով տողորուած՝ կ'ուզէին որ թագաւորին իշխանութիւնը չափաւորուի, ժողովուրդն ալ օրէնսդրութեան մասնակցութիւն ունենալով եւ պաշտօնեաները պատասխանատու ըլլալով: Փերդինանդ Է.ին կենդանութեան ժամանակը աս վերջին սահմանադրական կողմնակցութիւնը միշտ կը զուլուէր, որովհետեւ նոյն թագաւորն ազատականաց գէմ ունեցած հին ատելութիւնը երբեք չէր թողուր: Նոյն իսկ Յուլիսի յեղափոխութիւնը, թէեւ սահմանադրականաց զրգռութիւնը շատ սաստկացուց, սակայն իրենց վիճակին մէջ փոփոխութիւն չըրաւ: Ստոյգ է՝ քանի մը հարիւր փախըստականք Մինային գլխաւորութեամբը դրսէն Սպանիա յարձակեցան. բայց Գաղղիայէն յուսացած օգնութիւննին չքանելով եւ թագաւորական զինուորներէն նեղի խոթուելով, ձեռնարկութիւննին պարապ ելաւ եւ միայն իրենց կարծեկիցներուն գէմ ի գործ դրուած խտութիւնները սաստկացուց: Աւելի անյաջող ելք

ունեցաւ Գորիխոս զօրապետին փորձը, որն որ պզտիկ գնդով մը հարաւային Սպանիա մտաւ ու Գորդէզներու սահմանադրութիւնը հրատարակեց (1831, Մարտ). զօրաւոր զինուորական զօրութենէ մը յաղթուելով, Գորիխոս ու իր ընկերներէն 54 հոգի իրենց յանդուգն ձեռնարկութեան պատիժը մահուամբ կրեցին: Աս կերպով անցան Փերդինանդ Է.ին վերջին տարիները. բայց երբ որ նոյն թագաւորը մեռաւ (1833, Սեպտ. 29), ան ատեն իրաց կերպարանքը բոլորովին փոխուեցաւ:

145. Իրական վաւերագրութիւն: Եղիսաբեթ թագուհի ու Մարիամ ֆրիստինէ: Կարոլոսեանք եւ քաղաքական պատերազմ: Փերդինանդ թագաւորը՝ իր չորրորդ Մարիամ ֆրիստինէ ամուսնէն զրգուած, ատենօք Աւստրիայի Կարոլոս Զ. կայսեր՝ ուրիշ տէրութեանց հաւանութեամբ իր Մարիամ Թերեզիա աղջկան համար բրածին պէս (Հատ. Բ. 82, 107), բայց իր անձնական իշխանութեամբ միայն, Իրական վաւերագրութիւն ըսուած օրէնքը հանեց (1830, Մարտ 29), որով Պուրպոնեան ցեղին տիրած տեղերը գործածուող Սալեան օրէնքը ջնջելով (որն որ կիները յաջորդութեան իրաւունքէն կը զրկէ) Կաստիլեան հին սովորութեան համաձայն՝ կը հաստատէր որ նաեւ կանայք կարենան թագաւորել: Միեւնոյն տարին ծնաւ իր Եղիսաբեթ (Իզապելլա) աղջիկը (Հոկտ. 10): Փերդինանդին որոշումը խիստ անհաճոյ եղաւ արձակապետականաց, որովհետեւ իրենց բոլոր ակնկալութիւնը թագաւորին երկրորդ եղբորը Տ. Կարոլոսին վրայ դրած էին, որն որ ըստ Սալեան օրինաց՝ անոր պիտի յաջորդէր, եւ որմէ իրենց կողմնակցութեան համար խիստ երջանիկ օրեր կը յուսային: Նոյնէն Տ. Կարոլոս առիթունեցաւ եղբորն որոշման դէմ բողոքելու. եւ երբ որ քիչ մը ետքը թագաւորը հիւանդանալով՝ մահուան մօտ կը կարծուէր, ձեռքէն նոյնին ետ կանչուելուն հրամանագիրը կորզեց: Բայց Փերդինանդ առողջանալով ու եղածին վրայ նեղանալով, զՏ. Կարոլոս աքստ-

րեց, եւ հին Գորգէզները գումարելով, անոնց ձեռքով իրական վաւերագրութիւնը հաստատել տուաւ: Այսպէսով ալ իր մեռած ատենը, արձակապետական կամ առաքելական կողմնակցութիւնը զՏ. Կարոլոս թագաւոր հրատարակեց: Նոյն կողմնակցութեան գլխաւոր նեցուկն եղան հիւսիսային կողմերուն եւ գլխաւորաբար Պապրեան գաւառաց բնակիչները, որոնց հին իրաւունքներն ու արտօնութիւնները սահմանագրութեամբ վնասուելով, նոյնին եւ ամէն կերպ փոփոխութեան թշնամի էին: Ասոնք՝ խել մը ձեռնարկու եւ քաջ մարդիկ իրենց առաջնորդ ունենալով, զէնք առին Տ. Կարոլոսին համար, որն որ իր պքսորանաց տեղէն իրենց քովն եկաւ: Իսկ Մարիամ Բրիստիսէ այրի թագուհին, որն որ մինչեւ Եղիսաբեթ թագուհւոյն չափահաս բլլալը՝ խնամապետութիւն պիտ'որ բնէր, Կարոլոսեանց (Տ. Կարոլոսին կողմը բռնողներուն) յաջողութեամբ գէմ գնել կարենալու համար, ուզեց ազատականներն իր կողմը վաստակել, իր գահը Գորգէզներու սահմանագրութեան վրայ յեցուց, փախստականներուն ու պքսորեաններուն թողութիւն եւ հայրենիքին գառնալու հրաման տուաւ. ազատամիտ մարդիկներէ դահլիճ մը կազմեց եւ զՄինա զօրաց հրամանատար դրաւ: Աս կերպով Սպանիայի մէջ զարհուրելի շփոթութիւն մը փրթաւ. եւ յաջորդութեան իրաւանց վէճը՝ ներքին պատերազմի ու կողմնակցութեանց կռուի դարձաւ:

146. Կարոլոսեանց յաղթութիւններն ու վերջնական պարտութիւնը: Մինա, Գապրերա, Էսփարդերոյ ու Մարոզոյ: Լօթը տարի տեւեց աս քաղաքային պատերազմը, որուն մէջ իրենց բոլոր սասակութեամբն երեւցան սպանութիւնը, յափշտակութիւնը, աւարառութիւնը, աւերն ու ազականութիւնը, եւ ան ամէն շարիքները՝ որոնց կրնան առաջնորդել քաղաքական ու կրօնական մոլեռնախանձութիւնը: Ստոյգ է՝ թագուհւոյն գնդերն աւելի բազմութիւ էին, բայց իրենց հակառակորդները՝ չէ թէ միայն շատ դրամական օգ-

նութիւն կը գտնէին Հիւսիսային տէրութիւններէն, հապա մէջերնին աւելի կարգաւորութիւն ու հրահանգ ունէին: Ասկից զատ՝ իրենց գլուխներն աւելի քաջ ու ճարտար էին՝ քան թէ Քրիստինեանց հրամանատարները, որոնցմէ նոյն իսկ անուանին Մինա († 1836, Գեկտ. 24) ծերութենէն տկարացած ըլլալով եւ վերջին ատենները արտաքոյ կարգի խստութեամբ վարուելով, իր զինուորական համբաւն ու ազդեցութիւնը կորսընցուց: Գլխաւորաբար երբ որ կարողութեանց հրամանատար եղաւ համալրարանէ փախչող քաջ ու տաղանդաւոր Գապրերա երիտասարդը (1835, Յունիս), առնէր իրենց թշնամեաց գէմ մեծ առաւելութիւններ կ'ունենային: Հազիւ վերջին ատենները իրերը կերպարանափոխ եղան: Քրիստինեանց զօրքերուն հրամանատարութիւնն առաւ Էսփարգերոյ քաջ ու ճարտար զօրապետը, որուն հակառակ կարողութեանց մէջ երկպառակութիւն մտաւ: Պապեան գաւառաց բնակիչները Տ. կարողութիւն անկարութեան ու տկարութեան վրայ տեղոհ ըլլալով, իրենց դատն անոր գատէն զատեցին, եւ սկսան իրենց ազատութիւններն ապահովելու ետեւէ իյնալ: Իրենց գլուխն անցաւ ձեռնարկու եւ խորամանկ Մարոգոյ, որն որ մէկ կողմանէ կեղծաւորութեամբ թագաւորին վստահութիւնը վատարկելով, մեկալ կողմանէ Էսփարգերոյին հետ ծածուկ բանակցութիւն կ'ընէր, որուն կատարածն եղաւ Պերկարայի գաշնադրութիւնը (1839, Օգոստ. 31): Ասով կարողութեանք յանձն կ'առնուին զէնքերը թողուլ. իսկ Էսփարգերոյ իրենց թողութիւն կը խոտտանար ու գաւառական ազատութիւններնուն պահպանութիւնը կ'ապահովէր: Պարապ տեղ Տ. կարողոս յայտարարութեամբ մը Մարոգոյին մատնութիւնը հրատարակեց. իր համարումը կորսուած էր, եւ չորս կողմն ըլլողները իր գատին յաջող ելք ունենալէն յոյսերնին այնչափ կտրած էին, որ պաշտօնակալներէն շատերն ու 300 չափ քահանայք Գաղղիա փախան, որուն վրայ ինք ալ

իր ընտանիքովը հոն ապաստանարան խնդրելու պարտաւորեցաւ: Գաղղիայի մէջ քանի մը տարի Պուրօ քաղաքը կենալէն ետեւ, հազիւ իր իրաւունքներն իր երէց որդւոյն՝ Մոնդեմոլինի կոմսին թող տալով, կրցաւ հրաման ընդունիլ Իտալիա երթալու (1845): Իր կողմնակիցներէն սակաւաթիւ մարդիկ տարի մ'ալ պատերազմը յառաջ տարին, մինչեւ որ իրենք ալ Էսփարդերոյէն յաղթուելով, Գաղղիա փախան:

147. Անկարգութիւնը ու շփոթութիւնը: Էսփարդերոյ ու Նարվաէզ: Թւագուհւոյն չափահաս ըլլալն ու կարգուիլը: Արտոլոսեանք աս կերպով մէջտեղաց վերջան կամ զսպուեցան, բայց Սպանիա չհանդարտեցաւ. որովհետեւ յաղթական կողմը՝ որն որ արդէն յառաջ ալ երկպառակութեան մէջ ինկած էր, թշնամիներէն ազատելն ետեւ՝ աւելի եւս իր մէջը երկպառակութեան մէջ ինկած էր, թշնամիներէն ազատելն ետեւ՝ աւելի եւս իր մէջը երկպառակեցաւ: — Քրիստինէին՝ ազատականաց կողմը բռնելը, միայն իր նպատակին հասնելու համար էր. ուստի Գորդէզներն այնչափ ատեն գործածեց, որչափ որ անոնց պէտք ունէր՝ զՏ. Արտոլոս եւ անոր զակերները գահէն մերժելու եւ անոնց ինչքը գրաւելու համար: Անկէ ետեւ ձեռք զարկաւ արձակագեաական կերպով կառավարելու, որով ազգին մէկ մասը խիստ վշտացուց ու տհաճեցուց. իսկ բոլոր ազգին համարումը կորսնցուց՝ Մոնեոս սենեկապետին հետ ունեցած յարաբերութեամբը, որուն վերջն եղաւ անոր հետ ձախ ձեռքով կարգուիլը: Նոյն միջոցներուն երկիրը գրեթէ անիշխանութեան մէջ ինկած՝ ամէն կերպ չարագործութիւններով տակնուվրայ կ'ըլլար: Քաղաքական կարծեաց կողմանէ ալ 1812ին սահմանադրութեան պահանջումն օրէ օր կը սաստիկանար, որուն առջեւն առնելու համար՝ Քրիստինէ զանազան միջոցներ բանեցրնելէն ետեւ, վերջապէս երբ որ զինեալ բազմութիւն մը թագաւորական պալատին վրայ յարձակում՝ բրաւ, ստիպեցաւ գլուխ ծռել (1836,

Օգոստ.) : Սակայն անկէ ետեւ ալ ստատիկ ազատաւ, կանք (Յառաջագիմականք)՝ իր բռնած ընթացքէն տփգոհ ըլլալով, դարձեալ զանազան տեղեր յեղափոխութիւններ հանեցին, որոնք վերջացան Էսփարդերոյին պաշտօնէից գահերէց ըլլալովը, Բրիտանիէին՝ խնամապետութեան աստիճանէն հրաժարելով՝ Գաղղիա երթալովը, եւ նոր գումարուած Գորգէզներուն ձեռքովը՝ նոյն պաշտօնէից գահերիցուն խնամապետ անուանուելովը (1840, Սեպտ. Հոկտ.) : Բայց աս վերջինն ալ իր իշխանութեան մէջ շատ երկայն չմնաց. Գաղղիայէն օգնութիւն գտնող Բրիտանիէին բանեցուցած հնարքներովը, իր հակառակորդաց նախանձովը, իրեն դէմ ելլող յեղափոխութիւնները զսպելու համար բանեցուցած խիստ միջոցներովը, բոլոր երկրին մէջ մեծ գրգռութիւն պատճառած ժամանակ, խնամապետուհւոյն կողմը շահուող Նարվաէզ զօրապետը բազմութիւ բանակաւ մայրաքաղաքին վրայ քալելով, Էսփարթերոյ ստիպեցաւ ձգել Անգղիա փախչիլ (1843, Յունիս) : Քանի մ'ամիս ետքը Եղիսաբեթ թագուհին չափահաս հրատարակուեցաւ (Նոյ.) : Նարվաէզ պաշտօնէից գահերէց անուանեցաւ եւ զԲրիտանիէ Սպանիա դարձուց : Թագուհին իր հօրեղբորդւոյն՝ Փրանկիսկոս Ասիզին հետ կարգուեցաւ, իսկ իր քոյրը՝ Լուզովիկոս Փիլիպպոսին ամենէն պզտիկ որդւոյն՝ Մանբանսիէի դքսին հետ (1846, Հոկտ. 10) : որմէ քիչ մը ետքը Բրիտանիէ ստիպեցաւ թողուլ նորէն Գաղղիա երթալ :

148. Տ. Միքայէլի թագաւորութեան ժամանակը : Պետրոս Ա. կայսրն ու Մարիամ թագուհին : Իտորուկալի վիճակն ալ՝ գրեթէ Սպանիայինին նմանութիւն մըն էր : Տ. Միքայէլին՝ իր եղբօրաղջկան տեղ՝ նոյն տերութեան գահն ելլելը, յառաջագոյն տեսանք (58) : Իսկզբան անանկ կ'երեւար որ աս գահակալութիւնը հաստատուն պիտի մնայ, որովհետեւ ներքին

1 Progressistes.

հակառակորդները շուտով զսպուեցան, եւ արտաքին
 աերութիւնք ու նոյն իսկ Անգղիային Ուելլինկդընի
 գահերիցութեան տակ եզող Գորի պաշտօնարանն իր
 կողմն էին. բայց նոյն կարծուած հաստատութիւնք
 շունեցաւ: Արդէն Ուելլինկդըն՝ որն որ Տ. Միքայէլին
 կողմն ըլլալը գործունեայ կերպով ցուցուցած էր, Ա-
 զրեան կղզիները նաւատարմիդ մը խաւքելով, որպէս
 զի թող չտայ որ Պրագիլիայի Պետրոս կայսեր՝ իր Մա-
 ռիամ աղջկան իրաւունքը պաշտպանելու համար հօն
 խաւքած զօրքը Բորգուկալի ցամաք երկիրն անցնի,
 ետքէն զինքը ձեռքէ թող առաւ, որովհետեւ Տ. Մի-
 քայէլ չէր ուզեր՝ անոր խրատին համեմատ՝ քիչ մը
 ազատական կերպով վարուիլ եւ իբրեւ թէ Անգղիայի
 վերին իշխանութեան տակ մտնել: Այսպէսով Գեր-
 սէիրա կղզւոյն վրայ՝ որն որ Տ. Միքայէլին իշխանու-
 թիւնը երբեք չէր ճանչցած եւ ուր կը ժողջուէին իր
 հակառակորդաց գլխաւորները, Պետրոս կայսրը Բոր-
 գուկալի խնամապետութիւն մը դնել առաւ Բալմել-
 ւայի ու Ալիլաֆլորի գահերիցութեամբ (1830, Մարտ):
 Իրերը Տ. Միքայէլին բոլորովին հակառակ կերպարանք
 մ՝ առին Յուլիսի յեղափոխութեամբ եւ Անգղիայի կա-
 ռավարութեան գլուխը Ուիկերն անցնելով (1837),
 որովհետեւ անկէ ետեւ չէ թէ միայն արտաքին գր-
 գուիչները շատցան, հապա Անգղիայի նոր դահլիճը
 յայտնապէս Մարիամ թագուհւոյն կողմը կը բռնէր,
 որով եւ ներքին հակառակորդք սկսան խլրտիլ: Քիչ
 մը ետքը Պետրոս Ա. Պրագիլիայի մէջ իրեն դէմ ել-
 ւող յեղափոխութեամբ՝ նոյն կայսրութեան թագը իր
 Պետրոս Բ. սրգւոյն թող տալու ստիպուելով (1831),
 առիթ ու բաղձանք ունեցաւ Բորգուկալի մէջ անձամբ
 իր աղջկան իրաւունքը պաշտպանելու: Ուստի նախ՝
 Գերսէիրա, հոնկից ալ Օբորդոյ եկաւ (1832, Յուլ-
 Տ). եւ թէպէտ հոն Տ. Միքայէլին խաւքած զօրքէն
 իբրեւ թէ պաշարուած մնալով, խել մը ժամանակ
 չկրցաւ գործք մը գործել, բայց ետքէն ներքիւր անգ-

ղիացին իր նաւատորմին գլուխն անցնելով եւ Տ. Մի-
քայէլին նաւատորմիդը Ս. Վինկէնգի հրուանդանին
քով ծովամարտի մը մէջ գրեթէ ջնջելով, Պետրոս
կայսրը կրցաւ Լիսապոնի վրայ նաւով զօրք խաւրել,
որն որ ճակատի մը մէջ յաղթող եղաւ: Ասոր հե-
տեւանքն եղաւ Տ. Միքայէլին նոյն մայրաքաղաքէն
փախչելն ու կայսեր հոն մտնելը (1833, Յուլ. 23,
28): Երկու ամիս վերջն ալ Մարիամ թագուհին,
որն որ նոյն միջոցներուն ըստ մտտին Պրազիլիա եւ ըստ
մտտին Անգղիա կեցած էր, Լոնտոնէն հոն եկաւ: Աս
կերպով մայրաքաղաքն ու տէրութեան մէկ փոքր մա-
որ նոյն թագուհւոյն իշխանութեան տակ մտան. բայց
գաւառներուն մեծ մասը Տ. Միքայէլին ձեռքը մնաց,
որն որ նաեւ Սպանիայի կարողութեաններէն օգնութիւն
գտնելով, քիչ մը ժամանակ ալ ինք զինքը բռնեց:
Սակայն վերջապէս Արեւմտեան տէրութեանց ու Սպա-
նիայի եւ Բորգոկալի ազատական կառավարութեանց
մէջ դրուած Չորից գաշնաւորութենէն (143) նեղի
գալով, Եւորայի գաշինքով յանձն առաւ՝ իրեն տրուե-
լու տարեկան գումարի մը դիմացը՝ Պիւրենեան թե-
րակղզիէն ելլել (1834, Մայ. 26): Անկէ ետեւ Մա-
րիամ թագուհին, որն որ հօրը մահուրէն (Սեպտ. 24)
յառաջ չափահաս հրատակուած էր, սկսաւ տէրու-
թիւնը կառավարել՝ անոր վերջին ժամանակները նորո-
գած ազատական սահմանադրութեան համեմատ: Բայց
անկից վերջն ալ երկիրը ներքին շփոթութիւններով ու
չափազանց եւ չափաւորեալ ազատականներու կռուով
տակնուվրայ ըլլալէն չդադրեցաւ, ըստ ամենայնի Սպա-
նիա եղածին համեմատ: Իսկ Տ. Միքայէլին ըրած բո-
լոր փորձերը պարապի գացին:

149. Պիւրենեան թերակղզւոյն վրայ Անգ-
ղիայի ու Գաղղիայի ազդեցութիւնը: Վերջը յիշած-
նուս համեմատ (143), Պիւրենեան թերակղզւոյն աս
շփոթ վիճակը՝ Արեւմտեան տէրութեանց յարմար ա-
ռիթ եղած էր՝ իրենց ազդեցութիւնը հոն բանեցը-

նեղու, միանգամայն իրենց միաբանութիւնն ալ աւելի ամրացընելու միջոց ըլլալով, ինչպէս որ Իտալիայի ու Գերմանիայի գրգռեալ վիճակն ու յեղափոխականաց ջանքը՝ պատճառ կ'ըլլար Հիւսիսային տէրութեանց կապակցութեան աւելի հաստատուելուն: Բայց առաջիններուն միաբանութիւնը՝ արտաքուստ երեւցածին չափ՝ ներքին հաստատութիւն չունէր. եւ նոյն իսկ Պիւրենեան թերակղզւոյն իրողութեանց մէջ իրարու հետ կատարեալ միաբան չէին: Սպանիայի նկատմամբ, թէ եւ երկուքն ալ Վարդոսեանց դէմ էին եւ Եղիսարեթ թագուհւոյն կողմը կը բռնէին, միանգամայն չէին ուզեր որ աս վերջնոյն կառավարութիւնը զօրանայ, որպէս զի իրենք կարենան իրենց ազգեցութիւնն ուզածնուն պէս բանեցընել. բայց իւրաքանչիւրը զառ կողմնակցութեան ձեռք կը բռնէր: Անգղիա աւելի կը միտէր Էսփարդերոյին ու անոր գլխաւորութեան տակ եղող չափազանց ազատականներուն կողմը. իսկ Լուդովիկոս Փիլիպպոս՝ աւելի Նարվաէզին ու չափաւորեալ ազատականաց կողմը կը բռնէր (147): Գարձեալ որովհետեւ Անգղիա իր դրիւքը աւելի ազգեցութիւն կը բանեցընէր Բորդուկալի մէջ, մանաւանդ թէ հոնտեղաց իրողութիւնները գրեթէ իր ուզածին պէս կը դարձընէր. անոր համար Գաղղիացւոց թագաւորն ալ առանձին ջանք կ'ընէր Սպանիայի մէջ նոյն կերպով վարուելու: Աս մտօք շատ ջանաց իրերն անանկ դարձընել, որ թագուհին իր որդիներէն մէկուն հետ կարգէ: Բայց որովհետեւ չէ թէ միայն Հիւսիսային տէրութիւնք՝ հապա նոյն իսկ Անգղիա աս բանիս սաստիկ դէմ էին, անոր համար ուզեց ուրիշ կերպով իր նպատակին հասնիլ: Իր խորամանկութեամբը խափանեց թագուհւոյն՝ Մանդեմոլէնի կոմսին (146) հետ կարգուիլը, որուն աս նպատակաւ բոլոր իր իրաւունքները թող տուած էր հայրը, եւ զինքը Փրանկիսկոս Ասիզացւոյն (Փերգինանդ էին երրորդ եղբօրը որդւոյն) հետ կարգել տալով, որն որ թէ ըստ մարմնոյն եւ թէ ըստ մտաւորական

կարողութեանց տկար մէկն էր, թագուհւոյն պղախի՝ Լուիզա քոյրը իր ամենէն պղախի որդւոյն՝ Մոնթանտիէի գլխին հետ ամուսնացուց (1846, Հոկտ. 10): Բայց առ ամէն խորամանկ հնարքները օգուտ մը չունեցան ոչ Լուզովիկոս Փիլիպպոսին, ոչ ալ իրեն գործիքն եղող Բրիտանիէ թագուհւոյն, որն որ խելացի ու զօրաւոր փեսի տեղ՝ տկարամիտ փեսայ մը կ'ուզէր, որպէս զի առանց արգելքի՝ իր աղջկան անուամբն ինք թագաւորէ: Վասն զի Անգղիա Գաղղիացւոց թագաւորին գործադրութեան վրայ խիստ նեղանալով, իր դեռպանին ձեռքովն այնչափ բրաւ, սր Եղիսաբեթ թագուհին իր մօրմէն բաժնուելով, սկսաւ իր ուզածին պէս կառավարել. եւ որովհետեւ Բրիտանիէ՝ Լուզովիկոս Փիլիպպոսին խրատին համեմատ՝ չափաւորեալ ազատականներուն կողմը կը բռնէր, Եղիսաբեթ ալ՝ Անգղիայի խորհրդոյն համաձայն՝ չափազանցներուն հետ միացաւ: Ասանկով Անգղիա սկսաւ Գաղղիայէն աւելի ազդեցութիւն ունենալ Սպանիայի վրայ, մանաւանդ որ Բրիտանիէ ու Նաբվաէզ ալ ստիպեցան ձգել Գաղղիա երթալ: Իսկ թագուհին եղբէն զաւակ ունենալով, Լուզովիկոս Փիլիպպոսին Սպանիայի թագն իր ցեղին անցնելու բողձանքն ալ պտրապ ելաւ:

150. Լուզովիկոս Փիլիպպոսին Անգղիայէն հեռանալն ու Հիւսիսային տէրութեանց կողմը միտելը: Այսպէսով Սպանիայի իրողութիւնները, որոնք՝ ինչպէս վերը զբուցեցինք՝ իբրեւ թէ միջոց մ'եղած էին երկու Արեւմտեան տէրութեանց սրտակից բուռած միաբանութեան աւելի հաստատուելուն, նոյնին բոլորովին քակուելուն ու թշնամութեան դառնալուն ալ առիթ տուին: Ան կրկին ամուսնութեան մէջ, որմէ զխառնութեամբ յառաջ եկաւ երկու տէրութեանց կատարեալ աւրուիլը, յանդանձր բոլորովին Լուզովիկոս Փիլիպպոսին կողմն էր. որովհետեւ իր սեպհական շահուն համար՝ չէ թէ միայն Սպանիայի օգուտը խափանեց եւ մեծամեծ գէշութիւններու հիմ գրաւ, հազա նաեւ

զԱնգղիա ալ խարեց եւ առւած խոտման գէմ բրաւ . վասն զի մէջերնին եղած խօսքին համեմատ , իր որդւոյն՝ Լուիզա իշխանուհւոյն հետ կարգուիլը , թագուհւոյն՝ թագաժառանգ ունենայէն ետեւ պիտի կատարուէր , ուր որ ինք երկու ամուսնութիւնները մէկտեղ կատարել առւաւ : Սակայն ինք ալ շատ պատճառներ ունէր Անգղիային նեղանալու , եւ որքէն շատոնց սկսած էր անկից հեռանալ : Ուրիշ հեղ բոսած ենք թէ Ուր որ բարեկամութիւնը հպատակութիւն կը պահանջէ եւ կորուսաներու պատճառ կ'ըլլայ , պէտք է որ նախ պահութիւն յառաջ բերէ եւ ետքը թշնամութեան դառնայ (Հատ. Գ. 213) : Արդ Անգղիայի բարեկամութիւնը՝ Լուիզովիկոս Փիլիպպոսէն կերպ մը հպատակութիւն կը պահանջէր , վասն զի միաբան կարգի դրած խնդիրներնուն մէջ իսկ՝ գրեթէ միշտ Անգղիայի կամքը յառաջ կը տարուէր . եւ նոյն տերութեան անհաճոյ չըլլալու համար Գաղղիացւոց թագաւորը շատ անգամ չէր կրնար իր տերութեան շահը բաղձացածին պէս յառաջ տանիլ , որով իրեն վնաս կը հասնէր : Աս պատճառներուն համար նոյն թագաւորին՝ Անգղիայի հետ միաբանած մնալը , միայն անկից յառաջ կու գար , որ գիտէր թէ ուրիշ գաշնակից չունի , եւ անոր գաշնաւորութիւնն իրեն հարկաւոր էր՝ Հիւսիսային տերութեանց միաբանութեան գէմ գնել կարենալու համար . սրտանց կը բաղձար գտնուած գիրքէն ելլել : Ուստի երբ որ իր տերութեան մէջ յեղափոխականները զսպելով՝ իր իշխանութիւնը հաստատեց , եւ տեսաւ որ աս պատճառաւ Հիւսիսային տերութիւնք իրեն յառաջուրնէ աւելի յօժարութիւն կը ցուցնեն , ինք ալ սկսաւ անոնց կողմը միտել , որպէս զի ասով կամ Անգղիա՝ իր բարեկամութիւնը չկորսընցընելու համար՝ իր զիջմանց դիմացը փոխադարձ զիջում՝ ընէ , եւ կամ ինք անկէ բաժնուելով՝ Հիւսիսային տերութեանց հետ միանայ : Լուիզովիկոս Փիլիպպոսին՝ Հիւսիսային տերութեանց մտանալուն առաջին նշանը տեսնուեցաւ , Լեհ փախտական-

ներուն Փարիզ ունեցած մասնաժողովը լուծելովն ու անդամները Գաղղիայէն հանելովը: Ասկից զատ, նոյն տէրութեանց հետ միացաւ քաղաքական փախստականները եւ առանձինն Իտալացիները Հելուեաիայէն հեռացընել տալու համար, մինչեւ սպառնացաւ ոսհմանները գոցել. որով դաշնակցութիւնը տեղի տալու ստիպուելով (130), պաշտօնագրով մը խոստացաւ իրմէ պահանջուածը կատարել (1836, Յունիս 22):

151. Ալճէրիին Գաղղիայի համար ունեցած ծանրակշռութիւնը: Անգղիայի նախանձը: Առգովիկոս Փիլիպպոսին՝ Հիւսիսային տէրութեանց հետ միանալով, Անգղիայէն բաժնուիլ ուզելուն, որով եւ երկու տէրութեանց մէջ պաղութիւն մտնելուն՝ մէկ պատճառն ալ էր Ալճէրի: Նոյն երկիրը ձեռքէ չհաննել՝ յիշեալ թագաւորին, եթէ ուրիշ կողմանէ չէ նէ, գոնէ իր պատիւը պահելու համար հարկաւոր էր: Գարձեալ նոյն երկիրը զանազան նկատմամբ իրեն օգտակար էր. մէյ մը՝ որ իրեն յարմար ասպարէզ կը մատակարարէր, որուն վրայ Գաղղիացիներն արտաքին պատերազմի զբաղեցընելով, իրենց երկրին մէջ հանդարտ կրնար բռնել. մէյ մ'ալ՝ որ խել մը տժգոհ ու տաքզլուխ տեղացիներն ու խռովայոյզ փախստականները Գաղղիայէն կրնար հեռացընել ու զիրենք օգտակար կերպով գործածել, որով անոնք շատ անգամ քաջ զինուորներ կ'ըլլային: Ասոնցմէ զատ Ալճէրիի ստացուածքը Գաղղիայի համար ան օգուտն ալ ունէր, որ նոյն տէրութեան ազդեցութիւնը Միջերկրական ծովուն եզերաց վրայ աւելցընելով, շատ կ'օգնէր նոյն ծովը՝ Գաղղիական լճի մը դարձընելու բաղձանքին: Բայց որչափ որ աս նկատմամբ Գաղղիայի օգտակար էր Ալճէրի, այնչափ ալ պէտք էր որ Անգղիայի նախանձը գրգռէր: Արդ Առգովիկոս Փիլիպպոս իր գահ ելած ժամանակը, երբ որ նոյն տէրութեան հետ հաստատած միաբանութիւնն ամրացընելու հարկաւորութիւն ունէր, աս նիւթոյն նկատմամբ անանկ խոստումներ բրած էր,

զորոնք Անգղիա մեկնած էր իբր թէ Գաղղիացիք կ'ուզեն նոյն երկրէն բոլորովին ետ քաշուիլ, երբ որ կարենան աս բանս գլուխ հանել՝ առանց հրապարակական կարծեաց վրայ խիստ դէշ ազդեցութիւն ընելու: Աս ասանկ ըլլալով, յայտնի է որ Անգղիացիք շատ դէշ աչքով տեսնելու էին Գաղղիացւոց Ալճերիի մէջ օրէ օր աւելի ամբանալն ու իրենց ստացուածները հեազհետէ մեծցընելը: Մանաւանդ որ իրենց ստացուածքներէն եւ առանձինն կոստանդինէն՝ մեծ ազդեցութիւն կ'ընէին նոյն տեղոյն սահմանակից եզող Գուսուզի վրայ, որուն նաւահանգիստը հասարակօրէն Գաղղիական նաւատորմիդ մը կը կենար՝ իբր թէ նոյն երկիրը Դրան յարձակումէն պաշտպանելու համար: Հոնկից ալ իրենց ազդեցութիւնը կը հասնէր Տրիպոլիսի եւ մինչեւ Եգիպտոսի վրայ: Անոր համար Անգղիա ձեռքէն եկածին չափ կը ջանար նոյն կողմերը Գաղղիացւոց յառաջագիմութիւնը խափանել: Մարողգոյի արքունիքն անոնց դէմ կը գրգռէր, եւ ի ծածուկ Ապտ-էլ-Գասերին (Գաղղիացւոց դէմ Ալճերիի երկիրներուն անկախութիւնը պաշտպանող Արաբացւոց զլխաւորին) հետ միաբանելով, ամէն կարելի կերպերով անոր կ'օգնէր՝ իր սրտակից բարեկամին դէմ պատերազմելու: Որչափ որ ալ իրերն աս վիճակին մէջ էին եւ իւրաքանչիւր կողման ըրածը դիմացինին ծանօթ էր ալ նէ, ի վերայ այսր ամենայնի չիմանալու կը զարնէին: Բայց աս վիճակը միշտ այնպէս չէր կրնար տեսիլ, ուստի եւ ինչպէս վերը զրուցեցինք, Լուգս-վիկոս Փիլիպպոս կ'ուզէր Անգղիայէն ունեցած կախումէն ազատիլ, որպէս զի Ալճերիի մէջ՝ ինչպէս նաեւ ուրիշ կողմերը՝ ուզածն ազատութեամբ յառաջ տանի:

152. Դրան ու Եգիպտոսի Մէհէմէտ Ալի փոխարքային դիրքը: Ինչպէս յառաջագոյն Գաղղիայի առաջին հասարակապետութեան ժամանակը, Եգիպտոսի ստացումը՝ նոյն հասարակապետութեան եւ Անգղիայի թշնամութիւնն անհաշաւելի բրած էր (Հատ. Գ.

116—119, 140), այսպէս ալ վերջին ժամանակները նոյն Եզրիպտոսի վրայ եղած վէճը եւ երկու տէրութեանց ան գաւառին վրայ ունեցած իրարու հակառակ գիտումները՝ մէջերնին եղած սրտակից միաբանութիւնն աւրուելու վտանգի մէջ ձգելէն զատ, քիչ մնաց պատերազմի ալ առիթ կ'ըլլար: — Եզրիպտոսի փոխարքայ Մէհէմմէտ Ալի Փաշան այնպիսի դրոյց մէջ մտած էր, որ աւելի իբրեւ անկախ վեհապետ կրնար նկատուիլ, քան թէ իբրեւ թագաւորի մը կուսակալ: Դրան եւ Մէհէմմէտ Ալիին զօրութիւններն ու գիրքը բնականին հակառակ համեմատութեան մէջ կը գտնուէին: Փոխարքան իր նորոգութիւններովը, իր միալեզու ազգէ մը բնականաւոր եւ շրջանակաւոր երկիրներովը, մշակութեամբ եւ մենավաճառութեամբ ձեռք բերած եւ օրրոտորէ աւելցրնելու վրայ եղած ամբաւ հարստութիւններովը, իբրեւ Վեհապիներու (63) եւ Յունաց յաղթող, մեծ առաւելութիւն ստացած էր: Իսկ Դուռը Ռուսական պատերազմին մէջ յաղթուած էր, եւ բրած կորսւտներուն տեղը՝ ներքին նորոգութիւններով ու կարգաւորութիւններով լեցրնելու ժամանակ չէր ունեցած: Պետութեան մէկ քանի գաւառները կորսուած կամ կորսուելու վրայ էին. Յունական յեղափոխութենէն ու Ռուսական պատերազմէն ետքը՝ յունակրօն հպատակները գրգռութեան մէջ կը գտնուէին. նոյն իսկ Մահմետականաց մէջ՝ նորոգութեանց օւ փոփոխութեանց պատճառաւ՝ մեծ երկպառակութիւն կար: Իբրեւ քաջ պատերազմող ճանչցուած Եէնիչերիները ջնջուած էին, եւ անոնց կողմնակիցներուն՝ նոյն գրեզերը նորէն ոտք հանելու ջանքը շատերուն աչքին առջեւ կ'արգարանար, նոր կանոնաւոր զօրաց՝ Ռուսական պատերազմին մէջ կրած պարտութեամբը: Այսպէս Մէհէմմէտ Ալի Դրան նկատմամբ մեծ առաւելութեան մէջ կը գտնուէր, եւ աս առաւելութիւնը կ'ուզէր գործածել իր իշխանութիւնն աւելի մեծցրնելու: Յունաց գէմ Սուլթանին բրած ծառայութեան փոխարէն՝ կրետէ

կողմն ընդունած էր. բայց անով գոհ չէր ըլլար, Գա-
մասկոսի կուսակալութիւնն ալ կը պահանջէր, վասն
զի աչքը Ասորիքի վրայ գրած էր: Ուստի որոշեց որ
Սուլթանին իրեն շնորհել չուզածը՝ ինք զէնքի զօրու-
թեամբ ձեռք բերէ: Իր նպատակին դիւրաւ հասնելու
համար՝ Պրանիացիներն ու Ալպանիացիները յեղափո-
խութեան գրգռեց, եւ Դուռը զանոնք զսպելու զա-
լած ատեն, ինք ալ իր գործքին ձեռք զարկաւ:

153. Մէհէմէտ Ալիին ապստամբութիւնն ու
յաղթութիւնները: ‘Նոյն միջոցներուն Աքքեայի (Ժան-
տ՝ Ագրի) կուսակալ Ապտուլլահ Փաշան, որն որ զի-
նուոր չգրուելու համար Եգիպտոսէն փախչող Ֆէլլահ-
ները իր երկիրներն ընդունած ըլլալով, Մէհէմէտ
Ալիին զանոնք պահանջած ատեն՝ չէր ուզած ձեռք
տալ, աս վերջնոյն յարմար առիթ տուաւ իր գիտաւո-
րութեանց գործադրութեան ձեռք զարնելու: Մէհէմ-
մէտ Ալի անոր դէմ պատերազմի ելաւ, այնպէս ձեւա-
ցընելով որ Դուռէն իրեն յանձնուած է նոյն ապստամբ
կուսակալը զսպելու պաշտօնը: Իր զօրքը Իպրահիմ Փա-
շային հրամանատարութեամբը Ասորիքի սահմանն ան-
ցաւ (1831, Հոկտ. 29), քանի մը մտաւոր քաղաք-
ներ եւ նոյն իսկ Երուսաղէմ առաւ ու Աքքեա պա-
շարեց: Պաշարումը երկայն տեւելով, Դուռը կրնար
երկուքին մէջ մտնել. բայց հոգը չեղաւ, որովհետեւ
երկու կուսակալներն ալ անհաւատարիմ ըլլալով, օգ-
տակար կը սեպէր անոնց իրարու հետ զարնուելով՝ փո-
փոխակի մէկգմէկ տկարացընելը: Իսկ Եգիպտացիք Աք-
քեա պաշարելը բաւական չհամարելով, Լիբանանու
Ժանրակչիս կողմերը բռնեցին, դէպ ի Տարսոս տարա-
ծեցան, եւ յայտնապէս կը ցուցնէին որ Աքքեայի
կուսակալութենէն զատ՝ մէկալ երեք Ասորական (Գա-
մասկոսի, Հալէպի, Տրիպոլի) կուսակալութիւններուն
ալ տիրել կ’ուզեն: Այսպէսով տեսնուեցաւ որ իսկըզ-
բան երկու կուսակալներու կռիւ սեպուածը՝ Գրան խիստ
վտանգաւոր պատերազմ մըն է եղեր, որուն առջեւն

առնելու համար՝ շուտով ու զորաւոր կերպով գործելու էր : Ստուգիւ ալ Սուլդան Մահմուտ՝ պարապ տեղ Մէհէմէտ Ալիին իր ձեռնարկութենէն ետ քաշուելու պատուէր տալէն ետեւ, զինքն ապստամբ հրատարակեց (1832, Ապր. 23), ու Հիւսէին Փաշային հրամանատարութեամբն իրեն դէմ բանակ մը խաւրեց : Ա՛լ անկէ ետեւ փոխարքան չկրնալով իր առաջին կեղծաւորութիւնը շարունակել, որով Գրան հրամանին համեմատ գործել կը ձեւացընէր, սկսաւ հրատարակել որ իր նպատակն է Սուլդանը Ռուսիայի ձեռքէն ազատել. եւ ինչպէս յառաջագոյն՝ նոյնպէս ան ատեն ալ ժողովրդեան մեծ մասն իրեն հաւապք կ'ընծայէր, տեսնելով որ Ռուսիայի հիւպատոսներն ու գործակալներն ամէն կողմ մեծ փութով Եգիպտացւոց դէմ կը գործէին : Բախտն ալ ամէն տեղ յանդուգն կուսակալին կողմն էր . Ա.ք.քեա քաղաքը յարձակմամբ առնելէն զատ (Մայ. 27), Դամասկոս ու Տրիպոլիս ալ ձեռք անցուց. եւ Գրան զորաց դէմ Հոմսի ճակատը վաստակելէն ետքը (Յուլ. 9), նաեւ Հալէպի ու Անտիոքի տիրեց : Անկէ ետեւ Իպրահիմ իր բանակը Տաւրոս լեռնէն անցընելով եւ Փոքր Ասիայի մէջ յառաջացընելով, երբ որ Գրան՝ Ռէշիտ Մէհէմէտ փոխարքային հրամանատարութեամբը՝ իրեն դէմ խաւրած երկրորդ բանակն ալ տարւոյն վերջը Գոնեայի քով յաղթեց, եւ նոյն հրամանատարը գերի բռնեց (Դեկտ. 20), ալ անկէ ետեւ եկաւ մինչեւ Պրուտա Օսմանեան տէրութեան հին մայրաքաղաքն առաւ, որով բուն մայրաքաղաքին ճամբան ալ իր առջեւ բաց էր :

154. Ռուսաց միջամտութիւնը : Քիւթահեսայի խաղաղութեան դաշինքը : Մինչեւ նոյն ատեն Մէհէմէտ Ալիին բոլոր ձեռնարկութիւնները կատարեալ յաջողութիւն գտած էին, որուն՝ իր զորաց քաջութենէն ու կարգաւորութենէն զատ, ըստ ոմանց՝ մեծապէս օգնեց Օսմանեան տէրութեան պատերազմի պաշտօնեայ (Սէրասիէր) խօսքով Փաշային ընթացքը, որն որ

զորաց հրամանատարութիւնն իրեն շտրուելուն համար նեղանալով, չէ թէ միայն Եգիպտացւոց դէմ խառուած երկու բանակն ալ առանց պաշարի ու ռազմամթերի թողուց, հապա նաեւ Սուլթանին հրամանաւր զՌէշիտ Փաշա ստիպեց Գոննայի ճակատը տալու, ուր որ նոյն հրամանատարը տեսնելով թէ Իպրահիմ Փաշան իր հայրենիքէն շատ հեռացած է, կը զգուշանար մեծ ճակատամարտ տալէն, եւ կ'ուզէր պզտիկ կռիւներով զինքը յոգնեցնելով եւ իրեն պաշար ու ռազմամթեր գալն արգելելով, ետ քաշուելու բռնադատեալ: Ինչպէս որ է նէ, Գուռը վերջին աստիճանի նեղի եկած էր. Եւրոպական տէրութիւնք ալ տակաւին Յուլիսի յեղափոխութեան հետեւութիւններովը զբաղած ըլլալով, իրենցմէ խնդրած օգնութիւնը տալու կը դանդաղէին: Վերջապէս Ռուսիա, որն որ Արեւմուտքին շփոթութեանց ժամանակը՝ Արեւելքն ալ աչքէն չէր հաներ, ուզեց գործունեայ կերպով միջամտութիւն ընել, որուն Գուռը կամայ ակամայ հաւանութիւն տուաւ (1833, Յունու. 21): Շուտ մը Ռուսի նաւատորմիդ մը Լազարէվ ծովապետին հրամանատարութեամբը Պոսփորոս մտաւ եւ խել մը զորք ցամաք հանեց, որն որ Հիւնքեար Իսկէլէսիի բարձունքին վրայ բանակեցաւ. նոյնպէս Բրութի վրայէն 30,000ի բանակ մ'անցաւ (Ապր.) եւ դէպ ի կոստանդնուպոլիս կը յառաջանար: Ասով Եւրոպայի դահլիճներն այլայլութեան մէջ ինկան. Լուդովիկոս Փիլիպպոս Ռուսաց շարժման լուրն առնելուն պէս, Ռուսէն ծովապետը՝ իբրեւ արտաքոյ կարգի դեսպան՝ կոստանդնուպոլիս խաւրեց, որն որ Ռուսիայի օգնութեան վնասակարութեան վրայ Սուլթանը համոզեց: Բայց աս ալ օգուտ չունեցաւ, օրովհետեւ նոյն դեսպանը չկրցաւ Մէհմէմէտ Ալիին ընդունիլ տալ ան իրաւախոհութեան պայմանները, զորոնք Սուլթանին առաջարկած էր եւ անոր հաճութիւնն ընդունած: Ան ատեն բոլոր դեսպանք միացած՝ ամէն ճիգերնին ի գործ դրին, որ Ռուսաց

բանակին՝ Եգիպտական զորաց հետ զարնուիլը խափանեն. եւ յաջողեցան ալ զԴուռը համոզել որ Փաշային պահանջումներուն զիջանի, որուն Ռուսիա ալ դէմ չգարձաւ: Այսպէսով դրուեցաւ Գիւթահայի խաղաղութեան դաշինքը (1833, Մայ. 3), որով Մէհէմէտ Ալի բոլոր Ասորիքն ու Ատանայի սահմանները կ'ընդունէր, եւ Եգիպտոսի, Կրետէի ու Արաբիայի ժառանգական ստացուածքին մէջ կը հաստատուէր: Դաշինքը գրուելուն պէս, Իպրահիմ Փաշան զօրքովն ետ քաշուեցաւ:

155. Հիւնքեար Իսկէլէսիի դաշնագրութիւնը: Վիւթահայի խաղաղութեան դաշնաց ետեւէն եկաւ՝ Դրան ու Ռուսիայի մէջ դրուած Հիւնքեար Իսկէլէսիի դաշնագրութիւնը (1833, Յուլ. 8), որն որ վեց՝ յայտնի, եւ մէկ գաղտնի պայման կը բովանդակէր: Առաջիններով երկու տէրութեանց մէջ ութը տարւան համար պաշտպանողական դաշնագրութիւն մը կը հաստատուէր. իսկ վերջնով՝ որն որ տարին չլմընցած՝ երեւան ելաւ, գլխաւորաբար կ'որոշուէր որ Չանագ գալէսիի ներքը բոլոր օտար պատերազմական նաւերուն գոցուի: Ասիկայ վարձք մըն էր, զորն որ Ռուսիա իր բրած օգնութեան դիմացն ընդունեցաւ, Սուլթանին հաւատացնելով, որ Անգղիա եւ Գաղղիա՝ Մէհէմէտ Ալիին հետ ծածուկ միաբանած ըլլալով, անկէ ետեւ ալ յարմար առիթ որ գանեն՝ իր վըտը յարձակում կ'ընեն: Բայց չէ թէ միայն ծածուկ պայմանը՝ Ռուսիայի օգտակար էր, որովհետեւ ինք միայն իրաւունք կ'ունենար Օսմանեան մայրաքաղաքը նաւատորմիդ բերելու, որն սր ուրիշ տէրութեանց կ'արգելուէր, որով միանգամայն Սեւ ծովը՝ Ռուստիան լիծ մը կը դառնար. հապա նոյն իսկ ծանօթ պայմաններն ալ: Ասան զի ստոյգ է՝ մէկ կողմանէ կ'որոշուէր որ Ռուսիա ան ատեն միայն եւ այնչափ նաւ ու զօրք օգնութեան խաւրէ Դրան, երբ ու որչափ որ Սուլթանն ուզէ. սակայն մէկալ կողմանէ աս մտադրութեան արժանի որոշումն ալ կար,

որ Երկու դաշնագիր կողմանք իրարու հետ պիտի խորհրդակցին ան ամէն դէպքերուն եւ պատահարներուն վրայ; որոնք Տաճկաստանի կամ Ռուսիայի հանգարաութեան ու ապահովութեան կրնան վերաբերիլ: Ինչպէս յայտնի է, ասիկայ անանկ որոշում մըն էր, որով Ռուսիայի կայսրը կրնար Օսմանեան տէրութեան ամէն ներքին իրողութեանց մէջ խառնուիլ, եւ իբր թէ Սուլդանին դահակից կ'ըլլար: Ասանկով Հիւնքեար Իսկէլէսիի դաշնագրութիւնը՝ Արեւելքի մէջ ամէն նկատմամբ Ռուսիայի այնչափ առաւելութիւն կու տար, որով եւ ուրիշ տէրութեանց այնչափ վնասակար էր, որ Արեւմտեան տէրութիւնք նոյնին դէմ բողոքեցին: Բայց որովհետեւ Աւստրիա ու Պրուշ՝ Ռուսիայի հետ ունեցած կապակցութիւններնուն համար՝ ձայն չէին հաներ, անոր դէմ ամենեւին հակառակութիւն չէին ընել, ուստի եւ այսպէս նոյն իսկ բողոք ընողները՝ չէին կրնար Դրան դէմ ձեռնարկութիւն մ'ընել, անոր համար Սուլդանն իրենց պատասխան տուաւ որ իբրեւ անկախ տէրութեան վեհապետ՝ ուրիշ ինքնիշխան վեհապետի մը հետ բրած դաշնագրութեան, երրորդ մը խառնուելու իրաւունք չունի:

156. Անգղիայի բռնած ընթացքն ու նոյնին պատճառները: Իրաց աս կերպարանքն առնելուն վրայ ամենէն աւելի Անգղիա պատճառ ունէր այլայլելու. անոր համար ալ անմիջապէս անանկ ընթացք մը բռնեց, որ թէ Ռուսիայէն եւ թէ Մէհէմմէտ Ալիէն իրեն հասած վնասը միեւնոյն առեն ու միեւնոյն գործողութեամբ կարենայ խափանել: — Չէ թէ միայն Տաճկաստանի մէջ, հապա ուրիշ Ասիական տէրութեանց մէջ Անգղիայի դիմացը մեծամեծ դժուարութիւններ կ'ելլէին, զորոնք Ռուսիա իրեն դէմ կը յարուցանէր, որպէս զի իր զօրութիւնը զանազան կողմեր զբաղեցընելու ստիպուելով, չկարենայ զօրաւոր կերպով Ռուսիայի դէմ գործել Օսմանեան տէրութեան մէջ: Նոյն իսկ աս երկրին մէջ Հիւնքեար Իսկէլէսիի դաշնագրութեամբ՝

Անգղիական վաճառականութեան սաստիկ մեծ փնաս կ'ըլլար: Իսկ Մէհէմմէտ Ալին իր մենավաճառութեան ու մաքսի կարգադրութիւններովը՝ Անգղիային Եգիպտոսէն բնեւոյ բոլոր շահերուն աղբիւրները գոցած էր: Ասկից զատ գէժ կը դառնար՝ Եգիպտոսի ու Կարմիր ծովու ճամբով՝ Հնդկաստանի հետ Անգղիացւոց կապակցութիւն սնննալու բաղձանքին գործադրութեան: Աւերջապէս որչափ որ Ռուսիա արտաքուստ Մէհէմմէտ Ալին ապստամբութիւնը կը դատապարտէր ու նաեւ գործքով զինքը զսպելու օգնած ալ էր նէ, ի վերայ այս ամենայնի Անգղիա կը կարծէր որ Ռուսք հաճութեամբ կը տեսնեն փոխարքային զօրանալը, որով Դուռն ի հարկէ կը տկարանար: Արդ Անգղիացիք աս իրենց փնասուն առջեւն առնելու համար՝ սկսան ջանք բնել որ Օսմանեան տէրութիւնը ներքին կարգադրութիւններով զօրանայ: Ասով անիկայ կրնար նախ Ռուսիայի ազգեցութենէն ազատիլ. վասն զի՝ ինչպէս յայտնի է՝ տէրութիւն մը որչափ որ զօրաւոր կ'ըլլայ, այնչափ ալ գիւրաւ կարող կ'ըլլայ գէժ գնել օտար ազգեցութեան եւ ինքնիշխանութեամբ վարուիլ: Երկրորդ՝ կրնար վրէժտառնուլ Մէհէմմէտ Ալիէն եւ գուցէ ալ զինքը բռնութիւն զսպել, որով անիկայ կարողութիւն չէր ունենար Անգղիայի շահուն գէժ դառնալու: Արգէն ինք իրմէ կ'իմացուի որ Սուլթանը բոլոր զօրութեամբ եւ սրտանց պէտք էր ընդգրկէր աս խորհուրդը, որուն գլխաւոր շահն իրեն էր. մանաւանդ որ Անգղիա կը խոստանար որ յարմար առնենին՝ Մէհէմմէտ Ալին խոնարհեցնելու ինքն ալ գործունեաց կերպով գործակից կ'ըլլայ: Ամէն բանէն աւելի միտ դրուելիքն էր բանակը կարգաւորել եւ վերջին պարտութիւններով զօրքին լքած սրտերը քաջալերելու. միջոց մը գտնել: Առաջինը շուտ մը մեծ փութով յառաջ տարուեցաւ. իսկ երկրորդին առիթն արգէն ինք իրմէ պատրաստ էր, որուն յաջողելէն կախում ունէր նաեւ Մէհէմմէտ Ալիին գէժ ըլլալու արշաւանքը:

157. Քիւրտիստանի արշաւանքը: Անգղիայի ու Դրան մէջ Պալթալիմանըյի առեւտրական դաշինքը: () ամանեան տէրութիւնը Քիւթասէնայի խաղաղութեան դաշինքով Ատանա եւ Տաւրոսի անցքերը կորսընցուցած ըլլալով, ան կողմէն չէր կրնար Ասորիքի վրայ յարձակում ընել. ուստի հարկ էր որ ուրիշ յարմար մուտք մը ձեռք բերէր: Աս նպատակաւ ձեռք զարկաւ նուաճելու Քիւրտերու ցեղերը, որոնք գրեթէ երբէք Դրան կատարեալ չէին հպատակած, եւ մշտնջենաւոր կռուոյ մէջ կը գտնուէին կամ իրենց իրենց մէջ եւ կամ Տաճկական ու Պարսիական սահմանակիցներուն հետ: Իրենց դէմ եղած կռիւներով (1834—1838) ստոյգ է Քիւրտերը բոլորովին չզսպուեցան, բայց խիստ տկարացան. որով Դուռն իր երկու նպատակին ալ կատարելապէս հասաւ, այս ինքն՝ թէ Ասորիք մտնելու համար ճամբայ մը ստացաւ, եւ թէ իր զօրքերն աղէկ կրթուեցան ու քաջալերութիւննին մեծցաւ: Բայց մէկալ կողմանէ Մէհմէտ Ալի ալ՝ Քիւրտիստանի արշաւանքին ինչ նպատակ ունենալն աղէկ գիտնալով, անգործ չէր կենար: Եւ որովհետեւ Դրան հետ խաղաղութեան մէջ ըլլալով, յայտնապէս թըշնամութեան գործք չէր կրնար գործել, Օսմանեան տէրութեան զօրութիւնն ուրիշ կողմեր զբաղեցընելու մտք՝ Ալպանիայի ու Պոսնիայի բնակիչները գարձեալ ապստամբութեան կը գրգռէր: Սակայն ասով չկրցաւ զՍուլթանն իր գլխաւոր նպատակէն հեռացընել: Նոյնպէս ամէն կարելի միջոցներով կը ջանար Անգղիացւոց վնաս հասցընել. բայց անոնք ասով՝ աւելի եւս կը հատատուէին իրենց գիտաւորութեան մէջ եւ աւելի փութով զՍուլթանը կը քաջալերէին որ օր մը յառաջ զինքը զսպելու ձեռք զարնէ: Աս ծանրակշիռ գործողութեան նշան կամ սկիզբ եղաւ Դրան եւ Անգղիայի մէջ գրուած Պալթալիմանըյի առեւտրական դաշինքը (1838, Օգոստ. 16), որն որ Դրան եւ Եգիպտոսի մէջ խաղաղութիւնը չաւրուած կամ իրենց յարաբերութիւնները

չփոխուած՝ չէր կրնար ի գործ գրուիլ: Ասան զի նոյն գաշանց պայմաններովը կ'որոշուէր որ վաճառահանութիւնն ազատ ըլլայ եւ բոլոր մենավաճառութիւնը գազրի Օսմանեան տէրութեան ամէն կողմերը, թէ՛ Եւրոպական եւ թէ՛ Ասիական, թէ՛ Ափրիկեան եւ թէ՛ Եգիպտական կուսակալութեանց մէջ: Ասով Սուլթանը Եգիպտոսի փոխարքային մենավաճառութեան եւ մարտի կարգադրութիւնները ջնջած կ'ըլլար. իսկ Անգղիա կ'ընդունէր որ Մէհէմմէտ Ալի Դրան իշխանութեան տակ եղող պարզ կուսակալ մըն է՝ ուրիշ հասարակ կուսակալներուն նման:

158. Մէհէմմէտ Ալիին դէմ՝ պատերազմ: Նիսիպի ծակատամարտը: Ինչպէս յայտնի է, Մէհէմմէտ Ալի չէր կրնար աս գաշինքը յանձն առնուլ՝ առանց իր ձեռքն իր իշխանութիւնը քակելու: Ուստի եւ նոյնին պայմաններն իրեն ծանուցուած ատեն, պատասխան տուաւ որ հինգ կամ վեց տարիէն՝ երբ որ իր երեւմուտքն ուրիշ կերպ կարգի գրած կ'ըլլայ, զանոնք իր երկիրներուն մէջ գործադրել կու տայ, ան ալ՝ եթէ իր բոլոր ներկայ ստացուածներուն ժառանգութեամբ իր ցեղին մէջ մնալը կ'ազահովցընեն: Ասիկայ խուսափական պատասխան մըն էր, զորն որ ժամանակ վաւորակելու համար կու տար, բայց եւ իբրեւ միջոց կ'ուզէր գործածել իր երկրի ստացուածներուն նոր երաշխաւորութիւն մ'ալ առնելու համար: Աս նպատակաւ էր՝ որ մինչեւ նոյն ատեն խիստ անկանոն կերպով վճարած տուրքերուն մէկ մասը վճարեց, բայց միանգամայն տրտնջելով Ասորիքի մէջ պատահած ապստամբութիւններուն վրայ: Իսկ Դուռը նոյն ապստամբութիւնները խիստ ծանրակշիռ բանի տեղ կը գնէր, որովհետեւ անոնցմէ կը գուշակէր որ Մէհէմմէտ Ալին՝ վաճառակալութեան գրած կապերովն ու ըրած զօրաժողովներովը՝ բոլոր երկրին մէջ ընդհանրապէս ատելի եղած է: Նոյն մտածմամբ Սուլթան Մահմուտ աճապարեց շատնչուրնէ միտքը գրածն անմիջապէս գլուխ հանելու:

Հաֆքս Փաշան՝ որն որ Քիւրտերու արշաւանքին հրամանատարութեան մէջ Ռեշիտ Փաշային յաջորդած էր, հետզհետէ Եգիպտացւոց կը մօտենար (1839, գարնան), որուն պատճառ կը բերուէր իր գտնուած տեղերուն օգին վառառողջութիւնն եւ ուտելիքի պակասութիւնը: Բայց իր յառաջ քալելուն համեմատութեամբը՝ Խպրահիմ Փաշան ալ ետ կը քաշուէր: Գուռն ասիկայ իբրեւ վատութենէ պատճառած բան սեպելով, Սուլթանն իր հրամանատարին հրովարտակ մը խաւրեց, որով Մէհէմէտ Ալին իր աստիճանէն վար կ'առնուէր: Սակայն Կիսիպի (Մծբնայ) քով տրուած ճակատամարտը (Յունիս 23, 24) խիստ անյաջող եղաւ Օսմանեանց, որոնց 50,000ի բանակէն թէպէտ հազիւ 4000 հոգի ինկած էր, բայց ճակատին վրայ շաքաթ մը շանցած՝ բոլոր զինուորները ձգած փախած էին:

159. Սուլթան Ապտ-իւլ-Մեծիտ: Կիւլհանէի Խաթիթի շէրիֆը: Ըս գժբախտութեան գոյժը Սուլթան Մահմուտ շնորհունեցաւ. ինք նոյն միջոցին մեռած էր եւ իրեն յաջորդած՝ իր վեշտասանամեայ Ապտ-իւլ-Մեծիտ որդին (1839, Յուլ. 1): Խիստ գէշ վիճակի մէջ կը գտնուէր Օսմանեան տէրութիւնը նոյն երիտասարդ վեհապետին գահակալութեան ատենը. այնպէս որ շատերն իր կործանումը վերահաս կը համարէին: Չէ թէ միայն տէրութեան պաշտպանութեան համար բանակ չկար, հապա նաւատորմիդն ալ կորսուած էր. Օսմանեան ծովապետը, որն որ Եգիպտացւոց դէմ խաւրուած էր, նաւերով անոնց կողմն անցաւ: Մէկալ կողմանէ ալ Խպրահիմ իր յաղթող բանակաւ կը յառաջանար եւ Փղըր Ասիայի բնակիչներէն սիրով կ'ընդունուէր: Բայց կոստանդնուպոլսոյ բնակիչները հանդարտ կենալով, եւ մեծ տէրութեանց գեապաններն ամէնքը միաբան երեւնալով, Եգիպտական հրամանատարը չհամարձակեցաւ ալ աւելի մայրաքաղաքին մօտենալ: Մանաւանդ թէ քիչ մը ետքը սկսաւ ետ գառնալ, որուն շատ օգնեց իր բանակին մէջ հիւանդութիւն իյնալը,

եւ իր Բունակը Ասորիքի ապստամբութիւններուն աստ-
կանալը: — Նոյն միջոցին Սուլթան Ապտ-իւլ-Մէճիթ'
գլխաւորաբար Անգղիայի խորհրդովը՝ անանկ գործքի
մը ձեռք զարկաւ, որն որ Օսմանեան տէրութեան մէջ
գարազլուի կը կացուցանէ: Կ'ուզենք բռնել ԿիւլՏանի
Խաթիթի շերիֆը (1839, Նոյ. 3), որով տեսչութեան
ամէն ճիւղերուն մէջ նշանաւար նարդութիւններ կ'ը-
լային, առանց ազգի եւ կրօնքի զանազանութեան՝ տե-
րութեան ամէն հպատակներն օրինաց առջեւը հաւա-
սար կը հրատարակուէին, ամենուն կենաց եւ պատուոյ
եւ ստացուածոց ապահովութիւնը կ'երաշխաւորուէր:
Աս հրովարտանքն ամէն կողմ՝ շատ ազէկ ազդեցութիւն
բրաւ. այնպէս որ Սուլթանը թէ իր հպատակաց հաւա-
տարմութեան ու սիրոյն եւ թէ օտար տէրութեանց
համարման վրայ ապահովութիւն ստանալով, կրնար
հանգարաութեամբ յառաջ տանիլ իր պաշտպանողա-
կան դիրքը: Բայց մեկալ կողմանէ Մէհեմէտ Ալի ալ
իրեն զգաակար կը սեպէր առժամանակ մի պատերազ-
մին գազրած կենալը: Ար յուսար թէ որչափ որ խըն-
դրոյն լուծումը կ'ուշանայ, այնչափ ալ իրեն շահաւոր
կ'ըլլայ, որովհետեւ ապահովութեամբ կը կարծէր թէ
պէտք է որ մեծ տէրութեանց մէջ երկպառակութիւն
ելլէ: Աս մտածմունքը բարբովին անհիմն չէր. վասն զի
Նիսիպի ձակառամարտէն ետքը հինգ մեծ տէրութեանց
մէջ երեւոյղ միաբանութիւնն սարուելու վրայ էր: Եւ
թէպէտ կուսակալին յուսացածին պէս մեծ տէրու-
թիւնք երկու մասի չբաժնուեցան ու Եւրոպական պա-
տերազմ չբացուեցաւ. բայց Գաղղիա մեկալ տէրու-
թիւններէն բաժնուեցաւ: Միայն թէ աս ալ Եգիպ-
տացւոյն համար օգուտ մը չունեցաւ:

160. Լոնտրայի Պայմանագրութիւնը: Վաղ-
ղիա, որն որ՝ ինչպէս տեսանք՝ նոյն ժամանակները Ան-
գղիայէն հեռանալու վրայ էր, տեսնելով որ նոյն տե-
րութիւնն իր շահուն համար Մէհեմէտ Ալիին գեժ
կ'երէ, ուզեց փոխարքային կողմը բռնել. կը յուսար որ

ասով կրնայ զինքը բարոյակին իրեն հետ կտայել, որով Միջերկրական ծովը կամ իր սեպհական եւ կամ իր դաշնակցացը ստացուածներով պատելու բողձանքը գրուի կ'ելլէր: Իր գեապանները՝ մեծ տէրութեանց մէջէն մէկը կամ մէկալը նոյն գաղափարին կողմը շահելու համար՝ աս պատճառը յառաջ կը բերէին որ Եգիպտոսի փոխարքային զորանալն իրենց խիստ օգտակար է, վասն զի ասով Ռուսիային՝ Ասիայի վրայ ունեցած դիտաւորութիւններուն գէժ հաստատուն թուաք մը կը բարձրանայ: Աս պատճառն ամենէն աւելի Անգղիայի վրայ ազդեցութիւն կ'ընէր, եթէ նոյն իսկ Մէհէմմէտ Ալին զորանալն իրեն վնասակար չըլլար: Այսպէսով նոյն տէրութիւնը փոխարքային գէժ ունեցած հակառակութիւնն ամենայն սաստկութեամբ յառաջ կը տանէր: Իրեն հետ միաբան էր նաեւ Աւստրիա, որն որ իր սեպհական շահուն համար ալ Ցաճկաստանի ամբողջութեան պահուիլը կ'ուզէր: Ռուսիա ու Պրուշ ալ իրենց հետ միաբանեցան: Եւ այսպէս Լոնտոնի մէջ նոյն շորս տէրութեանց գեապաններէն գեապանաժողով մը գումարեցաւ, որն որ լմնցաւ Դրան հետ Պայմանագրութիւն մը գրուելով (1840, Յուլ. 15), որուն զիւրաւ գլուխ ելլելուն շատ օգնեց Ռուսիային Հիւնքեար Իսկէէսիի գաշնագրութենէն հրաժարիլը: Յիշեալ պայմանագրութեան պայմաններն ասոնք էին.

1. Մէհէմմէտ Ալին՝ Երեւոյ կղզին, Արաբիա, Ատանա եւ Ասորիքը՝ բաց ի Աքքայի կուսակալութենէն Սուլթանին ետ պիտի դարձնէ, նոյնպէս Օսմանեան նաւատորմին ալ ետ պիտի տայ. իսկ Եգիպտոս՝ իրբեւ ժառանգական ստացուած՝ իրեն պիտի մնայ:
2. Թէ որ մինչեւ որոշ պայմանաժամ մը չի հնազանդիր նէ, Աքքեա պիտի կորսնցընէ. իսկ եթէ մինչեւ երկրորդ պայմանաժամ մը գէժ կը դառնայ, Սուլթանը նոյն իսկ Եգիպտոս ալ կրնայ ձեռքէն առնուլ:
3. Չորս գաշնաւոր տէրութիւնք իրենք զիրենք կը պարտաւորեն՝ ի հարկին՝ նաեւ զէնքով զՄէհէմմէտ Ալին աս պայման-

ներն ընդունելու ստիպել, եւ զինուք միաբան օգնութիւն ընել Սուլթանին: 4. Հիւնքեար Իսկէլէսիի գաշնագրութիւնն իր զօրութիւնը կը կորսնցընէ, եւ Տաճկաստանի հին օրէնքները նորէն արժողութիւն կ'ունենան, որոնց նայելով՝ խաղաղութեան ժամանակ ամենեւին օտար պատերազմական նաւ Չանազ Գալէսիէն եւ Պոսփորոսէն չեն կրնար ներս մտնել:

161. Գաղղիա պատերազմի պատրաստութիւն կը տեսնէ ու ետ կը քաշուի: Մէհէմէտ Ալին չիխոնարհիր: Ինչպէս վերը զըցուածներէն կ'իմացուի, Գաղղիա Լոնտոնի գեսպանաժողովոյն մասնակից չէր եղած: Արդէն Անգղիայէն հեռանալու սկսած եւ Հիւսիսային տէրութեանց հետ կատարեալ միացած ըլլալով, եւ առաջին տէրութիւնն՝ անոր Ալճերիի մէջ յառաջանալուն, Միջերկրական ծովուն չորս կողմն իր իշխանութեան կամ ազդեցութեան տակ առնելու ջանքին, եւ Եգիպտոսի վրայ ունեցած դիտաւորութեանց համար իրենց գէմ խիստ նեղացած ըլլալով, զինքը նոյն գեսպանաժողովէն դուրս ձգել տուած էր: Հազիւ գաշինքը դրուելէն ետեւ, իրեն պարզապէս նոյնին պայմանները հաղորդեցին: Եթէ Գաղղիա անկէ ետեւ ալ Մէհէմէտ Ալին կողմը բռնել ուզէր, պէտք էր որ բոլոր Եւրոպայի հետ պատերազմի բռնուէր: Եւ ստուգիւ Լուգովիկոս Փիլիպպոս իսկզբան անանկ ցուցուց որ բանը մինչեւ հոն պիտի հասցընէ: Անմիջապէս պատերազմի մեծ պատրաստութիւններ տեսնուեցան, եւ ամէն կողմ յեղափոխութիւններ գրգռելու ջանքեր եղան: Բայց անկարելի է կարծել որ աս պատերազմական եռանդը՝ առերեւոյթ ցոյց ընելէն աւելի նպատակ մ'ունեցած ըլլայ, որն որ Փարիզ քաղաքը՝ Լուգովիկոս Փիլիպպոսին շատոնց ունեցած բաղձանքին համեմատ՝ պարսպով պատելէն ուրիշ հետեւութիւն չունեցաւ (135): Նոյն իսկ թիէր, պատերազմ ուզող Գաղղիացոց գլուխը, Փոխարքային խրատ տուաւ որ ինչ կերպով ըլլայ նէ՝ խաղաղութիւն ընէ, եւ Գաղղիական նաւատորմիզը ետ

կանչեց, որպէս զի շուրջ որ Գաղղիական ու Անգղիական նաւազներու մէջ եղած փոփոխ ատելութիւնը՝ իրարու հետ զարնուելու առիթ ըլլայ: Բայց թէպէտեւ այսպէսով Մէհէմէտ Ալի Գաղղիայէն թող տրուեցաւ, ի վերայ այսր ամենայնի չորս տէրութեանց պահանջման համեմատ՝ Լոնտոնի դաշնաց պայմանները յանձն առնուլ չէր ուզեր. մէկ կողմանէ կը յուսար որ ամէն ատեն եւ ամէն տեղ իր զէնքերէն անբաժին եղող յաջողութիւնն աս անգամ ալ զինքը չիթողուր՝ մէկալ կողմանէ ալ կը կարծէր թէ երբ որ ըլլայ նէ՛ դաշնաւոր տէրութեանց մէջ երկպառակութիւն կը մտնէ: Ինչպէս որ է նէ, իր խուսափական պատասխանները՝ զինուց կիրառութիւնը հարկաւոր ըրին:

162. Գաշնաւորաց յաջողութիւնները եւ Մէհէմէտ Ալիին խոնարհիլը: Պատերազմական գործողութեանց սկիզբ եղաւ՝ Իպրահիմ Փաշային յառաջ քալելով. աս շարժմամբ ինք ան կը դիտէր որ դաշնաւոր տէրութեանց նաւատորմիզը մայրաքաղաքին պաշտպանութեան դիմելու հարկադրի: Բայց անոնք առանց ասոր միտ զնելու, Ասորիքի ծովեզրները մօտեցան: Եւ թէպէտ հազիւ 7000 հոգի կրնային ցամաք հանել, ուր որ Եգիպտական բանակը 60,000 հոգի ունէր. ի վերայ այսր ամենայնի իրենց բոլոր գործողութիւնները յաջողութեամբ պսակեցան: Անգղիական եւ Աւստրիական նաւերէ կազմուած տորմիզը՝ Պէյրութ, Սայտա ու Ա.ք.քեա առաւ (1840, Սեպտ. — Նոյ. 4). ցամաք ելլող զօրքերը՝ սրոնց մէջ յիշեալ երկու տէրութեանց զինուորներէն զատ՝ Օսմանեանք ալ կային, զանազան կռիւներու մէջ Եգիպտացւոց յաղթեցին եւ տեղացիները ոտք հանեցին: Այսպէսով Իպրահիմ Փաշա ստիպուեցաւ Տաւրոսէն անդին քաշուիլ. բայց իր գլխաւոր բանակատեղը հասած ատեն՝ հետը քիչ մարդ մնացած էր, որովհետեւ բանակին մեծ մասը՝ եղանակին, անօթութեան եւ լեռնաբնակ տեղացիներուն յարձակմանց զոհ եղած էր: Ասով եւ բազմաթիւ

փախչողներով տկարանալով, ազգամիջեր դիզած տե-
 ղերը կորսընցընելով, Եզիպտական հրամանատարը Գա-
 մասիսս գնաց եւ հոնկից գէպ ի Սուէզ ճամբայ ելաւ,
 ան միջոցին՝ երբ որ իր հայրը իրեն հրաման կը խաւրէր
 ետ քաշուերու: Աս վերջինը Ասորիքէն հետզհետէ ըն-
 գունած իրարմէ տխուր գոյժերէն խոնարհելով, եւ նե-
 բիրբի հրամանատարութեամբ Աղէքսանդրիոցի առջեւ
 երեւցող անգղիական նաւատորմէն՝ նոյն իսկ Եզիպ-
 տոսի նկատմամբ վախի մէջ իյնալով, նոյն հրամանա-
 տարին հետ առժամանակեայ զաշինք մը դրաւ (Նոյ.
 27), որով Լոնտոնի Պայմանագրութիւնը յանձն կ'առ-
 նուր. առանձին թղթով մ'ալ Սուլթանին իր հպա-
 տակութիւնը կը յայտնէր: Գաշնաւոր աւերութիւնք
 պատերազմը շուտով ընթացընելու բաղձանքով, չուղեցին
 իրեն գէմ մեծ խստութեամբ վարուիլ. իրենց միջնոր-
 գութեամբը Մէհէմէտ Ալի անանկ պայմաններ ընդու-
 նեցաւ, որանցմով գոհ կրնար բլլար: Ստոյգ է բոլոր իր
 աշխարհակալած, եւ նոյն իսկ արեան հեղեղներով Աե-
 հապիներէն առած տեղերը թող պիտի տար. բոցց Ե-
 զիպտոս՝ իբրեւ ժառանգական ստացուած՝ ձեռքը կը
 մնար: Ասկից զատ՝ ստիպուեցաւ խոտաճալ որ Օս-
 մանեան աւերութեան ամէն օրէնքներն ու դաշինքները
 Եզիպտոսի մէջ ալ գործադրուին; իր մենավաճառու-
 թեան ու մաքսի կարգադրութիւնները ջնջէ, Գրան
 տարեկան տուրք վճարէ, Օսմանեան նաւատորմիդը ետ
 տայ, զօրաց թիւը նուազեցընէ: Այս ամենայն յանձն
 առաւ եւ կատարեց Մէհէմէտ Ալի, որով ժառան-
 գական Փաշայի մը կարգն իջաւ: Իր ուրիշ ամէն դի-
 տաւարութեանց հետ օգը ցնդեցաւ նաեւ Անգղիացւոց
 գէպ ի Հնդկաստան բանալու ճամբուն գէմ ունեցած
 դիտումն ալ: Անգղիացիք քիչ մը ետքը իրենց բազ-
 ձանքը գլուխ տարին, որով եւ Եզիպտական պատե-
 բազմով դիտածնին կատարեալ յաջողեցաւ, թէ աս
 եւ թէ վաճառականութեան նկատմամբ:

ԵՐՐՈՐԿ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ

ԵՒՐՈՊԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆՆ ԸՍՏ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԱՅԵՐԱԶՄ

(1848—1858)

163. Ընդհանուր տեսութիւն: Ազգայնութիւնք: Եւրոպայի տէրութեանց գումարութեան շինուածքին նորէն կանգնուելէն ետքը պատահած յեղափոխութիւնները՝ որոնցմով մինչեւ հոս զբաղեցանք, թէպէտ բոս ինքեան իրարու հետ քիչ շատ կապակցութիւն ունէին եւ գրեթէ մէկ սկզբունքէ կը ծագէին. բայց սակայն կրնանք զանոնք իբրեւ մասնական ու տեղական շարժումներ նկատել՝ ան յեղափոխութիւններուն համեմատութեամբ, որոնց պատմութիւնը ասկէ ետեւ մեր ընթերցողաց առջեւը պիտի գնենք: Ասոնք՝ բաց ի ընդհանուր ըլլալէն, ուրիշ առաջիններէն տարբեր երեւոյթներով ալ մեր առջեւը կ'ելլեն, որոնց գլխաւորներէն մէկն է Ազգայնութեանց կռիւր: — Խել մը ժամանակէ վեր եւ առանձինն բոլորակնալու սկզբունքը տիրելու սկսելէն ետեւ (Հատ. Բ. 209), քաղաքագէտք՝ միայն երկիրներու սահմաններուն ու տէրութեանց յարաբերութիւններուն մտադիր եղած էին. որով եւ խաղաղութեան զաշինքներով կամ ինչ եւ իցէ կերպով այլեւայլ տէրութեանց գաւառները փոխած ատեննին՝ աշխարհագրական դիրքն ու սահմաններու ամփոփութիւնն իրենց կանոն կ'առնուին, առանց ամենեւին միտ գնելու ազգի կամ ցեղի ու լեզուի զանազանութեան: Այսպէս ըրաւ նաեւ Աիէննայի արքայտօղովը: Արգ նոր ժամանակները ազգերը սկսան բազձալ որ օտարատեսակը բաժնուի, կամ ազգի մը այլեւայլ տէրութեանց տակ բաժնուած մասերը մէկտեղ միանան, իւրաքանչիւր ազգ ինքնագլուխ ու անկախ ըլլայ՝ իր սեպչական վարչութեան տակ, եւ ամէն մէկուն ազգային լեզուն ու սովորութիւնները մշակուին

ու յարգուին : Աս բաղձանքն անող աւելի սաստկացաւ , որ տեղ տեղ կառավարութիւնք ջանք կ'ընէին իրենց աշխարհակալած եւ կամ ինչպէս որ է նէ ձեռք բերած երկիրներուն այլադեղ բնակիչները՝ տիրող կամ գլխաւոր ցեղին հետ ձուլելով՝ մէկ ազգ կազմել , եւ ժամանակաւ նմանօրինակ մասերէ կազմուած ամբողջ մը ձեւացընել . ինչպէս որ ատենօք Գաղղիա եղած էր : Նոյն ջանքը՝ ինչպէս ըսինք՝ վերոյիշեալ բաղձանքը սաստկացուց , որմէ անանկ պատերազմներ ծագեցան , որոնց նմանը՝ միայն միջինդարեան կրօնի պատերազմներուն ժամանակները տեսնուած էր : Սակայն աս ալ խոստովանելու է որ շատ անգամ յեղափոխականք ու ռամկապետականք աս ազգայնութիւնն իբրեւ պատրուակ ձեռք առին՝ ժողովուրդները կառավարութեանց եւ իրարու դէմ գրգռելու , որպէս զի զիւրաւ կարենան իրենց նպատակին հասնիլ : — Ազգայնութեանց աս կռիւները չէին կրնար տեղի ունենալ արեւմտեան կողմերը , ուր իւրաքանչիւր տէրութիւն կրնայ ըսուիլ թէ նոյնացեղ բնակիչներ ունի , եւ եթէ օտարացեղք ալ կան նէ , թուոյն եւ ուրիշ հանգամանաց կողմանէ՝ գլխաւոր ցեղին համեմատութեամբ խիստ նուազ ըլլալով , չեն կրնար անոր դէմ ելլել : Ասոր հակառակ մեծ պէտք էր ըլլալ նոյն կռիւր միջին ու արեւելեան Եւրոպա , ուր միեւնոյն տէրութեան մէջ զանազան ազգեր կը գտնուին , եւ կամ միեւնոյն ազգին մասերն այլեւայլ տէրութեանց տակ բաժնուած են : Այսպէս են՝ օրինակի համար՝ Լիմպուրկի դքսութեան , Արեւելեան ծովու գաւառներուն ու Շլեզուիկի դքսութեան մէջ եզող Գերմանացիք , որոնք Հռլանտայի , Ռուսիայի ու Գանիայի իշխանութեան տակ են . այսպէս են գլխաւորաբար Իտալացիք , որոնց մէկ մեծ մասն Աւստրիայի իշխանութեան տակ կը գրտնուի , իսկ մնացածները զանազան տէրութիւններու տակ բաժնուած են . այսպէս են վերջապէս Լեհք , որոնք իրենց անկախութիւնը կորսընցուցած՝ Ռուսիայի , Աւստրիայի ու Պրուշի իշխանութեան տակ կը գտնուին :

164. Երկրի ստացուածոց վիճակ: Գործատեարք ու բանուորք: Եւրոպայի արեւմտեան կողմերը՝ գլխաւորաբար Գաղղիա՝ ընկերական վիճակն ուրիշ կերպ կռիւներու առիթ կու տար: Գաղղիայի մեծ յեղափոխութիւնը՝ ազատութեան ու հաւասարութեան սկզբունքները գործադրելով, հին ժամանակներէն ընկերութեան աղքատ ու ստորին դասերուն վրայ գրուած ամէն կապանքները խզած էր, որով եւ իրենց ձեռաց աշխատութեամբն ապրող մարդիկ՝ բարձրագոյն կարգի մարդիկներուն հաւասար եղած էին: Այսպէս ան մարդիկները՝ որոնք բոլոր քաղաքական իրաւունքներէ, հասարակօրէն ստացուածքէ եւ շատ հեղ նաեւ անձնական ազատութենէ զրկուած էին, նոյն ժամանակէն ընկերութեան ուրիշ անդամներուն հետ հաւասար իրաւունք ստանալով, ալ կրնային ընչից ու ընտանեաց տէր ըլլալ: Երբ որ յեղափոխութեան մրիկներն անցան, եւ խաղաղութիւնը հաստատուելով մշակութիւնը, արուեստներն ու ճարտարութիւնը նորէն ծաղկեցան, ան ատեն յառաջուան ընկերական կապերուն քակուելուն հետեւանքը սկսաւ երեւալ: Ստացուածոց բաժանականութիւնը, եւ ամէն զաւակաց՝ իրենց հօրն ինչքերը ժառանգելու հաւասար իրաւունք ունենալը, երկրատեարք թիւը խիստ շատացուց: Բայց խիզրան ուրախալի սեպուող աս երեւոյթը՝ ետքէն սաստիկ թշուառութեանց աղբիւր եղաւ: Երկիրները հետզհետէ բաժնուելով, ան սաստիճան պզտիկցան՝ որ խիստ քիչ ընտանիք անոնց մուտքովը կրնան ապրիլ: Այսպէսով ազատ գեղացիք ըստ մեծի մասին բանուոր եղան, որոնց վիճակը՝ յառաջուան գերի կամ՝ ծառայ սեպուողներուն վիճակէն աւելի գէշ է. վստօն զի ուր որ յառաջ երկրատեարք, կամ աւատային օրէնքներէն ստիպուած, կամ իրենց շահուն համար եւ կամ իրենց բարեսրբութեամբը, իրենց գեղացիներուն հիւանդ եղած կամ կարօտութեան մէջ ինկած ատեն՝ անոնց օգնութիւն կ'ընէին, իրաց նոր հանգամանաց մէջ՝ ազատ գեղացիք

ինք զինքը երջանիկ կը սեպէ՝ երբ որ կրնայ բարձր սո-
կաւեզք փոխ ստակ գտնել, որով քիչ տարւան մեջ
բովանգակ ստացուածքը կը կորսնցընէ: — Կրնայ ը-
սուիլ որ տակից աւելի գէշ եղաւ քաղաքներու մեջ
գտնուող ստորին աստիճանի մարդիկներուն վիճակը:
Արուեստները բանեցընելու համար յառաջագոյն գը-
բուած կապերը վերցուելով, արուեստաւորաց թիւն ուն
աստիճանի շատցաւ, այնպէս արտաքոյ կարգի համըն-
թացութիւն կամ սոսխութիւն մը ծագեցաւ, որ աշ-
խատութեան վարձքը խիստ նուազցաւ. այնպէս որ չէ
թէ միայն բանուորները, հապա նաեւ միջակ արուես-
տաւորները չեն կրնար իրենց աշխատութեամբն ա-
պրուստանին հոգալ: Ասոր համար վերջիններէն շատերը
հարուստ գործատէրներու ծառայութեան մեջ կը մըտ-
նեն: Իսկ գործատէրներու թիւն օրէ օր կ'աւելնար,
որովհետեւ երկրատեսարց իրաւունքները կամ առանձ-
նաշնարհութիւնները նուազած ըլլալով, նոյն իսկ ազ-
նուականաց մեջէն հարուստ մարդիկ՝ ստակնին գործա-
տուններ բանալու կը գործածեն: Ուստի եւ գործա-
տանց բանուորները՝ որոնք իրենց օրական վարձքովը
պիտի ապրին եւ շատ հեղ նաեւ ընտանիք պիտի պա-
հեն, գործատէրներուն գերիներն եղան՝ որոնց հետ քա-
ղաքականօրէն հաւասար կը սեպուին: Այսպէսով ստակը
կամ գրամագրութիւն անանկ իշխանութիւն ու բռնաւո-
րական զօրութիւն ստացաւ, որ կրնայ ըսուիլ թէ յա-
ռաջուան արտօնացեալ կարգերուն ունեցածէն աւելի
ոստակ է. եւ ան երեւակացեալ ազատութիւնն ու
հաւասարութիւնը, որոնց համար կամ որոնց պատրուա-
կաւ այնչափ արեան հեղեղներ թափուած էին, յա-
ռաջունէ աւելի նուազագիւտ բաներ եղան:

165. Ընկերվարութիւն ու Հասարակավարու-
թիւն: Աս անպատշաճութիւններն արդէն շատոնց սկը-
սած էին երեւալ: Ստորին աստիճանի մարդիկ կը մտա-
ծէին թէ երբօր (քաղաքացւոց) կարգին՝ ազնուա-
կաններուն ու եկեղեցականներուն հաւատարապատիւ

բլավէն, իրենց օգուտ չեղաւ. որովհետեւ նոյն քաղաքացիք՝ ազնուականաց մէկ մասին հետ միացած՝ չորրորդ կարգը կամ անստացուած գործազարները յառաջուրնէ սաստկագոյն գերութեան վիճակի մէջ կը բռնէին: Յեղափոխութեան նպատակն ա՛ն էր, կ'ըսէին, որ միայն քաղաքացիք հարստանան, եւ աշխատաւորք յառաջուրնէ աւելի ազքատութեան ու խեղճութեան մէջ իյնան: Քանի որ հասարակապետութեան ու նարոյէանեան ժամանակներուն մրրիկներն ամենաւն մտադրութիւնը գրուած էին, աստնկ տրաւնջներուն միտ գնող չէր բլար: Պապէօֆին հասարակապետական գրութիւնը (Հատ. Գ. 64), որն որ կ'ուզէր երկիրները նորէն բաժնել, ստացուածները հաւասարդունել եւ ամէն մարդիկները՝ թէ՛ նիւթական եւ թէ՛ մտաւորական կողմանէ՝ հարթհաւասար ընել, հասարակապետութեան ժամանակն ամէն օր երեւան ելող հազարումէկ այլանդակ գաղափարներէն մէկը սեպուեցաւ: Բայց երբ որ խաղաղութեան տարիները յաջորդելով՝ նոյն հանդարտութեան մէջ քաղաքական ընկերութեան պակասութիւնները տեսնուեցան, եւ յայտնի երեւցաւ թէ ի՞նչ մեծ անդունդով իրարմէ կը բաժնուին՝ միայն իրենց աշխատութեան ու զօրաւոր բազակներուն տէր եզոզ անստացուածները եւ մեծատունները՝ որոնք բոլոր ինչքերն ու իշխանութիւնք ձեռք անցուցած են, ալ անկէ ետեւ սկսան բարձրաձայն պահանջումներ բլլալ ընկերական վիճակը փոխելու: Գաղղեա՝ որուն գեանոյն վրայ գլխաւորաբար բուռած եւ աճած էին ազատութեան ու հաւասարութեան գաղափարները, աս ընկերական նորոգութեանց մտածման ալ ծնունդ տուաւ: Աս նորոգմանց գրութիւնները՝ որոնք ամէն մարդիկներուն հաւասարութեան սկզբունքին վրայ կը հիմնին, եւ նոյն հաւասարութեան վիճակին իրօք հաստատելու նպատակն ունին, նոյնք գործազրելու համար բանեցրնել ուղուած միջոցներուն նայելով՝ երկուքի կը բաժնուին: Մէկը կը սորվեցրնէ

որ ստացուածոց սեպհականութեան վնաս չհասցընելով, հապա միայն Փիղիգական ու մտաւորական զօրութիւնները միացընելով, անանկ բարօրութիւն ու երջանկութիւն մը կրնայ յառաջ բերուիլ, որ անով ամէն գոթախտութիւնք մարդկային ընկերութենէն աներեւոյթ ըլլան, եւ ամենէն ազքատ մարդիկ ալ չափաւոր կերպով մը կարենան կենաց վայելումն ունենալ: Իսկ մէկալը կը վարդապետէ որ բոլոր առանձնական ստացուածը ջնջելով եւ ամէն բան հաւասարապէս ամենուն բաժնելով ամենայն ինչ հասարակաց ընելու է: Առաջին գրութիւնը՝ Ընկերվարութիւն կ'ըսուի, իսկ երկրորդը՝ Հասարակավարութիւն (134): Ինչպէս ինք իրմէ յայտնի է, վերջին կարծիքը՝ յիմարական ու անկարելի ըլլալէն զատ, անանկ ալ ամէն կողմանէ վնասակար է, որ մարդս սաստիկ կ'իլքերով կ'ոյրցած պէտք է ըլլալ ան ամէն շարաշար հետեւութիւնները շտեմնելու համար, որոնք պէտք է որ վերջապէս անձնական ազատութեան բոլորովին կորսուելուն առաջնորդեն եւ անանկ գերութեան վիճակ մը յառաջ բերեն, որուն քովն ամենախիստ բռնաւորութիւնը ցանկալի կ'երեւայ: Իսկ առաջինը՝ թէ եւ ասոր չափ այլանդակ ու վնասակար չըլլայ, ի վերայ այսր ամենայնի մարդկային բնութեան հանգամանաց նայելով, գրեթէ անկարելի է որ գործադրուի. ինչպէս որ փորձը շուտ մը ցուցուց:

Ա.

Ընդհանուր յեղափոխութեան նախընթաց դեպքերը (1846—1848):

166. Հելուետիայի վիճակը: Արմատականք եւ անկրօնք: Աս ժամանակի միջոցին մէջ պատահած յեղափոխութիւններուն եւ կամ նոյններուն նախընթացող գէպքերուն սկիզբը Հելուետիա եզաւ: Ասիկա բնական բան էր, վասն զի ինչպէս ուրիշ հեղ ըսինք

(130), խել մը ժամանակէ վեր նոյն երկիրը ամէն ազգաց փախստականներուն ու յեզափոխականներուն ապաստանարանն ու ժողովարանն եղած էր, որոնք թէեւ քանի մը հեղձ ուրիշ տէրութեանց պահանջմամբ հոն կից մերժուեցան (130, 150), բայց միշտ նորէն նորէն հոն կը ժողվուէին: Ասոնք ջանք կ'ընէին ամէն կողմ յեզափոխութիւն հանել, որն որ ի հարկէ մեծ ազդեցութիւն ունենալու էր իրենց կեցած տեղւոյն վրայ: Բուն երկրին ազատականները՝ առ օտարականներէն զոն ու համարձակութիւն գտնելով, ետեւէ կ'ըլլային իրենց ներքին հակառակորդները զսպելու, որպէս զի ուղածնին գիւրաւ յառաջ տանին: Խիստ մեծ էր նոյն կողմերը տիրող գրգռութիւնը, վասն զի կռիւր՝ միայն քաղաքական նիւթերու վրայ չէր, հապա նաեւ կրօնական խնդիրներու վրայ. ան ալ չէ թէ հին ժամանակներն եղածին պէս՝ բողոքականութեան եւ ուղղափառութեան մէջ, հապա քրիստոնէութեան ու անկրօնութեան մէջ: Հելուեախոյի չափազանց ազատականները քրիստոնէութիւնը բոլորովին կ'ուրանային, եւ մեծապէս կը ջանային անաստուած ուսուցչաց ձեռքով իրենց սկզբունքները երիտասարդաց սիրտը խոթելով, թէ ուղղափառութիւնն ու թէ բողոքականութիւնը ջնջել: Ասանկով եկեղեցւոյ գէմ՝ հալածանք յարուցին, որուն պատճառաւ իրենց եւ ուղղափառաց մէջ անպակաս կռիւ ու պատերազմ կ'ըլլար: Արդէն շատոնց Պատընի բանակցութեան մէջ որոշած էին (1834) որ եկեղեցին տէրութեան հսկողութեան տակ դրուի, ամէն կողմ ազատ ազգային կրթութիւն խոթուի, եւ վանքերը ջնջուելով՝ անոնց ստացուածքին մատակարարութիւնը կառավարութեան ձեռքն անցնի: Եւ թէպէտ հակառակ կողմնակցութիւնն առ որոշմանց գէմ՝ բողոքեց, ի վերայ այսր ամենայնի քանի մը նահանգներու եւ զըլխաւորաբար Արկաւ նահանգին արմատական կառավարութիւնը՝ վանքերու ընչից մատակարարութիւնն իրեն սեպհականեց, եւ երբ որ նոյն նահանգին պահպա-

նորականները սահմանադրութեան փոխուելուն դէմ ոտք ելան, կառավարութիւնն առ դէպքէն առիթ առնելով, նոյն տեղաց ութը վանքերը ջնջեց (1841, Յունու. 20): Զնջուած վանքերուն մէջն էր Մուրի ըսուած հարուստ արքայարանը, որն որ Հազոպուրի տան հիմնարկութիւնն ըլլալով, ուղղափառ նահանգներէն զատ՝ Աւստրիա ալ նոյն անիրաւ գործողութեան դէմ բողոքեց: Ի վերայ այսր ամենայնի Աարկաւի կառավարութիւնն առ բողոքները բանի տեղ չդնելով, վանքերուն ինչքը պահեց, եւ դաշնակցական խորհրդանոցին հաւանութիւնն ալ ընդունեցաւ (1843):

167. Յիսուսեանք: Ազատ գնդեր: Մասնական դաշնակցութիւն: Այսպէս Արմատականք Հելուեախայի մէջ խիստ կը զօրանային. բայց Պահպանողականք ալ բաւական զօրութիւն ունէին: Աս վերջիններուն գլխաւոր տեղերն էին եօթն ուղղափառ նահանգները, այս ինքն՝ Շուից, Ուրի, Ունդերվալտէն, Լուցեռն, Յուկ, Ֆրայպուրկ ու Վալլիս: Կողմնակցութեան ոգին ու երկպառակութիւնն օրէ օր սաստկանալով, Լուցեռնի պահպանողական կառավարութիւնն որոշեց որ Յիսուսեանք կանչուին եւ տղոց կրթութիւնն անոնց յաճճուի, առ բանն՝ անկրօնութեան տարածուելուն դէմ ամենէն յարմար միջոց սեպելով (1844, Սեպտ. 12): Թէպէտ ըսա ինքեան իրաւունք ունէր առ բանն ընելու, բայց ոգիներուն գրգռութեան նայելով՝ խոհեմութեան համեմատ չէր. ինչպէս իրօք ալ ամէն խոհեմ մտադիկ ու արտաքին տերութիւնք եւ նոյն իսկ Աւստրիա առ նկատմամբ նոյն գործքին վրայ տհաճեցան: Ասոր առաջին հետեւութիւնն ան եղաւ որ բոլոր չափաւորեալ բողոքականք՝ որոնք յառաջագոյն Պահպանողականաց կողմնէին, Յիսուսեանք դէմ ունեցած ատելութիւններնուն համար՝ անսնցմէ զատուեցան: Իսկ Արմատականք առ ընդհանուր զգած մունքը անանելով, աւելի՛ յանգագնացան. ուստի եւ Լուցեռնի մէջ եղողները՝ որոնք տկարագոյն մասն էին, ուրիշ նահանգներու մէջ եղող իրենց

կողմնակիցներէն խնդրեցին որ զէնքով զան իրենց կողմը զօրացնեն, որպէս զի ժողովներու մէջ քուէի առաւելութեամբ գլուխ հանել չկրցածնին՝ զէնքի զօրութեամբ յառաջ տանին: Եւ թէպէտ Ազատ գնդեր¹ անուամբ եկողներն ալ յողթուելով (1845, Մարտ 30), Արմատականք չկրցան ուզածնին յաջողընել. սակայն ասով անդական խնդիրը՝ բոլոր Հելուետիայի ընդհանուր խնդիր եղաւ: Եօթն ուղղափառ նահանգները դաշնակցութեան խորհրդանոցէն խնդրեցին որ ազատ գնդերը պատժուին. նմանօրինակ ձեռնարկութեանց դէմ իրենց պաշտպանութիւն ըլլայ, եւ Արկաւի մէջ ջրնջուած վանքերը նորէն հաստատուին: Եւ երբ որ աս իրենց պահանջումները չկատարուեցան, իրենց մէջ մասնական դաշնակցութիւն մը գրին՝ իրենք զիրենք արտաքին (ուրիշ Արմատական նահանգներուն) յարձակումներէն ու ներքին վրդովմունքներէն պաշտպանելու համար: Ասոր հակառակ Արմատականք սկսան ջանալ որ ինչ կերպով որ ըլլայ նե՛ մնացած պահպանողական նահանգներուն կառավարութիւնները կործանեն, որպէս զի նորէն խորհրդանոց գումարուած ատեն՝ իրենց կողմն աւելի ձայն կամ քուէ ունենան: Իրենց աս ջանքը ճինեւերայի ու Վաստի մէջ յաջողութիւն գտաւ, որով խիստ զօրացան, մանաւանդ երբ որ զօրաւոր Պեռն նահանգը դաշնակցութեան գլխաւոր տեղն եղաւ (1847, Յունու. 1), եւ դաշնակցութեան խորհրդանոցին գահերէց եղաւ Օքսենպայն, որն որ Ազատ գնդերուն հրամանատարութիւն ըրած էր:

168. Արմատականաց ու մասնական դաշնակցութեան պատերազմն ու առաջիններուն յաղթող ըլլալը: Երեք մեծ տէրութեանց ու Անգլիայի քաղաքականութիւնը: Արմատականք այսպէս զօրանալէն ետեւ, ոկսան պահանջել որ Բիսուսեանք բոլոր Հելուետիայէն մերժուին, իբրեւ թէ աս բանս երկրին խաղաղութեան պահպանուելուն հարկաւոր ըլլայ. եւ

1 Les corps francs,

գաշնակցութեան խորհրդանոցին մէջ կրցան ուզածնուն պէս որոշումներ ընել տալ թէ առ նիւթոյն վրայ եւ թէ մասնական գաշնակցութեան լուծուելուն վրայ, զորն որ ընդհանուր գաշնակցութեան հակառակ կը համարէին (1847, Յուլ.) : Բայց մասնական գաշնակցութեան անդամներն առ որոշումներն իրենց իւրաքանչիւր նահանգին անկախութեան հակառակ սեպելով, չհնազանդեցան : Ասանկով հարկ եղաւ որ խնդիրը սրով որոշուի : Իսկ պատերազմը՝ ամէն ակնկալութեանց ու ներքին եւ կրօնական պատերազմներուն սովորական ընթացքին հակառակ՝ խիստ շուտ լմրնցաւ ('Նոյ. 4—Դեկտ. 1) : Ճինեւերացի Տիւֆուր զօրապետին հրամանատարութեան տակ գաշնակցութեան բանակ մը՝ քիչ դիմադարձութեամբ Ֆրայպուրի ու Լուցեռն առաւ, որմէ ետքը մէկալ նահանգները գաշնակցութեան խորհրդանոցին որոշմանց գլուխ ծռեցին : Գրուած խաղաղութեան գաշնաց պայմաններն էին՝ մասնական գաշնակցութիւնը լուծել, Յիսուսեանները մերժել, պատերազմի ծախքը վճարել եւ կառավարութիւնները փոխել : Պատերազմին ասանկ շուտով լմրնատլով՝ չկրցան բան մ'ընել երեք մեծ տէրութիւնք, Աւստրիա, Պրուշ ու Գաղղիա, որոնք Արմատականներուն հակառակ ըլլալով, մէջերնին միաբանած էին միահամուռ միջնորդութիւն կամ միջամտութիւն ընել, եւ արդէն ըստ մասին ստակով ու զէնքով Պահպանողականներուն օգնութիւն կ'ընէին. ուր որ Անգղիա ասոր հակառակ քաղաքականութիւն կը բռնեցընէր : Արմատականք առ վերջին տէրութեան պաշտպանութեան վրայ ապահով ըլլալով, մէկալ երեք տէրութիւնները բանի տեղ չէին գներ. ուստի երբ որ պատերազմը լմրնալէն ետեւ՝ նոյն տէրութիւնք եւ Ռուսիա միաբան ծանուցագրով մը յայտնեցին թէ Գաշնակցութիւնը կանոնաւոր ու գաշնաց համեմատ վիճակի մէջ չեն նկատեր՝ մինչեւ որ ճնշուած նահանգները իրենց կատարեալ անկախութեան մէջ չհաստատուին (1848, Յունուար. 18),

դաշնակցութեան կառավարութիւնն աս սպառնալիքն ալ բանի տեղ չգրաւ եւ գրեթէ արհամարհական կերպով պատասխան տուաւ: — Արմատականք անկէ ետեւ երկրին սահմանադրութիւնն ալ փոխելով, աւելի մեծ կեդրոնականութիւն եւ դաշնակցութեան միութիւն մը հիմնելու ջանք սկսան ընել: Նոյն ատենէն՝ Պետերսբուրգի հաստատուն կեցող դաշնակցական խորհուրդ մը կայ, որն որ բովանդակ դաշնակցութեան անուամբ կը կառավարէ: Ասոր քովը կը կենայ կարգախորհուրդ մը՝ իբրեւ իւրաքանչիւր նահանգներու կառավարութեանց ներկայացուցիչ, եւ ազգային խորհուրդ մը՝ որուն անդամներն իւրաքանչիւր նահանգներէն ընտրուած են՝ բնակչաց թուոյն համեմատ:

169. Իտալիայի վիճակը: Մածժինի: Իտալիա ալ նոյն ատեն խիստ գրգռեալ վիճակի մէջ կը գտնուէր, եւ կրնայ ըսուիլ որ բուն հոն ոկիզը եղաւ բովանդակ Եւրոպա տակնուվրայ ընող յեղափոխութեանց շարքին: Նոյն երկրին յառաջուան շիտթութիւնները հանդարտած էին: Աւստրիայի Փրանկիսկոս Ա. կայսեր († 1835, Մարտ 2) որդին՝ Փերդինանդ կայսրը քանի մը տարի յառաջ Միլան գալով, հոն հանգիստութեամբ Լոմպարտիայի ու Վենետիկի թագաւոր պսակուած էր (1838): Միեւնոյն տարին Գաղղիացիք Անգոնայէն (128) ելլելով, Իտալիայի խաղաղութիւնն այնպէս հաստատուն կ'երեւար, որ Դոսկանայի մեծ դուքսը Փլաքենտիայի (Ֆիլրենցէի) մէջ ուսումնականաց ընդհանուր ժողով մը գումարեց՝ Գերմանիայի մէջ նոյն ատեններն եղող աս կերպ ժողովներուն նման: Բայց աս հանդարտութիւնն առերեւոյթ բան էր. ի ծածուկ մեծ պատրաստութիւններ կը տեսնուէին: Յովսէփ Մածժինի (129, 130), Իտալիա օտարներուն ձեռքէն ազատելու համար գործունեայ կերպով կ'աշխատէր՝ Երիտասարդ Իտալիա անուամբ իր հաստատած գաղտնի ընկերութեան ձեռքովը, եւ աս նկատմամբ Անգղիայի հետ հազարգակցութեան մէջ

կը գտնուէր: Թէ որ Գաղղիա Հիւսիսային տէրութեանը հետ միտարան մնալու ըլլար, Մածծինեանք իրենց գիտաւորութեան յաջողելուն վրայ անհկալութիւն չէին կրնար ունենալ. ուստի եւ երբ որ Եգիպտական խռնդրոյն նկատմամբ՝ նոյն տէրութեան եւ ուրիշ մեծ տէրութեանց մէջ երկպառակութիւն ելաւ (161), անմիջապէս Երիտասարդ Իտալիա խըրտելու սկսաւ: Եւ թէպէտ ան ատեն Եւրոպայի խաղաղութիւնը չաւրուեցաւ. բայց Մածծինեանք ըստ մտաին պատրաստուած ըլլալով, չկրցան բոլորովին հստակարտ կենալ: Իրենց բրած գործերէն մէկն եղաւ Աւստրիայի Պանտօկերա ծովապետի տեղակալին երկու որդւոցը՝ Աւստրիական նաւատորմին մէջ գտնուող ուրիշ խել մ'իտալացիներով՝ Գալապրիա հստած յեղափոխութիւնը, որն որ շատ շտարածուած՝ զարուեցաւ եւ յիշեալ երկու երիտասարդներուն սպանուելովը լծնցաւ (1843): Երկու տարի ետքը Հռոմի տէրութեան մէջ ալ շփոթութիւն մ'եկաւ, որն որ թէպէտ զարուեցաւ, բայց խռովարարք կրցան՝ Գոսկանայէն անցնելով՝ փոխշիլ (1845):

170. Պիոս Թ. Եւ իր նորոգութիւնները: Ղոյն միջոցներուն Գրիգոր Ժ. քահանայապետը (127) մեռնելով (1846, Յունիս) իր տեղը քահանայապետական գահն եկաւ Պիոս Թ. (Մասզայի Ֆերեգդի), որն որ իր հեղ բնաւորութեամբն ու իր ժողովրդեան օգտին համար բրած նորոգութիւններովը՝ շուտ մը ամենուն սրտերն իրեն վտարակեցաւ: Ըրած նորոգութիւններն էին՝ տեսչութեան մէջ յառաջունէ աւելի խնայութիւն խոթել, օրինաց զբքերն ու դատատու նարաններուն ընթացքը քննելու համար յառաջագոյն գումարուած մասնատողութիւններուն մէջ՝ հասարակաց համարումը վայելող նոր անձինքներ գնել, երկաթուղիներու շինութեան հաւանութիւն տալ, բարձրագոյն պաշտամանց մէջ աշխարհականներ խոթել, գաւառներէն բնարուած մեծամեծներէ տէրութեան խորհուրդ մը հաստատել: Բայց աս ամէն իր հպատակաց օգտին

Համար բրածները եւ իր ժողովրդեան նոյներուն համար իրենց ցուցուցած սէրը, որով ամէն առթի մէջ կեցցէ Պետո Թ. կանչելով՝ զինքը կը բարեւէին, Իտալիայի յեղափոխականներուն յարմար առթի եղաւ՝ իրենց շատանցուընէ վեր դիտած ու ծածուկ կերպով պատրաստած յեղափոխութեան ձեռք զարնելու: Ուստի մէկ կողմանէ արապքուստ քահանայապետին մեծ համարում ունենալ ձեւացրնելով, մէկալ կողմանէ ալ ժողովրդեան անտնկ երեւցրնելով որ անոր բրածները՝ իրենց ըմբռնմանց ու գիտաւորութեանց համամիտ ըլլալէն յառաջ կու գան, անով իրենց կողմնակիցները շատցուցին, եւ անոր մեծարելի անունն՝ իրենց յեղափոխական գիտաւորութիւններուն նշանաբանն ըրին. անտնկ որ Իտալիայի մէկ ծայրէն մինչեւ մէկալ ծայրը՝ կեցցէ Պետո Թ. աղաղակովը կը թնդար: Ինչպէս բարիք, Մածծինեանց միտքն ան էր՝ որ բոլոր իշխաններն Իտալիայի այլեւայլ տէրութիւններէն մերժելով, անոնցմէ միտք Իտալիական տէրութիւն մը կազմեն: Արդ նոյն ատեն անտնկ կ'ուզէին ցուցնել որ իբրեւ թէ առ շարժման գլուխը պիտ'որ անցնի քահանայապետը: Արդէն քանի մը տարի յառաջ Ճոպերդի քահանան առանձին գրուածքի մը մէջ շանացած էր հաստատել թէ Իտալիայի միութիւնն ու անկախութիւնը՝ միայն քահանայապետին ձեռքովը կրնայ գլուխ ելլել (1843): Եւ թէպէտ Մածծինեանք ասոր համամիտ չէին. բայց իրենց գործքը յաջողցրնելու համար՝ զքահանայապետն առժաման իբրեւ միջոց կ'ուզէին բանեցրնել, դիւրին բան սեպելով՝ ուզած տտեննին՝ զինքը մէջտեղաց վերցրնել:

171. Իտալիայի դքսութիւններն ու Սարդինիա: Ըստածներէն ինք իրմէ կը հասկըցուի որ Իտալիայի ամէն կողմերն ալ մեծ գրգռութեան մէջ գրտնուելու էին: Գոսկանայի Լէոբոլտ Բ. մեծ դուքսը՝ որն որ յառաջագոյն ազատականաց խել մը զիջումներ բրած էր, կէս մը շողքորթութիւններով ու գովութիւններով ու կէս մը սպառնալիքներով՝ Մածծինեաններէն

ստիպուեցաւ աւելի ազատական կարգադրութիւններ ընել, քաղաքացի զօրքեր դնել, ուսումնարանները՝ եկեղեցիէն անկախ ընել: Նոյն միջոցներուն Լուգզայի կարողութիւնները՝ Մածծինեաններէն հոգի մէջ ձգուելով, իր պզտիկ երկիրը Գոսկանայի թող տուաւ: Աս բանս, ինչպէս յայտնի է, Բարմայի դքսուհւոյն մեռնելէն ետքը պիտ'որ ըլլար, որ ատեն Լուգզայի մէջ աիրող Պոլսականացի մարման վրայ պիտի տիրէր, իսկ Լուգզայի Գոսկանայի պիտ'որ անցնէր (20): Գոսկանա անմիջապէս իրեն ձգուած երկրին աիրեց. բայց Մոսկովայի դուքսն ալ՝ Աւստրիական զօրքով՝ նոյն երկրին մէկ պզտիկ մասը բռնեց: Աս նիւթին վրայ փրթած կռիւր շուտով հանգարտեցաւ՝ Մարիամ Լուիզա դքսուհւոյն մեռնելով (1847, Գեկա. 18), սրով ամենայն ինչ ըստ դաշանց կարգի մտաւ: Միեւնոյն ժամանակ Սարգինիայի կարողութիւնը Սլաւոնացի թագաւորն ալ շարժելու սկսաւ: Աս վեհապետը՝ որն սր իր յառաջագոյն յեղափոխականաց հետ ունեցած կապակցութիւնը (51) ետքէն անոնց դէմ ստոյգութեամբ վարուելով, եւ Գաղղիացոց՝ Սլաւոնիա ըրած արշաւանքին մասնակից ըլլալով (55), վեհապետներուն մուրհակներու ջանացած էր, նոյն ատեն ինք զինքը ժամանակին հոգւոյն համաձայն ցուցնելով, Իտալացոց սերն ու համարումը ստանալու ետեւէ կ'իյնար: Մեծապէս փառասեր ըլլալով եւ իր զինուորական ճարտարութեան վրայ վստահելով, կը յուսար որ բովանդակ միացեալ Իտալիայի թագը կրնայ ձեռք բերել: Ուստի եւ զանազան ազատական նորոգութիւններ ընելէն ետեւ, Հռոմի տէրութեան ու Գոսկանայի հետ մաքսի դաշինք մը դրաւ (Նոյ.), եւ Հելլենիստիայի Արմատականներուն հետ հաղորդակցութեան մէջ մտաւ: — Աւելի գրգռեալ էր երկու Սիկիլիայի թագաւորութիւնը, որուն իրաւութիւնները ետքէն (207) կը տեսնենք:

172. Անգղիայի քաղաքականութիւնը: Բալմերսդըն ու Լորտ Մինգոյ: Սոյն է սոյս ամենայն

կ'ընէին Իտալացիք Մածծինեանց գրգռութեամբը եւ իրենց սեպհական զօրութեան վրայ վստահելով, բայց արտաքին գրգռիչներ եւ օգնութեան ակնկալութիւններ ալ չէին պակսեր: Ասոնց գլխաւորն էր Անգղիայի կառավարութիւնն ու առանձինն Բալմբրոզըն, որն որ պաշտօնեայ ըլլալուն պէս (1847, Յունիս), արմատական ուղղութիւն մը տուաւ արտաքին գործոց պաշտօնարանին, որն որ քեննինկին ժամանակէն՝ խիստ ազատական ընթացք մը կը բռնէր: Իր սեպհական յօժարութենէն զատ՝ ասոր առիթ տուաւ Լուգովիկոս Փիլիպպոսին ընթացքը: Աս թագաւորին ու Անգղիայի մէջ եղած բարեկամութիւնը, որն որ առաջնոյն՝ Հիւսիսային տէրութեանց միաելովը՝ վերջին ժամանակները խիստ նուազած էր, անոր որդւոյն՝ Մանրանսիէի դքսին՝ Սպանիայի թագուհւոյն քրոջը հետ կարգելովը (150) մեծ թշնամութեան փոխուած էր, որուն համար ալ Լուգովիկոս Փիլիպպոս գրեթէ բոլորովին Հիւսիսային տէրութեանց հետ կապուեցաւ: Նոյն թշնամութիւնն աւելի անով սաստկացաւ, որ նոյն միջոցին Ապտէլ-Գատէր (151) բոլորովին յաղթուելով ու Գաղղիացոց ձեռքն իյնալով (1847, Նոյ. 23), ասոնք Ալճէրիի մէջ կատարեալ հաստատուած էին: Արդ Բալմբրոզըն անմիջապէս հաղորդակցութեան մէջ մտաւ Գաղղիայի դիմագրականաց եւ Իտալիայի ու Հելուեաիայի ազատականաց ու արմատականաց հետ, որպէս զի անոնց ձեռքով չէ թէ միայն Գաղղիա՝ հապա ցամաք երկրին ուրիշ մեծ տէրութիւնները տկարացընէ: Աս նպատակաւ՝ պաշտօնի անցնելէն քիչ մը ետքը՝ զԼորա Մինգոյ Իտալիա խաւրեց, որպէս զի Անգղիայի պաշտպանութեամբ Մածծինեանց դիտաւորութիւններուն յաջողելուն օգնէ: Լորա Մինգոյ զանազան պատճառներով Իտալիայի բոլոր արքունիքները պտղացեալ, որով եւ մեծապէս օգնեց հոնտեղաց շփութութիւններուն մեծնալուն. այնպէս որ կրնայ ըսուիլ թէ առանց իրեն՝ Մածծինի դժուարաւ կրնար ան աստիճանի յաջողու-

Թիւն գանել. եւ Թէպէտ այս ամենայն՝ դադարնու-
 Թեան վերարկուին տակ կը գործէր Բալմբագըն. բայց
 եւ Իտալիայի շարժումներուն վրայ ունեցած հաճու-
 Թիւնը չէր ծածկեր: Խորհրդանոցին մէջ Իտալացոց
 ըրածներուն վրայ գովեստիւ կը խօսէր, հոն եղած փո-
 փոխութիւններուն վրայ իր համակրութիւնը կը ցու-
 ցընէր, եւ գրեթէ յայտնապէս Անգղիայի պաշտպա-
 նութիւնը կը խոստանար (1848, Փետր.):

173. Աւստրիացիք ու Ղոմպարտեան-Վենե-
 տիկ: Եթէ ամէն պահպանողական աէրութիւնը Իտա-
 լիայի առ շարժմանց եւ Անգղիական կառավարութեան
 բռնած ընթացքին համար հոգի մէջ մտան, ամենէն
 աւելի պէտք էր որ խռովէր Աւստրիա: Մածծիներանը
 աղէկ գիտնալով որ իրենց դիտաւորութիւններուն
 դուրս ելլելուն ամենէն մեծ արգելքն Աւստրիացոց
 կողմանէ պիտ'որ ըլլայ, անոնց դէմ արտաքոյ կարգի
 տտելութիւն կը ցուցնէին. ուստի եւ կեցցէ Պիսա Թ.
 ազազակէն՝ գրեթէ անբաժին էր Մա՛հ Գերմանացոց
 ազազակը: Նոյն տտելութիւնն աւելի սաստկացաւ՝ երբ
 որ Աւստրիա իրօք զսպողական միջոցներու ձեռք զար-
 կաւ: Իր բանեցուցած միջոցներուն առաջինն եղաւ՝
 ըստ դաշանց (20) Ֆերրարայի բերդին մէջ ունեցած
 պահակապան զօրքը՝ շատցընելէն զատ, բուն իսկ քա-
 ղաքն ալ իր զօրքերովը բռնել, որուն գէմ՝ Մածծի-
 նեանք խիստ բարկացան, իսկ քահանայապետական
 կառավարը իր վեհապետին անուամբը բողոք ըրաւ:
 Նոյն իսկ Ղոմպարտեան-Վենետական գաւառներն ալ
 Իտալիայի ուրիշ կողմերը տիրող գրգռութիւններէն
 ազատ չէին: Թէպէտ ամէն առիթներու մէջ Աւստրիա-
 կան կառավարութիւնը նոյն գաւառները մեծ սիրով
 կը հոգար ու կը խնամէր, եւ կրնայ առանց չափազան-
 ցութեան ըսուիլ թէ հոնտեղաց բնակիչները՝ Իտա-
 լիայի ուրիշ ամէն կողմանց բնակիչներէն աւելի բարօ-
 րութիւն ու հանգստութիւն կը վայելէին. բայց ան-
 կախութեան բաղձանքն ու Մածծիներանց ազդեցու-

Թիւնը հոն ալ սգիները մեծապէս գրգռած էին: Լոմ-
 պարտացիք ու Աննետացիք ամէն առիթներու մէջ
 Աւստրիացի գէմ ունեցած ատելութիւննին կը ցուցը-
 նէին: Կառավարութեան մուտքը նուազորեն լու մտօր՝
 որոշեցին որ ամենեւին ծախ չքաշեն եւ զինուորաց
 ալ թող շտան ծխելու: Աս չծխելու որոշումը՝ Խառ-
 լիպի համար ան պիտ'որ բլլար՝ ինչ որ թէյ չխմելը՝
 Հիւսիսային Ամերիկացի համար եղած էր (Հատ. Բ.
 246): Սահմանուած ատենին (1848, Յունու.) որո-
 շումը սաստիկ ճշգումթեամբ գործադրուեցաւ, որով
 շատ տեղ ժողովրդեան ու զինուորաց մէջ զանազան
 կռիւներ եղան եւ արիւն ալ թափեցաւ: Ի վերայ այս
 ամենայնի կառավարութիւնն ընդհանրապէս մեղմ կեր-
 պով կը վարուէր. զինուորաց սաստիկ արգելուած էր
 զէնքերնին գործածել: Ասով ժողովրդեան յանդգնու-
 թիւնը խիստ սաստկացաւ, անանկ որ փողոցներու մէջ
 նոյն խկ տղաք զինուորները կը թշնամանէին: Աւստի
 եւ կառավարութիւնը՝ պարապ տեղ սւրիշ միջոցներ
 բանեցրենէն ետեւ՝ վերջապէս պատերազմի վիճակի
 մէջ հրատարակեց Լոմպարտիա գաւառը (1848, Փետր.
 23): — Այսպէսով բոլոր Իտալական թերակողքին մէկ
 ծայրէն մինչեւ մէկալ ծայրը արապոյ կարգի խմոր-
 ման ու գրգռութեան մէջ կը գտնուէր, որն որ ի հար-
 կէ սաստիկ յեղափոխութեան մը պիտի փոխուէր:

174. Պրուշի մէջ խառն ամուսնութեանց վէճը:
 Գերմանական - կաթողիկէականը: Վերմանիայի մէջ
 ալ նոյն միջոցներուն մեծ խմորում կար: Յուլիսի յե-
 ղափոխութենէն պատճառած աղմուկները հանգար-
 տեղէն ետքը, կրօնական գրգռութիւնները խիստ սաստ-
 կացած էին: Ա երբ ազգայնութեանց նկատմամբ ըսած-
 նիս (163) զրուցելու է նաեւ կրօնական նկատմամբ, որով-
 հետեւ շատ տեղ կրօնի զանազանութեան միտ չընե-
 լով, այլեւայլ կրօնի հետեւող ժողովուրդները միեւնոյն
 վեհապետի տակ դրուած էին: Պերմանիայի մէջ ասոր
 ամենէն աւելի աչքի զարնող օրինակն էր ուղղափառ

Ռեճական գաւառներուն՝ Պրուշի տրուիլը: Արդ նոյն ատենները մեծ վէճ մ'ելաւ կառավարութեան կամ Փրեզերիկոս Գուլիելմոս Գ. թագաւորին ու նոյն Ռեճական գաւառաց քանի մ'եպիսկոպոսներուն մէջ՝ խառն (ուղղափառաց ու բողոքողաց մէջ եղած) ամուսնութիւններու նկատմամբ: Թագաւորը յիշեալ գաւառներուն մէջ բողոքականութիւնը տարածել ուզելով, խել մը երիտասարդ բողոքական պաշտօնատէրներ կը խաւրէր, որպէս զի անոնք տեղացի ուղղափառ աղջիկներու հետ կարգուելով, բողոքականք շատնան: Գուլիելմոսի Կղեմէս Աւգոստոս արքեպիսկոպոսը՝ աս բանիս դէմ դառնալ ուզելուն համար՝ բերգ մը բանտարկուեցաւ (1837, Նոյ. 20). քիչ մը ետքը Բողէնի Տունին արքեպիսկոպոսն ալ միեւնոյն նիւթին համար բանտ դրուեցաւ (1839, Հոկտ. 6). որոնց պատճառաւ նոյն գաւառներուն ուղղափառ բնակչաց մէջ արտաքոյ կարգի գրգռութիւն ծագեցաւ: Աս կրօնական վէճերն անո՞վ աւելի ցաւալի էին, որ խել մ'ատենէ վեր դրեթէ բովանդակ Գերմանիայի մէջ քրիստոնէութեան հակառակ ու անասառածութեան հոգի մը տարածուած էր, որմէ յանդգնութիւն ստանալով՝ բազմաթիւ Հրեայք քրիստոնէական կրօնին դէմ անթիւ անհամար գրուածներ կը հանէին: Վերջապէս խառն ամուսնութեանց վէճը լմնցաւ Փրեզերիկոս Գուլիելմոս Գ. թագաւորին մեռնելովը (1840, Յունիս 7), որովհետեւ իր որդին ու յաջորդը Փրեզերիկոս Գուլիելմոս Գ. հօրմէն բաւրովին տարբեր ընթացք բռնելով, երկու արքեպիսկոպոսները բանտէն հանել տուաւ: — Ասանկով քանի մը տարի կրօնական ու քաղաքական հանդարտութիւնը հաստատուն մնալէն ետեւ, նոր կրօնական շփոթութիւն մ'ելաւ դարձեալ Պրուշի մէջ, որն որ շուտ մը Գերմանիայի շատ կողմերը տարածուեցաւ: Ասոր սկիզբըրին պաշտօններէն կտխուած Ռոնկէ եւ իրեն համամիա եղող Չերպի քահանայք, որոնք նոր աղանգ մը հիմնել ուզեցին՝ Գերմանական-կաթողիկէական անու-

նով (1844) : Թէպէտ կրօնական նկատմամբ նայելով, խիստ խախուտ ու ամենեւին ծանրակշռութիւն չունեցող բան մըն էր աս աղանդը, բայց որովհետեւ բնկերական ու քաղաքական դիտումներ ալ ուներ, անոր համար կառավարութեանց մտադրութիւնը շարժեց : Արդէն ամէն կողմ խորհրդանոցներուն մէջ անոնց ազատութիւն շնորհուիլը՝ վէճերու առիթ կ'ըլլար . եւ Պատրնի մէջ պատճառ եղաւ խորհրդանոցին լուծուելուն : Նոյն միջոցին ազատականաց տարածած տժգոհութիւնն աւելի աստեղացաւ հնձոց գէշութենէն պատճառաց սղութեամբ ու անկից ծագած նեղութեամբ, որով Պերլին, Ալուզկարդ, Միւնիք եւ ուրիշ տեղեր յեղափոխութիւնք ծագեցան, եւ անոնք զսպուելէն ու նեղութիւնն անցնելէն ետեւ ալ՝ ստորին աստիճանի մարդկանց տժգոհութիւնը բոլորովին չհանդարտեցաւ :

175. Գրագաւի յեղափոխութիւնն ու իր անկախութիւնը կորսընցընելը : Ալիքիայի շփոթութիւնները : Թէպէտ վերիվերոյ նայելով, Աւստրիական պետութիւնն աս գրգռութիւններէն ազատ կ'երեւար . եւ իրօք ալ իր այլեւայլ գաւառաց բնակիչները՝ կամ իրենց կրթութեան աստիճանին պատճառաւ եւ կամ իրենք զիրենք իրենց գործոց ու նիւթական գուարճութեանց տալով, քաղաքականութեան հոգ չէին ըներ . սակայն եւ այնպէս տեղ տեղ ալ բոլորովին հանդարտ չէին : Արդէն Իտալական գաւառներուն վիճակը տեսանք (173) . նաեւ Հունգարական գաւառներուն մէջ՝ ազգայնութեանց ու Մաճառներուն պահանջմանց պատճառաւ՝ մեծկակ խմորում կար, որմէ ազատ չէին Սլաւեան գաւառներէն ոմանք ալ՝ միեւնոյն ազգայնութեանց պատճառաւ : Բայց կառավարութեան աւելի հոգ կը պատճառէր Լեհաց մէջ տիրող հոգին : Աւստրիայի՝ ինչպէս նաեւ Պրուշի ու Ռուսիայի համար՝ վախի նիւթ էր Լեհաստան : Իսկ Լեհաց ակնկալութիւնը Գրագաւի վրայ էր, որն որ Լեհաստանի աւերակներուն մէջէն՝ իրրեւ լուսաւոր սիւն մը՝ Լեհ փա-

խրատականներուն վրայ գիւթական ազդեցութիւն կ'ընէր, առաջ եւ քանի մ'անգամ փորձ ըրին գաւակցութեամբ աս քաղաքը ձեռք անցրնել, եւ Լեհաստանի հին թագաւորութիւնը կանգնելու համար՝ յեղափոխութեան միջոցէտ մ'ընել: Աս նպատակաւ եղած առաջին փորձին հետեւութիւնն եղաւ՝ հիւսիսային տէրութեանց քիչ մ'ատեն նոյն քաղաքը զօրօք բռնելը (1836): Բայց երբոր ասոր տարի ետքը փորձը կրկնուեցաւ եւ յիշեալ քաղաքին մէջ յեղափոխական կառավարութիւն մը գրուեցաւ, երեք տերութիւնք միաբան յեղափոխութիւնը զսպելէն ետեւ, Գրագաւ քաղաքն իր սահմաններովն Ասորիացի միապետութեան հետ միացուցին (1846): Եւ թէպէտ Անգղիա ու Գաղղիա աս բանին դէմ բարձր ըրին՝ իբրեւ ղ ինչնայի ազդեցութեամբ յայն արշմանց բռնարարութիւն, ի վերայ այսր ամենայնի նոյն բողոքը հետեւութիւն չանեցաւ: — Միեւնոյն ժամանակ Կալիցիայի մէջ՝ նոյն գաւառն Ասորիայէն հանելու համար ազնուականաց ըրած փորձը սրարացի դնաց. որովհետեւ գեղացիք ազնուականներուն դէմ ընդհանրապէս մեծ ատելութիւն ունենալով, անոնց օրինակին հետեւելու տեղ՝ իրենց դէմ ելան, շատ շարիքներ ու անագորունութիւններ գործեցին:

176. Պաւիերայի Լուդովիկոս թագաւորն ու Լոյա Մոնդէզ: Աս քաղաքական գրգռութեանց ատեն՝ Պաւիերայի հանգարտ բնակիչներն ալ իրենց Լուդովիկոս թագաւորին անպատշաճ մէկ դարձքովը սկսան տակնուվրայ ըլլալ: Նոյն թագաւորը՝ որն որ իր տէրութեան պայծառութեան, եւ գլխաւորաբար ուսմանց, ճարտարութեանց ու գեղեցիկ արուեստից յառաջագիծութեան տարած խնամքովը, ամենուն համարումն ու սերը կը վայելէր (14), իր ծերութեան հասակին մէջ Լոյա Մոնդէզ անունով սպանիացի գաւառն կնոջմէ մը բմբռնուելով, իր ժողովրդեան տէրն ու համարումը՝ ատելութեան ու արհամարհութեան փոխեց: Լուդովիկոս աս անարժան կնոջ պատճառաւ արտաքոյ

կարգի զեղխութիւն ընելէն զատ, անոր կամօցը համեմատ չվարուող անձինքներն իրենց աստիճաններէն սկսաւ հեռացնել: Պաշտօնեպէք հանուեցան եւ Մանգէզին ուզած մարգիկներէն նոր պաշտօնարան մը դրուեցաւ (1847, Փետր. 13). նոյնպէս համալսարանին գրեթէ ուրիշներէն ոմանք նոյն պատճառաւ վար առնուեցան: Աս բաներուն վրայ Պաւլիերացիք արտաքոյ կարգի այլայլեցան, մանաւանդ երբ որ վերոյիշեալ գուտանը Լանտսֆելտի կոմսուհի անուանուելով, թագաւորին վրայ անեցած իշխանութիւնն ու հրապարակական իրողութեանց վրայ ըրած անգղեցութիւնն անսովոր կերպով յայտնապէս սկսաւ ցուցնել: Թագաւորին աս արտաքոյ կարգի տկարութիւնն ու կուրութիւնը՝ արքունական իշխանութեան յարգը կորսնցնել տուաւ. ան աստիճանի՝ որ թէպէտ ժողովրդեան յոյս տուաւ թէ շատոնց բաղձացուած նորոգութիւններն ու փոփոխութիւններն ի դործ կը դրուին, ի վերայ այսր ամենայնի եւ ոչ անգտակամը ուղեցին յանձն առնուլ, որպէս զի չըլլայ թէ ասանկ անպատշաճ իրողութեան մը համամիտ երեւնալով, իրենց դատը նուտոտացնեն եւ իրենց հակառակորդներուն առիթ տան զիրենք նախատելու: Ասանկով ժողովրդեան ամէն կարգերուն մէջ տխուր ու տժգոհ զգածում մը կը տիրէր, որն որ յայտնի յեղափոխութեան դարձաւ (1848, Փետր. 7), երբ որ թագաւորը՝ դարձեալ Մանգէզին գրգռելով կամ անոր պատճառաւ՝ համալսարանը քիչ մը ժամանակ գոցել տուաւ եւ հրամայեց որ ուսանողներն իրենց իւրաքանչիւր տեղերն երթան: Քաղաքացիք՝ ուսանողաց ու խաժամուժին հետ միացած՝ ոտտիկանութեան պահապաններուն ու զինուորներուն դէմ փողոցներուն մէջ պատերազմելէն ետեւ, թագաւորը ստիպեցաւ համալսարանը գոցելու հրամանն եւ առնուլ (Փետր. 11) եւ զՄանգէզ հեռացնել:

Բ.

Գաղղիայի յեղափոխութիւնը (1848, Փետրոսար. Յոռնիս) :

177. Լուդովիկոս Փիլիպպոս, իր կառավարութիւնը ու մեծամեծները : () րլէանի դքսին մեռած ժամանակը (135) Լուդովիկոս Փիլիպպոս՝ իր իշխանութեան հաստատուն մնալուն վրայ քիչ մը ատեն վախի մէջ ինկաւ ալ նէ, շուտ մը նորէն իր յառաջուան ապահովութեան մէջ հաստատուեցաւ : Թէեւ Հելուետիայի մէջ՝ Արմատականներուն եւ Իտալիայի մէջ՝ Մածժինեաններուն յաղթական բլլալը, եւ Անգղիային անոնց կողմը բռնելը, բաւական առիթ էր զինքը վախի մէջ ձգելու՝ որ Գաղղիայի մէջ անոնց կարծեկիցներն ալ քաջալերութիւն կ'առնուն իրեն դէմ ելլելու . բայց աս ամենախոհեմ կարծուած թագաւորը հանդարտ կը կենար, եւ տեսնելով որ պատգամաւորաց սենեկին մեծագոյն մասն իր կառավարութեան կողմն է, ամենեւին բանի տեղ չէր դնէր յեղափոխութեան ալիքներուն չորս կողմանէ դէպ իր գահը մօտենալը : Ասկայն ինք ասանկ ապահով կեցած ժամանակ՝ մրիկն երթալով կը մեծնար, չէ թէ միայն անոր համար որ յեղափոխականք կը պատրաստուէին իր գահը կործանելու, հապա անոր համար ալ որ իր համարումը միշտ աւելի կը նուազէր : Անվայել շահասիրութեան ու կաշառառութեան բիծը՝ որն որ իր ցեղին ու կառավարութեան վրայ իրաւամբ դրուած էր (133), վերջին ժամանակները հաստատութիւն գտած էր Քիւպիէր զօրապետին ու Գեսգ պաշտօնէին դէմ եղած կաշառառութեան դատաստանին մէջ : Սեպտադիանի սպարապետին աղջկան՝ Բրալէնի դքսուհւոյն՝ իր էրկանէն սպանուիլը, արտաքոյ կարգի մեծ ազդեցութիւն բրած էր ժողովրդեան վրայ, արքունի գահին չորս կողմն եղող մեծամեծներուն բարուց չարաչար ապականութիւնը յայ-

տնի ցուցնելով: Այս ամենայն եւ ուրիշ ասոնց նման գէպքեր վրայէ վրայ գալով, ամենուն միտքը խորունկ թափանցեց ան կարծիքը թէ այսպիսի խարխուլ ու փտտած յենարաններու վրայ յեցած գահ մը չիկրնար հաստատուն մնալ:

178. Պատգամաւորաց սենեկին նորոգութեան խնջոյքները: Վառավարութեան դէմ բլլեղներն ընդհանրապէս պատգամաւորաց ընտրութեան օրէնքը կամ կարգադրութիւնը փոխել կ'ուզէին. ոմանք՝ վերոյիշեալ չարիքներուն դարման տանելու համար, իսկ աւելի շատերը՝ իրենց իւրաքանչիւր գիտաւորութիւնը յառաջ տանելու մտք: Օրինաւորականք, սահմանադրականք, հասարակապետականք առհասարակ ընտրութեանց նորոգութիւն կը պահանջէին, յուսալով որ առով իրենց կողմնակցութիւնը վրայ կ'ելլէ: Նոյն պատակաւ գաւառներուն մէջ շատ տեղեր խնջոյքներ կ'ըլլային, որոնց մէջ կառավարութեան դէմ սաստիկ ճառեր կը խօսուէին, անոր իյնալուն ու ընտրութեանց կարգադրութեան փոխուելուն համար գինիներ կը խմուէին: Ասոնցմով աւելի գրգռեցան ժողովրդեան կիրքերը, որոնք արդէն Հելուետիայի ու Իտալիայի գէպքերովը շատ բորբոքած էին, որովհետեւ նոյններուն նկատմամբ Գաղղիացոց մեծ մասին յօժարութիւնը՝ կառավարութեան բանեցուցած քաղաքականութեան հակառակ էր: Աս պարագայից մէջ սենեակները բացուեցան (1847, Դեկտ. 27), որ ատեն թէ թագաւորին գահախօսութեան մէջ եւ թէ գիմնդրական պատգամաւորաց խօսքերուն մէջ՝ երկու կողման ոգիները բացայայտ տեսնուեցան: Լուդովիկոս Փիլիպպոս ըսաւ թէ Գաղղիայի մէջ շարժում մը կայ, որն որ թշնամական ու կոյր կիրքերով աւելի կը սաստկանայ: Օտիլոն Պարոյ կիզոյին (պաշտօնէից գահերիցուն) ըսաւ թէ Բոլինեսագ (88) ձեզմէ աւելի սահմանադրական էր. իսկ Տիւվերժիէ տը Հորան զրուցեց որ Մենք հաստեղս պատգամաւորաց մեծ մասին առջեւ պաշտօնէից

գէմ չենք խօսիր, հասցա Քաղզկայի առջեւը՝ պատգամաւորաց մեծ մասին ու պաշտօնէից դէմ: Արտիկը թէ բացարձակ համըրցուց որ կ'աշխատին յեղափոխութեամբ մը կառավարութիւնն ու անոր կողմն բերող պատգամաւորները վար ձգել: Աս նպատակին հասնելու համար դիմագրականք ուղեցին նոյն իսկ մայրաքաղաքին մէջ նորագութեան խնջոյք կատարել: Իսկողան կառավարութիւնն ասոր դէմ չգարձաւ, միայն կ'ուզէր ետքէն դատաստանի առջեւ նոյնին շարժառիթ ըլլողներուն դէմ ամբաստանութիւն ընել. բայց երբ որ տնձնք բոլոր ազգային պահակազաններն ալ հաւաքեցին, կառավարութիւնը խնջոյքն արգելեց, եւ զինուորական պատրաստութիւններ անասաւ, որ ի հարկին՝ զօրաց ձեռքով խափանէ (1848, փետր. 21): Աս որ տեսան գիմագրականք՝ խնջոյք ընելէն ետ կեցան, միայն թէ պատգամաւորաց սկսեցին մէջ պաշտօնէից դէմ ամբաստանութեան թուղթ մը ներկայացուցին՝ որ սահմանագրութեան դէմ բռնաբարութիւն կ'ընեն:

179. Փետրուարի յեղափոխութիւնը: 'Նոյն միջոցներուն խնջոյք ընել ուզողներն ու գաղանի ընկերութեանց մասնաժողովները գումարուած կը կենային ու մեծ գրգռութեան մէջ կը գտնուէին: Ըստ մասին ասոնց գրգռելով՝ գործափարներու, ուսանողներու եւ խաժամուծի բազմութիւ գնդեր փորոցներն ու հրապարակները կը պտրտէին, աղաղակներով՝ նորոգութիւն կամ պատգամաւորաց ընտրութեան կերպին փոփոխութիւն ու Երկրային կյանքը պահանջելով: Բազմութիւնը գնաց պատգամաւորաց տնտեսիք պաշտօնէից, եւ կը պահանջէր որ պաշտօնէիցը ամբաստանութեան վեճակի մէջ գրուին: Իրենց թիւը ժամէ ժամ կը շատնար. զինուորները հետերնին խնայելով կը վարուէին. ազգային պահակապանք անոնց յօժարութիւն կը ջուլջուլէին, իրենք ալ անոնց պէս՝ նորագութիւն ու Երկրային կյանքը կը խնդրէին. ուստիկանութեան զինուոր-

ներք թիշուոր բլլայով՝ բան չէին կրնար բնել: Ըփոթութիւններուն երկրորդ օրը (1848, Փետր. 23) թագաւորը անսնելով որ բանը կը սաստկանայ, քարակցաները երթալով կը շաանան, զինեալ բազմութիւնը միշտ անելի կը մեծնայ, ուզեց փորձ բնել պաշտօնէից փոփոխութեամբ ազնուից հանգարտեցընելու. ուստի եւ զվիզոյ ու իր բնկերները հանելով, Մալէին յանձնեց որ նոր պաշտօնարան կազմէ: Աս բարը շուամբ տարածուելով, ժողովարեան մէկ մնաին վրայ արտապրոյ կարգի ուրախութիւն արտաճուեց, որն ար ջընժութեան երգեր երգելով՝ սկսաւ նախասներուն մէջ պարտիլ, քարակոյտները քակել ու տները լուսաւորել: Բայց հասարակապետականը թագաւորին զիջումն եւ անոր աս ունեցած հետեւանքէն՝ անելի եւս գրգռուեցան: Յեղափոխութիւնը մինչեւ նոյն ատեն իրենց ուղածին պէս յաջողած բլլայով, կը բաղձային որ կրիւք սաստկանայ, շատիկ արիւն թափուի, որպէս զի իրենք կամբօրնին գլուխ տանին: Ըստ չնայ՝ բաղձանքնին կատարուեցաւ. զինեալ զօւնդ մը՝ Ղալբանտին առաջնորդութեամբ՝ առջեւէն ալ կարմիր դրօշ մը, դիշեր ատեն երգելով ու պաւարով՝ արտաքին գործոց պաշտօնարանին առջեւը զնաց եւ պահանջեց որ շէքը լուսաւորուի: Նոյն վարկենին հրօգէնք մը (ինչպէս հասարակորէն կը կարծուի՝ յիշեալ Ղալբանտին ձեռքովը) պարպուելով, շէքին առջեւը կեցող զօրաց հրամանատարին ձին վիրաւորեց, զորն որ զօրքերը իրենց դէմ յարձակման նշան սեպելով, բազմութեան վրայ կրակ բքին: Աս եզաւ բան յեղափոխութեան փրթելուն շարժառիթը, ժողովարգր կատարելով, մեռածներուն մարմիններն առած՝ Ղահեթով շորս կողմը կը պարաջընէր ու կը պոսար թէ Քէնք առեք, զմեզ կը մեռցընեն: Այն դիշերին մայր եկեղեցւոյն զանգակները սկսան զարնուիլ, եւ երկրորդ ատու (Փետր. 24) բոլոր մայրաքաղաքը քարակցաներով փակուած ու զինեալ բազմութեամբ լեցուած էր:

Պարսպ տեղ թագաւորը ձախակողմեանց պիմելով, զթիէր, զՕտիլըն Պարոյ եւ անոնց ընկերներէն քանի մը հոգի պաշտօնեայ անուանեց: Բանը բանէն անցած էր: Նոր պաշտօնէից՝ ժողովուրդը հանդարտեցընելու համար բրած ջանքն անօգուտ եղաւ, թագաւորին անուամբն բրած խոստումներուն հաւատք չընծայուեցաւ: Ազգային պահակապանք ժողովըրեան դէմ եղած կրուուցն չէին ուզեր մասնակից ըլլալ, մասնաւանդ թէ հետզհետէ յեղափոխականաց կողմը կ'անցնէին. նոյնպէս զինուորք ըստ մասին կը յաղթուէին, ըստ մասին անգործ կը կենային, ըստ մասին ալ յեղափոխականներուն հետ կը միանային:

180. Լուգովիկոս Փիլիպպոս գահէն կը հրաժարի: Օրլէանի դքսուհին պատգամաւորաց սենեկին մէջ: Անգլոփոխութեան առաջին վայրկենէն ռամկապետականաց նպատակն էր՝ զԼուգովիկոս Փիլիպպոս գահէն վար առնելով եւ իր ցեղը մերժելով, հասարակապետութիւն հաստատել: Առջի բերան աս իրենց բաղձանքը գաղտնի կը պահէին, որ չըլլայ թէ միապետական գիմադրականք իրենցմէ բաժնուին. բայց երբ որ յեղափոխութիւնը բաւական տարածեցաւ ու զօրացաւ, ալ կամաց կամաց սկսան երեւան հանել: Ասոր առաջին քայլն ընողն եղաւ Ժիրարտէն, որն որ Գիւիլրիի պալատին մէջ մեծ շիփթութիւն ու անորոշութիւն տիրած ատեն՝ թագաւորին առջեւն ելաւ, երեսն ի վեր պոռաց թէ Տէր, պէտք է որ հրաժարիք: Արդէն ալ ծոցը պատրաստուած յայտարարութիւն մը կար, որն որ թագաւորին հրաժարիլը, Օրլէանի դքսուհւոյն խնամապետ գրուիլը, սենեակներուն լուծուիլն ու ընդհանուր թողութիւն տրուիլը կը բովանդակէր: Արչափ որ աս խրատը կամ պահանջումը՝ Լուգովիկոս Փիլիպպոսին ականջին անհաճոյ ու խիստ ալ եկաւ նէ, ի վերայ այսր ամենայնի բոլորովին նոր չէր. արքունեաց մէջ ալ շատերուն եւ նոյն իսկ իր ընտանիքէն ոմանց խորհուրդն ասոր համաձայն էր, որոնք նոյն թագաւորին՝ իշխա-

նութեան մէջ հաստատուն մնալուն դժուարութիւնը տեսնելով, կ'ուզէին իր հրատարմամբը՝ իր ցեղը գահին վրայ պահել: Ուստի ասոնք ալ իրեն խրատ տուին որ յիշեալ յայտարարութեան ստորագրէ. որուն քիչ մը գէժ՝ դնելէն ետքը՝ հաւանեցաւ, եւ Լամորիսիէր զօրապետը նոյն թուղթը ժողովրդեան տարաւ: Բայց հասարակապետականք ասով միայն գոհ չէին ըլլար. անոր համար Լահրանտ՝ սատակ հասարակապետականաց գլուխն անցած՝ Լամորիսիէրին դիմացն ելաւ, եւ թուղթը ձեռքէն քաշեց առաւ՝ պոռայով թէ թագաւորին հրատարիլը բաւական չէ, պէտք է որ բոլոր իր ցեղն ալ մէկդի ելլէ: Մինչեւ իր վրայ զէնք քաշուելով, հեծած ձին ինկաւ մեռաւ, իսկ ինք վիրաւորեցաւ: Նոյն միջոցին Օրլէանի դքսուհին իր երկու որդիքներովը՝ Նրմուրի դքսին հետ պատգամաւորաց սենեակը գնաց, որպէս զի հոն գումարուող 300ի շափ պատգամաւորներուն ձեռքովը՝ իր մեծ որդւոյն Փարիզի կոմսին թագաւոր ըլլալն ու իր խնամապետ գրուիլը հաստատել տայ: Պատգամաւորք զիրենք մեծարանօք ընդունեցան: Բայց տակաւին խօսելու սկիզբ չեղած՝ զինեալ բազմութիւնը սկսաւ ներս յարձակիլ, դուրսը դիզուած ժողովուրդն ալ արտաքոյ կարգի աղմուկ կը փրցընէր: Ուստի յիշեալ նկատմամբ եղած առաջարկութիւնը՝ չէ թէ միայն մեծ ընդդիմութեան պատահեցաւ, հապա մինչեւ առաջարկող եղաւ որ առժամանակեայ կառավարութիւն դրուի. մէկ կողմանէ ալ խաժամուժը՝ խնամապետութիւն չըլլայ կը պոռար: Աս շփոթութեան մէջ դքսուհին ու իրենները՝ պատգամաւորներէն ոմանց խորհրդովը՝ մէկ կողմը քաշուած էին. եւ երբ որ խել մը մարդիկ բաց սրերով զիրենք փնտռելով՝ դէպ ան կողմը կը դիմէին, հազիւ կրցան փախչիլ դուրս ելլել:

181. Հասարակապետութիւն: Առժամանակեայ կառավարութիւն: Լամարգին: Սենեկին մէջ արտաքոյ կարգի աղմուկ տիրած ատեն՝ Լամարգին բեմն ելած, կը սպասէր որ շփոթութիւնը հանգար-

աներով՝ կարենայ խօսիլ: Նոյն միջոցին թզթի մը վրայ
ան անձինքներուն անունները գրուեցան, որոնցմէ առ-
ժամանակեայ կառավարութիւնը պիտի կազմուէր. եւ
Լաֆայէդին մեռնելէն ետեւ՝ դիմագրականաց գլուխն
ըլլող Յիւրոն սը Լէօր աս անունները կարգաւորով, ներ-
կայ եզոզ պատգամաւորաց հաւանութիւնն ընդունե-
ցաւ: Ասոնք էին՝ ինք Յիւրոն, Լամարդին, Արտից, Մարի,
Կառնիէ-Բաժէս, Լքարիւ-Ռոլէն, Գրեմիէօ: Արտիցեան
Թոմասեան իմացուած էր թէ Լուի Պլան, Մարա,
Պասսիա եւ ուրիշ ասոնց նման քանի մը մարդիկ քա-
ղաքացին խորհրդարանին մէջ ընկերակարական հասարա-
կապեաութիւն մը հիմնելու կ'աշխատին, անոր համար
նոր կառավարութեան անդամները՝ Լամարդիինն առա-
ջարկութեամբ՝ հոն գացին, որպէս զի նոյնին գործա-
գրութիւնը խափանեն: Աս բանս դիւրաւ յաջողցնելու
եւ իրարու հակառակ երկու կառավարութիւններէն
ժապիլ կրցող ներքին պատերազմն արգելելու համար,
վերջիչեալ անձինքներն ալ իրենց մէջ առին: Բանը
կը մնար որոշել թէ նորահաստատ կառավարութիւնն
ինչ կերպարանք պիտ'որ առնու: Արդէն առժամանա-
կեայ կառավարութիւն գնելը՝ հասարակապետութիւն
հիմնել ըսել էր. միայն թէ չէր սահմանուած որ ար-
գեզք աս հասարակապետութիւնը բոլորովին ռամկա-
պետական պիտ'որ ըլլայ: Շատերն ասիկայ կ'ուզէին եւ
զենեալ բազմութիւնն ամէն կերպով նոյնին ետեւէն
կ'իյնար. անտաացուած իրաժամուժը սատակ ջանք կ'ը-
նէր անտակ կառավարութեան մը հիմ գնելու, որով
առաջին հասարակապետութեան զարհուրանաց գոր-
ծողութիւնները կարենան նորոգուիլ. կարծիր գրօշը
տեղ տեղ երեւան ելաւ: Բայց Լամարդին իր ջանքովը
նոյն կարծիր գրօշը հեռացնելէն զտա, կրցաւ խօսքը
քաղեցնել ու միայն հասարակապետութիւն հրատա-
րակել, ան ալ ժողովրդեան հաստատութեան կամ
հաւանութեան տակ ձգելով: Աս հաւանութիւնը պի-
տի տար ժողովուրդը՝ իր նորէն ընարելու երեսփոխան-

ներուն ձեռքովը, որոնք ազգային ժողովք գումարելով՝ նոր սահմանադրութիւն պիտի շինէին: Չափաւորականաց առ յազմութեան շատ օգնեցին Փարիզի ընչաւեա քաղաքացիք, որոնք բնկերփորական շարժումներէն վախնալով, մէկտեղ միացան ու կառավարութեան կողմը զորացուցին:

182. Լուղովիկոս Փիլիպպոսին փախչիւն աւնոր կառավարութեան հաստատութիւն պտնելը: Ասանկով մէկ երկու օր բուական եղաւ ամենազօրաւոր կարծուած միտղեաութիւնը քակելու: Լուղովիկոս Փիլիպպոսին՝ յեղափոխութեամբ կանգնուած գահը, դարձեալ յեղափոխութեամբ կործանեցաւ. եւ ինք ստիպեցաւ՝ Աստուս Ժ.ին պէս՝ Անգղիա փախչել, ուր իր ընտանեաց մեծ մասն ալ հետոցհետէ գնաց հետը միացաւ: Նոյն մեծ փոփոխութիւնը կատարուած ատեն՝ պատահած շփոթութիւններն ալ այնչափ մեծ չեղան, որչափ որ կրնար վախցուիլ: Ստոյգ է՝ խաժամուժը Դիւիլլիի պալատն առաւ, կարասին ու զարդերն այրեց, թագաւորական գահը Պաստիլլիի հրապարակին մէջ կտոր կտոր ըրաւ. պալատին շքեղ սրահներուն ու սենեակներուն մէջ իբր բնակութիւնը քանի մ'օր հաստատեց. բոցց ուրիշ կերպ աւարաւութիւններ եւ կենաց ու տոտցուածաց դէմ բռնութիւններ չգործեց. ուսանողք արուեստից ու գիտութեանց գանձերը պահպանեցին եւ վնաս հասցընել չտուին: Արնայ ըսուիլ թէ առ արարագան ալ շատ օգնեց բովանդակ Գաղղիային նոր կառավարութիւնն ընդունելուն: Օրինաւորականք, եկեղեցականք, գուլաներու պաշտօնատեարք, բանակը՝ եղածներուն գլուխ ծռեցին: Օրլէանի ցեղը սրտանց կողմնակից չունէր. իր իշխանութիւնը յափշտակութեամբ հիմնարկուած ու անձնասիրութեամբ տեւած էր. անոր համար ալ կործանումը խիստ քիչերուն գութը շարժեց: Նաեւ օտար տէրութիւնը եղածներուն հաւանութիւն տուին: Լաճարդին՝ որն որ արտաքին գործոց պաշտօնեայ եղած էր, անմիջապէս բոլոր տե-

րութիւններուն հետ հաղորդակցութեան մէջ մասաւ եւ ամենուն խաղաղական ապահովութիւններ տուաւ, որոնք յայտարարութեամբ մ'ալ հրատարակուեցան: Անգղիա՝ Լուզովիկոս Փիլիպպոսին հետ աւրուած ըլլալով, առ անգամ ալ ուրիշ բոլոր տէրութիւններէն յառաջ՝ նոր կառավարութիւնն ընդունեցաւ: Իսկ ուրիշ տէրութիւնք՝ իրենց երկրին մէջ բաւական զբաղելու նիւթ ունենալով, անով գոհ եղան որ Գաղղիա հանդարտ կը կենայ ու Գերմանիայի եւ Իտալիայի իրողութիւններուն շխառնուիր, ուր յեղափոխութիւնք բորբոքած էր:

183. Գործավարք: Հասարակավարական սկըզբունքներուն գործադրուիլը: Հասարակապետութեան այսպէս դիւրաւ հաստատուելուն վրայ Գաղղիացոց մէկ մասին ունեցած խնդութիւնք, առաջին հասարակապետութեան՝ Ազատոյթիւն, Հաւասարոյթիւն, Եղբայրակցոյթիւն նշանաբանին՝ նորէն երեւան ելլելուն պատճառած ուրախութիւնք, խիստ կարճատեւ եղան. եւ շուտ մը կառավարութեան գլուխներն իրենց սեպհական փորձովը համոզուեցան թէ ինչ մեծամեծ դժուարութիւններ կը պատճառէ ան սկզբունքներուն գործադրութիւնք, զորոնք իրենք ի տեսականն իբրեւ երջանկացուցիչ բաներ համարած ու քարոզած էին: Փետրուարի յեղափոխութիւնք գլխաւորաբար բանուորներու եւ ստորին աստիճանի մարդիկներու գործքն եղած ըլլալով, պէտք էր որ նոր կառավարութիւնն անոնց վիճակն աղէկցընելու եւ զանոնք երջանկացընելու աշխատէր: Անոր համար առժամանակեայ կառավարութիւնք, որն որ մինչեւ ազգային ժողովոյ մը գումարուին ու սահմանադրութիւն շինելը՝ տէրութեան գործքերը պիտի հսգար, իրեն անդամակից ըրած էր Ալպէր անունով բանուոր մը: — Ասոր ու Լուի Պլանին իշխանութիւն տրուեցաւ՝ որ բանուորներուն վիճակը կարգաւորեն, եւ ընկերութեան աղքատ դասերն երջանկացընելու հարկաւոր միջոցներն ի գործ դնեն: Նոյն

նպատակին հասնելու համար՝ ասոնք շուտ մը ազգային մեծ գործատուներ բացին, որոնց մէջ ամէն բանուոր գործք պիտի գտնէր ու վարձք ընդունէր: Արովհետեւ առ ազգային գործարաններուն մէջ՝ մանաւանդ նոյն շփոթութեան ասեմները՝ չէր կրնար աղէկ հակողութիւն ըլլալ, եւ ամէն աշխատութիւն պէտք էր որ ոռոզ վճարուէր, անոր համար խել մը բանուորք, չէ թէ միայն մայրաքաղաքէն՝ հապա նաեւ գաւառներէն, իրենց գտնուած գործատուները թող տալով, գունդագունդ նոր ազգային գործատուները գիմեցին: Անանկ որ անոնց մէջ աշխատողներուն թիւը, որն որ առաջին շաբաթները 20,000ի չափ էր, շուտ մը եռապատիկ ու քառապատիկ եղաւ: Ասանկով չէ թէ միայն առանձնական գործատուները սկսան հետզհետէ դատարկանալ, հապա տէրութեան ալ միլիոններով ծախքի դռն բացուեցաւ, որ ծախքն որ անհնարին մեծցաւ՝ գործք չունեցող բանուորներուն տէրութենէն օրրերկ երկու ֆրանդ օգնութիւն ընդունելովը, որով միանգամայն անգործներուն ուստի եւ շփոթութիւն հանողներուն թիւն օրրատօրէ կը մեծնար:

1844. Ազգային ժողով ու գործագիր մասնաժողով: Մայիսի 15ին ընկերվարական աղմուկը: 'Նոյն միջոցներուն ազգային ժողովոյն համար բովանդակ Գաղղիայի մէջ եղած ընտրութիւնները լմննալով, ժողովքը բացուեցաւ (1848, Մայ. 4): Երբունին Տիւրոն տը Լ'էօր առժամանակեայ կառավարութեան անուամբը՝ վերին իշխանութիւնը յանձնեց նոյն ժողովոյն ձեռքը, որն որ անմիջապէս միաբերան հասարակապետութիւն հրատարակեց: — Արովհետեւ բոլոր չափաւորականք խիստ կը վախենային որ առաջին հասարակապետութեան անագորոյն ու արիւնալից գործողութիւնները չկրկնուին, անոր համար իրենց ջանքովը ընտրութեանց մեծ մասը չափաւորեալ կարծեաց տէր մարդիկներու վրայ ինկած էր, որոնք կարգաւորութեան ու հանդարտութեան կը բաղձային: Այսպէսով ժողովոյն

գլխավոր ջանքն եղաւ մէջաեղաց վերցընել վերը մի-
շուած բնկերվարական կարգադրութիւնները, որոնք՝
ուրիշ վտանգաւոր հետեւութիւններէն զառ՝ քաղա-
քական հանդարտութիւնն անկարելի կ'ընէին. ինչու
որ ազգային գործատուններուն բանուորները՝ բոլոր շի-
նուած էին, եւ զանազան գնդերու բաժնուած՝ յեղա-
փոխութեան բանակ մը կը կացուցանէին, որուն գլուխ-
ներն ուղածնուն պէս կրնային գործածել՝ իշխանու-
թեան դէմ: Աս նպատակաւ՝ երբ որ առժամանակեայ
գործադիր մասնաժողով մը կը գրուէր, որ մինչեւ ասհ-
մանագրութեան շինուիլ լմննալը՝ կառավարութեան
գործքերուն առաջնորդէ, նոյնին անդամ ըլտած էին
զլամարդին, զԱրսկց, զԿառնիէ-Բաժէս, զՄարի եւ
զԼճարիւ Ռոլէն, որով եւ դուքս մնացին Լօւի Պլան ու
Ալպէր, որոնք առաջին առժամանակեայ կառավարու-
թեան մէջ բնկերվարական կողմնակցութիւնը կը ներ-
կայացընէին: Բայց առ երկուքը, որոնք կառավարու-
թեան անգամ եղած ստոննին՝ աղմուկներու թշնամի
դարձած էին, նորէն խռովարարներուն գլուխն անցան,
որոնք մինչեւ նոյն ժամանակ կ'առաջնորդէին Գապէ,
Ռասսփայլ ու Պլանգի: Ընկերվարականք սա կերպով
զօրանալով, ազէկ մը պատրաստեցան՝ գլխավոր իշխա-
նութիւնը ձեռք անցընելու, եւ գործքի ձեռք զարնե-
լու համար առիթ մը կը փնտռէին, որն որ շուտ մը
գտան: Ազգային ժողովոյն մէջ առաջարկութիւն կ'ըլ-
լար Լեհաց անկախութեան օգնելու: Արդ խռովարացք
նոյն առաջարկութիւնը պաշտպատնելու պատրասակաւ՝
100,000ի չափ զինեալ գործավարները ոտք հանե-
լով, եկան ազգային ժողովոյն ժողովատեղը պաշարե-
ցին, դռները կտորեցին, ներս մտան, եւ իրենց մէջէն
Հիւպէր անունով մէկը բեմէն հրատարակեց որ նոյն ա-
տենուան կառավարութիւնը լուծուած է եւ նոր առ-
ժամանակեայ կառավարութիւն պիտի հաստատուի:
Իրզբ ալ քիչ մը ետքը իմացուեցաւ որ քաղաքային
խորհրդարանին մէջ Պարպէսի գլխավորութեամբը՝ բն-

կերպարական կառավարութիւն մը դրուեր է: Բայց խռովարարաց առ յազմանակը խիստ կործանեց: Շուտ մը ազգային պահակապաշտք վրայ հասնելով, խաժամուծը ազգային ժողովոյն ժողովատեղէն ետ քաշուեցաւ. որով եւ նոյն ժողովը՝ որն որ շփոթութեան մէջ ինկած էր, սկսաւ հանդարտութեամբ իր գործքը յառաջ աանել. եւ Լամարգին Լըտրիւ Ռազէնին հետ՝ զօրքերով քաղաքային խորհրդարանն երթալով, զՊարպէս իր բնկերներովը բռնել բանտարկել տուաւ: Աս կերպով միեւնոյն օրը սկսաւ ու վերջացաւ առ ընկերվարական աղմուկը (Յայ. 15). որուն ետեւէն եկաւ ընկերվարականաց զայելը:

185. Յունիսի յեղափոխութիւնն ու ընկերվարականաց զսպուխը: Գաւենեագ: Ազգային ժողովն ու կառավարութիւնը՝ որոնք արդէն ըստ ինքեան կը բողձային ընկերվարականաց վրայ ստացած առ յազմութիւններն տեւական ընելու համար՝ ահոնց զօրութիւնը կտորել, առ բանին աւելի յորդորուեցան տեւանելով որ բոլոր Գաղղիա անանց դէմ է, եւ իրաւամբ կը տրանջն որ տերութեան ընդհանուր պիտոյից համար ժողովուած հարկերուն մեծ մասը՝ ազգային գործատաններուն մէջ կը վտանի: Ուստի անմիջապէս անանց դէմ զարդակիան միջոցներու ձեռք գարկին: Ազգային ժողովը վճիռ հանեց (Յունիս 22) որ ազգային գործատանց մէջէն 7000 հոգի գուրս հանուին, որոնք աւելորդ էին եւ ամենեւին բանի չէին գար, եւ ազգային պահակապաններուն մէջ շեղող գործաւորներուն ձեռքէն զէնքերն առնաին: Բայց գործավարներն իրենց ձեռք բերած առաւելութիւններն այնչափ դիւրաւ կորսընցընել յանձն առնող մարդիկ չէին, մանաւանդ թէ արդէն շատոնց ասանկ գիպուածի մը պատրաստուած էին: Ասանկով իրենց դէմ ելած հրամանին գործադրութիւնը խափանելու եւ բոլոր իշխանութիւնը նոյն առթով ձեռք անցընելու մտօք, մեծ յեղափոխութիւն մը հանեցին, որն որ չորս օր տեւեց եւ խիստ մեծ ա-

րիւնհեղուծիւն պատճառեց, որովհետեւ երկու կողմէն ալ վերջին աստիճանի սասակութեամբ ու յուսահատական կատաղութեամբ կը կռուէին: Գործավարները տեսնելով որ եթէ յաղթուելու ըլլան, Փետրուարի յեղափոխութեան բոլոր պատուը պիտի կորսնցնեն, մտքերնին դրած էին որ կամ մեռնին եւ կամ յաղթական ըլլան: Մէկտալ կողմանէ զինուորներն ու ազգային պահակապանները գուշակելով որ ընկերվարականաց յաղթութեան հետեւութիւնը պիտ'որ ըլլայ առաջին մեծ յեղափոխութեան ատեն պատահածներուն նման անագորունութիւններ, առիւծի պէս քաջութեամբ կը պատերազմէին: Աւերջապէս երկու կողմանէ 10—12,000 հոգւոյ շափ մարդ մեռնելէն ետեւ, որոնց մէջ եօթը զօրապետք կը գտնուէին, կառավարութեան կողմը յաղթող եղաւ: Նոյն յաղթութիւնը ձեռք բերելու շատ օգնեց Գաւենեագ զօրապետին քաջասրտութիւնն ու հաստատութիւնը, որուն իսկզբան յանձնած էր գործադիր մասնաժողովը՝ զօրաց հրամանատարութիւնը, եւ ետքը երբ որ բաները խիստ սաստկացան, ինք հրատարելով՝ նոյն զօրապետին ձեռքը հրամանապետական իշխանութիւն տուած էր: Աս շորեքօրեայ կռիւներուն գլխաւոր զոհերէն մէկն եղաւ Փարիզի Ա.Փր արքեպիսկոպոսը, որն որ գործավարները զէնքերնին ձգելու յորդորած ատեն՝ վիրաւորուելով, երկրորդ օրը մեռաւ: Գործավարք եւ ընկերվարականք իրենց գուշակածունն պէս՝ առ իրենց պարտութեամբ բոլորովին զսպուեցան եւ իրենցմէ ձեռք ինկողները հեռուար տեղեր պստրուեցան, որով եւ Գաղղիա խաղաղցաւ:

Գ.

Քոռն Ախտրիսիական նա Հոռնգարսիական յեղափոխութիւնը (1848—1849):

186. Ախտրիայի վիճակն ու յեղափոխութեան պատրաստութիւն: Ըն աւերութեան մէջ Մեդգեռնիկ իշխանը՝ իբրեւ ամենամեծ քաղաքագէտ ու ամենաճարտար կառավարիչ կը սեպուէր, եւ իր խօզքն ու խորհուրդը Եւրոպայի շատ դասչիճններուն եւ առանձինն Գերմանական կառավարութեանց առջևը՝ իբրեւ պատգամ կը սեպուէր: Բայց որչափ խորագէտ ու խոհեմ ալ էր նէ, չէր կրցեր ժամանակին հողւոյն զօրութիւնը ճանչնալ. կարծէր որ շատոնցուքնէ վեր ի գործ գրուած ապահովութեան սովորական միջոցները բաւական կ'ըլլան շատ կողմեր ազատութեան հողմէն գրգռուած միւրիկները՝ Ախտրիայի մէջ խափանելու եւ կամ շուտով հանգարտեցընելու: Չէր իմացեր կամ բանի տեղ չէր դրեր որ արձակապետական կառավարութեանց ընդհանրապէս եւ առանձինն Ախտրիայի ու իր անձնական քաղաքականութեան թշնամիները՝ հազարաւոր օրինակներով գրուածներ տարածած եւ միապետութեան ամէն գին, որոնց մէջ կառավարութեան իրական պահապանութիւններն երեւան հանելէն զատ՝ խել մը զրպարատութիւններ ալ կ'ընէին, որով եւ ոգիները սաստիկ գրգռութեան մէջ կը գտնուին: Աս պարագայից մէջ Փետրուարի յեղափոխութեան լուրը՝ կայսրութեան ամէն կողմերը արտաքոյ կարգի ազդեցութիւն ըրաւ: Իտալական գաւառներն արդէն խլրտելու սկսած էին, զինուորական միջոցներով հազիւ արտաքուստ հանդարտ կը կենային, եւ նշանի մը կը սպասէին յեղափոխութեան դրօշը բանալու: Հունգարացիք՝ որոնք խել մը ժամանակէ վեր մեծ տագնափութիւն կը ցուցընէին եւ զանազան պահանջումներ կ'ընէին, անմիջապէս սկսան պատրաստուիլ նոյնները կատարել

ապու: Բոհեմիա ալ մեծ գրգռութեան մէջ էր: Աեր-
ջապէս նոյն իսկ մայրաքաղաքը սկսաւ խլրտիլ: Գաղա-
նութեան քողոյն տակ ծածկուած ելեւմտից վիճակը,
զորն որ իրզք եղածէն գէշ երեւցընելու փոյթ կը աա-
նէին շարամիտք, մեծ անվստահութիւն կը պատճա-
ռէր: Ապին անդին թղթադրամ առնուլ չէին ուզեր.
Փաճառականութեան ու գործատանց գործանէու-
թիւնը կը նուազէր. անգործ մնացող գործավարներուն
թիւն երթալով կ'աւելնար: Ի՛նչ աւելի յարմար առիթ
կրնար ըլլալ յեղափոխութիւն հանելու եւ յաջողու-
թեամբ գլուխ ասնելու:

187. Ա իէննայի յեղափոխութիւնն ու անխշ-
խանութեան մէջ կընայր: Օտարականք եւ Հրեայք:
Գոռութիւն ու Մածթինիին գործակալները: Իրզք ալ
ամէն տեղէն յառաջ սկսաւ Ա իէննայի յեղափոխու-
թիւնը, որուն սկիզբ ըրին հաճախարանին ուսանողնե-
րը՝ իրենց օւսուցիչներէն ամանց եւ ուրիշ քանի մ'ու-
սումնականներու եւ փաստաբաններու առաջնորդու-
թեամբ, նոյն ատեն ժողվուած կարգաժողովոյն ու
կայտեր՝ ազմկալից կերպով պահանջադիրներ մատու-
ցանելով, որոնց մէջ ազատական նորագութիւններ ու
սահմանադրական փոփոխութիւններ կը պահանջէին:
Ասոնց խօսքերէն ու օրինակէն մայրաքաղաքին բնակիչ-
ներն անանկ գրգռութեան մէջ ինկան, որ անոնք ալ
ուրք ելան: Այսպէսով Պերդինանդ կայսրը ստիպեցաւ
հետզհետէ իրենց ամէն պահանջումներուն հաւանու-
թիւն տալ: Մեղգեւնիկ իշխանը իր պաշտօնէն հրա-
ժարելով՝ ձգեց Անգղիա գնաց: Աւարաութիւնք,
կործանմունք եւ խաժամուժին գործած ուրիշ անվար-
գութիւնները ցուցուցին թէ հին կարգադրութիւնը
լուծուած է եւ անխշխանութեան վիճակ մը սկսած
(1848, Մարտ 11—13): Ազատական քաղաքական
կենաց ամենեւին յարմարութիւն չունեցող ժողովուրդ
մը՝ սոցալիստ ազատութիւններ եւ իրաւունքներ ընդու-
նած էր, որոնց եւ ոչ անունը լուծ էին յառաջագոյն

իրենցմէ շատերը, եւ որոնք շուտ մը շարաշար գործածուեցան: Մասկոց կամ ասպարութեան ազատութիւնը քիչ ժամանակուան մէջ սոնսպիսի դրդաբիշ լքողներ ու գրուածներ յառաջ բերաւ, որոնցմով բաւարարական, ընտանեկան ու կրօնական յարաբերութիւնները ասկնուվայց եղան: Ժողովք գումարեքա իրաւունքը աստիկ աղմկակոց ժողովակներ եւ ռամկապետական ընկերութիւններ կազմելու գործածուեցաւ, որոնք կատարութեան գործունէութիւնը կը խափանէին եւ անիշխանութիւնը տեւափան կ'ընէին: Ազգային պահակապաններու անունով՝ զէնք առնող ու սանտղները կրնայ ըսուիլ թէ մայրաքաղաքն ու զամբնուն պէս կը կառավարէին: Այս ամենայն շարիքները գործողները՝ ստոյգ է՝ ըստ մեծի մասին անգործ բանուորները, ստորգլուխ ուսանողներն ու գիւրահաւան եւ ազեա ժողովուրդն էին. բայց զիրենք գրգռող խել մը օտարական ռամկավարք կային, որոնք տերութեան ու Գերմանիայի ամէն կողմերէն եւ նոյն խկ գրսի երկիրներէն Վիեննա եկած եւ տեղացիներուն հետ աղջային պահակապաններուն մէջ մտած, յեղափոխական ու անիշխանական վեճակը հաստատուն կը բռնէին: Թէ ներքին ու թէ արտաքին գրգռիչներուն մէջ մասն ալ չգիտցաք էին, որոնք մինչեւ յեղափոխութեան վերջը մեծ գործունէութիւն բանեցուցին: Գրգռիչներուն զգեստներն էին Գոշութիւն (141) ու Մածծինիին (169) գործակալները, որոնց նպատակն էր Աւստրիայի կայսրութիւնն անիշխանութեան մէջ պահել, որպէս զէիրենք կարող ըլլան Հունգարիայի եւ Իտալիայի մէջ ազամբն գիւրաւ գլուխ հանել:

188. Մաժառանգ պահած շումներուն կատարելիլը: Հունգարացիք թէպէտ գժուարին պարագաներու մէջ մեծ հաստարմութեամբ վարուած եւ ազէկ օգնութիւն ըրած էին Աւստրիայի, ի վերայ սար ամենայնի շատ անգամ ալ յայտնի ջուրուցած էին որ անկախ ըլլալու կը բաղձան: Քանի մը տարի յառաջ իրենց

Ճէջ ազգային ու ազատական շարժում՝ սկսած ըլլալը տեսանք (141): Արդ նոյն շարժման առաջնորդները՝ Եւրոպայի ընդհանուր յեղափոխութեան սկսիլը տեսնելով, կարծեցին թէ յարմար տեսնն եկած է՝ Հունգարիայի թագաւորութիւնն իր յառաջուան մեծութեամբն ու անկախութեամբը նորէն կանգնել, ուստի եւ կը ջանային այնպիսի իրաւունքներ ու կարգադրութիւններ ձեռք բերել, որոնցմով Հունգարիա անկախ տէրութիւն մը կ'ըլլար եւ միայն անձնական միաւորութեամբ (այդ ինչն կայսեր իրենց թագաւորն ըլլալովը) պետութեան ուրիշ մասերուն հետ կապակցութիւն կ'ունենար, որ կապակցութիւնն որ յարմար առիթ մը գալուն պէս՝ խիստ գիւրին էր խզել: Արդէն Ալիէնայի յեղափոխութիւնը չելած, Գոշութ կրցեր էր Հունգարիայի խորհրդանոցին ճէջ ընդունիլ տալ, որ իրենց երկիրն՝ անկախ ազգային կառավարութիւն կամ պաշտօնարան ունենայ: Մայրաքաղաքին ճէջ յեղափոխութիւնը բրդելուն պէս, բազմաթիւ պատգամաւորութեան մը գլուխն անցած, որուն հետ մէկտեղ կու գար նոյն իսկ կայսեր հօրեղծօրորդին Ստեփան արքիդուքսը՝ Հունգարիայի երիտասարդ փոխարքան (Բալադինը), կայսեր ներկայանալով, նոյն պահանջումն բրաւ (Մարտ 15): Կայսրը ժամանակին պարագաներէն ստիպուելով, զիջաւ աս պահանջման, եւ հաւանութիւն տուաւ որ Ալիէնայի պաշտօնարանէն անկախ Մաճառի պաշտօնարան մը գրուի Պաթիանի կոմսին գահերիցութեամբը, որուն ամենէն աւելի ազգեցութիւն ունեցող անդամն եղաւ նոյն ինչն Գոշութ՝ իբրեւ ելեւմտից պաշտօնեայ: Ասկից զատ՝ Մաճառները կ'ուզէին որ Գրանտիլուանիա Հունգարիայի հետ միանայ, Հունգարիա առանձին դրամասեղան ունենայ, Աւստրիայի թղթագրամը Հունգարիայի ճէջ չգործածուի, Հունգարացի զինուորներն իրենց հայրենիքէն դուրս պետութեան ուրիշ կողմերը չծառայեն: Խորհրդանոցին վերջին նստին ճէջ՝ ուր ներկայ կը գտնուէր նաեւ կայսրը, աս ամէն պահան-

Զումբերն ալ ընդունուեցան եւ կայսեր հաւանութեամբ բարկաւորեալ օրինաց զօրութիւն ստացան (Ապրիլ 11)։ Աս զԶումբերով Մաճառներն այնչափ յանդգնեցան, որ եւ ոչ կ'ուզէին յանձն առնուլ Աւստրիայի գնել սուլթան մէկ երկու պայմանները, որոնք էին՝ որ Հունգարացիք աւերութեան պարտքին մէկ մասը վրանին աւանդեն, եւ պատշաճ չափով մը հրապարակական ծախքին մասնակից ըլլան։

189. Աւստրիայի սահմանադրութիւնը։ Մայիսի 15ին ու 26ին ազմուկները։ Կայսրը մայրաքաղաքէն կ'ելլէ։ Ապահովութեան մասնաժողով։ Հանգարիա աս կերպով կայսրութենէն բաժնուելու ճամբան մտած ատեն, նոյն բաժանումը գիւրաւ գլուխ հանելու համար՝ Կոռութ ջանք կ'ընէր մայրաքաղաքը վերը նկարուած անիշխանութեան մէջ պահել։ Օտար գործակալներէ գրգռուած յեղափոխականք, սոսկալի խառնածայն ու աղմկալից ազազակներով՝ Ֆիզլման արտաքին գործոց պաշտօնեան իր աստիճանէն վար ձգելէն ետեւ (Մայ. 2), մեծ շփոթութիւն մը հանեցին, որուն առիթ առին քիչ մը յառաջ կայսեր տուած (Ապր. 25) սահմանադրութիւնը, որն որ բոլոր բաւականին ազատական ըլլալով, ժողովրդեան մեծագոյն մասը գոհ ըրած էր։ Նախ ուսանողաց եւ ազգային պահակապանաց կեդրոնական մասնաժողով մը գրին, որն որ բոլոր զինեալ զօրութեան հրամանատարութիւն պիտ'որ ընէր։ Անկէ ետքը սկսան պահանջել որ կայսեր տուած սահմանադրութիւնը մէկգի ձգուի եւ սահմանադիր ժողովոյ ձեռքով ուրիշ սահմանադրութիւն շինուի։ Ասոր գիմացը պաշտօնեայք հրամայեցին որ կեդրոնական մասնաժողովը լուծուի (Մայ. 13)։ Բայց չէ թէ միայն աս հրամանը չկատարուեցաւ, հասկա ուսանողներէ, ազգային պահակապաններէ ու գործաւորներէ կազմուած անհնարին զինեալ բազմութիւն մը կայսերական պալատին վրայ գիմելով. բոլոր պահանջածին կատարումն ընդունեցաւ (Մայիս 15)։ — Ասոնց հե-

տեւութիւնն ան եղաւ, որ կացարդ գաղտուկ ձգեց՝ բա-
լոր բնասանիքովը Դիրուի գլխաւոր ինսպրուգ քաղաքը
գնաց (Մայ. 18), որուն օրինակին հետեւեցան բարբ
ազնուականք եւ ուրիշ շատ մը հարուստ մարդիկ: Ժա-
ղովրդեան առ բանիս համար ունեցած պլլայութիւնը՝
պաշտօնեայք իրենց օգտին գործածել ազելով, շա-
րիքն արժատէն կտրելու եւ անիշտանութեան վիճակը
գաղբեցընելու մտքը՝ հրաման հանեցին որ ուսանողնե-
րուն գունդը կամ լեզէանք լուծուի (Մայ. 28): Բայց
առ հրամանն ալ գարձեալ աստիկ դիմագարձութիւն
գտաւ. աամկազարնեռուն ջանքովը: Ժողովուրդը զէնք
առաւ ու քաղաքին մէջ շատ տեղ քարակոյտաներ շի-
նելով՝ կռուի պատրաստուեցաւ. ասոք համար կառաւ
վարութիւնը պատրաստուած զօրքերը տեղերնին խառ-
րեց եւ ուսանողաց դէմ առած հրամանը ետ առաւ
(Մայիս 26): Աս յաղթութենէն ետքը՝ ալ աամկա-
վարք բոլոր իշխանութիւնը նստել կերպապէս ձեռուարկն
անցուցին, յառաջուան կեդրոնական մասնաժողովին
մէջ ժողովրդեան երեսփոխաններ ալ աանելով ու նոյնը
Ապահովութեան կամ հասարակաց փրկութեան մաս-
նաժողով (Հատ. Գ. 51) կոչելով, որուն գահերեց
եղաւ Ֆիշոֆ հրեան: Կառավարութիւնն առ ժողովքը
ձանչցաւ:

190. Կայսեր հօրեղբայրը՝ Յովհաննէս արքի-
դուքսը: Սահմանագիր ժողով: Մայիսի շիսթու-
թիւններէն ետքը Ալէքնայի մէջ արտաքին հանգար-
տութիւն մը կը տիրէր. խառվարաները կ'ազելին ասով
զկայսրը խաբել եւ զէնքը մայրաքաղաքը գարննել:
Իսկ Փերդինանդ իր տեղը փոխանորդ. խաբեց իր հօր-
եղբայրը Յովհաննէս արքիդուքսը (Յունիս 24): Նոյն
արքիդքոին ըրածներն եղաւ՝ Աեսանպիակ սեպուհին
գահերիցութեամբը նոր պաշտօնարան մը գնել, պուն
դիւաւորագոյն անդամներն էին՝ պատեհապէի Լազուր
պաշտօնեան, Գրառս՝ երեւմտից պաշտօնեան, եւ Պախ՝
արդարութեան պաշտօնեան, որն որ Մարտի յեղակա-

խաթեան գլուխ ըլլողներէն մէկն էր. եւ սահմանադիր ժողովը (Յուլ. 22) բանալ, որուն՝ բաց ի Հունգարական ու Իտալական գաւառներէն՝ տէրութեան մէկալ գաւառները պատգամաւորներ խաբած էին: — Նոյն ժողովն արաւարդ կարգի եւ գրեթէ ուրիշ տեղ՝ երբէք չտեսնուած երեւոյթ մըն էր: Սահմանագրութիւն շինելու համար՝ զանազան իրարմէ տարբեր՝ մանաւանդ թէ իրարու հակառակ ազգայնութիւններէ, այնպիսի պատգամաւորներ եկած ժողովուած էին, որոնք ըստ մասին չէին գիտեր թէ ինչ է սահմանագրութիւն, որոնց մէջէն ոմանք՝ ինչպէս Ալեքսանդր Կոլոտայէն եկող երեսնէ աւելի անկիրթ ու հասարակ գեղացիները՝ գրել կարգալ իսկ չէին գիտեր: Արդ ինչպէս կրնար ժողովք մը, որուն անգամները չէ թէ միայն քաղաքական կարծեաց կողմանէ իրարմէ առարբեր էին, հասցանաւ ազգային շահերով եւ յեղափան հին աստիւթեամբ մէկ-մէկէ բաժնուած, մէկտեղ միաբանել եւ այնպիսի սահմանագրութիւն մը շինել, որն որ յարմար ըլլար Աւստրիայի կայսրութեան՝ ծագմամբ, սովորութեամբ, կրթութեամբ եւ ուրիշ հանգամանք՝ իրարմէ տարբեր ամէն գաւառներուն ու ազգերուն: Ասանկ ձեռնարկութեան մը շտապովը՝ բուն իսկ իրաց էութեան մէջ էր, թէ եւ մայրաքաղաքին ու բովանդակ տէրութեան վիճակն այնպէս խառնաշփոթ չըլլար՝ ինչպէս որ իրքք էր: Իտալիա յայտնի ազատամբութեան ու պատերազմի մէջ կը գտնուէր, Բահեմիա ու Հունգարիա՝ շփոթութեան ու խառնակութեան եւ կէս մը յեղափոխութեան մէջ, սահմանակից գաւառները՝ շարաշար գրգռեալ, մայրաքաղաքը՝ անիշեանութեան մէջ եւ ռամկավարներուն ու Իտալական եւ Հունգարական ազմկայոյցներուն ձեռքը մատնուած, ելեւմուտքը՝ նեղութեան ու շփոթութեան մէջ: Արդ ինչպէս կարելի էր այսպիսի հանգամանաց մէջ անանկ գործողութիւն մը գլուխ հանել, որուն համար հանդարտութիւն, կարգաւորութիւն, միաբանութիւն, բոլոր կիլքերէ ազատ մտքեր հարկաւոր

է: Մանաւանդ որ ժողովքը գրեթէ ատեն չէր գտներ բուն իր գլխաւոր գործքին զբաղելու, խորհուրդները միշտ տեղական ու մասնական խնդիրներով ընդհատելով: — Իր բոլոր բրած որոշումներուն մէջ հազիւ երկու ծանրակշիռ նիւթ կը գտնուի. մէյ մը՝ աւատաւ պետական ժամանակներէն մնացած տուրքերն ու ծառայութիւնները ջնջելը (Օգոստ. 31), մէյ մ'ալ զինուորաց ծառայութեան ժամանակը, ութը տարիէն՝ հինգ տարի իջեցնելը, որ աւթին մէջ՝ օրինաց առջեւն ամենուն հաւասար ըլլալու սկզբունքը հաստատուեցաւ:

191. Կայսրը մայրաքաղաքը կը դառնայ: Ապահովութեան մասնաժողովոյն լուծուիլը: Հովհաննէս արքիպօսքը, որն որ սահմանագիր ժողովը բանալէն յառաջ՝ Գերմանական պետութեան տեղակալ ընտրուած եւ մէյ մը Ֆրանգֆուրգ գացած էր (221), նոյն միջոցներուն Ալեքսանդրէն բոլորովին մեկնեցաւ իր տեղը դնաց (Յուլ. 30). եւ որովհետեւ խռովարարք՝ կայսրը նորէն մայրաքաղաքը բերել տալու համար՝ թող չէին տար որ հանդարտութիւնն աւրուի, անիկայ խաբուելով՝ ետ դարձաւ (Օգոստ. 12): Անկէ ետեւ ալ քիչ մը ժամանակ՝ թէեւ մայրաքաղաքը աղմկալից ու զրգուեալ վիճակի մէջ կը գտնուէր, բայց արտաքոյ կարգի շփոթութիւն չէր հանգիպեր: Միայն հրապարակական գործքերու զբաղող գործավարները մեծկակ խռովութիւն մը հանեցին, իրենց օրական վարձքին քիչ մը նուազելուն պատճառաւ (Օգոստ. 23). սակայն ասոր վերջն եղաւ՝ ազգային պահակապաններուն ձեռքով անոնց զսպուելէն զատ՝ նաեւ Ապահովութեան մասնաժողովոյն (189) լուծուիլը: Եւ թէպէտ քանի մ'օր ետքը ռամկավարք ուղեցին նոյն մասնաժողովը նորէն կանգնել, որուն առիթ առին՝ առեւտրական ընկերութեան մը մնանկանալովը, խել մը մարգիկներուն մեծ կորուստ ընելուն պատճառաւ ժողովրդեան մէջ ծագած գրգռութիւնը, բայց ջանքերնին պարսպ

ելաւ (Մեղար. 11, 12): Աս հանդարտութիւնը, խոս-
 փարարներուն դիւրաւ զարուիլը, եւ մանաւանդ Ազա-
 հաղութեան մասնատողոյն՝ գրեթէ առանց բնագի-
 մութեան լուծուիլը, վերիվերոյ նայողին՝ կը կարծեցը-
 նեն որ Ա իէննայի մէջ ուսմեղաբարաց կողմը՝ տկարա-
 ցած, եւ կառավարութիւնը զօրացած ըլլայ: Բայց ա-
 սիկայ առերեւոյթ բան եւ Գոշութին բանեցուցած քա-
 ղաքականութեան հետեւութիւնն էր: Գոշութ իր գա-
 ղափարները գրուխ հանելու եւ անոնց հարկաւոր պա-
 արաստութիւնները տեսնելու համար՝ կ'ուզէր անանկ
 երեւցնել որ կայտեր հաւատարիմ է: Ասկից յառաջ
 կու գար՝ վերջին շիսթութիւններուն ատենը՝ իր գոր-
 ծակալներուն եւ գլխաւոր ազմկարարներուն թաղու-
 թեամբ եւ զգուշութեամբ վարուիլը, որով իրենց գոր-
 ծիքներն եզար սատրին յեղատխտակաձք դիւրաւ յաղ-
 թուեցան: Բայց երբ որ իր պարտաստութիւններն ըստ
 բաւականին տեսաւ, ո՛ր ուզեց շուտով հանել ան յե-
 ղափարութիւնը՝ զորն որ երկայն ժամանակէ վեր Ա իէն-
 նայի մէջ կը պատրաստէր:

192. Սլաւ ազգերը Մաճառներուն դէմ կ'ել-
 լին: Ելաշիշ: Ներքին պատերազմ: Վոշութին գա-
 ղափարը կամ նպատակն էր՝ Հունգարիա գտնուող բո-
 լոր ազգերը Մաճառաց հետ ձուլել մէկ ընել, որպէս
 զի Մաճառական զօրաւոր ու անկախ տերութիւն մը
 կանգնէ: Բայց ատով ուրիշ ազգայնութիւններն այն-
 պէս գրգռեց, որ շուտ մը մեջերին մեծ երկպառակու-
 թիւն ու ներքին պատերազմ բրդաւ: — Նոյն կողմերը
 բնակող Սլաւ ազգերը, խոռ. ազգները, Սերֆերը (Սե-
 րուխայիները), Սլաւոններն ու Սահմանաքնակները,
 մինչեւ նոյն արտին Հունգարիայի թագաւորութեան
 մասերը կը տնայուէին. բայց ան ժամանակ բոլոր ազգե-
 րուն մէջ եզածին պէս՝ իրենց մէջ ալ ազգայնութեան
 հոգին արթնցած ըլլալով, եւ Մաճառներուն զիրենք
 բողոքովն զուգելու բողոքաձիգէն՝ աւելի եւս գրգռուելով,
 կ'ուզէին անոնցմէ բաժնուիլ, եւ ինքնուզլուխ տերու-



Թիւն մը կազմել՝ կայսերական պաշտօնարանին տակ ։ Այսպէս Արքեպիսկոպոս իրենց զիրենց անկախ հրատարակեցին , պարտիազք , իշխան (Աջլոտա) ու ազգային զօրաց հրամանատար գրին , եւ Հունգարիայի պաշտօնարանին հպատակիլ չուզելուն համար՝ կայսերական հրամանատարին իրենց դէմ խաւրած զօրք յաղթեցին : Նոյնպէս Խոռուազներուն նոր գրուած Ելաչիչ կուսակալը (Պանը) Հունգարական պաշտօնարանէն անկախ գիրք մը կը բռնէր : Ապարը Ինսպրուգ եղած ատեն՝ նոյն երկու ազգերն իրմէ խնդրեցին որ իրենց Մաճառներէն անկախ ըլլալը հաստատէ . բայց ինքնակալը՝ վերջինները չգրգռելու համար՝ անոնց խնդիրը մերժեց : Ասալ բաւական չէ , զԵլաչիչ իրբու Հունգարական պաշտօնարանին անհնազանդ՝ կուսակալութեան ստափճանէն վար առաւ (Յունիս 10) . սակայն ետքը անձամբ նոյն սեպուհին հետ խօսելով եւ անոր բուն միտքն իմանալով , որ էր՝ Մաճառաց չափազանց պահանջումներուն դէմ դնել , զինքը նորէն հաստատեց : Շատ չքնաց , զանազան ազգայնութեանց մէջ պատերազմ բացուեցաւ եւ սաստիկ արիւնհեղութիւն կ'ըլլար : Սերմիայի՝ Արքեպիսկոպոս Ռոման (Ալալաք) բնակիչները ոտք ելլելով , մերձաւոր գաւառները՝ սպանութիւններ , աւարառութիւններ եւ ամէն տեսակ չարիքներ կը գործէին : Հազիւ թէ Մաճառք քիչ մը գորանալով , Գիշ հայ զօրապետին ձեռքը Արքեպիսկոպոս բանակը Բերլաշի քով դրուած էին (Օգոստոս) , մէյ մ'ալ Ելաչիչ Խոռուազներու զօրաւոր բանակով մը Գանուրն անցաւ , սկսաւ Մաճառներուն վրայ քայլել : Գոշութ՝ Ախէննա բազմաթիւ պատգամաւորութիւն մը խաւրելով , ջանաց կայսրմէ հրաման առնուլ որ Խաալիա գանուող Հունգարացի վաշտերը հայրենիքնին գառնան : Անկից խոստափական պատասխան առնելով , Ախէննայի սահմանագիր ժողովոյն գիմեց . բայց պահպանողական ու Սլաւ պատգամաւորաց ջանքովը հոնկից ալ մերժուեցաւ : Նոյն միջոցներուն էր որ՝ ինչպէս վերը զրուցեցինք՝ Գո-

շուխ, ինք ղինքը հաւատարիմ ցուցնելու մտքը՝ մի էն- նայի մեջ զգուշութեամբ կը վարուէր. բայց երբ որ պս- պէս ամէն կողմանէ մերժուեցաւ, եւ Հունգարիայի փոխադրան ալ՝ պարսպ տեղ հաշտութեան միջնոր- գութիւն ընելէն ետեւ՝ իր աստիճանէն հրաժարեցաւ (Սեպտ. 21), ալ անկէ ետեւ Մաճառք յայտնապէս ապստամբութեան գրօշը բացին:

193. Լամպերկ կոմսին ուղանուիլը: Մաճառք կայսեր հրամանները կը մերժեն: Փոխադրային հրա- ժարելէն ետեւ, կայսրը Հունգարիայի առժամանակեայ կուսակալ մը դրաւ. ասկից զատ՝ պարագետի տեղա- կալ Լամպերկ կոմսը արտաքոյ կարգի կայսերական գոր- ծակալ անուանեց, որպէս զի պատերազմը գազրեցընէ. միանգամայն հրամայեց որ խորհրդանոցին նիւտերը մինչեւ Գեկտեմբեր գոցուին: Աս որոշումները Բեշթ հասած ատեն՝ Գոշուխ հոն չգտնուելով, պաշտօնէից գահերէց Պաթիանի կոմսն եւ ուրիշ շափաւորականք որոշեցին որ անոնց հնազանգուի. որուն համար նոյն Պաթիանի Մաճառաց բանակը գնաց, ուր կը կարծէր որ գտնէ վկայսերական գործակալը: Բայց յեղափո- խականք անմիջապէս զԳոշուխ կանչեցին, որն որ շուտ մ'եկաւ, եւ գիշեր ատեն իր կարծեկիցներուն հետ խորհուրդ ընելով, որոշեց որ կայսեր հրովարտակն ապօ- ըրինաւոր է, իսկ Լամպերկ կոմսն ու անոր հնազանգող- ները՝ հայրենեաց մտանիչ են: Երկրորդ օրը իմանալով որ նոյն կոմսը՝ կայսերական հրամանները գործադրելու համար Բեշթ կու գայ, Գոշուխ պատգամաւորաց սե- նեկին մէջ անոր դէմ սասանիկ խօսակցութիւն մ'ըրաւ, որուն վրայ խել մը մարդիկ՝ պատգամաւորի մը առաջ- նորդութեամբ՝ գուրս յարձակեցան, կառքով Գանու- բի կամրջին վրայէն եկող գծրախտ կոմսին վրայ վազե- ցին, վիրաւորեցին, կառքէն գուրս քաշկուտեցին ու անագորոյն կերպով սպաննեցին (Սեպտ. 28): Կայսրը նոյն ատեն Ռեչայ սեպուհը Հունգարիայի պաշտօնարա- նին գլուխ անուանեց եւ իրեն յանձնեց որ նոր գահէն

մը կազմէ (Հոկտ. 3): Հռոմագարացոց ալ յայտարարութիւն մը հանեց, որուն մէջ նշուածներուն վրայ իր ցաւն ու ահաւանութիւնը կը յայտնէր, խորհրդանոցը կը լուծէր, Հռոմագարիա ու Դրանսիլուանիա զանուազ բոլոր զօրքերը Ելաչիչին հրամանատարութեան տակ կը դնէր, եւ բովանդակ նոյն երկիրները պատերազմական օրինաց տակ կը ձգէր: Ինչպէս որ յայտնի էր, Մամաւք աս հրամանները մերժեցին, մանաւանդ որ Գաշաութին բաղձացած ու պատրաստած յեղափոխութիւնը միշտնա բրգելով, դէմ խել մը ժամանակ ան կազմանէ վախնալու պատճառ մը չունէին:

194. Հոկտեմբերի Յին յեղափոխութիւնը: Լսողուր պաշտօնէին սպանուիլք: Կայսրը Օլմից կը փախչի: Թեպէտ Գաշաութ եւ իրենները բոլոր կայսերական նոր պաշտօնէից դէմ մեծ թանելութիւն ունէին, որովհետեւ անոնք հաստատութիւն կը ցուցնէին եւ նախորդներուն պէս՝ իրենց ամէն պահանջներուն չէին զիջաներ: Բայց աւելի ազրայ կը կրճտէին պատերազմի պաշտօնեաց Լադուր կոմսին դէմ (190), որմէ գլխաւորաբար յառաջ կու գային Հռոմագարիայի դէմ վերջին ժամանակներն ի դարձ: Գրուած զինուորական միջոցները, եւ որուն Ելաչիչին հետ կապակցութիւն ու հաղորդակցութիւն ունենալն իմացած էին: Արդ երբ որ նոյն պաշտօնեան հրաման հանեց որ մայրաքաղաքին վաշտ մը զօրք Հռոմագարիա քալէ, աս բանս. առիթ առին գրգռիչք պնդիսի յեղափոխութիւն մը հանելու (Հոկտ. 6), որն որ սասակութեամբ բոլոր նախընթացներն անցուց: Խռովարարք վերոյիշեալ վաշտին ճամբայ ելլելն արգելելու համար՝ երկաթուղւոյն քիչ մը տեղն աւրեցին, եւ քանի մը թնդանօթ ձեռք բերելով, մեծ կռիւ մը բացին, որուն մէջ զօրապետ մը, մէկ քանի պաշտօնակալք, խել մը զինուորք ու հաւատարիմ ազգային պահակապահք մեռան, իրենցմէ ալ շատ մը մարդիկ կեանքերնին կորսնցընելով: Նոյն միջոցին բոլոր քաղաքը ոտք ելաւ. ամէն կողմ քարա-

կայաներ կանգնուեցան: Չինաստքը, որոնք ըստ մեծի մասին՝ սասկոյ, գինւով եւ ուրիշ ապականութեան միջոցներով վաստակուած էին, կամ ազատամբաց կողմն անցան եւ կամ թողլ կերպով կը պատերազմէին: Խա-
 ժանուժը պատերազմի պաշտօնարանը յարձակեցաւ, զլաւագոյն չարաչար սնազարունութեամբ մեռցուց ու շէքին առջեւը կանթեղի ցցէ մը կախեց: Գիշերը ա-
 պրտաւանքը զինանոցն ալ առին ու մէջի գէնքերը կողոպ-
 տեցին: — Աս յեղատիտութիւնն ու առանձինն լա-
 գուրին սպանութիւնը՝ կայտեր վրոյ ահանկ մեծ ազդե-
 ցութիւն բրաւ, որ բոլոր բնասանիքովը ձգեց Մորաւիայի Օբլիւց բերդաբաղաբը գնաց (Հոկտ. 7), յայտարա-
 րութիւն մը թող տալով, որուն մէջ կը ծանուցանէր որ կ'ազէ անխնայութեան լծոյն տակ հեծող ժողո-
 վեջոյն անբարութեան հնարքը գտնել: Ապրերափան բնասանեաց հեռանալը՝ առ անգամ ալ նշան եղաւ բո-
 լոր մեծամեծաց հեռանալուն: Պաշտօնեաներէն ոմանք ձգած փախած էին, ոմանք ալ կայսեր հետ գացին: Խորհրդանոցին գահերէցն եւ ուրիշ պաշտպանադահան անդամներէն շատերը հետացած էին: Իսկ Վիէննա մնացած պատգամաւորը մանտառողով մը դնելով, կ'ու-
 զիին անխնայութեան շարիքները խափանել:

105. Վիէննայի առնուիլը: Յնդափոխութիւ-
 նը կը զսպոբի: Կայսրը Վիէննայէն ելլելուն պէս, նոյն մայրաքաղաքը զուլելու պատրաստութիւններ սկսան անտուրի, որոնցմէ ապտամբք զախի մէջ իջնալով, Բրենց կայանէ պատրաստուեցան դէմ գնելու: Պէմ լիհ զորապետը՝ Թնդանօթաձիգներու գլուխն անցած՝ ամբութիւնները պաշտպանութեան վիճակի մէջ դրաւ: շատ տեղ քարակոյտներ կանգնուեցան, որոնք քանի մ'արտարձաններու բերանները՝ ամուր բերդերու կը նմանէին: Բայց գլխաւոր ակնկալութիւննին ան էր, որ Գալուսիին խոստացածին պէտ՝ Մաճառներու գնդեր ատենին իրենց ազնութեան կը հասնին: Նոյն միջոցին Ելաշէ 35,000 զորով եկաւ, մայրաքաղաքէն գուրս

հարաւային կողմը կեցաւ. Աւերապէրի զօրապետը՝ որն որ կայսեր Ալեքսանդրէն ելլելէն ետեւ, նոյն տեղն եղաւ 15,000 զօրքն առած՝ գուրո ելած էր, գնաց անանցմով Ելաշէիին հետ միացաւ (Հոկտ. 12): Քիչ մը ետքը Բոհնեմիայէն 30,000 բանակաւ մը հասաւ նաեւ Աինտիշկրէց սպարապետը՝ որուն լիակատար իշխանութիւն տուած էր կայսրը մայրաքաղաքը զսպելու: Ինք չեկած՝ կայսերական յայտարարութիւն մը հրատարակուեցաւ, որուն մէջ ժողովուրդը կը յորդորուէր ապստամբներէն բաժնուելու, խոստում տրուելով որ եղած բոլոր շնորհումները հաստատուն կը մնան, եւ խոստացած սահմանազրութիւնը կը արուի: Բայց առ ալ առանց ազգեցութեան մնաց, վասն զի բոլոր զօրութիւնը ռամկավարաց ձեռքն էր: Աս կերպով զինուորաց ու քաղաքացւոց մէջ շուտ մտանական կռիւները սկսան ու շարաթէ մ'ուելի գիշեր ցորեկ շարունակուեցան, որովհետեւ յեղափոխականք իւրաքանչիւր քայլը կռուելով թող կու տային: Աերջապէս օտար յեղափոխականներուն գլխաւորները եւ առանձինն Պէժմ, տեմելով որ Մաճառներէն սպասուած օգնութիւնը չեկար, քաղաքին մէջ ալ ուտելիքն ու ռազմամթերքը կը պակսի, ձգեցին փախան. որով քաղաքային խորհուրդն որշեց որ հրամանատարին պահանջածին պէս՝ առանց պայմանի անձնատուր ըլլուի: Ուստի զէնքերը սկսան ժողվաիլ, առանց զուճար կը լուծուէր, եւ զօրքերն ամէն կողմէն դէպ ի ներքին քաղաքը կը յառաջանային (Հոկտ. 30): Բայց ետքէն գարձեալ Մաճառաց օգնութեան վրայ ակնկալութիւն ստանալով, ապստամբը նորէն զէնք տաին: Ասանկով երկրորդ օրը զինուորք քաղաքը շատ կողմանէ մէկէն գնդակոծելով՝ գրեթէ առանց գիմնագարձութիւն գրանելու՝ ներս մտան (Հոկտ. 31): Բնակիչք շուտ մը զինաթափ եղան, տները փնտաուեցան, շատ մարդիկ բանտարկուեցան, եւ ձեռք անցնող գլխաւոր ռամկավարներէն քանի մը հոգի ուզանուեցան:

196. Նոր պաշտօնարան: Փերդինանդ կայսեր հրաժարիլն ու Փրանկիսկոս Յովսեփին գահ ելլելը: Սահմանադրութիւն: Խնչպէս աւ կերպով Աիէննա զուլեեցաւ եւ հանդարտութիւնը հաստատուեցաւ. բայց կայսրը ետ չդարձաւ, մանաւանդ թէ իր այնչափ շուտով ետ չգառնալիքը յայտնապէս ցուցուց՝ սահմանադիր ժողովը Օլմիւցի մօտ Գրեմզիւր փոխադրել տալով: Նոյն տեղը ժողովը բացուելէն քանի մ'օր ետքը՝ նոր պաշտօնարան մը գրուեցաւ (Նոյ. 24), որուն գրութաւոր անդամներն էին Շուարցենպէրի իշխանը՝ իբրեւ արտաքին գործոց, Ստատիոն՝ իբրեւ ներքին գործոց, Պախ՝ իբրեւ արդարութեան, եւ Պրուգ՝ իբրեւ վաճառականութեան պաշտօնէպ.ք: Ասոնք յայտարարութեան մը մէջ կ'ըսէին թէ կ'ուզեն սահմանադրական կառավարութեան կերպը՝ առանց ամենեւին ամբօրով ման՝ հաստատուն պահել, Աւստրիայի ամէն ազգերուն՝ ազգային, քաղաքական ու կրօնական իրաւունքներն ու ազատութիւնները յարգել, եւ անոնց համեմատ օրէնքներ գնելով՝ նոյններն ապահովցնել ու կարգաւորել: Սահմանադիր ժողովը մեծ հաճութեամբ լսեց աւ յայտարարութիւնը, որուն անկեղծութեան վրայ չէր կրնար տարակուսիլ, որովհետեւ պաշտօնէից մէջէն ու մանց ազատամիտ ու սահմանադրական կողմնակցութեան պաշտպան ըլլալը գիտէին, ինչպէս էին Սղատիոն, Պախ եւ Պրուգ՝ որն որ խիտտ ստորին կարգէ ան աստիճանը բարձրացած եւ կրօնիք բողոքական էր: Աս նոր պաշտօնարանին հաստատուիլը՝ իբր թէ կարապետ մ'եղաւ կայսրութեան մէջ պատահած խիտտ մեծ փոփոխութեան մը: Փերդինանդ կայսրը համոզուելով որ ժամանակին հանդամանաց մէջ կայսերական ծանր թազը կրելու համար երիտասարդական զօրութիւն պէտք է, նոյն թագը թողուց, իր Փրանկիսկոս վարդապետ եղբայրն ալ նոյնէն հրաժարեցաւ, որով վերջնոյն երէց որդին Փրանկիսկոս Յովսեփ կայսր եղաւ (Դեկտ. 2): Իսկզբան սահմանադիր ժողովն աւ փոփոխութե-

նէն՝ վախի մէջ ընկաւ, որ շուրջ թէ նոր կայսրն իր նախորդին խոստումները մերժէ: Եւ թէպէտ նոյն վախը փարատեցաւ նոր կայսեր յայտարարութեամբը, որով կը խոստանար իր կառավարութեան հիմ առնուլ սահմանադրական կարգադրութիւնները. սակայն եւ այնպէս ժողովոյն խօսակցութեանց մէջ ամէն օր աւելի յայտնի կ'երեւար թէ իր ծագումը յեղափոխութենէ առած ժողովք մը չիկրնար միաբանիլ՝ գործադիր իշխանութիւնը զօրացնել ու ամրացնել ուզող կառավարութեան մը հետ: Եւ երբ որ նոյն սահմանադիր ժողովք սկսաւ սնանկ ազատութիւններ պահանջել եւ անանկ սկզբունքներու հետեւիլ, սրնք Աւստրիայի ժողովրդոց վիճակին հետ չէին կրնար միաբանիլ, կայսրը նոյն ժողովք լուծեց (1849, Մարտ 7), եւ ինք իրմէ սահմանադրութիւն մը տուաւ, որուն շնորհած իրաւունքները՝ թէպէտ սահմանադիր ժողովոյն անդամներէն ոմանց պահանջածին չափ չէին, բայց ըստ ինքեան՝ եւ ճանաչանք յառաջուան վիճակին նայելով, բաւական ազատական էին:

197. Մաճառք եւ Աինտիշկրէց: Վառնանք հիմայ Հունգարիայի իրողութեանց: Նոր պաշտօնաբանին հաստատուն կամքն էր՝ կայսերական թագին հետ միացած բոլոր գաւառներուն վերին վարչութիւնը Աինտիշկրէցընցնել, որն որ աւելի գիւրինցաւ Փրանկիակոս Յովսէփին գահ ելլելովը: Իսկ Մաճառք նոյն գահակալութեան իրենց համար աս հետեւութիւնն ունենալը իմանալով, նոր կայսրն իբրեւ Հունգարիայի թագաւոր չուզեցին ճանչնալ, մինչեւ որ ըստ սովորութեան՝ Հունգարիայի մէջ չպտակուի եւ երկրին սահմանադրութիւնն ու իրաւունքները պահելու երգում չընէ: Գոշութ աս դէպքը գործածեց շատ զօրքերն իր կողմը վաստակելու, անանկ ձեւացընելով որ նոր կայսրը յափշտակիչ է եւ իրենք իրենց բուն թագաւորին (Փերգինանդ կայսեր) իրաւունքը պաշտպանելու համար սոք կ'եղեն: Աս եւ ուրիշ ատոր նման միջոցներով կրցաւ

բարբ Գեօրգի կրել կրցող մարդիկը առք հանել, որով քիչ ասեմուան մէջ 200,000ի բանակ մը պատրաստեցաւ : Երկրին բերդերն ալ պլելայլ միջոցներով ձեռք անցացին Մաճառք . այնպէս որ կայսերականաց ձեռքը՝ միայն Արար ու Գեմեշիար մնաց : Զօրաց վերին հրամանատարութիւնը Վեօրիկէյ զօրապետին յանձնուեցաւ . իսկ Պէմ լեհ զօրապետը՝ որն որ վիէննայի առնուելու ատենը ձգած Հունգարիա փախած էր, հրամանատար եղաւ Գրամսիլուանիայի դէմ խաւրուած զօրքին, որուն բնակիչները կայսերական կողմը կը բռնէին : — Մաճառք առ վիճակին մէջ գտնուած ատեն, վիճակչկրէց ուղարկութեան հրամանատարութեան տակ իրենց դէմ մեծ բանակ մը կը քալէր : Մաճառները չէին ուզեր ան միջոցին ձակատ տալ . իրենց աւելի ազէկ երեւցաւ սահմաններու քանի մը քաղաքներն ու նոյն իսկ մայրաքաղաքը կայսերականաց ձեռքը թող աալով, Գապսի անդիի կողմն անցնիլ ու Աւստրիական բանակը ձանա ատեն Հունգարիայի ներքին կողմերն որտալ : Բւստի երբ որ մէկ քանի թեթեւ կառներէ եւ քանի մը քաղաքներ առնելէն ետեւ, վիճակչկրէց՝ ետ քաշուող Վեօրիկէյի բանակին ետեւէն Պուտա-Բէշթ հասաւ, եւ հոնկից բանակցելու համար եկող պատգամաւորութիւնը մերժեց, Գոշութ քաղաքին մէջի զօրքով, Կալմամթերովը գիշերանց գաղտ հոնկից ելաւ Յերբեշին գնաց (1849, Յունու. 4—5), Ս. Սաեփանոսի թագը, թագաւորութեան նշանակներն ու թղթագրած տպելու մէքենաներն ալ հետը տանելով : Իրան հետ գացին նաեւ խորհրդանոցին տակառին ներկայ եղող անգամները : Առանկով երկրորդ օրը (Յունու. 5) ուղարկեալ Ելաշիչին հետ Պուտա ու Բէշթ քաղաքները մտաւ :

188. Գրամսիլուանիայի պրոտորազմի : Բուլար օգնութեան կու գան ու ետ կը քշուին : Հատերն անանկ կարծեցին որ Պուտա-Բէշթ քաղաքներուն առնուելով՝ Մաճառներու ապստամբութիւնը զօղուած

ըլլայ եւ կամ զայուրից խիստ գիւրինցած: Բոցց ասոր հակառակն եղաւ: Լեհ փախտտականք՝ որոնց մէջ նշանաւոր զօրապետք ալ կոչին, Մաճառներուն հետ միացան, յուսալով որ անոնց յեղափոխութիւնը յաջող ելք որ ունենայ, Լեհաստանի վերականգնման օգուտ կ'ըլլայ: Յիշեալ Լեհ զօրապետներէն՝ Յեմպինսքի (116) Կեօրէէյին տեղ՝ Մաճառի զօրաց վերին հրամանատար գրուեցաւ: Ասանկով ամէն կողմ միեւնոյն ատեն քաղաքային սաստիկ պատերազմ մը բացուեցաւ: — Կայսերականաց ու Մաճառաց գլխաւոր բանակներն իրարու հետ կարգաւորեալ պատերազմ բրած ատեն, մէկալ կողմանէ Մաճառներու եւ Արքիերու պատերազմն ալ սաստկութեամբ յառաջ կը վարուէր Բանջովայի շորս կողմը եւ Գանուրի ու Գոյսի քովերը: Ասկից զատ՝ Գրանսիլուանիս սաստիկ անազորունութիւններով ու անլուր շարագործութիւններով խառն արիւնալից պատերազմի մը տեսարան եղած էր: Մաճառներն եւ մանաւանդ անոնց հետ միարան եզոզ Սեքլէրները, իրենց գէժ՝ եղազ Սաքսոններուն (Գերմանացիներուն) գեղերն ու ագարակները կը յարձակէին, եւ իրենց կատաղութեան մէջ՝ ոչ սեռի եւ ոչ հասակի, ոչ առանձնական ստացուածքի եւ ոչ եկեղեցական ընչից կը խնայէին: Ասոր գիմացը՝ Ռոմաններն աւազակաց գնդեր կազմելով, իրենց գրացիներուն երկիրները կը մտնէին ու անթիւ անհամար սպանութիւն, աւարաւութիւն ու կործանում կ'ընէին: Իսկ Սաքսոնները՝ որոնք իրենց շրջակայ ազգերուն չափ պատերազմական հոգի չունին եւ անոնցմէ աւելի քաղաքակիրթ են, միայն իրենք զիրենք թշնամեաց շարագործութիւններէն կը պաշտպանէին. եւ աս պաշտպանութեան համար Աւստրիական զօրքն իրենց օգնութեան կանչած էին: Հազիւ երբ որ Պէժ լեհ զօրապետը հոն եկաւ եւ Գրանսիլուանիայի Մաճառ զօրաց հրամանատար եղաւ, պատերազմը քիչ մը կանոնաւոր կերպարանք առաւ: Աւստրիական զօրքը քիչուոր ըլլալով, Պէժ գրեթէ

առէն տեղ անոնց յաղթեց: Սաքսոններուն գլխաւոր քաղաքներէն՝ Գրոնշդատ ու Գլազննպուրկ Մաճառաց ձեռքն ինկան. իսկ Պէժ Լերմանշդատ քաղաքը սաստիկ զնդակոծեց: Սաքսոնները խիստ նեղի գալով, օգնութեան կանչեցին Վալաքիայի սահմանները զօրօք բռնող Ռուսները: Անոնց Լիւտերս զօրապետը 6000 հոգւոյ գունդ մը խաւրեց (1849, Յունու. 31), որն որ սաստիկ կռիւներով Գրոնշդատ ու Լերմանշդատ քաղաքները բռնեց (Փետր. 1, 4): Բայց ետքէն Պէժ նորէն եկաւ՝ Ռուսները իրենց բռնած քաղաքներէն զուրս հանեց (Մարտ 9) եւ սահմաններէն անդին անցուց: Նոյնպէս Բուխներ Աւստրիական զօրապետը նոյն Պէժէն հալածուելով, Վալաքիա անցնելու ստիպեցաւ, ձեացեալ զօրքերն ալ զանազան կողմեր քաշուեցան:

199. Աւստրիական բանակին անյաջողութիւնները: Աելտէն հրամանատար կ'ըլլայ: Մաճառք իրոնք զիրոնք ազատ կը հրատարակեն: Պատերազմի բախտն ուրիշ կողմեր ալ Մաճառաց կողմն էր: Իրենց բովանդակ բանակը Տեմպինգբիին հրամանատարութեան տակ Գարոնայի քով միացած ըլլալով, նաեւ Վիստիշկրէց իր բոլոր զօրքերը հոն քալեցուց, եւ նոյն տեղը սաստիկ ձակատ մը արուեցաւ (Փետր. 28), որուն մէջ Մաճառք արտաքոյ կարգի քաջութեամբ կռուելէն ետեւ, ետ քաշուելու ստիպեցան: Բայց աս յաղթութիւնն Աւստրիացւոց համար օգտակար հետեւութիւն չունեցաւ. որովհետեւ տարւոյն եղանակին ու երկրին հանգամանաց համար՝ Վիստիշկրէց չէր կրօնար իրենց ետեւէն իյնալ: Նոյն միջոցին Մաճառաց բանակին մէջ Լեհաց գէժ գրգռութիւններ ելլելով, Տեմպինգբի հրամանատարութենէն հրաժարեցաւ, եւ տեղը Ֆեդդէր անուանեցաւ. բայց անոր գործքը կէտկէյ կը կատարէր: Գարնան սկիզբները Վիստիշկրէց իր բոլոր զօրքերովը Մաճառներու գլխաւոր բանակին վրայ քալեց. միպէն ան էր որ նախ անոնց ձեռքն եզող բերդերն առնու եւ ետքը զիրնիք շորս կողմանէ պա-

չարէ: Բայց առ ծրարէրը չյաջողեցաւ: Քանի մը տեղ Մաճառները կայսերականաց յարձակումները մերժեցին (Ապր. 2, 6): Ա ինստիտուտէն ետ կանչուելով, անոր տեղը Աելտէն սեպուհը դրուեցաւ: Բայց նոր հրամանատարն ալ մեծ յաջողութիւն չունեցաւ: Գոմսունի բերդը՝ որն որ արշաւանքին սկիզբէն վեր կայսերականներէն պաշարուած էր, եւ անոնց յարձակմանց ու գրնդակոծութեանց քաջութեամբ գեմ կը դնէր, վերջին տասիննանի նեղ մտած առանձն նոր զօրք ու ամէն կերպ պաշար ընդունեցաւ: Աելտէն մայրաքաղաքը պահել կրնալէն յոյսը կտրելով, գիշերանց կայսերական զօրքը Բեշլէն հանեց (Ապր. 23), եւ նոյն քաղաքը Պուտայի հետ կապող կամուրջն աւրել տուաւ, որպէս զի առ վերջին բերդին մէջ ձգած պահակապան զօրքը յանկարծակի յարձակում կրեմէն զերծ ըլլայ: Երկու օր ետքը Գոմսուն պաշարող կայսերական զօրքը ստիպեցաւ յարձակումը վերցնել ու ետ քաշուիլ (Ապր. 25): Մաճառք Պուսա պաշարեցին, եւ օրերով գնդակոծեւէն ետեւ, յարձակմամբ առին (Մայ. 21): Աւստրիական զօրքերն անկէ ետեւ ապաւինելու տեղ չգտնելով, գեպ ի Բրեզզուրի ետ քաշուեցան: — Մաճառաց բանակն՝ իբրեւ իրենց օրինաւոր թագաւորին իրաւանցք պաշտպանելու համար՝ պատերազմած առանձն, իրենց Տեպրեչինի խորհրդանոցը (197) անոր կատարած յաղթութիւններուն վրայ յենելով, հրատարակեց որ Հունդարիտ Աւստրիայէն անկախ է եւ Հապսպուրգ-Լոթարինգեան տունը Հունդարական թագը կորսնցուցած է (Ապր. 14). ուստի եւ Հունդարական հասարակապետութիւն մը հաստատեց, որուն գլուխն անցաւ առ ժամանակեայ կառավարութիւն մը՝ Գոշուլթի գահաբեկութեամբ:

200. Ռուսը Աւստրիայի օգնութեան կու գան: Երկու տէրութեանց եւ Մաճառներուն բանակները: Աւստրիա իր նեղութեան մէջ Ռուսիայի կարկառած ձեռքն ընդունեցաւ: Պուտային ինկած օրը (Մայիս 21)

Պուստիայի ու Աւստրիայի կայսրները Աւստրիայի մեջ տեանուելով, Հունգարիայի բախան որոշուեցաւ : Հունգարիայի ապստամբութեան անանկ ընդարձակուած էր, որ ակարացած ու անկնուզուող եղած Աւստրիական տէրութիւնը խիստ գեռարաւ կրնար նոյնը զգայիլ : Իսկ առ ապստամբութեան յաջողելով՝ բովանդակ Եւրոպայի մեջ յեղափոխականաց քաջաբերութիւնը կը մեծնար, որով բոլոր միասերտական տէրութիւնք իրենց հիմանց վրայ կը սասանէին : Լեհ տիտիսականներուն՝ Մաճարաց պատերազմին ըրած գործակցութեանն եւ բոլոր Լեհաց մեջ անոնց զինաց յաջողութեան վրայ ցուցուած ուրախութեանն, յայտնի կը տեանուէր թէ առ յեղափոխութեան յաջող ելքը՝ ինչ մեծ ազդեցութիւն պիտ' որ ունենայ Լեհաստանի վրայ : Աւստի եւ Պուստիայի նկատմամբ անտարբեր բան չէր Մաճարաց ապստամբութեան ունենալու կատարածը : Ենար համար ալ արդէն շատանցուինէ Աւստրիա մեծ բանակ մը ժողոված՝ պատերազմին ընթացքը կը գիտէր, եւ Նիկոլայաւ կայսրը պատրաստ էր Մաճարաց զայրուելուն օգնելու : Երբիս կայսրը բանակցելուն պիտ, Պուստիայ բանակները սկսան շարժիլ : Լիւտերին Գրանսիլանիայի սահմաններն ունեցած գունդը 36,000 հասցուեցաւ : Իսկ բուն մեծ բանակը իրրեւ 130,000 հազի, Բապուեիչ իշխանին հրամանատարութեան տակ զանազան ձախումներով Գարբուտ լեռնին անցաւ՝ Հունգարիա մտաւ : Նոր գնդերով զորացած Աւստրիական բանակը, իր 70,000 հազի, որուն՝ Ալբրէն սեպտհին սեղ՝ հրամանատար եղած էր Հայնաւ տիպուհը, միեւնոյն ատեն գեղ ի արեւելք կը քալէր, իսկ Երաչէ 40,000 հազով հարուէն նորին Հունգարիա կը մտնէր : Գոչուիտ առ մեծ զորութեան դէմ գնելու համար արտաքոյ կարգի գործունեութիւն բանեցուց, որպէս զի՝ բոլոր ժողովուրդը ոտք հանելով՝ այնպիսի պատերազմ մը ձեռք զարնէ, ինչպէս որ երբեմն Սոլուիկայից Նարոլէանին գէմ ըջած էին : Եթէ իր առ դի-

առարութիւնը կատարեալ ի գործ գրուէր, անշուշտ պատերազմն այնչափ գիւրաւ չէր լիննար: Երկիրն ու օգարածինը Մաճառաց մեծ օգնութիւն էին՝ իրենց հակառակորդներուն անյարմար ու մնաստակար ըլլալով. արքունի ճամբաներ չգտնուելով, գնդերուն շարժումն ու իրարու հետ միանալը մեծապէս կը դժուարնար. անձրեւ ալ որ գար, զօրաց ու կառաց ընթացքը գրեթէ բոլորովին կը խափանուէր. ցորեկներուն ապրութիւնն ու գիշերներուն եղեամբ՝ հիւանդութեանց պատճառ կ'ըլլար, եւ Գալսի կողմերուն տենդոս ճախճախուաները՝ նոյնտեղաց օգարածինն անվարժ Աւսարիացաց ու Ռուսաց համար գիշերապահութիւնը մահարեք կ'ընէին: Եւ ուսկից կրնային անոնց բազմութիւ բանակները ուստիլք գտնել, թէ որ Գալսութին հրամայածին պէս՝ անդացիք իրենց բոլոր ցորենեղէններն եւ ուրիշ պաշարներն այրէին ոչընչացընէին: Մաճառաց 200,000ի համադր բանակը՝ ասանկ առիթներու մէջ ուրիշ տեղեր սովորաբար եղածին պէս՝ անկիրթ, անհրահանգ, աղէկ չլինուած գնդերէ կազմուած չէր. հապա ըստ մասին ծառայութիւննին լինցուցած կիրթ զինուորներէ եւ ըստ մասին պատերազմաուէր ու աշխատութեան վարժ մարդիկներէ, որոնք ճարտար զօրապետներու տակ էին եւ ամեն հարկաւոր զէնքերն ու ռազմավթերն առատութեամբ ունէին:

201. Գատերազմին գլխաւոր դէպքերը: Լ՝ հեղ պատերազմը խիստ յաջող եղաւ Ռուսաց օգնական զօրքովը զօրացած Աւսարիական բանակներուն, որոնց մէջ եկաւ կեցաւ քիչ մ'ասանն երիտասարդ կայսրը՝ իրենց քաջարտութիւնն աւելցընելու համար: Հայնաւ գլխաւոր Աւսարիական բանակով Ռասայի քով Յունիսի մէջ կուսոյ սփուաւ: Մաճառք ուղեցին Ռուսաց ան կողմերը հասնելէն յառաջ կայսերական բանակը ջնջել. բայց չիրցան յաջողընել: Թէպէտ եւ Չուանայի քով նոյն բանակին յառաջապահ գունդը զարնուեցաւ (Յունիս 13), բայց շարժմ մը ետքը

Կէօրիկէյ Ժիկարաի քով (Յունիս 21), իսկ Գլարգաւ Շիւզ կղզւոյն վրայ յաղթուեցաւ: Առաջինը Գամուռի քով մէյ մ'ալ բախար պարապ տեղ վարձելէն ու վերաւարուելէն ետեւ (Յուլ. 2), իր տեղն անցնող Գլարգաւ նոյն տեղը դարձեալ արիւնաղից ճակատ մը տուաւ (Յուլ. 11). բայց առ հեղ ալ Մաճառք յաջողութիւն չունեցան: Ասոր վրայ Գուսառ ու Բէշթ քաղաքները Հայնախն ձեռքն ինկան (Յուլ. 12), ուր նոյն հրամանատարն իր սովորութեան համեմատ՝ սկսաւ արապքոյ կարգի խտտութեամբ վարսիլ: — Ռուզք Բաղքեւիչի, Օսթէն-Սաքէնի, Արապպէի տակ հիւսիսէն յառաջ կը քալէին: Կէօրիկէյ ասոր լուրն առնելուն պէս, Գոմուռնէն ելաւ անոնց դիմացը գնաց, որպէս զի Աւարիական բանակին հետ միանալին արգելաւ: Առ բանն չկրցաւ յաջողընել. բայց Ապրէնի քով յաջող ճակատ մը տալէն ետքը (Յուլ. 15), Ռուսաց մեծագոյն զօրութեան տեղի տալու ստիպուելով, ճարտար ընթացքով մը Գարբաթ լեռներէն անցաւ, որով անոնցմէ ազատեցաւ ու վերին Գայրի կողմերը հասաւ: Ասոր ընթացքը գիւրինընկաւ համար Բերշէլէն՝ Թիւրքի քով Ռուսաց հետ զարնուած տանն՝ վերջինները յաղթող եղան: Քիչ մը ետքը Գամուռի պահակապան զօրաց՝ Գլարգապի առաջնորդութեամբն ըրած յարձակումը (Օգոստ. 3) Մաճառաց վերջին յաջող գործողութիւնն եղաւ, որոնք մինչեւ Ռասայ ու Ախզըլուրի յառաջանալէն ետեւ, աւարով, պաշարներով ու ռազմամթերքով ծանրացած՝ նոյն անառիկ բերդը գարձան: Քանի մ'օր վերջը Մաճառք Տեմպինաքիի հրամանատարութեամբ Հայնաւէն մէյ մը Սէօրիկի քով (Օգոստ. 5), մէյ մ'ալ Գեմեշլարի քով (Օգոստ. 9) չարաչար յաղթուեցան եւ վերջին ճակատին մէջ բարբոսին ջրուեցան: — Գրանսիլուանիս ալ պատերազմը Մաճառաց համար խիստ անյաջող գնաց: Պեմին բուր ջանքը պարապ երթալով, չկրցաւ Ախուէրի հրամանատարութեան տակ եղող

Որոշում բանակին վրայ յազմութիւն տառնալ: Միայն հարստային կազմերը յաջնորութիւն աւճեցան Մաճառք, ուր առհասարակ կայտերականաց ձեռքն եղող Արսառ բերդն անձնատուր բլլալու գախաբնին (Յուլ. 1), եւ Հեկիեշէ քով իրենց բանակին վրայ ինկող Ելաշէշէ զորքը բաշտրովն զարկին (Յուլ. 14):

202. Կէօրիէյ հրամանագրեալ կը դրուի ու Ռուսաց անձնատուր կ'ըլլայ: Մաճառներն իրենց պարտութիւններէն ետեւ, Արասի մէջ Գոշութին ներկայութեամբ վերջին անգամ պատերազմի խորհուրդ բնակով, որոշեցին որ Կէօրիէյ հրամանագրեալ բլլայ (Օգոստ. 10): Առաջնայն՝ իր իշխանութիւնը ձեռքէ հանելուն պատճառն ան էր, որ տեսնելով թէ իրենց Արասի քով ժողովուած բանակին 23,000 մասցորդները ի հարկէ յազմուելու են՝ զկրեւք գրեթէ չորս կողմանէ պաշարող աւստրիական ու ռուս բանակներէն, կ'ազէր դեռ ձեռքն եղած առիթը շփոխացուցած՝ իր կեանքն ազատել: Բայց որովհետեւ իբրեւ գերի ինկած էր Կէօրիէյին ձեռքը, որն որ իրեն դեմ խիտա նեղացած էր՝ զինքը հրամանատարութենէն հանելով՝ նոյն իշխանութիւնը Յեւզղիւզիէին ապուռն, եւ առանց իր ու բանակին կործիքը հարցունելու՝ հասարակապետութիւն հաստատելուն վրայ, անոր համար իր քովը կենայն ապահով չտեղեկով, կ'ազէր Պեմին քովն ելթալ: Բայց Կէօրիէյ զինքը թող չտուաւ, մինչեւ որ իշխանութենէ հրաժարելով, բոլոր բացարձակ իշխանութիւնն իրեն չձգեց: Ասոր վրայ Գոշութ թողուց գիտաւ, իր խոստման գեմ՝ Հանգարիայի թագն ու արքանի նշանակները հետը տանելով: — Իսկ Կէօրիէյ՝ վերին իշխանութիւնը ձեռք անցրնելուն պէս, իր զորացը հետ դեպ ի Վիլնիոյ գնաց, ուր Ռուսաց Ռիաւիկէր Կորապեալին հետ՝ շատանցուրնի վեր մէջերմին բանակցուածին հաճեմատ անձնատուր բլլալու գաշինք գնելով (Օգոստ. 13), բոլոր բանակը զինաթափ եղաւ: Ա՛րքեւայ որ այսոնի տեսնելով թէ Հայնաւ միակ Ասիայաւով կրնայ

իր բանակը ցրուել; ակամայ բըռնվորը՝ կամաւորապէս
 ազգի ինքէ, Տեան եզոյ պնդումի քով զորաց փեանքին
 խնայելու եւ իր հայրենեաց վրայ դրուելու պատիժնե-
 բուն պատկուծիւնը մեղանցրնելու համար: Բայց թէ
 առեք ուզեց Ռուսաց՝ քան թէ Աւստրիացաց անձնա-
 ասը բլալ, ասը պատճառն էր մէյ մը՝ որ վերջնեւ-
 բուն եւ մեծաւանգ Հայնաւ սարսափելին գէժ մեծ
 ատելութիւն ուներ, մէյ մ'ազ՝ որ կը յուսար թէ ասով
 Ռուսաց փայտը իբր թէ կը պայտաւորի զերեւոր իր
 պաշտպանութեան տակ առնուել եւ չթողուլ որ օրի-
 նաց բոլոր խտուածիւնն իրենց գէժ՝ ի գործ դրուի:
 Բայց աս իր ակնկալութիւնը ըստ մտքին միայն կատա-
 ռուեցաւ. ասոյց է ինք Ռուսի միջնորդութեամբ ազատ
 թող տրուեցաւ՝ իր բնակութիւնը Կեդրց քաղաքը հատ-
 տաբերու պայմանաւ, բայց Հայնաւ ձեռք անցնողս
 գլխաւոր յեղափոխականները չարաչար պատժեց: Այս-
 պէս Պոթիանի կամար, Արմենիքի իշխանը, Վելչեյ,
 Ալլիս, Լայնիմիէն, Գիշ, Լազար եւ արիշ մէկ երկու
 դրոսպետներ սպաննել տուաւ: Ասով կ'ուզեր ցուցը-
 նել որ ինք՝ իբրեւ Հունգարիայի օրինաւոր թողաւորին
 անդակալը՝ նոյն երկրին մէջ տէր է, չէ թէ Բապտիշ,
 որն որ անձնապարծալութեամբ Նիկողայոս Կայսեր կը
 գրէր թէ Հունգարիա ձեր վեհափառութեան ոտքն
 ինկած կը կենայ: Բայց եթէ աս նիստմամբ իրաւունք
 ուներ, նոյնը ցուցնելու համար՝ պնդումի խտուածիւն
 բանեցրնելու հարկաւորութիւն չունէր. որուն համար
 իր անպահան կայսերն ալ աչքէն ինքու, որովհետեւ
 Հունգարիայի մէջ իր անձնական կամայը համեմատ կը
 վարուէր եւ Ալիէնայի պաշտօնարանին հրամաններուն
 ճշդիւ չէր հնազանդեր:

203. Հունգարիայի յեղափոխութեան կատա-
 րածն ու հետեւութիւնները: Ղոշուծ Կեօրկէյէն բաժ-
 նուելէն ետեւ, զՊէժ Լուկոշի քով գտաւ՝ հետը 6000
 հոգւով, որոնք ալ չէին ուզեր կռուիլ. ուստի երկու-
 քը մէկտեղ Ցանկաստան փախան, ուր շատերն իրենց

ետեւէն գացին. իսկ նոյն 6000 հոգին, ինչպէս նաեւ
 Գրանտիլուանիայի հիւսիսային կողմերը կեցող 12,000
 հոգւոց գունդը զրուեցան ասգին անգին գացին: Արա-
 տի, Բեդրփարայնի, Մունգաչի բերգերը հեազհետե
 անձնատուր եղան. միայն Գոմսուճի մէջ Գլարգա մէկ
 ու կէս ամիս ալ գիմացաւ, եւ վերջապէս պատուաւոր
 պայմաններով անձնատուր բլլալով (1849, Սեպտ.
 27), կրցաւ ազատութեամբ Անգղիա երթալ: Թե-
 պէս Աւստրիա ու Գրուսաստան պահանջեցին որ Ցաճ-
 կասան ժախչողները ձեռք արուին. բայց Բաւլմերգըն
 չթողուց որ Գուռը զիջանի, ինչպէս ետքէն կը տեսնենք
 (242): — Աս կատարածն ունեցաւ Հունգարացւոց յե-
 դափսխութիւնը, որով իրենց անգղային անկախութիւ-
 նը, սահմանադրութիւնն ու խորհրդանոցը կորոնցու-
 ցին: Անկարելի էր ապաստանեալ ժողովրդեան ձեռքն
 իր սահմանադրական զէնքերը նորէն առալ, զորոնք այն-
 պէս շարաշար գործածած էր իր օրինաւոր վեհապե-
 տին գէժ՝ եւ իր մասնական նպասակին հասնելու հա-
 մար՝ բոլոր տէրութիւնն ալ կործանման վտանգի մէջ
 ձգած էր: Բայց հին սահմանադրութեամբ՝ նաեւ
 մարտի կապերը վերցուելէն զառ, խել մ'ուրիշ հին
 զեղծումներ ու վնասակար կարգադրութիւններ ալ
 ջնջուեցան, որով կարելի եղաւ երկրին հարստութիւն-
 ներն օգտակար կերպով գործածել: Սակայն թէ ար-
 դեգը այնչափ դարերէ վեր սահմանադրական ազատու-
 թեան վարժած ժողովուրդ մը՝ երկայն ժամանակ ա-
 ռանց ձայն հանելու անոր ջնջուելուն պիտի համբերէ,
 անկիայ խիստ տարակուսական կ'երեւայ:

Դ.

իտալիացի յնդագիտօտոյթիւնները եւ Աւստրիական-Մարդիկնիական պատերազմներ (1848—1849):

204. Միլանի ու Վենետիկի յնդագիտօտոյթիւնները: Աւստրիացիք ետ կը քաշուին: Ամպարտեան-Վենետիկի թագաւորութեան՝ Փետրուարի յեղափոխութենէն յառաջ ինչ վիճակի մէջ գտնուիլը յառաջագոյն յիշատակեցիք (173): Նոյն յեղափոխութիւնը Միլանի մէջ հոգիները վերջին աստիճանի գրգռութեան մէջ ձգած էր. մէյ մ'ալ վիէննայի յեղափոխութեան լաւը հասնելով, ալ անկարելի եղաւ բնակիչները հանդարտ բռնել: Գազադի քաղաքացեան եւ ուրիշ քանի մը երեւելի մարդիկ Իտալացոց ազգային երկբաւեան գրօշը բացին, եւ բացակայ եղող փոխաբքայ՝ Ռայներ արքիեպօսն անզակալութիւն ընող Օ'աննէլ կոմսէն պահանջեցին որ Ամպարտացոց բոլոր խնդիրները կատարէ (1848, Մարտ 18): Գիշ մը ետքն ալ նոյն քաղաքացեալ ժողովոյեան բազմութեամբ անզակալին վրայ յարձակեցաւ, զինքը բռնեց, եւ բռնութեամբ իրմէ հրամաններ յափշտակելով, անոնցմով կ'ուզէր զօրաց Ռատեցքի հրամանատարին վրայ ազդեցութիւն ընել: Բայց՝ ինչպէս ինք իրմէ կ'իմացուի՝ Ռատեցքի ուրիշ քանի միտ չգնելով, իր գործքին կը նայէր. եւ որովհետեւ անզակալին բռնուելու ատենը՝ Իտալացիք քաղաքին մէջ քարակոյտներ շինած էին, ինքն ալ զինուորները գուրս հանեց, որով գրեթէ չորս օր փառլոյներու մէջ կ'աւել եղաւ: Վերջապէս հրամանատարը անանկելով, որ զինուորները նոյն նեղ փողոցներուն մէջ պարապ անզ կեանքերնին կը կորսնցընեն, զանոնք քաղաքին մէջէն գուրս հանեց եւ միայն դռներն ու ամրոցը բռնել տուաւ: Եւ մէկ կողմանէ քաղաքը գնդակածել շուղելով, մէկալ կողմանէ ալ անմնելով որ իր 20,000 զօրքով չիկրնար դէմ գնել թէ ապրո-

առաք քաղաքին եւ թէ անոր օգնելու համար իր վրայ յարձակող թշնամի բանակի մը, թող առւաւ ետ քաշուեցաւ (Մարտ 22ին գիշերը)։ Իսկ Աենեգիկի Բաղֆի կառավարն ու Չիչի հրամանատարը, առանց ակննելին գիմադարձութեան, մանաւանդ թէ առանց ատրպղական հարկի, օտարաց հետ դաշինք գնելով, բոլոր բերդերն անոնց յանձնեցին ու զոգրերնին եւ քաշեցին (Մարտ 22)։ Հետզհետեւ թէ Լամպարաֆայի եւ թէ Աենեգիկի բոլոր քաղաքները, բաց ի Մանդալայի ու Բիգլիեթայի ու Աերսնայի բերդերէն, յեղափոխականաց ձեռքն անցան։ Եղն քաղաքներէն ելլող զոգրերը եկան Բաստեղքիին բանակին հետ միացան, որն որ Մինչիոյ ու Ասիմե գետերան մէջակողմ վերջի շեղ երկը բերդերէն ձեւացած երկբանկեան մէջ առ բանալով, միտքը դասեւ եր միայն ինք զինքը պաշտպաւնել։ մինչեւ որ նոր զոգրերով զորանալով՝ կարենայ յարձակողական պատերազմի ձեռք զարնել։

205. Սարգիմիայի կարգուս Աչպերդ թագաւորին ընթացքը։ Մածժինեանց։ Լն արտաքին թշնամին, որուն բանակաւ մը մտանալով՝ գլխաւորաբար պատահաւ եղած էր Բաստեղքիին Միլանին քաջաեղուն, Սարգիմիայի կարգուս Աչպերդ թագաւորն էր։ Ասիկայ ինչպէս աւրիչ անգամ սեւանը՝ իր երիտասարդութեան ազատականութիւնը՝ իմաստարձակագետութեան փոխելէն ետեւ, դարձեալ ժամանակին տիրող հոգիին առիթ առած՝ իտալական ազգայնութեան ու ամբախութեան գրոշակիին բլլալ ուղեց (171), որպէս զի իտալացեաց սերը փաստակերտով, Լամպարանան-Աենեգիկի թագաւորութիւնը եւ գուցէ բովանդակ իտալիա ալ ձեռք անցընէ։ Գառտի առանց Աւստրիայէն թշնամանք մը կրած ըլլալու, իրեն դեմ պատերազմի ելաւ, անմիջապէս զօգրով Լամպարաֆա մտաւ, եւ Աւստրիա յուր թողուցած Միլան քաղաքը՝ ինչպէս նաեւ ուրիշ քանի մը քաղաքները զօգրով բռնեց։ կարգուս Աչպերդ հետը Սարգիմիային 60,000ի բանակ մը կը բեւ-

բեր, որուն հետ միացաւ 8000 ի Լանդարտական դռնը մը. ուստի եւ բաւական զօրաւոր էր Ռուսոնց ջիֆին հետ զարմուկելու, որուն բարձր զօրութիւնը 40,000 ի կը հաւնէր. բայց ինք ավանտին շարժում չէր բնէր, հասարանդարձ կը կենար: Եր յուսար որ Աւստրիացի եւ առանձինն: Մարմաւոց յեղափոխութիւնը մեծնալով, եւ ինք նոյն յեղափոխութեամբ օրրատօրէ աւելի ակարացու: Ա ինննական պաշտօնարանին հետ բանակցելով, կրնայ գիտաւ եւ առանց Ռուսոնց ջիֆին հետ զարմուկելու, իր գիտաւ որութեան հասնիլ: Իր պատերազմի շուրջըսն՝ ուրիշ պատճառ մ'ալ կար: Եր վախնար որ Ռուսոնց ջիֆին հետ զարմուկելով, յաղթող ալ ելլէ նե՛: Իմաստ կը ակարանայ, որով եւ զօրութիւն չ'անենար գե՛մ գնելու Մարծմիտանց, առ իր սուտ բարեկամներուն, որոնք զինքն իր գարծիք բանեցընել, իր դրութիւնը կարել եւ խաւիտ հասարակապետութիւն մը գարծընել կ'ուզէին: Արէկ պետեր թէ ինչ կը նշանակէ առ դառնութիւնը՝ որով ավանտեղ եւ նոյն իսկ իր մայրաքաղաքին մէջ զինքը կը յանդիմանիսն որ անդարձ կը կենայ ու պատերազմի ձեւք չիզարներ: Ապրիլաբարի Լանդարտիայի մէջ բաւական զօրաւոր դռնը մը կ'ունէմ եր. բայց թող աւորը կը զգուշանար բնդ հանրապետ ժողովուրդը զինեղէն, որովհետեւ կը վախնար որ զինեալ բարձրութիւնը պատշաճ սահմանին մէջ չիմնար, եւ իր բանակներուն մէջ առակապետական հոգի կը տարածուի: Ա նմանիկ իր իշխանութեան ասկէ առնելու անպահապար թիւն անենալու. համար՝ նոյն տեղը 2000 հոգի խաբեց, Սարգիսիական նաւատարմիցն ալ նոյն ձեւքը՝ Գրիեատեղի առջեւ գնաց: Բայց պրոպետով ալ Ա նմանիկիք շուրջին իր իշխանութեան ասկէ մտնել, հասար իսկզբան Մանիկի գլխաւորութեամբ կանգնած հասարակապետութիւնին կը պահէին: Նոյն իսկ Միլանցիք առժամանակեայ կառավարութեան մը ասկէ կը կենային. հազեւ երբ որ ետքէն Ռուսոնց ջիֆին յաղթական բնակաւոր կը մտննար, յանձն

առին իրեն հարասակութեան մանել, եւ Միլանի մէջ
 Լոնդարտիային Սարգիսիայի հետ միանալն որոշուեցաւ.
 (1848, Յունիս 8), ան ալ Լորա Մինդոյին (172)
 ջանքովը: Ասանցմէ յայտնի կը տեսնուի թագաւորը որ
 Մածծիներանք ընդհանրապէս իր սուրբ գործածել կ'ու-
 զեն, բայց իր արքունի գաւազանին ասկ միննել յանձն-
 շին առնուր, եւ այնչափ թշուառի են իրեն՝ որչափ
 Աւստրիայի կայսեր եւ կամ՝ որ եւ իցէ վեհապետի:
 Անոր համար ալ ինչպէս ըսինք՝ իրենցմէ կը վախնար
 ու Աւստրիացուց գեմ՝ ճակատ տալէն կը զգուշանար:

206. Հռոմի տէրութեան, Գոսկանայի, Մո-
 տենայի ու Բարմայի մէջ Մածծիներանց ըրածները:
 Իսիոս իրաւացի էր կարողոս Ալլերգիին Մածծիներանց-
 մէ ունեցած առ վախը, որովհետեւ անոնք Իտալիայի
 ամէն կողմերը շարաշար զորանալով, անզ անզ վեհա-
 պետները վախցուցած էին, անզ անզ ալ բռնադա-
 տած էին՝ շարժեն աւելի զիջումներ ընելու եւ ամէն
 բանի մէջ իրենց ուղածին համաձայնելու: — Դատիւն-
 թաց ասորին ու ներկայ ասուոյն սկիզբները Հռոմի
 տէրութեան մէջ պատահած շարժումները՝ մեծ ու
 ազմկալից շփոթութեան մը վտիտում էին: Պիտո Թ-
 աս շփոթութեան՝ յայտնի ապստամբութեան գառ-
 նալուն առջեւն առաւ՝ նոր սահմանադրութեան մը,
 որով Հռոմ աշխարհական պաշտօնարան եւ պատգա-
 մաւարաց սենեակ մը պիտ'որ ունենար (1848, Մարտ
 15): Բայց երբ որ Վիեննայի յեղափոխութեան լուրը
 հոն հասաւ, ալ Հռոմայեցիք իրենք զիրենք բարազին
 կորսնցրնելով, կրցաք զէնք առաւ, եւ Յուրանաց
 զորապետը՝ քահանայապետական բանակաւ, իսկ Ֆեր-
 բարի գնդապետը՝ կամաւոր զորաց մեծ գնդով մը (ա-
 մենք մեկտեղ՝ 17,000 հոգի) Հռոմէն ելան, սկսան
 գեղ ի հիւսիս քալել (Մարտ. 24): Քահանայապետը
 նոյն զօրքերն օրհնեց, բայց ան նպատակաւ որ սահ-
 մաններն երթան՝ քահանայապետական երկիրները
 պաշտպանելու համար. իսկ զօրաց ու իրենց հրամա-

Նաառարներուն միտքն ան էր, որ կարողաւ Ալպերդին զօրաց հետ միանան ու Աւստրիացիներն խաղաղօրէն մերժելու օգնեն: Իրօք ալ Տուրանտոյ՝ քահանայապետին կամքն ու հրամանը բանի տեղ չգնելով, զօրքերը Բոլէն անցուց. որուն վրայ Պիոս Թ. իր ահաճութիւնը յայտնեց, եւ հրապարակաւ բողոքելով որ իր զօրաց հրաման տուած չէ Աւստրիայի գէմ պատերազմի ելլելու, զամէնքը խաղաղութեան յարգորեց (Ապր. 29): Սակայն աւար վրայ Մածծինեանց գրգռութիւնն այնպէս սաստկացաւ, որ Անգոնէլլի կարգինաբը՝ որն որ աշխարհականներէ կողմնուած պաշտօնարանին գահերիցութիւն կ'ընէր, ստիպեցաւ պաշտօնէն ելլել, եւ նոր ռամկապետական պաշտօնարան մը գրուեցաւ քաղաքական ժողովակի մը Մամբանի գլխուն գահերիցութեամբը (Մայ. 3): — Դասկանայի մէջ ալ ըստ ամենայնի Հռոմի հագին կը տիրէր. եւ Լէոբոլտ Բ. մեծ գուքսը, թեպէտ եւ կայսերական ցեղէն (Փերդինանդ կայսեր հօրեղբորսրդին) էր, ամէն կերպ ազատական զիջումներ ընելէն զտա, Աւստրիայի գէմ պատերազմ ալ հրատարակեց, որով նաեւ հանկից՝ Լօթիէ զօրապետին հրամանատարութեան տակ՝ 7000ի բանակ մը Սարդինիացուց օգնութեան գնաց: — Մոսենայի Փրանկիոկոս գուքսը, ինչպէս նաեւ քիչ մը յառաջ՝ ըստ գաշանց՝ Լուզգայի գքսութենէն Բարմայի գքսութեան աստիճանը բարձրացող կարողութեամբ (20, 171), Մարտի մրրիկներուն եւ Մածծինեանց հալածումներուն չկրցան գիմանալ: Երկուքն ալ իրենց երկիրներէն փախան. իսկ իրենց թող տուած իշխանութիւնը Մածծինեանց ձեռքն անցնելով, նոյն տեղերն ալ Սարդինիական պատերազմին մասնակից եղան:

207. Նէապոլտոյ յեղափոխութիւնը: Ընտանութիւնն ալ խաղաղօրէն մեկալ կաղմբուն պէս, մանաւանդ թէ անոնցմէ աւելի գրգռութեան մէջ կը գտնուէր, եւ հոն ամէն տեղէն յառաջ ապստամբութեան գրօշը բացուեցաւ: Սիկիլիացիք տարւոյն սկիզբը

ուրք երան (1848, Յունու. 6), եւ զփրկեք Նեապոլ-
տոյ աղքատներոց հետ կապող կապերը խզելով, իրենք
զիրենք անկախ հրատարակեցին: Ասոր վրայ նոյն իսկ
Նեապոլեցիք ալ քաջալերուելով, զէնք առին, յե-
ղափոխութիւն մը հանեցին, որմէ բռնադատուելով՝
Թադաւորը սահմանադրութիւն մը խոտաւոցաւ եւ քիչ
մը ետքը սուս ալ (Փետր. 10): Ա իէննուցի սւ Լսմ-
պարտեան - Ա նենափկի յեղափոխութիւններէն ետքը
Նեապոլեցիք նորէն առելի գրգռուելով, սահմանա-
դրութեան վրայ սամկապետական յաւելումները եւ
ղան (Ապր. 3), Աւստրիոյի գէմ պատերազմ հրա-
տարակաւեցաւ (Ապր. 7), եւ Բեքէ զօքտաբար 13,000
բանակաւ հիւսիսային կողմէ խառնեցաւ: Եւ Թէպէտ
Թադաւորը՝ կամ Կարոս Արպիպիս Իտալիոյի վրայ
ձեռք բերած իշխանութեան վրայ նախանձեղով, եւ
կամ չուզելով Աւստրիոյի գէմ պատերազմի ելլել,
զօրքին հրամայած էր որ Բոյէն շանցի. բայց այնպիսի
աղմուկոյ ժամանակները՝ հրամայելն սւ հրամանը կա-
տարել առլը, իրարմէ խիտա տարեր բան կ'ըլլայ:
Ուստի եւ Բեքէին զօրքերն ալ անդուշտ Տարախոյիին
զօրքերուն կը հեռուէին, Թէ որ Նեապոլոյ իրօզա-
Թեանց վիճակը չփոխուէր: Ափս մը ետքը Նեապոլոյ
նորնախր սենեակը բացուեցաւ (Մայ. 14) - բայց Մած-
ծիներանք ամենայն ինչ անանկ սահման վրայ ըսած էին,
որ սահմանադրութիւնը բաւական չէր սեզուեր, հա-
պա գահին կործանումը կ'ուզուէր: Ուստի անզոցի
ժողովուրդը Թադաւորին գէմ սուք հանեց (Մայ. 18):
Շուտ մը քաղաքը քարակոյտներով լեցուեցաւ. եւ յե-
ղափոխականները հանգարացնելու համար՝ Թադաւո-
րին ու խորհրդանոցին ըսած ջանքը պարտաքի երթա-
լով, փազոցներու պատերազմ մը սկսաւ, որան մէջ
վերջապէս Թադաւորական զօրքերը եւ առանձինն Հե-
լուեաացի զնգերը յաղթույ եղան: Ասոր վրայ Թա-
դաւորը քաղաքը վինաթափ ըրաւ, սահմանադրու-
թեան վրայ եղած սամկապետական յաւելումները

Չնչկեց, նոր պաշտօնաբան մը գրաւ, գրեթէ ալ ետ կանչեց՝ Սիկիլիացւոց վրայ խաւրելու համար: Եւ թէպէտ անոր զօրաց մեծ մասը ետ դարձաւ, բայց ինք նոյն զօրքին մեկ մասովը ղ ենետիկ գնաց:

208. Բալմերսդընին քաղաքականութիւնը: Լոսթգորտիա Աւստրիայէն բաժնելու ջանքին չյաջողիլը: Կարողաւ Ալպերգ՝ առանց պատերազմելու՝ Լամպարտիայի տիրելու ակնկալութեան մէջ (205) կը հաստատուէր Անգղիայի կառավարութեան եւ առանձինն Բալմերսդընին բռնած ընթացքովը: Նոյն պաշտօնեան, որուն Իտալիայի յեղափոխութեանց վրայ լռեցած ազդեցութիւնն ուրիշ հեղ յիշատակած ենք (172), բոլոր զօրութեամբ կը ջանար՝ ինչպէս Սիկիլիան Նէապոլէն, նոյնպէս Լոնգարանեան-Ղ ենեաական գաւառները Աւստրիայէն հանել: Փերդինանդ կայսեր Ինպրոգ գտնուած ատենը (189), Լորա Բոնասնայի՝ Անգղիայի գեապանը, զինքն անդադար կը տանջէր Բալմերսդընին միջնորդութեան առաջարկութիւններովը, որոնց հիմ կ'առնուէր Լոնգարտիային թող տրուիլը: Կայսերական կառավարութիւնը՝ գտնուած ներդութեան մէջ՝ առ հիմը յանձն առաւ, եւ իրօք ալ նոյն հիման վրայ բանակցութիւնք սկսան ըլլալ, ըստ մասին Լանտան՝ Բալմերսդընի եւ Աւստրիայի գեապանին հետ, ըստ մասին ալ ուղղակի-Յիլանի առժամանակեաց կառավարութեան հետ: Մինչեւ Ռասսեցքիին հրաման խաբուեցաւ որ հանդարտ կենաց եւ պատերազմական գործողութեան ձեռք չչարնէ: Բայց Իտալացիք պատճառեղան որ աս բանակցութիւնք խիստ երկայն տեւելով, վերջապէս իրաց վիճակը բարբառին փոխուեցաւ: Կարողաւ Ալպերգ միայն Լոնգարտիայով գոհ կ'ըլլար, բայց կ'ուզէր Վերոնա ալ առնուլ, զորն որ Աւստրիա յանձն չէր առնար թողալ: Իսկ Մածժինեանը՝ բոլոր Իտալիա եւ միանգամայն Գիբրալթ Իտալական մասը՝ մինչեւ Պրենդէ գետը կ'ուզէին: Թայանք է որ Աւստրիա ամէն կերպով աս պահանջման գէժ գնելու էր, որով բանակցու-

Թիւնք՝ ինչպէս ըսինք՝ երկարեցան, մինչեւ որ Ռատեցքի իր յարձակողական ու յաղթական ընթացքը սկսելով, բանակցութիւնք իրենք իրենցմէ գազարեցան: Սոցյգ է, նոյն իսկ աս պատերազմներուն ատենը՝ կայսրմէ ծերունի սպարապետին հրաման եկաւ զինագտարը ներառ, որուն ետեւէն պիտի գար Բալմերագրին մտայր համեմատ խազադութեան գաշինք. բայց անիկայ աս հրամանին գէժ գրաւ. եւ Շուարցենպէրի իշխանը թըղթով մը կայսեր խաւրեց, ինք զինքն արգարացրնելու եւ կայսեր ազաչելու համար որ քաջասրտութիւնը չկորսնցնէ: Իրոյց աս ընթացքը բռնելուն վրայ քիչ ազդեցութիւն չունեցաւ Գազգիա ալ: Լամարգին զՄածծինի մերժեց, որն որ Փարիզ գացած էր՝ նորահասուտատ հասարակապետութեան օգնութիւնը խնդրելու (Մարտ 22), որով Գազգիայի հին քաղաքականութեան հաւատարիմ մնաց, որն որ Սարգինիայի մեծնալը չուզեր: Իրեն հետեւեցաւ ետքէն Գաւենեագ ալ:

209. Աւստրիացիք Աննետիկի գաւառին կը տիրեն: Սարգինիացիք Այիգայի ծակատը կը վաստդին ու Բեպրիերա կը մտնեն: Ինչպէս յառաջագոյն ըսինք, Ռատեցքի իր զօրքերը բերդերը քաշած՝ նոր զօրքերու կը սպասէր (204): Նոյն միջոցին միայն Այիգայի քով յառաջագահներու ընդհարում մ'եղաւ (Ապր. 7): Անկէ ամիս մը ետքը Նիւժեան սպարապետը 13,000ի գնդով մը Իզնիցոյէն յառաջանալով, եւ Ռատինէ ու Պելլուռնոյ քաղաքներն առնելով (Մայ. 5), Կարորոս Ալպերդ իր անգործութենէն ելաւ, Ռատեցքիին Բեպրիերա պաշտպանող յառաջապահ գունդը մերժեց (Ապր. 30). բայց Սանգա Լուչիայի վրայ ըրած ընդհանուր յարձակումը՝ արիւնալից կռուէ մը ետքը՝ ետ մղուեցաւ (Մայ. 6): Նիւժեանին գունդը Թուն կոմսին տակ պարտապատեղ վիչենցառ առնելու աշխատեցին ետեւ, եկաւ Ռատեցքիին հետ Աերոնայի առջևը միացաւ (Մայ. 25): Ասոր վրայ նոյն սպարապետը սկընաւ: գէպ ի Մանգուս քալել (Մայ. 29), որպէս զի

Բեռքիերա պաշար խոթէ: Նոյն օրը Գուրգազանէի քով
 Լօժիկի դասկանական գունդը (206) խորտակեց. բայց
 հետեւեալ օրը Աշիգօշի քով տուած արիւնալից ճա-
 կատամարտը՝ իրեն համար անյաջող ելք ունենալով,
 ստիպեցաւ ետ դառնալ: Ասով Բեռքիերայի պահակա-
 պան զօրքը՝ անօթութենէ բռնագտառուած՝ նոյն բերդը
 Սարգիսիֆացւոց ձեռքը տուաւ, ազատութեամբ ելլելու
 երթալու պայմանաւ (Մայ. 30): Արովհետեւ Արարուս
 Ալպերգ անկէ ետեւ Ա Երոնայի կռնակէն Աւստրիացւոց
 կռնակը կրնար կտրել, Ռատեցքի միտքը գրաւ՝ անոր
 վրայ յարձակում չըրած՝ Ա իշենցա տունու եւ բոլոր
 հիւսիսային արեւելեան կողմերը՝ մինչեւ Ա Ենեաթի՝
 Թնամիններէ մտքբել: Տուրանայ (206) Ա իշենցայի
 մէջ ինք զինքն աղէկ կը բռնէր, բայց ստիպեցաւ քա-
 զաքն Աւստրիացւոց յանձնել (Յունիս 11), եւ ինք
 ազատութեամբ գուրս ելաւ: Թեպէտ Արարուս Ալպերգ
 ալ պատերազմի տարեգրութեանց մէջ նշանաւոր եղող
 Ռիփուլին բռնեց, որով Ա Երոնային՝ հարաւային Դիրալի
 հետ ունեցած հազարակցութեան ճամբան կը կտրէր.
 բայց Ռատեցքիին հոգը չեղաւ, վասն զի արգէն ուրիշ
 կողմերէն հազարակցեալու ճամբայ ունէր: Նոյն միջոցին
 Պաստանայի վրայէն՝ Ա Ելտէն զորապետին հրամանատա-
 րութեամբը՝ 12,000 ինոր գունդ մ'ալ գալով. Բատուա
 ու Դրեւիդոց քաղաքներն առաւ, որով Ռատեցքիին գի-
 տաւորութիւնը զլուխ ելլելով, կրցաւ ազատութեամբ
 իր յարձակողական գործողութեանց ձեռք զարնել:

Ձ10. Գուսդոցցայի յաղթութիւնը: Սարգի-
 նիացիք ետ կը քաշուին: Ջինագադար: Բեռքիերա
 ձեռք անցրնելէն ետեւ՝ Արարուս Ալպերգ իր բոլոր ու-
 շագրութիւնը Մանգուայի վրայ գարձուց, որուն համար
 իր բանակէն 40,000 ի չափ մարդ գէպ ի նոյն բերդը
 յառաջացուց: Բայց ասով Սամնագամբանեայի բարձրու-
 թեանց վրայ շինել տուած ամրութիւնները պահպա-
 նելու համար խիստ քիչ մարդ մնաց: Արգ Ռատեցքի
 մերկալից գիշեր մը Ա Երոնայէն ելլելով, առտուանց նոյն

ամբողջութիւններուն վրայ յարձակեցաւ, զորանք՝ հոն թեղ արուած Սոնաղ զօրապետը քիչ մ'ատեն պաշտպանելէն ետեւ՝ կորսնցուց (Յուլ. 23)։ Սպարապետը հոն քիչ մը զօրք ձգելով, գեպ ի Մինչեղ սկսաւ քալել. բայց աս անգամ ալ իր հոն թողուցած զօրքը՝ Մանգուայի կողմէն ետ գարձող Սարգիսիացիներէն յաղթուեցաւ ու մերժուեցաւ։ Հետեւեալ օրը Գուսգոցայի քով երկու գլխաւօր բանակներն իրարու հետ զարնուեցան, եւ բոլոր օրը երկու կազմանէ ալ արտաքս կարգի սաստկութեամբ ու քաջութեամբ կռուեցան. բայց Սարգիսիացիք վերջապէս տեղի տուին (Յուլ. 25)։ Թագաւորն ուզեց Առլդայի քով հեղ մ'ալ պարտերազմի բախտը փորձել, բայց դարձեալ արհեսալեց կռուէ մը ետքը՝ աս իր վերջին զինքն ալ պարտաւորեցաւ թողուլ, որով իր պարտութիւնը կատարեալ եղաւ (Յուլ. 27)։ Աս վիճակին մէջ զինագաղարի առաջարկութիւն ըրաւ. բայց որովհետեւ Ռատեցքի կ'ուզէր իր յաղթական ընթացքը մինչեւ Միլան յառաջ տանիլ, անոր համար առաջարկութիւնը մերժեց։ Լոմպարտիայի մայրաքաղաքին առջեւը՝ ուր որ իր պարտութենէն ետքը քաշուած էր կարոյս Ալպերդ, երկու բանակները վերջին անգամ իրարու հետ զարնուեցան (Օգոստ. 5). եւ հոն ալ դարձեալ թագաւորը յաղթուեցաւ։ Աս իր պարտութիւնը քիչ մնաց իր կենսոյր կորստեան պատճառ կ'ըլլար. զիշէրը խաժամուժք շորս կողմը պաշարելով, զինքը կ'ուզէր մեռցնել՝ իբր թէ զիրենք մատնած ըլլայ. հազիւ իր զօրքերը կտրմ զինքը կատղած. բազմութեան ձեռքէն արձատել։ Խսկ սպարապետը թող տալէն ետեւ որ թագաւորն ազատութեամբ ելէ երթայ, իր յաղթող զօրքովը Միլան մտաւ։ Երէք օր վերջն ալ զինագաղարի դարչիքի մը ստորագրեց (Օգոստ. 9), որով կարոյս Ալպերդ յանձն կ'առնուր իր դեպհակոն սահմանները քաշուիլ, Բեպքերա եպտալ եւ իր զօրքերը Աննտիկէն հանել։ — Աս կերպով Աւստրիացիք նորէն ձեռք անցուցին բոլոր Լոմպար-

տեան - վենետիկի թագաւորութիւնը, բայց ի վենետիկ քաղաքէն, զորն ուր Ռատեցքի ցամաքի կողմանէ պաշարել տուաւ: Իրենց Միլան մանելովը՝ Բարսելոյի ու Մոսկոնայի դքսերը կրցան տեղերծին գառնալ եւ կորսւնցուցած իշխանութիւննին ձեռք անցրին:

Յ11. Երկրորդ Սարդինիական - Աւստրիական պատերազմ: Մորդարայի ու Նոզարայի ծակատները: Կարողոս Ալպերդ կը հրատարի: Արկտոր Էմիլանդէլ, զիժաղաղար, թաղաղութեան ղաշինք: Բայց Սարդինիական - Աւստրիական պատերազմն ասով լմնցած չէր: Կարողոս Ալպերդ ժողովրդէն արհամարհուելով եւ Մաժժինեաններէն գրգռուելով, սրտնք պաշտօնարան մտած եւ խորհրդանոցին վրայ ալ մեծ ազդեցութիւն տաացած էին, միանգամայն հասարակապետականներ: րուն կողմէն իր թագին համար վախնաղով, յուսահատական որոշում մ'ըրաւ՝ մէյ մ'ալ պատերազմի ելլելու: Ժամանակն իրեն խիստ յարմար կ'երեւար, որովհետեւ Աւստրիացիք նոյն անոնն Հունգարիա բաւական գործք ունէին (199): Ռատի Գալութեանց հետ խորհրդակցելէն ետեւ, խոհեմագոյն անձանց խորհրդոյն դէմ, Բալմերուդինին կարծեացը համեմատ, Աւստրիայի դէմ նորէն պատերազմ բացաւ (1849, Մարտ 16): Անմիջապէս 80—90,000ի Սարդինիական բանակ մը Գրժանովիքի Լեհ զօրապետին հրամանատարութեամբը՝ Լոմբարդիոյի սահմանն անցաւ: Բայց թշնամին Միլանի վրայ քալած տտեն, Ռատեցքի 60—70,000 հազարով նոյն քաղաքէն ելաւ (Մարտ 18) եւ սկսաւ դէպ ի Լոտի յառաջանալ, որպէս զի Սարդինիացւոց ձախ կողման վրայ իյնայ, ուր որ Գրժանովիքի կը կարծէր թէ ունիկայ Ատտայի վրայէն ետ կը քաշուի: Նոյն զօրապետն իր խաբուիլն տն առնն իմացաւ, երբ որ Ռատեցքի Բաւիայի քով Գիլինոյէն անցնելով ու Բինմինդէ մտնելով, Մորդարայի քով օսատիկ յարձակում ըրաւ շարժման մէջ ըլլող Սարդինիական բանակին վրայ, որով նոյն քաղաքն տուաւ եւ Սարդինիացիները փախ-

ցուց (Մարտ 21) : Հազիւ երկու օր վերջը կրցան Սարգինիացիք իրենց բոլոր զօրքերը Նովարայի քով ժողվել եւ նպաստաւոր գիրք մը բռնել : Նոյն տեղը սաստիկ արիւնալից ճակատ մը տրուեցաւ (Մարտ 23) . որուն ակիղբը Տ'Ասբեր 15,000 Աւստրիացիներով՝ հինգ ժամ 80,000 Սարգինիացւոց դէմ դբաւ , եւ ետքէն հետզհետէ ուրիշ գնդեր ալ հասնելով , առաջինները մեծ յաղթութիւն բրին : Սարգինիացիք փախչելով՝ Նովարա մտան . բայց հոն իրենց յետագարձութեան դժէն կարուած էին եւ պաշար ալ չունէին : — Ալ անիկ ետեւ կարորաւ Ալպերդ իր բախտէն յուսահատելով , թագէն հրաժարեցաւ , եւ անմիջապէս դէպ ի Բոքոուկալ ճամբայ ելաւ : Իր երէց որդին ու յաջորդը Ալիատոր Էմմանուէլ աճապարեց յաղթող սպարապետին գնաց՝ զինազաղարի դաշինք դրաւ (Մարտ 26) : Պայմաններն ան էին՝ որ մինչեւ որոշ խաղաղութեան դաշինք դրուիլը , Սարգինիայի ուսհմանագլուխներուն մէկ փոքր մասն Աւստրիացի զօրքերով բռնուի , որոնք միանգամայն Աղէքսանդրիայի բերդը Սարգինիացիներուն հետ պիտի պահէին : Արնայ ըստիլ որ երբեք պատերազմ այսչափ շուտով սկսած եւ այնպէս շուտով լմնցած չէր . ծերունի տգարապետը Միլանէն ելածին տասներորդ օրը՝ դարձեալ նոյն քաղաքը դարձած էր (Մարտ 28) : Նոր թագաւորին ըրած զինազաղարին պայմանները բոլոր Սարգինիայի մէջ անանկ տհաճութիւն պատճառեց , որ պատգամաւորաց սենեակը շուզեց նոյնը հաստատել , իսկ Ճենուա յեղափոխութիւն մը փրթաւ : Հազիւ սենեակը լուծուելէն եւ յեղափոխութիւնը զինուք զսպուելէն ետքը ժողովուրդը գլուխ ծռեց : Նոր սենեակը վերջէն հատուտեց Աւստրիայի ու Սարգինիայի մէջ դբուած որոշ խաղաղութեան դաշինքը (Օգոստ . 6) , որով երկու տերութեանց մէջ ամէն բան առաջին վիճակը կը դառնար , միայն Սարգինիա 75 միլիոն պատերազմի ծախք պիտի վճարէր : — Աւստրիայի բանակին կռնակը Պրեշիայի մէջ յեղափոխութիւն մը փրթաւ , զորն որ Հայնաւ զօրապետը

զուգեց, գնդակոծութեամբ ու յարձակմամբ քաղաքն առնելէն, եւ փողոցներու զարհուրելի կռուոյ մը մէջ ապստամբները յաղթեցին ետեւ, զիրենք շարաշար խառութեամբ պատժեց (Ապր. 1—4):

Ձ12. Սիկիլիայի զսպուիւր: Իւարմերսուրն Լորտ Մինգոյին ձեռքովն ամէն կերպով կը շունար սր Աիկիլիա կղզին Նէապոլսէն բաժնուած մնայ: Աս նպատակաւ յիշեալ քաղաքագէտը Սիկիլիացոց հասկըցուց որ Եւրոպական տէրութիւնք իրենց անկախութեան առելի դիւրաւ կը հաւանին, թէ որ հասարակապետութիւնը մէկգի ձգեն ու թագաւոր մը գնեն. եւ առ իշխանութեան համար՝ Վարոլոս Ալպերդին երկրորդ սրգին առաջարկեց, զորն սր իրօք ալ Բալերմոյի խորհրդանոցը թագաւոր ընտրեց (1848, Յուլ. 11): Բայց առով Սիկիլիայի բախար շէր կրնար որոշուած սեպտեմբ: Վասն զի թէպէտ Անգղիական նաւատորմիզ մը Բարքերի հրամանատարութեամբ Նէապոլոյ առջեւն եկաւ, Սիկիլիացոց հոգի տալու եւ թագաւորն իրենց դէմ արշաւանք ընելէն ետ կեցընելու համար. սակայն նոյն վեհապետն իր իրաւանց վրայ ժողտահելով, Նէապոլոյ երկիրներուն մէջ հանդարտութիւնը հաստատելէն ետեւ, Աիկիլիայի վրայ Ֆիլանճերի զօրապետին հրամանատարութեամբը բանակ մը խաւրեց (Օգոստ.), որուն Բարքեր չհամարձակեցաւ բռնութեամբ դէմ գնել, թէ յայտնի հրաման չունենալուն եւ թէ ուրիշ տէրութիւններն եւ առանձինն գրաղջիա չվշտացրնելու համար: Նէապոլսեցոց բանակը Մեսսինայի առջեւը ցամաք ելաւ, եւ ստասիկ գնդակոծութենէ ու արիւնակից կռուէ մը ետքը՝ նոյն քաղաքին աիբեց (Սեպտ. 7): Անկէ վերջը Անգղիայի ու Գաղղիայի միջնորդութեամբ զինագաղտը եղաւ, որուն ատենը կղզւոյն արեւելեան կողմը՝ Մեսսինայի հետ՝ Նէապոլոյ թագաւորին իշխանութեան տակ մնաց, իսկ արեւմտեան գին՝ Բալերմոյ ու Աիրակուսա ու Գագանիա քաղաքներով՝ Ռուճճերոյ Սեգրիմոյի դահերիցութեան տակ

եղող Արկիլիացւոց առժամանակեայ կառավարութեանն կ'առաջնորդուէր: Բայց սրովհետեւ Բալերմոյի խորհրդանոցը թագաւորին ըրած զիջումներով գոհ չէր ըլլար, անոր համար զինադադարը վերջացած հրատարակուեցաւ (1849, Մարտ 19) եւ պատերազմը նորէն սկսաւ: Արկիլիացիք Միերոզլաւքի Լեհին (218) հրամանատարութեամբն իրենք զիրենք անյաղթ կը կարծէին. բայց Նէապոլեոնոց քիչ ատեն բաւական եղաւ զանոնք Գագանէա քաղաքէն փախցընելու, եւ նոյն քաղաքին տիրելէն ետեւ՝ Արաւիկոսոյի վրայէն Բալերմոյ հասնելու: Միերոզլաւքի Արկիլիացւոց տկարութիւնը տեսնելով եւ փախչողները ժողովելու ջանքը պարապի երթալով, կզգին հեռացած էր. նոյնպէս մայրաքաղաքին մէջի յեղափոխականաց գլխաւորները թող տուած գացած էին: Այսպէսով խաժամուժը փոքր գիմնագարձութիւն մ'ընելէն ետեւ, անձնատուր եղաւ. եւ Ֆիլանձերի ներս մտնելով (Մայ. 15), նորէն Նէապոլսոյ Պաւլոնեանց իշխանութեան տակ խոթեց Արկիլիա կզգին, որն որ տարի մը ինք զինքն իբրեւ անկախ հասարակապետութիւն նկատած էր:

213. Հռոմի յեղափոխութիւնը: Ռոսսիի սպանուիլն ու քահանայապետին փախչիլը: Ընդհանուր Իտալական սահմանադիր ժողով: Հռոմ՝ եւ Գոսկանա հասարակապետութիւն կ'ըլլան: Վահանայապետը ստիպուած էր թող տալ որ Մամիանիի գահերիցութեան տակ եղող պաշտօնարանն (206) ամէն բան ուզածին պէս կարգադրէ: Հազիւ Գուադոյցայի ճակատէն ետքը (210) սկսաւ փորձ փորձել իր իշխանութիւնը տէրութեան մէջ հաստատելու: Աս նկատմամբ իր խորհրդականն էր Գարրաթայի Ռոսսի փաստաբանը, որն որ յառաջագոյն Հռոմի մէջ Լադովիկոս Փիլիպպոսին գեսպանն եղած էր, եւ զսրն որ քահանայապետը վերջապէս պաշտօնէից գահերէց ըրաւ: Բայց նոր պաշտօնեան՝ օրէ օր աճող անիշխանութեան գեմ ազգումիջոցներ բանեցընելով, առակապետականաց ատելու-

Թեան անակ ինկաւ, որոնք խորհրդանոցին բացուելու օրը նոյնին ժողովարանին սանդղին վրայ զինքը դաշունով զարկին մեռցուցին (1848, Նոյ. 15)։ Ասոր վրայ խաթամուժը Կուրիթեանն պալատին վրայ յարձակեցաւ, քահանայապետին անձնական քարտուղարը մեռցուց, եւ զինքը ստիպեց դարձեալ զՄամբրանի պաշտօնէից գահերէց դնելու եւ Հերուետացի զօրքերը մերժելու։ Ան ատենէն ռամկապետականք ու խաթամուժն ու զաճնին կ'ընէին. իսկ քահանայապետն իր հպատակաց ձեռքը գերիի պէս էր։ Բայց շատ չանցաւ՝ Պաւլիբերայի ու Գաղղիայի դեռուպաններուն օգնութեամբը զիշերանց վախաւ (Նոյ. 25), Նէպոլոնոյ Կայերա քաղաքը գնաց, ուր նոր պաշտօնարան մը անուանեց եւ Հոսմի մէջ եւ զաճներուն դէմ բողոք ըրաւ։ Իսկ ռամկապետական խորհրդանոցը՝ իր ազատութիւնը գաւաճի պէս՝ քահանայապետն իշխանութենէ ինկած հրատարակեց, եւ հասարակածպետութիւն մը հաստատեց, որուն առաջնորդելու համար՝ Կալեգգի, Գորսինի ու Գամբրադա եռապետաց գլխաւորութեամբը՝ առժամանակեայ կառավարութիւն մը դրաւ։ — Մածծիհեանք Հոսմի մէջ այսպէս գլխաւոր իշխանութիւնը յափշտակելէն ետեւ, ուզեցին ձեռք զարնել իրենց գաղափարները բոլոր ընդարձակութեամբ կլուխ հանելու, որ էր՝ բովանդակ իտալիա միացընել եւ միակ իտալիական հասարակապետութիւն մը կանգնել։ Աս նպատակին հասնելու համար՝ հետեւեալ տարւոյն սկիզբները Հոսմի մէջ իտալիայի ընդհանուր սահմանագիր ժողովք մը գումարեցին (1849, Փետր. 5), որուն իտալիայի շատ կողմերէն պատգամաւորներ խաւրուած էին։ Հոն եկած էր նաեւ Մածծիհի, որպէս զի ամէն բանին ուզածին պէս առաջնորդէ։ Նոյն ժողովոյն առաջին գործքերէն մէկն եղաւ քահանայապետին աշխարհական իշխանութեան վերջանալն ու Հոսմիական հասարակապետութեան հաստատուիլը վճռել. որոշելով միանգամայն որ բոլոր իտալիային՝ միակ ռամկապետական հասարակածպետու-

Թեան մը դառնալուն ամենայն զօրութեամբ աշխատուի: Իրենց աս ջանքին առաջին պտուղը նախ Գոսկանայի մէջ քաղեցին: Հոն մեծ դուքսն արդէն շատոնց ստիպուած էր կուերացցիի գահերիցութեամբ ռամկապետական պաշտօնարան մը դնել, որն որ վերջապէս զնոյն մեծ դուքսը փախչելու ստիպեց (Փետր. 17): Անկէ ետքը կուերացցի հասարակապետութիւն հրատարակեց եւ ինք հրամանապետ եղաւ:

214. Աւստրիացւոց ու Գաղղիացւոց միջամտութեամբը հասարակապետականք կը մերժուին: Ասոնցմով Մածծինեանք օրրատօրէ աւելի կը զօրանային, եւ կամաց կամաց ահակալութեան կառավարութիւն մը կը սկսէին. բայց բարեբախտութեամբ իրենց իշխանութիւնը երկարատեւ չեղաւ: Արդէն Հռոմի մէջ եղող ռամկապետականներէն զատ, երկրորդ Սարգինիական - Աւստրիական պատերազմին՝ Իտալացւոց համար անպաշտք ելք ունենալովը (211), խել մը փախստականք հոն դիմեցին, որով նոյն քաղաքին մէջ յեղափոխական գրգռութիւնը խիստ սաստկացաւ: Մածծինեանք կ'ուզէին Հռոմի տէրութիւնը՝ իբրեւ իրենց ըմբռնած ազատութեան վերջին ապաստանարանը՝ բայտր զօրութեամբ պաշտպանել, եւ իրենց ապագայ գործողութեանց միջակէտ ընել: Իրենց ձեռքին տակ բաւական զօրք ու ազատ գնդեր կային, եւ յեղափոխական տհակալութիւն մը ամէն հարկաւոր նիւթերը հոգալու փոյթ կը տանէր: Յեղափոխականաց այսպէս Հռոմի մէջ ժողվուիլը՝ յորդորեց ուղղափառ տէրութիւնները, որոնցմէ քահանայապետն արդէն յտուալագոյն օգնութիւն խնդրած էր, որ զինեալ միջամտութիւն ընեն: Աւստրիական գունդ մը Տ'Ասքըրը զօրապետին հրամանատարութեամբը Բարմա մտաւ (1849, Ապր. 4), եւ Փլորենտիայի մէջ ելլող հակառակ յեղափոխութեամբ մը՝ կուերացցի փախչելու ստիպուելէն ետեւ (Ապր. 11), Լիվոռնայի յեղափոխականք ստակաւին տեղի տալ չուզելով, նոյն զօրապետը յիշեալ

քաղաքը յարձակմամբ առաւ (Մայ. 11)։ Ուրիշ Աւստրիական գունդ մը վիմախիտ հրամանատարութեան տակ՝ զնդակածելով Պոլսնեայի ամրոց (Մայ. 16), եւ Անգոնա բերդաքաղաքն անձնատուր ըլլալու ստիպեց (Յունիս 18)։ Մէկալ կողմանէ Նէապոլսեցիք հարաւէն Հռոմի տէրութեան սահմանները մտան, նոյնպէս Գաղղիական բանակ մը՝ Ուտինոյ զօրապետին հրամանատարութեամբը՝ նաւով Չիվիդա վեքքիա եկաւ (Ապր. 25) եւ Հռոմի վրայ քալեց։ Ան վերջիններուն նոյն մայրաքաղաքին վրայ բռած առաջին յարձակումը շրջողեցաւ։ Ուտինոյ՝ աղէկ գիրք բռնած եւ թնդանօթներով ճարտարութեամբ պաշտպանուած Հռոմայեցւոց հետ պատերազմելէն ետեւ, ստիպեցաւ մեծ կորստով դէպ ի ծով քաշուիլ եւ հոն նոր զօրքերու սպասել։ Եւսպետք իրենց թշնամիները բաժնելու համար՝ Գաղղիացւոց հետ բանակցութեան սկսան եւ ութ օրուան զինագողար ըրին, զորն որ Աարիպալաի իր օգտին գործածելով, Նէապոլսեցիները Պելլեդրիի քով զարկաւ, սահմաններէն անգին անցուց (Մայ. 19)։ Իսկ Ուտինոյ բաւական զօրանալէն ետեւ, նորէն սկսաւ պատերազմիլ. բայց աս հեղ ալ սաստիկ գիմագարձութեան պատահելով, հազիւ բազմօրեայ արիւնալից կռիւներէ ու յարձակումներէ ետեւ՝ դաշինքով կրցաւ քաղաքը ձեռք անցընել (Յուլ. 4)։ Անմիջապէս քարակոյտները վերցուեցան, առժամանակեայ կառավարութիւնը լուծուեցաւ, եւ նոր կառավարութիւն մը գրուեցաւ քահանայապետին անուամբը, որն որ գրեթէ տարիէ մը ետքը իր մայրաքաղաքը դարձաւ (1850, Ապր.)։ Իսկ Գոսկանայի մեծ դուքսը՝ Հռոմի առնուելէն քանի մը շաբաթ ետքը՝ իր տեղը դարձաւ (1849, Յուլ. 29)։

215. Վենետիկի իյնալը։ Այսպէս Իտալիայի ամէն կողմերը յեղափոխականը յաղթուած էին, ամէն տեղ օրինաւոր վեհապետաց իշխանութիւնը հաստատուած եւ հանդարտութիւնն ու կարգաւորութիւնը կամաց կամաց տիրելու սկսած էր։ Այլ մնար միայն վե-

նետիկ քաղաքը, որն որ ծովու մէջ անկցած ամուր
 դիրքովը գրեթէ տարիէ մը վեր Աւստրիացւոց բուլք
 ջանքին դէմ կը դնէր. մանաւանդ որ քիչ մը ժամա-
 նակ ալ օգնութիւն գտած էր Սարգիսիական նաւա-
 տորմէն, զորն սր մերժելու համար Աւստրիական նաւա-
 տորմիղը բուսական զօրութիւն չունէր: Բայց պաշար-
 ման ժամանակը Մանին փաստաբանը իբրեւ հրամանա-
 պետ կը տիրէր՝ աս հին երեւելի հասարակապետու-
 թեան մը յիշատակու պանծացող հասարակապետա-
 կան առաջօք տեսիլքին, որն սր Միլանի պէս (205)
 ինք զինքը քանի մ'որ կարողու Ալպերգին իշխանու-
 թեան տակ ձգելէն ետեւ (1848, Յուլ. 4), նոյն վե-
 հապետին յաղթուելովը՝ դարձեալ իր ինքնակացու-
 թեան դարձած էր (Յուլ. 10) միշտ իր հրամանապե-
 տին տակ: Քաղաքին մէջ՝ զէնք առնող տեղացիներէն
 զատ՝ խել մ'օտար ազատ գնդեր ալ կային, որոնց մեծ
 մասը՝ Բերէ Նէպոլոնեցի զօրապետին բերածներն էր
 (207): Աննետիկ քաղաքը քիչ մը յառաջ երկա-
 թուղոց գեղեցիկ կամրջով մը ցամաք երկրին հետ կա-
 պուած էր, բայց նոյն կամուրջը զօրաւոր Մարիբա
 բերգով պաշտպանուած էր: Հազիւ ամիսներով ար-
 տաքոյ կարգի աշխատելով եւ մեծ կորուստներ բնելով՝
 կրցան Աւստրիացիք աս ծանրակշիռ դիրքը բռնել՝ բայց
 նոյնը աւերակ դարձրնելէն ետեւ (1849, Մայ. 27):
 Սակայն անով ալ ամէն բան լմբնցած չէր. իրօք ալ
 անկէ ետքը տակաւին երեք ամիս աշխատեցան, մինչեւ
 որ քաղաքը վերջապէս՝ մէկ կողմանէ ռմբակածութեամբ
 եւ մէկալ կողմանէ սովով՝ ստիպեցաւ անձնատուր ը-
 լլալ (Օգոստ. 22): Նոյն ատեն դրուած դաշնադրու-
 թեամբ գրսեցի ազատ գնդերը, ինչպէս նաեւ Մանին
 եւ ուրիշ գլխաւոր յեղափոխականներէն քառասուն
 հոգի, ազատութեամբ դուրս ելլելու հրաման ընդու-
 նեցան: Եղած հաշիւներուն նայելով, աս պաշարման
 ատենը Աւստրիացիք 20,000 հոգի կորսընցուցած էին,
 գլխաւորաբար ճախիններէն պատճառած անեղով, ին-

չաւ որ զինուորներն՝ իրենց գործողութեան մեծ մասը՝ մինչեւ ծնկաւթնին եւ շատ հեղ մինչեւ կէս մէջք ջրի մէջ կենալով՝ կը գործէին :

Ե.

Գերմանիայի յնդաիտիոսթիսնները եւ Գերմանու-
կան-Դանիական պատերազմը (1848—1851):

216. Գերմանական տէրութեանց ազատական կերպարանափոխութիւնը: Պաւիերայի թագաւորը կը հրաժարի: Փետրուարի յեղափոխութեան լուրը Գերմանիա ստարածուելուն պէս, ոգիներն արդէն յառաջունէ պատրաստուած ըլլալով, գրեթէ ամէն տեղ միանգամայն ժողովուրդը ոտք ելան, սկսան քաղաքական ազատութիւններ պահանջել. կառավարութիւնը ալ չկրնալով դէմ դնել, առանց մեծ դիմադարձութեան՝ ամէն ուզուածին զիջան: Ամէն տէրութեանց մէջ մամլոյ ազատութիւնը, պաշտօնէից պատասխանատու ըլլալը, բոլոր քաղաքացւոց օրինաց առջնը հաւասար սեւուելը, ժողովրդեան՝ իբրեւ ազգային պահպան կամ քաղաքացի զօրք՝ զէնք առնուլը, հաստատուեցաւ: Կարգաժողովներուն մէջ եղող չափուորութիւնները վերցան, ընտրութեան օրէնքներն ազատական ու ընդարձակ հիմանց վրայ հիմնուեցան, առատապետական ծանրաբեռնութիւնները ջնջուեցան: Թէ կարգաժողովներէն եւ թէ պաշտօնարաններէն՝ ժողովրդեան սիրելի չեղող անձինք ստիպուեցան ետ քաշուիլ. եւ մինչեւ նոյն ատեն դիմադրականաց գլուխ եղող կամ իբրեւ շարժողանց ազատական կառավարութիւններէն հալածուող մարդիկ՝ պաշտօնարաններու գլուխ կամ անդամ եղան: Վեհապետք եւ արեւապետապետք առ վերջիններուն բազումները նետուեցան, որպէս զի անոնց օգնութեամբը կարենան իրենք զիրենք պաշտպանել ամէն կողմ կազմուող ռամկապետական

կողմնակցութիւններէն, որոնք սահմանադրական միապետութեամբ գոհ չըլլալով, հասարակապետութիւն կանգնել կ'ուզէին, եւ ժողովրդեան ազմակներ յարուցանելով, աւեր ու ապականութիւն պատճառելով, իրենց նպատակին հասնելու կը ջանային: Աս յեղափոխութիւնք Պատրի մեծ դքսութենէն սկսան եւ հետզհետէ ուրիշ կողմեր անցան. եւ եթէ տեղ տեղ հանդարտութեամբ կամ փոքր աղմկով լմնցան նէ, տեղ տեղ ալ մեծ շփոթութիւններ պատճառեցին, քանի մը տեղեր ալ բաւական արիւն թափուեցաւ, ժանաւանդան տեղերը՝ ուր գեղացիք տակաւին իրենց վրայ մտացած աւատային ծանրարեւոյթութիւններէ ազատելու համար սոք ելան (1848, Փետր. 27 — Մարտ): Ամենէն առելի մեծ շփոթութիւնք Պաւլերայի Միւնիք մայրաքաղաքը պատահեցան, որոնք Լուգովիցո թագաւորին (176) հրատարելովն ու տեղը իր Մաքսիմիլիան Բ. որդւոյն անցնելովը լմնցան (Մարտ 20): Իսկ Պրուշի թագաւորը՝ թէպէտ իսկզբան ամէն ազատական պահանջմանց դէմ գնելէն ետեւ, վերջապէս տեղի տուաւ (Մարտ 17). բայց ժողովուրդն ընդունածովը գոհ չըլլալով, առելի մեծ պահանջումներ կ'ընէր, որմէ Պերլինի մէջ սաստիկ յեղափոխութիւն եւ 15—20 ժամաւ արիւնալից կռիւ մը բրգաւ (Մարտ 18—19): Ասով թագաւորը ստիպուեցաւ պաշտօնեաները փոխել, զինուորները ետ քաշել տալ եւ մայրաքաղաքին ու պալատին պահպանութիւնը զինեալ քաղաքացւոց յանձնել:

217. Գերմանական գաշնակցութեան նախախորհրդանոցն ու անոր որոշումները: Ժողովրդեան պահանջած փոփոխութիւններուն մէջ զլիաւորներէն մէկն էր՝ Գերմանիայի ընդհանուր խորհրդանոց մը գումարել եւ վերին գլուխ մը գնել: Աս նպատակաւ խել մը ազատականը Հայտելյակրկ ժողովք մը գումարելով (Մարտ 8), բոլոր Գերմանացիները մեծագոյն պատրաստողական խորհրդանոցի¹ մը հրաւիրեցին, որպէս զի

¹ Boparliament = Նախախորհրդանոց:

նոյնին միջոցով՝ բաղձացուած ընդհանուր խորհրդանոցը կամ ազգային ժողովը կազմուի: Ինչպէս որ առանձին կառավարութիւնք իրենց ժողովրդոց պահանջումներուն զիջած էին, նոյնպէս Ֆրանգֆուրդի դաշնակցութեան ժողովն ալ սկսաւ շուտ մը զիջողութիւններ ընել. քանի մ'ազատական որոշումներ ընելէն եւ Գերմանիայի հին կայսրութեան արժուեանն ու երեքգունեան գրոջը կանգնելէն զատ, դիմագրականներէն 17 հոգի ընտրեց՝ իբրեւ դաշնակցութեան ժողովոյն խորհրդակից, եւ անոնց յանձնեց դաշնակցութեան նոր սահմանագրութիւն շինելու պաշտօնը: Արդէն յառաջագոյն Պրուշ եւ Աւստրիա մէկտեղ միաբանած էին որ դաշնակցութեան ժողովոյն մէջ՝ ժողովրդեան պահանջած նորագութիւններն առաջարկեն. որուն համեմատ՝ միաբան յայտարարութեամբ ծանուցած էին (Մարտ 10), որ ետքը (Մարտի 15ին) Տրեգտաիշխանաժողով մը գումարուելով, դաշնակցութեան նորագութեան գործքը պիտի հոգայ: Բայց Աիէնայի ու Պերլինի յեղափոխութիւններով՝ նոյն ժողովը խափանեցաւ: Իսկ Հայտելպերկի ժողովոյն որոշած պատրաստողական խորհրդանոցը՝ Ֆրանգֆուրդ քաղաքը բացուեցաւ (Մարտ 31), որուն մէջ Գերմանական տէրութեանց սենեակներուն անդամներէն զատ՝ իսկ մ'ուրիշ մարդիկ ալ մտան, առանց մէկէ մը խաւրուած կամ ընտրուած ըլլալու: Աւստրիայէն՝ միայն Աիոնէր անունով Հրեայ մ'եկած էր, իսկ Պրուշէն՝ խիստ քիչ մարդիկ. ուստի եւ ժողովոյն մեծ մասը՝ միջին ու փոքր տէրութեանց դիմագրականներէն կազմուած էր: Ասոնց բրած որոշումներուն գլխաւորները հետեւեալներն են. Շլեզուիկի դքսութիւնն ինչպէս նաեւ Պրուշի Լեհական գաւառները Գերմանական դաշնակցութեան մէջ առնուլ. Լեհաստան ինքնակաց տէրութիւն մը շինելու աշխատիլ. Գաշնակցութեան նոյն ատենուան ժողովը վերջնելով, երկու սենեկի բաժնուած՝ պետութեան խորհրդանոց կամ ազգային ժողով մը գումարել,

եւ գաշնակցութեան գլուխ մը գնել: Մասնաւոր կերպով որոշեցին որ Գերմանական ազգային ժողով մը՝ առանց իշխանաց կամ կառավարութեանց գործակցութեան՝ պետութեան սահմանագրութիւնը շինէ: Գերմանիա հասարակապետութեան դարձրնելու եւ կամ աս պատրաստողական խորհրդանոցը մնայուն ընելու ջանքերը ալ եղան. բայց չափաւորականք նոյն առաջարկութիւնը մերժել տուին, որուն շատ օգնեց գաշնակցութեան ժողովոյն քիչ մը յառաջ բրած որոշումը՝ որ բոլոր Գերմանիայի մէջ պետութեան խորհրդանոցին համար ընտրութիւնք ըլլան: Ուստի անով միայն գօժ եղան, որ գաշնակցութեան ժողովոյն նոյն որոշման գործադրութեան վրայ հսկելու համար յիսուն հոգևով մասնաժողով մը գրին. որմէ ետքը պատրաստողական խորհրդանոցը լուծուեցաւ:

218. Գերմանական հասարակապետութիւն ու Լեհաստանի տէրութիւնը փանգնելու փորձ: Գերմանական հասարակապետութիւն կանգնել բաղձացողները՝ պատրաստողական խորհրդանոցին մէջ իրենց աս դիտաւարութիւնը յաջողցրնել չկրնալով, ուզեցին զէնքով գլուխ տանիլ: Տեղ տեղ՝ գլխաւորաբար Գաղղիայի սահմանակից կամ մօտաւոր կողմերը՝ սուտ լուր տարածելով թէ Գաղղիական մեծ բանակ մը Գերմանիա յարձակելու վրայ է, ժողովուրդը սուր հանած ու զինած էին: Ստոյգ է՝ չէ թէ միայն Գաղղիայէն, հապառնաւ Էլ լուեաիայէն զինեալ բազմութիւնք կու գային, բայց ասոնք իրենց հակըցուցածին պէս՝ Գերմանիայի մէջ աշխարհակալութիւն ընելու եկող Գաղղիական զօրքեր չէին, հապա Գերմանացի գործավարք ու փախըստականք, որոնք գունդագունդ կը յառաջանային իրենց կարծեկիցներուն օգնելու: Նոյն ռամկապետականք քանի մը կտրվալ՝ ալ՝ մանաւանդ Պատերնի գրտութեան մէջ՝ զինուորաց մէկ մասն իրենց կողմը վաստրկած էին: Այսպէս պատրաստուելէն ետեւ, ձեռք զարկին իրենց խորհուրդը գործադրելու: Ասոնք անգին

Տատարականութիւնն հաստատակեցին, եւ շատ անգ. զիջաւ որաբար Պատրնի մէջ՝ զորոց հետ զարնուեցան ու շատ արիւն թափելու պատճառ տուին: Բայց իրենց բոլոր ջանքը պարտապի դնաց. ամէն կողմ հաստատարիմ զինուորները յաղթող եղան ու ապաստամբութիւնները զարեցին (Ապր. 15—30): — Փերմանական հասարակականութիւնն հաստատելու փորձին պէս՝ անյաջող ելք ունեցաւ Լեհաստանի տէրութիւնը կանգնելու փորձն ալ: Միերակաւորի եւ իրեն հետ Պրուշի բանաւորէն ելլող Լեհ. ք. նոյն իսկ Պերլինի մէջ ասոր սկիզբ բրին, եւ հոն կառավարութեան աչքին առջեւ Լեհաստան ազատելու համար բանակ մը կազմելու ձեռք զարկին: Ազամ Չարգորիզի իշխանն ալ Փարիզէն աս մտքը յայտարարութիւն մը հանեց: Գազզիա բնակող Լեհ փախստականք կառավարութենէն օգնութիւն խնդրեցին. բայց Լամարզին իրենց խնդիրը մերժեց: Ասկից զտո՝ Պրուշի Բողէն գաւառը Լեհական ազգային մասնաժողով մը կազմուած էր. Գրագաւ ալ մեծ գրագումութեան մէջ էր: Պրուշի թագաւորն իսկզբան ասոնց հետ զիջմամբ ու քաղցրութեամբ կը վարուէր. բայց երբ որ անոնք հեռոցհեռէ իրենց պահանջումներն ու անկարգութիւնները մեծցուցին, սկսաւ խստութիւն բանեցընել: Լեհ. քանի մ'անգամ զինուորաց հետ զարնուելէն ետեւ, զուլուեցան (— Մայ. 9): Նոյնպէս Գրագաւի անիշխանութիւնն ալ Աւոտրիացիք սաստիկ արիւնահեղ կռուով մը վերջացուցին (Մայ. 29):

219. Շխզուիկ-Հոլշդայնի խնդիր եւ Գանիական-Գերմանական պատերազմին սկիզբը: Տարւոյն սկիզբը Գանիայի Բրիտան Ը. թագաւորը մեռնելով (23), իր Փրեդերիկոս Է. յաջորդը բովանդակ Գանիայի համար սահմանադրութիւն մը տուաւ: Ինք կը յուսար. որ նոյնին մէջ բրած ազատական շարժումներով՝ Հոլշդայնն ու Շխզուիկ Գերմանական պարութիւններուն Գանիացուոց գեմ ունեցած ասելութիւնը կը յաղթէ: Բայց իր նպատակին չհասաւ: Քանի մը շա-

բաթ ետքը նոյն գրութեանց կարգաժողովները՝ իրենց գաւառները տէրութեան բուն Գանձական գաւառներուն հետ միացընելով՝ միակ Գանձական միապետութիւն մը կազմելու խորհրդոյն դէմ բողոքեցին (1848, Փետր. 17): Աս ալ բաւական չէ, նոյն երկու գրութեանց կարգաժողովները Ռենտապուրի մէջ մէկտեղ գումարուելով (Մարտ 18), սրոյեցին որ Շլեզուիկ ալ Հոլլադայնի պէս՝ Գերմանական գաշակցութեան մէջ մտնէ, եւ երկուքը մէկտեղ մասնական Գերմանական սահմանադրութիւն ու վարչութիւն ունենան: Աս բանս յայտնապէս Գանձայի իրաւանց դէմ էր. վասն զի թէեւ Շլեզուիկ՝ իր Հոլլադայնին հետ ունեցած հին կապակցութեան համար՝ կարենար խնդրել որ նոյնին հետ Գանձայէն զատ սահմանադրութիւն ու վարչութիւն ունենայ, ասկից չէր հետեւեր որ կարենայ Գերմանական գաշակցութեան մէջ մտնել: Անոր համար Գանձայիք խիստ նեղացան, եւ Գորենհակ աղմկալից շփոթութիւն մ'եկաւ (Մարտ 21) թագաւորը ստիպելու համար որ Գանձական հոգի ունեցող պաշտօնարան մը դնէ: Բայց գրութիւնք մինչեւ նոյն ատեն ըրածներովն զո՛հ չըլլալով, առժամանակեայ կառավարութիւն մը գրին Աւուստրիայուրի գրքին գահերիցութեամբ (Մարտ 24): Ասոնք բնելու կը համարձակէին՝ Գերմանական գաշակցութենէն պաշտպանութիւն գտնելու յուսով: Իրօք ալ չէ թէ միայն պատրաստողական խորհրդանոցն իրենց կողմը կը բռնէր, հապա նաեւ բուն գաշակցութեան ժողովն ալ, որն որ Պրուշի թագաւորին յանձնեց, որ աս իրողութիւնը գաշակցութեան անուամբ կարգի գնէ: Պրուշ արդէն նոյն ժամանակը խիստ կը բաղձար իր զինուորները պատերազմի խթել, սրոնք Պերլինի յեղափոխութեան ատենը՝ առանց ժողովրդէն յաղթուելու՝ ետ քաշուելու ստիպուելով, սառտիկ նեղացած էին, ուստի եւ զիւրենք հաճեցընելու համար՝ յաղթութեան գազիններ պէտք էին: Եւ ոտուգիւ շատ շուտով սկսաւ պատե-

բազմը (Ապր. 9)։ Պրուշի եւ ուրիշ քանի մը Գերմանական տէրութեանց զօրքեր չէ թէ միայն դքսութիւնները, հապա նոյն իսկ Գանիական Եիւզլանա գաւառը մտան (Մայ. 18)։ Արանկէլ՝ Պրուշ զօրապետը կ'ուզէր աս վերջին գաւառը գրաւականի պէս պահել՝ մինչեւ որ Գանիացիք Գերմանացւոց պահանջումները կատարեն. վրան զի նաւատորմի շունենալով, Գանիական կղզիներուն վրայ չէին կրնար յարձակում ընել։ Բայց քիչ մը ետքը Պերլինէն Պրուշի զօրաց հրաման եկաւ որ ետ գառնան (Մայ. 24)։

220. Սկանտինաւեան տէրութիւնք։ Պրուշի ընթացքին մեկնութիւնը։ Շուետի, Նորուեգիայի ու Գանիայի մէջ Սկանաինաւեան կողմնացուցութիւն մը կար, որն որ կը բաղձար որ նոյն երեք ազգերը քաղաքականօրէն մէկտեղ միանան. եւ աս միաւորութիւնը գլուխ հանելու համար՝ պատրաստ էր Գերմանական դքսութիւնները բոլորովին ալ թողուլ, յուսալով որ աս կերպով Սկանաինաւեան տէրութիւնը կամ դաշնակցութիւնը Գերմանական դաշնակցութեան հետ անձուկ միաւորութեամբ կրնայ կապուիլ, որով եւ կարող կ'ըլլայ ուրիշ տէրութիւններէն իր վրայ եղած յարձակմանց գէժ դնել։ Շուետի Ռոկար թագաւորը՝ դքսութեանց պատճառաւ Գանիայի ու Գերմանիայի մէջ երկպառակութիւն ելած տտեն՝ իր միջնորդութիւնն առաջարկեց. եւ ան տտեն միայն իր օգնութիւնը Գանիացւոց խոտացաւ, երբ որ Գերմանացիք իր առաջարկութիւնը մերժեցին։ Աս նկատմամբ Շուետի ու Գանիայի թագաւորները Մալմեէի մէջ իրարու հետ տեսնուեցան (Յունիս 7)։ Բայց իրենց աս աստութեան նպատակը՝ միայն Գերմանիայի գէժ իրենց երկիրները պաշտպանել չէր, հապա նաեւ յառաջաւրէ միջոցներ մտածել Ռուսիայի գէժ, եթէ երբեք ան կողմէն իրենց վրայ յարձակում մ'ըլլայ։ Նիկոզայոս կայսրն աս բանն իմանալով, խիստ նեղացաւ, եւ Գանիայի գահընին իր ահաճութիւնը յայտնեւէն զատ,

Բազմերայրնին հետ աս նիւթին վրայ խօսեցաւ սխաւ: Եղն պաշտօնեան Ռուսաց կայսեր պէս համեզուած էր որ Սկանիանու եան տէրութեանց վիուարութիւնը, ինչպէս Ռուսիայի նոյնպէս Անգղիայի շահան ալ գէմ է. բայց որովհետեւ մէկ կողմանէ չէր ուզեր որ Ռուսք Դաւնիական իրօզութեանց վրայ մեծ ազդեցութիւն ընեն, մէկալ կողմանէ ալ Ֆրանգֆուրդի ռամկապետականաց հետ հաղորդակցութեան մէջ էր՝ անոնց ձեռքովն ուրիշ նպատակներ ալ գլուխ հանելու համար, աւ պատճառաւ միջին ճամբայ մը բռնելու մազք՝ առաջարկեց որ զինադատար ըլլայ, եւ անանկ պայմաններով՝ որ Շլեզուիկի բաւական նպաստաւոր էին: Իսկ Պրուշին առկէ հաճոյ էր Շուետի միջնորդութիւնը: Անկարելի էր կարծել որ Պրուշ պատերազմը յառաջ տանիլ կ'ուզէինք նաւատարմիդ չունենալով, թէ որ իր բանակը երկշահանտի մէջ շատ յառաջանար, Ռուս բանակ մը կրնար գիւրաւ անոր կռնակին առնուլ: Ասկից զատ՝ Գանիացիք Գերմանիայի նաւահանգիստները պաշարելով կամ գոցելով, Պրուշի վաճառականութեան մեծ վնաս կը հարցունէին: Միանգամայն Մարտի շիտթութիւնները հանգարտած ըլլալով, Պերլինի մէջ կը տեսնէին թէ չափէն անգին անցած են՝ Շլեզուիկի նկատմամբ անանկ իրաւունք մը պաշտպանել ուզելով, որուն ի հարկէ գէմ պէտք էին ելլել մեծ աէրութիւնք, ինչպէս իրօք ալ ըսին ետքը: Արդ այս ամենայն մէկանց գալով, պատճառ եղան Պրուշի զօրաց ետ կանչուելուն, որուն վերջնական հետեւութիւնն եղաւ Մարտիի զինադազարք, ինչպէս քիչ մը վերջը կը տեսնենք:

221. Գերմանիայի ազգային ժողովը: Յովհաննէս արքիթուրը պետութեան տեղակալ կ'ըլլայ ու զաշնակցութեան ժողովը կը լուծուի: Աշտնակցութեան ժողովոյն ու պատրաստողական խորհրդանոցին որոշման համեմատ, Գերմանիայի ազգային ժողովը կամ խորհրդանոցը Զքանգֆուրդ քաղաքը Ս. Պօլտի եկեղեցւոյն մէջ բացուեցաւ (1848, Մայ. 18) 300

անգամք ներկայ ըլլալով, որոնք ետքը մինչեւ 500 հասան: Ասոնց մեծ մասը սահմանադրական կողմնակցութենէն եր, որմէ Հինրիկոս Ասկեան դահերեց ընտրեցաւ: Ժողովոյն առաջին գործքն եղաւ պետութեան գլուխ մը գնելու խնդիրը: Եւ որովհետեւ առաջապետականք չեին սւղեր որ առ նիւթին մէջ իշխանաց կամ կառավարութեանց հետ խորհուի, շարժառարկանաց գլխաւորները մեջերնին եւ կառավարութեանց հետ գաղտնի բանակցելէն ետեւ՝ առաջարկեցին որ Յովհաննէս արքիեպօսքաւ առժամանակեայ Պետութեան տեղակալ՝ գրուի: Ար առաջարկութեան գլխաւոր պատճառն ան եր, որ ժամանակ վաստակիլ կ'ուզէին: Խիտա շատերը կը բարձային Պրուշի թագաւորը Գերմանիայի ժողովական կայսր ընտրել, բայց նոյն ատեն ոգիներն առ վեհապետին գեմ սպտիկ գրգռուած ըլլալով, չհամարձակեցան մտքերնին յայտնել. կը յուսային որ վրան ատեն անցներէն ետեւ՝ նոյն ընտրութիւնը նազազոյն դժուարութեամբ կը յաջողի: Ասոր համար եր որ Պրուշ Յովհաննէս արքիեպօսին ընտրութեան դեմ ձայն չհանեց, եւ նոյն ընտրութիւնն ազգային ժողովոյն մէջ ամենէն աւելի եռանդեամբ պաշտպանողները՝ Պրուշք եզան, ան ալ՝ կառավարութեան կողմնակից եղող Պրուշները: Այսպէսով արքիեպօսքաւ 436 քուէով պետութեան տեղակալ ընտրեցաւ (Յունիս 29) եւ քիչ մը ետքը հանգիստութեամբ ֆրանքֆուրգ մտաւ (Յուլ. 11): Պետութեան գլխոյն ընտրութեամբ՝ գաշակցութեան ժողովոյն գործքը լմնցած ըլլալով, իր բոլոր իշխանութիւնն անոր յանձնեց ա. ցրուեցաւ: Իսկ տեղակալը պաշտօնաբան մը գրաւ, որուն անգամաց մէկը՝ Աւարիացի եր, մէկը՝ Պրուշ, եւ երրորդը՝ Համպուրկցի: — Բայց ինչ օգուտ ունէր այս ամենայն, երբ որ ոչ տեղակալն ա իր պաշտօնաբանը եւ ոչ ազգային ժողովը ձեռուդնին սեպհական զօրութիւն ունէին՝ իրենց հրամաններն

1 Reichsverweser = Vicaire de l'empire.

ու սրոշումները գործադրել տարու: Պետութիւնը սեպ-
 հական զօրք չունենալով, ի հարկէ՝ առանձին տէրու-
 թեանց բանակներովը պիտի դարձէր, որոնց վրայ ան-
 րնդօրիջական ու բացարձակ իշխանութիւն չունէր, հա-
 պա անոնց իւրաքանչիւր վեհապետին միջնորդու-
 թեամբն եւ այնչափ՝ որչափ ամէն մէկ վեհապետ կ'ու-
 զէր: Արդ անկարելի էր որ այսպէս զօրք ու զօրութիւն
 չունեցող պետութեան մը. գլուխը՝ իր ուղածին հա-
 մաձայնցընելով երեսնէ աւելի տէրութիւններ, որոնցմէ
 տկարագոյնն իսկ իրմէ զօրուոր էր, զանոնք միաբան
 նպատակի մը դիմեցընէր: Ատիկայ՝ ներքին յարաբե-
 թութեանց նկատմամբ. ասկից տարբեր չէր իր դիրքը
 արտաքին տէրութեանց նկատմամբ ալ, որոնք հետն
 արհամարհութեամբ կը վարուէին: Գանձադիւր՝ պե-
 տութեան տեղակալ չեղածի պէս՝ Պրուչի հետ կը
 բանակցէին: Անդղիայի կառավարութիւնը՝ պետու-
 թեան կողմանէ խաւրուած դեպքանը պաշտօնական
 կերպով ընդունիլ յանձն չառաւ: Գաղղիայի մէջ Գաւե-
 նեագ շարքութներով ուշացուց պետութեան գեապանն
 ընդունիլը:

222. Մայմոնի զինադադարը: Յեղափոխու-
 թիւններ: Պրուչի զօրքերը Գանձայէն քաշուելէն ե-
 տել (219), դքսութեանց գնդերն ու Գանձայի զօր-
 քերը խել մը ժամանակ զիմացէ զիմաց կը կենային,
 եւ մէկ երկու անգամ մէջերնին փոքր կռիւններ եղան.
 Բայց յայտնի է որ կարգաւորեալ պատերազմ չէր կրնար
 ըլլալ: Պետութեան պաշտօնարանը հրամայեց որ գաշ-
 նակցութեան զօրքը՝ նաեւ առանց Պրուչին՝ Գերմա-
 նացոց պահանջումները կատարել տայ (Յուլ. 31).
 որուն վրայ Պաւլիերայէն տղատ գնդեր ան կողմերը գա-
 ցին, Պատրնի ու Ալբրեքտմպերկի զօրքերն ալ սկսան
 դէպ ի հիւսիս քայլել: Բայց հազիւ թէ քանի մ'օր
 անցած էր, պետութեան տեղակալը Պրուչի թագաւո-
 րին յանձնեց որ Գերմանիայի անուամբ զինազաղար
 ընելու համար՝ Գանձայի հետ բանակցի (Օգոտա. 7),

որակ մէկ քանի որ ետքը երկու իշխանք՝ Գալստիայի մայր եկեղեցւոյն շինութեան համար կատարուած հանգիսին առթիւը նոյն քաղաքն իրարու հետ տեւեւեցան: Նոյն միջոցին թագաւորին կողմանէ Պելլով զորապետը Շուեռի Մարմնէ քաղաքը Գալստիացոց հետ կը բանակցէր: Հան Շուեռի միջնորդութեամբ Մալմանէի զինադադարն եղաւ (Օգոստ. 26), ան պայմանաւ որ Շլեզուիկ ու Հոլշտայն մէկտեղ առանձին կառավարութիւն մ'ունենան, որուն անգամներուն կէտը՝ Գերմանական գաշնակցութիւնը եւ կէտը՝ Գալստիայի անուանիք. ասոր գիմացը՝ դքսութեանց առժամանակեայ կառավարութեան բրած բոլոր որոշումները ջնջուին: Գերմանիայի խորհրդանոցն իսկզբան նոյն զինադադարը մանչնալ շուգեց, բայց ետքը ստիպեցաւ գլուխ ծռել (Սեպտ. 16): Ասոր վրայ նոյն խորհրդանոցին առաջագետական անգամները խիստ բարկանալով, ուղեցին յեղափոխութեամբ մը իրենց շափաւորական ընկերները մերժել: Իրզք ալ մեծ յեղափոխութիւն հանեցին. բայց գիտաւորութիւննին յառաջուրէ իմացուած ըլլալով, Մոզուսիայէն Աւստրիայի ու Պրուշ գնդեր եկած էին, որոնք գիւրաւ կրցան յեղափոխութիւնը զսպել: Ստիպն յեղափոխականք ալ շափաւորական պատգամաւորներէն երկու հոգի ձեռք անցընելով, չարաչար անազորոնութեամբ մեռցուցին (Սեպտ. 18): Նոյն Ֆրանկֆուրդի յեղափոխութիւնն առանձին բան չէր, հասցա շատ ճիւղացեալ. միեւնոյն գրերը շատ տեղ ազմուկներ ելան ու արին թափեցաւ, անդ տեղ ալ դարձեալ հասարակապետութիւն հրատարակուեցաւ. բայց ամէն կողմ կառավարութիւնք յաղթող եղան: Ինչպէս իր տեղը տեսանք ան միջոցներուն պատահեցաւ Ալեքսանդրի Հոկտեմբերի յեղափոխութիւնը, որուն ետեւէն եկաւ նոյն մայրաքաղաքին զսպուիլը (194, 195): Արդ Պրուշի թագաւորն ալ տակից հոգի առաւ իր տերութեան յեղափոխական զինակին վերջ տալու: Ասոր համար նախ Պրան-

աննպուրկ կամերն դահերիցութեամբը նոր պաշտօնաբան մը դրու (Նոյ. 4), սահմանադիր ժողովքը Պերլինէն՝ Պրանսենպուրկ քաղաքը փոխադրեց, եւ մայրաքաղաքը բազմութիւ զօրք խոթելով՝ ազգային պահակապանները զինաթափ ընել տուաւ։ Եւ որովհետեւ սահմանադիր ժողովքը Պրանսենպուրկ այժմ գարն ձեռք աղծուկներ յարազանեղին չէր գազար, թաւ գաւորը նոյն ժողովքը բարբաղին լուծեց (Գեկտ. 5), եւ ինք իրմէ սահմանադրութիւն մը տուաւ։

223. Մեծ գերմանականք եւ ֆորդերմանակաւոր։ Պրուշի թագաւորը կայսր կ'ընտրուի։ Այս պէս յեղափոխականք Գերմանիայի գրեթէ ամէն կողմը եւ տաւնձինն երկու գլխաւոր տերութեանց՝ մէջ յազմութեանն ետեւ, Երանդ ֆուրդի ազգային ժողովք պէտք էր տեսնել թէ ալ անկարելի է իր գոյութիւնը, որն որ յեղափոխութեամբ սկսած էր եւ յեղափոխական սկզբունքներու վրայ հիմնուած։ Բայց անկիւս յառաջուան պէս իր գործքը յառաջ տանիլ կ'ուզէր։ Իր զբաղած նիւթերուն գլխաւորը, որն որ ծանրակշիւ հետեւութիւններ ալ տնեցաւ, պետութեանն որոշ ու հաստատուն գլուխ մը դնելու խնդիրն էր։ Ժողովքը կ'ուզէր հին դաշնակցութիւնը քննել, երեսնէ աւելի ինքնակաց դաշնակից տերութիւնները վերջընել, եւ անոնց տեղ՝ մէկ վեհապետով միակ մեծ ու անբաժին պետութիւն մը կանգնել։ Բայց նոյն վեհապետն ո՞վ պիտի ըլլար թող ուրիշ տերութիւնները, Պրուշ երբէք յանձն չէր աւնուր Հապսպուրկեան կայսեր մը հպատակիլ, եւ ոչ ոք կրնար կարծել թէ Աւստրիա Պրուշի թագաւորին հպատակութեան տակ կր'մտնէ։ Ուստի առ գեղարութեան առջեւն առնելու համար, գլխաւորաբար Պրուշի կողմնակիցները կը ջանային Աւստրիա գուր հանելով, Գերմանիայի մնացած մասերն՝ իբրեւ միակ միապետութիւն՝ Պրուշի ցեղէն կայսեր մը իշխանութեան տակ գնել, եւ ապետութիւնն առանձին միապետութեամբ Աւստրիայի հետ կազել։ Աս գա-

ղափարը յայտնուպէս երեւան հանեց կտկեռն՝ երբ որ պետութեան պաշտօնարանին գահերէց եղաւ : Ան ժամանակէն վեր Գերմանիա երկու գլխաւոր կողմնակցութեանց բաժնուեցաւ, որոնք Մեծգերմանականք եւ Փոքրգերմանականք կոչուեցան : Արջիններուն նոյն անունը արուելուն պատճառն ան էր՝ որ Աւստրիայի Գերմանական գաւառները գուրս ձգելով, Գերմանիա փոքրկացրնել կ'ուզէին, ուր որ առաջինները՝ Գերմանիա իր մեծութեան մէջ պահել ուզելուն համար՝ Մեծգերմանականք կոչուեցան : Շուտ մը խորհրդանոցին մէջ սկսան կտկեռնին գաղափարը գլուխ հանելու առաջնորդող որոշումներ ըլլալ, մինչեւ որոշուեցաւ որ պետութեան գլուխը կայսր կոչուի եւ իր իշխանութիւնը ժառանգական ըլլայ (1849, Յունու. 25) : Եւ թէպէտ Աւստրիա ու չորս թագաւորութիւնք (Պալեերա, Ալերգեմպերգ, Հաննովեր, Սաքսոնիա) աս որոշման դէմ բողոքեցին ; բայց որովհետեւ մնացած տէրութիւնք իրենց հաւանութիւնը աուին, եւ Աւստրիա բոլոր զօրութեամբ Հունգարական պատերազմին կը զբաղէր (199) ու Յարդինիայի հետ ալ նոր պատերազմի բռնուելու վրայ էր, անոր համար Փոքրգերմանականք աճապարեցին իրենց խորհուրդն ի գործ դնելու : Այս պէտով Պրուշի թագաւորը՝ 248 քուէի դէմ՝ 290 քուէով Գերմանիայի ժառանգական կայսր ընտրեցաւ (Մարտ 28) : Պրուշի կողմնակիցք աս քուէից առաւելութիւնը կրցեր էին ձեռք բերել՝ ռամկապետականներն իրենց կողմը վատարկելով, որուն համար սահմանագրութեան մէջ խել մը խիստ ազատական սկզբունքներ խաթած էին : Բայց աս իրենց խորհրդոյն յաջողելուն միջոցը՝ պատճառ եղաւ նոյնին չգործադրուելուն : Պրուշի թագաւորը՝ որն որ ըստ ինքեան պէտք էր շատ մտածել իրեն մատուցուած թագն ընդունելու, աւելի եւս ընդդիմութիւն ունեցաւ՝ սահմանագրութեան մէջ դրուած վերոյիշեալ ազատական որոշումներուն պատճառաւ : Աւստի եւ ընտրութիւնն իրեն իմացրնելու

Համար Ֆրանգֆուրգէն Պերլին եկող պատգամաւորութեան պատասխան տուաւ որ Գերմանիայի միաւորութիւնը չի կրնար դուրս տարուիլ՝ ուրիշներուն իրաւանց անիրաւութիւն ընելով: Պէտք է որ, ըսաւ, Գերմանիայի բոլոր կառավարութիւնները պետութեան նոր սահմանադրութիւնը քննեն եւ հաւանութիւն տան (Ապր. 3): Իսկ Ֆրանգֆուրգիք աս պայմանը յանձն չառին, որովհետեւ անով իրենց հաստատած սահմանադրութիւնը տարակուսի տակ կ'իյնար:

224. Ֆրանգֆուրգի խորհրդանոցին լուծուիլը: Երկից թագաւորաց դաշնակցութիւն: Պրուշի թագաւորը կայսր ընտրուելուն պէս, Յովհաննէս արքեպիսկոպոս կ'ուզէր իր տեղակալութեան աստիճանէն հրաժարիլ. բայց Աւստրիա թող չտուաւ: Սակայն իր պատգամաւորները Ֆրանգֆուրգէն ետ կանչեց, նոյնպէս խել մը ուրիշ Մեծգերմանականք խորհրդանոցէն ելան, որով Փոքրգերմանականք առջեւէն բաց դաշտ ունենալով, ամէն ատենէ աւելի սկսան ջանք ընել իրենց դադափարը յառաջ տանելու: Գէմ եղող չորս թագաւորութիւնները ստիպելու համար, ռամկապետականք իրենց սովորական զէնքն ուզեցին ձեռք աւանուլ, այս ինքն՝ յեղափոխութիւն հանել: Բայց իրենց յուսացածին բոլորովին հակառակը պատահեցաւ: Այնչափ բռին որ Պրուշի թագաւորը կայսերական թագը բացարձակապէս մերժեց, եւ իր պատգամաւորները Ֆրանգֆուրգէն ետ կանչեց (Մայ. 14): Ռամկապետականաց սաստիկ զօրանալը տեսնելով, նաեւ կակեռն ու իր կարծեկիցները հոնկից դուրս ելան, Սաքսոնիայի պատգամաւորը ալ ետ կանչուեցան. իսկ ռամկապետականք իրենք զիրենք ապահով չսեպելով ելան՝ Սըուզկարգ գացին, ուսկից քիչ մը ետքը Վիւրթեմպերկի կառավարութիւնը զիրենք զինուորներով ցրուեց (Յունիս 18): Աս կերպով քայքայեցաւ ու ոչնչացաւ Ֆրանգֆուրգի ազգային ժողովը կամ խորհրդանոցը: Նոյն միջոցին Պրուշ կը ջանար Գերմանիայի իրողութիւններն

իր ուզածին պէս կարգի դնել, եւ առ վախճանաւ Պերլինի մէջ իշխանաժողով մը բացաւ (Մայ. 17), որուն ուրիշ տէրութիւններէն զատ՝ Աւստրիա ալ դեռպան խաւրեց: Բայց տեսնելով որ նոյն ժողովոյն նպատակն է՝ Պրուշի գլխաւորութեան տակ՝ սեղմեալ գաշնակցութիւն մը կազմել, թէ ինչք եւ թէ Պաւիերա իրենց գեոպանները ետ քաշեցին: Իսկ Հաննովէր ու Յաքսոնիա Պրուշի հետ միանալով, Երից թագաւորաց ըսուած գաշնակցութիւնը կազմեցին (Մայ. 28), Գերմանիայի նոր սահմանադրութիւն մը շինելու նպատակաւ: Նոյն սահմանադրութեան նայելով, առանց Աւստրիայի դաշնակցութիւն մը պիտի կազմուէր, որուն գլուխը պիտ'որ ըլլար Պրուշ, եւ եօթը ձայնիւ իշխանաց ժողով կամ խորհուրդ մը ու երկու սենեկի բաժնուած խորհրդանոց մը պիտ'որ ունենար: Ասկեան եւ իրեն կարծեկիցները Աթա քաղաքը ժողով մը գումարելով, առ գաղափարին իրենց կատարեալ հաւանութիւնը տուին (Յունիս 26): Անկէ ետեւ Պրուշ յայտնեց որ ալ պետութեան տեղակալ շինանչնար, որն որ զինքն ընտրող ազգային ժողովոյն հետ պէտք է որ իյնայ, իսկ ինչք Պրուշ Իրաւունք ունի ուրիշ Գերմանական իշխանաց հետ ինչ կերպով որ ըլլայ՝ միաւորութիւն մը կազմելու: Մէկուլ կողմանէ Աւստրիա, որն որ Իտալական պատերազմը յաջողութեամբ լմրնցուցած եւ Հունգարիայի յեզափոխութիւնը զսպելու վրայ էր, չէ թէ միայն չթողուց որ Յովհաննէս արքիդուքոն իր աստիճանէն ելլէ, հապա յայտնեց որ իր կամքն է գաշնակցութեան յառաջուան սահմանադրութիւնը նորոգել:

225. Աւստրիայի եւ Պրուշի երկպառակութիւնը: Էրֆուրդի խորհրդանոցը: Դաշնակցութեան հին ժողովքը: Այսպէսով Պրուշ ու Աւստրիա իրարու հակառակ գաղափարներ գլուխ հանելու ետեւէ իյնալով, իրարու հետ օրէ օր աւելի կը թշնամանային: Թէպէտ առաջնոյն կողմն իսկզբան զօրաւորագոյն էր, որովհետեւ բաց ի պզտիկ տէրութիւններէն՝ իրեն հետ

ունէր Հաննովերի ու Սպարսիայի թագաւորութիւնները. բայց Աւստրիայի կողմն երթալով աւելի կը զօրանար, ինչու որ չէ թէ միայն՝ Պաւլերայէն զատ՝ Վիւրզեմպերկ ալ իրեն հետ միացաւ, հապա նաեւ պզտիկ տէրութիւնք՝ յեղափոխութեանց զսպուելէն ետեւ՝ ալ վախնալու բան չունենալով, կը սկսէին իր կողմը միտել, որպէս զի յառաջուան դաշնակցութիւնը նորոգուելով, իրենց վեհապետական իրաւանց վնաս չըլլայ: Նոյն վիճակին մէջ Աւստրիա առաջարկեց որ պետութեան տեղակալը իր պաշտօնը՝ ժամանակաւոր կերպով յանձնէ Աւստրիայի ու Պրուշի կողմէն գրուած մասնաժողովոյ մը: Պրուշ աս առաջարկութեան հաճեցաւ, եւ երկու տէրութեանց վեհապետները Դէքսելցի մէջ իրարու հետ տեսնուելէն (1849, Սեպտ. 7) ու մէկալ Գերմանական տէրութիւնք հաւանութիւն տալէն ետեւ, նոյնն ի գործ գրուեցաւ (Սեպտ. 20), եւ այսպէս Առժամանակեայ վիճակ մը սկսաւ, որն որ մինչեւ 1850ին Մայիսի սկիզբը պիտի տեւեր: Աս կերպով երկու մեծ տէրութիւնք բոլոր իշխանութիւնն իրենց ձեռքն անցընելէն ետեւ, իւրպքանչիւրը ջանք կ'ընէր որ մէկալ տէրութիւններն իր կողմը վաստակի, որով եւ իրենց մէջ հաստատուած բարեկամութիւնը շուտով սկսաւ պաղել: Նոյն պազուութիւնը խիստ սաստկացաւ երբ որ Աւստրիա՝ իր երկիրները Գերմանական մագրսի ընկերութեան մէջ խոթել ուզեց (Գեկտ. 30). իսկ Պրուշ ասոր դէմ սաստիկ կերպով բողբ բրաւ, եւ քանի մը Գերմանական պզտիկ տէրութեանց հետ զինուորական դաշինք դրաւ, որով նոյն տէրութեանց զօրքերուն մէկ մասը գրեթէ իր բանակին հետ կը միանար: Ասոր վրայ Աւստրիա սկսաւ Բոհեմիա մեծիակ բանակ մը գումարել: Նոյն պարագայից մէջ Պրուշ էրֆուրդ քաղաքը խորհրդանոց մը գումարեց, որն որ իր առջեւը գրուած սահմանագրութեան ծրագիրը քիչ փոփոխութեամբ ընդունելէն ետեւ՝ գոցուեցաւ (1850, Ապր. 29): Պրուշին այսպէս առանց Աւստրիայի եւ

չորս թագաւորութեանց (Հաննովէր ու Սաքսոնիա ալ վերջին ժամանակները Պրուշէն բաժնուած ու Աւստրիայի հետ միացած էին,) կարծիքը հարցընելու՝ մանաւանդ թէ անոնց բողոքին դէմ՝ Էրֆուրդի խորհրդանոցը գումարելէն առիթ առնելով, իրենք ալ դաշնակցութեան հին ժողովոյն արտաքոյ կարգի խորհուրդը ժողովեցին (Մայ. 10), առանց միտ դնելու Պրուշի եւ իր կողմնակիցներուն բողոքին: Աս ժողովքին՝ Աւստրիայէն ու չորս թագաւորութիւններէն զատ՝ պատգամաւոր կամ դեսպան խաւրած էին՝ Հեսսէնի մեծ դուքսը, Հոլանտայի թագաւորը (իբրեւ Լիւիցուրկի մեծ դուքս) եւ Գանիայի թագաւորը (իբրեւ Հոլշտայնի դուքս): Քիչ մը ետքն ալ՝ Աւստրիայի արտաքին գործոց պաշտօնեայ Շուարցենպէրի իշխանը Արսաւիայի մէջ Նիկողայոս կայսեր հետ տեսնուելէն ետեւ, Ֆրանգֆուրդի մէջ հին դաշնակցութեան սովորական ժողովը բացուեցաւ (Սեպտ. 2), աս բանիս դէմ եղող տերութիւններուն ազատութիւն ձգուելով իրենց դեսպանները խաւրելու կամ չխաւրելու:

226. Հեսսէնի կայսրընտրութեան յեղափոխութիւնը: Նիկողայոս կայսեր քաղաքականութիւնը: Օլմիւցի բանակցութիւնը: Իրերն աս վիճակը որ հասան, Պրուշին ընելու ուրիշ բան չէր մնար, բայց եթէ կամ դլուխ ծռել եւ կամ իր կամքը զէնքով յառաջ տանելու փորձ ընել: Արդէն երկու կողմանէ պատերազմի պատրաստութիւնները կը տեսնուէին, բայց Հեսսէնի կայսրընտրութեան դէպքերը նոյնին ելքը շուտցուցին: Նոյն տերութեան մէջ կառավարութիւնն ու զեց ամէն բան պատերազմէն յառաջ եղած վիճակը դարձրնել, որուն վրայ անանկ յեղափոխութիւն մը բրդաւ, որ կայսրընտիրը ստիպեցաւ ձգել փախչել (1850, Սեպտ. 12). եւ իր սեպհական զօրութեամբը չկրնալով ապստամբները զսպել, դաշնակցութեան հին կարգադրութեան համեմատ՝ Ֆրանգֆուրդի ժողովքէն օգնութիւն խնդրեց, զորն որ նոյն ժողովքը որոշեց տալ:

Իսկ Պրուշ ասոր դէմ բողոք բրաւ, եւ Վեոգֆալիայի մէջ զօրք սկսաւ ժողովել: Բայց Աւստրիա ալ պարագ չէր կենար. Բոհեմիայի բանակն օրէ օր զօրացընելէն զատ, կայսրը Պրեկէնցի մէջ Պաւիերայի ու Վիւրդեմպերկի թագաւորներուն հետ տեսնուելով (Հոկտ. 11), Ֆրանգֆուրգի ժողովոյն՝ Հեսսէնի նկատմամբ բրած որոշումն ամէն կերպով գործադրել տալու համար մէջերնին միաբանեցան: Պատերազմն անհրաժեշտ կերեւար, մէյ մ'ալ Ռուսիա մէջը մտնելով՝ նոյնը խափանեց: Նիկողայոս կայսրը դարձեալ Վարսաւիա գալով (Հոկտ. 13), հետը տեսնուելու գացին Աւստրիայի կայսրն ու Շուարցենպերկ իշխանը, եւ Պրուշի պաշտօնէից գահերէց՝ Պրանտենպուրկ կոմսը: Հոն Նիկողայոս կայսրը յայտնեց որ եթէ գաշնակցութեան ժողովոյն մէջ Հեսսէնի նկատմամբ եղած որոշման կատարուելուն Պրուշ արգելք գնել ուզէ նէ, ինք նոյն գործքը պատերազմի առիթ կը սեպէ (Հոկտ. 26): Ասոր վրայ Պրուշ հարկադրեցաւ տեղի տալ, որուն համար Պրանտենպուրկ կոմսը՝ որն որ Վարսաւիայէն դարձածին պէս՝ հիւանդացած էր, ան աստիճան նեղացաւ ու այլայլեցաւ, որ քսնի մ'օր ետքը մեռաւ: Իրեն յաջորդող Մանդայֆէլ սեպուհը շուտ մը հրամայեց որ Պրուշի բովանդակ բանակը զէնք առնու (Նոյ. 6). բայց ասիկայ չէ թէ այնչափ պատերազմի նշան էր որչափ՝ խաղաղութեան, որովհետեւ պատուով բանակցիլ կարենալու համար՝ պէտք էր որ բաւական զօրաւոր բանակ մ'ունենար Աւստրիայի դէմ հանելու, որն սր Իտալիայէն Ռատեցքի սպարապետը կանչած էր իր Բոհեմիայի բանակին Պրուշի դէմ հրամանատարութիւն ընելու: Իրօք ալ ինք Մանդայֆէլ Օլմիւց քաղաքը Շուարցենպերկին հետ բանակցելով (Նոյ. 23), մէջերնին միաբանեցան. Պրուշ իր գաղափարը բոլորովին մէկգի ձգեց, գաշնակցութեան ժողովը ճանչցաւ, Հոլլդայնի իրողութեանց նկատմամբ անոր ընելու որոշումն ընդունելու խօսք տուաւ: Հոն միանգամայն որոշեցաւ որ Գերմա-

նիայի վերաբերեալ բոլոր խնդիրները կարգի գնելու համար՝ Տրեզտա Գերմանական դեսպանաժողով մը գումարուի :

227. Տրեզտայի դեսպանաժողովը: Շլեզուիկ-Հոլշթայնի իրողութիւնները: Պերլինի խաղաղութեան դաշինքն ու Ղոնտոնի արձանագրութիւնները: Ամիս մը ետքը Շուարցենպէրկ իշխանին գահերիցութեամբ՝ Տրեզտայի դեսպանաժողովը բացուեցաւ (1850, Դեկտ. 23), որուն ամենէն սախպողական գործքը՝ Հեսսէնի կայսրնտրութեան յեղափոխութենէն զատ՝ Շլեզուիկ-Հոլշթայնի խնդիրն էր: Ստոյգ է նախընթաց տարին Մալմոէի զինագագարով վերջ տրուած էր նոյն դքսութեանց պատճառաւ Դանիայի ու Գերմանիայի մէջ մղուած պատերազմին (222), բայց չէ թէ միայն դքսութիւնք անոր պայմաններուն վրայ գոհ չէին, հապա խիստ տժգոհ էր Դանիա ալ, որուն հետ առ նկատմամբ միաբան էին նաեւ Ռուսիա ու Անգղիա: Աս երկու տէրութիւնք՝ ինչպէս յառաջ ըսինք՝ չէին ուզեր որ Սկանտինաւեանք մէկտեղ միանալով՝ զօրանան (220), հապա կը բաղձային որ Դանիացոց գաղափարը յառաջ տարուելով, Շլեզուիկ ու Հոլշթայն՝ Եիւրպանտի ու Դանիական կղզիներուն հետ կառարեալ միացած՝ միաձոյլ տէրութիւն մը կազմեն: Արդ Դանիայի թագաւորն այսպէս նոյն երկու տէրութեանց յօժարութեան վրայ ապահով ըլլալով, աղէկ մը պատրաստուելէն ետեւ, զինագագարը լմնցած հրատարակեց ու դքսութեանց վրայ նաւատորմիդ մը խաւրեց: Եւ թէպէտ նոյնին առաջին գործողութիւնը Դանիացոց խիստ դժբախտ եղաւ, որովհետեւ Էքսոնֆէօրտէի քով երկու մեծ նաւեր կորսնցուցին (1849, Ապր. 5), քիչ մը ետքն ալ Պրուշի Պոնին զօրապետին հրամանատարութեան տակ եղող Գերմանական բանակը Գոլաինկի քով իրենց դէմ մեծ յաղթութիւն ըրաւ (Ապր. 20). բայց ասոնցմով դքսութեանց օգուտ մը չեղաւ. վասն զի ոչ նոյն յաղթող բանակը եւ ոչ

Ետքէն օգնութեան եկող Պրուշի բանակ մը Եիւզլանտի մէջ կը յառաջանային : Ասոր պատճառն ան էր՝ որ Ռուսիա յայտնապէս ըսած էր թէ Գերմանացւոց Եիւզլանտի սահմաններն անցնիլը՝ իբրեւ պատերազմի առիթ կը նկատէ : Այսպէս երկու ամսէ աւելի գրեթէ անգործութեան մէջ անցընելէն ետեւ, Դանիացիք Ֆրետերիգայի առջեւը Պանինին բանակին դէմ մեծ յաղթութիւն մը ստացան (Յուլ. 6), որմէ մէկ երկու օր վերջը Ռուսիայի եւ Անգղիայի միջնորդութեամբ՝ Դանիայի ու Պրուշի մէջ նոր զինագազար մը գրուեցաւ (Յուլ. 10) : Պայմաններն էին որ երկու գբութիւնք իրարմէ բոլորովին բաժնուին, Գերմանացի զօրքերը Շլեզուիկէն ելլեն, որն որ Հոլլզդայնէն զատուած՝ Դանիական կառավարութիւն մ'ունենայ. իսկ Դանիացիք Հոլլզդայնի մէջ զօրք չխոթեն : Հազիւ ամբողջ տարի մը ետքը Դանիայի ու Պրուշի մէջ Պերլինի խաղաղութեան դաշինքը գրուեցաւ (1850, Յուլ. 2), որով Շլեզուիկ բոլորովին Դանիայի իշխանութեան տակ կը մտնէր, իսկ Հոլլզդայնի մէջ Գերմանական դաշնակցութեան իրաւունքները կը պահուէին : Ասոր վրայ Լոնտոնի մէջ Գաղղիա, Ռուսիա, Անգղիա, Շուեա ու Դանիա արձանագրութեան մը ստորագրեցին (Օգոստ. 2), որով Դանիայի բաղձանքները կը հաստատուէին, եւ որուն քիչ մը ետքը Աւստրիա ալ իր ստորագրութիւնը գրաւ (Օգոստ. 23) : Բայց Հոլլզդայնցիք անկէ ետեւ ալ չհանգարտեցան, հապա իրենց պահանջումները զէնքով յառաջ տանիլ կ'ուզէին. որուն համար ալ երբեմն երբեմն Դանիացւոց հետ կը զարնուէին : Իրենց զօրութիւնը բոլորովին կոտրեցաւ, երբ որ Օլմիւցի բանակցութեանց մէջ Աւստրիա ու Պրուշ մէջերնին անոնց նկատմամբ միաբանած ըլլալով (226), եւ Ֆրանգֆուրդի ժողովը՝ Տրեզտայի դեսպանաժողովէն ընդունած հրահանգին համեմատ՝ որոշում մը տալով (Գեկտ. 28), Աւստրիական բանակ մը Հեոսէնէն անցաւ՝ Հոլլզդայն մտաւ (1851, Յունու.) : Ստոյգ է, Աւստրիա

այս կերպով Հոլլդայնցւոց յեղափոխութիւնը զսպեց, բայց զիրենք բոլորովին Գանձացւոց կամաց ալ չմատնեց, հապա զվերջինները ստիպեց երկու դքսութեանց՝ Գանձականէն բաժնուած՝ զատ զատ կարգաժողովական սահմանադրութիւն մը տալու եւ առանձին պաշտօնեաներ դնելու: — Վերջապէս մեծ տէրութիւնք Լոնտոնի մէջ նոր արձանադրութեան մ'ալ ստորագրեցին (1852, Մայ. 8), որով նաեւ յաջորդութեան խնդիրը կարգի դրուեցաւ:

228. Հին դաշնակցութիւնն առանց փոփոխութեան նորէն կը հաստատուի: Տրեզտայի գեսպանաժողովը (227) հինգ ամսուան շափ տեւելէն ետեւ՝ գրեթէ առանց գործք մը գործելու՝ ցրուեցաւ: Նոյն գեսպանաժողովը բացուելէն քանի մ'օր ետքը, Շուարցենպէրկ Մանդայֆելին հետ Պերլին գնաց թագաւորին հետ անձամբ խօսելու եւ մէկ երկու ծանրակշիռ խնդիրներու նկատմամբ մէջերնին միաբանելու համար: Գլխաւորաբար աս նիւթին մէջ միաբանեցան, որ անկէ ետեւ միայն Աւստրիա ու Պրուշ կարենան պատերազմի ու խաղաղութեան որոշում ընել. բայց աս խորհուրդը ոչ ուրիշ Գերմանական տէրութեանց եւ ոչ Ռուսիայի մտաց համեմատ էր, անոր համար ալ գեսպանաժողովոյն մէջ սառտիկ մեծ դիմագրութիւն գտաւ: Նոյնպէս Աւստրիա չկրցաւ իր բոլոր գաւառները Գերմանական դաշնակցութեան մէջ խոթելու բաղձանքը կատարել, որուն դէմ կը դնէր գլխաւորաբար Պրուշ: Եւ աս նիւթին մէջ չէ թէ միայն Ռուսիա վերջին տէրութեան կողմը կը բռնէր, հապա նաեւ Անգղիա ու Գաղղիա, որոնք պաշտօնագրով մը իրենց հակառակութիւնը յայտնեցին: Ուրիշներն ալ ուրիշ փոփոխութիւններ կ'ուզէին, առանձինն Վիւրթեմպէրկի թագաւորը Գերմանական խորհրդանոց մը կ'ուզէր. բայց ամենեւին մէկու մը կամքը չկատարուեցաւ: Ո՛չ Աւստրիա, ոչ Պրուշ, ոչ Վիւրթեմպէրկ եւ ոչ ուրիշ Գերմանական տէրութիւնք կրցան ուզածնին գլուխ հանել:

Հապա Ռուսիայի ուզածն եղաւ: Նիկողայոս կայսրը հակառակ էր բոլոր վերոյիշեալ փոփոխութիւններուն, եւ կ'ուզէր որ գաշնակցութեան հին սահմանադրութիւնն անփոփոխ նորոգուի, զորն որ գլուխ տարաւ՝ ամէն մէկ փոփոխութիւնն ուզողին դէմ՝ նոյնին հակառակ ըլլողներուն հետ միանալով: Իրերն այնպէս դարձան, որ Պրուշ սկսաւ ետեւէ իյնալ գաշնակցութեան հին սահմանադրութեան անփոփոխ նորոգուելուն, որպէս զի Աւստրիա չկարենայ իր բոլոր գաւառները նոյն գաշնակցութեան մէջ խոթել. ուստի եւ մինչեւ նոյն ատեն իրեն հետ կապուած տէրութիւններուն հրաւեր խաւրեց, որ Ֆրանգֆուրդի ժողովոյն իրենց դեսպանները խաւրեն (1851, Մարտ 27): Աս այոպէս ըլլալով, Տրեզտայի դեսպանաժողովոյն ընելու գործք չմնաց. անոր համար ամէն բան Ֆրանգֆուրդի ժողովոյն յանձնեց եւ քիչ մը վերջը ցրուեցաւ (Մայ. 15): Միեւնոյն օրը Պրուշի դեսպանը նոյն գաշնակցութեան ժողովը մտաւ, որուն ետեւէն եկան հետզհետէ իրեն հետ կապուած տէրութիւններուն դեսպանները, որով գաշնակցութեան ժողովն իր յառաջուան կերպարանօքը նորէն կազմուեցաւ (Մայ. 30): — Աս կերպով Գերմանիա խաղաղանալէն ետեւ, անգամ մ'ալ ոգիները զրգռեցան ու պատերազմի վախը նորոգեցաւ, Աւստրիային իր բոլոր գաւառներովը Գերմանական մարտի ընկերութեան մէջ մանել ուզելուն պատճառաւ: Բայց աս հեղ ալ Աւստրիա զիջանելով, ամէն բան հանդարտեցաւ, եւ քիչ մը ետքը Աւստրիա ու Պրուշ մէջերնին քսան տարւան համար վաճառականութեան դաշինք դրին (1854, Փետր. 19):

Գ.

Նյարդիոն Գ. ին կառավարող թեան ժամանակը նախ-
ընթաց դեպքերով (1849—1853):

229. Գաւենեագ զօրապետին վարչութիւնը: Յունիսի յեղափոխութեան ու փոզոցներու կռուոյն մէջ, Գաւենեագին գլխաւորութեամբը չափաւորակա-
նաց՝ ընկերվարականներուն դէմ բրած յաղթութիւնը (1855), ընդհանրապէս իբրեւ միապետական սկզբուն-
քին՝ հասարակապետութեան վրայ ստացած յաղթու-
թիւնը համարուեցաւ: Ստոյգ է անկէ ետեւ զուտ հա-
սարակապետական սահմանադրութիւն մը շինուեցաւ
եւ հասարակապետութեան արտաքին ձեւերը հաս-
տատուն պահուեցան (1848, նոյ. 12). ի վերայ այսր
ամենայնի հասարակապետական հոգին ու եւանդը շատ
տկարացած էին: Ընկերութեան բոլոր բարեկիրթ ու
ընչեղ դասերը կը բաղձային որ իրենց ստացուածքը
հանգարտութեամբ վայելեն, որ վայելմունքն որ՝ իրաց
նոյն ատենուան հանգամանաց նայելով՝ միայն միապե-
տական կառավարութեան տակ կրնար հաստատուն
ըլլալ, որովհետեւ միայն այնպիսի կառավարութեամբ
կրնար վերջ տրուիլ հարուստներուն դէմ աղքատնե-
րուն բացած ընկերվարական պատերազմին: Այսպէսով
Օրինաւորականք եւ աւելի եւս Օրէանեանք սկտան
մեծ տկնկալութիւններ ունենալ, եւ արտաքոյ կարգի
ջանք ըրին իրերն անանկ կարգաւորելու որ առ միապե-
տական իշխանութիւնը հին տիրող ցեղին տրուի: Նա-
բողէնեանք ալ՝ թէպէտ խիստ սակաւաթիւ էին կամ
կը կարծուէին, սակայն եւ այնպէս անգործ չէին կե-
նար: Առ կերպով հասարակապետութեան կողմնակից-
ներն երթալով ազգեցութիւննին կը կորսընցընէին, եւ
իրենց գլխաւորներն՝ ընկերվարականաց հետ ունեցած
աւելի կամ քիչ կապակցութիւններնուն համեմատ՝
հետզհետէ կը կործանէին: Բայց իրենց իյնալուն գըլ-

խաւոր պատճառներէն մէկն ալ ան եղաւ, որ իշխանութիւնը ձեռուրնին եղած ատեն՝ իրարու հետ կը թրշնամանային, եւ իրարու օգնելու տեղ՝ հասարակապետութեան թշնամեաց հետ կը միանային, իրենց կարծեկիցները կործանելու համար: Այսպէս Լուի Պլան չափաւորեալներուն հետ միացած՝ Պլանգիին իյնալուն օգնեց. զինքն ալ վար ձգելու ձեռնտու եղաւ Լրարիւ Ռոլէն, որն որ քիչ մը ետքը՝ եթէ չկործանեցաւ նէ՛ արհամարհութեան մէջ ինկաւ: Նոյն իսկ Լամարգին ու Գաւենեագ՝ իրբւ Նախանձաւոր հասարակապետականք՝ աչքէ ինկան ու կասկածելի եղան, անանկ որ չէին կրնար ապահովութիւն ունենալ մեծագոյն մասին վրայ: Նոյն Գաւենեագ զօրապետը՝ վարչութեան գլուխ եղած ժամանակ՝ մեծ հաստատութեամբ ու խոհեմութեամբ կը վարուէր, բայց սրտանց հասարակապետական ըլլալով եւ փառասիրութիւն չունենալով, իր իշխանութիւնը տեւական ընելու փոյթ չէր տաներ: Արտաքին իրողութեանց նկատմամբ իր Լամարգին նախորդին խաղաղական քաղաքականութեան կը հետեւէր. իսկ ներքնոյն կողմանէ՝ կը զգուշանար երկու ծայրերէն, այս ինքն՝ ընկերվարութենէն եւ միապետութենէն: Բայց ինք այսպէս անհոգ կեցած ատեն, ուրիշները սաստիկ ժրութեամբ կը գործէին. որով եւ կրցան զինքը մէկդի ձգել տալով, հասարակապետութեան գահերէց ընտրել տալ անանկ մէկը, որն որ արգէն շատոնց միտքը դրած էր հասարակապետութիւնը կործանել:

230. Լուդովիկոս Նաբոլէոն՝ գահերէց ընտրուելէն յառաջ: Մտադրութեան արժանի է առ իշխանին ընտրութիւնը, որուն համար հարկ է որ Փետրուարի յեղափոխութենէն վեր իր բռնած ընթացքը տեսնենք: — Լուդովիկոս Նաբոլէոն, որն որ քանի մը տարի յառաջ Համ բերդէն (136) փախած էր ու Լոնտոն կը գտնուէր, Փետրուարի յեղափոխութեան լուրն առնելուն պէս, Փարիզ եկաւ. բայց առժամանակեայ

կառավարութիւնն իրեն աղաչեց որ ձգէ երթայ: Ինքն ալ խոհեմութիւն սեպեց աս աղաչանքին զիջանիլ, որն որ քաղաքավարական կերպով արուած հրաման մըն էր: Նարոյէտնեանք նոյն ատեն ստեղծութիւն էին, եւ իշխանին դրամական վեճակը զինքը չէր կրնար յուսացնել, որ ստակի զօրութեամբ կարենայ իր կողմը շարժում մ'ընել տալ: Անոր համար խիստ զարմանալի երեւոյթ կրնայ սեպուիլ Յայիսի յեղափոխութեան ատենը (184) յեղափոխականներուն բերնէն շատ անգամ լսուած Վեցցէ կայսր աղաղակը, որն որ յայտնապէս նոյն իշխանին համար էր: Ուստի եւ աս եղած շարժման՝ բոլորովին ուրիշ առիթ եւ ուրիշ նպատակ փնտռելու է: Ա՛րեւելայ որ ընկերավարականք կայսեր անունն իբրեւ պատրուակ կ'ուզէին գործածել՝ զօրքերն իրենց կողմը շահելու եւ կառավարութենէն բաժնելու համար: Իրենց դիտաւորութիւնն ան չէր որ իշխանին համար աշխատին, հասցա ան՝ որ իշխանին անունն իբրեւ գործիք իրենց դիտաւորութեանց կատարուելուն ծառայեցընեն: Ասկից յառաջ եկաւ որ ազգային գործատանց բանաւորները, որոնք գուցէ յառաջագոյն նոյն իշխանին անունն իսկ լսած չունէին, ան ատեն սկսան մէկէն զինքն իբրեւ շաստուած պաշտել: Ասանկով երբ որ քիչ մը ետքը՝ ազգային ժողովոյն պակասած քանի մ'անդամներուն տեղ՝ նոր պատգամաւորներ ընտրել հարկ եղաւ, Լուդովիկոս Նարոյէտն Փարիզ (1848, Յունիս 8) եւ գաւառներու մէջ երկու տեղ ընտրեցաւ: Արդէն իր ազգականներէն երկու հոգի, այս ինքն՝ Նաբոլէոն (Հերոնիմոսին որդին) եւ Պետրոս (Լուկիանին որդին), ազգային ժողովոյն մէջ կը նստէին: Բայց Լուդովիկոս Նարոյէտն աս ձեռք բերածովը գոհ ըլլալով եւ տեսարանին վրայ անձամբ երեւնալու ժամանակը տակաւին եկած չհամարելով, չուզեց Գաղղիա դառնալ, որպէս զի չըլլայ թէ առժամանակեայ կառավարութեան հետ կուռելու հարկագրի, որուն անդամներէն մէկը՝ նոյն իսկ իր ընտրութենէն ետքը՝ ազգային

ժողովոյն մէջ առաջարկած էր որ Նաբոլէոնեան ցեղին գէժ տրուած տարագրութեան հին վճիռը (131) Լուդովիկոս Նաբոլէոնին վրայ հաստատուն մնայ (Յունիս 13), թէեւ առ առաջարկութիւնն ընդունելի չէր եղած, եւ ժողովքն իշխանին ընտրութիւնը հաստատած էր: Ուստի եւ հրատարակեց որ զինքն ընտրողներուն շնորհակալ է, բայց կ'ուզէ առժաման Լոնտոն կենալ, վրան աւելցրնելով որ Եթէ ժողովուրդն իմ վրաս պարտք մը դնէ, կը կատարեմ. բայց չեմ ուզեր որ անունս շփոթութիւններ հանելու գործածուի: Ասանկ դժբախտութիւն մը խափանելու համար, պքսորանաց տեղս կը մնամ:

231. Լուդովիկոս Նաբոլէոն գահերէց կ'ընտրուի: Լյուպէս Նաբոլէոն Լոնտոն կեցած ատեն, հինգ տեղէ միանգամայն ազգային ժողովոյն անդամ ընտրեցաւ, այս ինքն՝ Փարիզէն, Մոզելէն, Իսնէն, Ստորին Շարանգէն ու Գորսիգայէն: Աս որ եղաւ, իշխանը կարծեց թէ ալ Գաղղիա դառնալու ատենն եկած է: Բայց ան ժամանակն ալ հեղ մը միայն ազգային ժողովոյն մէջ երեւնալով՝ կարճ խօսակցութիւն մ'ըրաւ (1848, Սեպտ. 26), եւ անկէ ետեւ նիստերուն մասնակից չեղաւ: Լրագիրը սկսան իրեն գէժ նախատական խօսքեր խօսիլ, եւ զինքն իբրեւ անմիտ ու անկարող մէկը ձեւացրնել. բայց առ բանս ալ իրեն խիստ օգտակար եղաւ, որովհետեւ որչափ որ իր թշնամիքը զինքն աւելի անկարող կը համարէին, այնչափ աւելի դիւրութեամբ կրնար իր դիտաւորութիւնը ծածուկ յառաջ տանիլ, եւ իր հակառակորդներն այնչափ քիչ ջանք կ'ընէին զինքը խափանելու: Նոյն միջոցին սահմանագրութիւնը լմնեցած էր (229), որուն նայելով՝ կառավարութեան գլուխ պիտ'որ ըլլար բոլոր ժողովուրդէն չորս տարւան համար ընտրուելու գահերէց մը. բայց նոյն գահերէցն ազգային ժողովէն այնչափ կախում ունէր, որ առանց անոր հաւանութեան՝ ծանրակշիռ գործք մը չէր կրնար գործել: Անմիջապէս նոյն իշ-

խանութեան հետամուտներուն կամ յարմար սեպուղներուն անունները սկսած ամենուն բերանը պտրտիլ: Ամենէն յառաջ կ'անուանուէր Գաւենեազ, իրմէ ետքը կու գային Լուգովիկոս Նաբոլէոն, Լամարգին, Լբարիւ Ռոլէն, եւ ընկերվարական կողմնակցութեան համար՝ Ռասախայլ: Լուգովիկոս Նաբոլէոն՝ ազգային ժողովոյն մէջ պատգամաւորի մը՝ իր ընտրութեան դէմ խօսածին (Հոկտ. 25) հակառակ, նոյն ժողովոյն մէջ համառօտ պատասխան մը տալէն զատ, մասնաւոր ընտրութեան յայտարարութիւն մ'ալ հանեց, որուն մէջ կը խոստանար որ իր վարչութեան նպատակը պիտ'որ ըլլայ ներքուստ՝ հանդարտութիւն, իսկ արտաքուստ՝ խաղաղութիւն հաստատել, սուրբերը թեթեւցընել, միանգամայն կը յայտնէր թէ անանկ պաշտօնեաներ կը գնէ, որոնք Գաղղիայի ամենէն ընտիր ու ճարտար մարդիկն ըլլան՝ առանց նայելու թէ ո՞ր կողմնակցութենէն են: Լրագիրք տակաւին չէին դադրեր իրեն դէմ թշնամանքներ տեղալէն եւ զինքը ծաղրելի ընելէն. Բայց ասոնք իրեն վնաս չէին կրնար տալ, վասն զի իր գլխաւոր կողմնակիցներն անանկ մարդիկ էին՝ որոնք ամենեւին լրագիր չէին կարգար, այս ինքն՝ գեղացիք եւ հասարակ զինուորք: Ասոնք քիչ մ'ատենէ վեր մտքերնին դրած էին թէ Գաղղիայի իրողութիւնք այնպէս խառնաշփոթած են, որ միայն Նաբոլէոն մը կրնայ զանոնք կարգի դնել: Իշխանին անունն էր՝ որ զիրենք անոր կողմնակից կ'ընէր. ամենեւին մէկը չէր մտածեր թէ արդեօք եղբօրորդին՝ հօրեղբօրը կը նմանի թէ չէ. ասիկայ իբրեւ ինք իրմէ իմացուող բան մը կ'ենթադրէին: Երբ որ մէկալ կողմնակցութեանց գործակալները զիրենք ուրիշ մէկն ընտրելու կը յորդորէին, գլուխնին շարժելով՝ իրենց կարծեաց մէջ հաստատուն կը մնային: Բայց Նաբոլէոնին գլխաւոր հակառակորդներն եղողներն ալ իր ընտրութեան օգնեցին: Լուգովիկոս Փիլիպպոսին կողմնակիցները՝ իրենց գլուխն ունենալով զԹիէր, ամէն կերպով ջանացին որ

Լուգովիկոս Նաբոլէոն ընտրուի. վասն զի ստոյգ համարերով որ նոյն իշխանը կառավարելու անկարող է, կ'ուզէին զինքը նոյն ատեն յառաջ քշել, որպէս զի եթէ ինք անհաճոյ ըլլայ, Օրլէանեան ցեղն ետ կանչուի, որն որ նոյն ժամանակ տակաւին չէր կրնար ըլլալ: Կային նաեւ զօրապետներ՝ որոնք Նաբոլէոնին կողմը բռնեցին, Գաւենեագին նախանձորդ ըլլալուն համար: Այսպէս ամէն պարագաները մէկտեղ գալով, Լուգովիկոս Նաբոլէոն գահերէց ընտրուեցաւ (Գեկա. 10) հինգ ու կէս միլիոնէ աւելի քուէով, ուր որ Գաւենեագին՝ միայն մէկուկէս միլիոն քուէ ելաւ, Լըտրիւ Ռոլէնին՝ հազիւ կէս միլիոն, իսկ Լամարդինին՝ 20,000 քուէ:

232. Նոր գահերիցուն ընթացքն ու քաղաքականութիւնը: Ընտրութիւնն ըլլալէն տասն օր ետքը Գաւենեագ ազգային ժողովոյն մէջ իր պաշտօնը նոր գահերիցուն յանձնեց, որն որ սահմանադրութիւնը պահելու երդում ընելէն ետեւ, շքեղ կառքով Եղիւսեան պալատը գնաց, ուր պիտի բնակէր: Հոն նոյն օրը պաշտօնարան մը կազմեց, որուն անդամներն էին Օտիլոն Պարոյ, Տրուէն տը Լիւիս, Ֆալու, Ռիւլիէր, Դրասի, Բասի, Ֆոշէ, Լագրոս, Պիւֆէ: Պիւժոյ սպարապետը բանակին վերին հրամանատար եղաւ, Շանկառնիէ՝ ազգային պահակապաններուն: Իսկզբան ազգային ժողովն անանկ կ'ուզէր ցուցնել որ ինք գահերէցէն վեր է. բայց հասարակաց կարծիքն անանկ չէր. Լուգովիկոս Փիլիպպոսին ժամանակին պատգամաւորաց սենեկին անկարգ վարմունքովը՝ օրէնսդիր ժողովները համարումնին բոլորովին կորսնցուցած էին: Ասկից զատ՝ նոր գահերէցն իր բռնած խորագէտ ընթացքովն ու հաստատութեամբը շուտ մը ստիպեց զանոնք ամէնքն իրենց միտքը փոխելու, որոնք իր վրայ խիստ նուաստ համարում ունէին: Լուգովիկոս Փիլիպպոսին քաղաքականութեան դէմ՝ որն որ բոլորովին ընչաւէտ քաղաքացւոց վրայ կը յենուր (132), նոր գահերէցը կը

յննաւր գեղացւոց ու զինուորաց վրայ, սրոնք արդէն իր կողմն էին, ասոնցմէ զատ՝ եկեղեցականներն ալ իր կողմը շահեցաւ, Հռոմի հասարակապետութիւնը կործանելու եւ զքահանայապետը նորէն իր գահը հանելու համար բանակ մը խաւրելով (21 $\frac{1}{2}$), որով միանգամայն Խաղաղայի իրողութեանց վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ: Նաբոլէոն բոլոր ժողովրդեան սէրն դահանրապէս վաստակելու մտօք, Գաղղիայի չորս կողմը բազմաթիւ ճամբորդութիւններ բռաւ. եւ զանազան տեղեր արուած խնջոյքներուն առթիւր զբուցած խօսքերով՝ երբեմն բացայայտ եւ երբեմն գաղանի կերպով հասկըցուց որ մէյ մը ձեռք բերած իշխանութիւնը թող տալու միտք չունի: Նոյն նպատակաւ քանի մը հեղպաշտօնեաները փոխեց, եւ չորս կողմն անանկ մարդիկ ժողովեց, որոնց հաւատարմութեան կամ իրեն կողմնակից ըլլալուն վրայ ապահով էր: Հասարակապետականք իր աս դիտաւորութիւնն իմանալով, ատեն ատեն ջանք բռին զինքը վար ձգելու, անգամ մ'ալ, Հռոմի արշաւանքէն առիթ առնելով, միեւնոյն օրերը՝ թէ՛ Փարիզ եւ թէ՛ Ղիոն՝ յեղափոխութիւն հանեցին, եւ մայրաքաղաքին մէջ Լըտրիւ Ռօլէնին հրամանապետութեան տակ՝ դաշնաժողով մը դրին (1849, Յունիս 13—15). բայց զինուորաց եւ ունեւոր քաղաքացւոց իրենց դէմ ելլելով՝ ճնշուեցան: Աս առթիւ խել մը հասարակապետականք բռնուեցան. կամաց կամաց լրագիրներուն վրայ եղած հսկողութիւնը սաստկացաւ, իբրեւ հասարակապետական ճանչցուած մարդիկ իրենց պաշտօններէն հանուեցան, որոնց մէջ ամենէն նշանաւորը համարուեցաւ Շանկառնիէին վար առնուիլը (1851, Յունու. 10):

233. Գեկտեմբերի 2ին դէպքերը: Նաբոլէոն աս կերպով ոգիները պատրաստելէն ետեւ, մէյ մը փորձ բռաւ՝ իբրեւ թէ առանց իր գործակցութեան՝ ժողովրդեան ու օրէնսդիր ժողովոյն ձեռքովը իր դիտաւորութիւնը գլուխ հանելու: Ցէրութեան ամէն

կողմերէն սկսան խնդրագիրներ տեղալ, որոնք սահմանադրութեան քննուիլը կամ փոխուիլը կ'ուզէին: Իրօք ալ օրէնսդիր ժողովոյն մէջ նոյն նիւթին վրայ առաջարկութիւն, եղաւ. բայց ասանկ խնդիրներու համար հարկաւոր եղածին չափ քուէ (քուէից չորս մասին երեքը) չկրնալով ունենալ մերժուեցաւ (1851, Յունիս 19): Ետքէն օրէնսդիր ժողովը նորէն բացուած ատեն (Նոյ. 4), գահերէցն անձամբ առաջարկեց սահմանադրութեան քննուիլը, Որպէս զի, ըսաւ, օրինաւոր ճամբով գլուխ ելլէ ան բանը՝ զորն որ Գաղղիական ազգն ուրիշ կերպով ալ կրնայ յառաջ աանիլ. միանգամայն ծանոյց որ կը բաղձայ ընդհանուր ընտրութեան իրաւունքը մնւածանել՝ աւելի ընդարձակ հիմանց վրայ, որպէս զի ժողովուրդն առիթ ունենայ իր կամքը յայտնելու: Բայց աս հեղ ալ ժողովը դէմ դարձաւ, եւ առաջարկուած ընտրութեան օրէնքը երկու օր ետքը մերժուեցաւ (Նոյ. 13): Հասարակապետականք Նաբոլէոնին բռնած ընթացքէն այլայլելով եւ օրէնսդիր ժողովոյն գիմագրութենէն քաջալերուելով, ուզեցին գահերիցուն իշխանութիւնը զանազան միջոցներով չափաւորել, մինչեւ կը պատրաստուէին զինքը բանտարկել տալ. բայց ինք աճապարեց զիրենք մէջտեղաց վերցուց եւ իր կամքը գլուխ տարաւ: Իր աս գործողութեան համար ընտրած էր իր հօրեղբօրը Նաբոլէոն Աին կայսր օծուած օրը (Հատ. Գ. 152): Նախընթաց գիշերը (Դեկտ. 1—2) պալատին մէջ մեծ հանդէս մ'ըրաւ, որուն մէջ արտաքոյ կարգի հանգարտութիւն ու զուարթութիւն կը ցուցնէր: Նոյն միջոցին իր հաւատարիմներուն ձեռքովը ամենայն ծածկութեամբ զինուորները կը պատրաստուէին, եւ առտու չեղած՝ ամէն բան լմնցած էր: Գիշերուան միեւնոյն ժամուն մէջ՝ առանց ազմկի բռնուած ու բերդերու մէջ բանտարկուած էին գահերիցուն հակառակ եղող ամէն զօրապետը, պատգամաւորը, քաղաքագէտը ու գրագէտը, որոնք յանկարծակիի գալով, ոչ գէմ դնել եւ ոչ փախչիլ կրցած էին:

Ասոնց մէջ ամենէն երեւելիներն էին Գաւենեագ, Շանկաւնիէ, Լամորիսիէր, Պրտոյ, Շարաս զինուորականները, եւ Թիէր, Ախիզոր Հիւկոյ, Էօփէն Սիւ մատենագիրները: Պատերուն վրայ կայցուած յայտարարութիւններ աս եղածները երկրորդ առառւ ժողովրդեան կը ծանուցանէին: Նարոյէոն կը զրուցէր թէ Ազգային ժողովը՝ հասարակաց բարօրութեան համեմատ օրէկներ տալու տեղ՝ գրգռութիւններ կը յարուցանէր, եւ ժողովրդեան ինծի յանձնած իշխանութեան դէմ յարձակում կ'ընէր: Ես վեց միլիոն հոգւոյ ընտրեալը՝ անոր նենգութիւնները սընչացուցի: Թէ որ ժողովուրդն իմ աս բրածիս չիհաճիր, թող իմ տեղս ուրիշ մէկն ընտրէ. իոկ եթէ իմ վրաս վստահութիւն ունի, թող իմ ձեռքս միջոց տայ պաշտօնս կատարելու: Աս նպատակաւ կ'որոշէր որ ժողովուրդն ընդհանուր քուէարկութիւն ընէ, եւ պարզապէս Այս կամ Ո՛չ ըսելով, ընդունի կամ մերժէ իր տասը տարւան գահերէց ըլլալուն, քովը ծերակոյտ մ'ունենալուն եւ սահմանադրութիւնը փոխելուն առաջարկութիւնը: Հասարակապետականք աս բաները հանդարտութեամբ չէին կրնար տեսնել. իրօք ալ մեծ յեղափոխութիւն մը հանեցին, բայց իրենց գլխաւորները մէջտեղաց վերցուած ըլլալով, դիւրաւ զսպուեցան, թէեւ իրենք յուսահատութեամբ կռուելով, զինուորք ալ ձեռք անցուցածնին մեռցընելով, շատ մեծ արիւնհեղութիւն եղաւ:

234. ԼուղովիկոսՆարոյէոն՝ տասնամեայ գահերէց: Նոյն միջոցին ժողովրդեան ընդհանուր քուէարկութիւնն եղաւ եւ Նարոյէոնին սպասած արգիւնքն ունեցաւ. որովհետեւ ինչպէս որ նոյն իսկ իրեն դէմ ըլլող ընչաւէտ ու քաղաքակիրթ մարդիկ թէ՛ Փարիզ եւ թէ՛ գաւառներն ելած ապստամբութիւնները զուպելու գործակից եղած էին, ընկերվարութեան ու անիշխանութեան շարիքները խափանելու համար, նոյնպէս աս քուէարկութեան ատեն ալ՝ միեւնոյն նպատակաւ իր առաջարկութեան հաւանութիւն տուին:

Ասանկով տարւոյն վերջին օրերը (Գեկտ. 20 ու 21) կատարուող քուէարկութեան մէջ՝ եօթն ու կէս միլիոնի չափ (7,439,216) հոգի՝ գահերիցուն կողմը, եւ միայն 640,000 հոգի անօր դէմ քուէ առին: Աստեանելով՝ Նարոլէոն իր իշխանութիւնն այնպէս հաստատուն սեպեց, որ Գեկտեմբերի 2ին բանտարկեալներն ազատեց, եւ մէջերնէն միայն քանի մը հոգի Գաղղիայէն դուրս հանելով՝ գոհ եղաւ: Իսկ վերջին յեղափոխութեան առեւն ձեռուրնին զէնքով բռնուած յեղափոխականը խտաւր պատժուեցան. իրենցմէ խել մը մարդիկ Գայէն քշուեցան: Նարոլէոն եկեղեցականները բոլորովին իրեն հետ կապելու համար՝ ուրիշ շնորհուածներէն զատ՝ Բանթէոնը դարձեալ եկեղեցւոյ փոխել տուաւ: Ըռւա մ'ալ սկսաւ պատրաստութիւն տեսնել անուամբ միայն մնացած հասարակապետութիւնը կայսրութեան փոխելու: Իր հօրեղբօրը կայսրութեան ժամանակը գործածուած ոսկի արծիւները դրօշներուն վրայ դնել տուաւ. ազգային պահակապանաց դնդերը լուծեց, ազատութեան ծառերը եւ հասարակապետութեան ուրիշ նշաններն ու անունները վերցրնել եւ անոնց տեղ՝ կայսրութեան ժամանակուանները դնել տուաւ: Եկեղեցիներուն մէջ՝ հասարակապետութեան տեղ՝ սկսուեցաւ Նարոլէոնին անունը յիշուիլ եւ իրեն համար աղօթք բլլալ: Քիչ մը ետքն ալ ինք նոր սահմանադրութիւն մը տուաւ (1852, Յունու. 14), որով Նարոլէոն Աին ժամանակուան գրեթէ ամէն կարգադրութիւնները նորէն կը հաստատուէին: Բոլոր իշխանութիւնը տասնամեայ գահերիցուն ձեռքը կը տրուէր, որն որ իր քովը տէրութեան խորհուրդ մը, ճերակոյտ մը եւ բոլորովին անզօր օրէնսդիր ժողովք մը պիտ'որ ունենար, որոնք ամենեւին չէին կրնար իր որոշումները սկարացընել: Նոր գահերիցուն առաջին գլխաւոր գործողութիւններէն մէկն ալ եղաւ Օրլէանեան ցեղին ինչքերը տէրութեան գրաւել (Յունու. 22), որպէս զի նոյն ցեղին իշխանները չկարենան ստակով իրենց

կողմը մարդ վաստակիլ: Իսկ իր անձին՝ ծերակուտին ձեռքով 12 միլիոնի տարեկան թաշակ կապել տուաւ. իշխան ու ամենապատիւ տէր¹ ախողսը եւ թագաւորական պալատները գործածելու իշխանութիւն ընդունեցաւ: Այս ամենայն յայտնի կը ցուցնէր թէ շատ չանցած՝ իր հօրեղորը պէս՝ կայսերական գահը պիտ'որ ելլէ, որն որ ազգին մեծ մասին կամացն ալ համաձայն էր: Իշխանը սգիներն աւելի եւս պատրաստելու համար Գաղղիայի հարաւային կողմերը ճամբորդութիւն մ'ըրաւ: Լիոնի մէջ Նաբոլէոն Աին արձանը բացուելու առթիւ՝ խօսած ճառին մէջ, զանիկայ Գաղղիայի ամենէն օրինաւոր վեհապետն անուանելէն ետեւ, վրան աւելցուց թէ նոյն օրինաւոր կայսրութիւնը նորէն կանդանելու շատ չեմ տճապարեր, եւ ան ատեն միայն գլուխ կը տանիմ՝ երբ որ Գաղղիայի ընդհանուր կամքն ու անոր բարօրութիւնը կը պահանջեն: Մարտիլիայի մէջ զինքը դժոխային ըսուած մեքենայով սպաննելու համար եղած դաւակցութիւնը ատենին իմացուեցաւ: Պարտոյ խօսած ճառը խիստ հռչակաւոր եղաւ, որովհետեւ նոյնով ջանաց ցուցնել թէ կայսրութիւնը՝ խաղաղութիւն է², բսելով թէ Գաղղիա որ հանդարտի, բոլոր աշխարհք հանդարտութեան մէջ կ'ըլլայ:

235. Նաբոլէոն կայսր: Աս ճամբորդութեամբ Նաբոլէոն իր դիտած նպատակին հասաւ: Ամէն կողմ լսած կեցցէ կայսր ազաղակները՝ մինչեւ Փարիզ հեան եկան, ուր զինքն ընդունելու համար արտաքոյ կարգի պատրաստութիւններ եղած էին: Իշխանը հոն ալ նոյն կեցցէ կայսր ազաղակներով մտաւ (1852, Հոկտ. 16), Եղիւսեան պալատին տեղ՝ Գիւլիլիի պալատը գնաց բնակեցաւ, ուր իր չորս կողմը ժողովուեցան իր ազգականները: Քիչ մը ետքը գահերէցը ծերակուտին հրամայեց որ կայսրութիւնը նորէն կանգնելու վրայ խորհի, որովհետեւ բովանդակ ազգը յայտնի կերպով աս բանս

1 Monseigneur.

2 L'empire c'est la paix.

կը պահանջէ: Ինչպէս որ կրնայ գուշակուիլ, ծերակոյտը յօժարութեամբ աս հրամանին հնազանդեցաւ. բայց Նաբոլէոն ուզեց որ իր կայսր ըլլալն ալ բուն ժողովրդեան ձեռքովը դլուխ տարուի: Անոր համար որոշուեցաւ որ բոլոր Գաղղիացիք քուէարկութեամբ իրենց միտքը յայտնեն աս խնդրոյն վրայ թէ արդեօք կ'ուզեն Նաբոլէոն Ա.ին ունեցած կայսերական ժառանգական իշխանութիւնը, որն որ իր հրատարելովը (Հատ. Գ. 248, 260) օրինաւորապէս իր որդւոյն Նաբոլէոն Բ.ին անցած էր (136), Նաբոլէոն Գ.ին տալ: Առաջարկութիւնն աս կերպով կ'ըլլար, որպէս զի կայսերական իշխանութեան օրինաւորութիւնն ամենեւին տարակուսի տակ չձգուի, այնպէս որ նոր կայսրը՝ թէ ծննդեամբ եւ թէ ժողովրդեան կամքովը նոյն ատտիճանին հասած սեպուի: Քուէարկութեան (Նոյ. 21, 22) արդիւնքն աս հեղ առաջին անգամներէն աւելի նշանաւոր եղաւ. վասն զի 7,839,552 հաւանութիւն տուողներուն դիմացը՝ հազիւ 254,501 չհաւանող գտնուեցաւ: Ասոր վրայ Նաբոլէոն Գ. կայսր հրատարակուեցաւ (Գեկա. 2): — Նոր կայսրն իր իշխանութիւնը՝ նաեւ ազգականութեան կապերով հաստատելու մտօք, շատ ջանաց որ՝ իր հօրեղօրը պէս՝ վեհապետական տներէ իշխանուհւոյ մը հետ ամուսնանայ, բայց չկրնալով յաջողընել, իր սովորական բնաւորութեան համեմատ՝ որոշեց վեհապետական տնէ չեղող մէկու մը հետ ամուսնանալ, եւ նոյն որոշումն առանձին պատգամախօսութեամբ մը օրէնսդիր ժողովոյն ծանուցանելէն քանի մ'օր ետքը՝ գործքով ալ կատարեց (1853, Յունու. 29): Աս կերպով Գաղղիայի կայսրուհի եղող իշխանուհին էր Եւգինէ Մոնդիխոյ՝ Թեպայի դքսուհին, Սպանիական ազգէն:

236. Նոր կայսեր ընթացքը: Պուրպոնեանք եւ Օրլէանեանք: Բեղգիա տիրող ցեղը: Նաբոլէոն Գ. արդէն յառաջուրնէ ամենայն ինչ կարգի դրած ըլլալով, ո՛չ ներքին եւ ո՛չ արտաքին քաղաքականութեան

նկատմամբ փոխելու բան ունէր. ուստի գահերիցութեան ատենն ըրածին պէ՛տ՝ կայսր ըլլալէն ետեւ ալ մեծ ջանքով ետեւէ եղաւ, Գաղղիացիները՝ ներքին հանգարտութեամբ ու կարգաւորութեամբ, իսկ արտաքին տէրութիւնները՝ իր խաղաղասիրութեամբն ու յեղափոխականները զսպելով, գահ ընել: Աս կերպով իր վարչութիւնը խիստ խոհեմական ու իմաստուն եղաւ: Փարիզի մէջ մեծամեծ շինուածներու ձեռք զարնելով, Ռիվայի փողոցը երկընցընելով, Նուվրի պալատին շինութիւնը լմընցընելով, չէ թէ միայն գործաւորներուն զբաղում հոգաց, հապա նաեւ խել մը նեղ ճամբաները ջնջեց, որոնք ամէն յեղափոխութեանց ատեն՝ ապստամբաց գլխաւոր ապստտանարանը կ'ըլլային: Զանազան միջոցներով դեղացիներն ու զինուորները յառաջուրնէ աւելի իրեն հետ կապելէն գտտ, զեղխութիւնը՝ ուստի եւ արուեստաւորաց ու վաճառականաց շահն՝ աւելցընելով, ջանաց իրեն հետ հաշտեցընել նաեւ իրեն դէմ եղող ան հարուստ քաղաքացիները, որոնք նոյն ատեն աւելի եւս իրմէ կը հեռանային՝ իր իշխանութիւնը հաստատելու եւ յեղափոխականները զսպելու մտօք՝ մամլոյ ազատութիւնը չափաւորելուն, ազգային պահակապանները վերցընելուն եւ օրէնագիր ժողովոյն հրապարակական ըլլալը դադարեցընելուն համար: Գրեթէ բոլոր եպիսկոպոսներն իրեն հետ կապուեցան, որովհետեւ կրօնի մեծ յարգութիւն կը ցուցընէր: — Ինչպէս յայտնի է, որչափ որ կայսեր իշխանութիւնը կը հաստատուէր, այնչափ ալ Օրինաւորականաց ու Օրէանեանց ակնկալութիւնները կ'ոչընչանային: Լուգովիկոս Փիլիպպոս Անգղիա մեռած էր (1850, Օգոստ. 26): Ասոր որդիքը նոյն ատենէն սկըսան ջանալ որ Պուրպոնեանց երիցագոյն ցեղին հետ հաշտուին ու մէկտեղ միանան, յուսալով որ նոյնով իրենց իւրաքանչիւր կողմնակիցներն ալ կը միանան ու կը զօրանան: Քանի մը հեղ պարապ փորձեր փորձելէն ետեւ, վերջապէս Նրմուրի դուքսն անձամբ կարող

լու Ժին Թուան՝ Հանպորի կամին (97) գնաց եւ իր բոլոր ազգականաց անուամբը՝ զինքն իբրեւ Հենրիփոս Ե. ճանչցաւ, որուն գիմացը նոյն կամը յայտնեց որ պատրաստ է իրեն որդեգիր առնուլ ու յաջորդ անուանել Լուգովիկոս Փիլիպպոսին Թաւր՝ Փարիզի կոմսը: — Օրէանեանց՝ Գաղղիայի գահէն իյնալը՝ պէտք էր որ մեծ ազգեցութիւն ընէր նոյն ցեղին վրայ: (Բեղգիայի Թագուհին Լուգովիկոս Փիլիպպոսին ազջիկն էր:) Անոր համար Բեղգիայի Լուգովիկոս Թագաւորը Գաղղիայի զօրաւոր կայսրութեան գիմացը պաշտպանութիւն ունենալու համար, իր Լէսթրլա Թագածառանգ որդւոյն հետ վիճենա գնաց, եւ քիչ մը ետքը նոյն Թագածառանգը Աւստրիայի կայսերական ցեղէն՝ Մարիամ արքեպսուհւոյն հետ կարգուեցաւ (1853, Օգոստ. 22):

237. Եւրոպական տերութիւնք զխաբուլէոն Գ. իբրեւ կայսր կը ծանչնան: «Նոր կայսրը գահ ելլելուն պէս, բոլոր մտադրութիւնը դարձուցած էր իր իշխանութիւնն արտաքին տէրութիւններուն ճանչցրնելու. որուն համար իր դեսպաններուն ձեռքովն իր խաղաղասիրական դիտաւորութեանց վրայ ապահովութիւն կու տար: Աս անգամ ալ Անգղիա՝ ուրիշ ամէն տէրութիւններէն յառաջ՝ ճանչցաւ Գաղղիայի մէջ եզած սոս փոփոխութիւնը, որուն օրինակին շուտ մը հետեւեցան Նէպոլիս, Սպանիա եւ ուրիշ քանի մը փոքր տէրութիւնք: Նր մնային միայն երկք հիւսիսային տէրութիւնք. բայց անոնք ալ քիչ մը ետքը իրենց ընդունելութիւնը ծանուցին: Արգէն յառաջուրնէ ըլլալիքը գուշակելով, պատրաստութիւննին տեսած եւ ընելիքնին որոշած էին, ուստի եւ քիչ մը ժամանակ ուշացրնելին՝ աւելի ձեւի համար էր, քան թէ ընդունելութիւննին զլանալու համար: Վերջին տարիները նոյն տէրութեանց վեհապետները յաճախ իրարու հետ անտնուած էին, որն որ ցոյց մըն էր թէ նոյն երկք տէրութեանց յառաջուան միաբանութիւնը միշտ կը տեւէ

եւ աւելի կ'ամրանայ: Աւստրիայի Շուարցենպէրկ պաշտօնեան իր մահուանէն քիչ մը յառաջ շրջաբերական պաշտօնագրով մը յայտնած էր թէ Աւստրիա կ'ուզէ Գաղղիայի հետ խաղաղութիւնը պահել, բաւական որ Գաղղիա ալ իր կողմանէ 1815ին դաշինքները յարգէ (1852, Յունու. 29), որուն իբր պատասխան նոյն տէրութեան պաշտօնական լրագիրը՝ Գաղղիայի խաղաղասիրական դատաւորութեանց վրայ ապահովութիւն տուած էր: Իսկ երբ որ յիշեալ պաշտօնեան մեռաւ, Նիկողայոս կայսրն Աւստրիա ու Պրուշ եկաւ (Մայ.), նոյն երկու տէրութեանց հետ նոր Նաբոլէոնին գիմացն այնպէս դաշնակցելու, ինչպէս որ իր եղբայրը հին Նաբոլէոնին գիմացը դաշնակցած էր: Արդ տարակցոյ չկայ որ աս ամէն առիթներուն մէջ երեք վեհապետք կատարեալ որոշած էին թէ ինչ ընթացք պիտի բռնեն երբ որ Նաբոլէոն կայսերական գահն ելլէ, որն որ եղածի պէս գիտէին. բայց եւ այնպէս երբ որ իրօք կատարուեցաւ, Աւստրիայի կայսրը մէկէն Պերլին գնաց (1852, Դեկտ. 17), որմէ քիչ մը ետքը նախ Ռուսիա (1853, Յունու. 5), եւ հետեւեալ օրը Աւստրիա ու Պրուշ Գաղղիայի կայսրութիւնն ընդունեցան:

238. Անգղիա ու Բալմերսդըն: Փախստականը: Անգղիային ուրիշ ամէն տէրութիւններէն յառաջ Նաբոլէոնի կայսրութիւնը ճանչնալը, Բալմերսդընի գործքն էր, որն որ առանց ուրիշ պաշտօնէից կարծիքը հարցընելու, ինք իրմէ նոյնն ըրած էր, որուն վրայ թագուհին խիստ նեղացաւ: Արդէն շատոնցուրնէ հիւսիսային տէրութիւնը իրեն դէմ բարձրաձայն կը տրտնջէին Մաճառ ու Լեհ փախստականաց խնդրոյն մէջ բռնած ընթացքին համար (203), որոնց չէ թէ միայն Տաճկաստանի մէջ պաշտպանութիւն ըրած էր, հապա նաեւ զանոնք: Անգղիա ընդունած: Գոշութ Մարսիլեա գնաց, եւ կ'ուզէր Գաղղիայէն անցնիլ, որպէս զի հոնտեղաց հասարակապետականները զբզուէ, բայց Նաբոլէոն հրաման չտուաւ. իսկ Բալմերսդըն՝ անոր Անգղիա գալուն արգելք չգնելէն զատ, թողուց որ իր

պատուոյն համար հանգէսներ ըլլան եւ իրեն համար ստակ ժողովուի: Աս ալ բաւական չէ, թոյլ տուաւ որ Եւրոպայի ցամաք երկրին յեղափոխականաց գլուխները Լոնտոն ժողովին. այսպէս Լըարիւ - Ռոլէն, Լուի Պլան, Մածծինի, Գաշութ եւ ասոնց նմանները Անգղիայի մայրաքաղաքն իրենց յեղափոխական գրգռութիւններուն միջավայրն ըրին: Չարմանքն ան է, որ Բալմերսդըն աս կերպով ամէն կողմանց յեղափոխականներուն ձեռք բռնած ատեն, Անգղիայի յեղափոխականները սաստիկ խստութեամբ կը զուգէր. կ'ուզէր որ ամէն կողմ յեղափոխութիւն ըլլայ, միայն Անգղիա ու Անգղիական օրինաց տակ եղող տեղերը չէ: Արնայ ըսուիլ թէ ամենեւին տեղ մը յեղափոխական շարժումներն այնպէս սաստկութեամբ մանաւանդ թէ անադորունութեամբ շարսուեցան, ինչպէս Յոնիական կղզեաց վրայ: Առանձին կերպով մը հակառակութիւններ կը հանէր Բալմերսդըն Նէապոլոյ թագաւորին դէմ, ինչու որ կ'ուզէր նոյն վեհապետէն վրէժ առնուլ, Սիկիլիայի յեղափոխութիւնը յաղթելով՝ իր նոյն կղզոյն վրայ ունեցած սիրական դիտաւորութիւնները ոչնչացուցած ըլլալուն համար: Այսպէս թէ ներքուստ թէ արտաքուստ Բալմերսդընին դէմ մեծ ահաճութիւն ելլելով, ստիպեցաւ պաշտօնէն ելլել. բայց որովհետեւ Բիլ մեռած էր (1850) եւ ուրիշ յարմար մարդ չկար Թորիններէն պաշտօնարան կազմելու, աս վերջինները մէկ երկու անգամ կարճատեւ փորձեր փորձելէն ետեւ, հարկագրեցան եւ քաշուիլ, որով եւ Բալմերսդըն նորէն պաշտօնի անցաւ (1852, Դեկտ.):

239. Սպանիայի ու Բորգոնկալի իրողութիւնները: Մարիամ Թագուհին կը մեռնի ու տեղը կ'անցնի որդին Պետրոս Ե.: Բալմերսդընին գործողութեանց ազատ դաշտերէն մէկն էր Պիւրենեան թերակղզին: Սպանիայի մէջ Իզապելլա Թագուհին քիչ մը ժամանակ Անգղիայի ազդեցութեան համեմատ եւ տգրտականներուն հետ միացած կառավարելէն ետքը

(149), ստիպուած էր ամենայն ինչ գարձեալ յառաջուան կերպարանքը գարձենել (1847, Հոկտ.): Ուստի եւ Չափաւորականք՝ Նարվաէզ զօրապետին գլխաւորութեամբ՝ կառավարութեան գլուխը կը կենային, Բրիտանիէ թագուհին ալ հետերնին ունենալով եւ Լուդովիկոս Փիլիպպոսին պաշտպանութիւնը վայելելով: Իսկ Փետրուարի յեղափոխութեամբ՝ յիշեալ թագաւորին օգնականութիւնը դադարելով, ներքին ազատականաց եւ Անգղիայի գործունէութեան ընդարձակ դաշտ բացուեցաւ: Եւ թէպէտ Նարվաէզ իր սովորական քաջասրտութեամբը զսպեց առաջիններուն հանած երկու յեղափոխութիւնները (1848, Մարտ 23, Մայ. 6—7), եւ Անգղիայի դեսպանին անոնց մէջ մտառ ունենալուն համար, անցագիրը ձեռքը տուաւ, որով երկու տէրութեանց դեսպանական յարաբերութիւնը կարեցաւ, իսկ Բալմերսդըն իր յանցաւոր ըլլալը գիտնալով՝ չկրցաւ ձայն հանել. սակայն եւ այնպէս քիչ մը ետքը նոյն իսկ երկու թագուհիք զՆարվաէզ ստիպեցին հեռանալու, մայրը՝ որպէս զի տէրութեան արկղներն ուղածին պէս գործածէ, իսկ աղջիկը՝ որպէս զի իր տնային ընթացքին վրայ հսկող չգտնուի (1849, Հոկտ. 18): Անկէ ետեւ մէյ մ'ալ պաշտօնի մտաւ Նարվաէզ, որովհետեւ իր տեղն անցնողը՝ բոլորովին անյարմար մէկն էր. բայց աս հեղ ալ Բալմերսդըն պատճառ եղաւ իր նորէն հեռանալուն: Հիւսիսային Ամերիկայէն Գուպա կղզին առնելու համար եղած արշաւանքը՝ որուն ի ծածուկ կը նպաստէր նոյն պաշտօնեան, յայտնապէս ցուցուց Սպանիացուց թէ իրենց հարկաւոր է Անգղիայի բարեկամութիւնը, որով եւ հարկագրեցան զՆարվաէզ հեռացընել, որն որ նոյն տէրութեան հետ թշնամական դրից մէջ մտած էր (1851, Յունու. 11): Նոյն ատենէն բոլոր իշխանութիւնը Բրիտանիէին ձեռքն անցաւ, որն որ Գաղղիայի Գեկտեմբերի 2ին դէպքէն ետեւ (233) ուզեց արձակապետական կերպով կառավարել: Ա՞ պատճառաւ

իրեն դէմ զանազան անգամ յեղափոխութիւն ելաւ, վերջապէս ինք ալ իր հակառակորդաց ձեռքն ինկաւ (1854, Յուլ.), որոնք թող տուին որ Բորդուկալ երթայ: Իշխանութիւնը ձեռք բերաւ Էոփարդերոյ. բայց զինուորական յեղափոխութեամբ ինկաւ (1856, Յուլ. 16), որուն վրայ Նարվաէզ եւ մինչեւ Քրիստինէ թագուհին ետ դարձան: — Իսկ Բորդուկալի մէջ Մարիամ թագուհին մեռնելով (1853, Նոյ. 15), տեղն անցաւ Պետրոս Ե. որդին, որն որ երկու տարիի չափ՝ հօրը խնամապետութեան տակ մնալէն ետեւ, սկսաւ անձամբ կառավարել (1855, Սեպտ. 20):

240. Սարգինիայի քաղաքականութիւնը: Ընդհանրապէս Իտալիայի վիճակը: Ռալմերսդորֆին գրեթէ ամբողջով իտալիայի իրողութիւնները, որոնք առանձին կերպով Սարգինիայի մէջ իրեն խիստ հաճոյական կերպարանք կ'առնուին: Աս տէրութեան մէջ Արմատականք օրէ օր շատնալով ու մեծ պաշտօններու մէջ աւելի մուտք ունենալով, կառավարութիւնն իր բռնած արմատական ուղղութեան մէջ հակայարայլ յառաջ կը տանէին: Ամէն նիւթերէ աւելի՛ կրօնի նկատմամբ կ'երեւար աս հոգին: Արդէն իսկզբան Սիգարտեան ըստած օրէնքներով, եկեղեցական գառաստանարանները ջնջուած, տօնի օրերը պակասած եւ ուրիշ ասոնց նման փոփոխութիւններ եղած էին (1850), որուն վրայ սկսաւ եկեղեցւոյ հալածումը. Գուրինի Ֆրանսոնի արքեպիսկոպոսը յիշեալ օրինաց դէմ բողոքելուն համար՝ ամիս մը բանտարկուած մնալէն ետեւ, ստիպուեցաւ ձգել Գաղղիա երթալ. քահանայապետին նոյն նկատմամբ բրած բողոքներն ալ բանի աեղ չդրուելէն զատ, իրեն ինչպէս նաեւ բոլոր եկեղեցականաց դէմ լրագրաց մէջ սկսան նախատական յարձակումներ ըլլալ, որոնք օրէ օր սաստկանալով յառաջ կ'երթան: Իսկ երբ որ Գաւուր կոմսը պաշտօնարանին գլուխն անցաւ, եկեղեցւոյ հալածանքներն աւելցան.

վանքերուն մեծ մասը ջնջուեցաւ եւ ինչքերնին յափըտակուեցան (1855, Մարտ 2): Այս ամենայն կ'ըլլայ Արմատականաց կամ Մածծինեանց ջանիւքը, բայց ոչ առանց գործակցութեան եւ հաճութեան Բալմերուդընի, որն որ եղածներն՝ իբրեւ Իտալիայի բողոքականութեան ճամբան մտնելուն սկզբնաւորութիւն ձեւացրնելով, Անգղիացւոց եւ բոլոր բողոքականաց համակրութիւնը շահելու կը գործածէ. ուր որ բոլորն ալ անկրօնութեան հոգիէն յառաջ եկած բաներ են: — Սարգիսիայի աս վիճակը չէր կրնար ազգեցութիւն չընել Իտալիայի մնացեալ մասերուն վրայ: Իրօք ալ ամէն կողմ քիչ շատ գրգռութիւն կայ: Մածծինեանք թէ Հելուետիայէն եւ թէ Սարգիսիայէն մեծապէս փոյթ կը տանին ամէն տեղ եւ առանձին Լոմպարտիա յեղափոխական տարրն արթուն պահելու եւ սնուցանելու: Ասկից ուրիշ նպատակ չէր կրնար ունենալ Մածծինիին Լոնտոնէն անձամբ Հելուետիա գալով, Միլան հանած շփոթութիւնը, ուր խել մը դաշունով զինեալ մարդիկ փողոցներուն մէջ առանձին գտած զինուորներնուն վրայ յարձակելով, 15—20 հոգի մեռցուցին եւ 100 հոգւոյ չափ վիրաւորեցին (1853, Փետր. 6): Աս դէպքէն Ռատեցքի առիթ առաւ՝ ցոյց մ'ընելու Հելուետիայի դէմ, որն որ չէ թէ միայն թող կու տար որ լրագիրներն անդադար Աւստրիայի դէմ նախատական բերան մը բանեցընեն, չէ թէ միայն յանձն կ'առնուր որ Մածծինեանք իր սահմաններուն վրայ ժողովուելով, հոնկից ամէն կերպով ջանք ընեն Լոմպարտացիները ոտք հանելու, հապա նաեւ Գեսիսի մէջ վանքերը ջնջելով, Աւստրիայի հպատակ եղող կրօնաւորաց ինչքը յափշտակած էր եւ հատուցում չէր ըրած: Ուստի յիշեալ հրամանատարը հրաման տուաւ որ Լոմպարտիա եղող բոլոր Գեսիսցիները դուրս ելլեն: Աս դէպքերէն տարի մը ետքը անձանօթ մէկը դաշունով զարկաւ մեռցուց Բարմայի կարոլոս դուքսը (1854, Մարտ 26), որուն ամուսինը՝ Պերրիի սպանուած դքսին

(43) աղջիկը, սկսաւ խնամապետութիւն ընել իր ան-
չափահաս Ռորերոս որդւոյն անուամբը: — Հռոմի տե-
րութիւնը գէթ արտաքուստ հանդարտ էր, Գաղղիա-
կան զորաց՝ մայրաքաղաքին մէջ, իսկ Աւստրիացւոց՝
Անգոնայի բերդին մէջ կենալովը: Նոյն միջոցին կա-
թոլիկէ եկեղեցւոյ համար նշանաւոր գէպք մը պա-
տահեցաւ: Պիոս քահանայապետը Հռոմի մէջ 192
կարդինալներու, արքեպիսկոպոսներու եւ եպիսկոպոս-
ներու ժողով մը գումարելով (1854, Նոյ. 20) Ս.
Աստուածածնայ անարատ յղութիւնը իբրեւ հաւատոյ
վարդապետութիւն հրատարակեց (Գեկտ. 8):

241. Աւստրիայի մէջ սահմանադրութեան վեր-
ցուիլը: Կրօնական դաշինք: Աս կայսրութեան մէջ
գրեթէ ամէն նկատմամբ Սարդինիայի հակառակ քա-
ղաքականութիւն մը կը բանեցուէր: Ընդհանուր յե-
ղափոխութեան ժամանակները (1848—1849) ամէն
տէրութիւններէն աւելի տակնուվրայ եղած ու փնտ
կրած ըլլալով, ամէն բանէ յառաջ պէտք էր փոյթ-
տանիլ ընդունած վէրքերը գոցելու եւ առանձինն ել-
եւմուտքը կարգի գնելու: Շուարցենպէրկ իշխանին
գահերիցութեան տակ եղող պաշտօնարանը, որուն
երեւելի անդամներէն ոմանք համոզմամբ իսկ սահմա-
նադրական էին, խել մը ժամանակ տէրութիւնը նոյն
ճամբուն մէջ յառաջ տանելու ջանք ընելէն ետեւ,
տեսնելով որ աս բանս չիկրնար միաբանիլ իրենց գըւ-
խաւոր նպատակն եղող կեդրոնականութեան գաղա-
փարին, այս ինքն՝ տէրութիւնը կազմող զանազան
գաւառներէն միաձոյլ տէրութիւն մը կազմելու գա-
ղափարին հետ, որովհետեւ խիստ գժուար էր, եթէ
ոչ անկարելի, միակ խորհրդանոցի մէջ մէկտեղ Գեր-
մանացի ու Իտալացի, Սլաւ ու Մաճառ պատդամաւոր-
ներ նստեցրնել, աղէկ սեպեցին սահմանադրութիւնը
վերջացրնել: Ուստի յառաջագոյն ոգիները նախընթաց
անորոշ հրամանագրով մը պատրաստեղն ետեւ (1851,
Օգոստ. 20), կայսրը հրատարակեց որ սահմանադրու-

Թիւնը կը վերցընէ (1852, Յունու. 1) : Ասոր դիմացը Աւստրիայի վերանորոգութեան գործքը հիմնական ընելու մտքը Շուարցենպէրկ ուզեց տէրութիւնն ու եկեղեցին ներքուստ իրարու հետ անձկութեամբ կապել : Ասոր համար եպիսկոպոսաց վոյս եզոզ յառաջուան կապերէն ոմանք վերցուեցան, որուն առաջին նշաններէն մէկն եղաւ նոյն եպիսկոպոսաց Ալէէնայի մէջ մեծ ժողով մը գումարելը (1850) : Իսկ քանի մը տարի ետքը Հռոմի հետ կրօնական դաշինք դրուեցաւ (1855, Օգոստ. 18), որով վերոյիշեալ զիջումներն ու եկեղեցւոյ արուած ազատութիւնները կը հաստատուէին ու կ'ընդարձակուէին : Նոյն միջոցներուն մեծ կորուստ մ'ըբաւ Աւստրիա : Շուարցենպէրկ իշխանը յանկարծական մահուամբ իր քաղաքականութեան ընթացքէն վերցաւ : Իրեն յաջորդեց մինչեւ ան ժամանակ Լոնտոն գետպան եզոզ Պուլ-Շաւենշպայն կոմսը : Կայսրն Իտալիա ու Հունգարիա ճամբորդութիւն ըրաւ, անտեղաց ժողովրդոց հոգին շահելու համար (1852), եւ ամէն տեղ մեծ սիրով ու պատուով ընդունուեցաւ : Հետեւեալ տարին Միլանի շիսթութիւններէն (240) քանի մ'օր ետքը Լիպենեի անունով Մաճառ երիտասարդ մը նոյն կայսրը դանակաւ ծածրակէն վերաւորեց (1853, Փետր. 18) . վերքը բաւական ծանր էր . բայց ինքնակալն առողջացաւ :

Է.

Արեւելեան պատերազմը Լաիօնիթաց դէպքերով ու հետեւող թիւններովը (1850—1858) :

242. Փախստականաց խնդիրը : Ռուսը Գանուրեան իշխանութիւններէն կ'ելլեն : Հազիւ թէ Եւրոպական յեղափոխութիւններն ամէն կողմ զուպուած էին, եւ անիշխանութեան մէջ գտնուող տէրութեանց կառավարութիւնները զօրանալով ու կարգաւորուելով, ընդհանուր հանգարտութիւնը հաստա-

տուած էր, մէյ Տ՛ալ Արեւելեան պատերազմը բացուեցաւ, որուն քանի մը նախընթաց գեղքերը հաս պատմելու ենք: — Վերջին տարիները բաւական մեծ զէճ Տ՛ելած էր՝ մէկ կողմանէ Օսմանեան տէրութեան եւ մէկալ կողմանէ Ռուսիայի ու Աւստրիայի մէջ, Հունգարացի ու լեհ-փահստականներուն պատճառաւ, որոնք Մաճառաց յեղափոխութեան զարուելու ժամանակը Ցածկաստան փախած էին (203): Նախ Աւստրիա (1849, Օգոստ. 28), մէկ քանի օր վերջն ալ Ռուսիա (Սեպտ. 4) խնդրեց որ անոնք ձեռք տրուին: Բայց Դուռը՝ Գաղղիայի ու Անգղիայի խորհրդով՝ հաստատութեամբ դէմ դրաւ եւ չուզեց զիջանիլ, որուն վրայ երկու առաջին տէրութիւնք Դրան հետ դեպաւանական հաղորդակցութիւննին կարեցին: Անգղիա մէկ կողմանէ իր Բարգէր ծովապետին հրաման խաւրեց որ դէպ ի Չանագալէսի նաւէ (Հոկտ. 6), մէկալ կողմանէ ալ իր Պետրոբուրգի դեպաւանին հրահանգ տուաւ որ հոն բարեկամական ազդարարութիւն ընէ (Հոկտ. 9): Սակայն աս վերջինն իր պաշտօնը չկատարած, Դրան խաւրած Ֆուլատ Էֆէնտի դեպաւանը Նիկողայոս կայսեր հետ տեսնուած եւ խնդիրը կարգի գրած էր, մէջերնին ասանկ միաբանելով որ Ռուսիա փախուսականները պահանջելէն ետ կենայ, եւ Դուռը զանոնք երկրին ներքին կողմերը խաւրէ: Իսկ Ռուսիայի արտաքին գործոց պաշտօնեայ Նեսելրոտ կոմսը Աֆգղիայի պատասխան տուաւ թէ կայսրը երբեք չիկրնար յանձն առնուլ որ Ռուսիայի ու Դրան յարաբերութեանց մէջ ուրիշ տէրութիւն մը միջամտութիւն ընէ: Մէկ կողմանէ խնդիրն այսպէս շիտկուած ատեն, մէկալ կողմանէ Չանագալէսի Անգղիական նաւատորմի մը խաւրուիլը՝ մեծ այլայլութիւն պատճառած էր Վիեննա ու Պետրոբուրգ. վասն զի ասիկայ հակառակ կը սեպուէր Լոնտոնի 1840ին պայմանագրութեան (160), որուն Դ. Յօդուածը՝ հետեւեալ տարին (1841, Յուլ. 13) առանձին պայմանագրութեան նիւթ եղած էր

Հինգ մեծ տէրութեանց եւ Գրան մէջ, որով եւ Գաղղիա ալ ուրիշներուն պէս նոյն դաշինքով կը կապուէր: Սակայն յիշեալ նաւատորմիդ քիչ մը վերջը ետ քաշուելով (1850, Յունու. 9), աս նկատմամբ եղած վախն ալ շուտով փարատեցաւ: — Շատ տարիներէ վեր աս առաջին անգամն էր, որ Գուռը՝ խորհրդատու եւ պաշտպան ունենալով արեւմտեան երկու մեծ տէրութիւնները՝ Ռուսիայի դէմ կը գառնար, որուն նիկողայոս կայսեր այնպէս գիւրաւ զիջանելը՝ մեծ զարմանք պատճառեց: Քիչ մը ետքը ուրիշ խնդրոյ մը մէջ ալ Գուռը Ռուսիայի դէմ իր խօսքը քալեցուց, յառաջ տանելով իր պահանջումը, որ Ռուսը իրենց զօրքերը Գանուբեան իշխանութիւններէն հանեն (1851, Յունու. 24), ուր մէկ երկու տարիէ (1848էն) վեր կը կենային: Աս պահանջման ալ Ռուսիա զիջաւ, անով գոհ ըլլալով որ Գուռն աս նկատմամբ ուղղակի իրեն հետ բանակցեցաւ՝ առանց ուրիշ տէրութեան միջամտութեան:

243. Գարատաղ: Գանիէլ Բեդրովիչ իշխանը, եւ աշխարհական ու հոգեւոր իշխանութեանց բաժնուիլը: «Նոյն ատենները Աւստրիայի ու Գրան մէջ նար խնդիր մ'եղաւ, որուն առիթ եղան Գարատաղի (Մոնզենեկրոյի) իրողութիւնք: — Խիստ քիչ անգամ պատահած է որ պզտիկ գաւառ մը այնչափ ծանրակշռութիւն ունեցած եւ այնչափ խօսակցութեանց նիւթ եղած ըլլայ, որչափ աս լեռնոս ու ամոյի երկիրը՝ որն որ հազիւ 100,000 բնակիչ ունի: Աս ծանրակշռութիւնն արդէն անցեալ դարուն մէջ ճանչցուած էր, երբ որ նոյնին սահմանակից գաւառները՝ որոնք հիմայ Աւստրիայի ձեռքն են, վենետիկի հասարակապետութեան տակ կը գտնուէին: Մատենագիր մը ան ատենները (1772ին) կը գրէ թէ վենետիկի հասարակապետութիւնն աղէկ մտածելու է որ իրեն համար ինչ փնտաւար հետեւութիւններ կրնայ ունենալ՝ եթէ Ռուսիա Գարատաղի մէջ հաստատուի: Անկից քառա-

346 Գ. ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ (1848—1858), Է.

սուն տարի մը ետքը՝ Գաղղիայի առաջին կայսրութեան ժամանակը՝ քիչ մնաց որ աս պզտիկ երկիրը Գաղղիայի ու Աւստրիայի մէջ նոր դադրած պատերազմին նորոգուելուն պատճառ կ'ըլլար: Բրեզպուրկի խաղաղութեան դաշինքով Նաբոլէոն Վենետիկի յառաջուան հասարակապետութեան երկիրները եւ անոնց հետ Գաղղարոյի նաւահանգիստն Աւստրիայէն առած էր (Հատ. Գ. 161, 2): Իսկ Գարատաղցիք՝ որոնք յիշեալ նաւահանգիստը կ'ուզէն միշտ ձեռք անցնել, նոյն ջրերը գտնուող Ռուսական նաւատորմիդը կանչած էին. Աւստրիայի հրամանատարն ալ՝ առանց դիմադարձութեան՝ թողուցած էր որ Ռուսք Գաղղարոյ մտնեն: Արդ Նաբոլէոն աս դէպքն այնչափ մեծ բանի տեղ դրաւ, որ Աւստրիայի սպառնալիք բրաւ նորէն պատերազմ բանալու, եթէ Ռուսերն ան տեղէն անմիջապէս դուրս ելլելու չստիպէ: — Գարատաղցիք ազգաւ Սլաւ (Սլըֆ) են, իսկ կրօնիւ՝ յունադաւան. ուստի երկու նկատմամբ ալ Ռուսաց կողմը կը միտեն, որոնք եթէ ուզեն Ազրիական ծովուն մէջ նաւահանգիստ մը ձեռք բերել, դիւրաւ կրնան յաջողցնել՝ ցամաքէն իրենց օգնական ունենալով աս իրենց կրօնակից ու ցեղակից ազգը, որն որ երկու կողմանէ անմատոյց լեռներէն դուրս յարձակելով, թշնամեաց մեծ բանակներու դէմ կրնայ դնել: — Վերջին ժամանակները աս տեղը մտադրութեան արժանի դէպք մը պատահած էր: Երէք դարէ աւելի էր՝ որ Գարատաղի եւ պիսկոպոսը միանգամայն աշխարհական իշխանութիւն կը վարէր. որն որ սկսած էր՝ հոնտեղաց Գէորգ իշխանին իր Վենետիկցի կնոջմովը Վենետիկ քաջուած ատեն (1516), վարչութիւնը տեղւոյն եպիսկոպոսին թող տալովը, որուն յաջորդները հետզհետէ թէ եւ պիսկոպոս եւ թէ իշխան կ'ըլլային: Վերջին իշխանեպիսկոպոսին (Վլատիգային) մեռնելէն ետքը, իրեն յաջորդող Գանիէլ Բեդրովիչ իշխանը ճամբայ ելաւ Ռուսաստան երթալու, իբր թէ ըսա սովորութեան

Հոն ձեռնադրուելու համար (1852, Փետր.) : Բայց վիճենայէն թղթով Գարատաղի ծերակուտին խնցուց որ միտքը դրած է իր իշխանական աստիճանին հետ կապուած եկեղեցական իշխանութենէն հրատարիլ . եւ աս նկատմամբ կ'ուզէ ծերակուտին ու ժողովրդեան կարծիքն իմանալ, աղէկ գիտնալով որ աննք տիրով կը հաւանին աս իր բաղձանքին, որուն անշուշտ կը զիջանի Ռուսիա, եւ յայտնի է որ անոր խօսքը՝ հրամանի զօրութիւն ունի : Ծերակցոյն աս առաջարկութիւնը յօժարութեամբ ընդունելով, ժողովքի մէջ հաւանութիւն տուաւ, որոշելով որ իշխանական աստիճանը Գանիէլ Բեգրովիչին ցեղին մէջ ժառանգական ըլլայ, եւ աս որոշումը Ռուսաց կայսեր ծանուցուի պատգամաւորութեան մը միջոցով (Մարտ 21) : Գանիէլ նոյն պատգամաւորութեան հետ ճամբան յառաջ տարաւ, եւ քանի մ'ամիս ետքը իր հայրենիքը դառնալով (Յուլ.), հետեւեալ կիրակին եկեղեցոյ մէջ Ռուսիայի արտաքին գործոց պաշտօնէին մէկ ծանուցագիրը կարդացուց, որուն մէջ եղածներուն հաւանութիւն կը արուէր, եւ կը հրամայուէր որ իշխանէն զառ՝ եպիսկոպոս մը գրուի :

ՉԳԳ. Գուռը Գարատաղցիները զսպելու կ'ելլէ : 'Ղուռը՝ որուն վերին իշխանութեան ասկ կը գանուի Գարատաղ, ինչպէս ինք իրմէ կրնայ գուշակուիլ, չէր կրնար անտարբեր աչքով տեսնել աս բաները : Գարատաղցիներուն հպատակութեան միակ նշանն էր՝ իրենց իշխան-եպիսկոպոսին Սուլդանէն հաստատուիլ . եւ եթէ նոյն իշխանութեան աստիճանը ժառանգական ըլլար, ալ հաստատութեան կարօտութիւն չէր մնար, որով Գարատաղ Գրան հետ կապող վերջին կապն ալ կը խզուէր : Յիշեալ պատճառն ըստ ինքեան բաւական էր Օսմանեան կառավարութիւնը տհաճեցնելու . բայց աւելի տհաճութեան առիթ կ'ըլլար՝ եղածներուն Ռուսիայի ձեռքով կատարուիլ : Աս նկատմամբ մտադրութեան արժանի ան պարագան ալ

կայ, որ Ռուսիա անանկ ընթացք մը կը բռնէր, որով իբր թէ կ'ուզէր ցուցնել որ կայսրն աս բաները կը գործէ չէ թէ այնչափ իբրեւ յոյն եկեղեցւոյ գլուխ, հապա իբրեւ պշտարհական վեհապետ եւ իբրեւ Գարատաղի վերին տէր: Եւ աս գաղափարը նոր բան չէր. արդէն շատ տարի յառաջ (1806) Ռուս քաղաքագէտ մը (Սդրոկոնոֆ կոմսը), կայսեր տուած մէկ տեղեկութեան մէջ կը զբուցէր թէ «Գարատաղիք չեն ուզեր երբեք իրենք զիրենք Գրան հպատակ ճանչնալ. մեր արքունեաց ուղղած աղերսագիրներնուն մէջ իրենք զիրենք միշտ ձեր վեհափառութեան հաւատարիմ հպատակ կ'անուանեն», : Ասկից զատ Գուռը կը վախնար որ Գարատաղի տուած օրինակը՝ մերձաւոր Սլաւ գաւառներուն մէջ ալ հետեւողներ չգտնէ: Եւ թէ որչափ իրաւացի էր աս վախը, յայտնի կը ցուցնէ նոյն միջոցներուն Պետրոբուրգի մէկ լրագրին հրատարակած հետեւեալ հատուածը: «Ցածկատան, կ'ըսէ աս լրագիրը, իր ամէն հակառակորդաց հետ ըրած կռիւներուն մէջ՝ կործանուելու վրայ եղող տէրութեան մը պատկերը կը ներկայացնէ, որուն գուցէ ախնափոքր քառամը մահացու հարուածը պիտի տայ: . . . Եւրոպայի մէջ Պոսնիա ու Հերցոգովինա (Հերսէք)՝ Յունաստանի, Սերուիայի, Մոլտաւիայի, Վալաքիայի ու Գարատաղի օրինակին կրնան հետեւիլ: . . . Գուցէ ալ հեռու չէ անօրը՝ որուն մէջ տէրութեան բախտը պիտի որոշուի», : Արդ այսպիսի վտանգներու առջեւն առնելու եւ ամէն դէպքերու պատրաստ գտնուելու համար, Գուռը Էօմեր փաշային հրամանատարութեան տակ Պոսնիա մեծկակ բանակ մը կը ժողվէր: Իսկ Գարատաղիք իրենց ընթացքովն առիթ տուին նոյն բանակին իրենց դէմ քալելուն. իրենց ամէն ժամանակուան սովորութեան համեմատ՝ սահմաններնէն դուրս ելլելով, Սկոտրայի լճին քով Օսմանեան բերդի մը վրայ յարձակեցան: Աս որ եղաւ, Գուռն առանց միտ դնելու դեռպաններուն հակառակ խորհրդին, Էօմեր փաշային հրաման:

խաւրեց որ յառաջ քալէ, Ադրիական ծաղուն եզրներն ալ պաշարման վիճակի մէջ դրաւ : Բանակը շարժեցաւ եւ Թշնամութիւնք սկսան (1853, Յունու. 12). բայց դեսպանագիրութիւնը Թող չտուաւ որ վէճը զէնքով որոշուի :

245. Աւստրիա միջամտութիւն կ'ընէ : Այնինկէն կոմսին դեսպանութիւնը : Աւստրիայի խիստ անհաճոյ եղաւ իր սահմաններուն վրայ տասնկ պատերազմ մը բացուիլը : Կը մտածէր որ եթէ Ռուսիա միջամտութիւն չընելով, Գուռն ուզածը յառաջ տանի, կարելի է որ ուրիշ շրջակայ Սլաւ ազգերը գրգռութեան մէջ իյնան, եւ նոյն գրգռութիւնն իր Սլաւ հպատակներուն ալ անցնի : Եւ Թէ մեծապէս իրաւունք ունէր այրպէս մտածելու, յայտնի կը տեսնուի Նիկողայոս կայսեր նոյն օրերն Անգղիայի դեսպանին բաժ առ խօսքէն. «Թէ որ Էօմէր փաշան Գարաատաղցիները ջնջելու փորձ ընէ, եւ առ պատճառաւ քրիստոնեայք ընդհանրապէս ոտք ելլեն, Սուլդանին իշխանութիւնն ընդ միշտ կը կործանի», : Իսկ եթէ ասոր հակառակ Ռուսիա միջամտութիւն ընէր, ինչպէս հաւանական էր, արգէն ունեցած մեծ ազդեցութիւնն աւելի կ'ընդարձակուէր, եւ կարելի էր որ Գարատաղի մէջ բոլորովին հաստատուէր, որուն Աւստրիայի սրչափ վնասակար ըլլալը վերը յիշատակեցինք (243) : Արդ աս չարեաց տուելն առնելու, եւ Գուռնն ունեցած ուրիշ քանի մը պահանջումները գլուխ հանելով՝ փախստականաց խնդրոյն առթիւ կորսընցուցած ազդեցութիւնը նորէն ստանալու համար, արտաքոյ կարգի միջոցի մը ձեռք զարկաւ, եւ այնչափ շուտութեամբ ու սաստիկութեամբ գլուխ տարաւ ձեռնարկութիւնը, որ բոլոր աշխարհք զարմացուց : Սպարապետի տեղակալ Այնինկէն կոմսն անակնկալ իրրեւ արտաքոյ կարգի դեսպան կոստանդնուպոլիս եկաւ (1853, Յունու. 30), եւ Գարատաղի դէմ եղած պատերազմին՝ առանց Աւստրիայի ծանուցուելու սկսելուն, Էօմէր փաշային բանակին մէջ խել մը փա-

խրատականներ գտնուելուն վրայ արտունջ բնելէն եւ իր տէրութեան ուրիշ քանի մը պահանջումները Գրան առջեւը դնելէն ետեւ, ուզեց որ պատերազմը դադարի եւ ուրիշ խնդիրները կարգի գրուին: Դուռն իսկզբան այնչափ միտեալ չէր երեւար զիջանելու. բայց երբ որ դեռագանը երկք օրուան պայմանաժամով վերջնագիր մը տուաւ (Փետր. 11), ան ատեն ամէն բան յանձն առաւ. այնպէս որ երկք օր ետքը Լայնինկէն բոլորովին գոհ եղած՝ ճամբայ ելաւ (Փետր. 14): Աւստրիայի աս ընթացքը ստոյգ է սաստիկ էր եւ ըստ մասին Գրան վեհապետութեան հակառակ, ստոյգ է իր դեպպանին խօզքերուն աւելի ազգեցութիւն տալու համար՝ սահմաններուն վրայ մեծկակ բանակ մը գումարելը, թշնամութեան նշան մըն էր. բայց ըստ ինքեան Լայնինկէն չէ թէ իբրեւ թշնամի, հապա իբրեւ բարեկամ կու գար, եւ Գրան՝ անոր ամէն պահանջումներուն զիջանալէն, որուն բոլոր օտար դեպպանները միարան զինքը յորդորած էին, յայտնի կը տեսնուի որ Աւստրիայի աս միջամտութիւնը՝ ընդունեցաւ օգնութեան մը պէս, որով Ռուսի ազգեցութեան աւելնալը կը խափանուէր: Իրգք ալ աս կերպով Ռուսիայի միջամտութեան առջեւն առնուած կարծուեցաւ, մանաւանդ որ յաջողութեամբ լիննալու վրայ էր քանի մը տարիէ վեր յուզուող ուրիշ վէճ մը, որուն հիմայ մտադրութիւննիս պիտի նուիրենք. բայց արդէն ամէն բան կարգի գրուած ու որոշուած, եւ իբրեւ թէ նեան աղեղէն արձակուած ըլլալով, չէր կրնար ետ դարձուիլ:

ՉԿԵ. Երուսաղէմի Ս. տեղերուն խնդիրը: Ան քանի մը տարիէ վեր յուզուող խնդիրը՝ Երուսաղէմի սուրբ տեղերուն վրայ էր, որուն համար իսկզբան Անգլիայի քենինկ (Ռեպրէզէնթ) գեպպանն իր տէրութեան դրած էր թէ մեծ շփոթութիւններու առիթ կրնայ ըլլալ (1850, Մայ. 10): Խնդիրը, որն որ նոյն տեղերուն վրայ Յունաց եւ Լատինացուց ունեցած կամ ունենալու իրաւանց վրայ էր, անով աւելի կը մեծնար,

որ Ռուսիա՝ առաջիններուն եւ Գաղղիա՝ վերջիններուն կողմը բռնելով, աս նիւթը կը գործածէին իրենց արեւելքի վրայ ունեցած ազգեցութիւնն աւելցընելու: Աս խնդրոյն մէջ Գրան ուրիշ բան չէր կրնար, բայց եթէ դատաստան ընել եւ վճիռ տալ թէ իրաւունքը որ կողմն է, կամ թէ իւրաքանչիւր կողմ՝ որչափ իրաւունք ունի. բայց աս բանն չէ թէ միայն ըստ ինքեան խիստ դժուար էր. հապա նաեւ վրան արտաքին գժուարութիւնք ալ կ'աւելնային: Երկու ազգերուն իրաւանց ու արտօնութեանց շատերը հին դաշանց վրայ հիմնուած էին. բայց հետզհետէ շատ բան փոխուած էր, շատ անգամ նոյն իսկ թագաւորական կամ փոխարքայական հրովարտակներով, որոնք երբեմն իրարու հակառակ ալ կ'ելլէին: Արդ ինչպէս կրնար Գուռն ասանկ կնճռեալ խնդիրներու մէջ դատաստան ընել: Սակայն թէեւ ներքին գժուարութիւն չգտնուէր, ինչպէս կարելի էր անանկ վճիռ մը տալ, որով երկու իրարու հակառակորդ կողմանց պաշտպան կեցող մեծ տէրութիւնք հաւատարապէս զո՛հ ըլլային: Ռուսաց Դիգոֆ դեսպանը կը սպառնար որ Կոստանդնուպոլէն կ'ելլէ, եթէ Գուռը սուրբ տեղեաց իրողութիւններուն նկատմամբ փոփոխութիւն ընէ (1851, Հոկտ.), իսկ Գաղղիացուոց Լափալէդ դեսպանը միեւնոյն սպառնալիքը կ'ընէր, թէ սր փոփոխութիւն չըլլայ (Դեկտ.): Իրօք ալ վերջին դեսպանը նոյն տարին կնքեց դեսպանական հազորդակցութիւնը կարելով: Ասոր վրայ Գուռն իրեն քանի մը զիջումներ ըրաւ, որոնցմով անիկայ զո՛հ եղաւ (1852, Փետր. 8). իսկ Ռուսիայի դեսպանը հանգարտեցընելու համար հրովարտակով մը Յունաց իրաւունքները հաստատեց: Այսպէսով խնդիրը կարգի գրուած կարծուեցաւ ալ նէ, շուտ մը վէճերը նորէն սկսան. եւ վերջապէս բանն անոր վրայ մնաց որ Ռուսիա կը պահանջէր որ ի շնորհս Յունաց արուած հրովարտակը Երուսաղէմի մէջ հրապարակաւ կարդացուի. իսկ Գաղղիա՝ Գրան տուած խոստման վրայ հիմնած՝ կը պնդէր

որ չկարդացուի, եւ կը սպառնար որ եթէ խօսքը չբռնելու ըլլայ, նաւատորմիդը կոստանդնուպոլիս կը խաւրէ (Նոյ)։ Քիչ մը ժամանակ ալ շարունակեց աս վէճը, եւ ամէն մարդ կը վախնար որ ծայրը պատերազմի պիտի երթայ, մէյ մ'ալ մէկէն Գաղղիա իր ընթացքը փոխելով (Գեկտ . 31)։ դարձեալ ամենայն ինչ լմբնցած կարծուեցաւ։

ՉԷՊ. Ս. Տեղեաց վէճերուն ներքին շարժառիթը, եւ Գաղղիայի քաղաքականութեան նպատակը։ Ալ երբ արդէն զուցեցինք որ նոյն վէճին մէջ երկու մեծ տէրութեանց նպատակն էր իրենց արեւելք ունեցած ազդեցութիւնն աւելցնել. բայց ասկից զատ՝ ուրիշ շարժառիթ մ'ալ կար։ Նիկողայոս կայսրը՝ որն որ յառաջուրնէ կը տեսնէր որ Նաբոլէոնի կայսրութեան տակ Գաղղիա շատ պիտի զօրանայ, կը բաղձար մէկալ մեծ տէրութիւններն անոր դէմ իրեն հետ միաբանել։ Ուստի սուրբ տեղերուն վէճը՝ որուն սկզբնաւորութիւնը Գաղղիայէն եղած էր, իրեն յարմար առիթ երեւցաւ իր նպատակին հասնելու. որովհետեւ նոյն նիւթին մէջ Գաղղիական դեպքանն անանկ բարձրամտական ու սպառնալից լեզու մը կը բանեցընէր, որ ուրիշ մեծ տէրութիւնք ալ խիստ ահաճեցան, մինչեւ իրենց Փարիզի դեպքաններուն հրահանգ խաւրեցին աս ահաճութիւննին յայտնելու։ Այսպէսով Ռուսաց կայսրը կարծեց թէ իր դիտաւորութիւնը կրնայ գլուխ հանել եւ Նաբոլէոն Գ.ին դէմ այնպէս Եւրոպական դաշնակցութիւն մը կազմել, ինչպէս որ իր Աղէքսանդր եղբայրն անոր հօրեղբօրը Նաբոլէոն Ա.ին դէմ կազմած էր։ Բաներն ան աստիճանի հասան որ Սուլտանին առաջարկեց զինքը Գաղղիայէն պաշտպանելու համար օգնական բանակ մը խաւրել։ Բայց ինքն աս խորհուրդներու մէջ եզած ժամանակ իր հակառակորդը, որն որ չէր կրնար անոր ծածուկ դիտաւորութիւնը չտեսնել, ուզեց նախ անոր ձեռքէն առնուլ ան զէնքերը՝ զորոնք իրեն դէմ կ'ուզէր գործածել, եւ

ետքը զանոնք նոյն խսկ անոր դէմ գարձընել: Ուստի եւ մէկէն իր Պետրոբուրգի գեուպանին հրահանգ խաւրեց որ հոնտեղաց գահչճին յայտնէ թէ ինչ պատրաստ է սուրբ տեղերուն նկատմամբ Ռուսիայի հետ ուղղակի խօսելով՝ մէջերնին միաբանիլ: Ասով հասաւ իր առաջին նպատակին, որովհետեւ մէկէն ի հարկէ գադրեցաւ ուրիշ տէրութեանց իրեն դէմ ունեցած ահաճութիւնը, եւ այսպէս Ռուսին իրեն դէմ բանեցընել ուզած զէնքերը ձեռքէն ինկան: Մէկալ կողմանէ ալ ապահով էր որ շուտով առիթ կ'ունենայ յառաջուան Ռուսական-Գաղղիական վէճը՝ Ռուսական-Եւրոպական վէճի գարձընել, ինչպէս իրօք ալ եղաւ:

ՁԷՑ. Ռուսաց կայսեր Անգղիայի դեսպանին ըրած մտերմական առաջարկութիւնը: «Նաբուէտնին զիջողութեան լուրը Ռուսաց մայրաքաղաքը հասնելէն օր մը յառաջ, Նիկողայոս կայսրը սկսած էր ջանալ Անգղիայի կառավարութիւնն իր կողմը շահելու: Նոյն տէրութեան Սէյմուր գեուպանին հետ զանազան անգամ անձամբ բանակցութիւն ընելով, ամենայն ինչ առջեւը դրած էր: Հարկ է որ, կ'ըսէր, Անգղիայի կառավարութիւնն ու ես կատարեալ միաբան ըլլանք: Թէ որ մենք միաբանինք, արեւմտեան Եւրոպայի վրայ անհոգ կ'ըլլամ. որովհետեւ անկէ ետեւ ուրիշներուն ինչ ընելն ու ինչ մտածելը՝ մեծ ծանրակշռութիւն չ'ունենար: Տաճկաստան կործանելու վրայ է. պէտք է որ առ նիւթին վրայ Անգղիա ու Ռուսիա յառաջուրնէ կատարեալ միաբանութեան մէջ գտնուին: Օսմանեան տէրութիւնը ծանր հիւանդի մը նմանցընելով, կը զրոցէր որ մեծ դժբախտութիւն կ'ըլլայ՝ եթէ ամէն պատրաստութիւնները չտեսնուած՝ նոյն հիւանդը մեռնի: Աս խօսակցութեանց մէջ յայտնեց որ Բիւզանդեան պետութեան մը կանգնուիլն ու Յունաստանին զօրաւոր տէրութիւն մ'ըլլալը չ'ուզեր: Բացայայտ իմացուց որ իրենց միաբանութեան նպատակն ան պիտի ըլլայ որ եթէ Տաճկաստանի կործանումը պատահի,

անոր գաւառներն իրենք ուզածնուն պէս մէջերնին բաժնենն : Իր կարծիքն աս էր՝ որ ան գաւառներէն մէկքանին, ինչպէս Պուլկարիա ու Սերուիա, իր պաշտպանութեան տակ՝ անկախ տէրութիւնք ըլլան, Վալաքիայի ու Մոլտաւիայի պէս . իսկ Եգիպտոս ու Գանատիա Անգղիայի տրուի : Անկէ ետքը ուրիշ մասերուն Ռուսիայի անցնիլն ինք իրմէ կ'իմացուէր : Միայն Կոստանդնուպոլսոյ համար՝ առանց յայտնապէս զրուցելութէ ինչ կ'ուզէ որ ըլլայ, ըսաւ թէ պատրաստ եմ ինք զինքս պարտաւորելու որ հոն իբրեւ տէր չհաստատուիմ : Չեմ ըսեր որ, աւելցուց, իբրեւ աւանդապահ չեմ առնուր . վասն զի պարագաները կրնան զիս ստիպել Կոստանդնուպոլիս զօրքով բռնելու, թէ որ անոր վրայ յառաջուրնէ բան մ'որոշուած չըլլայ : Աս խօսակցութեանց մէջ Գաղղիայի համար յայտնապէս ըսած էր թէ անոր ընելիքը հոգը չէ, Պրուշի վրայ ամենեւին յիշատակութիւն չըրաւ . եւ երբ որ դեսպանն ըսաւ թէ զԱւստրիա կը մոռնայ, Ո՛ր, պատասխանեց կայսրը, Ռուսիայի վրայ ըսածս՝ Աւստրիայի վրայ ըսած կը համարիմ, մէկուն պատշաճածը՝ մէկիւրին ալ կը պատշաճի . որով այնպէս ուզեց հասկըցնել թէ իր ուզածին պէտք է որ Աւստրիա գլուխ ծռէ . կարելի է անոր ալ՝ իբրեւ շնորհք՝ մէկ երկու գաւառ բաժին հանելով : Անգղիայի գեսպանը հետզհետէ իր կառավարութեան կը հաղորդէր աս խօսակցութիւնները, որոնք գրեթէ մէկուկէս ամիս տեւեցին (1853, Յունու. 9—Փետր. 21) : Բայց Անգղիա քաղաքավարական կերպով մը մերժեց իրեն եղած առաջարկութիւնը, ըսելով թէ Տաճկաստան տակաւին բաւական կենդանական զօրութիւն ունի, թէ անոր կտոր կտոր ըլլալն Անգղիայի շահուն համաձայն չէ, եւ թէ ինչպէս որ ըլլայ՝ իրենք արեւելքի նկատմամբ ձեռնարկութիւն մը չըրած, պէտք է որ գոնէ Աւստրիայի ու Գաղղիայի հետ խորհրդակցին :

ՉԷԹ. Մենչիգոֆի դեսպանութիւնը : Նիկոլայոս կայսրը մէկ կողմանէ աս խօսակցութիւններն ըրած

ատեն, մէկալ կողմանէ սահմանները զօրք կը ժողվէր եւ իբրեւ արտաքոյ կարգի դեպքան կը խուրէր զՄենչիգոֆ իշխան ծովապետը, որն որ Սեւաստորոյլի նաւատորմին աչքէ անցընելէն ու հոնտեղաց 30,000ի բանակին զօրահանդէս ընելէն ետեւ, խել մը երեւելի մարդիկներու հետ ճամբայ ելաւ ու Կոստանդնուպոլիս հասաւ (1853, Փետր. 28): Աս դեպքանին նպատակն ան էր՝ որ Ռուսիայի կայսրն Օսմանեան տէրութեան մէջ եղող բոլոր յունադաւաններուն վրայ պաշտպանութեան իրաւունք ունենայ, որն որ ուրիշ բան ըտել չէր, բայց եթէ աս՝ որ Սուլդանին հպատակներէն տաւուերկու միլիոնի չափ մարդիկ իր հպատակութենէն ելլելով, Ռուսիայի հպատակութեան տակ մտնեն: Գուռը խիստ նեղի եկաւ աս արտաքոյ կարգի պահանջումէն, որուն ամենեւին չէր կրնար հաւանութիւն տալ: Բայց դժբախտութեամբ ապաւինելու յենարան մ'ալ չունէր. ըստ պատահման ոչ Գաղղիայի եւ ոչ Անգղիայի բուն դեպքանները Կոստանդնուպոլիս կը գտնուէին, հապա պարզ գործակատարներ: Եւ թէ Ռուսիա աս բանիս վրայ մեծ ծանրակշռութիւն կը դնէր, անկից յայտնի է, որ դեպքանն Օսմանեան պաշտօնեաներէն խնդրած էր որ իր դեպքանութեան նիւթը մէջերնին ծածուկ մնայ եւ արեւմտեան տէրութեանց չյայտնուի. եւ աս պարագան միայն բաւական էր Գուռը մեծ պլայլութեան մէջ ձգելու: Ի վերայ այսր ամենայնի անանկ այրական հաստատութիւն ցուցուց, որուն Ռուսիա չէր սպասեր. անոր համար Մենչիգոֆ՝ առանց պահանջման նիւթէն խոտորելու, կերպին մէջ հեղհեղատէ փոփոխութիւն խոթեց եւ աստիճանաբար նուազադոյն ձեւով մը գոհ եղաւ: Իսկզբան կ'ուզէր որ Գուռը՝ Ռուսիայի պահանջումն ընդունիլը՝ կերպական դաշնադրութեամբ մը հաստատուէ, եպրէն զիջաւ որ դաշնադրութեան տեղ՝ պարզապէս պայմանագրութեամբ (սէնէրով) մը խնդիրը կարգի դրուի, վերջապէս յանձն առաւ որ յայտագրով մը մէջերնին գտնուի, որուն

ծրագիրն ինք առաջարկեց: Ռուսի կառավարութիւնը վերջէն նոյն ծրագիրն իրեն սեպհականեց, յայտնելով միանգամայն որ Մենչիգոֆ իր հրահանգաց համեմատ վարուած է: Բայց աս՝ թէեւ առերեւոյթ՝ զիջողութիւնը շատ յարմար չէր Գրան դիմադարձութիւնը յաղթելու. մանաւանդ նոր փոխադրայ Ռէշիտ փաշան, իրեն օգնական ունենալով նոյն միջոցին ետ դարձող անգղիական ու գաղղիական դեսպանները, անոնցմէ ընդունած թէ նիւթական եւ թէ բարոյական պաշտպանութեամբը, հաստատութեամբ դէմ գրաւ Ռուսի դեսպանին վերջնագիրներուն, որով անիկայ վերջապէս ստիպուեցաւ դատարկաձեռն թողուլ երթալ (Մայ. 21):

250. Անգղիայի ու Գաղղիայի նաւատորմիդները Չանագզալէսի մտ: Ռուսի զօրքերը Գանուբեան իշխանութիւնները կը մտնեն: Մենչիգոֆին կոստանդնուպոլէն մեկնելէն տասն օր ետքը Ռուսիայի արտաքին գործոց պաշտօնեան Ռէշիտ փաշային իմացուց որ եթէ յիշեալ դեսպանին տուած ծրագիրը չ'ընդունուիր, կայսրը կամք ունի Գանուբեան իշխանութիւնները զօրք բռնելու (1853, Մայ. 31): Արդէն խել մը ժամանակէ վեր սահմաններուն վրայ ահեղ բանակ մը կը գումարուէր, որն որ կայսեր հրամանին կը սպասէր, որպէս զի ներս մտնելով՝ նիւթական գրաւ կամ պատանդ մը ձեռք բերէ. որուն զօրութեամբը Ռուսական պահանջումները գլուխ տարուին: Բայց մէկալ կողմանէ Գուռն ու իր իրաւանց պաշտպանող արեւմտեան տէրութիւնք ալ անգործ չէին կենար: Մենչիգոֆին Օսմանեան մայրաքաղաքն երեւցած ատենը, բացակայ Լորտ Ռէտգլիֆ դեսպանին տեղակալ Ռոզ գնդապետը Ցէօնտաս ծովապետին հրամանին տակ Մալգա կեցող անգղիական նաւատորմիդը հոն կանչած էր. բայց ծովապետը չէր ուզած իրեն հնազանդիլ, եւ Անգղիայի պաշտօնարանը վերջնոյն ընթացքը հաւնած էր: Իսկ Գաղղիա անմիջապէս Գու-

լնէն նաւատորմիդ մը խաւրած էր Սալամիս, իր գործակալին որոշ հրահանգներ խաւրելով որ Ռուսիայի պահանջմանց ամէն կերպով դէմ գնէ: Եւ թէ աս պահանջումները սրշափ մեծ բանի տեղ կը գնէին նոյն երկու տէրութիւնք, յայտնի կ'երեւայ՝ Մենչիգոֆին Կոստանդնուպոլսէն մեկնելուն երկրորդ օրը Անգղիայի դեսպանին իր տէրութեան տուած տեղեկութենէն (Մայ. 22), որուն մէջ կը զըռցէ թէ նոյն պահանջումը՝ անդամահատութեան մը հաւասար չէ, հապաբոլոր մարմնոյն մէջ թոյն խոթելու. Սուլդանին տաօր միլիոն քրիստոնեայ հպատակներուն վրայ օտար իշխանութեան մը դաշինքով հաստատուիլը, այնչափ վնասակար է երկրին անկախութեան, որչափ իր սահմաններուն մէկ մասին կարսուիլը կամ զօրօք բռնուիլը: Ասոր վրայ Լոնտոնէն նոյն դեսպանին հրաման տրուեցաւ հարկաւոր տեսած ատեն՝ Անգղիական նաւատորմիդը բերել տալու (Յունիս 1), իսկ հետեւեալ օրը Տէօնտաս ծովապետին պատուէր գնաց անմիջապէս նաւատորմիդով Չանագալէոի մտերն երթալու: Շուտ մը Գաղղիական ու Անգղիական նաւատորմիդներն եկան Պեզեզայի (Պէշեկի) ծոցը մտան (Յունիս 14), ուկից 36 ժամու մէջ կրնային Կոստանդնուպոլիս հասնիլ: Սուլդանն ալ աւանձին հրովարտակաւ մը իր բոլոր քրիստոնեայ հպատակներուն եւ մասնաւորաբար Յունաց հին ու նոր իրաւունքները հաստատեց եւ զանոնք անփոփոխ պահելու խօսք տուաւ (Յունիս 4): Բայց այս ամենայն Ռուսիայի վրայ ազդեցութիւն չընելով, կայսրը Կորչագոֆի հրամանատարութեամբը Բրուլթի քով ժողովուած Ռուս բանակին հրաման խաւրեց նոյն գետն անցնելու, զորն որ յայտարարութեամբ մը հրատարակեց (Յունիս 26): Հրամանին վրայ շաբաթ մը չանցած՝ նոյն բանակը, իբրեւ 80,000 հոգի, Տաննենպէրկ ու Լիւտերս զօրապետներուն հրամանին տակ՝ երկու զօրաբաժին եղած՝ գետն անցաւ (Յուլ. 2—3) եւ Գանսուբեան իշխանութիւնները մտաւ: Թէ-

պէտ Դուռը կրնար առ գործողութիւնն ըստ ինքեան պատերազմի պատճառ բռնել. բայց մեծ տէրութեանց խրատին համեմատ՝ զոհ եղաւ պարզապէս բողոքելով (Յուլ. 4), եւ իր նոյն բողոքը մեծ տէրութեանց հաղորդելով:

251. Դեսպանագիտութեան ջանքը: Աւստրիայի ու Պրուշի քաղաքականութիւնը: Ենչպէս որ առանկ պարագայից մէջ սովորաբար կ'ըլլայ, դեսպանագիտութիւնը մեծ գործունէութիւն կը ցուցնէր: Ռուսիայի զօրաց Բրութ անցած օրը (1853, Յուլ. 2), Նեպելոսա կամը շրջաբերականով մ'ուզեց հաստատել որ նոյն զօրաց Դանուբեան իշխանութիւնները մտնելուն պատճառն է արեւմտեան տէրութեանց նաւատորմիչներուն շարժումը. իսկ սա վերջինները պատասխան տուին թէ Ռուսիայի սպառնալիքներն ու Տաճկաստանի վրայ զօրք քալեցնելը՝ զերենք ստիպեց իրենց նաւատորմիչները մտնեցնելու, որով եւ բուն սկիզբ ընողը Ռուսիա կ'ըլլայ, մանաւանդ որ օտար տէրութեան մը երկիրները զօրք խոթելը՝ մեծազոյն թշնամութեան գործք է, քան թէ նաւատորմիչներուն մտնեալը, որոնք ծովու վրայ կը կենային եւ ցամաք զօրք չէին հաներ (Յուլ. 15, 16): Նոյն արեւմտեան տէրութիւնք ան առեն առկաւին կը յուսային որ պատերազմը կը խափանուի, Եւրոպական մեծ դաշնակցութիւն մը կազմուելով, որով Ռուսիա կը ստիպուի ետ քաշուելու: Բաղձացուած դաշնակցութիւնը կազմուելու համար՝ ամենէն յառաջ Աւստրիա վաստըկուելու էր: Իբզբ ալ չէ թէ միայն իրենք Աւստրիայի կայսրը նոյնին մէջ մտնելու յորդորեցին, հապա Սուլթանն ալ ան նպատակաւ Ալէքնիս մասնաւոր դեռուան մը խաւրեց: Բնական բան էր որ Աւստրիա չուզէր եւ ամէն կերպով խափանել ջանար Ռուսին Դանուբի քովերը մեծնալը: Արնայ ըսուիլ թէ եզած խնդիրն անոր վրայ էր թէ արդեօք Աւստրիա՝ չէ նէ Ռուսիա նոյն կողմերն աւելի ազդեցութիւն պիտ'որ ունենայ. ուստի եւ Ռուսիայի

դիմացը՝ արեւմտեան տէրութիւններէն յառաջ՝ ինք պէտք էր ելլել: Աս բանս Վիէննայի դահլիճը խիստ աղէկ կ'ըմբռնէր. բայց չէր կրնար Ռուսիայի դէմ ձեռնարկութիւն մ'ընել, առանց Պրուշի հետ կատարեալ միաբանած ըլլալու. իոկ Պրուշ արեւմտեան տէրութեանց հետ միանալու այնչափ յօժարութիւն չէր ցուցնէր, հապա աւելի Ռուսիայի կողմը միտած կ'երեւար: Անոր համար Աւստրիա այսչափս միայն յանձն առաւ որ խաղաղութեան պահպանութեան գործակից ըլլայ, եւ աս նկատմամբ Պրուշ ալ իրեն հետ միացաւ:

252. Վիէննայի դեսպանաժողովն ու յայտագիրը: Ռուսական-Օսմանեան վիճին սկիզբները Աւստրիայի կառավարութիւնը յայտնած էր թէ իր բաղձանքն ան է որ աս խնդիրը հինգ մեծ տէրութեանց խորհրդովն ու միաբան հաւանութեամբն որոշուի: Արգ-Գաղղիա՝ յառաջագոյն Լոնտոնի դահլիճին յայտնելէն ետեւ, որ նոյն նիւթերուն վրայ՝ Վիէննայի ու Պերլինի աղբունեաց հետ չխօսած՝ ձեռնարկութիւն մ'ընելը վնասակար կը համարի (1853, Մայ. 31), Աւստրիայի առաջարկեց որ Վիէննայի մէջ դեսպանական բանակցութիւնը ըլլան (Յունիս 10): Թէպէտ Գաղղիա աս բանիս մէջ ան ալ կը նկատէր, որ գարձեալ իր աստիճանին համեմատ՝ մեծ տէրութեանց խորհրդոյն մասնակից ըլլայ, եւ միանգամայն Ռուսիայի դէմ գաշնակցութիւն մը կազմէ (247). բայց այսպէսով ալ Աւստրիա առաջարկութիւնը սիրով յանձն առաւ, միայն յայտնեց թէ իր կարծեաց համեմատ՝ ժամանակը ատկաւին եկած չէ, որովհետեւ Ռուսիա չ'ուզեր որ Գրան հետ ունեցած վէճերուն մէջ ուրիշ տէրութիւն միջամտութիւն ընէ (242): Անոր համար փորձ փորձեց թէ Աոստանդնուպոլիս եւ թէ Պետրոբուրգ բարեկամական միջնորդութեամբ երկու տէրութեանց մէջը գանելու, եւ ան ատեն դեսպանաժողովը գումարելու հաւանութիւն տուաւ, երբ որ ուրիշ բոլոր միջոցները պարապ ելան: Չորս մեծ տէրութեանց դեսպաններէն կազմուող

դեռսպանաժողովը բացուեցաւ՝ Աւստրիայի արտաքին գործոց պաշտօնեայ Պուլ կոմսին գահերիցութեամբը (Յուլ. 20)։ Նոյնին մէջ՝ սկզբնաբար Գաղղիայէն ծրագրուած յայտագիր մը՝ քանի մը փոքր փոփոխութիւններ կրելէն ետքը՝ հաճութիւն գտնելով ու ստորագրուելով (Յուլ. 31), Աւստրիայի արքունեաց կողմանէ Ռուսիայի ու Օսմանեան վեհապետներուն խաւրուեցաւ. դեռսպանաժողովոյն մասնակից եղող մէկալ երեք տէրութիւնք ալ իրենց կոստանդնուպոլսոյ ու Պետրոբուրգի գեապաններուն հրահանգ խաւրեցին որ յիշեալ երկու վեհապետները նոյն յայտագիրն ընդունելու համոզեն։ Եթէ աս յայտագիրը հաճութիւն գտնէր, Սուլթանը կամ Գուռը նոյնը Ռուսիա պիտի խաւրէր, եւ անով ամէն բան կարգի պիտի մտնէր։ Նիկողայոս կայսրն իր հաճութիւնը շուտ մը տուաւ աս գրուածքին, որն որ իբր թէ ոսկեղէն կամուրջ մըն էր՝ իրմտած անել ճամբէն պատուով դուրս ելլելու։ Ախէն՝ նախան յայտագիրն ստորագրուելուն չորրորդ օրը Պետրոբուրգէն հեռագրով լուր եկաւ որ կայսրը նոյնը կ'ընդունի (Օգոստ. 3). որմէ երեք օր ետքը՝ Նեսեւրոտ կոմսը յայտնեց թէ աս բանս ան ենթադրութեամբ կ'ըլլայ որ Գուռն ալ առանց փոփոխութեան կ'ընդունի (Օգոստ. 6)։ Ասով ամէնքը սկսան հաստատութեամբ յուսալ որ ալ խաղաղութիւնը չ'աւրուիր, որովհետեւ ապահով կը համարէին որ Գուռն ալ իր հաւանութիւնը չիզլանար։ Մէյ մ'ալ կոստանդնուպոլսէն գոյժ հասաւ որ Ռեշիտ փաշան չ'ուզեր Ախէն՝ նախան յայտագիրն առանց փոփոխութեան ընդունիլ։ Բոլոր դեռսպանադիտականք մեծ այլայլութեան մէջ ինկան, եւ կը ջանային աս նոր անակնկալ դժուարութիւնը վերցընել. մէկ կողմանէ Օսմանեան կառավարութիւնը համոզելու փոյթ կը տանէին որ ըրած փոփոխութիւններն ետ առնէ, որովհետեւ աննշանակ բաներ են. մէկալ կողմանէ Ռուսիայի կառավարութիւնը հաւանեցընելու կ'աշխատէին որ Գրան ըրած

փոփոխութիւններն ընդունի, վասն զի ծանրակշիռ բաներ չեն: Բայց թէ Ռեշիտ եւ թէ Նետեղրոտ հաստատուն կը կենային. եւ վերջինը՝ Գրած ըրած փոփոխութիւններուն վրայ տուած մեկնութեամբը՝ ցուցուց որ անոնք կարծուածին. չափ աննշանակ բաներ չեն (Սեպտ. 7): Ան ատեն մէկալ շորս տէրութեանց աչքին վրայ եղած լուսնն ինկաւ. եւ խոստովանեցան որ Օսմանեան կառավարութիւնն իրաւունք ունի եղբր իրենց առաջարկած յայտագիրն անփոփոխ չընդունելու:

253. Բուսիայի, Աւստրիայի ու Պրուշի վեհապետաց տեսութիւնը: Խաղաղութիւնը պահելու ջանք: Աս կերպով վիճննական յայտագրին վրայ հիմնուած ակնկալութիւնները պարագլի ելլելէն ետեւ, տակաւին պատերազմը խափանելու յոյսը բոլորովին մարած չէր: Չորս տէրութիւնք կ'ուզէին գեռ ժամանակ վառարկիլ. իսկ Ռուսիա կը ջանար զիրենք եւ առանձինն Գերմանական մեծ տէրութիւններն իր կողմը շահել: Նիկողայոս կայսրն Աւստրիայի Օլմիւց քաղաքը գալով, հոն Փր. Յովսէփ կայսեր եւ Պրուշի թագաւորին եղբօրը հետ տեսուեցաւ (1853, Սեպտ. 26), որմէ քանի մ'օր ետքը Աւստրիայի ու Պրուշի վեհապետները Արասաւիայի մէջ Ռուսի ինքնակալին տեսութեան գացին (Հոկտ. 4), երկու անգամ ալ քանի մ'արտաքին գործոց պաշտօնեայք ու գեսպանք ներկայ գտնուեցան: Աս երկու տեսակցութեանց մէջ մեծապէս փոյթ տարաւ Նիկողայոս կայսրն իր հին գաշնակիցներն իրեն հետ միաբանելով, նոր Երից գաշնաւորութիւն մը դնել. բայց բովանդակ ջանքը պարապ եղաւ: Հազիւ կրցաւ անոնցմէ ապահովութիւն ընդունիլ, որ եթէ պատերազմ բացուելու ըլլայ, իրենք չէզոք կենան, ինքն ալ ասոր փոխարէն խօսք տալով որ զօրքերը Գանաւբէն անդին չ'անցընեն: Նոյնպէս անօգուտ եղան թէ Արեւմտեան եւ թէ Գերմանական մեծ տէրութեանց՝ ան միջոցներուն ըրած պլեւայլ փորձերն ու առաջարկութիւնները: Ասոնց վրայ հասարակօրէն

եւ ոչ կարելի կ'ըլլար նոյն չորս տէրութեանց իրարու հետ միաբանիլը, թող թէ զանոնք թշնամութեան մէջ ըլլող տէրութեանց ընդունել տալը: Միայն հեղ մ'ալ չորս մեծ տէրութիւնք մէկտեղ միաբանեցան՝ Գաղղիայէն ու Անգղիայէն առաջարկուած հիմանց վրայ խաղաղական միջնորդութիւն մ'ընելու, որուն վրայ նոյն չորս տէրութիւնք Աիէննայի մէջ արձանագրի ու յայտագրի մը ստորագրեցին (Դեկտ. 5): Աս յայտագիրը միաբան թղթով մը իրենց Աոստանդնուպոլսոյ դեսպաններուն խաւրեցին, որպէս զի Գոււրը համոզեն նոյնն ընդունելու: Գեսպանները մէկտեղ խորհուրդ ընելով (Դեկտ. 12, 13), միաբան գրուածքով մը Աիէննական յայտագիրը Գրան հազորդեցին (Դեկտ. 15), որն որ իր հաւանութիւնը տուաւ (Դեկտ. 31): Բայց աս ալ օգուտ չըրաւ, որովհետեւ Ռուսիա Պաւլ կոմսին ձեռքովն իրեն խաւրուած (1854, Յունու. 14) Աիէննայի յայտագիրն ու արձանագիրը չընդունեցաւ, հապա անոր դիմացն ուրիշ առաջարկութիւններ ըրաւ, որոնք մէկալ տէրութեանց հաճելի չեղան:

254. Գուուր պատերազմ կը հրատարակէ: Թշնամութեանց սկսիլը: Աս դեսպանական խօսակցութիւնները մէկ կողմանէ եղած ատեն, մէկալ կողմանէ պատերազմը հրատարակուած, թշնամութիւնները ուղրսած եւ անանկ դէպքեր պատահած էին, որոնք առիթ եղան՝ Գաղղիային եւ Անգղիային ալ պատերազմի մէջ մտնելուն: Պատերազմի հրատարակութիւնը նախ Սուլդանն ըրաւ (1853, Հոկտ. 4), ինչպէս ինք յայտարարութեան մը մէջ բացայայտ կը զրուցէ, մեծ տէրութեանց խորհրդոյն դէմ: Երկու օր ետքն ալ Էօմէր փաշա Ռուսաց հրամանատարէն պահանջեց որ 15 օրուան մէջ իր զօրքերովը Գանուբեան իշխանութիւններէն քաշուի: Գրեթէ ամիս մը ետքը Ռուսիայի կողմանէ պատերազմ հրատարակուեցաւ (Հոկտ. 31): Արդէն երկու կողմանէ շատոնց ամէն պատրաստութիւնները տեսնուած եւ բանակներն իրարու մօտ ըլլալով,

Թշնամութեանց սկիզբը չուշացաւ : Թնդանօթներու որոտումը նախ Եւրոպա լոուեցաւ՝ նոյն իոկ Ռուսիայի պատերազմ հրատարակելէն յառաջ. Օսմանեանք Իզազայի բերդէն կրակ ըրին Գանուբի վրայ նաւարկող քանի մը Ռուս նաւերու վրայ (Հոկտ. 23) : Ռուզք Գերմանական մեծ տէրութեանց տրուած խոստման համեմատ (253), Գանուբ գետը չէին անցնիր, հապա ձախ կողմը կ'ամրանային. իսկ Էօմէր փաշա անանկ կարծելով որ անոնք գետն անցնելու փորձ պիտ'որ ընեն, աջակողմը կ'ամրացընէր եւ Ռուսաց անցքն արգելելու պատրաստութիւն կը տեսնէր : Աս նպատակաւ 3000ի գունդ մը գետին մէկալ կողմն անցընելով (Նոյ. 4), Օլգենիցայի քով ամուր դիրք մը բռնել տուաւ : Հոն միեւնոյն օրը առաջին անգամ երկու կողմանք իրարու հետ զարնուեցան. 7000 Ռուզք Օսմանեանց վրայ յարձակելով, սաստիկ կռուէ վերջը ետ մղուեցան. Ռուսի կողմանէ միեւնոյն փորձը հետեւեալ վեց օրուան մէջ քանի մը հեղ ալ կրկնուեցաւ (Նոյ. 5—11), բայց աւելի յաջողութիւն չունեցաւ : Օսմանեանց աս յաղթութեան վրայ բոլոր Եւրոպա ուրախութեամբ եւ՝ ճշդիւ խօսելու համար՝ զարմացմամբ լեցուեցաւ : Բայց նոյն միջոցներուն եւ քիչ մը ետքը Ասիայի կողմերը Ռուզք՝ իրենց Եւրոպայի մէջ յաղթուելուն վրէժը կ'առնուին : Ան կողմերը Ախրլցգայի մօտերը (Նոյ. 24) եւ շարաթ մը ետքը կուսմիթի քովերը (Գեկտ. 1) տրուած ճակատներուն մէջ Ռուզք յաղթող եղան եւ զՕսմանեանները ետ քաշուելու ստիպեցին :

255. Գաղղիայի ու Անգղիայի նաւատորմիկները Չանագազալէսի կը մտնեն : Մինոպի ծովամարտը : Գրան կողմանէ պատերազմի յայտարարութիւն ըլլալէն քիչ մը ետքը Գաղղիայի ու Անգղիայի գեսպանները՝ Սուլզանին իրենցմէ խնդրածին համեմատ՝ իրենց նաւատորմիկները կոստանդնուպոլիս կանչեցին (1853, Հոկտ. 20) : Ռուսիա յառաջուընէ աս բանին դէմ բուզք ըրած էր (Սեպտ. 25), Լնտոնի պայմանագրու-

Թեան (160, 242) դէմ համարելով: Որովհետեւ աս բողոքման հիման կ'առնուէր թէ Գուռը խաղաղութեան մէջ կը գտնուի, ասոր դիմացն իրեն պատասխան տրուեցաւ թէ առաջին Ռուս զինուորը Գանուբեան իշխանութիւնները մտնելու վայրկենէն՝ Գուռը խաղաղութեան մէջ բլլալէն դադրած է, որով յիշեալ պայմանագրութեամբ ոչ արեւմտեան տէրութիւնները կը կապուին եւ ոչ Սուլդանը (Հոկտ. 1): Թէպէտ եւ այսպէս նաւատորմիդներն ան ատենէն կրնային Չանագալէսին անցնիլ, բայց՝ ինչպէս ըրինք՝ պատերազմին հրատարակուելէն խել մ'օր ետքը ներս մտան. սակայն ան ատեն ալ Սեւ ծով չելան, հապա Պասփորոսի մէջ հանդարտ կը կենային, որպէս զի աւելի չզժուարնայ խաղաղութեան հաստատուիլը, որուն յոյսը տակաւին չէր մարած: Բայց նոյն միջոցին Սեւ ծովուն մէջ անանկ աղէտալի գէպք մը պատահեցաւ, որով եթէ նոյն խաղաղութեան յոյսը բոլորովին չջնջուեցաւ նէ, զոնէ խիստ նուազեցաւ եւ պատերազմն ընդարձակեցաւ: Պատերազմին սկիզբները Չէրքէզները՝ շատ տարիներէ վեր Ռուսիայի դէմ ըրած կռիւնին օստակացուցած էին: Գուռը՝ որ իրենց հետ հաղորդակցութեան մէջ մտած էր, թէ իրենց եւ թէ իր բանակներուն օգնութիւն հասցրնելու համար, Սեւ ծովը նաւատորմիդ մը խաւրած էր: Արդ Ռուսք աս բանս իմանալով, Սեւաստորոլէն Նախիմով ծովապետին հրամանատարութեամբը նաւատորմիդ մը հանեցին, որն որ Օսմանեան նաւատորմին Սինոպի նաւահանգիստը գրտնուած ատենը, վրան հասաւ, եւ մշուշի մը օգնակաւնութեամբը՝ առանց իմացուելու մօտենալով, Նաւարինի աղէտալի պատահարը (77) նորոգեց (Նոյ. 30): Չէ թէ միայն հոն գտնուող բոլոր Օսմանեան նաւերը՝ բաց ի մէկէն՝ ջնջուեցան ու 4000 հոգի մեռան, հապա քաղաքին մեծ մասն ալ այրեցաւ:

256. Արեւմտեան տէրութեանց ու Ռուսիայի պատերազմի յայտարարութիւնները: Սինոպի պատա-

Հարն արեւելեան խնդիրը յառաջուրնէ աւելի կնճւեց : Լոնտոնի ու Փարիզի դահլիճներն արտաքոյ կարգի պլայեցան, եւ իրենց նախատինք համարեցան, որ իրենց նաւատորմիդներուն մօտաւորութիւնը բանի տեղ չդրուելով, իրենց պաշտպանել խոստացած Օսմանեան տէրութեան նաւատորմիդն այսպէս յարձակում կրած ու չնջուած էր : Աս նախատինքն աւելի զգացին Անգղիացիք, որոնք խորհրդանոցին մէջ ան աստիճանի ազմուկ հանեցին, որ Բալմերսդըն պաշտօնարանէն ելլելով (1853, Գեկտ. 15) եւ քանի մ'օր ետքը ետ կանչուելով, նոյն պաշտօնարանէն գուրս հանեց խազադութեան կողմնակիցները : Ան ժամանակէն՝ ակզրեթէ հաստատութեամբ կրնար ըսուիլ թէ արեւմտեան տէրութիւնք պատերազմին մասնակից պիտ'որ ըլլան : Բալմերսդընին կարծիքն ան էր, որ Գաղղիայի հետ յարձակողական ու պաշտպանողական գաշնաւորութիւն ըլլայ, երկու տէրութեանց նաւատորմիդները Սեւ ծով մտնեն, մինչեւ որ Ռուսք զօրքերնին Դանուբեան իշխանութիւններէն հանեն, եւ եթէ աս բանիս չզիջանին՝ անմիջապէս պատերազմ հրատարակուի : Արդէն շատոնց Նարոլէոնին հետ խօսք մէ կ'ըրած ըլլալով անմիջապէս երկու տէրութեանց նաւատորմիդները Սեւ ծով մտան (1854, Յունու. 4), հրատարակելով որ Ռուսաց նաւերը պիտի ստիպեն իրենց նաւահանգիստներէն մէկը մտնելու, ուր որ Օսմանեան նաւերն ազատ պիտ'որ ըլլային ուզած տեղերնին երթալու գալու : Երկու պատերազմող տէրութեանց նկատմամբ եղած ասզանազանութիւնն առիթ տուաւ Ռուսիայի՝ իր դեսպանները Լոնտոնէն ու Փարիզէն ետ կանչելու (Փետր. 4) : Անկից քանի մ'օր յառաջ Նարոլէոն առանձին նամակաւ մը տրառունջ ըրաւ Նիկողայոս կայսեր՝ մինչեւ նոյն ասեան բռնած ընթացքին եւ առանձինն Սինոպի պատահարին վրայ, որուն համար կ'ըսէր թէ չէ թէ միայն իր (Նարոլէոնի) քաղաքականութեան, հապանաեւ իր զինուորական պատուոյն նախատինք հասցուց

(Յունու. 29): Ասոր թէպէտ քաղաքավարական կերպով պատասխան տուաւ Ռուսաց ինքնակարը, բայց առանց ամենեւին զիջում մ'ընելու (Փետր. 9): Բիչ մը ետքը երկու արեւմտեան տէրութիւնք մէկտեղ վերջնագրով մը Ռուսիայէն պահանջեցին որ իր զօրքերը մինչեւ Ապրիլի վերջը Դանուբեան իշխանութիւններէն հանէ. յայտնելով որ աս իրենց պահանջման չընդունուիլը՝ իբրեւ պատերազմի հրատարակութիւն կը նկատեն (Փետր. 27): Նոյն երկու տէրութիւնք Ալիէնայի ու Պերլինի դահլիճները հրաւիրած ըլլալով որ Ռուսիայի կառավարութիւնը համոզեն ըրած պահանջումին ընդունելու, երկուքն ալ աս հրաւիրին համեմատ ջանացին Պետրոբուրգի դահլիճը զիջողութեան հաւանեցընելու: Բայց պարապ տեղ. Նեսելրոտ կոմսին պատասխանն աս եղաւ որ կայսրը պատշաճ չիսեպեր՝ ամենեւին պատասխան տալ (Մարտ 19): Արդէն Նիկողայոս կայսրը շատոնց իր որոշումը յայտնած էր, յայտարարութեամբ մը հրատարակելով որ Անգղիա ու Գաղղիա քրիստոնէութեան թշնամեաց (Տաճկաց) հետ միացած՝ Ռուսիայի դէմ կ'ենլեն. բայց Ռուսիա չ'ուզեր անհաւատարիմ ըլլալ իր կողմանը՝ որ է Օրթոդոքս եկեղեցւոյն պաշտպանութիւն ընել, հապա ամէն յարձակմանց դէմ կը դնէ, ինչպէս որ 1812ին ըրաւ (Փետր. 9): Արեւմտեան տէրութիւնք քիչ մը ետքը Ռուսիայի դէմ պատերազմ հրատարակեցին (Մարտ 27, 28), որմէ քանի մ'որ ետքը Ռուսիա ալ անոնց դէմ իր պատերազմի հրատարակութիւնն ըրաւ (Ապր. 11):

257. Արեւմտեան տէրութեանց ու Դրան դաշնակորուցիւնը: Միեւնոյն միջոցներուն հինգ մեծ տէրութեանց մէջ զանազան նպատակներով մեծ գործունէութեամբ դեսպանական բանակցութիւնք կ'ըլլային: Ինչպէս որ կռուոյն սկիզբները եղած էր, մէկ կողմանէ Ռուսիա եւ մէկալ կողմանէ արեւմտեան տէրութիւնք մեծապէս փոյթ կը տանէին զԱւստրիա եւ զՊրուշ իրենց կողմը շահելու եւ կամ գոնէ չէզոքութեան մէջ

պահելու: Կիկոզայոս կայսրը զՕրլոֆ կոմսը Աիէննա խաւրելով (1854, Յունու. 29), խնդրեց որ Աւստրիա ինք զինքը դաշամբ պարտաւորէ չէզոքութիւն պահելու, որուն դիմացն ինքն ալ կը խոստանար որ ետքէն Օսմանեան տէրութեան նկատմամբ արեւմտեան տէրութեանց հետ որոշում մ'ըրած ժամանակ՝ Աւստրիայի հետ ալ խորհրդակցի: Իսկ Աւստրիա աս առաջարկութիւնն ընդունելու համար՝ պահանջեց որ կայսրը խօսք տայ Օսմանեան տէրութեան երկրի ստացուածներուն չդպչելու եւ զօրքերը Գանուբէն չանցընելու. եւ երբ որ Ռուսիա աս խոստումը չուզեց տալ, իր առաջարկութիւնն ալ մերժուեցաւ: Ըստ ամենայնի նոյնպիսի առաջարկութիւններ եղան Պրուշի ալ, որն որ պատահան տուաւ թէ չ'ուզեր ձեռուրները կապել, մանաւանդ որ Ռուսիայի առաջարկութիւնն ընդունելը՝ իրեն օգնել ըսել է: Ռուսիայի եւ Գերմանական տէրութեանց մէջ աս խօսակցութիւններն եղած ատեն, արեւմտեան տէրութիւնք Գրան հետ դաշնաւորութիւն ըրին (Մարտ 12), որով կը խոստանային Օսմանեան տէրութեան օգնելու համար՝ ամէն հարկաւոր եղած տեղերը ցամաքային զօրք խաւրել: Ասոր դիմացը Գուռն ինք զինքը կը պարտաւորէր՝ առանց իր դաշնաւորաց հաւանութեան՝ ոչ զինադադար եւ ոչ խաղաղութիւն ընելու, միանգամայն իր զօրաց գլխաւոր ձեռնարկութիւնները յառաջուրնէ դաշնաւորաց վերին հրամանատարին ծանուցանելու: Երկու կողմանք ալ պարտական էին իրարու հետ միաբան եւ միախորհուրդ գործելու: Հազիւ աս դաշնաւորութեան ստորագրուելուն վրայ ամիս մ'անցընելէն ետքը, Գաղղիա եւ Անգղիա մէջերնին դաշնակցեցան: Առ յապաղման պատճառն ան էր, որ տակաւին յոյս ունէին Գերմանական մեծ տէրութիւնները հետեւին՝ եթէ ոչ կատարեալ միաբանելով իրենց դաշնակցութեան մէջ առնելու, գոնէ ըստ մասին իրենց հետ կապելու, եւ աս վերջին նպատակին հասան:

258. Վիեննայի (Ապրիլի 9ին) արձանագիրը: Գաղղիայի ու Անգղիայի դաշնակցութիւնը: Արդէն շատոնց Աւստրիա ու Պրուշ յայտնած էին որ արեւելեան խնդրոյն մէջ՝ իրաւանց կողմանէ Գաղղիայի ու Անգղիայի հետ միաբան ու միախորհուրդ են. միայն թէ նոյն իրաւունքը յառաջ տանելու համար անոնց ձեռք առած միջոցներուն իրենք տակաւին չեն ուզեր գործակից բլաւ: Մէկ կողմանէ ալ իրարու հետ անգաղար խօսակցութեան մէջ էին թէ՛ պաշտօնական գրուածներով եւ թէ՛ մանաւանդ գեապանական խորհրդակցութիւններով, որոնք քանի մ'ամիսէ վեր Վիեննայի մէջ կը շարունակուէին: Արդ արեւմտեան տէրութեանց՝ Ռուսիայի դէմ պատերազմ հրատարակելէն ետքը (256), հարկաւոր համարեցան պաշտօնական կերպով մը չորս տէրութեանց միաբանութիւնը նորէն ցուցնել: Անոր համար Վիեննայի մէջ արձանագրի մը ստորագրեցին (1854, Ապր. 9), որուն մէջ Աւստրիա ու Պրուշ յայտնելէն ետեւ որ արեւմտեան տէրութեանց (Փետրուարի 27ին) վերջնագիրն (256) իրաւացի կը համարին, չորսը մէկտեղ կը միաբանէին հետեւեալ սկզբունքները հաստատուն պահելու: 1. Օսմանեան տէրութեան ամբողջութիւնը, որուն հարկաւոր պայմաններէն մէկն է Ռուսի զօրաց Գանուբեան իշխանութիւններէն ելելը: 2. Դրան քրիստոնեայ հպատակներուն կրօնական ու քաղաքական իրաւանց պահպանութիւնը, բաց Սուլթանին վեհապետութեան ու անկախութեան հետ համաձայնելու կերպով մը: 3. Իրենք զիրենք կը պարտաւորէին պատշաճ միջոցներ կամ երաշխաւորութիւններ գտնելու, որպէս զի Օսմանեան տէրութիւնը Եւրոպայի հաւասարակշռութեան հետ աւելի հաստատուն կերպով կապեն, եւ իրարու հետ չխորհրդակցած՝ Ռուսիայի հետ աս նիւթին վրայ վերջնական որոշում մը չընելու: — Աս արձանագրին ստորագրուելուն երկրորդ օրը՝ արեւմտեան տէրութիւնք իրենց մէջ դաշնակցութիւն ըրին (Ապր. 10), որուն

նպատակն ու պայմաններն աս են. 1. Ռուսիայի ու Դրան մէջ հաստատուն ու տեւական խաղաղութիւն ընել, եւ ասանկ շփոթութեանց նորագուիլը խափանել: 2. Տաճկաստանի ապահովութեան հարկաւոր եղածին չափ ցամաքային ու ծովային զօրութիւն բանեցընել: 3. Առանց մէջերնին խորհրդակցելու եւ միաբանելու՝ թշնամեաց կողմանէ եղած ամենեւին մէկ առաջարկութեան հաւանութիւն չտալ: 4. Եւրոպայի հաւասարակշռութիւնը հաստատուն պահել եւ իրենց առանձնական շահը չփնտռել: 5. Աս նպատակներով ու պայմաններով հետերնին միաբանիլ ուզող ամէն տէրութիւններն իրենց գաշնակցութեան մէջ ընդունիլ:

259. Ռուսը Գանուբը կ'անցնին: Յունաց խլրտիլն ու անոնց գէմ ի գործ դրուած միջոցները: Աբեւմտեան տէրութեանց գաշնակցելէն տասն օր վերջը Գերմանական երկու մեծ տէրութիւնք ալ իրարու հետ գաշնակցեցան. բայց աս վերջին գաշնակցութեան վրայ չեօտած, մտադրութիւննիս պատերազմի դաշտին վրայ դարձընելու ենք: Գանուբի կողմերը գտնուող Ռուս զօրաց նոյն գեան անցնիլ չկրնալը խիստ վնասակար էր իրենց. որովհետեւ անով չէին կրնար հազարդակցութիւն ունենալ Սերուխայի հետ, ուր կը յուսային թէ իրենց ներկայութեամբը յեղափոխութիւն մ'ելլելով, իրենց զօրութիւնը կ'աւելնայ: Աս յեղափոխութիւնք խափանելու համար՝ Աւստրիա նոյն գաւառին սահմանները զօրք իջեցուցած էր, որոնք ի հարկին կրնային վիտինի մօտ կեցող Էօմեր փաշային բանակին հետ միանալ: Արդ Կորչագոֆ ուզեց յիշեալ վիտինի կամքընին գլուխը պաշտպանող Գալաֆագի զօրաց վրայ յարձակում մ'ընել, որպէս զի զանոնք հոնկից մերժէ եւ Գանուբի աջ կողմը քաշուելու ստիպէ: Ռուսը ան կողմերը մօտեցան ու Չեգադէի դիրքը բռնեցին, որպէս զի հոնկից Գալաֆագի վրայ յարձակին (1854; Յունու. 4): Սակայն իրենք գիտաւորութիւննին գլուխ չհանած, Գալաֆագ կեցող Օսմանեան զօրքն իրենց

վրայ յարձակուճ ըրաւ, եւ ստիպեց մեծ կորստով ետ քաշուելու (Յունու. 6): Հետեւեալ օրերը Ռուսք քանի մը անգամ Չեղագէի նորէն տիրելու փորձեր բրին. բայց չկրցան յաջողընել: Ետքէն ստիպեցան խել մը ժամանակ հանդարտ կենալ, մէյ մը օդին անյարմարութեան պատճառաւ, մէյ մ'ալ վասն զի Աւստրիա իր սահմաններն ունեցած բանակը 50,000ի հասցուցած էր: Բայց գարնան սկիզբները իրաց վիճակը փոխուած էր. Ռուսաց բանակը բաւական զօրացած էր, այնպէս որ 150,000է աւելի մարդ ունէր. ուր որ էօմէր փաշային հրամանին տակ հաղիւ 90,000 հոգի կար: Այսպէսով Օսմանեանք Դանուբի ստորին կողմերը չէին կրնար զօրաւոր կերպով պաշտպանել. նոյն տեղերուն պզտիկ ամրոցները սակաւաթիւ պահակապանք ունէին: Բաներն աս վիճակի մէջ ըլլալով, Ռուսք 60,000 զօրքով եւ 160 թնդանօթով, միանգամայն իրենց օգնական ունենալով Դանուբի նաւատորմիդնին, չորս հինգ տեղէ մէկտեղ գետն անցան (Մարտ 23), եւ Մաչինի, Իզագչայի, Դուլայի ու Հիրսովայի տիրելէն զատ, Տոպրուճա ալ ձեռք անցուցին: Էօմէր փաշա չուզելով Ռուսաց հետ ճակատ տալ, իր բանակաւ դէպ ի Շումլա քաշուեցաւ, ուր Արնայի, Սիլխաորիայի ու Ռուսչուգի բերդերն առջեւն ունէր: — Նոյն միջոցներուն սկսած էին Յոյնք խլրտիլ. Յունաստանէն եկող զինեալ զնդերէն գրգռուելով՝ Ալպանիայի ու Թեոաղիայի մէջ տեղ տեղ ոտք ելած, եւ սակաւաթիւ Տաճիկ զօրաց գէմ իսկզբան յաջողութիւններ ունեցած էին: Բայց շուտ մը կոտտանգնուպոլսէն նոր զօրքեր գալով եւ Օսմանեանք զօրանալով, Եանեայի (Մարտ 29) ու Արմինոսի (Ապր. 7) քով Յոյնք անանկ զարնուեցան, որ ալ չկրցան նոր շարժումներ ընել: Ասոր մեծապէս օգնեց Դրան Յունաստանի հետ դեռպանական հաղորդակցութիւնը կտրելը (Մարտ 27), որով բոլոր Հելլէն հպատակները կը ստիպուէին Օսմանեան տէրութեան երկիրներէն դուրս ելլել, յանձն առնուլը՝

որ ապստամբական շարժումները զուգելու համար, ի հարկին՝ Աւստրիացիք արեւմտեան գաւառներն ու առանձինն Ալպանիա մտնեն (Մայ. 24), եւ մանաւանդ Գաղղիայի եւ Անգղիայի, Յունաց կառավարութեան վերջնագիր մը ապէն ետեւ (Ապր. 11), Պերէոս նաւախուժք մը խաւրելն ու զօրօք բռնելը (Մայ. 26):

260. Աւստրիայի ու Պրուշի (Ապրիլի 20ին) դաշնակցութիւնը: Ռուսաց Դանուբն անցնիլը՝ չէ թէ միայն արեւմտեան տէրութիւնները հեգնել մըն էր, հապա նաեւ զԱւստրիա ալ, որն որ մինչեւ նոյն ատեն բռնած խաղաղական ընթացքն ու հաշտութեան փորձերն անոր վըպ կը հիմնէր թէ Ռուսք նոյն գետը պիտի չանցնին: Նիկողայոս կայսրն ինք զինքը կ'արդարացընէր՝ պատճառ բերելով արեւմտեան տէրութեանց նաւատորմիղներուն Սեւ ծով մտնելը. բայց աս պատճառը չէր կրնար բաւական ըլլալ զԱւստրիա գոհ ընելու եւ հանդարտեցընելու: Պետք էր որ ինք ամէն կերպով ջանար Ռուսին կոստանդնուպոլիս մօտենալը խափանել, եւ չթողուլ որ Պալզան լեռներն անցնի: Իր սեպհական շահն առ բանիս զինքը կը ստիպէր, որովհետեւ Անգղիայէն եւ Գաղղիայէն աւելի իրեն մեծ վնաս կ'ըլլար եթէ Ռուսիա Օսմանեան տէրութեան երկիրներն աշխարհակալելով, չափէն աւելի մեծնար: Սակայն, ինչպէս ուրիշ անգամ ըսինք (251), չէր կրնար գործունեայ կերպով Ռուսի դէմ ելլել կամ անոր թշնամեաց հետ կատարեալ միանալ, մինչեւ որ Պրուշի եւ ուրիշ Գերմանական տէրութեանց հետ աղէկ մը միաբանած չըլլար: Իսկ Պրուշ թէեւ իսկզբանէ խոստովանած էր որ Ռուսի ընթացքն իրաւանց համեմատ չէ, թէեւ գիտէր որ անոր արտաքոյ կարգի մեծնալն իր շահուն ալ հակառակ է. ի վերայ այս ամենայնի տակաւին կ'երկմտէր չէ թէ միայն՝ Աւստրիայի պէս արեւմտեան տէրութեանց հետ միանալու, հապա նոյն իսկ Աւստրիայի հետ ալ կապուելու: Բայց ինչպէս որ է նէ, վերը յիշատակածնուս պէս (259), արեւմտեան տէ-

բուժեանց իրարու հետ գաշնակցելէն տասն օր ետքը, երկու Գերմանական տէրութիւնք ալ մէկտեղ պաշտպանողական եւ յարձակողական դաշնակցութիւն մ'ըրին (1854, Ապր. 20), որուն գլխաւոր պայմաններն ասոնք են: 1. Իրարու փոփոխակի երաշխաւոր կ'ըլլան՝ իւրաքանչիւրին թէ Գերմանական դաշնակցութեան վերաբերող եւ թէ անկից գուրս ըլլող երկրի ստացուածներուն, այնպէս որ մէկին երկիրներուն վրայ եղած յարձակումը՝ ինչ կողմանէ որ կ'ուզէ ըլլայ՝ մէկայլն երկիրներուն վրայ եղածի պէս պիտի համարուի: 2. Գերմանիայի շահերը պիտի պաշտպանեն, անոր համար ալ եթէ իրենցմէ մէկը նոյն շահերը պաշտպանելու մտքը գործնական կերպով պատերազմի ելլէ եւ յարձակում կրէ, բաւական որ յառաջագոյն մէկայլն հետ խորհրդակցած ըլլայ, ան մէկալք կը պարտաւորի յարձակումը մերժելու օգնել: 3. Հարկաւոր համարուած ատեն՝ երկուքը միաբան իրենց բանակներուն մէկ մասը պատերազմի վիճակի մէջ պիտի գնեն: 4. Բոլոր Գերմանական տէրութիւնք աս դաշնաւորութեան մէջ մտնելու պիտի հրաւիրեն: 5. Ամենեւին մէկ տէրութեան հետ գաշինք մը պիտի չգնեն, որն որ ներկայ դաշնաւորութեան գէմ ըլլայ: Յաւելուածոյ յօդուածի մը մէջ կ'որոշէին որ Աւստրիա Ռուսիայէն պահանջէ որ զօրքերը Գանուբեան իշխանութիւններէն հանէ, եւ Պրուշ իր կողմանէ նոյն պահանջման կատարուելուն փոյթ տանի: Իսկ երկուքը մէկտեղ ան ատեն Ռուսիայի գէմ պատերազմ բանան՝ երբ որ անիկայ կամ նոյն Գանուբեան իշխանութիւններն իրօք իր տէրութեան հետ միացընէ, եւ կամ Պալգանի անցքերը բռնադատէ: Միանգամայն զինուորական պայմանագրութեամբ մը կ'որոշէին որ Աւստրիա իր արեւելեան ու հիւսիսային արեւելեան կողմերն ունեցած 150,000ի բանակին վրայ, 100,000 մ'ալ աւելցընէ. իսկ Պրուշ 36 օրուան մէջ 100,000ի բանակ մը ժողովէ եւ ի հարկին նոյն բանակը 200,000ի հասցընէ: Եր-

կու Գերմանական մեծ տերութեանց միաբանութիւնն աւելի զօրաւոր բլլալու համար, հարկ էր որ մէկալ Գերմանական տերութիւնք ալ անոր մասնակից բլլային: Բայց միջին տերութիւններուն Պամպերկ ժողովուելով՝ զանազան պայմաններ դնելուն եւ դժուարութիւններ հանելուն պատճառաւ (Մայ. 26) հազիւ վրան երեք ամիս անցնելէն, նոյն միջոցին Աւստրիայի ու Պրուշի վեհապետներն իրարու հետ Գեչէնի մէջ տեսնուելէն (Յունիս 8) եւ Պամպերկեան տերութեանց միաբան պատասխան մը տալէն (Յունիս 16) ետքը, կրցան իրենց գաշինքը գաշնակցութեան ժողովոյն առջեւ դնել, եւ անոր հաւանութիւնն ընդունիլ (Յուլ. 24): Բայց աս հաւանութիւնը չառնուած, յիշեալ գաշինքն իր արդիւնքն ունեցած էր:

Ձ61. Արեւմտեան տերութեանց բանակները: Աելիստրիայի պաշարումը: Արդէն Անգղիա եւ մանաւանդ Գաղղիա իրենց բանակները շարժման մէջ դրած եւ արեւելք զօրք խաւրած էին: Անգղիա՝ Ուաղերլուի ճակատին մէջ մէկ բազուկը կորսընցուցած Լորա Ռակլանին հրամանատարութեան տակ՝ 20,000 հոգի խաւրեց. աս զօրաց մէջն էր թագաւհայն հօրեղբայրը Քեմպրիճի դուքսը, որն որ Փարիզէն ու Ալեքսանդրէն անցնելով՝ Գաղղիայի ու Աւստրիայի կայսերաց հետ տեսութիւն ընելէն ետեւ, արեւելք եկաւ: Իսկ Գաղղիա Սէնդ Առնոյ սպարապետին հրամանատարութեան տակ՝ 50,000ի բանակ մը խաւրեց, որուն հետ դեաց կայսեր հօրեղբորորդին Նաբոլէոն իշխանը՝ Աեոգֆալտայի Հերոնիմոս թագաւորին (Հատ. Գ. 176, 235, 238) որդին: Աս Գաղղիական - Անգղիական զօրքերը նախ Կելիպոլու ցամաք ելան (1854, Յունիս), եւ հնկից կամաց կամաց յառաջանալով, մինչեւ Աարնա եկան, որն որ իրենց գլխաւոր բանակատեղին եղաւ: Բայց աս գաշնակցաց բանակը՝ ոչ իր բազմութեամբն եւ ոչ ուրիշ հանգամանքներով՝ բաւական էր Ռուսաց զօրքին յառաջ քալելն արդեւելու: Կորչագափին տեղ

Նոյն զօրաց հրամանատարութիւնն առնող Բաղբեւիչ իշխանը՝ մեծ հանդիսութեամբ Եաշ ու Պուլքրէշ մասնւելն ետեւ (Ապր. 16), Արլիսարիա հասած էր, զորն որ իր զօրքերը քիչ մը յառաջ պաշարած էին (Ապր. 14), եւ թէ գեաին թէ ցամաքին կողմանէ կը զարնէին: Թէպէտ եւ յիշեալ հրամանատարն ըսած էր թէ պէտք է որ նոյն բերդն առնու, թէեւ հարկ ըլլայ մինչեւ ծնկուընները արեան մէջ լողալ, ի վերայ այդ ամենայնի կարծածէն աւելի գիմադարձութիւն կը գտնէր. իր ամէն յարձակումները քաջութեամբ ետ կը մղուէին, եւ ներսէն եղած յարձակումներով իր զօրաց մեծ վնաս կը հասնէր: Կը յուսար որ Էօմէր փաշա՝ բերդին օգնութեան գալու համար՝ Շուվայէն ելլելով, ճակատալու կը ստիպուի. բայց Օսմանեան հրամանատարն իր խորագիտութեամբն աս տկնկալութիւնն ալ պարայի հասնց: Յարձակման մը ատեն՝ Ռուսաց Շիլտեր քաջ զօրապետը, որն որ պաշարման գործողութիւններուն հոգին էր, վերաւորուելով՝ մեռաւ. բայց բերդին մէջի զօրաց հրամանատար Մուսա փաշան ալ նոյն միջոցին իր մահը գտաւ: Աւերջապէս նոյն իսկ Ռուս հրամանատարը՝ յարձակման մը առաջնորդած ատեն՝ թեթեւ վերք մ'ընդունելով (Յունիս 9), հեռացաւ գնաց, ու նորէն կորչագոֆ զօրաց գլուխն անցաւ: Սակայն ինչպէս որ է նէ, բերդը մեծ նեղութեան մէջ էր. երկայն գնդակոծութեամբ՝ քանի մը կողմերը կործանած էին, պահակապան զօրաց թիւն ալ երթալով կը նուազէր: Էօմէր փաշա չէր կրնար տեղէն շարժիլ. Սէնդ-Առնոյ՝ թէեւ Յուլիսի սկիզբը 50,000 զօրք ունէր, յայտնեց որ ուրիշ բան չիկրնար ընել՝ բայց եթէ Պալզանին մօտենալ եւ ժամանակ վաստըկիլ՝ մինչեւ որ աւելի զօրանայ: Չեմ կրնար, կ'ըսէր, Աարնայէն ու ծովէն շատ հեռանալ, մինչեւ որ Աւստրիայի թնդանօթներուն ձայնը չառնում:

262. Աւստրիական-Օսմանեան դաշնագրութիւն: Ռուսք Գանուբեան իշխանութիւններէն կ'ելլեն, եւ Աւստրիացիք կը մտնեն: Բայց Աւստրիա թէ-

պէս իր թնդանօթներուն ձայնը չլսեցուց, սակայն իր դեսպանագիրտափան բանակցութիւններուն զօրութեամբ՝ չէ թէ միայն Սիլիսարիայի պաշարումը վերցրնել տուաւ, հապա Ռուսաց բանակը Դանուբէն եւ Բրուժէն իսկ անդին անցուց եւ իրենց սահմանները խաթեց: Աւստրիա Պրուշի հետ միաբանելէն ետքը՝ Ապրիլի 20ին դաշանց համեմատ (260) Ռուսիայէն պահանջեց որ զօրքերը Դանուբեան իշխանութիւններէն հանէ (1854, Յունիս 3), քանի մ'որ ետքը Պրուշի ալ նոյն պահանջման կատարումը խնդրեց (Յունիս 12): Ասկից երկու օր վերջը Աւստրիայի եւ Դրան մէջ դաշինք գրուեցաւ՝ Դանուբեան իշխանութիւնները աւստրիական զօրք խոթելու նպատակաւ (Յունիս 14): Աւստրիա յանձն կ'առնուր ամէն կերպ միջոց բանեցրնել՝ Ռուսի զօրքերը նոյն դաւառներէն հանելու, ի հարկին նաեւ զէնք գործածելով. միանգամայն Ռուսի հետ ուրիշ հիման վրայ չբանակցիլ՝ բայց եթէ Սուլդանին վեհապետական իրաւանց եւ իր տէրութեան ամբողջութեան հիման վրայ: Խաղաղութիւն ըլլալուն պէս՝ Աւստրիա, կարելի եղածին չափ կարճ ժամանակուան մէջ, իր զօրքերը ետ պիտի քաշէր: Աս դաշանց եւ իր պահանջմանց ազդեցութիւն տալու համար, Աւստրիա իր սահմանները գումարած բանակն անանկ վիճակի հասցուց, որ Ռուսիա հարկադրեցաւ գլուխ ծռել: Արդէն Օսմանեան - Աւստրիական դաշնագրութեան վրայ շարաթ մը չանցած, Ռուսք Սիլիսարիայի պաշարումը վերցուցած էին (Յունիս 21). իսկ Դանուբեան գաւառներէն քաշուելու համար՝ իսկզբան զանազան ապահովութիւններ կ'ուզէին (Յունիս 29): Աս ուզուած պայմաններուն վրայ Աւստրիա պատասխան տուաւ թէ իր կամքէն կախում չունին, եւ արեւմտեան տէրութիւնք զանոնք յանձն չառնելու ալ ըլլան, ինք ստիպուած է ձեռնարկութիւնը յառաջ տանիլ (Յուն. 9): Այսպիսի որոշ պատասխանն առնելէն ետեւ, Նիկողայոս կայսեր ուրիշ միջոց չէր մնար՝ բայց եթէ զօրքերը ետ քա-

շել. սրովհետեւ եթէ դէմ դառնար, եւ Աւստրիայի 300,000ի բանակը յառաջ քալէր, իր զօրքերը վտանգի մէջ կ'ընային իրենց յետադարձութեան ճամբէն կտրուելու: Ուստի եւ իր Վիէննայի դեսպանին ձեռքովը յայտնեց որ զօրքերը ետ կը քաշէ (Օգոստ. 7): Անկից քանի մ'որ յառաջ 'արդէն գործադրութիւնն ալ սկսած էր. այնպէս որ տասն ու հինգ օր չանցած՝ Վալպրիա դատարկացած բլլալով, Աւստրիացիք նոյն դաւաւը սկսան մտնել (Օգոստ. 20), որմէ երկու օր ետքը Էօմէր փաշա ալ 25,000 հոգևով Պուրքէշ հասաւ (Օգոստ. 22): Ամոցն վերջը Գանուբեան գաւառաց մէջ ամենեւին Ռուս մնացած չէր:

263. Ռուսաց Գանուբեան իշխանութիւններէն ելլելուն հետեւութիւնը: Թէպէտ եւ այսպէս Ռուսիա ստիպուեցաւ մեծագոյն զօրութեան տեղի տալ եւ ետ քաշուիլ. բայց եւ այնպէս առ բանս իրեն մեծապէս օգտակար եղաւ: Գլխաւոր օգուտն առ էր, որ ալ Գերմանական մեծ տէրութեանց առիթ չմնաց՝ արեւմտեան տէրութեանց հետ միանալով գործնական կերպով իրեն դէմ պատերազմի ելլելու: Անկից զատ՝ նոյն զինուորութեամբ՝ իբրեւ թէ Ապրիլի 20ին գաշնաւորութեան նպատակը վերցուելով, նոյն երկու Գերմանական տէրութեանց մէջ եզոզ միաբանութիւնը գրեթէ քակուեցաւ, այնպէս որ Պրուշ եւ ոչ ուզեց մտնակից բլլալ ան խորհրդին՝ որուն մէջ Պուլ կոմսն արեւմտեան տէրութեանց դեսպաններուն կը հազորդէր իր (Ռուսի զօրաց Գանուբեան իշխանութիւններէն քաշուելու համար) բքած պահանջման (1854, Յունիս 3) նոյն տէրութեան տուած (Յունիս 29) թէական պատասխանը (262), որուն հետ միանգամայն խաղաղական առաջարկութիւններ ալ կային, ինչպէս իր տեղը կը տեսնենք (266): Այսպէս Գերմանական տէրութիւններն ըստ մտաին հաճեցրնելէն եւ ըստ մտաին իրարմէ բաժնելէն ուրիշ, Ռուսիա իր նոյն զինուորութեամբն ան օգուտն ալ ունեցաւ, որ Եւրոպայի մէջ պատե-

բազմը գագրեցաւ, որովհետեւ ոչ Էօմէր փաշա եւ ոչ արեւմտեան տէրութիւնք կրնային ան կողմանէ իր զրայ յարձակում ընել, քանի որ Աւստրիա գործնական կերպով իրենց հետ չէր միանար: Իրերն առ վիճակին մէջ մանելով, ան ատենէն կրնար պատերազմին ունենալու ելքը գուշակուիլ: Նոյն ժամանակէն կրնար իմացուիլ թէ քիչ փոփոխութեամբ մը՝ պատերազմէն առջի վիճակը նորէն պիտի հաստատուի. այնպէս որ Ռուսիա Ցաճկաստանի վրայ ունեցած աշխարհակալութեան գողափարներէն առժամն ետ կենալու էր. բայց անկարելի էր ան աստիճանի ակարութեան հասնիլ, որ չկարենայ քիչ մը ետքը նորէն ձեռք զարնել անոնց գործադրութեան: Պրուշին չէզոք կենալով՝ Շուեան ալ կ'արգելուէր ու չէր կրնար արեւմտեան տէրութեանց հետ միանալ: Առ տէրութիւնն ալ Ռուսի ակարանալուն ամենէն աւելի բաղձացողներէն մէկն է. որովհետեւ անանկ դրոյց մէջ կը գտնուի, որ կրնայ ըսուիլ թէ իր ամենագոր դրացւոյն շնորհքովը կ'ապրի: Բայց Շուեայք ան ատեն կրնան համարձակիլ ատենօք կորսընցուցած Ֆինլանտիա գաւառին (Հաս. Գ. 183) նորէն ձեռք բերելու փորձ ընել, երբ որ միեւնոյն ժամանակ Պրուշի բանակ մը գէպ ի Ռիկա յառաջանայ: Ուրիշ կերպով ձեռնարկութիւն մ'ընելը՝ Շուեաի կործանմանէն զատ հետեւութիւն չեկրնար ունենալ:

264. Խորժի արշաւանքը: Մինչեւ նոյն ատեն դաշնակիցք գրեթէ ամենեւին պատերազմական գործողութիւն ըրած չէին: Սեւ ծով մտնող նաւատորմին Օտեսա մտննալով, խել մ'առեւտրական նաւերու քանի մը շինուածներ պրած էր (1854, Ապր. 22): Իսկ ցամաքի զօրքը կրնայ ըսուիլ որ տակաւին հրացան մը չէր պարպած. եւ վերը զբցուածներէն ինք իրմէ կ'իմացուի թէ Աւրնա եւ ուրիշ ան կողմերը կեցող զօրքերը բոլորովին վախճանազուրկ կ'ըլլային: Նոյն կողմերուն զօրքերը խիստ դէշ վիճակի մէջ կը գտնուէին. օգարածներն անվարժ ըլլալով եւ կերպ կերպ հիւան-

դուժիւններէ ու առանձինն մաղձացաւէ բռնուելով, շատ մարդ կը մեռնէր: Ջինուորք անգործութեան մէջ մնալուն վրայ կը տրանջէին: Ջիրենք զբաղեցընելու համար Ցուգրուճայի անջրդի կողմերն արշաւանք մ'ընել տուին, ան միջոցին՝ երբ որ Ռուսք արգէն սկսած էին ետ քաշուիլ. բայց աս արշաւանքն ալ զինուորներն աւելի եւս գրգռեց, որովհետեւ առանց թշնամւոյն երեսը տեսնելու՝ մեծամեծ կորուստներ ըրած էին (Յուլ.): Հրամանատարք ընելիքնին չէին գիտեր. պատերազմի խորհրդի մը մէջ ոմանք կ'առաջարկէին որ կաւկասի կողմերն երթան, հոնտեղաց Չէլքէզներուն ու Օսմանեանց հետ միանան, որով դիւրաւ կրնային Ռուսերը հոնկից մերժել. Շամիլ ալ պատգամաւորութեամբ մը աս բանս կը խնդրէր, խոստանալով որ իբր թողոր զօրութեամբը գործակից կ'ըլլայ: Աս արշաւանքը շատ յարմար կու գար Անգղիայի շահուն. եթէ Ռուսք ան կողմերէն մերժուէին, Անգղիացիք մեծ ազդեցութիւն կը ստանային Պարսկաստանի մէջ, որով եւ իրենց Հնդկահան ստացուածները դիւրութեամբ կրնային պաշտպանել: Բայց, ինչպէս յայտնի է՝ Գաղղիացիք չէին կրնար հաճութիւն տալ աս խորհրդին, որուն մեծագոյն օգուտն Անգղիացւոց կը մնար: Այսպէսով յառաջ գնաց Սէնդ-Առնդի խորհուրդը, որն որ կ'ուզէր արշաւանքը դէպ ի խրըմ ուղղել, որպէս զի հոնտեղաց Ռուսի ամենամեծ պատերազմական նաւահանգիստն եղող Սեւաստորոլի տիրեն. որով, կ'ըսէր, ամենէն զգալի կերպով անոր զօրութիւնը կը նուազի: Իսկ Լորտ Ռաիլան աս բանիտ հաւանեցաւ, որովհետեւ անով կրնային Ռուսիայի Սեւ ծովու նաւատորմիդը ջնջել: — Գաղղիայի հրամանատարն իսկզբան անանկ կը կարծէր թէ քիչ զօրքով աս արշաւանքը կրնայ գլուխ տարուիլ. բայց ետքը տեսաւ որ գոնէ 100,000ի բանակ մը, մեծ նաւատորմիդ մը եւ շատ մը բռնակիր նաւ պէտք է: Այս ամենայն պատրաստելու համար խել մը ժամանակ անցաւ, մանաւանդ որ նոյն միջոցին վարնա մեծ հրդեհ.

մը պատահելով, իրենց կազմածին մէկ մասը սպառած էր: Աւերջապէս ամէն պատրաստութիւնները տեսնուելէն ետեւ, արշաւանքը ճամբայ ելաւ (Սեպտ. 5). 33 ճակատող եւ 500էն աւելի պատերազմական ու բեռնակիր նաւերով ու շոգենաւներով, 35,000 Գաղղիացիք, 26,000 Անգղիացիք, 6000 Տաճիկք դէպ ի Խրըմ սկսան յառաջանալ. առ ցամաքային զօրքերէն զատ՝ նաւերուն մէջ 25,000 նաւազ ու նաւական զօրք կար:

265. Ալմայի, Պալաքլաւայի ու Ինքէրմանի ճակատները: Սեւաստոբոլի պաշարումը: Աս հարիւրաւոր նաւերու շքեղ տորմիղը Խրըմի մէջ Եւբադորիայի քովերը զօրքերը ցամաք հանեց (1854, Սեպտ. 14—16) առանց դիմադարձութիւն գտնելու Ռուսաց կողմանէ, որոնց զօրքերը բովանդակ թերակղզւոյն վրայ տարածուած էին. իսկ տեղւոյն կուսակալ ու զօրաց վերին հրամանատար Մենչիգոֆ ծովապետը, 33,000ի բանակաւ մը Ալմայի քով ամուր դիրք մը բռնած՝ դաշնակիցներուն յարձակման կը սպասէր: Ինք անանկ կը կարծէր թէ իր գրից ամբողթիւնը՝ զօրացը քիչութեան տեղը կը լեցընէ, այնպէս որ թշնամիք ի հարկէ կը յաղթուին: Բայց մէկ երկու օր վերջը հոն տրուած ճակատը (Սեպտ. 20) հակառակ ելք ունեցաւ, որովհետեւ գաշնակիցք իր անմատոյց կարծած բարձունքը մագլելով, եւ դիմացէն յարձակելէն զատ՝ քովէն իր վրայ իյնալով, քանի մը ժամու սաստիկ կռուէ ետքը զինքը ետ քաշուելու ստիպեցին: Եթէ գաշնակիցք նոյն ատեն մէկէն Սեւաստոբոլի վրայ յարձակում ընէին, կարելի է որ դիւրութեամբ կարենային առնուլ, որովհետեւ մէջը սակաւութիւ պահակապանք կային, եւ Մենչիգոֆ Ալմայի ճակատէն ետքը դէպ ի արեւելք քաշուելով, յիշեալ բերգը ճակատատեղւոյն արեւմտեան կողմը թող տուաւ: Բայց ան ժամանակները գաշնակցաց բանակը մեծ այլայլութեան մէջ էր, վերին հրամանատար Սէնդ-Առնոյ սպարապետին հիւանդու-

Թեան պատճառաւ, որն որ մաղձացաւ բռնուած բլլալով, մէկքանի օրէն մեռաւ (Սեպտ. 29) : Այսպէսով իր տեղն անցնող Գանրոպէր զօրապետին ուրիշ միջոց չէր մնար՝ բայց եթէ Սեւաստօրոյ պաշարել, որուն անմիջապէս ձեռք զարկաւ (Հոկտ. 3) : Երկու շաբաթ ետքն ալ թէ ծովէն եւ թէ ցամաքէն զնդակոծութիւնը սկսաւ (Հոկտ. 17), բայց բերդին մեծ վնաս չկրցաւ հասցընել. ասոր հակառակ նաւերը վնասուելով, ստիպեցան քիչ մը ետ քաշուիլ : Ան ատեն գաշնակիցք համոզուեցան որ խիստ երկայն պիտի տեւէ եւ շատ զոհեր պիտի պահանջէ Սեւաստօրոյի առնուիլը. բայց ինչ օգուտ, մէյ մը՝ որ ձեռք զարկած էին, պէտք էին դուրս հանել : Իրենց վիճակը շատ աղէկ չէր եւ միշտ աւելի կը գէշնար. հազիւ 63,000 ցամաքի զօրք ունէին իրենք, ուր որ Ռուսաց բանակը 90,000ի հասած էր, եւ կայսեր Միքայէլ ու Նիկողայոս որդւոցը ներկայութիւնը՝ զօրաց քաջալերութիւնը կ'աւելցընէր : Նոյն միջոցներուն թէպէտ թշնամիք զանազան անգամներ իրարու հետ զարնուեցան, բայց հազիւ երկու մեծկիակ ճակատներ տրուեցան, այս ինքն՝ Պալազլաւայի ու Ինքէրմանի ճակատները : Առաջնոյն մէջ (Հոկտ. 25) Ռուսք Օսմանեանց ու Անգղիացւոց վրայ յաղթութիւն մը ստացան. բայց անկից տասն օր ետքը Ինքէրմանի քով տրուած ճակատն իրենց խիստ վնասուկար եղաւ (Նոյ. 5). Թէպէտ իսկզբան Անգղիացիք յաղթուելու վտանգի մէջ ինկան, սակայն ետքէն Պուսքէ զօրապետը Գաղղիացի զօրքերով օգնութեան հասնելով, յաղթութիւնը դաշնակցաց եղաւ : Անկէ ետեւ աշնան սաստիկ անձրեւները սկսելով եւ չորս կողմն ողողելով, անկարելի եղաւ պատերազմական գործողութեանց ձեռք զարնել : Գաշնակիցք պատրաստութիւն անասն ձմեռը հոն անցընելու, զօրն որ մանաւանդ իսկզբան մեծ նեղութեամբ անցուցին, թէ երկրին անյարմարութեան եւ թէ շատ բանի պակասութիւն կրելուն պատճառաւ : Չէ թէ միայն վառելու

փայտի ու ձմերուկան զգեստի կողմանէ նեղութիւն կը կրէին, հապա նաեւ շատ անգամ ուտելիքի նկատմամբ: Աս ամէն պարագաները մէկտեղ գալով, ըստ ինքեան կը հետեւի որ խիստ շատ մարդիկ պէտք էին հիւանդանալ ու մեռնիլ. իրօք ալ հոնտեղերը հաստատուած հիւանդանոցները բաւական չըլլալով, հետզհետէ նաւերով լեցուն հիւանդներ զոստանդնուպոլիս կը խաւրուէին: Սակայն աս այսպէս ըլլալով, մէկ կողմանէ ալ թշնամիներէն յարձակում կրերով, դաշնակիցք քաջաբերութիւննին չէին կորսընցընէր, եւ ժամանակնին զուարթութեամբ կ'անցընէին, գարնան սպասելով:

266. Ռուսիայէն պահանջուած երաշխաւորութեան չորս պայմանները կամ Չորս կէտերը: Գրեթէ ամէն պատերազմներուն մէջ սովորական երեւոյթմըն է, ինչպէս շատ անգամ տեսած ենք, որ ձմերուկան ատեն՝ երբ որ զինուց շառաչուը կը դադրի, դեռպանագիտութիւնն իր գործունէութիւնը կը սկսի: Աս բանս պէտք էր աւելի տեսնուիլ ներկայ պատերազմին ատենը, որուն նշանաւոր հանգամանքներէն մէկն ալ ան է, որ դեռպանական բանակցութիւնք սկիզբէն մինչեւ վերջը գրեթէ միշտ շարունակեցան: Երկու Գերմանական մեծ տէրութիւնք ամէն կերպով կը ջանային խաղաղութիւնք նորէն հաստատել, որուն մեծապէս կը բաղձային արեւմտեան տէրութիւնք ալ, վասն զի խիստ ծանր կը նստեր իրենց՝ պատերազմը, որմէ մեծ շահու ակնկալութիւն ալ չէին կրնար ունենալ: — Ապրիլի 9ին արձանագրէն ետքը (258) Աիէննայի մէջ չորս տէրութիւնք նոր արձանագրի մը ստորագրած էին (Մայ. 23), որուն մէջ՝ մէկ կողմանէ Գաղղիայի ու Անգղիայի, եւ մէկալ կողմանէ Աւստրիայի ու Պրուչի գաշինքները (258, 260) դնելէն ետքը, կը յայտնէին որ ամէնքը՝ իրենց իւրաքանչիւրին գտնուած զիրքին համեմատ՝ փոյթ պիտի տանին մինչեւ նոյն ժամանակ ստորագրուած արձանագրիներուն եւ տեսն-

ձինն Ապրիլի 9ին արձանագրին սկզբունքներուն կատարուելուն: Անկից ետքը երբ որ Ռուսիա՝ Գանուբեան իշխանութիւններէն ելլելու պահանջման պատասխան տուած ատենը (Յունիս 29), խաղաղական առաջարկութիւններ ըրաւ (263), Աւստրիայի, Գաղղիայի ու Անգղիայի երեսփոխանները նորէն խորհուրդ ըրին, տեսնելու համար թէ արդեօք նոյն առաջարկութեանց կրնայ զիջուիլ՝ թէ չէ: Աս խորհուրդները քանի մ'օր տեւեցին (Յուլ. 9—21). որմէ ետքը դահլիճներու մէջ գրով խօսակցութիւն մը սկսաւ: Աւստրիա եւ Պրուշ միջնորդ կ'ըլլային որ արեւմտեան տէրութիւնք Ռուսի առաջարկութիւնները չմերժեն, հապա զանոնք բանակցութեան հիմ առնուն. մանաւանդ Պրուշ ինք զինքը բոլորովին հաւանած կը ցուցնէր նոյն առաջարկութեանց, եւ անոր համար ալ էր որ, ինչպէս յիշատակեցինք (263) Վիէննայի գեսպանական խօսակցութեանց մասնակից չէր ըլլար: Իսկ Գաղղիայի եւ Անգղիայի դահլիճները չուզեցին հաւանիլ. վասն զի Ռուսիա թէպէտ Ապրիլի 9ին արձանագրին երկու պայմանները (258) յանձն կ'առնուր, բայց ամենեւին խօսք չէր ընել հոնտեղը նշանակուած երաշխաւորութեանց վրայ: Արդ նոյն երաշխաւորութեանց համար իրենք հետեւեալ չորս պայմանները կը դնէին (Յուլ. 22), որոնք Արեւելեան պատերազմին պատմութեան մէջ խիստ նշանաւոր եղան՝ Չորս կէտեր անուամբ, եւ ասոնք են: 1. Ռուսիային մինչեւ ան ատեն Վալաքիայի, Մոլտաւիայի ու Սերուիայի վրայ բանեցուցած պաշտպանութիւնը դադրի, եւ Օսմանեան տէրութեան տակ եղող նոյն երկք գաւառներուն շնորհուած իրաւունքները Գրան հետ դրուելու դաշինքով մը մեծ տէրութեանց երաշխաւորութեան տակ ձգուի: 2. Գանուբի նաւարկութեան վրայ դրուած ամէն արգելքները վերցուելով, Վիէննայի ազգայաժողովոյն մէջ որոշուած սկզբունքները գործադրուին: 3. Մեծ տէրութեանց եւ Օսմանեան տէրութեան մէջ 1841ին Յուլիսի 13ին

գրուած պայմանագրութիւնը (242) նորէն քննութեան տակ ձգուելով, Եւրոպայի հաւասարակշռութեան սկզբանց համեմատ (եւ Ռուսիային Սեւ ծովու մէջ ունեցած զօրութիւնը չափաւորելու նպատակաւ) փոխուի: 4. Օսմանեան տէրութեան հպատակ եղող քրիստոնեայ ազգաց ազատութիւններն ու արտօնութիւնները բոլոր մեծ տէրութիւնք մէկտեղ հաստատել տան, բայց առանց քնաս հասցընելու Սուլթանին վեհապետական իրաւանց: — Մտադրութեան արժանի է ան պարագան, որ երրորդ կէտին մէջ յիշուած՝ Ռուսիայի Սեւ ծովու զօրութեան չափաւորուիլը, միայն Գաղղիա կը պահանջէր, իսկ Անգղիա չէր յիշեր: Աւստրիա ալ աս Չորս կէտերուն իր հաւանութիւնը տուաւ, եւ ինք ու արեւմտեան տէրութիւնք փոխադարձ յայտադիրներով միաբանեցան որ Ռուսիայի հետ ամենեւին կերպով մը խաղաղութեան վրայ չխօսին, մինչեւ որ անիկայ նոյն Չորս կէտերը կատարեալ չընդունի (Օգոստ. 8): Աս նկատմամբ երկք տէրութեանց իրարու տուած յայտադիրներուն մէջ ալ երրորդ կէտին վերջին մասը չէյիշուիր:

267. Ռուսիա վերջապէս չորս կէտերը կ'ընդունի: Աւստրիա այսպէս արեւմտեան տէրութեանց հետ միաբանելուն պէս, նոյն չորս կէտերը Ռուսիայի դահլճին հաղորդելով (1854, Օգոստ. 10), յորդորեց որ զանոնք ընդունի: Ար յայտնէր թէ անոնք Ապրիլի 9ին արձանագրէն ըստ ինքեան յառաջ կու գան, թէ ինք Աւստրիա անոնց կատարեալ հաւանած է եւ զանոնք խաղաղութեան հարկաւոր պայմանները կը համարի: Խօսք կու տար որ եթէ Ռուսիա անոնց հաւանելու ըլլայ, ինք ալ արեւմտեան տէրութիւնները կը ստիպէ թշնամութիւնները դադրեցընելու եւ խաղաղութեան բանակցութեանց սկիզբ ընելու: Նոյնպէս Պրուշ ալ, թէեւ արեւմտեան տէրութիւններէն ու նոյն իսկ Աւստրիայէն հեռու կը կենար, միեւնոյն իմաստով գրուած մ'ուղղեց Ռուսիայի (Օգոստ. 13),

ցուցնելով որ չորս կէտերը հաւասարազօր են Ռուսիայի վերջին առաջարկութեանց, եւ կայսեր զգածմանց ու իր տէրութեան շահուն համաձայն: Ի վերայ այսր ամենայնի նիկողայոս կայսրն առջի բերան մէկէն մերժեց եւ չուզեց ընդունիլ չորս կէտերը, ըսելով որ անոնք՝ միայն Ռուսիա խոնարհեցնելու կը ծառայեն, կամ երկայն պատերազմներով տկարացած Ռուսիա մը կ'ենթադրեն, եւ եթէ ընդունուելու ըլլան, անոնց վրայ հիմնուած խաղաղութիւնը շիկրնար տեւական ըլլալ: Գերմանական տէրութիւնք աս առաջին մերժողական պատասխանէն չլքանելով, մէկ երկու հեղալ իրենց ազգարարութիւնները կրկնեցին (Պրուշ՝ Սեպտ. 3, Հոկտ. 21, Աւստրիա՝ Սեպտ. 11): Ռուսիա վերջապէս աս կրկին կրկին ազգարարութեանց տեղի տուաւ (Նոյ. 6). սակայն աս առերեւոյթ զիջողութիւնն օգուտ չըրաւ, որովհետեւ առաջարկեալ չորս կէտերուն իր մտաց համեմատ մեկնութիւն տալով, որով եւ անոնց զօրութիւնը տկարացնելով, չէր կրնար ոչ արեւմտեան եւ ոչ Գերմանական մեծ տէրութեանց վրայ աղէկ ազդեցութիւն ընել: Մանտլանդ որ նոյն չորս կէտերն ընդունելուն անանկ պատճառ մը կու տար, որն որ մեծ նախատինք էր Գերմանական տէրութեանց. այս ինքն կ'ըսէր թէ աս զիջողութիւնն անոր համար կ'ընէ, որպէս զի նոյն Գերմանական երկու մեծ տէրութեանց երկպառակութենէն ծագելու վնասները խափանէ: Ասով Ռուսիային մեծ վնաս եղաւ, որովհետեւ իրմէ նախատուող տէրութիւնք վըշտանալով, յառաջուան անմիաբանութիւննին ձգեցին եւ նորէն սերտիւ իրարու հետ միացան: Պրուշ, որն որ քիչ մը յառաջ յայտնած էր թէ Ռուսիայի զիջողութիւններովը՝ Գերմանիայի համար վախցուելու վտանգ մը չմնալով, Ապրիլի 20ին դաշանց յաւելուածոյ յօգուածին նպատակը վերցած եւ անկից ծագող զինուորական պարտականութիւնը (260) ջնջուած է (Սեպտ. 3), Ռուսիայի վերջին (Նոյ. 6ին) պատաս-

խանէն ետքը՝ Աւստրիայի հետ նոյն Ապրիլի 20ին դաշանց վրայ նոր յաւելուածոյ յօդուած մ'աւելցուց (նոյ. 26): Ասով կը հաստատուէր, որ 1. Աւստրիա եւ Պրուշ չորս կէտերն իբրեւ խաղաղութեան բանակցութեանց յարմար հիմ կը նկատեն, եւ պատշաճ ժամանակին զանոնք արժեցընելու պիտի ջանան. եւ 2. Պրուշ ինք զինքը կը պարտաւորէր Աւստրիացոց օգնելու՝ եթէ անոնք Դանուբեան իշխանութեանց մէջ յարձակում կրելու ըլլան: — Աւստրիայի եւ Պրուշի աս կաատարեալ միաբանութիւնն անմիջապէս իր արդիւնքն ունեցաւ. յաւելուածոյ յօդուածին ստորագրուելէն երկու օր ետքը, Ռուսիայի գեապանը Պուլ կոմսին յայտնեց որ Նիկապոլոս կայսրը կը հաճի որ չորս կէտերը խաղաղութեան բանակցութեանց հիմ աւանուին (նոյ. 28):

288. Դեկտեմբերի 2ին դաշնաւորութիւնը արեւմտեան տէրութեանց ու Աւստրիայի մէջ: Պրուշ նոյն դաշանց մէջ մտնել չ'ուզեր: Ինչպէտ եւ Ռուսին այսպէս մէկէն զիջանիլը՝ Գերմանական երկու մեծ տէրութեանց միաբանութեան հետեւութիւն մին էր, ինչպէս վերը զրուցեցինք. բայց հաւանական է որ նոյն որոշման մեծապէս օգնած ըլլայ Աւստրիային արեւմտեան տէրութեանց հետ դաշնաւորիլը: Աս բանս թէպէտ քանի մ'օր ետքը գլուխ ելաւ, բայց որովհետեւ երկայն ժամանակէ վեր խօսակցութիւնը կ'ըլլար, շէր կրնար անծանօթ մնալ Ռուսիայի արքունիքէն, որն որ ամէն կերպով կը ջանար նոյնը խափանելու: Իսկ նոյն դաշնաւորութիւնը՝ Ռուսիայի զիջողութենէն ետքը՝ անօգուտ կրնար համարուիլ ալ նէ, ի վերայ այսր ամենայնի արդէն ամէն բան կարգի գրուած ըլլալով, ստորագրուեցաւ (1854, Դեկտ. 2): Դաշնաւորք ըսելէն ետեւ որ իրենց միաբանելուն նպատակն է շուտով եւ հաստատուն հիմանց վրայ խաղաղութիւն ընել, հետեւեալ պայմանները կը դնէին: 1. Դաշնաւորք՝ չորս կէտերուն վրայ ուրիշ իրենց պատշաճ երեւցած պայմաններն ալ աւելցընելու իրաւունքնին պահելով,

իրենք զիրենք կը պարտաւորեն՝ առանց յառաջագոյն մէջերնին խորհրդակցելու եւ միաբանելու՝ Ռուսիայի հետ խաղաղութեան բանակցութիւն չընել: 2. Աւստրիա ինք զինքը կը պարտաւորէ թող չտալ որ Ռուսք Գանուբեան իշխանութիւնները մտնեն, միանգամայն խօսք կու տայ որ իր նոյն տեղերը զօրօք բռնելը՝ Օսմանեան կամ դաշնակից տէրութեանց բանակներուն շարժման արգելք չ'ըլլար: 3. Եթէ Աւստրիայի ու Ռուսիայի մէջ պատերազմ բացուի, երեք դաշնաւոր տէրութիւնք յարձակողական եւ պաշտպանողական դաշնաւորութիւն պիտ'որ ընեն: 4. Թէ որ առ դէպքը պատահի, առանց նախընթաց խորհրդակցութեան՝ դաշնաւորներէն մէկը Ռուսիայի հետ առանձին բանակցութիւն պիտի չընէ: 5. Մինչեւ տարւոյն վերջը խաղաղութեան հաստատուելուն վրայ ապահովութիւն չի ստացուիր նէ, դաշնաւորք իրենց դաշնաւորութեան նպատակին հաննելու յարմար միջոցներուն վրայ պիտի խորհին: 6. Պրուշ պիտի հրաւիրուի առ դաշնաւորութեան մէջ մտնելու: — Իրօք ալ քիչ մը ետքը երեք դաշնագիր տէրութիւնք զնոյն Պրուշ պաշտօնական կերպով հրաւիրեցին իրենց հետ միաբանելու (Դեկտ. 18). բայց ինք յանձն չառաւ, ըսելով թէ չ'ուզեր այնպիսի պարտականութեանց տակ մտնել, որոնց մինչեւ ո՛ւր տանելէքը չիկրնար յառաջուրնէ գուշակուիլ (Դեկտ. 19): Աս ալ Ռուսիայի քաղաքականութեան պտուղն էր, որ չորս կէտերուն հաւանելով, դարձեալ զՊրուշ իր կողմը շահած եւ Աւստրիայէն բաժնած էր. ան աստիճանի որ թէպէտ եւ յառաջ իրենց միաբանութեամբ կրցած էին Ապրիլի 20ին դաշնաց նոր յաւելուածոյ յօդուածը (267) դաշնակցութեան ժողովոյն մէջ ընդունիլ տալ (Նոյ. 30 — Դեկտ. 9). ետքէն Պրուշի անմիաբանութեամբը՝ Աւստրիա չկրցաւ նոյն ժողովոյն մէջ ընդունել տալ իր նոր առաջարկութիւնը (1855, Յունու. 22) որ դաշնակցութեան զօրքը պատերազմի վեճակի մէջ դրուի: Պրուշի եւ Ռուսի ջան-

քողը ժողովին աս նիւթոյն վրայ անանկ որոշում մ'ըբաւ, որ Աւստրիայի դիտածին բոլորովն հակառակ էր. այս ինքն՝ որոշեց (Փետր. 8) որ իր զօրքերը պատրաստուին, ասանց յայտնապէս բռնելու թէ որով դէմ, Գաղղիայի՝ թէ Ռուսիայի: Եւ թէ աս կը դիտէր Պրուշ՝ յայտնի է նոյն միջոցներուն Պրուսիական դահլճին մէկ յայտագրէն, որով Աւստրիայի կը յայտնէր թէ Գաղղիայի մէջ տեսնուած պատերազմի պատրաստութիւններն իրեն վտանգաւոր կ'երեւան. որուն Աւստրիա պատասխան տուաւ թէ նոյն պատրաստութիւններն ինք այնչափ քիչ հոգ կ'ընէ, որչափ որ Պրուշ քիչ հոգ կ'ընէ Ռուսիայի պատրաստութիւնները:

269. Վիէննայի դեսպանաժողովը: Ղառնանք հիմայ դեսպանական բանակցութեանց, որոնք Ռուսիային՝ չորս կէտերն ընդունելէն ետքը սկսան, եւ որոնց Պրուշ մասնակից ըլլալ չուզեց: Վիէննայի մէջ Աւստրիայի արտաքին գործոց պաշտօնեան ու արեւմտեան տէրութեանց դեսպանները՝ Ռուսիայի դեսպանին հետ մէկ քանի անգամ սկզբնական բանակցութիւններ ընելէն եւ չորս կէտերուն ընդհանուր իմաստին վրայ մէջերնին միաբանելէն ետեւ (1854, Դեկտ. 28—1855, Յունու. 7), որ առթին մէջ Ռուսի դեսպանն երեք դաշնաւորաց մեկնութիւնն ընդունեցաւ, անոնց վրայ մանրամասն խօսուած ատեն՝ իր խորհրդածութիւնները յառաջ բերելու իրաւունքը պահելով, բուն դեսպանաժողովը գումարուեցաւ (Մարտ 15), Աւստրիայի, Գաղղիայի, Անգղիայի, Ռուսիայի ու Օսմանեան տէրութեան երեսփոխաններէն¹: Ժողովը բացաւ Պուլ կոմսը՝ յառաջաբանական խօսակցութենէ մը ետքը, բանակցութեանց հիմ ըլլալու չորս կէտերը ժո-

1 Դեսպանաժողովի անդամներն ստույգ էին: Աւստրիայի կողմանէ՝ Պուլ կոմսն ու Բրոքէշ սեպուհը. Գաղղիայի կողմանէ՝ Տրուէն աջ Լիւիս ու Պուրբէտ սեպուհը. Անգղիայի կողմանէ՝ Լորս չոն Ռասսել ու Ուեոգմարէնա կոմսը. Ռուսիայի կողմանէ՝ Պարլազոֆ իշխանն ու Օբլաֆ սեպուհը. Օսմանեան տէրութեան կողմանէ՝ Ալի փաշա ու Աբիֆ էֆէնախ: — Տրուէն աջ Լիւիս ու Ալի փաշան հազիւ 9 Գերբոշաֆտ մէլ (Ապր. 9) ներկայ գտնուեցան:

զովականաց առջևը գնելով: Գաղղիայի եւ Անգղիայի երեսփոխանները յայանեցին որ իրենց կառավարութիւնները՝ յիշատակեալ չարս կէտերէն զատ, Եւրոպայի ընդհանուր շահուն համար՝ ուրիշ պայմաններ ալ գնելու իրաւունքնին կը պահեն. իսկ Ռուսիայի երեսփոխանները ծանուցին որ եթէ խաղաղութեան համար՝ անանկ պայման մ'առաջարկուի, որն որ Ռուսիայի պատուին հետ չմիաբանի, երբեք չեն հաւանիր: Օսմանեան երեսփոխանն ալ արեւմտեան տէրութեանց գեւպաններուն համեմատ խօսելէն ետքը, անմիջապէս սկսած չարս կէտերուն վրայ կարգաւ բանակցել: Առաջին երկու կէտերուն (Գանուբեան իշխանութեանց ու Գանուբի նաւարկութեան) վրայ առաջին հինգ նիստերուն մէջ (Մարտ 15, 17, 19, 21, 23) առանց շատ մեծ գծուարութեանց կրցան միաբանիլ: Աեցերորդ նստին մէջ (Մարտ 26) Գաղղիայի երեսփոխանը յիշատակագիր մը ներկայացուց, որով կ'առաջարկուէր որ Ալաքիա ու Մոլաուիա միանալով՝ մէկ իշխանութիւն ըլլան, Եւրոպայի վեհապետական աներուն մէկէն ժառանգական իշխանի մը աակ: Բայց առանց ասոր վրայ երկայն խօսելու, երրորդ կէտին անցան: Ինչպէս ինք իրմէ կրնայ ենթադրուիլ, գլխաւոր եւ մեծագոյն գծուարութիւնն առ կէտին վրայ էր. իրօք ալ անմիջապէս երբ որ նոյն նիւթին վրայ խօսելու սկսուեցաւ, կարծեաց ասարեքութիւնը երեւան ելաւ եւ մինչեւ գեոպանաժողովոյն վերջը ինք գումարման մէջ (Մարտ 26, 29, Ապր. 2, 9, 17, 19, 21, 26, Յունիս 4) շարունակուեցաւ: Ռուսիա ամենեւին կերպով մը յանձն չէր առնուր իր Սեւ ծովու զօրութիւնը չափաւորել, իսկ մէկալ տէրութիւնք նոյնին վրայ կը պնդէին, սրով անկարելի եղաւ միաբանիլը: Աերջին (14երորդ) նստին մէջ Աւստրիա նոր առաջարկութիւն մ'ըրաւ, որն որ հետեւեալ պայմանները կը բովանդակէր. 1. Ռուսիա եւ Գուռը մէջնրնին միաբանին հաւատար չափով ծովական զօրութիւն ունենալու. 2. Նեղուցները գոց

Ճան. 3. Սեւ ծովու եզրները երկիր շունեցող դաշնագիր տերութիւններէն ամէն մէկն իրաւունք ունենայ նոյն ծովուն մէջ երկ'երկու կրկնայարկ (ֆրեկտ) պահելու. 4. Երբ որ Սուլթանը յարձակում կրելու վտանգի մէջ գտնուի, նեղուցները կրնայ բանալ: Աս առաջարկութիւնն ալ անագուտ եղաւ. վասն զի արեւմտեան տերութեանց եւ Գրասն երեսփոխանները յայտնեցին թէ ալ չեն կրնար նոյն նիւթին վրայ խօսիլ, որովհետեւ Ռուսիա յանձն չ'առնուր իր Սեւ ծովու զօրութիւնը չափաւորել. իսկ Ռուսիայի երեսփոխանները՝ թէպէտ մէկ կողմանէ ըսին որ նոյն առաջարկութեան վրայ կրնայ բանակցուիլ, բայց մէկալ կողմանէ ալ նորէն կրկնելով շատ անգամ ըսածնին թէ երբեք յանձն չեն առնուր իրենց ծովական զօրութեան չափաւորուիլը, ցուցուցին որ մէկալներն իրաւունք ունին բանակցիլ չուզելու:

270. Աւստրիայի քաղաքականութիւնը: Տրուէն անը Լիւիս պաշտօնէն կ'ելլէ: Այսպէսով Վիեննայի գեապանատնորդն առանց արդիւնք մ'ունենալու լմբեցաւ. միայն աս հետեւութիւնն ունեցաւ որ Աւստրիա՝ որն որ յառաջագոյն պատրաստ կ'երեւար Արեւմտեան տերութեանց հետ միացած՝ Ռուսիայի դէմ պատերազմի ելլելու, նոյն գեապանատնորդէն ետքը՝ մանաւանդ թէ գեապանատնորդը չլմբեցած՝ ինք զինքը որոշեց զէնքի չգպչելու: Ասոր պատճառ կը բերէր թէ Ռուսիային երկու նաւ աւելի կամ պակաս ունենալուն համար՝ չկրնար Ֆրանսոֆուրդի դաշնակցութեան ժողովոյն մէջ առաջարկել որ Գերմանիա նոյն տերութեան դէմ պատերազմի ելլէ. որով ուզեց խնայրնել թէ պատերազմի չելլելուն պատճառն ան է՝ որ Գերմանիա եւ առանձինն Պրուշ իրեն հետ չէին միարանիր: Աս նիւթին վրայ Անգղիայի Գլարենտըն պաշտօնեան խորհրդանոցին մէջ հետեւեալ կերպով խօսեցաւ (1855, Յունիս 26). Երբ որ Աւստրիա արեւմտեան տերութեանց հետ կապուեցաւ, կը սպասէր որ դաշնակցաց զօրքերը խորմի մէջ մեծ յաջողութիւններ ձեռք բերելով՝ կարենան

իրեն հետ միաբան գործել: Բայց դժբախտութեամբ իր ակնկալութիւնը չկատարուեցաւ. հարկ է որ Աւստրիա իր սեպհական զօրութեամբ միայն գործէ: Սակայն կրնայ Պրուշի չէզոքութեան վստահիլ, կրնայ վստահ ըլլալ Գերմանիայի բռնելու ընթացքին վրայ, որպէս զի ապահովութիւն ունենայ որ դիմացը թշնամի մ'ունեցած ատեն՝ քովէն եւ կռնակէն ալ յառաջուրնէ չգուշակուած թշնամիներ վրան պիտի չյարձակին: — Անոր համար մեծապէս իրաւունք ունի մատենագիր մը գրելու թէ Արեւելեան պատերազմին մէջ ամենէն աւելի ազդեցութիւն ունեցող բանը՝ նկատումը կամ ակնածութիւնն եղաւ. Արեւմտեան տէրութիւնը՝ Աւստրիայի նկատում կ'ընէին, Աւստրիա՝ Պրուշի նկատում կ'ընէր, Պրուշ՝ Ռուսիայի. իսկ Ռուսիա ըստ տեղւոյն զիջում ընելով, զԱւստրիա փոխարէն զիջում ընելու կը ստիպէր: Աս վերջին նկատմամբ ալ դարձեալ Գլարենտարն կոմսն իրաւամբ զրուցեց որ Ռուսիա չորս կէտերը՝ միայն անոր համար ընդունեցաւ, որպէս զի Աւստրիայի գործունէութիւնը խափանէ: — Բայց Աւստրիային զէնք չառնելուն ուրիշ պատճառ մ'ալ կար, այս ինքն՝ իր վերջին առաջարկութեան շնորհունուիլը: Պուլ կոմսը դեսպանաժողովոյն ատենը Տրուէն տը Լիւխին ու Լորա Ռասսէլին հետ միաբանած էր, որ Աւստրիա նոյն կամ անոնց համազօր պայմաններն իբրեւ վերջնագիր Ռուսիայի առաջարկէ, եւ եթէ անիկայ զանոնք մերժելու ըլլայ, անմիջապէս պատերազմ բանայ: Գաղղիայի ու Անգղիայի պաշտօնեաներն ասոր հաւանելով, դեսպանաժողովը չմընցած՝ աճապարեցին իրենց մայրաքաղաքը դարձան, նախ Լորա Ռասսէլ եւ ետքը Տրուէն տը Լիւխ, որպէս զի իրենց իւրաքանչիւր կառավարութեան հաւանութիւնն առնուն: Նարոլէոն արդէն իր հաւանութիւնը տուած էր, մտածելով որ Ռուսք ան պայմաններն ընդունին ալ՝ չընդունին ալ, իրեն հաւասարապէս օգտակար է աս կերպով Աւստրիայի հետ կ'ապուիլը: Ռուսիայի բոլոր նաւատորմին ջնջուիլը՝

Գաղղիայի շահուն յարմար չէր, որովհետեւ Անգղիայի թէ՛ ծովական եւ թէ՛ առեւտրական առաւելութեան աւելի մեծնալուն կ'օգնէր. իրեն համար բաւական էր որ Օսմանեան տէրութեան վնաս հասցընել չկարենալու չափ տկարանար: Դոյն նպատակին կը հասնուէր եթէ Ռուսիա Աւստրիայի տալու վերջնագրին զիջանէր. իսկ եթէ չզիջանէր, Գաղղիա ցամաքի վրայ զօրաւոր գաշնակից մը կ'ունենար եւ Ռուսիայի դէմ եւրոպական դաշնակցութիւն մը կազմելու բաղձանքին կը հասնէր: Աս մտածմամբ էր որ Տրուէն տը Լիւիս եւ Նաբոլէոն սիրսվ հաւանած էին Աւստրիայի առաջարկութեան: Իսկ Անգղիա՝ որն որ հաստատութեամբ միտքը դրած էր Սեւ ծովէն դուրս չելլել՝ մինչեւ որ Ռուսիային նոյն տեղն ունեցած նաւատորմիզը ջնջած չըլլայ, ամենայն զօրութեամբ դէմ գարձաւ Լորս Ռասստէլին հաւանած առաջարկութեան, եւ Նաբոլէոն ստիպուեցաւ տեղի տալ: Անոր համար ալ Տրուէն տը Լիւիս պաշտօնէն հրաժարեցաւ (Մայ. 7), եւ իրեն յաջորդող Վալենուքի կամին անմիջապէս ծանոյց որ Աւստրիայի առաջարկութիւնները չեն կրնար ընդունուիլ, վասն զի անոնց վրայ հիմնուած խաղաղութիւնը տեւական չ'ըլլար: Այսպէսով արեւմտեան տէրութիւնք Աւստրիայէն բաժնուելով, ինքն ալ ազատ եղաւ անոնց տուած խոստումէն:

ՁՅ1. Նիկողայոս կայսրը կը մեռնի եւ իրեն կը յաջորդէ Աղէքսանդր Բ. որդին: Վիէնայի դեսպանական խօսակցութիւններն եղած ժամանակ՝ նշանաւոր գէպքեր պատահած էին, որոնց ամենէն գլխաւորն է Նիկողայոս կայսեր մահը, որն որ նոյնին նախընթաց բանակցութիւններն ըլլալէն ետքը՝ բուն դեսպանաժողովը չբացուած՝ պատահեցաւ (1855, Մարտ 2): Հաւանական կ'երեւայ անոնց կարծիքը՝ որոնք կ'ըսեն թէ աս մահը պատճառած ըլլայ ան սրտնեղութենէն՝ զորն որ զգաց իր ամէն ձեռնարկութիւններուն յաջողութեամբ պսակուելուն վարժող կայսրը, տեսնելով

Թէ աս հեղ իր ամէն հաշիւները պարապի գաղթին: Յուսացած էր որ ՂԱնդղիա իր կողմը կը շահի. կը համարէր թէ անկարելի է որ Անդղիա ու Գաղղիա մէկտեղ միաբանին. հաւանական կը կարծէր որ Դուռն իր պահանջմանց կը զիջանի. կը յուսար որ Աւստրիա՝ եթէ իրեն հետ բոլորովին չիմիանար՝ գտնէ չէղջը կը կենայ. հաստատութեամբ միտքը դրած էր որ իր զօրաց Օսմանեան բանակներուն հետ ամէն մէկ զարնուիք՝ իր գրօշներուն մէջ մէկ յաղթութեան դափնի կը բերէ: Բայց աս հաշիւներուն ամէնն ալ ինչպէս բոխք՝ պարապ ելան, որն որ Նիկողայոս կայսեր պէս վեհապետի մը համար արատքոյ կարգի եւ մահաւիթ գէպք մըն էր. մանաւանդ իր զօրաց վերջին անգամ Յաճկի բանակէն յաղթուիլը (274): Ինչպէս որ է նէ, ինք մեռնելով, եւ վերը նշանակածնուս պէս՝ ան միջոցին մեռնելով, երբ որ Աթէնայի գեապանաժողովը բացուելու վայր էր, խաղաղութեան դիւրաւ հաստատուելուն ակնկալութիւնն ամէն կողմ աւելցաւ: Բայց իր որդւոյն ու յաջորդին՝ Աղէքսանդր Բին տաւջին յայտարարութիւնը, չէ թէ միայն աս ակնկալութիւնը՝ ծագած վայրկենին՝ ջնջեց, հապա նոր հոգեբու ալ առիթ տուաւ. որովհետեւ բացայայտ կը զրուցէր թէ Մեծին Պետրոսի, Աստարիների, Աղէքսանդրի ու Նիկողայոսի բաղձանքներն ու դիտաւորութիւնները յառաջ տանելու պիտի ջանայ. ուր որ գաշնակցաց նպատակն էր նոյն բաղձանքներն ու դիտաւորութիւնները պարապի հանել: Այսպէս գէթ նոյն ժամանակ աս գահակալութիւնը իրաց ընթացքին վրայ ամենեւին փոփոխութիւն չբրաւ, ինչպէս որ Նեսեղրոս կոմսը նոյն գահակալութենէն անմիջապէս ետքը ծանուցած էր (Մարտ 10) թէ նոր կայսրն իր նախորդին բանած քաղաքականութեան ընթացքը պիտի շարունակէ: Մանաւանդ թէ խորունկ մտածողները տեսան որ Նիկողայոս կայսեր մեռնելովը՝ խաղաղութիւնն ըստնկատմանց ինչ աւելի գծուարցած էր: Ստոյգ է նոր կայսրը՝

մինչեւ նոյն ատեն իր հօրը քաղաքականութեան հետ մասնակցութիւն չունենալով, մէկ կողմանէ կարելի էր կարծուիլ թէ առանց իր պատուոյն վնաս հասցընելու՝ կրնայ ետ քաշուիլ. բայց մէկալ կողմանէ ալ ինք հօրմէն աւելի կը ստիպուէր պատերազմը շարունակելու: Մէյ մը՝ վասն զի անմիջապէս խաղաղութիւն ընելով՝ հօրը պատուոյն նախատինք կը հասցընէր. մէյ մ'ալ՝ վասն զի Նիկողայոս կայսրն երկայն ժամանակ մեծ փառաւորութեամբ թագաւորած ըլլալով, հեղ մը առաւել զօրութեան տեղի տալը՝ իր համբաւը չէր կրնար այնչափ արատաւորել. ուր որ նոր կայսեր անմիջապէս զլախ ծռելն իրեն անանկ անպատուութիւն կը պատճառէր, որն որ բոլոր իր ասպագային վրայ կրնար շուք ձգել, նշան սեպուելով իր կառավարութեան անզօրութեան ու անյաջողութեան:

272. Սարգիսիա դաշնակցաց հետ միանալով, Ռուսիայի գէտ՝ պատերազմի կ'ելլէ: Միեւնոյն միջոցներուն պատահած նշանակութեան արժանի դէպքերէն մէկն ալ կը համարուի Սարգիսիային գաշնակցաց հետ միանալը: Աս տէրութիւնը՝ որն որ վերջին տարիները ամէն կերպով կը ջանար իր մեծնալուն նպատուող պարագաներէն օգուտ հանել, ուզեց Արեւելեան պատերազմին գործակից ըլլալ, որպէս զի Անգղիայի ու Գաղղիայի բարեկամութիւնը շահի, եւ առիթն որ գոյ՝ անոնք ալ իր անձնական նպատակներուն յաջողութեան օգնեն: Արգէն շատոնցունէ մէջերնին խօսուած ըլլալով, արեւմտեան տէրութեանց ու Սարգիսիայի մէջ դաշնաւորութիւն մը դրուեցաւ (1855, Յունու. 26), որով վերջինն ինք զինքը կը պարտաւորէր Ռուսական պատերազմին օգնելու համար 15,000 զօրք տալ. իսկ առաջինները Սարգիսիայի թագին երկրի ստացուածները կ'երաշխաւորէին, խօսք տալով որ եթէ պատերազմին ատենը՝ ան երկիրներուն վրայ յարձակում մ'ըլլայ, իրենք կը պաշտպանեն: Միեւնոյն օրը Սարգիսիայի ու Անգղիայի մէջ դրամական պայմանագրութիւն մ'ալ

եղաւ, որով առաջինը իշխանութիւն կ'ունենար Անգղիայի մէջ 500,000 ոգերլինի փոխառութիւն ընելու: — Ռուսիա աւ գործքն իբրեւ պատերազմի յայտարարութիւն առնելով, իր կողմանէ Սարգիսիայի դէմ պատերազմ հրատարակեց (Փետր. 7), արտոնջելով նոյն տէրութեան այսպէս առանց պատճառի իրեն հետ թշնամանալուն, մանաւանդ անանկ ատեն մը՝ որ ինք զիջած էր խաղաղութեան վրայ բանակցելու: Հազիւ անկէ ամիս մը ետքը Սարգիսիա Ռուսիայի դէմ պատերազմ հրատարակեց (Մարտ 4): Բայց Ռուսիայէն զատ՝ նոյն իսկ Գուռը խիստ նեղացաւ Սարգիսիայի աւ ընթացքին վրայ, որովհետեւ աւ իբր թէ իր պաշտպանութեան համար եղած ձեռնարկութիւնը, առանց իր գործակցութեան եւ հաւանութեան, միայն արեւմտեան տէրութեանց հետ միաբանուելով, գլուխ տարուած էր: Ինչպէս որ է նէ, վերջապէս հաւանեցաւ առանց իր խնդրելուն իրեն մատուցուած օգնութիւնն ընդունելու. որով եւ Գրան ու Սարգիսիայի մէջ ալ դաշնաւորութիւն մը ստորագրուեցաւ (Մարտ 15), որուն պայմանները՝ նոյն Գրան եւ արեւմտեան տէրութեանց մէջ եղած դաշնաւորութեան (257) պայմաններուն հետ ըստ էական մասանց կը համաձայնին:

273. Գաղղիայի եւ Անգղիայի վեհապետաց իրարու այցելութիւն ընելը: Այսպէսով թէպէտ արեւմտեան տէրութեանց նոր դաշնակից մ'աւելցած էր, բայց նիւթական զօրութեան կողմանէ իրենց մեծ օգնութիւն չէր կրնար ըլլալ, եւ մանաւանդ չէր կրնար լեցընել Աւստրիայի գործակցութեանէն զրկուելով ըրած կորուստներնուն տեղը: Եւ գուցէ աւ իրենց Սարգիսիայի հետ կապուին ալ՝ ուրիշ պատճառներու հետ միանալով՝ Աւստրիայի ետ քաշուելուն նպաստած ըլլայ, որն որ խիստ հաւանական կրնայ համարուիլ, եթէ սաոյգ է՝ ինչպէս սմանք կը հաստատեն՝ որ արեւմտեան տէրութիւնք եւ առանձինն Գաղղիա Սարգիսիայի խօզր տուած ըլլան, իր Իտալիայի նկատմամբ ունեցած գա-

ղափարներուն ալ նպատակու : Ի՛նչ որ էր նէ, պէտք էր որ Անգղիա եւ Գաղղիա իրենց ջանքն ու ճիգը կրկնապատկէին, որպէս զի պատուով գլուխ հանեն սկսած ձեռնարկութիւննին : Նարոյէոն ամէն կերպով կ'աշխատէր . Խորմ անգագար զօրք եւ մինչեւ իր անձնապահաց գունդն ու Գաղղիայի ամենէն երեւելի ճարտար Նիէլ զօրապետը խաւրելէն զատ, ինքն ալ անձամբ երթալ կ'ուզէր, բայց պատշաճ չսեպուեցաւ : Նոյն միջոցին կայսրուհւոյն հետ մէկտեղ Անգղիայի Թագուհւոյն այցելութեան գնաց (1855, Ապր. 16—22), եւ ինչպէս ժամանակին պարագաներէն կրնար գուշակուիլ, արտաքոյ կարգի պատուով ու սիրով ընդունելութիւն գտաւ Թէ արքունեաց եւ Թէ ժողովրդեան կողմանէ : Հոնկից գառնալէն քիչ մը ետքը հանդիսութեամբ բացաւ Փարիզի՝ արուեստից ընդհանուր աստարանը (Մայ. 15), որն որ արտաքոյ կարգի երեւոյթմբն էր, վասն զի մեծ պատերազմի մը ժամանակ խոր խաղաղութեան մէջ գտնուածի պէս՝ ասանկ գործքի մը ձեռք կը զարնուէր : Նոյն առթիւ Անգղիայի Թագուհին իր Գլարենարն պաշտօնէին հետ Գաղղիա գալով, Նարոյէոնին փոխադարձ այցելութիւն ըբաւ (Օգոստ. 18—27) : Այսպէս երկու վեհապետք կը ջանային իրենց տէրութեանց մէջ եղած միաբանութիւնն ամէն կերպով զօրացնելու . վասն զի երբեք ալ ասեն մը շէր եզած՝ որ երկուքն իրարու այնչափ կարօտութիւն ունեցած ըլլային : — Բայց Նարոյէոն իր ձեռնարկութիւնը յաջողութեամբ գլուխ հանելու համար՝ մեծ ապէս կը կարօտէրնսեւ ազգին օգնութեան, ուստի եւ պէտք էր սր անոր համարումը շահէր : Եւ Թէ ինչ աստիճանի կը վայելէր նոյն միջոցին ազգին համարումը՝ յայանի է ըրած փոխառութեանէն, որն որ իր խնդրած 500 միլիոնին եօթնպատիկէն աւելի (3,652 միլիոնի) հասաւ : Եւ Թէպէտ նոյն փոխառութիւնն այնպիսի շահաւոր պայմաններով կ'ըլլար, որ գաած արտաքոյ կարգի ընդունելութեան մէջ այնչափ մաս կ'ունենար շահագիտութիւնը,

որչափ հայրենասիրութիւնը. բայց վերջինն ալ մեծ ըլլալու էր՝ այնպիսի արգիւնք յառաջ բերել կարենալու համար: Ինչ որ է նէ, կը ցուցնէր որ պատերազմը՝ ազգին բարօրութեան ու երկրին հարստութեան ամենեւին մնաս չէր ըրած, ինչպէս արուեստից անտարանը կը յայանէր թէ արուեստից ու ճարտարութեանց վրայ ամենեւին մնասակար ազդեցութիւն ըրած չէր:

ՉՊԷ. Եւբագորիայի կոիւր: Ռուսաց եւ դաշնակցաց Խորթի մէջ ունեցած զօրութիւնը: Եւբագորի գլխաւոր մայրաքաղաքներուն մէջ ասոնք եղած ասեւն, Խորթի մէջ պատերազմը յառաջ կը վարուէր: Արշաւանքին երկրորդ տարւոյն (1855ին) պատերազմական գործողութեանց սկիզբ ըրին Ռուսք, Եւբագորիայի վրայ յարձակելով, ուր կը կենար Էօմէր փաշա, որն որ իր բանակին մէկ մասսովն եկած էր Սեւաստոփոլ պաշարող գաշնակցաց գործակից ըլլալու համար: Եւբագորիա խիստ ծանրակշիռ էր գաշնակիցներուն, որովհետեւ իրենց ընդունելու պաշարն ու ռազմամթերը հսն ցամաք կ'ելլէր, միանգամայն Սեւաստոփոլի Ռուսաց՝ Բերեգօրի հետ հաղորդակցիլը կ'արգելուր. անոր համար ալ Էօմէր փաշա նոյն տեղը սաստիկ ամրացուցած՝ 30,000 հօգուով կը պահէր: Բայց որչափ որ մեծ էր աս տեղւոյն՝ գաշնակցաց համար սննեցած ծանրակշռութիւնը, նոյնչափ ալ Ռուսք ուզելու էին զանոնք հոնկից մերժել. անոր համար 'Նիկողայոս կայսրը' բոլոր իր ժողովուրդը զէնքի կանչելէն (Փետր. 10) մէկ քանի օր ետքը՝ իր հրամանատարին հրամայեց որ 'նոյն տեղն առնելու ջանք ընէ: Արանկլ զօրապետն առ հրամանին համեմատ՝ յիշեալ արշաւանքը սկսաւ, եւ զարուէՖ զօրապետը բաւական զօրքով Եւբագորիայի վրայ խաւրեց. բայց Ռուսք Օսմանեան բանակէն անանկ ընդդիմութիւն դասն, եւ այնպիսի կոտորած կրեցին, որ ստիպեցան թողուլ ետ դառնալ (Փետր. 17): Ար համարուի որ աս դէպքը՝ 'Նիկողայոս կայսրը մահուան հարուածը տուած ըլլայ (271): — Աօ է նոյն միջոցին

պատահած դժբաղդ մանաւանդ թէ միակ նշանակութեան արժանի պատերազմական գործողութիւնը: Երկու կողման ալ մտադրութիւնը Սեւաստորուլի վրայ էր: Գաշնակիցք կը տեսնէին թէ նոյն բերդին շտիրած խրամի մէջ ձեռնարկութիւն մը չեն կրնար ընել, կամ թէ ճշգրտօրէն խօսելու համար՝ հոնտեղը անկից ուրիշ գործք մը չունին ընելու. ուստի եւ բացարձակապէս ստիպուած էին կամ նոյն բերդը ձեռք անցընել եւ կամ ձգել ետ դառնալ: Ռուսք ալ նոյնպէս Սեւաստորուլին առ ծանրակշռութիւնը գիտնալով, ամէն զոհ յանձն կ'առնուին եւ ամէն կարելի միջոց կը բանեցընէին չկորսընցընելու: Երկու կողմանց բանակները հեռու զհեռէ խիստ զօրացած էին: Գաշնակիցք, թէեւ զանազան կռիւներով եւ առաւել եւս հիւանդութիւններով շատ մարդ կորսընցուցած էին, ի վերայ այս ամենայնի գարնան խրամի մէջ 157,000 շափ զօրք ունէին. այս ինքն՝ 100,000 Գաղղիացի, 32,000 Անգղիացի, 28,000 Տաճիկ, 13,000 Սարդինիացի: Ասոնց դիմացը Ռուսք, որոնք գաշնակիցներէն շատ աւելի կորուստ ունեցած էին, առհասարակ 150,000 զօրք ունէին, եւ ետեւէ ետեւ թիւերնին կը շաւնար: Թրնդանօթներուն թիւն առաջամտ թերին չափն ալ բանակներուն մեծութեան համեմատ էր. պաշարօղք՝ որոնց յարձակման գիծը դրեթէ կէս Գերմանական մզոն տարածուած էր, 500էն աւելի թնդանօթ ունէին, որոնց ամենէն պզտիկը 32 լիտրի եւ ամենէն մեծերը մինչեւ երկու կենդինարի գնդերու ուսմբեր կրնային արձակել: Սովորական կարծեաց նայելով, պաշարելոց թնդանօթներուն թիւը շատ աւելի էր: Վերջին ժամանակները պաշարողներուն գործողութեանց կ'առաջնորդէր Նիէլ զօրապետը. որուն արժանի հակառակորդ մըն էր բերդին պաշտպանութեան առաջնորդ Դոդլեպէն զօրապետը:

275. Սեւաստորուլի ռմբակոծութիւնը: Գաշնակցաց նաւական արշաւանքը: Բելխիտ՝ Գանրուէրին տեղ հրամանատար կ'ըլլայ: Ամէն պատրաստու-

Թիւնները տեճնուելէն ետքը, դաշնակիցք բոլոր զօրու-
 թեամբ սկսան բերդը զարնել (1855, Ապր. Գ). բայց
 երկու շաբաթ առանց դադարելու գիշեր ցորեկ շարու-
 նակելով (— Ապր. 22), խիստ քիչ առաւելութիւն
 ձեռք բերին: Պաշարեալք՝ չէ թէ միայն իրենց ընդու-
 նած գնդերուն ու ռումբերուն պատշաճ պատասխանը
 կու տային, հապա նաեւ բոլոր անոնց կործանած տե-
 ղերը քիչ աստեճնուան մէջ կը նորոգէին: Այսպէսով
 դաշնակիցք համոզուեցան որ դեռ շատ ժամանակ եւ
 աշխատութիւն պէտք է բերդին տիրելու. ուստի որո-
 շեցին որ ուրիշ գործողութիւններու ձեռք զարնեն:
 Նաւաատրմիղները Սեւաստոպոլի քովերը երեւելի
 գործք մը չունէին. նոյնպէս բանակին մէկ մասն ալ՝ ա-
 ռանց պաշարման փնաս տալու՝ կրնար հեռացուիլ: Արդ
 57 պատերազմական եւ խել մը պղտիկ նաւերու վրայ
 3000 Անգղիացի, 7000 Գաղղիացի եւ 5000 Օսմա-
 նեան զօրք խաւրուեցան դէպ ի խրրմի արեւելեան կող-
 մը (Մայ. 22), որպէս զի հոնտեղաց նաւահանգիստ-
 ները գտնուած պաշարները փճացընելով, Ռուսի բա-
 նակին ուտելէք գալը դժուարցընեն: Նաւախումբը եր-
 կու օր վերջը կէրչ հատաւ (Մայ. 24), եւ առանց գի-
 մագարձութիւն գտնելու տիրեց. որովհետեւ Ռուսք
 իրենց հոնտեղաց պաշարներն այրելով՝ ետ քաշուած
 էին: Նոյնպէս ուրիշ կողմեր ալ Ռուսք գրեթէ դիմա-
 դարձութիւն չըրին, այնպէս որ դաշնակիցք խել մը
 նաւահանգիստներ մտնելով, ուստիկ շատ պաշարի
 մթերներ ու նաւեր այրեցին փճացուցին: Եէնիգալէ
 մտնելէն ետեւ (Մայ. 25), Ազովի ծովուն մէջ յա-
 ռաջանալով, բազմաթիւ բերդեր զարկին ու ոմանց տի-
 րեցին, շատ մը նաւահանգիստներ մտան ու խել մը
 չէնքեր այրեցին, եւ արտաքոյ կարգի վնաս հասցուցին
 Ռուսաց, որոնք շատ անգամ ետ քաշուելէն յառաջ
 նոյն իսկ իրենց պատերազմական շոգենաւները կ'ըն-
 կըղմէին կամ կ'այրէին: Միայն վեց օրուան մէջ (Մայ.
 24—29) այնչափ պաշար այրած էին, որ բուական էր

չորս ամիս 100,000ի բանակ մը կերակրելու: — Աս արշաւանքին որոշումը՝ Գանրուպէրի հրամանատարութեան ժամանակն եղած էր. բայց անիկայ զգալով որ ինք Սեւաստոքոլ առնելու յարմար չէ, որովհետեւ չէր կրնար հաւանիլ բերդին վրայ յարձակումներ ընել տալ, որն որ արտաքոյ կարգի շատ արիւնհեղութիւններ պէտք էր պատճառել, եւ յաջողութիւնն ալ անստոյգ էր, վերին հրամանատարութենէն հրատարեցաւ (Մայ. 19): Իր տեղն անցաւ յառաջագոյն իր ստորակարգեալն եղող Բելիսիէ զօրապետը, որն որ յանդուգն քաջասրտութեան տէր մարդ մըն էր, եւ Ալճերի ունեցած յաջողութեանց համար՝ խիստ սիրելի էր զօրաց, որոնք թէպէտ գիտէին որ իրենց կենաց պիտի չլինայէ, բայց միանգամայն ապահով էին որ զիրենք սառգիւ իրենց նպատակին կը հասցնէ: Իսկ իր նախորդը մեծանձնական հայրենասիրութեամբ՝ քիչ մը ժամանակ խորժ մնաց, եւ իր յառաջուան ստորակարգելոյն տակ կը ծառայէր:

276. Երկու յարձակումներ: Չեռնայայի ճակատը: «Եր հրամանատարն անմիջապէս սկսաւ մեծ գործունէութեամբ Սեւաստոքոլի տիրելու միջոցները գործածել: Մասնական յարձակումներ, ընդհանուր ուժակոծութիւններ իրար կը յաջորդէին, մանաւանդ թէ առանց միջահատութեան յառաջ կը վարուէին: Նոյնպէս պաշարեալք մեծ քաջութեամբ եւ ճարտարութեամբ դէմ կը դնէին, եւ երբեմն նաեւ յարձակումներ կ'ընէին, որով երկու կողմանէ անհնարին շատ մարդ կ'իյնար: Մէկ դիաց ալ թէ բերդին մէջ եւ թէ բերդէն դուրս մահճացաւը կը ճարակէր եւ շատ մարդ կը ջարդէր: Արեւի չէ բոլոր պատերազմական գործողութիւնք մէկիկ մէկիկ յիշատակել. գոհ ըլլանք միայն մէկ քանի խիստ երեւելի դէպքերը յառաջ բերելով: Դաշնակիցք երկու օր սարսուփելի կերպով բերդը զարնելէն ետեւ (1855, Յունիս 6—7), 40,000 հոգուով յարձակում՝ ըրին եւ երեք մարտկոցի տիրեցին (Յու-

նիս 8) : Նաբոլէոն աս մեծ առաւելութեան լուրն առնելով, ուզեց որ Ուաղերլոյի ճակատամարտին (Հաս. Գ. 259) տարեդարձին օրը՝ Գաղղիացիք ու Անգղիացիք մէկտեղ փառաւոր յաղթութիւն մը գտանալով, նոյն ճակատին մէջ երկու ազգերուն իրարու դէմ պատերազմելուն յիշատակը ջնջուի : Ուոսի դաշնակիցք աղէկ մը պատրաստուելէն եւ նախընթաց օրն (Յունիս 17) ու բոլոր գիշերը բերդը սաստիկ գնդակոծելէն ետեւ, հետեւեալ օրը առաւանց նոր յարձակում մ'ըրին (Յունիս 18) : Բայց աս անգամ մեծ կորստեամբք ետ մղուեցան : Աս կորուստն այնչափ ազդեցութիւն բրտու արգէն մտղձացաւէ բռնուած Լորտ Ռակլանին վրայ, որ հիւանդութիւնը սաստկանալով, տասն օր ետքը մեռաւ (Յունիս 28) : Կորչագոֆ՝ որն որ Մենչիգոֆին անդ Ռուսի զօրաց վերին հրամանատար դրուած էր (Մարտ 1), կ'ուզէր վերոյիշեալ յաղթութեանէն ետքը դաշնաւորաց վրայ յարձակիլ. բայց որովհետեւ ճամբան նոր զօրքեր կային, որոնց հասնելով՝ Ռուսական բանակը 200,000ի կ'ելէր, անոր համար անոնց դալուն սպասեց : Գալիքները գաղէն վերջը, Ռուսք Չեռնայայէն դաշնաւորաց աջ կողման վրայ յարձակեցան, Նաբոլէոնի տօնին երկրորդ օրը (Օգոստ. 16), կարծելով որ նախընթաց օրուան ուրախութեան ու խնջոյից պատճառաւ՝ զանոնք անպատրաստ ու պատերազմելու անյարմար կը գաննեն : Բայց անոնք ըլլալիքին լուրն առած ըլլալով, գազտուկ ամէն պատրաստութիւնները անսած էին, որով եւ Ռուսք՝ մշուշ օգով մը հառած ատեննին, զիմացնին 40,000 հոգի գտան : Ճակատը բոլոր օրը տեւեց ու շատ արինահեղ եղաւ. եւ դաշնակիցք ամէն կողմ յաղթող ըլլալով, Կորչագոֆ ստիպուեցաւ ետ քաշուիլ գետին մէկտալ կողմն անցնիլ : Ինք հոն ամրացած՝ կը սպասէր որ Բելխիէ իր ետեւէն իյնայ. բայց անիկայ իր յաղթութեամբը գոհ ըլլալով, զինքը հալածելու փորձ չըրաւ, հապա իր գրեխաւոր նպատակին կատարման ետեւէն կ'ըլար :

277. Սեւաստորոյի առնուիլը: Չեռնայայի ճակատին երկրորդ օրը բերդին դէմ սարսափելի կրակ մը տկուաւ, որն որ անկէ ետեւ գրեթէ անընդհատ դիշեր ցարեկ շարունակուեցաւ: Աս գնդակոծութեան աւսփակոծութեան՝ բերդին մէջ պատճառած վնասն այնչափ մեծ էր, որ թէպէտ ամէն գիշեր հազարաւոր մարդիկ կ'աշխատէին կործանած տեղերը նորոգելու, բայց անկարելի կ'ըլլար հասնիլ. այնպէս որ վերջին օրերը շատ կողմեր բարորովին փլատակ դարձած էին: Նաւահանգստին մէջ եղող նաւերէն սմանք այրեցան, քանի մը վառօդոց շտեմարաններ օդն ելան: Մարդկան կարուստն ալ ասոր համեմատ էր. որովհետեւ ամէն բուրդ կրնար բերդը յարձակում կրել, անոր համար Ռուսք խրամներուն վրայ պատրաստ կենարու էին, որով եւ մէջերնին անհնարին կտարած կ'ըլլար: Ամէն օր իրենց մէ 600—1800 հոգի կը մեռնէր. ուր որ գաշնակիցներէն օրը հազիւ 300 հոգի կ'իյնար: Արջադօփ կը տեսնէր որ իրերն այսպէս յառաջ երթալով, վերջապէս պիտի ստիպուի՝ ասանց յարձակման ալ՝ բերդը ձեռք տալ. ի վերայ այս ամենայնի վերջին ստտիճանի քաջութեամբ պաշտպանութիւնը կը շարունակէր: Ուստի եւ կրնայ ըսուիլ թէ երկու կողմանք ալ հաւասար զարմանաց արժանի են: Պաշարողաց արդէն ստտիկ եղող կրակը վերջին օրերը (Սեպտ. 5էն սկսեալ) կրկին ստտակացաւ. 700է աւելի ամենամեծ թնդանօթներ անդադար կը գործէին: Նոյն միջոցին դաշնակիցք 70,000 հոգի պատրաստած էին՝ ամէն կողմանէ մէկէն բերդին վրայ յարձակելու համար, իսկ 50,000 հոգի՝ Չեռնայայի դիժը պաշտպանելու համար. Ռուսաց կողմանէ ալ 85,000 հոգի կային յարձակողներուն դէմ դնելու: Յարձակման համար որոշուած օրը (Սեպտ. 8), կրակը սարսափելի կերպով մինչեւ կէսօր տեւելէն ետեւ, մէկէն դադարեցաւ, եւ նոյն վայրկեանին սկսաւ յարձակումը: Գլխաւոր յարձակումը Գաղղիացիք կ'ընէին Մալագոֆի աշտարակին դէմ, երկրորդը՝ Արգոնա-

ցիք Ռուսան ըսուած կողման գէմ. իսկ ուրիշ կողմեր եղած յարձակումները կեղծեալ բաներ էին, թշնամուցն մահադուժիւնը ցրուելու համար: Հազիւ կէս ժամ անցած էր, մէյ մ'ալ Մագ Մահոն՝ որն որ Պոզքէի հրամանատարութեան տակ՝ յարձակուողաց առաջին սիւնը կը վարէր, Մալագոֆի վրայ Գաղղիական դրօշը տնկեց: Բայց տակաւին նոյն աշտարակին տէր չէին. ան անդը հինգ ժամու չափ սարսափելի կռիւ մ'եղաւ, որուն մէջ երկու կողմանէ ալ յուսահատաբար կը զարնուէին. եւ վերջապէս Ռուսք ետ քաշուեցան: Իսկ Անգղիացիք՝ որոնք Ռուսան մտնելէն ետեւ, ներսի կողմերուն տակ ական բացուած բլլայուն համար՝ շուտով յառաջ չէին գացած, հետզհետէ դիմացին շատցող Ռուսաց գէմ չկրնալով դիմանալ, ստիպեցան մեծ կորստով ետ քաշուիլ: Նոյն ականներուն վախէն, քաղաքին կողմանէ յարձակող Գաղղիացիք ալ չէին ուզեր յառաջ երթալ. ուստի եւ Ռուսք դիւրաւ կրցան զիրենք հոնկից մերժել: Այսպէսով գաշնակցաց ձեռքը՝ միայն Մալագոֆ մնաց. բայց սրովհետեւ նոյն աշտարակը բոլոր քաղաքին վրայ կը տիրէր, անոր համար ալ Ռուսք չէին կրնար հոն մնալ. ուստի եւ նաւահան գրասին մէջ եղող բոլոր նաւերնին ծովուն տակ բնկրղմելէն ետքը՝ նոյն գիշեր ետ քաշուեցան: Իսկ Բելխսիէ անոնց յետագարձութիւնը խափանելու ջանք չըրաւ. որպէս զի իր զօրքերը զանոնք հալածելու աստեն՝ տակն ական բացուած աշտարակներուն փլատակին ներքեւը չթաղուին: Իրօք ալ Ռուսաց դուրս ելլելէն ետեւ անոնց մեծ մասը զարհուրելի շառաջմամբ օդն ելաւ: Հազիւ Մալագոֆ ազատեցաւ. Գաղղիացիք նոյնին տիրելուն պէս, ասկի ականներուն հետ հաղորդակցութիւն ունեցող թելերը կտրած էին: — Ռուսաց նոյն օրուան կորուստը՝ 13,000 հոգի կը համարուի. իսկ գաշնակցաց կորուստը՝ 10,000 հոգի:

278. Սեւաստորոլի խնայուն հետեւութիւնները: Անուատորոլի պաշարումն ու առնուիլը՝ խիստ

նշանաւոր եւ հսկայական գործք մըն էր: Գրեթէ առ-
 բի մը տեւեց պաշարումը, որուն մէջ՝ ուրիշ տեղ եր-
 բեք չտեսնուած՝ արտաքոյ կարգի միջոցներ ի գործ
 դրուեցան: Կարծես թէ մեծ մենամարտութիւն մըն
 էր եղածը, որով կ'ուզէին իմանալ թէ զինուորական
 ճարտարութեան ու զօրութեան մէջ ո՞ր կողմն աւելի
 է: Վերջին ժամանակները գաշնակիցք 250,000 հողի
 ժողոված էին քիչ տեղւոյ մը վրայ, որն որ իրենց եր-
 կիրներէն հազարաւոր մղոններով հեռու էր. իսկ Ռուսք՝
 որոնց կարգաւորեալ ճամբաներ չունենալը, իրենց մե-
 ծագոյն դժուարութիւն կը պատճառէր, քան թէ գաշ-
 նաւորաց՝ իրենց հեռաւորութիւնը, իսկզբանէ վեր
 գրեթէ 400,000 հողի խաւրած էին: Դաշնակիցք
 առանուձէկ աշխարհագրական մղոն երկայնութեամբ
 խրամներ բացած էին, 80,000 պատնեշի կողով,
 60,000 տրցակ, 1,000,000 հողի պարկ գործածած
 եւ բերդին վրայ 1,600,000 գունդ ու ուսմբ արձակած
 էին: Իսկ պաշարելոց կողմանէ գործուածներն իմանա-
 լու համար՝ բաւական ըլլայ ըսելը, թէ գաշնակիցք
 ներս մտած առեւնին՝ փլատակներուն տակէն 4000էն
 աւելի թնդանօթ, կէս միլիոնի շափ գունդ ու ուսմբ,
 500 կենդինար վառօք դտան: — Սեւաստորոլի ան-
 կուսն՝ ըստ ինքեան՝ Ռուսաց համար խիտտ մեծ կարուստ
 մը չէր. որովհետեւ պաշարման ժամանակը՝ Դոդլեպէ-
 նին ճարտարութեամբը՝ ցամաքային բերդ մ'եղած էր:
 Անոր իյնալէն ետեւ՝ կորչագոֆ լերանց մէջ անմտաշելի
 դիրք մը բռնած կը կենար. եւ Բելիսիէ՝ անոր գէմ
 ընել տուած երկու արշաւանքներուն բախրոյլին պա-
 րապի երթալովը՝ համոզուեցաւ որ հետեւութիւն ու-
 նեցող ձեռնարկութիւն մը չիկրնար ընել ան կողմերը,
 եւ թէ Սեւաստորոլ առնելովը՝ Խրբմի աշխարհակա-
 լութիւնը գլուխ տարած չիկրնար համարուիլ: Այս-
 պէսով նիւթական շահու նկատմամբ՝ դաշնաւորք
 Սեւաստորոլի փրկելով, անանկ առաւելութիւն մը ձեռք
 չէին բերած, որն որ ըրած սարսափելի զոհերնուն հաւա-

սար ըլլար. իրենց եւ առանձինն Անգղիացւոց համար ամենէն գլխաւոր շահն էր Սեւ ծովու Ռուստիան նաւատարմոցն ջնջուիլը, որն որ Ռուսաց ալ աննարագելի կորուստ մըն էր: Ասոր հակառակ մեծ էր գաշնաւորաց եւ մանաւանդ Գաղղիացւոց ստացած բարոյական առաւելութիւնը: Իրենց զինուց համբաւն ու զինուորական փառքը՝ շքեղ կերպով հաստատուած ըլլալով, կրնային պատուով խաղաղութիւն ընել, որուն խիստ կը բազմար նաբօլէոն, որովհետեւ պատերազմին աւելի երկրնալը՝ ամէն կողմանէ մեծ վնաս էր Գաղղիայի, եւ նոյն վնասուն տեղը ընցընելու կամ զանիկոց ջատագոյնելու համար՝ գիւնոցը յուսալու օգուտ մը չկար: Պատերազմը յառաջ տանել որ ուզէր, դարձեալ ազգին գիւնելու էր, բայց անկից պահանջած զահին գիւնոցը՝ ցուցընելու իրական շահ չունէր: Ինչպէս ուրիշ տեղ զբուցած ենք (263), գաշնակիցք իրենց սկզբնական նպատակին հասնելով՝ Ռուսիա տկարացընելու համար, պէտք էր որ Աւստրիայի ու Պրուսիոյ ու Շուետի դարձակցութիւնն ունենային: Քանի որ աս չէր ըլլար, որ մը յառաջ խաղաղութիւն ընելն իրենց շահաւոր էր: Ռուսի Սեւաստորոյի կնալէն ետեւ քիչ մը ժամանակ ալ պատերազմը շարունակելին՝ միայն անկից պատճառեցաւ, որ Ռուսիա յուսալով թէ խորքի մէջ գլուխն եկած դժբախտութիւններուն տեղ՝ Ասիայի կողմերը առաւելութիւն ձեռք կրնայ բերել, տակաւին չէր ուզեր խաղաղութիւն ընել:

279. Ասիական կողմանց պատերազմական դէպքերը: Կարսի առնուիլը: Սեւաստորոյի առջեւ եղած հակայական կռիւններուն ատենը՝ պատերազմին Ասիական տեսարանը գրեթէ մոռցուած էր: Գաշնակիցք կ'ուզէին որ զինուց որոշումը՝ միայն խորքի մէջ ըլլայ. անոր համար չէ թէ միայն յանձն չէին առնուր Ասիա օգնական զօրք խաւրել, հապա եւ ոչ թող կուտային որ Օսմանեան զօրքը նոյն թերակողմէն հոն խաւրուի: Այսպէսով ան կողմերը գանուող Օսմանեան

բանակը խիստ նեղ մասժ էր, մանուսանգ որ հրամանատարներն ալ այնչափ յարմար մարդիկ չէին, իսկ քոզիբնին եղող՝ եւրոպացի պաշտօնակալք՝ մէջներնին անմխարան էին: Վերջապէս բանակը կարգաւորուելով ու երկու մասի բաժնուելով, մէկը Պայագլախի, իսկ մէկաւրջ Չիւրիքառէրէի կողմը գնաց: Ռուսք թէպէտ երկու գնդին վրայ ալ մէյ մէկ յաղթութիւն ըրին (1854, Յուլ. 29, Օգոստ. 7), բայց չկրցան օգուտ հանել, որովհետեւ ստիպուեցան եւ քաշուիլ՝ դէպ ի թիֆլիզ երթալ, Շամիլին մէկէն նոյն կողմը յարձակելէն՝ անանկ կարծելով որ դաշնակիցք ալ դէպ ի հոն պիտի գիմեն: Չմեռք Ռուսք աս նկատմամբ ապահովութիւն ստանալով, իրենց նոր հրամանատար Մուրաւիէվ զորապետը դարնան արշաւանքը սկսաւ: Նոյն միջոցին Օսմանեան բանակին հրամանատար եղած էր Վառլֆ փաշան, եւ քովը Գանգի՝ Մանառ ու Ուլյսէնն՝ Անգղիացի զորապետները կային: Բայց զօրաց վիճակն աղէկ չէր, անկանսն գնդերն ալ մէկտեղ առնելով, հազիւ 30,000ի կը հասնէին: Մորաւիէվ իսկզբան անանկ ձեւացուց որ կարս մէկդի ձգելով, ուղղակի կարնոյ վրայ պիտի քալէ. անոր համար երբ որ 35,000 հոգւով առաջին բերդին առջեւն երեւցաւ (1855, Յունիս), հոն հազիւ 12,000 զօրք կար, որն որ քիչ մը ժամանակ ալ հիւսիսային կողմանց հետ հաղորդակցութիւնը պահելէն ետեւ, վերջապէս ամէն գիաց պաշարուեցաւ: Ռուսք մտքերնին գրած էին որ բերդը սուփով անձնատուր ըլլալու ստիպեն. բայց իմանալով որ Էսմէր փաշա մեծկակ բանակով մը օգնութեան կու գայ, ուզեցին անիկայ չհասած՝ յարձակմամբ առնուլ: Փորձն ըրին (Սեպտ. 29). բայց 6000 հոգւոյ չափ մարդ կորսնցընելով, եւ քաշուեցան: Մուրաւիէվ սկսաւ պատրաստութիւն աննել ձմեռը պաշարուով յառաջ աանելու, եւ բերդին օգնութեան եկողներուն դէմ գնելու: Սակայն երկու ամիս ետքը՝ ապահովապէք կերակրոյ ու դեղորկից պակասութենէն, եւ ոստ-

տիկ ցրտէն պատճառած հիւանդութիւններէն բռնադատեալ, անձնատուր եղան (Նոյ. 27), կանոնաւոր զօրքերը՝ պատերազմի գերի ըլլալու, իսկ անկանոնները՝ հայրենիքնին դառնալու պայմանաւ: — Աս դժբախտութեան պատճառն եղաւ Իօմէր փաշային օգնութեան գալ չկրնալը: Ինք Սեւաստոփոլի իյնալէն ետքը 42,000 հոգւով Խրքմէն ճամբայ ելած էր (Սեպտ. 20). բայց օգին ու ճամփաներուն գէշութեան պատճառաւ չէր կրնար գիւրաւ յառաջանալ: Ստոյգ է Ինկուր գետին քով Ռուսաց հետ զարնուելով՝ յազթեց, որ արթին մէջ իր զինուորները մէկ կողմանէ պատերազմելով եւ մէկալ կողմանէ լողալով՝ գետն անցան. բայց անկէ ետեւ ալ ստիպուած էր կամաց կամաց յառաջանալ, վասն զի ծովու կողմանէ պաշար դալուն կը սպասէր: Ինչպէս որ է նէ, սաստիկ անձրեւներէն՝ լճերու դարձած դաշտեր, եւ գետերու դարձած առօրակներ անցնելով, անհնարին գժուարութեամբ յառաջ երթալէն ետեւ, դիմացը իր բանակէն շատ աւելի զօրաւոր Ռուս բանակ մ'ելլելով, Խուդայխի հասնելու մէկ քանի ժամ մնացած, Վարսի իյնալէն առանու մէկ օր ետքը՝ ետ դառնալու սկսաւ (Գեկտ. 8):

280. Գաշնաւորաց նաւատորմի ղեկներուն՝ Արեւելեան ծովուն մէջ եւ հիւսիսային կողմերն ըրածները: Վարսի տիրելը՝ թէպէտ եւ Ռուսաց այնչափ գժուարութիւն չէր պատճառած, որչափ Սեւաստոփոլի տիրելը՝ դաշնաւորաց, ի վերայ այոր ամենայնի մէկ նկատմամբ անոր հաւասարազօր կրնար համարուիլ, որովհետեւ Ռուսական զինուց պատուոյն հատուցում մըն էր որով եւ Ռուսք ալ կրնային անկէ ետեւ առանց նախատինք կրելու՝ խաղաղութիւն ընել: — Եթէ դաշնաւորք պէտք էին պատերազմին լմննալուն բաղձալ, աւելի եւս բաղձալու էին Ռուսք, որոնց զօհերն ու կորուստները՝ թշնամիներուն ըրածներէն շատ աւելի էին: Մինչեւ հիմայ յառաջ բերուած դէպքերուն իրենց պատճառած կորուստներէն զատ, խիտա մեծ կորուստ-

ներ կը կրէին դաշնաւորաց նաւատորմիղներուն հիւսիսային կողմերը գործածներէն, որոնք սոցոք է՝ իրբեւ պատերազմական գործողութիւն՝ նշանաւոր բաներ չէին, բայց Ռուսիայի համար խիստ ծանրակշիռ հետեւութիւն ունէին: Պատերազմին սկիզբը Անդղիացիք ու Գաղղիացիք Արեւելեան ծովը մեծկակ նաւատորմիղ մը խաւրած էին՝ Ներքիի հրամանատարութեամբ (1854, Մարտ), որուն նպատակն էր հոնտեղաց Ռուսական նաւատորմիղը ծովամարտի մը ստիպել ու ջնջել: Իսկ Ռուսք իրենց նաւերը վտանգի մէջ դնել չուզելով, Գրոնշդաակ ու Սվէայպորկի ամուր բերդերուն ետեւը քաշեցին, զորոնք դաշնակիցները զարնել չհամարձակելով, ժամանակնին կ'անցընէին ուրիշ մանր բերդեր զարնելով, Ֆինլանտիայի խել մը գեղերն ու քաղաքներն պրելով ու անսած առեւտրական նաւերնին բռնելով: Աս նկատմամբ բրածներնուն գրխաւորն է Ալանտ կղզիներէն մէկուն վրայի Պամարունակի բերդը գնդակոծելով՝ առնելնին (Օգոստ. 16) ու կործանելնին: Նոյնպէս Սպիտակ ու Խաղաղական ծովերն ալ միտուեցան: Առաջնոյն մէջ Ռուսաց ամենէն մեծ նաւահանգիստն էր Արքանկէլ. բայց դաշնակիցք չհամարձակեցան հոն մտնել, որովհետեւ մեծ նաւերը չէին կրնար Տուխա գետէն անցնել, իսկ պզտիկ նաւերը՝ եթէ յառաջ երթային՝ պիտի պատերազմէին թէ բերդերուն եւ թէ հոնտեղաց Ռուսի նաւախմբին հետ: Ուստի նաւահանգստին բերանը պաշարեցին, եւ ուրիշ կողմեր արշաւելով, զանազան քաղաքներ ու գեղեր կործանեցին, որոնց մէջ ամենէն աւելի նշանակութեան արժանին է Լափլանտիայի Գուլա գլխաւոր քաղաքը յարձակմամբ առնելնին ու կործանելնին: Իսկ Մեծ Ռիկիանոսին մէջ զարնելու ուրիշ տեղ չկար, բայց եթէ Գամշտոգայի Բեգորբաւլովսոգ գլխաւոր քաղաքը դաշնակիցք հոն ալ երկու անգամ մտուեցան (Օգոստ. 31, Սեպտ. 4) ու զարկին, բայց չկրցան ցամաք զօրը հանել: Անդղիացիք առաջին տարւան առ գործողու-

Թիւններուն վրայ գտն չըլլալով, 'Ներքին տեղ' հրամանատար դրին զՅէճնտաս հետեւեալ տարւոյն արշաւանաց. բայց ան ալ աւելի բան մը չիրցաւ ընել: Ինքն ալ Գրոնշդատի մօտեցաւ, բայց՝ միայն համագտելու համար որ անմատոյց ու անառիկ է. իսկ Յփէապորկի գէմ բրած ռմբակածութիւնը (1855, Օգոստ. 7) նոյն բերդին ամրութիւններուն ամենեւին վնաս չհասցուց: Բեդրորաւլովոյ գացող նաւախումբն ալ նոյն քաղաքը պարպուած եւ Ռուսական նաւատորմիդը հոնկից հեռացած գտաւ: Ասկից կը տեսնուի որ աս նաւատորմիդները՝ վերը զուցածնուս պէս՝ պատերազմական նկատմամբ ոչինչ կամ խիստ քիչ գործք գործած էին: Բայց եւ այնպէս կրնայ ըսուիլ թէ Սեւաստորոյի առնուելէն աւելի ազգեցութիւն ըրին Ռուսաց խողաղութիւն ընել ուզելուն: Արեւմտեան ծովուն նաւահանգիստներուն երկու տարի գոցուիլն ու հոնտեղաց ուստական վաճառականութեան դադարիլը, արտաքոյ կարգի վնաս կը հասցընէր նոյն տէրութեան: Անկարելի էր որ իրենն աս վիճակի մէջ աւելի երկոյն ժամանակ մնային. վասն զի մէկ կողմանէ տէրութիւնը ազնուականաց սորուկները զինուորութեան կ'աւնուր, որով անոնց եկամուտքը կը նուազէր, իսկ մէկալ կողմանէ վաճառականութիւնը դադարելով, անոնց շահուն գլխաւոր աղբիւրը կը գոցուէր:

281. Շուետսկան ու Անգլիական-Գաղղիական դաշնաւորութիւն: 'Նոյն հիւսիսային կողմերը քաղաքական նկատմամբ ալ նշանաւոր գէպք մը պատահած էր, որն որ արտաքոյ կարգի ծանրակշռութիւն կրնար ունենալ: Յառաջագոյն յիշատակեցինք որ Շուետսամէն Եւրոպական տէրութիւններէն աւելի իրաւունք ունէր Ռուսիայի տկարանալուն բաղձալաւ (263), անոր համար ալ բնական բան էր որ արեւմտեան տէրութեանց հետ Ռուսիայի գէմ կապուէր, ինչպէս որ առաջիններուն ալ մեծապէս օգտակար էր նոյն կողմերը դաշնակից մ' ունենալ: Եւ թէպէտ յիշեալ տեղը նշա-

Նախուած պատճառին համար՝ պատերազմին սկիզբները առ բանո գլուխ չելաւ. բայց եւ այնպէս ան ատենէն բանակցութիւնք կ'ըլլային: Ա'րսուի թէ Շուեաի թագաւորը Լոնտոնի ու Փարիզի արքունեաց գաղտնի առաջարկած ըլլայ (1854, Յուլ.) որ իրենց հետ միանալով, Ֆինլանտիա գաւառը Ռուսէն առնելու արշաւանք մ'ընեն. բայց որովհետեւ զանազան գրամական օգնութիւններէ զատ, 150,000ի բանակ մ'ալ կ'ուզէր, իսկ արեւմտեան տէրութիւնք իրենց ուրիշ արշաւանքներուն ժամանակը՝ նստել ան կողմը նոյնչափ զօրք չէին կրնար խաւրել, անոր համար առաջարկութիւնք յանձն չառին: Սակայն եւ այնպէս Շուեաի հետ դաշնակցելու խորհուրդը բոլորովին մէկդի չձգեցին: Սեւաստոպոլի առնուելու ժամօնակները՝ Նարուէն զգանրուէր զօրապետը Սգոգով՝ խաւրեց, որուն նոյն մայրաքաղաքին բնակիչներէն գտած ընդունելութիւնը՝ յայտնի նշան մըն էր ազգին զգածմանց: Նոյն զօրապետին հոնկից ելլելէն երկու օր ետքը արեւմտեան տէրութեանց եւ Շուեաի մէջ դաշնաւորութիւն մը ստորագրուեցաւ (1855, Նոյ. 21), որով վերջինը կը խոստանար որ իր երկիրներուն ամենեւին մէկ մասը Ռուսի չապց կամ անոր ձկնորսութեան իրաւունք մը չչնորհէ. եւ եթէ իրմէ առանկ պահանջում մ'ըլլայ նէ, անմիջապէս իր դաշնակցաց ծանուցանէ, որոնք իրենք զիրենք կը պարտաւորեին թէ ծովական եւ թէ ցամաքային զօրութեամբ ասանկ պահանջմանց կամ փորձի մը գէմ գնելու: Եւրէն իմացուեցաւ որ Ռուսք իրօք Նորուեգիայի հիւսիսային ծովեզրներէն քիչ մը տեղ կ'ուզեն եղեր իրենց սեպհականել. որով հիւսիսային ծովուն տէրութիւնը բոլորովին իրենց ձեռքը կը մնար: Դաշնագրութենէն ամիս մը ետքը Շուեաի արտաքին գործոց պաշտօնեան շրջաբերականով մը ջանաց հաստատել որ իր թագաւորը մինչեւ նոյն ատեն պահած չէզոքութիւնը կ'ուզէ անկէ ետեւ ալ հաստատուն պահել, վասն զի գրուած դաշինքը պարզապէս

պաշտպանողական է, եւ Ռուսիա կրնայ անոր գործադրութիւնը խափանել՝ Շուետի իբառուհիքները յարգելով: Միայն թէ գրուածքին մէջ կտոր մը կար, որն որ խիստ ընդարձակ մեկնութիւն վերցընելով, Շուետական գահիճին խաղաղասիրութիւնը տարանուսի ասակ կը ձգէր: Բաւական որ, կ'ըսէր, Եւրոպայի քաղաքական հաստատարակչութեան աւրուելուն երկիւղ չպատճառէ Ռուսիա, աս գաշինքն իրեն վնաս մը չիկրնար հասցընել:

282. Նոյեմբերի 14ին յիշատակագիրը: Իսիսա պատշաճութեամբ կը գրէ Գաղղիացի մատենագիր մը թէ Բելլիսիէի սուրը խզեց երաշխաւորութեան երրորդ կէտին Կորտեան հանգոյցը, զորն որ Ալիէննայի գեւպանաժողովը չկրնալով քակել, չէր կրցեր գլուխ հանել խաղաղութեան գործքը: Իբզբ ալ Սեւ ծովու վրայ Ռուսիայի ունեցած իշխանութիւնը շափաւորուած էր՝ հոնտեղաց ամենէն զօրաւոր բերդին կործանուելովն ու նաւատորմին ջնջուելովը: Կ'ըսուի թէ Սեւաստոքոլ իյնալուն պէս, Նարալէոն Անգղիայի կառավարութեան յայտնած ըլլայ որ ինք խաղաղութիւն ընելու միտեալ է: Իսկ Անգղիա, թէպէտ եւ առելի կ'ուզէր պատերազմը շարունակել, որուն համար ալ արտաքոյ կարգի պատրաստութիւն տեսած էր, յուսալով որ թէ Արեւելեան ծովուն Ռուս նաւատորմին ալ կը ջնջէ, եւ թէ մինչեւ նոյն ատեն իր զօրաց քաղել չկրցած գափնիները՝ կարելի է անկէ ետքը բախան իրենց քաղել տայ. բայց մէյ մ'որ Գաղղիա խաղաղութիւն կ'ուզէր, եւ Ռուսիա նոյնին կը բաղձար, միայն Անգղիայի ձայնը չէր կրնար այնչափ ազդեցութիւն ունենալ: Այոպէսով մէկ կողմանէ Գաղղիա եւ մէկալ կողմանէ Ռուսիա Աւստրիայի միջնորդութեամբ սկսան ջանք ընել պատերազմը դադրեցընելու: Գաղղիայի ու Աւստրիայի յարաբերութիւնները՝ որ քանի մ'ամիսէ վեր այնչափ աղէկ չէին, դարձեալ յտերմական եղան, եւ երկուքը մէկտեղ գրութեան մը ստորագրեցին (1855, Նոյ. 14),

որն որ թէեւ խիստ ծանրակշիռ բան է, ի վերայ այսր ամենայնի իբրեւ պարզ յիշատակագիր մը շինուած է, եւ ոչ թէ իբրեւ կերպական գաշինք: Ասով Աւստրիա կը խոտանար որ անմիջապէս Ռուսիայի հետ գեոպո- նական հաղորդակցութիւնը կտրէ, թէ որ անիկայ ե- բեք շաբաթուան մէջ չընդունի իր (Աւստրիային) ա- րեւմտեան տէրութեանց հետ միաբան առաջարկելու խաղաղութեան պայմանները. իսկ Գաղղիա ապահո- վութիւն կու տար Աւստրիայի Իտալական դաւառնե- րուն ամբողջ իր ձեռքը մնալուն՝ թէ որ Ռուսական պատերազմին գործակից ըլլայ: Միանգամայն կը միա- բանէին որ խաղաղութիւն ըլլալէն ետեւ՝ մէկտեղ ա- ռանձին դաշինք մը դնեն, գրուելու ընդհանուր խա- ղաղութեան գաշանց գէմ ընողին գէմ պատերազմի ելլելու որոշմամբ: Ինչպէս ինք իրմէ կրնայ իմացուիլ, աս յիշատակագրին պայմանները չէ թէ միայն նոյն ժամանակ շինացուեցան, հապա մինչեւ հիմայ ըստ մա- սին գաղտնութեան տակ են: Անգղիա աս գրութեան մասնակից չեղաւ, որպէս զի թէ Ռուսիայի եւ թէ իր խորհրդանոցին ցուցընէ որ իր սկզբունքները Գաղղիայի ու Աւստրիայի սկզբանց հետ նոյն չեն, եւ միանգամայն իրեն աւելի պատշաճ երեւցաւ սպասել տեսնել թէ մէկալ երկու տէրութեանց ջանքն ինչ հետեւանք կ'ա- նենայ: Իսկ նոյն երկու տէրութիւնք օգտակար համա- րեցան աս նկատմամբ Անգղիային իրենց հետ չմիանա- լը, որովհետեւ ասով Ռուսիա աւելի դիւրաւ զիջանե- լու կը ստիպուէր, տեսնելով որ Անգղիա այնչափ մի- տեալ չէ խաղաղութիւն ընելու:

283. Ռուսիա Աւստրիայի վերջնագիրը կ'ըն- դունի: Փետրուարի 1ին արձանագիրը: Սովաքանին Խաթիթի հիւմայիւնը: Աս նշանաւոր գրութիւնը ստո- րագրուելէն ամիս մը ետքը, Աւստրիայի կողմանէ՝ իբ- րեւ նախակարգ պայմաններու ծրագիր՝ Ռուսիային վերջնագիր մը խաւրուեցաւ (1855, Դեկտ. 16), որն որ ծանօթ չորս կէտերէն զատ՝ հինգերորդ մ'ալ կը

412 Գ. ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԻ (1848—1858), Է.

բովանդակէր, այս ինքն ան թէ՛ Պատերազմ ընող աէ-
րութիւնք իրաւունք ունին Եւրոպայի ընդհանուր օգ-
տին համար պատշաճ տեսած պայմաննին ալ գնելու :
Բայց առ հինգերորդ կէտն ալ բոլորովին նոր բան չէր,
վասն զի երկք տէրութեանց թէ առաջին (1854,
Օգոստ. 8ին) յայտագրին (266), եւ թէ Գեղտեմ-
բերի 2ին դաշնաւորութեան մէջ (268) կը գտնուէր,
եւ միանգամայն Վիէնայի դեսպանաժողովոյն մէջ ա-
րեւմտեան տէրութեանց դեսպանները նոյնը կրկնած
էին (269) : Ռուսիա իսկզբան քանի մը փոփոխու-
թիւններ ընել տալու ջանաց (1856, Յունու. 6).
բայց երբ որ Աւստրիա պնդեց որ կամ իր առաջարկածն
անփոփոխ կ'ընդունուի, եւ կամ իր դեսպանն անմիջա-
պէս ետ կը կանչէ (Յունու. 9), կատարեալ հաւանու-
թիւն տուաւ (Յունու. 16) : Ասոր վրայ Վիէնայի մէջ
Աւստրիայի, Գաղղիայի, Անգղիայի, Ռուսիայի եւ Օս-
մանեան տէրութեան դեսպանները արձանագրի մը ստո-
րագրեցին (Փետր. 1), որով կ'որոշուէր որ նոյն օրէն
երկք շաբաթ վերջը յիշեալ տէրութեանց երեսփո-
խաններէն Փարիզի մէջ դեսպանաժողով մը գումարուե-
լով, զինադադարի ու խաղաղութեան դաշինքները
դրուին : Ասիկայ իբրեւ նախակարգ պայմաններու ստո-
րագրութիւն կրնար համարուիլ, որով եւ պատերազմն
ըստ իրաւանց լմնցածի տեղ դրուելու էր. բայց եւ
ոչ իսկ զինադադար եղած էր, անոր համար դաշնակիցք
մէկ կողմանէ ալ տակաւին պատերազմի մէջ գտնուե-
լով, Սեւաստոբոլի դեռ կանգուն մնացող ամրութիւն-
ները կործանեցին (Փետր. 7), որով ան ահեղ բերդը
կատարելապէս փլատակներու կոյտ մը դարձաւ : —
Նոյն միջոցին՝ արեւմտեան տէրութիւնք ու Աւստրիայի
խորհրդովը՝ Սուլդանը խաթի ճիւղմայիւն մը հանեց
(Փետր. 18), որով իր քրիստոնեայ հպատակաց զա-
նազան իրաւունքներ կը շնորհէր ու զանոնք ամէն նկատ-
մամբ Մահմետականաց կը հաւասարեցընէր, ասկից զատ՝
արդարութեան, օստիկանութեան, հարկահանութեան

Եւ ընդհանուր բարօրութեան վերաբերեալ ուրիշ նիւթերու վրայ այլեւայլ նորոգութիւններ կ'ընէր: Աս հրովարտակին նպատակն ան էր որ այսպէսով Օսմանեան տէրութիւնը՝ իր ներքին կարգաւորութիւններով իրօք Եւրոպական քաղաքակրթութեան ընթացքին մէջ մտնելով, գիւրաւ յաջողի խաղաղութեան դաշինքով զանհկայ Եւրոպայի տէրութեանց կարգը խոթելու եւ մէկալ կողմանէ անկէ ետեւ ուրիշ տէրութեանց եւ առանձինն Ռուսիայի առիթ չմնայ անոր ներքին իրողութեանց խառնուելու: Ասան զի՝ ինչպէս յայտնի է՝ մինչեւ նոյն ատեն յիշեալ տէրութեանց Գրան հետ ունեցած վէճերուն գլխաւոր պատճառն աս բաներն էին, զորոնք շատ անգամ պատրուակ կ'ընէին իրենց սեպհական շահն ու դիտաւորութիւնները յառաջ տանելու համար:

284. Փարիզի դեսպանաժողովն ու խաղաղութիւնը: Արտուած ատենին դեսպանաժողովը Փարիզի մէջ բացուեցաւ (1856, Փետր. 25): Ասիկայ վերջին տարիները գումարուող աս կերպ ժողովներուն ամենէն երեւելին է, թէ մէջը որոշուելու նիւթերուն եւ թէ նոյնին անգամ եղող անձինքներուն նկատմամբ: Ներկայ էին Գաղղիայի կողմանէ՝ արտաքին գործոց պաշտօնեայ Ալբուլքի կոմսը, որն որ ըստ կարգի՝ դեսպանաժողովոյն գահերիցութիւն կ'ընէր, եւ Պուրզնէ՝ Աիէննայի գաղղիական դեսպանը. Աւստրիայի կողմանէ՝ արտաքին գործոց պաշտօնեայ Պուլ կոմսը եւ Հիւպոնէր Փարիզի դեսպանը. Անգղիայի կողմանէ՝ արտաքին գործոց պաշտօնեայ Գլաբենտրն կոմսն ու Գուլի դեսպանը. Սարդինիայի կողմանէ՝ Գաւուր կոմսն ու Աիլլամարինա դեսպանը. Ռուսիայի կողմանէ՝ Օրլօֆ կոմսն ու Պրունով սեպուհը. Օսմանեան տէրութեան կողմանէ՝ Ալի փաշայ փոխարքան ու Փարիզի դեսպան Մէհեմէտ Ճէմիլ Պէյը: Գեսպանաժողովոյն առաջին գործքն եղաւ յայտնել որ Փետրուարի 1ին Աիէննա շինուած արձանագիրը (283) խաղաղութեան նախա-

կարգ պայմաններու տեղ դրուի, եւ զինադադար ընել, որն որ մինչեւ Մարտի վերջը պիտի տեւեր: Ասոնք առաջին նստին մէջ (Փետր. 25) որոշուելէն ետքը, հետեւեալ նստերուն մէջ խաղաղութեան պայմաններուն վրայ խօսուեցաւ՝ ծանօթ չորս (հինգ) կէտերուն կարգաւ. եւ ինչպէս որ գրեթէ ամէն կողմանց՝ պատերազմը վերջացրնելու բաղձանքէն կրնար գուշակուիլ, առանց մեծ գոռաբարութեան կրցան բոլոր խնդիրներուն վրայ միաբանիլ: Այսպէսով 19 Բրորդ նստին մէջ՝ զինադադարին պայմանաժամը լմննալուն նախընթաց օրը՝ ստորագրուեցաւ Փարիզի (Մարտի 30ին) խաղաղութեան դաշինքը: Միեւնոյն օրը որոշուեցաւ որ զինադադարին ժամանակը մինչեւ դաշանց վաւերագրուիլն երկրնայ: Հետեւեալ նստերուն մէջ սահմանուեցաւ որ պատերազմող տէրութեանց, կամ ճշդիւ խօսելու համար՝ Ռուսի, նաւարկութեան ու վաճառականութեան վրայ դուռած կապերը վերնան (Ապր. 4 ու 8): Նոյն երկու նստերուն մէջ նախ Գաղղիա ու Անգղիա ու ետքը Ռուսիա յայտնեցին որ Օսմանեան տէրութեան մէջ ունեցած զօրքերնին վեց ամէն կրնան հանել. իսկ Աւստրիա զրուցեց որ ինք՝ պատերազմող տէրութեանց գոռաբարութիւնը չունենալով, անկից յառաջ ալ իր զօրքերը Գանուբեան իշխանութիւններէն կրնայ ետ քաշել: Գեսպանաժողովը վերջին հինգ նստերուն մէջ (— 20 Բրորդ; Ապր. 16) զբաղեցաւ աս եւ ուրիշ ասոնց նման խնդիրներու, որոնցմէ ոմանց վրայ ետքը կը խօսինք, եւ գոցուեցաւ՝ բուն խաղաղութեան գաշինքէն զտա՝ երեք պայմանագրութեան ու մէկ յայտարարութեան ստորագրուելէն ետքը:

285. Փարիզի խաղաղութեան դաշինքն ու յաւելումները: Վլխաւոր գաշինքը 34 յօդուածի մէջ՝ քանի մը սովորական թէութիւններէ ետքը՝ չորս կէտերով դիտուած պայմանները կը բովանդակէ: 1. խաղաղութեան հաստատուիլը: 2—4. Իրարու երկիրներէն զօրքերը հանել եւ բռնուած տեղերը իւրա-

քանչիւր տիրոջը դարձնել: 5. Թշնամւոյն հետ միացող հպատակաց բնդհանուր թողութիւն: 6. Գերիները ետ առլ: 7, 8. Օսմանեան տէրութեան անկախութեան ու ամբողջութեան երաշխաւորութիւն, որուն վրայ ետքէն խօսելու առիթ կ'ունենանք (289): 9. Դրան քրիստոնեայ հպատակներուն վիճակը, որուն համար կ'ըսուի թէ Սուլդանը հրովարտակաւ մը (283) աղէկացուց, եւ նոյն հրովարտակը դաշնագիր տէրութեանց հաղորդեց. բայց ասով իրենք իրաւունք չեն ունենար Սուլդանին իր հպատակներուն հետ ունեցած յարաբերութիւններուն կամ իր տէրութեան ներքին իրողութիւններուն մէջ խառնուելու: 10. Նեղուցներու պայմանագրութեան (242) նորոգութիւնը, որն որ զատ պայմանագրութեամբ մը կը հաստատուի: 11—14. Սեւ ծովու չէզոքութիւնը: Ռուսիա եւ Դուռն իրենք զիրենք կը պարտաւորեն ան տեղերը ծովեզրեայ զինատուն¹ չկանգնելու կամ չպահելու. իսկ պատերազմական նաւերուն թուոյն վրայ մէջերնին զատ պայմանագրութիւն մը պիտի չինեն: 15—19. Դանուբի նաւարկութիւնը բալթովին ազատ կ'ըլլայ: 20, 21. Ռուսիայի ու Դանուբեան իշխանութեանց սահմաններուն որոշումը, որուն վրայ ետքը կը խօսինք (290): 22—27. Դանուբեան իշխանութիւնը, որոնց վրայ կ'որոշուի որ Դրան վերին իշխանութեան ու դաշնագիր տէրութեանց երաշխաւորութեան տակ իրենց հին իրաւունքներն ու արտօնութիւնները պիտի վայելեն. իսկ իրենց վարչութեան կարգաւորելուն վրայ առ գաշանց բովանդակած ուրիշ որոշումները ետքը կը տեսնենք (292): 28, 29. Սերուիայի հին իրաւունքները կը հաստատուին ու դաշնագիր տէրութեանց երաշխաւորութեան տակ կը գրուին: 30. Ասիայի մէջ Ռուսիայի ու Տաճկաստանի հին սահմանները նոյն կը մնան, եթէ հարկ ըլլայ՝ քիչ մը կարգաւորուելով: 31. Դաշնակցաց զօրքերուն Տաճկաստանէն ելլելը՝ որչափ կա-

1 Arsenal.

Հ 16 Գ. ՄԻՋՅՑ ԺԱՄԱՆԱԿԻ (1848—1858); Է.

բելի է շուտով ի գործ պիտի գրուի: 32. Առեւտրական կարգադրութիւնները պատերազմէն յառաջ եղած վիճակին մէջ պիտի մնան: 33. Ալանտ կղզիները, որոնց նկատմամբ զատ պայմանագրութիւն մը կը շինուի: 34. Վաւերագրութեան որոշում: — Յաւելուածներուն՝ Ա. Պայմանագրութիւնը՝ Նեղուցներուն վրայ է, որով գրեթէ 1841ին Յուլիոսի 13ին պայմանագրութիւնը (242) կը նորոգուի ու գեոպանատողովոյն ամէն անգամներուն ստորագրութեամբ կը հաստատուի. Բ. Պայմանագրութիւնը Գրան եւ Ռուսիայի մէջ է, եւ կ'որոշէ որ իւրաքանչիւրը Սեւ ծովուն մէջ վեցական մեծիակ եւ չորսական պզտիկ պատերազմական նաւ ունենան: Գ. Պայմանագրութիւնը Գաղղիայի Անգղիայի ու Ռուսիայի մէջ է, եւ կ'որոշէ որ Ալանտ կղզիները չամրանան եւ անոնց վրայ ոչ ցամաքային եւ ոչ ծովային զօրութիւն հաստատուի: Իսկ Յայասարութիւնը՝ որուն գեոպանատողովոյն բոլոր անգամները ստորագրած են, ծովական իրաւանց վրայ է, եւ հետեւեալ որոշումները կը բովանդակէ: 1. Ծովահինութիւնը ջնջուած է: 2. Չէզոք տէրութեանց գրօշը՝ թշնամեաց վաճառքը կը պաշտպանէ, բաւական որ պատերազմական նիւթ չըլլայ: 3. Չէզոք տէրութեանց վաճառքը, բաց ի պատերազմական նիւթերէն, նաեւ թշնամեաց գրօշուն ասկէ եղած ատեն՝ չիկրնար յափըշտակուիլ: 4. Թշնամեաց երկրին ծովական պաշտումը՝ պէտք է որ իրական ըլլայ, այս ինքն՝ պէտք է որ պաշարել ուզողը բաւական զօրութեամբ մը թրշնամեայն ծովեզրները բռնէ եւ հոն մօտենալը խափանէ:

286. Գեոպանատողովոյն մէջ Պրուշին դիրքը: Վշնամեացութեան արժանի բան է, որ Պրուշ հինգ մեծ տէրութեանց մէկն ըլլալով, իսկզբան չկրցաւ իր կողմանէ մարդ խաւրել Փարիզի գեոպանատողովը, թէեւ գրեթէ յայտնապէս Գաղղիայի եւ Անգղիայի կառավարութիւններէն խնդրած էր որ նոյն ժողովոյն ինքն ալ մասնակից ըլլայ, ցուցնելու ջանալով որ իր ու

Աւստրիայի մինչեւ նոյն ատեն բռնած ընթացքին մէջ մեծ տարբերութիւն չկայ (1856, Փետր. 10): Պրուշին կրած առ նուաստութիւնը՝ հետեւութիւն մըն էր իր տարիէ մը վեր բանեցուցած քաղաքականութեան, որով չէր ուզեր մասնակից ըլլալ մէկալ մեծ տէրութեանց մէջ եղած բանակցութիւններուն, եւ հազիւ երբեմն իր կարծիքը կը յայտնէր առանձին յայտագիրներով. ինչպէս մասնաւորաբար վերջին ժամանակները Ռուսիայի արքունիքը յորդորած էր Աւստրիայի վերջնագիրն (283) ընդունելու (1856, Յունու. 9): Նոյն քաղաքականութեան առ հետեւանքն ունենալիքը յառաջագոյն իրեն ծանուցած էր Գաղղիայի դաշլիճը, ըսելով որ Եթէ ինք զինքը ճշգիւ մէկ կողմը չ'որոշեր եւ պարտականութիւն մը յանձն չ'առնուր, չիկրնար իրաւունք ունենալ մասնակից ըլլալու վիճին վերջնական որոշման (1855, Յունու. 26): Առ նկատմամբ Փարիզի դեպիանաժողովը չբացուած՝ Աւստրիայի եւ Պրուշի մէջ խօսակցութիւն ըլլալէն ետքը, որ աւթին մէջ առաջինը կը յայտնէր որ Թէպէտ եւ կը բաղձայ որ Պրուշ ալ խաղաղութեան բանակցութեանց մէջ մասն ունենայ, բայց ասոր համար պէտք է որ ինքն ալ պարտականութիւն մը յանձն առնու (1856, Յունու. 20), Պրուշ յայտնեց որ կը բաղձայ որ Աւստրիայի վերջնագիրը՝ որն որ Փետրուարի 1ին արձանագրովն իբրեւ խաղաղութեան նախակարգ պայման եղած էր (283), Գերմանական դաշնակցութեան ժողովն ընդունի (Փետր. 3): Ասոր վրայ Աւստրիա նոյն ժողովոյն մէջ առ բանս առաջարկեց (Փետր. 7), եւ հաւանութիւն ընդունեցաւ (Փետր. 21): Այսպէսով Աւստրիայի պատիւը կը պահանջէր որ զՊրուշ դեպիանաժողովոյն մէջ ընդունել տայ, ինչպէս նաեւ Ռուսիա ալ նոյն պարտականութիւնն ունէր, մէկ կողմանէ ալ իր շահը զինքն ասոր կը ստիպէր: Իրօք ալ դեպիանաժողովոյն երկրորդ նստին մէջ (Փետր. 28) նոյն երկու տէրութեանց երեսփոխանները կերպով մ'առ առաջարկու-

Թիւնն ըրին: Բայց ժողովը՝ Անգղիայի Երեսփոխանին խորհրդովը՝ որոշեց որ Պրուշ ան ժամանակ կարենայ գետպան խաւրել՝ երբ որ 1841ին Յուլիսի 13ին դաշանց քննութեան կը զբաղին, եւ ներկայ դաշանց գրախաւոր պայմաններուն. որոշուելէն ետեւ: Ուստի եւ հազիւ եօթներորդ նոտին մէջ (Մարտ 10) վալելաքիին առաջարկութեամբ ժողովն որոշեց որ ալ Պրուշ հրաւիրուի՝ իբրեւ 1841ին Յուլիսի 13ին դաշանց դաշնագիր՝ գետպանաժողովը Երեսփոխան խաւրելու: Աս որոշման համեմատ հրաւերը խաւրուեցաւ, եւ մետասաներորդ նոտին մէջ (Մարտ 18), Պրուշի կողմանէ՝ պաշտօնէից դահերէց Մանգայֆլ սեպուհն ու Հացֆէլտ գետպանը ժողովքը մուտք ունեցան: Մինչեւ նոյն ատեն գումարուող նիստերուն արձանագիրներն իրենց հաղորդուեցաւ. եւ անկից ետքը իրենք ալ բանակցութիւններուն մասնակից եղան ու խաղաղութեան գաշանց ստորագրեցին:

287. Յունաստանի եւ Իտալիայի խնդիրները: Դեսպանաժողովոյն մէջ Սարդինիայի ընթացքը: Նէօշադէլ: Վեսպանաժողովոյն նստերուն մէջ նշանաւորներէն մէկն եղաւ քսանուերկուերորդը (Ապր. 8), որուն մէջ վալելաքի կոմսը բացաւ Յունաստանի, Հռոմի տէրութեան եւ Նէպոլոոյ վիճակին վրայ: Ինք առ նիւթերուն նկատմամբ ժողովոյն մէջ խօսիլ կ'ուզէր, եւ նոյն կարծիքն ունէին Անգղիայի ու Սարդինիայի Երեսփոխանները, եւ առանձինն վերջին տէրութեան Երեսփոխանները՝ մանաւանդ Իտալիայի վերաբերեալ խնդիրներուն համար. բայց Աւստրիայի Երեսփոխանները գէժ դարձան, ըսելով որ գետպանաժողովոյն նպատակը՝ միայն արեւելեան խնդիրն է եւ անոր անդամներն իրենց իւրաքանչիւր տէրութիւններէն ան խնդրոյն նկատմամբ միայն հրահանգ ունին: Անոր համար անկարելի է ուրիշ նիւթերու վրայ խօսիլ, մանաւանդ անանկ անկախ տէրութեանց ներքին

իրողութիւններուն վրայ, որոնք դեռսպանաժողովոյն մէջ երեսփոխան չունէին: Աս նիւթերուն վրայ Աւստրիայի ու Սարդինիայի երեսփոխաններուն՝ մէջ բուական կծու կերպով քիչ մը խօսուելէն ետքը, նոյն խնդիրները կնքեց դարձեալ Ալբուքի կոմսը հետեւեալ խօսքերով. Թէպէտ ես կը կարծէի որ աւելի օգտակար կ'ըլլար առ խնդիրներուն վրայ աւելի ընդարձակ կերպով խօսիլը, ի վերայ այսր ամենայնի այսչափ խօսուիլն ալ բարոյփն անօգուտ չէ: Ասան զի եղած խօսակցութիւններէն կը տեսնուի, որ նախ՝ ոչ դք կ'ուրանայ թէ հարկաւոր չըլլայ Յունաստանի վիճակը լաւացընելու վրայ մտածել, եւ երեք պաշտպան տէրութիւնք (ՏՏ) խոստովանեցան որ աս նկատմամբ մէջերնին խորհելու են: Երկրորդ՝ Աւստրիայի երեսփոխաններն ալ Գաղղիայի երեսփոխաններուն հետ միաբան յայտնեցին որ իրենք ալ կը բաղձան Գաղղիական եւ Աւստրիական զօրաց քահանայապետական երկիրներէն ելլելուն, անմիջապէս երբ որ աս բանս կարելի կ'ըլլայ՝ առանց վտանգի մէջ գնելու ան տեղերուն հանդարտութիւնն ու Ս. Գահին իշխանութիւնը: Երրորդ՝ երեսփոխաններուն մեծ մասը հաւանեցաւ որ եթէ Իտալիայի կառավարութիւններն ու առանձինն Նէպոլոյ կառավարութիւնը մեղմական միջոցներ բանեցընեն, օգտակար հետեւութիւններ կ'ունենայ: — Այսպէսով առանց իրական հետեւութեան ճնացին աս առաջարկութիւնները եւ պարապի ելաւ դեռսպանաժողովոյն վրայ Սարդինիայի ունեցած ակնկալութիւնը: Նոյն տէրութիւնք քանի մ'որ յառաջ Գաղղիացի ու Անգղիացի դահլիճներուն յիշատակագիր մ'ուղղած էր (Մարտ 26), որուն մէջ գլխաւորաբար Հռոմի երկիրներուն վիճակին վրայ խօսելով եւ իր մտաց համեմատ փոփոխութիւններ առաջարկելով, իրենցմէ կը խնդրէր որ նոյն խնդիրը դեռսպանաժողովոյն առջեւը հանեն: Երբ որ՝ յիշածնուս պէս՝ աս միջոցն օգուտ մը չըրաւ, իր երեսփոխանները՝ Անգղիայի ու Գաղղիայի երեսփոխաններուն յիշատա-

կազմի մը տունին (Ապր. 16), որով կը ջանային ցուցընել թէ Իսաաիայի մէջ Աւսարիացուց բռնած գիրքը խիստ վտանգաւոր է Սարգիսիայի, եւ մնասակար հետեւութիւններ պիտ'որ ունենայ Անգղիայի ու Գաղղիայի շահուն եւ ընդհանրապէս Եւրոպայի քաղաքական հաւասարակշռութեան, միանգամայն իրենցմէ խնդրելով որ Սարգիսիայի հետ միաբան՝ առ վտանգներուն առջեւն առնելու միջոցներուն վրայ խորհին: — Դեռ պանաժողովին մէջ Յունաստանի եւ Իսաաիայի վիճակին վրայ խօսուած ատեն, Պրուշի երեսպիտաններն ուզեցին մէջ բերել եւ կարգի դնել Նայենպուրկի կամ Նէօշադէլի խնդիրը, որն որ թէեւ Հելուետական դաշնակցութեան նահանգներէն մէկն էր (18), բայց Պրուշի թագաւորին վեհապետութեան ասկ. սակայն քանի մը տարիէ վեր նոյն վեհապետին իշխանութիւնը չէր ուզեր ճանչնալ: Աս առաջարկութիւնն ալ առանց հետեւութեան մնաց: (Անկից տարիէ ժ'աւելի ետքը Պրուշ մէկալ չորս մեծ տէրութեանց ու Հելուետիայի հետ դաշինք դնելով (1857, Մայ. 26), նոյն գաւառին վրայ ունեցած իշխանութենէն բոլորովին հրաժարեցաւ, որով ան գաւառն ալ Հելուետական դաշնակցութիւնը կազմող ուրիշ նահանգներուն բոլորովին հաւասարեցաւ:)

288. Արեւելեան պատերազմին ձեռքովը Գաղղիայի ունեցած շահը: Աս պատերազմաւ ու Փարիզի խաղաղութեան դաշինքովը՝ գէթ քիչ մը ժամանակ՝ վերջ տրուեցաւ Ռուսիային խել ժ'ատենէ վեր Եւրոպայի վրայ բանեցուցած մեծ ազգեցութեան, եւ նոյնն անցաւ Գաղղիայի: Գաղղիա էր գլխաւորաբար՝ նոյն պատերազմը յաջողութեամբ գլուխ տանողն ու խաղաղութեան դաշինքը դնել տուողը. ուստի եւ հարկ էր որ ուրիշ ամէն տէրութիւններէն աւելի օգուտ քողէր անոնցմէ: Ինչպէս իրօք ալ եղաւ: Եւ թէպէտ աս օգուտը՝ առաւելապէս բարոյական է, բայց անով իր ծանրակշռութիւնը չիկորսընցընեք. եւ եթէ մէկն ասոր վրայ կը տարակուսի, թող մտածէ որ պատե-

րազմը չսկսած՝ ինչ համարում ունէին ուրիշ ազգերը Գաղղիայի վրայ, եւ ինչ համարում խաղաղութեան գաշինքը գրուած ատեն: Նաբոլէոն Գ., որն որ մէկ երկու տարի յառաջ գրեթէ շնորհքի մը պէս նկատած էր ուրիշ տէրութիւններուն զինքը Գաղղիայի վեհապետ ճանչնալը, հիմակ իբրեւ Եւրոպայի ամենէն մեծ ու ամենէն զօրաւոր վեհապետը կը պատուուէր: Ինք՝ որ պատերազմին սկսելու ատենները, գլխաւորաբար անոր համար ուզած էր որ Ալիէնայի մէջ հինգ մեծ տէրութիւնք գեապանական բանակցութիւն ընեն, որպէս զէ գարձեալ Գաղղիա՝ իրեն վայլածին պէս՝ մեծ տէրութեանց խորհրդեան մէջ մուտք ունենայ, ինչպէս իր տեղը նշանակեցինք (252), պատերազմին վերջը պահանջեց որ խաղաղութեան համար գումարուելու դեսպանաժողովը՝ իր մայրաքաղաքին մէջ ժողովուի. եւ ոչ զք կրցաւ համարձակիլ ասանկ արդար պահանջման մը դէմ գնելու: Ըստ սովորութեան պէտք էր որ իր առաջին երեսփոխանը՝ նոյն ժողովոյն գահերէց ըլլար, սրով բանակցութեանց առաջնորդութիւնն ալ իր ձեռքը մնաց: Արծեա թէ բախտն ալ իր շքեղութեան ու մեծութեան աւելնալուն օգնել ուղեց: Գեապանաժողովոյն ատենը իրեն արու զաւակ եւ կայսերական թագին ժառանգ մը ծնաւ (Մարտ 16): Մտադրութեան արժանի է որ նոյն առթիւն մէջ շնորհաւորութեան համար կայսերական պալատն եկող առաջին դեսպանական անձն եղաւ Օրլոֆ կոմսը, որն որ փառաւոր համազգեստ հագած՝ իր վեհապետին բարեմաղթութիւններովն առտուանց կանուխ Գիւլիլիի երեւցաւ, իբրեւ թէ քաւութիւն ընելու համար ճամբորդութեան զգեստով ու ձեռքը մտրակով Գուռը գացող Մենչիգոֆ իշխանին անպատշաճ ընթացքին: Երէք տարւան մէջ իրերն այնպէս փոխուած էին որ յառաջ զՆաբոլէոն բանի տեղ չդնող Ռուսիա, հիմակ ամէն կերպով կը ջանար անոր շնորհքն ու բարեկամութիւնը ձեռք բերել: Բայց ան ալ ստոյգ է որ նաեւ Նաբոլէոն թէ պատերազմն Ան-

գղիայի կամացը դէմ դադրեցընելովը եւ թէ խաղաղութեան դաշանց դրուելու ժամանակ բանեցուցած չափաւորեալ քաղաքականութեամբը, անանկ երեւցուց որ իբր թէ Ռուսիայի օգուտը կը դիտէ: Բայց Ռուսիա միայն չէր՝ որ այսպէս Նաբոլէոնին բարեկամութիւնը կը փնտռէր. դեսպանաժողովոյն ժամանակը կարծես թէ ամէն տէրութեանց երեսփոխանները՝ իրարու հետ մրցութեան ելածի պէս՝ կը ջանային որ իւրաքանչիւր ղը ընկերէն աւելի պատիւ ու մեծարանք ընէ Գաղղիայի երջանիկ վեհապետին: Խաղաղութեան դաշանց ստորագրուած օրը, երբ որ Անգղիայի առաջին երեսփոխանն առաջարկեց որ բոլոր դեսպանաժողովը մէկտեղ կայսեր երթալով, նոյն ուրախարար լուրն իրեն ծանուցանէ, տեսնելու բան էր որ ամէն ժողովականք ինչ փութով եւ ուրախութեամբ աս առաջարկութեան հաւանութիւն տուին: Այսպէսով Նաբոլէոն Գ.ին մէկ պատերազմաւր՝ Գաղղիայի ունեցած բարոյական շահը, կարծենք թէ շատ աւելի էր՝ քան թէ Նաբոլէոն Ա.ին զանազան պատերազմներովը ձեռք բերած նիւթական շահը:

289. Աւստրիայի, Անգղիայի ու Գաղղիայի մէջ Ապրիլի 15ին դաշինքը: Ռուսիային Գաղղիայի այնչափ բարեկամութիւն ցուցընելուն պատճառներէն մէկն ալ ան էր, որ կ'ուզէր անոր հետ կապուելով, Գաղղիական - Անգղիական դաշնաւորութիւնը քակել: Բայց արդէն Անգղիա եւ Աւստրիա աս բանս գուշակած ըլլալով, ջանացած էին առջեւն առնուլ, զորն որ խափանելը մանաւանդ Աւստրիայի համար խիստ հարկաւոր էր. վասն զի իրաւամբ կը կասկածէր որ պատերազմին ժամանակն իր բռնած ընթացքին պատճնուաւ՝ Ռուսիա վրէժ առնուլ չուզէ: Ինչպէս յառաջագոյն զբուցեցինք, խաղաղութիւն ըլլալէն յառաջ Գաղղիայի հետ աս նկատմամբ միաբանած էր (282), հաւանական է որ Անգղիա ալ նոյնն ըրած ըլլայ: Իսկ Ռուսիա աս միաբանութեան վրայ ամենեւին տեղեկութիւն չաւնէր. զորն որ եթէ իմացած ըլլար, գուցէ այնչափ դիւրաւ

չէր հաւաններ խաղաղութիւն ըսելու : Ինչպէս որ է նէ , խաղաղութեան դաշինքը դրուելէն քիչ մը ետքը՝ դեռ պանափողովը տակաւին չգացուած , Անգղիա , Աւստրիա ու Գաղղիա մէջերնին առանձնական դաշինք մը դրին (1856, Ապր. 15) , որուն պայմաններն ասոնք են : 1. «Դաշնագիրը ամէնքը մէկտեղ եւ առանձինն կ'երաշխաւորեն Օսմանեան տէրութեան անկախութիւնն ու ամբողջութիւնը ,» : 2. Փարիզի դաշանց դէմ գործողութիւն մ'ըլլայ նէ , դաշնագիրը նոյնը պատերազմի պատճառ պիտի համարին , Դրան հետ հարկաւոր միջոցներուն վրայ պիտի խորհին , եւ անմիջապէս իրենց մէջ պիտի որոշեն թէ իրենց զինուորական ու ծովական զօրութիւնն ինչ կերպով գործածելու են : — Աս առանձնական դաշանց նպատակը պիտ'որ ըլլար ուրեմն Օսմանեան տէրութեան անկախութիւնն ու ամբողջութիւնը . բայց եթէ մէկը խաղաղութեան ընդհանուր դաշինքն աչքէ անցրնէ , անմիջապէս կը տեսնէ թէ աս նկատմամբ բոլորովին աւելորդ է առանձնականը , վասն զի ընդհանուր դաշանց վրայ ամենեւին բան մը չ'աւելցրներ : Արդէն ընդհանուր դաշանց Մերորդ յօդուածը՝ երեք տէրութեանց առանձնական դաշինքը կը բովանդակէր . նոյն Մերորդ յօդուածին մէջ ամէն տէրութիւնք մէկտեղ Օսմանեան տէրութեան ամբողջութեան ու անկախութեան երաշխաւոր եղած էին , ըսելով . «Դաշնագիրը իրենք զիրենք կը պարտաւորեն Օսմանեան տէրութեան անկախութիւնն ու երկիրներու ամբողջութիւնը յարգելու . միաբան կ'երաշխաւորեն աս պարտաւորութեան ճիշդ պահպանութիւնը ,» : Եւ չենք կարծեր որ երկու դաշանց մէջ գտնուած բառերու աննշանակ տարբերութենէն՝ առանձին դաշինք մը դնելու հարկաւորութիւն ծագէր : Անոր համար պէտք է ըսել որ երեք տէրութիւնք՝ արտաքուստ յառաջ բերուած նպատակէն զատ նպատակ մ'ունենցած ըլլալու են . եւ աս նպատակն ուրիշ բան չէր կրնար ըլլալ , բայց եթէ իրարու հետ Ռուսիայի դէմ մէկտեղ նորէն

կապուիլ: Մանաւանդ թէ ճշգիւ խօսելու համար, երեք տերութեանց գաշինքին երկրորդ յօդուածը յայտնապէս հակառակ է ընդհանուր գաշանց, որուն Տերորդ յօդուածը կ'որոշէ որ «Եթէ Բարձրագոյն Դրան ու գաշնադիր տերութիւններէն մէկուն կամ մէկ քանիին մէջ երկպառակութիւն ելլէ, որով անոնց յարաբերութիւնները վտանդի մէջ մտնեն, Բարձրագոյն Դուռն ու նոյն տերութիւններէն ամէն մէկը, բունական միջոցներու (զինուց) գործածութեան դիմելէն յառաջ, մէկալ գաշնադիր տերութիւններն ի վիճակի պիտի գնեն իրենց միջնորդութեամբն աս արապոյ կարգի միջոցը խափանելու.», Աս այսպէս ըլլալով, խիտա իրաւացի էր ան զարմանքն ու այլայլութիւնը, որն որ բոլոր Եւրոպայի մէջ պատճառեցաւ, երբ որ աս առանձնական գաշինքը դուռեւէն քիչ մը ետքը Անգղիայի խորհրդանոցին մէջ Լորա Գլարենտըն նոյնը ծանոյց (Մայիսի սկիզբը): Ինչպէս յայտնի է՝ ամենէն աւելի այլայլողն եղաւ Ռուսիա, որն որ անով կը կորսնցընէր Գաղղիայի հետ կապուելու ակնկալութիւնը: Բայց շատ չքնաց իր նպատակին հասաւ, այնպէս որ երից միաբանութիւնը քակուելով, ինք բաղձացածին պէս՝ Գաղղիայի հետ կապուեցաւ, իսկ Աւստրիա՝ Անգղիայի հետ:

290. Սահմաններու կարգաւորութեան խնդիրը: Փարիզի նոր գեսպանաժողովն ու (1857ին) Յունուարի 6ին արձանագիրը: Իրազարդութեան գաշանց գլխաւոր պայմաններէն մէկ քանին չէին կրնար անմիջապէս գործադրուիլ, վասն զի զանազան քննութեանց եւ մասնական կարգադրութեանց կարօտութիւն ունէին: Այսպէս էին գլխաւորաբար Պետարաբիայի նոր սահմաններու որոշումը եւ Գանուբեան իշխանութեանց ներքին կարգաւորութիւնը, զորոնք կարգի գնելու համար երկու մասնաժողովներ կազմուեցան: Բայց առոնց ձեռքովը նոյն խնդիրները զիւրաւ որոշելու տկնկալութիւնը փուճ ելաւ: Առաջնոյն նկատմամբ գժուարութիւնն անկից կը ծագէր որ Ռուսք կը ջանային՝ խաղա-

ղութեան գաշանց այնչափ որոշ շեղող խօզքերէն օգուտ հանելով՝ իրենց պահել Պետարաբիայի Պոլկրատ քաղաքը: Իսկ ուրիշ մէկ երկու տէրութիւնք ասոր դէմ կ'ելլէին, ըսելով որ անով Ռուսիա գարձեալ արգելք կրնայ ըլլալ Գանուբի ազատ նաւարկութեան, զորն որ ապահովընելու համար որսշած էր խաղաղութեան գաշինքը սահմաններու կարգաւորուիլը: Ասոր վրայ աւելցաւ Օձի կղզւոյն վէճը, զորն որ մէկ կողմանէ Ռուսիա իրեն պահել, իսկ մէկալ կողմանէ Գուռն իրեն առնուլ կ'ուզէր: Ռուսիա իր նպատակին հասնելու համար խնդրեց որ Փարիզի գեապանաժողովը նորէն գումարուելով, նոյն նիւթը կարգի դնէ (1856, Օգոստ. 4), եւ ետքէն քանի մը հեղ ալ աս առաջարկութիւնը կրկնեց, խոտանալով որ նոյն գեապանաժողովոյն մեծագոյն մասին որոշման կը զեջանի: Ապահով կը համարէր որ աս մեծագոյն մասն իր կողմը կ'ունենայ, իրօք ալ հաշիւը շիտակ էր, վասն զի բոլորովին իր կողմը շահուած էր Գաղղիա, որուն համեմատ քուէ պէտք էր տալ նաեւ Սարգիսիա, եւ ասոնց վրայ աւելցրնելով Պրուշի եւ իր քուէն, եօթը տէրութիւններէն՝ չորսն ի նպատակ Ռուսիայի կ'ըլլային, եւ միայն երեքը (Անգղիա, Աւստրիա ու Դուռը) հակառակ կողմը: Բայց աս անգամ ալ հաշիւը սխալ ելաւ: Ուրիշ տէրութիւնք Ռուսի առաջարկութեան հաւանելով, առաջին մեծ գեապանաժողովոյն մէջ երկրորդ երեսօթեան եղող գեապանք, տարւոյն վերջին օրը՝ գարձեալ Ալաբուքի կոմսին գահերիցութեամբը՝ Փարիզի մէջ խորհրդի նստեցան (Դեկտ. 31): Աս նոր գեապանաժողովը երկու նստի մէջ իր գործքը գիւրութեամբ լմընցուց. եւ արձանագրով մը սահմաններու խնդիրը կարգի դրաւ (1857, Յունու. 6): Նոյն արձանագրին համեմատ՝ Պոլկրատ քաղաքը Մոլտաւիայի կը տրուէր, որուն գիմացը Ռուսք հազիւ վերին Եալքուշէն կտոր մը տեղ կը շահէին: Օձի կղզին ալ Օսմանեան տէրութեան կը տրուէր, վրան լապտերակալ աշաարակ մը պահելու

պարտաւորութեամբ: Աս կարգաւորութիւնը մինչեւ Մարտի 30 լմբնցած պիտի ըլլար, եւ մինչեւ նոյն ժամանակ Աւստրիայի զօրքերը՝ Գանուբեան իշխանութիւններէն, իսկ Անգղիական նաւատորմիդը՝ Սեւ ծովէն ելած պիտ'որ ըլլային: Թէպէտ աս կերպով սահմաններու խնդիրն որոշուած էր, սակայն եւ այնպէս արձանագրին մէջ սահմանուած ըլլալով որ նոյնին ստորագրող տէրութիւնք ետքէն առանձին պայմանագրութեամբ մ'ալ հաստատեն, աս ալ քանի մ'ամիս ետքը կատարուեցաւ (Յունիս 19):

291. Թէ ինչ առթով Անգղիա՝ Աւստրիայի հետ, իսկ Գաղղիա՝ Ռուսիայի հետ միացան: Ինչպէս Յունուարի 6ին արձանագրին խօսքերէն կ'իմացուի, Փարիզի մեծ դեռպանաժողովոյն մէջ (Ապր. 4 ու 8) խօսուածին դէմ (284), Աւստրիացիք՝ Գանուբեան իշխանութիւններէն, իսկ Անգղիացիք՝ Սեւ ծովէն տակաւին քաշուած չէին: Հոս աս բանիս մեկնութիւնը տալու ենք, որով միանգամայն սահմանաց խնդրոյն մէջ Ռուսիայի հաշուին պարապ ելլելուն պատճառն ալ կը տեսնենք: Անգղիա, որն որ՝ ինչպէս քանի մը անգամ նշանակեցինք՝ չէր ուզեր որ շուտով խաղաղութիւն ըլլայ, եւ միայն մէկալ տէրութիւններուն միաբան կամքէն ստիպուած էր պատերազմը դադրեցընելու, սահմաններու խնդրոյն մէջ սաստկութեամբ դէմ ելաւ Ռուսիայի պահանջմանց, որոնց իրաւունք կուտար Գաղղիա: Եւ որպէս զի խօսքը քալեցընէ, յայտնեց որ իր նաւերը Սեւ ծովէն չիհաներ, մինչեւ որ աս խնդիրը չորոշուի, եւ խաղաղութեան գաշանց ուրիշ քանի մը պայմանները կատարեալ գլուխ չտարուին: Թէ աս եւ թէ Գանուբեան իշխանութեանց նկատմամբ Անգղիայի հետ միաբան էր Աւստրիա ալ, որն որ Անգղիական նաւատորմին Սեւ ծովը մնալէն առիթ առած՝ իր զօրքերը նոյն իշխանութեանց երկիրներէն չէր հաներ: Իսկ Գաղղիա, թէպէտ արեւելք ուրիշ ամէն գաշնաւորներէն աւելի զօրք ու ազմամթեր ունէր,

պայրմանաժամէն (1856, Հոկտ. 1) շատ յառաջ՝ ան կողմերէն ետ քաշուած էր (Օգոստ. 18). նոյնպէս Ռուսիա աւելի յառաջ իր զօրքերը Վարսէն հանած էր (Օգոստ. 10): Անոր համար աս երկու վերջին տերու- թիւնք Գռնէն պահանջեցին որ զառաջինները ստիպէ իր երկիրներէն ելլելու (Նոյ. սկիզբը). բայց որովհետեւ Անգղիա եւ Աւստրիա թէ սահմաններու եւ թէ Գա- նուբեան իշխանութեանց խնդիրներուն մէջ Գրան հետ միաբանած էին, անոր համար ինքն ալ անոնց մնալուն հաւանութիւն տուաւ: — Եթէ Գաղղիա սահմաններու խնդրոյն մէջ իր կարծիքին վրայ պնդէր, կրնար մեծ շփոթութիւն եւ գուցէ նոր պատերազմ մը ծագիլ: Բայց Նաբոլէոն, որչափ որ ալ կը բաղձար պահել եւ աւելցրնել Ռուսիայի հետ նոր սկսած բարեկամութիւ- նը, մէկալ կողմանէ ալ չուզելով աւրուիլ Անգղիայի հետ, կերպով մը դժուարութիւնը վերցրնելու հնարք գտաւ, այնպէս որ թէ ինք Ռուսիայի կողմ քուէ տայ եւ այսպէս անոր բարեկամութեան դէմ ըրած չըլլայ, եւ թէ Անգղիայի կամքը յառաջ երթայ: Գեսպանա- ժողովոյն մէջ Սարդինիային՝ Ռուսիայի դէմ քուէ տալ տուաւ, որով սահմաններուն խնդիրն անոր ուզածին հակառակ որոշուեցաւ: Անշուշտ կը յուսար որ իր աս զիջման դիմացը՝ Անգղիա ալ Գանուբեան իշխանու- թեանց խնդրոյն մէջ իրեն զիջում կ'ընէ. բայց Անգղիա նաեւ աս նկատմամբ հաստատուն կեցաւ, որով նոյն խնդիրն ալ խիստ կնճռեցաւ: Եւ աւելի յայտնի կեր- պով տեսնուեցաւ իր՝ Աւստրիայի, եւ Գաղղիային՝ Ռու- սիայի հետ միացած ըլլալը:

292. Մոլտաւիայի ու Վալաքիայի միաւորու- թեան վէճը: Փարիզի խաղաղութեան դաշինքով որո- շուած էր որ (Յօդ. 24) Գրուն աս երկու իշխանու- թեանց մէջ զատ զատ Տիվանէր (ազգային ժողովներ) գումարել տայ, որոնք երկրին ներքին կարգադրու- թեանց նկատմամբ ժողովրդոց բաղձանքները յայտնեն: Գարձեալ որոշուած էր որ (Յօդ. 23) եօթը դաշնադիր

428 Գ. ՄԻՋՅՑ ԺԱՄԱՆԱԿԻ (1848—1858), Է.

տէրութեանց երեսփոխաններէն Պուքրէշ մասնաժողով մը կազմուելով, երկու իշխանութեանց ներկայ վիճակն իմանայ ու տպագրայ կարգադրութիւններուն հիմերն առաջարկէ: Աս Եւրոպական մասնաժողովը Առտանդնուպոլսոյ մէջ գումարուեցաւ (1856, Սեպտ. 4): Քիչ մը ետքը Դուռը գաշնագիր տէրութեանց գեոպաններուն առջեւը գրաւ Տիվանները գումարելու նկատմամբ հանելու հրովարտակին ծրագիրը (Հոկտ. 20), որն որ փոխադրայ Ռէշիա փաշայէն ու արապքին գործոց պաշտօնեայ Ֆուատ փաշայէն, մէկալ գաշնագիր տէրութեանց գեապաններէն ու վերոյիշեալ եւրոպական մասնաժողովոյն անգամներէն կազմուած ժողովոյ մը մէջ քննուելէն ու հաճութիւն գտնելէն ետեւ (1857, Յունու. 13), զաա զաա գործակալներու ձեռքով վալարքիայի ու Մոլտաւիայի անդակայներուն խաւրուեցաւ (Մարտ 8 ու 12): Նոյն միջոցներուն՝ Աւստրիական զօրքերուն բոլորովին հեռանալէն ետեւ, եւրոպական մասնաժողովը Առտանդնուպոլսէն ելաւ՝ իշխանութեանց երկիրներն անցաւ, եւ նախ ամիս մը Եաշ կենտրլէն ետեւ՝ բուն Պուքրէշի մէջ իր նիտտերը բացաւ (Մայ. 30): — Դուռը՝ որչափ որ այս ամենայն բոտ գաշանց կ'ընէր նէ ալ, ի վերայ այսր ամենայնի իսկզբանէ յայտնած էր (1856, Յուլ. 31) որ ամենեւին չիկրնար հաւանիլ երկու իշխանութեանց միաւորութեան, որովհետեւ ասով ան երկիրները գրեթէ իրմէ անկախ կ'ըլլային, եւ իր ամբողջութիւնը կը վնասուէր, զորն որ երաշխաւորած էին գաշնագիր տէրութիւնք: Աս մասին մէջ իրեն հետ միաբան էին, ինչպէս ըսինք, Անդղիա եւ Աւստրիա. իսկ մնացեալ չորս գաշնագիր տէրութիւնք, այս ինքն՝ Գաղղիա, Ռուսիա, Սարգինիա ու Պրուշ, իշխանութեանց միանալը կ'ուզէին: Տիվանները գումարելու հրովարտակը հասնելէն քիչ մը ետքը՝ Մոլտաւիայի մէջ ընտրութիւնք եղան, թէեւ Պուքրէշի եւրոպական մասնաժողովը ընդգիմնութիւն կը հանէր. եւ ընտրուողներն բոտ մեծի մասին

միաւորութեան գէժ եղող անձինքներէն ելան (Յուլ. 19): Ասոր վրայ միաւորութիւն ուզող չորս տէրութեանց գեապանները Դունէն պահանջեցին որ անմիջապէս նոյն ընտրութիւնները ջնջէ, որովհետեւ խորագախ եւ անկարգ կերպով եղած են (Յուլ. 28), իսկ Դուռն աս բանս յանձն չառնելով, իրենք ալ գեապանական հաղորդակցութիւննին կտրեցին (Օգոստ. 5): Խիստ մեծ պլայլուութիւն պատճառեց առ գէպքը. անոր համար ալ արտաքոյ կարգի ուրախութեամբ լուսեցաւ երկպառակութեան շուտով վերցուիլը, որն որ գարձեալ Նարոյէոնին խորագէտ քաղաքականութեան արդիւնքն էր: Չորս գեապաններուն Դրան հետ հաղորդակցութիւննին կտրած օրը, նոյն կայորն Անգղիայի թագուհւոյն պղծութեան գնաց. եւ իր երկք օրուան ներկայութեամբը (Օգոստ. 6—9) Լոնտոնի գահիճը համոզեց տեղի տալու: Այնպէս որ երկու օր ետքը խորհրդանոցին մէջ Լորտ Բալմերուզըն յայտանեց թէ Անգղիայի կառավարութիւնը հաւանած է Մոլտաւիայի ընտրութեանց ջնջուելուն, եւ Աւստրիա ալ իրեն հետ միաբանած է (Օգոստ. 11): Աս երկու տէրութեանց կոստանդնուպոլոյ գեապաններն ասոր համեմատ հրահանգներ ընդունելով, Դրան խորհուրդ տուին որ զիջանի (Օգոստ. 22): Օսմանեան կառավարութիւնն ալ աս իր գաշնակցոց միաբան հաւանութեան տեղի տալով, հրամայեց որ Մոլտաւիայի ընտրութիւններն անվաւեր համարուին եւ նոր ընտրութիւնք ըլլան (Օգոստ. 24). որմէ քանի մը օր վերջը չորս գեապանները նորէն իրեն հետ հաղորդակցելու սկսան (Օգոստ. 29):

293. Փարիզի (1858ին) գեապանաժողովը, եւ Դանուբեան իշխանութեանց վերջնական կարգադրութիւնը: Բաները մէյ մը առ վիճակին մէջ մտնելէն ետեւ, ունենալու վախճաննին տարակուսի տակ չէր կրնար իյնալ: Հետզհետէ Մոլտաւիայի (1857, Սեպտ. 19) եւ Ալալաբիայի (Սեպտ. 26) ազգային ժողովներուն ընտրութիւնները կատարուեցան, եւ ընտրուող-

ներն ըստ մեծագոյն մասին երկու իշխանութեանց միանալուն կողմնակիցներէն եղան: Երկու ժողովներն ալ վիէննայի դեսպանաժողովոյն մէջ Գաղղիայի երեսփոխանին ներկայացուցած յիշատակագրին (269) համեմատ, որոշեցին որ Մուտաւիա ու Ալալաքիա միանալով՝ միակ տէրութիւն մը կազմեն, Եւրոպայի վեհապետական ցեղերուն մէկէն ժառանգական իշխանի մը տակ, որն որ երեսփոխանական (օրէնսդիր) ժողովով մը կառավարէ (Հոկտ. 19, 21): Թեպէտ եւ Դուռը յայտնեց որ աս որոշումները չիկրնար յանձն առնուլ (Հոկտ. 28), եւ քիչ մը ետքը՝ Փարիզի դաշանց ստորագրող տէրութեանց հաւանութեամբը՝ երկու իշխանութեանց ժողովները լուծեց (1858, Յունու. 15). բայց ասով իրաց ընթացքին շարունակութիւնը չէր կրնար խափանել, հապա սպասելու էր Փարիզ աս վախճանու գումարուելու դեսպանաժողովոյն որոշման: Նոյն դեսպանաժողովը ժողովեցաւ գարձեալ Ալալաքի կոմսին գահերիցութեամբը՝ մէկալ վեց դաշնագիր տէրութեանց Փարիզի դեսպաններէն կազմուելով (Մայ. 22), եւ տասնուինը նստի մէջ (— Օգոստ. 19) երկու իշխանութեանց վերջնական կարգադրութիւնները սահմանեց, որոնք նոյն օրը (Օգոստ. 19) ստորագրուած պայմանագրութեամբ մը հաստատուեցան: Աս պայմանագրութեան որոշմանց համեմատ, 1. Դանուբեան իշխանութիւնները՝ որոնք Մոնտասիայի ու վալաքիայի միաւորեալ իշխանութիւնք պիտի կոչուին, Սուլթանին վերին իշխանութեան տակ կը մնան: 2. Նոյն իշխանութիւնք՝ իրենց մինչեւ հիմայ վայելած իրաւունքներն ու առանձնաշնորհութիւնները ասկէ ետքն ալ կը պահեն Փարիզի դաշնագիր տէրութեանց երաշխաւորութեան տակ. ուստի եւ ազատ պիտի ըլլան իրենց ներքին վարչութեան նկատմամբ, որուն մէջ Դուռը պիտի չխառնուի: 3. Իւրաքանչիւր իշխանութեան մէջ իշխան (Օսփոտար) մը եւ ընտրեալ (օրէնսդիր) ժողով մը պիտի ըլլայ, որն որ քանի մը որոշ գէպքերու մէջ

կեդրոնական մասնաժողովոյ մը գործակցութեամբ իր պաշտօնը պիտի կատարէ: . . . 8—10. Իշխանը ընտարեալ ժողովէն պիտի ընտրուի՝ ցկեանս, եւ յառաջուան պէս Սուլդանէն պիտի հաստատուի: Երկու իշխանութիւնք ալ Գրան հարկ պիտի տան, Մոլտաւիա՝ տարին մէկուկէս միլիոն, իսկ Վալաքիա երկուք ու կէս միլիոն զուրուշ: . . . 27—29. Կեդրոնական մասնաժողովը տասնուվեց հոգիէ պիտի կազմուի, որոնց կէտը՝ Մոլտաւ ու կէսը Վալաք պիտի ըլլան, ամէն մէկ իշխանութեան Օսմիտարը չորսական հոգի անուանելով, իսկ իւրաքանչիւր օրէնսդիր ժողովն իր մէջէն չորսական հոգի ընտրելով: Ասոնք են պայմանագրութեան գրաւար եւ մտադրութեան արժանի մասերը. իսկ մնացածները՝ օրէնսդիր ժողովներուն կազմութեան իշխաններուն ընտրութեան, դատաւտանարաններուն, զինուորական կարգերուն եւ ուրիշ ասոնց նման նիւթերուն վերաբերեալ կարգադրութիւնները կը բովանդակեն:

Յ Ե Ի Ե Լ Ո Ի Ը Թ

ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՑ ՀԱՄԱՌՕՑ

ՑԵՂԵԿՈՒԹԻՒՆ

(1789—1858)

ՁՅԷ. Ընդհանուր տեսութիւն: Անցեալ դարուն վերջերն ու ներկայ դարուն սկիզբները Եւրոպայի մէջ պատահող սասանութիւնները չէին կրնար ազդեցութիւն չընել գաղթականութեանց վրայ ալ: Միայն թէ մէկ կողմանէ տեղերուն հեռաւորութիւնը պէտք էր որ նոյն ազդեցութեան ուստիութիւնը մեղմէր. մէկալ կողմանէ ալ զանազան գաղթականութեանց՝ իրենց մայր երկիրներուն հետ ունեցած յարաբերութեանց տարբերութենէն, եւ իւրաքանչիւր տեղերուն բնակչաց մտաւորական կրթութեան եւ ուրիշ հանգամանաց զանազանութենէն, հարկ էր որ աս ազդեցութիւնը իւրաքանչիւր կողմ՝ այլեւայլ ըլլար: Աս պատճառներուն համար, Եւրոպայի յեղափոխութեանց առաջին տարիները՝ գաղթականութեանց մէջ հազիւ քանի մը տեղ շփոթութիւնք ելան, իսկ վերջին տարիները՝ խիստ շատ տեղեր: Ասոր գլխաւոր շարժառիթներէն մէկն եղաւ Նաբոլէոնի ձեռքով Եւրոպայի մէջ հաստատուած աիեղերական իշխանութիւնը, ինչու որ նոյն վեհապետը՝ նաւական մեծ զօրութիւն չունենալով, իր իշխանութիւնը չէր կրնար գաղթականութեանց վրայ ալ տարածել: Եւրոպային առած նոր կերպարանքը՝ չէր կրնար ուրիշ բանի ծառայել, բայց եթէ գաղթականութեանց անկախ ու ինքնակաց ըլլալուն, որչափ որ իրենց վեճակը մէկ կողմանէ, եւ Բրիտանացւոց ծովական զօրութիւնը մէկալ կողմանէ, թոյլ կու տար կամ նպաստամատոյց կ'ըլլար: — Մեր հոս ընելիքը, ինչպէս ուրիշ տեղ ըսինք (27), ան է որ գաղթականութեանց երկիրներուն ինչպէս եւ երբ անկախ ըլլալը համառօտիւ պատմենք:

295. Ս. Տոմենկոյի (Հայիզիի) շփոթութիւններն ու անկախ ըլլալը: Ինչպէս որ Եւրոպայի մէջ յեզափոխական աղմուկներն ամէն տեղերէն յառաջ Գաղղիա սկսան, նոյնպէս գաղթականութեանց մէջ ալ նախ Ս. Տոմենկոյի Գաղղիական մասը նոյն շփոթութեանց տեսարանն եղաւ: Գաղթականութեանց ամէն կողմերն եղածին պէս, հոն ալ խիստ բազմութիւ սեւ գերիներ կային, որոնք ընդհանրապէս չարաչար նեղութիւն ու անագորունութիւն կը կրէին իրենց տէրերէն, եւ անոր համար ալ մէկ քանի հեղ ոտք ելած, բայց զսպուած էին: Իսկ երբ որ Փարիզի ազգային ժողովը վճռեց որ Գունաւորք: ալ ճերմակներուն ամէն իրաւանց հաղորդ ըլլան, եւ աս վճռոյն վրայ գաղթականութեանց մէջ երկպառակութիւններ ելան, Սեւերը յարմար առիթ գտան նորէն ամէն կողմ մէկտեղ ոտք ելլելու, եւ սկսան սաստիկ անագորունութեամբ ու կատաղութեամբ՝ մինչեւ ան ատեն կրածներնուն վրէժն առնուլ (1791, Օգոստ. —): Գունաւորաց մեծ մասն ալ Սեւերուն հետ միացան: Աս շփոթութիւնները տարիներով տեւեցին, եւ թէ ճերմակներուն օգնութեան եկող Անգղիացոց, թէ Գաղղիայի զանազան անգամ խաւրած զօրաց ջանքը պարապի երթալով, գրեթէ բոլոր Եւրոպայիք կամ ջնջուեցան կամ ձգեցին փախան: Սեւերը կղզոյն Գաղղիական մասին տիրելէն զատ, ձեռք անցուցին Սպանիական մասն ալ, որն որ նոյն միջոցներուն Գաղղիայի անցած էր (1795): Գաղղիացոց Հայիզիի տիրելու վերջին փորձն եղաւ Նաբոլէոնին հիւպատոսութեան ժամանակը, երբ որ Անգղիայի հետ հաշտուելով (Հատ. Գ. 143), կրցան ան կողմերը զօրք խաւրել (1802): Լբգլէր զօրապետը 20,000 հոգւով եկաւ կղզոյն տիրեց: Բայց աս վիճակը խիստ քիչ տեւողութիւն ունեցաւ. Սեւերը՝ իրենց յառաջուան Գուսէն-Լուվերգիւր գրեխաւորին բռնուելուն ու Գաղղիա խաւրուելուն վրայ

1 Gens de couleur, Mulâtres. Տես Հատ. Ա. 79:

բարկանալով, նորէն ոտք ելան իրենցմէ Տեսալին զօրապետին գլխաւորութեամբ: Եւ որովհետեւ Գաղղիայի ու Անգղիայի մէջ դարձեալ պատերազմ բացուած ըլլալով (Հաս. Գ. 148), Լըզերին յաջորդող Ռոշանպոյ զօրապետը չէր կրնար Եւրոպայէն օգնութիւն ընդունիլ, անոր համար խիստ նեղի գալով, Անգղիացոց ան կողմերը խաւրած նաւատորմին անձնատուր եղաւ (1803, Նոյ.): Տեսալին հետեւեալ տարին ինք զինքը Յակօր Ա. Հայիդիի թագաւոր անուանեց (1804, Հոկտ. 8): Բայց՝ ինչպէս ինք իրմէ կրնայ իմացուիլ՝ ո՛չ իր իշխանութիւնը երկարատեւ եղաւ, ո՛չ ալ երկրին խաղաղութիւնը: Սակայն ինչպէս որ է նէ, Սեւերը միշտ բոլոր կղզւոյն տէր մնացին. եւ Սպանիացոց՝ իրենց յառաջուան մասին տիրելը (1808), խիստ կարճ տեւողութիւն ունեցաւ: Եւրոպայի տէրութիւնք Հայիդիի անկախութիւնը ճանչցան, ամենէն ետքը Գաղղիա ալ նոյնն ընդունեցաւ դաշամբ մը (1825), 150 միլիոն Փրանզ փոխարինութիւն առնելու պայմանաւ, որուն հազիւ մէկ փոքր մասը կրցաւ ձեռք անցընել: Աղլւոյն երկու մասերը մէկ երկու անգամ միանալէն ու բաժնուելէն ետքը, վերջապէս երկուքի բաժնուած մնացին: Գաղղիական մասին վրայ կը տիրէ Սուլուգ Սեւը, Փաւուտինոս Ա. Հայիդիի կայսր անուամբ. իսկ Սպանիական մասը (1844էն վեր) Ս. Տոմենիդիի հասարակապետութիւն անուամբ՝ զատ տէրութիւն մըն է:

296. Սպանիական Ամերիկայի երկիրները: Ամերիկայի ցամաք երկրին վրայ Սպանիացոց ունեցած գաղթականութիւններուն վիճակը՝ Հայիդիի վիճակէն տարբեր էր: Ստոյգ է՝ ան կողմերն ալ Սեւ գերիներ կային, բայց ամենեւին տեղ մը այնչափ բազմաթիւ չէին, որ կարենային յանդգնիլ ապստամբութեան փորձ մ'ընելու: Ուստի եւ արտաքոյ կարգի շփոթութիւն չէր պատահեր. անանկ ալ կ'երեւար օր Եւրոպական պատերազմներուն՝ նոյն կողմանց վրայ ըրած միակ գէշ ազդեցութիւնն է, մայր երկրին հետ հաղորդակցիլ

չկրնալին: Աս վիճակին մէջ Ճեացին նոյն գաղթակա-
 նութիւնը գրեթէ մինչեւ Պիւրենետոն թերակղզոյն
 պատերազմին ժամանակները (Հատ. Գ. 184 . . .):
 Իսկ նոյն տառն հոն ալ անանկ կռիւներ ելան, որոնք
 զանազան անկախ ու ինքնազուլու տէրութիւններ կանգ-
 նուելով լմրնցան: Յիշեալ կռիւները՝ Սպանիայէն բաժ-
 նուելու գիտաւորութեամբ չսկսան, հապա Նաբոլէո-
 նին ու իր եղբորը Յովտէփ թագաւորին իշխանութեան
 տակ չմտնելու համար՝ մայր երկրին ըրած գիմագար-
 ձութեան նման գիմագարձութենէ մը: Իսկզբան Ամ-
 րիկայի գաղթականը չէին կրնար ապստամբ համարուիլ,
 ինչպէս որ նոյն իսկ Սպանիացիք ապստամբ չէին. եւ
 կրնայ բուռի թէ բուն աս վերջինները զանոնք ստի-
 պեցին իրենցմէ բաժնուելու: Գաղթականութիւնը
 չէին ուզեր ոչ Սպանիական մասնաժողովներու (Եուն-
 դաներու) տակ բլլալ, եւ ոչ իրենց փոխաբքաներուն՝
 որոնց վրայ վստահութիւն չունէին. հապա քանի որ
 իրենց օրինաւոր թագաւորը գերութեան մէջ էր, ի-
 բնէք ալ բուն Սպանիացուոց պէս՝ նոյն թագաւորին ա-
 նուամբը գրուած սեպհական մասնաժողովներու ձեռ-
 քով կառավարուիլ կ'ուզէին: Եւ երբ որ ան միջոցնե-
 րուն Սպանիայի մէջ գրուած խնամապետութիւնը (Հատ.
 Գ. 195) իրենց պահանջումները մերժեց, իրենք ալ
 նոյն խնամապետութեան եւ անոր ձեռքովը գումա-
 բուած Գորդէզին իշխանութիւնը չճանչցան: Ասան-
 կով արիւնահեղ պատերազմ մը բացուեցաւ, որն որ
 Փերդինանդ Է.ին իր հայրենի գահն ելլելէն ետեւ (Հատ.
 Գ. 253) ալ շարունակեց: Գաղթականը իրենց գործ-
 քը մինչեւ ան տառն այնչափ յառաջ տարած էին եւ
 մէջերնին մայր երկրին դէմ անանկ ատելութիւն ծնած
 էր, որ իրենց օրինաւոր թագաւորին գահակալու-
 թեամբը՝ մէկէն հանդարտելին խիստ դժուար էր,
 թէեւ նոյն թագաւորը հեանրնին զիջողութեամբ ու
 չափաւորութեամբ վարուէր: Բայց աս բանս աւելի
 դժուարցաւ եւ գրեթէ անկարելի եղաւ իրենց դէմ

գործադրուած խառութիւններով, որով ալ ամենեւին չազդեցին Սպանիայի հետ հաղորդակցութիւն իսկ ունենալ, հապա ամենայն ստատկութեամբ յառաջ տարին սկսած պատերազմին, որն որ մանաւանդ մայր երկրին ներքին շփութութիւնները սկսեցն ետեւ (48) իրենց համար խիստ յաջող կերպարանք առաւ:

297. Սպանիական գաղթականութիւններէն ձեւացող անկախ հասարակապետութիւնք: Աւելորդ է առ պատերազմներուն ընթացքը քննել եւ անոնց փոփոխ յաջողութիւններուն մտադիր ըլլալ. բաւական ըլլայ ըսելը որ նոյն պատերազմներուն վերջնական ելքն եղաւ Սպանիացւոց Ամերիկեան գաղթականութեանց Սպանիայէն բոլորովին բաժնուիլն ու զանազան անկախ տէրութիւններ ձեւացընելը: Յեղափոխութեան սկսելուն եւ յառաջանալուն կերպէն ալ բնականապէս կը հետեւէր որ առ անկախ տէրութիւնք՝ Հասարակապետական կերպարանք առնուին, ինչպէս իրօք ալ եղաւ. եւ Մէքսիկոյի, Առազիմալայի կամ Անգրոնական Ամերիկայի, Գոլումպիայի, Բերուի, Քիլիի, Բարաբոլայի, Ռիոյ տէ լա Բլադայի կամ Պուենոս Այրէսի հասարակապետութիւնները՝ կամ անմիջապէս կամ քիչ մը ետքը՝ կանգնեցան: Բնական բան էր որ Հիւսիսային Ամերիկայի Միաբանեալ նահանգները՝ առ իրենց օրինակին հետեւութեամբը կազմուած տէրութիւններն իբրեւ օրինաւոր ճանչնային եւ ընդունէին. ինչպէս որ ստուգիւ ալ ուրիշ ամէն տէրութիւններէն յառաջ զանազան դաշինքներով ճանչցան ու անոնց հետ բարեկամական կապակցութեան մէջ մտան: Բայց անոնց հաստատութիւնը՝ աւելի Եւրոպայի ծովական տէրութեանց ընդունելութենէն կախում ունէր: Սակայն առ ալ չուշացաւ. Անգղիայի նշանաւոր Քեննինկ պաշտօնեան (70) իրենց անկախութիւնը ճանչցաւ, Պուենոս Այրէսէն սկսեալ (1825, Փետր. 2), ամենուն հետ վաճառականութեան դաշինքներ գնելով: Իր օրինակին հետեւելով՝ ուրիշ տէրութիւնք ալ հետզհետէ

նոյնպիսի դաշինքներ դրին: Աերջապէս Սպանիացիք ալ համոզուելով որ բաներն առ աստիճանի հասնելէն ետեւ, անկարելի է նոյն երկիրները նորէն իրենց հպատակեցընել, մանաւանդ որ իրենց ներքին շփոթութիւններովն ու քաղաքական պատերազմներով՝ թէ ելեւժուտքնին եւ թէ ծովական զօրութիւննին խիստ գեշ վիճակի մէջ էր, եւ իրենց վաճառականութեան ու նաւարկութեան հասած վնասէն ստիպուելով, սկսան իրենց հին գաղթականութեանց հետ առեւտրական ու բարեկամական գաշինքներ գնել (1836):

298. Պրազիլիա Բորդուկալէն կը բաժնուի ու անկախ կայսրութիւն կ'ըլլայ: Բորդուկալի գաղթականութիւնները, որոնց գլխաւորագոյնը Պրազիլիա էր, Սպանիայի գաղթականութիւններէն բոլորովին տարբեր հանգամանաց մէջ կը գանուէին: Որովհետեւ մայր երկիրը միշտ Անգղիայի հետ միացած մնալով, ազատութեամբ կրնար իր գաղթականութեանց հետ հազորդակցիլ, անոր համար առ վերջինները պէտք էր որ Եւրոպական պատերազմներով աւելի վաստակէին՝ քան թէ կորուստ ընէին: Եւ թէպէտ անոնց մէջ ալ շփոթութիւնք ելան, որոնք Պրազիլիային Բորդուկալէն բաժնուելովն ու զատ կայսրութիւն մը դառնալովը լմնցան. բայց առոնց ալ թէ սկզբնաւորութիւնն ու թէ ընթացքը՝ Սպանիական գաղթականութեանց անկախութեան կռիւներուն սկզբնաւորութենէն եւ ընթացքէն տարբեր էին: Նաբոլէոն Բորդուկալ յարձակում ըրած ատեն՝ թագաւորական ընտանիքը Պրազիլիա գաղթելով (Հատ. Գ. 184) եւ խել մը տարի հոն մնալով, ան տեղերն անանկ կերպարանք մ'առին, որ ինք իրմէ կը գուշակուէր թէ արքունիքը նորէն Եւրոպա դառնալու ալ ըլլայ, անկարելի է որ Պրազիլիա յառաջուան պէս դարձեալ պարզ գաղթականութեան երկիր համարուելու խոնարհի: Ան ժամանակներէն յայտնապէս կը տեսնուէր որ նոյն երկիրը ինքնագլուխ տէրութիւն մը պիտ'որ ըլլայ, ինչպէս իրօք ալ եղաւ

Յովհաննէս Չ. Թաղաւորին Եւրոպա դառնալուն պէս (49), իր իբրեւ իննամսպետ Պրազիլիա Թողուցած Պետրոս Թագաժառանգին ձեռքովը: Ասիկայ նախ յայտնեց որ ինք երբեք Պրազիլիայէն չիհեռանար (1822, Յունու. 15), քիչ մը ետքը ինք զինքը պետութեան մշտնջենաւոր պաշտպան անուանեց (Մայ. 13), Բորդուկայի զօրաց մերժուելէն ետեւ՝ Պրազիլիա անկախ հրատարակեց (Օգոստ.), եւ վերջապէս Պրազիլիայի սահմանադրական ու ժառանգական կայսր տիտղոսն առաւ (Հոկտ. 12): Բորդուկալ չէր կրնար առ բաներս անտարբերութեամբ տեսնել. ուստի եւ հաւանական էր որ իր եւ նոր կայսրութեան մէջ ալ այնպէս պատեւրազ՝ մը բացուէր, ինչպէս որ Սպանիայի եւ իր գաղթականութեանց մէջ եղած էր. բայց Անգղիայի միջնորդութեամբն առ անօգուտ արիւնհեղուծիւնը խափանուեցաւ: Յովհաննէս Չ. Պրազիլիայի անկախութիւնը ճանչցաւ (1825, Մայ. 15): Իր եւ նոյն կայսրութեան մէջ դրուած դաշինքին մէջ (Սեպտ. 29), ինք միայն անով գոհ կ'ըլլար որ մինչեւ մահը կայսր կոչուի, իսկ իր որդին Պետրոս Ա. կայսրը խօսք կուտար որ Բորդուկալի ուրիշ գազթականութիւն մը Պրազիլիայի հետ չիմիացընէր:

299. Անգղիայի Ամերիկեան գաղթականութիւնները: Այսպէս Գաղղիա, Սպանիա եւ Բորդուկալ իրենց գլխաւոր գաղթականութիւնները կորորնցընելով, կրնայ ըսուիլ որ Եւրոպայի տէրութեանց մէջ միայն Անգղիա մնաց, որն որ իր ձեռքն ունեցած ընդարձակ երկիրներովը՝ տակաւին արժանի է գաղթականութիւն ունեցող տէրութիւն համարուելու: Ստոյգ է Սպանիայի եւ Բորդուկալի տակաւին քիչ մը բան մնացած էր. բայց ասոնք ինչ էին իրենց յառաջուան երկիրներուն եւ Անգղիայի ներկայ ստացուածներուն համեմատութեամբը: Նոյնպէս ասոնց քով ոչինչ կրնան համարուիլ Գաղղիացւոց, Հոլանտացւոց, Գանիացւոց ու Շուետաց գաղթականութիւնները: — Նարո-

լէսնի պատերազմներուն ժամանակները բոլոր ծովերն Անգղիացւոց բաց ըլլալով, իրենց գաղթականութիւններուն մէջ յեղափոխական շարժում չէր կրնար ըլլալ. ուստի եւ զանոնք անկորուստ պահեցին: Մանաւանդ թէ խաղաղութիւն եղած ատեն՝ խել մը նոր ստացուածներ ալ աւելցան. վասն զի պատերազմի ժամանակ՝ Գաղղիայէն ու անոր հետ միացած կամ անոր ազգեցութեան տակ եղող տէրութիւններէն առնուած երկիրներէն ու կղզիներէն ոմանք մէյ մ'ալ ետ շտրուեցան: Աս կերպով, ինչպէս վաճառականութեան ու նաւագնացութեան, նոյնպէս գաղթականութեանց նրկատմամբ ալ մեծ շահ ունեցան Անգղիացիք, իրենց Եւրոպական պատերազմներէն: Ստոյգ է նոյն միջոցներուն պատերազմի բռնուեցան Հիւսիսային Ամերիկայի Միաբանեալ նահանգներուն հետ (301), սակայն աս ալ իրենց համար վնասակար հետեւութիւն մը չունեցաւ: Արնար վախճուիլ որ իրենց գաղթականութիւններն անկից առիթ առնուն գլուխ վերցընելու. բայց չուզեցին, մանաւանդ թէ հաւատարմութեամբ իրենց գործակցութիւնն ըրին: Ասիկայ ուրիշ բանէ չէր կրնար յառաջ գալ, բայց եթէ իրենց գտնուած վիճակին վրայ գոհ ըլլալնէն, որն որ ստուգիւ ալ խիստ աղէկ էր, որովհետեւ ազատական սահմանադրութիւն ունէին, մայր երկրին տուրք չէին տար, մշակութիւննին ու վաճառականութիւննին տարւէ տարի կը ծաղկէր: Ցամաքային դրութեան (Հատ. Գ. 179) ժամանակը, Անգղիացիք իրենց փայտի ու ցորենեղէնի կարօտութիւնը գլխաւորաբար իրենց Գանատայի ու Նոր Սկոտիայի գաղթականութիւններէն լեցընելով անոնց ծանրակշռութիւնն առջեւնին աւելի մեծցած էր, եւ անոնցմէ գտած օգտին փոխարէն ընելու համար՝ աւելի ազատութիւններ ու արտօնութիւններ շնորհեցին: Ասոր օգուտն ալ գարձեալ շուտ մը տեսան՝ Ամերիկեան պատերազմին ժամանակը, անոնց հաւատարմութեամբն ու նպաստամատոյց ըլլալովը:

300. Հիւսիսային Ամերիկայի Միաբանեալ Նահանգները, եւ Անգղիայի ու Գաղղիայի նկատմամբ ունեցած դիրքերնին: Ա՞ն Անգղիայի ու Միաբանեալ Նահանգաց մէջ եղած պատերազմին առթիւ՝ պէտք է որ նոյն Նահանգաց վիճակին վրայ համառօտիւ խօսինք: Միաբանեալ Նահանգներն իրենց անկախութիւնը ձեռք բերելուն պէս (Հատ. Բ. 252—254) նոր աշխարհքին բոլոր երկիրներուն առաջինն եղան, թէ իրենք իրենցմէ առանձին նայելով, եւ թէ Եւրոպայի վրայ բրած ազդեցութեան նկատմամբ: Խիստ քիչ հեղ պատահած է որ տէրութիւն մը այնչափ կարճ ժամանակուան մէջ այնպէս մեծնայ ու ծաղկի, վասն զի խիստ քիչ տէրութիւն ալ անանկ նպաստաւոր պարագայից մէջ գտնուած է: Երկրի մշակութիւնն այնչափ ծաղկեցաւ, որ սկզբնական 13 Նահանգները՝ հետզհետէ շատնալով, մինչեւ 31 հասան. ասոնցմէ ոմանք միայն ինչպէս Լուիզիանա, Ֆլորիտա, Գեքսաս, Նոր Մեքսիկոյ եւ Նոր Գալիֆոռնիա, կամ՝ ուրիշ տէրութիւններէն առնուեցան եւ կամ իրենք իրենցմէ Միաբանութեան մէջ մտան. իսկ մնացածները՝ յառաջուան Նահանգներուն շէննալովն ու ընդարձակուելովն աւելցած են: Աւելի մեծ եղաւ ծովային վաճառականութեան յառաջագիմութիւնը, որն որ երկրին բերքերը դուրս հանելէն սկսելով, շուտ մը բոլոր ծովերուն վրայ անանկ տարածուեցաւ, որ Ամերիկացիք քանի մը ատրւան մէջ Բրիտանացիներէն ետքը առաջին վաճառական ազգն եղան: Ծովային վաճառականութեան այոչափ ծաղկելուն օգնեցին, մէյ մը՝ իրենց երկիրներուն դիրքը, ծովերուն հանգամանքը, նաւաշինութեան փայտի առատութիւնը, բերքերուն բազմատեսակ բլլալը, մէյ մ'ալ իրենց մաքսի կարգադրութիւնները եւ ուրիշ տէրութեանց հետ դրած նպաստաւոր առեւտրական գաշինքներնին: Եւ թէպէտ աս դաշանց մէջ իրենց բրած զիջողութիւններով, Եւրոպայի պատերազմներուն ժամանակը՝ քանի մը տարի կրցան ամէն

ծովերուն վրայ ազատութեամբ պտրտիլ. բայց խիտ գծուար էր որ երկու կողմերէն մէկուն հետ երկպառակութեան նիւթ չպատահէր: Իրօք ալ Անգղիացւոց հետ նպատաւոր առեւտրական դաշինք դնելուն համար՝ Գաղղիայի հառարակապետութիւնն Ամերիկացւոց դէմ գառնացու ու մէջերնին երկպառակութիւնք ելան: Բայց նոյն իսկ Անգղիացւոց հետ ալ պաղու-թիւն մատու, որոնք Ամերիկացւոց ծովային վաճառականութեան այնչափ ծաղկելուն վրայ մեծ վախի մէջ քնկան: Ամերիկացիք տակաւին ծովական զօրութիւն չունենալով, ստիպուեցան իսկզբան զիջումներ ընել, մինչեւ իրենց նաւազնացութիւնը կամօք չափաւորեցին: Սակայն իրերն այսպէս չէին կրնար յառաջ երթալ. եւ Ամերիկացիք՝ մէկ կողմանէ Նաբոլէոնէն շահուելով, եւ մէկալ կողմանէ ծովային զօրութիւննին բաւական աւելցուցած ըլլալով, վերջապէս Անգղիայի դէմ պատերազմ հրաատարակեցին (1812, Յունիս 18):

301. Ամերիկեան-Անգղիական պատերազմ՝ ու Միաբանեալ նահանգաց վրայ ունեցած ազդեցութիւնը: Այս պատերազմը չէր կրնար՝ հասարակօրէն Եւրոպական պատերազմներուն եղածին պէտ՝ ընդարձակ ու սաստիկ ըլլալ: Յամաքի վրայ՝ սահմանները, եւ մասնաւորաբար Գանատայի սահմանները, պզտիկ գնդերով կռիւ կ'ըլլար. իսկ ծովու վրայ՝ առանձին սակաւութիւ նաւերով: Ամերիկացւոց նոր ծովային զօրութիւնը քաջութեան նշանաւոր գործքեր գործեց. իսկ ցամաքային զօրքը կարող չեղաւ Անգղիացւոց դէմ դնել: Աս վերջինները՝ թէպէտ չկրցան երկրին ներքին կողմերը շատ յառաջանալ, սակայն Ուաշինկըն մայրաքաղաքը յարձակմամբ առին (1814, Օգոստ. 24). շատ ջանացին Նոր Օրլէանս քաղաքն ալ առնուլ, բայց տեղացւոց դիւցազնական քաջութեան չկրցան յաղթել: Նոյն միջոցին Կան քաղաքը բանակցութիւն ըլլալու սկսուած էր, եւ որովհետեւ Եւրոպայի մէջ խաղաղութիւն եղած էր, որով եւ Ամերիկեան պա-

տերազմին շարժառիթները նուազած էին, գիւրաւ կրցան իրենք ալ միարանիլ եւ խաղաղութիւն ընել (1814, Գեկտ. 24): Պայմաններն են. 1. Գանատայի կողմերը սահմանները կարգաւորել. 2. Բոլոր առնուած տեղերը ետ տալ. 3. Գերեաց վաճառականութիւնը ջնջելու աշխատիլ: — Միաբանեալ նահանգներուն ըրած աս առաջին պատերազմն իրենց ապագային համար մեծ եւ խիստ օգտակար հետեւութիւններ ունեցաւ: Առաջին հետեւութիւնն ան եղաւ որ ինչ բանի մէջ տկար եւ ինչ կողմանէ զօրաւոր ըլլալին ճանչնալով, սկսան փոյթ տանիլ առաջիններուն գարմանք հոգալու եւ վերջիններն աւելի ծաղկեցընելու: Տեոան թէ ինչպէս սաստիկ կարօտութիւն ունին ծովական մեծ զօրութեան, եւ անկէ ետեւ աս նիւթն իրենց գլխաւոր ջանիցը նպատակ ըրին. որով եւ կրնայ ըսուիլ թէ Անգղիա առաջին պատճառն եղաւ իր դիմացը նոյն նկատմամբ ոսոխ մ'ելլելուն: Պատերազմէն յառաջ եւ պատերազմին ժամանակը՝ իրենց նաւահանգիստներուն գոցուելովը, Ամերիկացիք իբրեւ թէ ստիպուեցան իրենց գործատուները բազմացընելու եւ ծաղկեցընելու. խաղաղութիւն ըլլալէն ետքը ասոր ալ մեծ փոյթ տարին, եւ իրենց փոյթը յաջողութեամբ պսակուեցաւ, այնպէս որ աս նկատմամբ ալ գարձեալ Անգղիացւոց արժանի ոսոխ եղան: Աս եւ ասոր նման պատճառներով, միանգամայն թէ երկրին սահմաններուն ընդարձակուելովը եւ թէ բնակչաց բազմանալովը, Միաբանեալ նահանգները՝ չէ թէ միայն նոր աշխարհքին ամենէն երեւելի տէրութիւնն եղան, հապա նաեւ հին աշխարհքին մեծ տէրութեանց ամենեւին մէկուն նախանձելու պատճառ չունին:

302. Սեւ գերեաց վաճառականութեան ջրնջուիլը: Վերը տեսանք որ Անգղիայի եւ Միաբանեալ նահանգներու մէջ գրուած կանխ խաղաղութեան դաշինքով, երկու կողմանք իրենք զիրենք կը պարտաւորէին Սեւ գերեաց վաճառականութիւնը կամ առու-

տուրը՝ ջնջելու աշխատիլ, որ նիւթոյն հիմայ մտա-
դրութիւննիս կը նուիրենք, վասն զի գաղթականու-
թեանց պատմութենէն անբաժին խնդիր մըն է: Հոս
բաւելիքն աղէկ հասկընալու համար, գերեաց վաճա-
ռականութիւնը՝ գերութեան վիճակէն զանազանելու
է. առաջնոյն հակառակ եղողները՝ միշտ վերջնոյն ալ
դէմ չեն, որովհետեւ շատերը կը համարին որ Արեւ-
մտեան Հնդկաստանի մէջ գտնուող Սեւերը պահելու
եւ անեցընելու է, առանց նորէն բերելու: Գերեաց
վաճառականութեան դէմ արդէն շատոնց բարձրացող
քրիստոնէութեան ու մարդասիրութեան ձայները ան-
ցեալ գարուն կէսէն ետքը շատ սաստկացան, եւ վեր-
ջապէս կրցան ամէն արգելքներու յաղթելով, ջնջել
աս մարդկութեան նախատինք եղող առուտուրը: Յա-
ռաջագոյն աս նկատմամբ եղած փոքր շարժումները
մէկդի ձգելով, գլխաւոր քայլ մ'առնուեցաւ Ամերի-
կայի անկախութեան պատերազմէն ետքը, երբ որ ան
կողմերը նորէն Սեւ գերի խոթելն արգելուեցաւ, բաց
ի Գարոլինա ու Գետրգիա նահանգներէն: Միեւնոյն
միջոցներուն Անգղիայի մէջ, աս նիւթին վրայ զանա-
զան գրուածներ հրատարակուելէն զատ, Մանչէսթը
քաղաքը Գերեաց վաճառականութեան ջնջման ընկե-
րութիւնը հաստատուեցաւ (1787), ու շուտ մը բոլոր
Անգղիա տարածուեցաւ: Տէրութեանց մէջէն՝ նոյն առ-
ուտուրը ջնջելու պարծանքն ունեցաւ նախ Դանիա,
ուր թագաւորական հրամանագրով որոշուեցաւ (1792)
որ մինչեւ տասը տարի՝ Դանիայի ստացուածոց մէջ
Սեւերու վաճառականութիւնը դադարած ըլլայ: Ան-
գղիայի մէջ ալ աս խնդիրն երթալով աւելի կը սասա-
կանար, եւ գրեթէ ամէն տարի խորհրդանոցին առ-
ջեւը կ'ելէր. վերջապէս Ֆոքս ու Բիգգ անուանի պաշ-
տօնեաներուն ջանքովը, պատգամաւորաց սենեակն աս
որոշումն բրաւ (1806, Յունիս 10), եւ երկրորդ տա-
րին Գերեաց վաճառականութեան ջնջման օրինագիրն

1 Traite des Noirs.

ելաւ (1807, Մարտ 24) : Ան ժամանակէն ետեւ Անգղիա աս բանս իր մտադրութեան գլխաւոր նիւթերէն մէկն ըրաւ, եւ ուրիշ տէրութեանց հետ ալ ասոր վրայ առանձին գաշինքներ դրաւ : Աս նկատմամբ յիշատակութեան արժանի է հինգ մեծ տէրութեանց Լանտոն գրած գաշինքը (1841, Գեկտ. 20), որով ամէնքը կը խոստանային իրենց գրօշը կրող նաւերուն գերեաց վաճառականութիւն ընելը խափանել, միանգամայն յանձն կ'առնուին որ իւրաքանչիւրին պատերազմական նաւերը՝ իշխանութիւն ունենան մէկալ գաշնադիր տէրութեանց աս նկատմամբ կասկածելի եղող առեւտրական նաւերը քննելու : Գաղղիայի գեսպանն ալ մէկալ տէրութեանց գեսպաններուն հետ աս գաշանց ստորագրած էր. բայց ետքէն կառավարութիւնը չվաւերացուց, չուզելով յանձն առնուլ որ օտար պատերազմական նաւ մը իր նաւերը քննելու իրաւունք ունենայ : Եւ թէպէտ քանի մը տարի ետքը Անգղիայի հետ առանձին գաշինք դրաւ (1845, Մայ. 29), բայց առանց յիշատակութիւն ընելու քննութեան իրաւանց վրայ : Աս վերջին նիւթին վրայ ատեն ատեն վէճեր եւ կռիւներ կ'ըլլան, թէեւ գրեթէ բոլոր աշխարհքիս քրիստոնեայ տէրութիւնները գաշինքներով յանձն առած են գերեաց վաճառականութիւն չընել :

303. Արեւելեան Հնդկաստանի մէջ Անգղիացւոց իշխանութիւնը : Ինչպէս ուրիշ տեղեր, նոյնպէս Արեւելեան Հնդկաստանի մէջ, Եւրոպական պատերազմներն Անգղիայի համար օգտակար հետեւութիւններ ունեցան : Արդէն ցամաք երկրին վրայ Եւրոպացի ոտի մը չունէին Անգղիացիք, իսկ վերոյիշեալ պատերազմներուն առթիւր՝ Գաղղիացւոց ու Հոլանտացւոց իշխանութեան տակ եզող քանի մը կղզիներուն ալ տիրեցին : Ասանկով ան կողմերուն միակ տեսադքն եղան. բայց գրեթէ միշտ պատերազմի մէջ էին տեղացի իշխաններուն հետ, որոնք բաց ի անկախութեան բաղձանքէն՝ նա եւ Գաղղիայէն կը գրգռուէին : Աս իշ-

խաններուն մէջ ամենէն զօրաւորն ու Անգղիային աւելի նեղութիւն պատճառողն եղաւ Մխարի՛ Դիբոյ Սահիպ Սուլթանը, որն որ նոյն միջոցներուն հեղ մը յաղթուելէն ու երկիրներուն մէկ մասը կորսնցընելէն ետեւ (1790—1792), Գաղղիացիներէն գրգռուելով, Եգիպտական արշաւանքին ժամանակը (Հատ. Գ. 116 ...) նորէն պատերազմի բռնուեցաւ (1799): Սակայն աս կարճ պատերազմն ալ սերիշ բանի չծառայեց, բայց եթէ Անգղիացուց իշխանութեան մեծնալուն. Սերինկարադամ քաղաքին յարձակմամբ առնուելովն ու նոյն ատեն Դիբոյ Սահիպին իյնալովը (Մայ. 4), Անգղիացիք իրենց աս սաստիկ թշնամիէն ազատեցան ու անոր երկիրներն առին: Անկէ ետեւ՝ մինչեւ ան ատեն բանեցուցած քաղաքականութիւննին փոխելով, միջնորդական իշխանութիւննին՝ հետզհետէ անմիջական իշխանութեան կը դարձնէին. իրենց դաշնակից կամ հարկատու եղող տեղացի իշխանները վար առնելով, անոնց երկիրներն ուղղակի իրենց ստուցուած կ'ընէին: Եւ թէպէտ՝ ինչպէս յայտնի է՝ աս բանս պէտք էր որ նորենոր պատերազմներ պատճառէր, ինչպէս իբրջ ալ շատ տարիներ կռիւններ եղան Մարագներու իշխանաց հետ, որոնց ծառայութեան մէջ Գաղղիացի պաշտօնակալներ ալ կային. բայց Անգղիացիք վերջապէս զանոնք ալ զուպեցին (1818): Նոյնպէս յաջողութեամբ լմնցուցին Պիրմաններուն հետ ըրած երկու տարւան պատերազմնին (1824—1826): Անկէ ետեւ եղած պատերազմները՝ սովորաբար մասնական բաներ են, եւ միշտ Բրիտանացուց յաջող ելք կ'ունենան:

Ե. ՀԱՇԻ ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
 Ի սկզբանէ Յուլիսի 1851 մինչև ց30 Յունիսի 1861 :

Թիւ թղ. հաս.	Անունք Ազնուական եւ Ազգասէր Ընկերացի	Աւուրք յորս գրեցանն	Բաժին	Գլուխ գրասք.
				Արժ. ֆ
	Ըստ Դ. Հաշուի հրատարակե- լոյ յամին 1851 յ30 Յունիսի էին		56	5600
	Ի սոսա յաւելան			
35	Յէր Ներսէս Ա. Ֆինճանճեան .	31 Օգոստոս 1851	1	100
36	Անանիա Աղա Թօսուհեան . .	31 Դեկտեմբ. 1852	1	100
37	Յարութիւն Աղա Հանրմեան . .	30 Յունիս 1857	1	100
			59	5900

Ե Լ Ք

Արժամ ֆիւսք.			
57	16		
15	40		
106	48		
1935	20		
312	—		
2040	—		
		4467	4
2313	20		
12	36		
12	36		
35	6		
405	20		
65	—		
11	—		
165	36		
459	—		
12	—		
975	30		
		4467	4

Ի Դ. հաշուէ Ձայր 57
 Կազմից մասնինից վասն ընկերաց 15
 Այլեւայլ ծախուց 106
 Դրոշմելոյ Ա. Բ. Գ. եւ Դ. հատորոյ Պատ-
 մութեան քաղաքականութեան Եւրոպա-
 կան տէրութեանց, 500 օրինակ 1935
 Դրոշմելոյ Արուեստախօսութեան 500 օրինակ 312
 Դրոշմելոյ Ատլասի կամ Աշխարհացոյց տախ-
 տակաց, 700 օրինակ 2040

Մ Ո Ւ Տ Ք

Շահ %/4 վերագոյն գրեալ 5900 գլխոյ գրա-
 մոց մինչև ցայսօր 2313
 Ի վաճառելոյ 21 օրինակաց Ա. մասնին 12
 " 18 " Բ. " " 12
 " 39 " Գ. " " 35
 " 304 " Դ. " " 405
 " 65 " Ե. " " 65
 " 34 " Զ. " " 11
 " 276 " Է. " " 165
 " 153 " Ը. " " 459
 " 12 " Թ. " " 12
 Պակասի, զոր անցուցանեմք Ի Ջ. հաշիւն 975

UNIVERSITY OF MICHIGAN



15 04146 1503

